ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՇԽԱՐՀ ԳՈՂՏՐԻԿ ԶԱՎԱԽՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

947.925

ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՇԽԱՐՀ ԳՈՂՏՐԻԿ.
ՋԱՎԱԽՔ

Ա II 91008

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
11

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
11

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 94.1 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ 537

Մելքոնյան Ադամ
Հայաշխարհ գողտրիկ. Ջավախք - եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ.
Մ 537 ինստ.հրատ., 2006.- 330 էջ

կազմող և խմբագիր՝ Կամո Մարիրեկյան

Գիրքը լրագրող-հրապարակախոս Ադամ Մելքոնյանի «Ջավախք իմ առասպելական» գրքի շարունակությունն է և նրա անբաժանելի մասը: Այն փաստա-վավերագրական, հանրագիտարանային նկարագիր ունի, բազմաբովանդակ, բազմաժանր գեղարվեստական շաղախով գիմանկարներ ու բարի գործեր: Լինելով Ջավախք լեռնաշխարհի հետպատերազմյան (1945-1991) թթ. տարեգրություն՝ այն անտարբեր չի թողնի ընթերցողին և երկրամասի պատմությամբ հետաքրքրվողներին:

ISBN 99941 969-9 -5

ԳՄԴ 63. 3 (2Հ)
ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006թ.

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՀՈՒՇԵՐ ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԷՋԵՐ ԼՐԱԳՐՈՂԻ ԿՅԱՆՔԻՑ
ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉԸ, ԲԱՐԵԿԱՄԸ, ԸՆԿԵՐԸ

1996 թվականի ցրտաշունչ ձմռան հունվար ամիսն էր: Ինչ որ մի գործով գնացի Հարևանությամբ բնակվող Արտաշես Վարդանյանի մոտ, որը երկար տարիներ «Սովետական Վրաստան» /Վրաստան/ թերթի լավագույն գրաշարներից էր: Նրան մեծ հաճույք և ուրախություն պատճառեց իմ անսպասելի այցը և պատրաստվեց հյուրասիրելու:

- Սերգեյ ջան, թթի լավ օղի ունեմ և համեղ «զակուսկա», եկ մի քիչ մարմիններս տաքացնենք, հիշենք մեր ընկերներին, բարեկամներին: Էդ կմնա, մնացածը փուչ բան է:

-Արտաշես, հարգելիս, հյուրասիրելուցդ չեմ հրաժարվում, բայց չէ որ դու հեռու ես խմելուց, վրա բերի ես:

- Մի վախենա, այ մարդ, նեցուկ կլինեմ քեզ, պատասխանեց ընկերս: Այդ պահին հայացքս ընկավ սենյակի անկյուններից մեկում դրված քառանկյունի փոքրիկ սեղանին դրված «Վրաստան» թերթի փաթեթին:

- Թարմ համարնե՞ր են,- հարցրի ես:

- Չէ, Սերգեյ, անցյալ տարվանն են, խնամքով եմ պահպանում յուրաքանչյուր համարը, չէ որ դրանք պատմություն են:

- Ճիշտ ես, սիրելիս, մինչև սեղանը կպատրաստես, թույլ տուր աչքի անցկացնեմ ինձ համար միգուցե դրանց մեջ չկարդացած համար լինի: Թռուցիկ կարդալով մի քանի համար, հանկարծ նկատեցի մեկի վերջին էջին տպագրված մահախոսականը «Աղասի Մելքոնյան» վերտա-ռությամբ: Աչքերիս չհավատացի, կարդացի երկրորդ անգամ և ծնկներիս մեջ թուլություն զգացի: Դեմքս առա ափերի մեջ, աշխատեցի թաքցնել հուզմունքս, բայց ապարդյուն, Արտաշեսը նկատեց ինձ հետ կատարվելիքը, մոտեցավ և ցածրաձայն հարցրեց.

- Ինչ պատահեց քեզ, այ տղա, ինչու այդպես այլ-այլվեցիր:

- Ուրեմն իմ Աղասի Հարությունովիչը մոտ մեկ տարի է, ինչ հեռացել է կյանքից, իսկ ես,

անաստվածս, միայն նոր եմ իմանում այդ մասին, բա դա ներելի է, չէ որ ես նրան իմ ամենամոտ և ամենասիրելի մարդն էի համարում, չէ որ նա հիրավի պրոֆեսիոնալ լրագրող լինելուց բացի, միաժամանակ անաչառության, անշահախնդրության ու արդարության իսկական տիպար էր:

Շփոթված սկսեցի կարդալ մահախոսականը, ցանկանալով իմանալ իմ լրագրող ուսուցչին տրված գնահատականը: Հատկապես դուր

եկան շարադրանքի այն տողերը, ուր ասված է. «Աղասի Մելքոնյան ազգանունը միշտ սիրով էր ընդունում մեր ընթերցողը. հաստատ համոզված լինելով, որ գործ ունի ազնիվ ու բանիմաց մի լրագրողի հետ, որի գրչին խորթ և անհարիր են կեղծիքը, զրպարտությունը...»:

Եվ, իրոք, Աղասի Հարությունովիչը, որը նախկինում գրաքեցրել էր կոմերիտական և կուսակցական ղեկավար պաշտոններ, հետագայում մերժել էր իրեն առաջարկված բոլոր պաշտոնները և ավելի քան 45 տարի անընդմեջ ուսերին էր կրել իր սիրած, դժվարին ու բարդ, բայց պատվաբեր պրոֆեսիայի խաչը:

...Որպես թերթի գյուղատնտեսության բաժնի վարիչ, բազմիցս հարկ է եղել դրդուղվել նաև Աղասի Մելքոնյանի սպասարկած Ախալքալաքի, Նինոծմինդայի /Բոգդանովկա/ և Ասպինձայի շրջանները: Այդ ժամանակաընթացքում վկա դարձա վերոհիշյալ տարածաշրջանների աշխատավորների այն սիրուն, հարգանքին, համակրանքին և հավատին, որ նրանք տածում էին թերթի սեփական թղթակցի հանդեպ:

...Հարգելի ընթերցող, իմ այս թռուցիկ հիշողություններով ուզում եմ ձեզ ծանոթացնել այն գեղեցիկ հատկանիշներին, որոնք բնութագրելի էին Աղասի Հարությունովիչին: Առաջինը դա նրա անսահման և սիրելի նվիրվածությունն էր ընտանիքի և հարազատների հանդեպ: Կինը և երեխաները նրա համար սրբություն էին և կյանքի աղբյուր: Հարությունովիչը, ինչպես սիրալիր անվանում էին նրան, միշտ ձգտում էր գուլալ և մաքուր պահել այն աղբյուրի ջուրը, որի ամեն մի կումը ուժ, եռանդ ու հավատ էր տալիս նրան: Նա շատ էր սիրում և հարգում տանտիրուհուն, տիկին Կատյային, մի կին, որը իսկական հայ կնոջ տիպար է: Բազմիցս հյուրընկալել է Մելքոնյանների ընտանիքը, և առատորեն հյուրասիրել այն համեղ, իսկական հայկական ուտեստեղենով, որ պատրաստում էր տիկին Կատյան: Նրա բարետես դեմքին միշտ համեստ ժպիտ էր խաղում, որը այն բանի հաստատումն էր, որ ինչպես ժողովուրդն է ասում, . «Այդ օջախում կարելի է հաց կտրել»:

Մելքոնյան ամուսինների համեստությունը, հյուրասիրությունը և դրական այլ շատ հատկություններ ծնողական գեների միջոցով փոխանցվել են նաև որդիներին: Իզուր չէ ասված, որ «Պտուղը ծառից հեռու չի ընկնում»: Առանձնակի հարգանքով և սիրով ես հիշում ավագ որդուն Կարապետին, որն Ախալքալաքում, իր ընկերների շրջանում մեծ հարգանք ու պատիվ է վայելում:

Մորը նմանվելով, հիանալի և օրինակելի ընտանիք է կազմել նաև դուստրը Սուսանը... Լավ եմ հիշում նաև կրտսեր որդուն, Աշոտին: Շատ աշխույժ տղա էր նա և խելացի: Ընկերների շրջանում ամենաակտիվը: Ափսոսում եմ, որ թերթի էջերը հնարավորություն չեն տալիս լայնորեն ծավալվելու, բայց, կասեմ, որ հայրը շատ էր հպարտանում Աշոտով:

Աշոտս շատ խելացի է, Սերգեյ, - հաճախ էր ասում նա,- այ կտեսնես, կգա ժամանակը և ճանաչված գիտնական կդառնա: Ջնայած դպրոցը դեռ չի ավարտել, սակայն արդեն խորապես ուսում-

նասիրել է հայոց պատմությունը: Ուզղակի զարմանում եմ, թե ինչպես է հասցնում և՛ դասերը պատրաստել, և՛ լրացուցիչ գրականություն կարդալ...

Երեք տարի առաջ էր: Հեռուստացույցով դիտում էի «Հայլուրի» հաղորդումները Երևանից: Երկնագույն էկրանից հայտարարեցին, որ հաղորդումը նվիրվում է Հայաստանի պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին, և խոսքը տրվում է նրա տնօրենին՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աղասու Մելքոնյանին: Դահլիճում գտնվողների բուռն ծափահարությունների ներքո լարեցի տեսողությունս և սրեցի լսողությունս: Մի պահ աչքերիս առջև հառնեց Աղասի Հարությունովիչը՝ իր բարի դեմքով և մեղմ ժպիտով ու, ակամա հիշեցի նրա խոսքերը. «... Սերգեյ, կտեսնես, Աշոտս ճանաչված գիտնական կդառնա...»: Մի քանի վայրկյան անց ամբիոն բարձրացավ լայնաթիկունք, առնականացած դեմքով և վառվռուն աչքերով Աշոտ Մելքոնյանը: Ջնյած տարիների թողած դրոշմին, այնուամենայնիվ զեկուցողի դեմքը ինձ երեկվա Աշոտիկինը թվաց, նա շատ է նման մորը, տիկին Կատյային:

Մինչև վերջ ուշադիր դիտելով հաղորդումը, ուրախ տրամադրությամբ խմիչքների հավաքածուի ցուցապահարանից հանեցի դեռևս ՍՍՀՄ-ի ժամանակներից պահված հայկական «Հոբելյանական» կոնյակի շիշը, և տղայիս Սլավիկի հետ խմեցինք Մելքոնյանների տոհմի կենացը, մանրամասնորեն նրան պատմելով իմ անմոռանալի և ջերմ հարաբերությունների մասին այդ ընտանիքի բոլոր անդամների հետ:

- Մարդը իր հոգու ջերմությունն առանց տատանվելու, պետք է տա իրեն շրջապատողներին և օժտված լինի կարեկից լինելու հատկություններով,- հաճախ էր ասում նա: Մելքոնյան լրագրողի այդ հատկանիշները լավ էին նկատել նրա սպասարկած շրջանների աշխատավորները և. շրջանցելով կուսակցական, սովետական, տնտեսական, բյուրոկրատական մարմիններին, իզուր չէին դիմում նրան օգնելու իրենց հուզող հարցի լուծման համար, հաստատ համոզված լինելով, որ բողոքները կքննարկվեն օբյեկտիվորեն:

Այս ամենի հետ մեկտեղ, պետք է ասեմ նաև, որ Աղասի Հարությունովիչը միաժամանակ խստապահանջ էր և սիրում էր կարգ ու կանոն պահպանել արտադրության ուզածդ ոլորտում: Այդ մասին ընթերցողներից շատերին է հայտնի թերթում տպագրված բազմաթիվ քննադատական հոդվածները, աշխատավորների ակտիվի հետ անցկացված ստուգայցերը, որոնք քննարկվում էին համապատասխան վերադաս մարմիններում և ստացված պատասխանները միանիշ էին՝ «փաստերը հաստատվեցին»:

Ջավախքյան դեպքերի, փաստերի և իրադարձությունների իմ հարուստ հիշողություններից կպատմեմ միայն երկուսի մասին: 70-ական թվականների վերջերին էր: Հերթական կամպանիա էր ծավալվել հանրապետությունում կարգ ու կանոն հաստատելու համար: Յուրաքանչյուր անձ ձգտում էր ստվերում պահել իր

«գործունեությունը», պահպանել զբաղեցրած պաշտոնը: Աղասի Հարությունովիչի առանձնասենյակում նստած զրուցում էինք մեր անելիքների մասին, երբ դուռը թակելուց հետո, այն դանդաղ բացվեց, և ներս մտավ Վաչիանի սովխոզի երիտասարդ տնօրեն Մկրտիչ Ղարիբյանը: Նա լուռ նստեց բազկաթոռին և վախվորիկ հայացք գցեց մեզ վրա:

- Ինչ կա, հարգելիս, ի՞նչ ցավ ունես, ասա, մի քաշվիր, ես լավ գիտեմ քո բուռն ընավորությունը, ինչո՞ւ ես ձկան նման ջուր լցրել բերանդ,- ընկերաբար և ժպտալով դիմեց գործընկերոջը:

- Ընկեր Մելքոնյան հենց էդ անտեր ձկան համար էլ եկել եմ, ինքս ինձ կրակը գցել...

- Պարզ ասա, սիրելիս, որ հասկանամ,- լրջադեմ ասաց Մելքոնյանը:

- Ինչ ասեմ, դուք ինքներդ լավ գիտեք, թե ինչ պայքար է սկսվել շրջանում... Ես էլ, առանց մտածելու ընկերական շրջանում արտասանեցի Խնկո-Ապոր առակը, և տղաներից ինչ որ մեկը, ստոր և թունավոր մտադրությամբ առակի բովանդակությունը խեղաթյուրելով, հասցրել է նոր քարտուղարին: Նա էլ զայրացել է ու հիմա խեթ-խեթ է նայում վրաս...

- Ո՞ր առակը, հապա մի մեզ մոտ էր արտասանիր.- մեղմ ժպտալով դիմեց Աղասի Հարությունովիչը,- և, շարունակեց.- թող Սերգեյ Խաչիկովիչն էլ լսի և, եթե հարկ լինի, երկուսով կդիմենք Ալեքսանդր Օգանեսովիչին, նա ոխապահ չէ, կների:

- Դե, որ այդպես է, ինչ արած, նեղն եմ, կհպատակվեմ: - Նա կոկորդը մաքրելու համար թեթևակի հազաց և սկսեց.

- «Ձկնիկ լող տուր, լող արա,
Դրսի որսը թող արա,
Իջիր ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:
Տես, փորձանք կա քո գլխին...»

Ընկերս այլևս չկարողացավ զսպել իրեն և լիաթոք ծիծաղեց: Նույնը կատարվեց նաև ինձ հետ:

- Մկրտիչը կտրեց արտասանությունը և ժպտալով դիմեց. - Ինչ վատ բան կա այս տողերում, որ ընկեր Մովսիսյանին դուր չի եկել...

- Առակը հենց դրա համար էլ առակ է, որ խայթում է, իմ բարեկամ, ոչինչ,- գնա ու հանդիստ գործդ շարունակիր, մենք քարտուղարին կմխիթարենք...,- ասաց Մելքոնյանը:

Աշնանային ամիսներից մեկն էր: Կարտոֆիլի մթերման ընթացքը լուսաբանելու համար գործուղվեցի Ախալքալաքի շրջան: Քաղաքի կենտրոնում գտնվող «Խաս» կոչվող այգում նորից հանդիպեցինք Մկրտիչ Ղարիբյանին: Նրա տրամադրությունը բարձր էր:

- Էդ ուր կշտապես, բարեկամս,- դիմեց Աղասի Հարությունովիչը:
- Կասեմ միայն այն դեպքում, եթե հյուրիդ հետ միասին գնանք մի կտոր հաց ուտենք:
- Հայտնելով շնորհակալություն և մերժելով առաջարկը, շրջվեցինք և շարունակեցինք մեր ճանապարհը:
- Սպասեցեք, ընկեր Մելքոնյան, Ձեզ մոտ էի գալիս, խորհրդակցելու բան ունեմ. դիտեք

չէ, որ կան հարցեր, որոնք առանց Ձեզ չեմ լուծում:

- Հետաքրքիր է,- մրմնջաց ընկերս,- դե, ասա, տեսնեմ, ինչ կա:
- Որոշել եմ տղաներին Ձեր սովխոզի կողմից որպես նվեր, մի հինգ-վեց տոննա

կարտոֆիլ ուղարկել:

- Որ տղաներին,- զարմացած հարցրեց Աղասի Հարությունովիչը:
- «Արարատցիներին», էլ ո՞ւմ, բա նրանց միությանն չեմպիոն դառնալը և դավաթ չահելը

աչքաթող պետք է անենք:

- Խելացի որոշում է, Մկրտիչ Ջան, միայն ասա, պլանները կատարել ե՞ք:
- Համարյա կրկնակի,- հպարտորեն պատասխանեց տնօրենը:
- Բա ի՞նչն է խանգարում, դե, մի ձգձգիր, գործի անցի:
- Բարեուղարին բա չհայտնե՞նք...
- Անհոգ կաց, նա մեծ ֆուտբոլասեր է, նաև «Արարատի» ցավակիցը, հենց հիմա միասին գնանք մոտը...

Հաջորդ օրն ևեթ «Կամազ»-ը բեռնված Ջավախքի լավորակ և համեղ կարտոֆիլով բռնեց Երևանի ճանապարհը...

Մարդամոտ, հյուրասեր, վերին աստիճանի կուլտուրական և գրագետ Աղասի Մելքոնյանը շատ բարեկամներ ու ընկերներ ուներ Ջավախքում: Նրան բազմիցս եմ տեսել իր պատանեկության ընկերներ, իրավաբան Իսահակ Աբրահամյանի, Թբիլիսիի օդանավակայանի պատասխանատու դեկավար Լավրենտի Մկրտչյանի, լուսավորության աշխատող Ժորա Մելքոնյանի, Բուռնաշենթի կոլտնտեսության նախագահ, հետագայում Բոդդանովկայի /Նինոծմինդա/ կուսշրջկոմի առաջին քարտուղար Վասիլ Բոչոյանի, ինչպես նաև բազմաթիվ հողագործների, ֆերմաների և հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողների հետ, որոնցից յուրաքանչյուրը սերտ կապերի մեջ էր նրա հետ, և միասին էր կիսում Մելքոնյանների դերդաստանի ուրախությունն ու ցավը:

- Վերջերս լրացավ Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ Աղասի Մելքոնյանի

մահվան 10 տարին: «Վրաստան» թերթի ամբողջ աշխատակազմի և իմ անունից Աստծուց խնդրում եմ. թող լուսավոր լինի նրա հոգին, թող Ջավախքի օրհնյալ հողը թեթև լինի նրա իմ ուսուցչի, բարեկամի և ընկերոջ վրա.

Սերգեյ Առաքելյան
Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ

ԱՆՈՒՇԻԿ ՀՈՒՇԻԿՆԵՐ

Աղասի Հարությունի Մելքոնյանը «Սովետական Վրաստանի» Ջավախքի սեփական թղթակիցն էր, ազնիվ լրագրողի համեստ պարտականություն: Իր թղթակցական կետում, (որը փոքրիկ մի սենյակ էր շրջկոմի շենքում) հավաքում էր երիտասարդ թղթակիցներիս և ուսուցանում էր հոդվածներ, նյութեր գրելու ձևերն ու մեթոդները... Ինքն ուներ պարզ, մատչելի և արդարախոս գրիչ: Ջավախքի սքանչելի բնությունն ու ջավախքցիների հոգեբանությունն իմանում էր անսխալ ու անվրեպ. օժտված էր բազմաբանագիտությամբ, որը նպաստում էր իր հայրենասիրական-մարդասիրական զեղումներն արտահայտելուն, հայրենի Ջավախքի պաշտելի բնանկարը քանդակելուն...

Լրագրողի մեծարժեք հրապարակախոսական հոդվածները հանապազօրյա հայ արարող երկրագործի մասին էին մեծի մասամբ:

Հայ արարող, գրեթե ամեն լավ բան, բարություն կա այս ներդաշնակ բառերի մեջ... Խոսուն, առինքնող խորագրեր էր գտնում հոդվածների համար, շարադրում էր վարակիչ բովանդակությամբ...

Քաղաքացիական արիություն, ճշմարտախոսություն, լրագրողի ազնիվ խիղճ. այս հատկանիշները հատուկ էին Աղասի Մելքոնյանի գրչին:

Յուրաքանչյուր հոդված բարձրագահ հայրենի երկրի բնանկարի անզուգական զեղումներով էր սկսվում, բանաստեղծական պոռթկումներով, հմայիչ պատկերներով...

Մի օր Վրաստանի հայ գրողների միության նախագահ գրող Բենիկ Սեյրանյանն ինձ հարցրեց.

-Աղասի Մելքոնյանը արձակ գրական գործեր էլ ո՞ւնի... Ա՛յ, թե զբաղվեր արձակով, անշուշտ կշահեր հայ գրականությունը...

Ես համամիտ էի:

Աղասի Մելքոնյանի տպագրած հոդվածների լեզուն ինձ կախարդում էր: «Կարտոֆիլ են փխրեցնում» հոդվածը կարդացի թերթում և նույն հոդվածը վերածեցի չափածոյի ու ընթերցեցի լրագրողի մոտ.

Կարտոֆիլ ես փխրեցնում,
Օձիքդ բաց է.

Հովիկը ներս է լցվում,
Մոցիկդ թաց է.
Տաք կուրծքդ է հովանում,
Վերն ամպի լաց է.
Արտում բերքն է ծովանում,
Ի՞նչ առատ հաց է...
Շորն է կպել մարմնիդ,
Դու քանդակած ես,
Սիրտս սիրուց քո կարմիր
Թևավորված է:
-Առաջին սերդ հո կուտ չի՞ գնացել,- հարցրեց ինձ:
Ես արտասանեցի.
Առաջին սերս
Խրթին էր, բարդ էր,
Երբ ես սիրեցի՝
Նա հարս էր արդեն...
Ինչքա՜ն հանդուգն էր
Առաջին սերս,
Այնքան տուժեցին
Սև սաթ մազերս...

-Երբ որ այդպես է, թույլ տուր «Կարտոֆիլ ես փխրեցնում» բանաստեղծությանդ միայն մեկ բառը փոխեմ՝ «թևավորված» է բառը դարձրու՝ «վիրավորված է»

«Սիրտս սիրուց քո կարմիր
Վիրավորված է...

Վիրավորված է բառը շատ հարմար եկավ, այդպես էլ տպագրեցի: (Տեղին օգտագործված բառը բանաստեղծության համար մի աշխարհ է:- Ասել է Հովհաննես Թումանյանը):

Եղելությունը պատմեցի Հովհաննես Շիրազին.

-Ով էլ որ փոխած էղնի՝ էդիկ բանաստեղծությունից սուրբ հոտառություն ունեցող մարդ է, բանաստեղծի սիրտ ու հոգի ունեցող,- ասաց Շիրազը:

***

Տուրջխ գյուղի գրադարանի մասին մի հոդվածաթուխ գրպարտչագիր էր տպագրել թերթում:

Գրադարանավարուհին բողոքել էր Աղասի Մելքոնյանին: Լրագրողը չի զլանում լինել գյուղի գրադարանում, ստուգել ու եզրակացրել, որ հոդվածը կեղծ է: Մամուլի ազնվամիտ գործիչը հուսագրում է գրադարանավարուհուն.

-Դուք բարեխիղճ եք աշխատել, մի հուսահատվեք, լավ աշխատանքի արդյունքը չի կարելի ջուրը լցնել, վագող ձիու ճակատին չեն զարկի...

-Զրպարտչական հոդվածի հերքումը կլինի... Եվ եղավ հերքումը՝ «Երբ կեղծում է գյուղթաղթակիցը» վերնագրով...

«Ջավախք իմ առասպելական» գիրքը ցույց տվի թոշակառու գրադարանավարուհուն և հայտնեցի, որ արդեն մահացել է Աղասի Մելքոնյանը:

-Հազար ափսո՛ս, ողորմի՛ այդ պայծառ մարդու հոգուն, լավ մարդն էլ մեռնի՞,- թախծեց գրադարանավարուհին:

-Գրիչ վերցնող մարդը պետք է ազնիվ լինի, ինչ որ գրում եք՝ հետևեցեք գաղափարական-քաղաքական ուղղվածությանը,- խրատում էր լրագրողը:

Թերթի «Ուղիղ ճակատին» բաժնում իմ երգիծական տողերն էին տպագրվել.

Պաշտոն տվին ապիկարին՝
Մեր հիմնարկը գարկեց քարին:

Ես գրել էի՝ «մեր շրջանը գարկեց քարին», բայց մեր շրջանը դարձրել էին մեր հիմնարկը: Ինձ համար վրդովեցուցիչ էր: Զանգում եմ թերթի խմբագիր Հակոբ Բլրցյանին:

-Ձեզ կպատասխանի մեր սեփական թղթակից Աղասի Մելքոնյանը: Խոսեք իր հետ:

-Վրդովմունքդ անցնի, պատմեմ, որ ես եմ փոխել. քննարկում էին, այնտեղ էի, ես պահանջեցի մեր շրջանը դարձնել՝ մեր հիմնարկը, իհարկե օգուտ քեզ: Շատ հարգելով քեզ՝ չուզեցա, որ վերստին շրջկոմում քո մասին վատ խոսեն, առանց այն էլ շրջանի ղեկավարությունը վիրավորվում է ձեր հումորից...

Համոզվեցի, բայց, ախր, ես բառերով տողերով էի պայքարում շրջանի անարժան ղեկավարների դեմ...

Ինձ հաջողվեց բազմատիրաժ «Ավանգարդում» հրատարակել օրիգինալը՝

Պաշտոն տվին ապիկարին՝
Մեր շրջանը գարկեց քարին...

Եվ դա ինձ համար եղավ ճակատագրական. շրջկոմի առաջին քարտուղարը կանչեց.

-Այս ի՞նչ ես գրել՝ ցույց տալով «Ավանգարդի» տողերը,- ասաց քարտուղարը:

Ես չքմեղացա, արդարանալու փորձեր արի, թե իր մասին չէ:

-Քո հակառակորդները, բոլորն ասում են, որ իմ մասին է:

-Ձեր մասին չէ, ով որ վրան առնի՝ նրա մասին է:

-Ես եմ վրաս առնում,- զայրացավ քարտուղարը և նույն օրը, գիշերվա ժամի տասնմեկին բյուրո հրավիրեց և ինձ ազատեց գալրոցի տնօրենի պաշտոնից:

Հազար անգամ ճիշտ էր Աղասի Մելքոնյանը, որ պահանջում էր գոնե մեր շրջանում բառերն զգուշորեն օգտագործել, չէ՞ որ տառերն ու գնդակները նույն արճիճից են ձուլում, ինչպես ասում է բանաստեղծը:

Նազարեթ Կիրակոսյան

ՄԵՐ ՀՈՐԵՂԲԱՅՐ ԱՂԱՍԻՆ

Աղասի Հարությունի Մելքոնյանը իմ հոր՝ Գևորգ Մելքոնյանի հորեղբոր որդին է, բայց ես, և ոչ միայն ես, այլ ամբողջ ընտանիքով, ազգականներով նրան կոչում էինք Աղաս հորեղբայր (հորեղբայր), և այդ հորեղբոր դերը և պարտականությունները նա կատարում էր ամենայն հոգատարությամբ: Նրան էի դիմում ամեն հարցով. լինի դա ընտանիքին վերաբերող, ընկերությանը, աշխատանքին՝ մի խոսքով, ամեն մի հարցով ակնկալում էինք նրա աջակցությունը: Նրա խորհուրդների մշտական կարիքն ունեին մեր բոլոր Մելքոնյանները: Նրան էին դիմում ընկերները, հարևանները և Ջավախքում նրան ճանաչող հասարակ աշխատավոր մարդիկ՝ ստանալով օգնություն, աջակցություն և բարի խորհուրդներ:

Աղասի Հարությունովիչի մասին շատ է գրվել որպես լրագրողի, մանկավարժի, ղեկավարի, մարդիկի: Բայց կենցաղային հարցերում բոլորը չէ, որ գիտեին նրա բնավորության գծերը. նա ուներ մի յուրահատուկ հատկություն: Չէր սիրում հարբած մարդ, թեև չէր խուսափում ընկերական շրջապատում և բարեկամների հետ խնջույքներից կամ ընկերական քեֆերից: Ընկերներից շատերն են հիշում նրա տանը, իր ձեռքով պատրաստած, կիրակնօրյա խաշի սեղանները: Խաշն առանց օղու, իհարկե չէր մատուցվում: Երկու բաժակից ավել խմել նրա համար անընդունելի էր: Նրան չափից ավելի խմած, առավել ևս հարբած ոչ ոք չի հիշում, բայց ես հիշում եմ և հենց դրա մասին է, որ պիտի պատմեմ. թե ինչպես Աղասի Հարությունովիչը երևի միայն մեկ անգամ կյանքում «հարբեց»:

Առհասարակ աշխատանքի բերումով ես և նա գյուղերում շատ էինք լինում՝ ես աշխատելով շրջանային ԴՕՍԱՖ-ի կամավոր կազմակերպության նախագահ, ինքը՝ «Սովետական Վրաստան» թերթի սեփական թղթակից: Շրջում էինք գյուղերը, ես անդամավճար էի հավաքում, իսկ նա պարզ է, գրի էր առնում գյուղի և գյուղացու ամեն տեսակի հոգսերի մասին և երկուսիս միացումը ոչ թե միայն բարեկամական կապերն էին, այլ այն, որ շրջում էինք Դոսաֆի մեքենայով և այս շրջագայությունները գյուղերում աշխատանքի առումով տալիս էին իրենց դրական արդյունքները: Բայց ֆիզիկապես այդ ամենը շատ մեծ աշխատանք էր պահանջում, գլխավորապես 60-ական թվերին, երբ Ախալքալաքի շրջանին միացվեց նաև Բոգդանովկայի շրջանը: Շրջանի շատ գյուղեր շրջկենտրոնից հեռու էին 30-60 կմ և դեպքեր էին լինում, որ երկուսով մնում էինք ճանապարհին, գլխավորապես ձմռանը, երբ Ջավախքի պայծառ ու պարզ օրը շատ շուտ վերածվում էր բուք ու բորանի:

Այս շրջագայությունների ժամանակ, երբ գործերս ավարտում էինք, գյուղի կոլտնտեսության նախագահը կամ կուսակազմակերպության քարտուղարը և ինչու չէ, հասարակ գյուղացիները մեզ հրավիրում էին տուն՝ հյուրասիրության: Այդ ժամանակ Աղասի հորեղբայրը հոնքերի տակից, իրեն հատուկ հայացքով, խոժոռ նայում էր ինձ և քաղաքավարի մերժում հրավիրողին՝

ասելով, որ «նոր, հարևան գյուղում կերանք» և խորին շնորհակալություն հայտնելով. նախընտրում էր տունդարձի ճանապարհը.

Ահա այսպիսի շրջագայություններից մեկի ժամանակ ինձ հաջողվեց ականատես լինել մի պատմության, որը նման չէր մեր սովորական առօրյային: Դա տեղի ունեցավ Կարզախ գյուղում, որտեղ և ես և իհարկե Հարությունովիչը, շատ բարեկամներ ու ընկերներ ունեինք: Երբ գյուղի ղեկավար ընկերների հետ մենք սովխոզի գրասենյակում էինք, ինձ տեղեկացրին, իհարկե Հարությունովիչից գաղտնի, որ մեր ընկերները՝ Աբովյան Վալոդյան, Ավագյան Դանիելը և ուրիշներ գյուղի ճաշարանում, որի բուֆետպանը Վոլոդյան էր, կազմակերպել են աղ ու հաց և ինձ պարտավորեցնում են, որ Հարությունովիչին համոզեմ չհրաժարվել հյուրասիրությունից: Երբ ես այդ մասին հայտնեցի Հարությունովիչին, նա անսպասելիորեն համաձայնեց. ամբողջ օրը շրջել էինք գյուղերում և շատ քաղցած էինք, և գլխավորը, որ հրավիրողները իր կողմից սիրված մարդիկ էին: Բայց իմ առջև նա դրեց մի պայման չխմել և իրեն չառաջարկել խմել դեռ 30 կմ ճանապարհ էինք անցնելու մինչև քաղաք: Կրկին հնչեցին մի քանի խրատական խոսքեր այն մասին, որ վնաս է խմելն իմ առողջության համար: Իհարկե, ես համաձայնեցի առանց որևիցե հակաճառության:

Մի քանի րոպեից, երբ արդեն համեղ ուտեստով լի սեղանի շուրջ նստած էինք և օղիով լի բաժակները մեր առջևում էին, Դանիել պապը դիմելով ինձ, առջարկեց, որ ես մի բան ասեմ՝ այսինքն սեղանի թամադա լինեմ: Ես աչքիս տակով նայեցի Աղաս հոփարին: Նա՝ իրեն հատուկ հումորով նկատեց, որ «քո ուզածն էլ հենց դա է» և ավելացրեց, որ երկու բաժակից ավելի չենք խմելու: Ընթերցողին տեղեկացնեմ, որ այս ամենը տեղի է ունեցել 1964թ., երբ մահացել էր Ռայիսյան Ռաֆիկը, իմ մտերիմ ընկերը, Վոլոդյայի և Դանիելի հարազատ բարեկամը և Հարությունովիչի կողմից սիրված ու հարգված երիտասարդներից մեկը՝ նույն ժամանակ, մի քանի օրվա տարբերությամբ մահացել էր նաև Հարությունովիչի մայրը՝ Նվարդ մամը, սեղանակիցների կողմից հարգված մի կին:

Առաջին բաժակը ես առաջարկեցի մեր հանդիպման կենացը: Սեղանակիցները ախորժակով կերան, խմեցին և գովեցին օղու անաբաուությունը, որոնց թվում նաև Հարությունովիչը: Նա խմեց մինչև վերջ և այստեղ ինձ մոտ ծագեց մի մտահղացում՝ փորձել Հարությունովիչին խմեցնել: Երկրորդ բաժակն առանց հետաձգելու ես առաջարկեցի Ռաֆիկի հիշատակի համար: Հարությունովիչն առաջինը ոտքի կանգնեց և գովեստի խոսքերից հետո, խմեց մինչև վերջ՝ առաջարկելով բոլորիս հետևել իր օրինակին: Նստելով իր տեղը՝ նա աչքի տակով էլի նայեց ինձ և հասկացրեց, որ բավարան է:

Ես լիքը բաժակը ձեռքիս բարձրացա դիմելով սեղանակիցներին, ասացի, որ կա ևս մի կենաց, որ անկարելի է չխմել: Դա մեր մայրերի կենացն է, Նվարդ մամի թամադայությամբ, որ նույնպես նոր էր մահացել: Նորից աչքի տակով նայեցի Աղաս հոփարին և զգացի, որ նա գոհ մնաց առաջարկությունից:

Իհարկե բոլորս հոանկայս խմեցինք այդ կենացը մինչև վերջ, այդ թվում Հարությունովիչը: Այս երեք բաժակ օղին, որը խմվեց շատ կարճ ժամանակամիջոցում, ազդեց իր արդյունքը: Երբ ես լսում էի, բոլորը նայում էին ինձ: Ես ձևացնում էի, որ չեմ հաս-կանում նրանց ցանկությունը, միաժամանակ համառորեն սպասում էի Հարությունովիչի ռեակցիային: Նա երկար սպասել չտվեց, շատ դժվարությամբ, իրեն հատուկ քմծիծաղով, շրջվեց դեպի ինձ և ասաց.

-Մի երկու բան էլ ասա: Շուտով աղ ու հացը վերածվեց խնջույքի: Վերջում անգամ նվագախումբ եկավ: Խնջույքը տևեց մինչև ուշ գիշեր:

Նույն օրը, մոտավորապես ժամը 24-ին, մեծ դժվա-րություններով հասանք Ախալքալաք: Դժվար էր, որովհետև ես էի վարում մեքենան՝ խմած վիճակում, իսկ Հարությունովիչը համարյա հարբած էր՝ թեև չէր մոռանում ամեն վայրկյան հիշեցնել անվտանգության կանոնների մասին: Երբ մոտեցանք իրենց տանը, Աղասի հորեղբայրը շատ զարմացավ, որ տեղ ենք հասել: Նա իջավ մեքենայից, իսկ ես վերադարձա տուն և պատկեցի քնելու: Դեռ չէի քնել, երբ կինս՝ Գայանեն զարմացած եկավ, զիմելով ինձ, ասաց. «վեր կաց, Աղաս հորիարը եկել է:»

Պարզվեց, որ նա տուն չէր մտել: Մեր տները միևնույն փողոցի վրա էին, ուստի եկել էր մեր տուն: Ներս մտնելով, համարյա բղավելով Գայանեի վրա, հրամայեց սեղան բացել, ասելով, որ պետք է խմենք. «Ամեն օր Ծնեսը, մի օր էլ Աղասը»:

Այս պատմությունը հնուց է գալիս: Մեր գյուղում Զամ-դուրայում, որտեղ ծնվել եմ ես, տարածված ասացվածք էր. «ամեն օր Բաղասը, մի օր էլ Մոքոն», այսինքն՝ երկու Մելքոնյան եղբայրներ, որոնցից Բաղասը խմող է եղել, իսկ Մոքոն չխմող՝ աշխատասեր, ռանչպար մարդ: Օրերից մի օր Մոքոն հարբած տուն է գալիս, տանը բոլորը զարմանում են ու կշտամբում, թե ո՞վ պետք է անասուններին կերակրի: Այստեղ Մոքոն ասում է վերևում բերված ասացվածքը, որ այդ օրը կրկնեց Հարությունովիչը:

Աղաս հորիարի «հարբելը» հենց երկրորդ առավոտ տարածվել էր քաղաքում: Անգամ լսել էր շրջկոմի առաջին քարտուղար Սիմոն Պետրոսի Պետրոսյանը: Նա ինձ անմիջապես կանչեց իր մոտ և ծիծաղելով, սակայն սկզբից մինչև վերջ, առանց չափա-զանցությունների, պատմել այս պատմությունը:

Որոշ ժամանակ անց Հարությունովիչն իր համար այս արտառոց պատմությունը պատմեց հերթական խաչի ժամանակ, իր օջախում, որին մասնակցում էին շատ ընկերներ և հաստատեց, որ կյանքում առաջին և միակ անգամն իրեն հարբեցրել է Ծնեսը:

Հովհաննես Մելքոնյան

ԻՄ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԸ

Աղասի Մելքոնյան անունը ինձ համար թանկ է ու սրտամոտ: Այդ, այս անունը ինձ համար հենց այդպիսին է մի պարզ պատճառով - ես իմ առաջին աշխատանքային մկրտությունը ստացել եմ նրա մոտ: Բանը նրանում է, որ երբ աշխատանքի անցա Ախալքալաքի կոմերիտմիության շրջկոմում, Աղասի Մելքոնյանը դարձավ իմ ավագ խորհրդատուն և չեմ չափազանցնում, ինչ-որ իմաստով նաև իմ ուսուցիչը: Եվ դա հասկանալի է, նրա մոտ դեռ շատ վառ էին այն հուշերն ու տպավորությունները, որ նա իր մեջ պահում էր իր այդ նույն կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար աշխատած տարիներից: Եվ ես սխալված չեմ լինի եթե ասեմ, որ մինչև իր կյանքի վերջը նա իր գործելակերպով այդպես էլ մնաց որպես մի երիտասարդ ու եռանդուն անձնավորություն: Մյուս ոչ պակաս կարևոր հանգամանքը, այն էր, որ նա նաև սպորտի մեծ նվիրյալ էր և իր երիտասարդության լավագույն տարիները միշտ էլ համարում էր, ինչպես ինքն էր ասում, սիրելի «Աբուլ» թիմում իր խաղացած ֆուտբոլը: Աղասի Մելքոնյանը մեկն էր այն քչերից, որոնց համար Ջավախքը ամեն ինչ էր իր սովորություններով ու ավանդություններով և ամենակարևորը իր մարդկանցով: Նրա համար թանկ էր ամեն մի անուն, որոնցից շատերի հետ կապված էր նրա կյանքի այս կամ այն դրվագը: Գիտեք, նա զարմանալի հետևողականությամբ ամեն անգամ ուրիշը բաց չթողնելով պահանջում էր յուրաքանչյուրից հարգալից վերաբերմունք ջավախքցիների ու նրանց հոգսերի հանդեպ: Սա պատվախնդրության ցայտուն օրինակ էր, որ միշտ ուղեկցեց Աղասի Հարությունովիչին իր առօրյա գործերում, գրած յուրաքանչյուր հոդվածում: Ահա այսպես տարիների ընթացքում մեր մեջ ստեղծվեց մի գեղեցիկ բարեկամություն, որը աննկատ վերածվեց ավագ և կրտսեր մտերիմների իսկական ընկերության, որով ես հպարտ եմ: Հետաքրքիրն այն է, որ տարիների ընթացքում իմ մոտ ձևավորվեց մի ներքին պահանջ. որևիցե միջոցառում անցկացնելուց առաջ խորհրդակցել Աղասի Մելքոնյանի հետ և դա կարծես ինձ տալիս էր մի տեսակ լրացուցիչ վստահություն, որի կարիքը միշտ էլ զգացել եմ: Իսկ գործի ավարտը ապդարարում էր նրա հոդվածը «Խորհրդային Վրաստան»-ում և դրանով կարծես ամփոփվում էր մեր կատարածի արդյունքը: Չեմ հիշում մի կարևոր միջոցառում և կոմերիտմիության և կուսակցության շրջկոմում իմ աշխատած տարիներին, որ ներկա չգտնվեր «Խորհրդային Վրաստան»-ի սեփական թղթակիցը Աղասի Մելքոնյանը: Մի շատ հարգարժան պահ էլ կար մեր ընկերակցության մեջ: Երկուսս էլ անպայման պետք է ներկա գտնվեինք մեր «Աբուլի» խաղին, այդ օրը ով էլ բացակայեր, նա անպայման մարգադաշտում էր և մենք միշտ նույն տեղը իրար կողքի նստած պետք է գիտեինք այդ օրվա ֆուտբոլային խաղը: Նա կարծես ամեն տարի պատրաստվում էր բարձրանալ Ճոբորեթի գագաթնակետ անտառ և իրեն յուրահատուկ սճով ու ոգևորությամբ թերթի միջոցով ներկայացնել շրջանի պիոներական

համարի բացման արարողությունը և ուրիշ օգտագործելով, որի ուղղի պես բառացիորեն գովերգեր Զավախքի բնությունը: Մեր հետ պատահել են նաև զավեշտալի դեպքեր: Հիշում եմ, միասին գնացել էինք մեր գյուղերից մեկը, կոնկրետ Զակ. Այդ օրերին Մոսկվայում տեղի էր ունենում ՍՄԿԿ 27-րդ համագումարը: Եվ երբ մտանք անասնապահական ֆերմա, կթվորուհիներից հենց առաջինը, դեռ ոչինչ չհարցրած, կիսատ թողեց ձեռքի գործը, վեր կացավ, ընդունեց զգաստ կեցվածք ու միանգամից սկսեց. «ընկեր Մելքոնյան, ոգևորված կուսակցության 27-րդ համագումարի որոշումներով, վերցրել եմ նոր սոցիալիստական պարտավորություններ...», լավ գիտենալով, որ եթե թերթի թղթակիցն է եկել, ուրեմն պետք է ներկայանալ: Ուղղակի այս խեղճ կինը կատարել էր իր ղեկավարների հանձնարարությունը չափից ավելի շտապելով: Աղասի Մելքոնյանին միշտ հատուկ էր պարքի ու պատասխանատվության բարձր զգացումը: Գործը կատարում էր սիրով ու նվիրումով: Երբեմն միապաղաղ, նույնանման թվացող միջոցառումներին նա իր հոդվածներում միշտ տալիս էր մի նոր երանգ: Ես շատ հաճախ էի նկատում, որ նույն օրվա անելիքը նա կարողանում էր ավարտել հենց նույն օրվա վերջին և անմիջապես հասցնել թերթի խմբագրությանը: Նա միշտ առանձին կարևորություն էր տալիս հոդվածների վերնագրերի ընտրությանը և երբ ընտրությունը իր սրտով էր, նա մեր ներկայությամբ այն ընթերցում էր ընդգծված շեշտադրումով և կարծես մի թեթև շիկնելով, չէր թաքցնում ուրախությունը:

Աղասի Հարությունի Մելքոնյանը ընդմիշտ մնաց իմ մեծ բարեկամը:

Ստեփան Ստեփանյան

ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՈՒՄՆԵՐ
(Աղասի Մելքոնյանի պատմածներից)

Այնքան բան է իմ գլխով անցել. տեսել եմ լավն էլ, վատն էլ. մարդկանց՝ բարձր նկարագրով, նաև ուրիշի, դիմացինի, անգամ յուրայինի կյանքը դժվարացնող, խառնակիչ, զրպարտիչ, ինչ տիպի ասես մարդկանց: Այդ ամենով հանդերձ՝ կյանքը քաղցր բան է, և արժե ապրել, արարել:

Իսկ հիշողությունը՝ մեծ կենսագրություն ունեցող այդ հրաշքը, սերունդների, անցյալի ու ներկայի մեծ կապն է:

Կամա, թե ակամա ժամանակ առ ժամանակ հիշողությունն արթնանում, վերակենդանացնում է անցած գնացած դեմքերն ու դեպքերը:

***

Կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Գելաշվիլին սիրում էր ոտքով շրջել քաղաքը, գյուղերում էլ շատ էր լինում: Տեղում էր լուծում բազում հարցեր: Մեկ անգամ քաղաքային այգին մտնելիս, տեսնում է մեկը խոտերի մեջ փռված խոմփացնում է: Արթնացնել է տալիս նրան ու կանչում իր մոտ.

-Кто ты такой?

-Я педагог, товарищ Гелашвили.

-Ты не педагог, а большой ишак.

Գելաշվիլու ղեկավարման տարիներին Ախալքալաքում և՛ կուլտուրական կյանքն էր ծաղկում (համերգներ, օլիմպիադաներ) և՛ սպորտը: Դեռ տնտեսական կյանքն էլ առաջին հերթին:

Հետագայում, երբ նա ղեկավար աշխատանքի էր անցել Վրաստանի կոմկուսի կենտկոմում, ամենատարբեր հարցերով շրջանի մարդիկ գիմում էին նրան, և Գելաշվիլին հասնում էր, օգնում մարդկանց:

***

Դե՛, մեր լեռնաշխարհի ժողովուրդը հումորով է, ձեռ առնելու աստիճանը անմիջական, առիթ է փնտրում, որ մեկին մականուն կպցնի: Ու մականունն ստացողը ոչ միայն չի վիրավորվում, այլ մի տեսակ կարծես հարգանքի է արժանանում: Մականունն էլ պատիվ է: Ծուռմիտ Գալանս, Թոփալ Արսեն, Աձիկենց Արես, Կոնդ Կարո, Դեղալ Արես, Խնեգենց Ակո, Ձեթ Ադաս, Թևոսենց Ակոբ, Ցիռ Շավարշ, Շալվրենց Խորեն, Կծիկենց Շման, Աղվես Հայկ: Սրանք են լեռնականցուն համ ու հոտ տվողը երեկ, այսօր, միշտ:

***

Ինչևէ: Մեկը մի օր Թբիլիսի - Վալե գնացքով ճանապարհորդում է գիշերով: Լուսադացին սա վագոնի լուսամուտից գլուխը դուրս է հանում ու կարանում կանգնած մեկին հարցնում.

-Բիլո՞, էս Բոռլո ասի՞ս:

-Ռա՞, Բոռլո, էս Խաշուրի ա:

Դու մի ասա Խաշուրում վագոնն այդ անջատած են լինում գնացքից, ու էս խելոքն էլ էդ փորձանքի մեջ է ընկել, մնացել Խաշուրում:

Զավեշտականն այն է, որ տուն հասնելու պես սկսել էր աջ ու ձախ այդ միջադեպը պատմել մարդկանց գունազարդելով ու համեմելով:

Արդյունքում նրա անունը կնքվեց Բոռլո՛:

Մեղմացնելով փողոցում, ամենուր ասում էին.

-Պոռլո...

-Բարև պոռլո ձյաձյա:

***

Դպրոցում դասեր ունեի. մեկ անգամ դասի ժամին ասացի. ո՞վ կարող է ասել, ո՞վ է մեր ժողկրթության վարիչը.

-Բոռլոն,- միաձայն բացականչեցին բոլորը:

Դե ինքն էլ խաղաղ, տանող մարդ էր. չէր էլ նեղանում իր մականունից:

***

Մեկ անգամ Երևանում երկու ընկերներով շրջում էինք փողոցում: Հանկարծ նկատեցինք մեր պատանեկության տարիների մի ընկերոջ, որ նույնպես մականուն ուներ, բայց չուներ հումոր ու անհամ անձնավորություն էր:

Հիշեցինք մականունը նրա, մոտակա մի շենքի եռևում թաքնվելով, գոռացինք.

-Գի՛դ-լա՛...

Սա հետ դառավ ու նեղացկոտ հայացքով նայեց շուրջը: Քայլերն արագացրեց: Մեկ ուրիշ շենքի ետից նորից գոռացինք, այս անգամ ավելի հանդուգն.

-Գիդ-լա՛, Գիդ-լա՛...

-Վայ, ես Ձեր... ասելով փախուստի դիմեց:

***

Երևանում հեռակա մանկավարժական ինստիտուտում հայերենից դրավոր էինք տվել. հաջորդ օրը ինձ ու իմ երկու ընկերներին կանչեցին քննական հանձնաժողովի մոտ ու ամոթանք տվեցին, որ երեքիս դրավորն էլ մի մարդ է գրել նույն ձեռագրով:

Հետո, երբ մենք բացատրեցինք, որ դա մեր ամեն մեկի ձեռագիրն է և որ մենք ընդօրինակել ենք մեր սիրելի ուսուցիչ Գևորգ Մադոյանին, հանձնաժողովը ստուգելու համար մեր ասածը, մեր երեքին էլ թելադրեց մի քանի տող:

Դասախոսները զարմացած իրար նայեցին անհավատալի ընդօրինակման համար:

***

Հորեղբայրս՝ Սեթոն, փոքրամարմին մի բուռ մարդ էր, քարտաշ. հսկա ժայռաբեկորը տակին կվալդով ու սեպերով ձևին ձևին էր անում, որ մարդիկ պատառ-պատառ քարերով տուն շինեին:

Հայրս էլ ֆիզիկապես առանձնապես աչքի չէր ընկնում: Նա էլ ջրաղացպան էր: Հաճախ էր ջրաղացքարը հատուկ հարմարանքով բարձրացնում քափ քրտինքով, իհարկե, և կռանում: Իսկ ավելի առաջ Աբով էր գնացել, ուր ասես, Արևմտյան Հայաստան, հետո էլ գինու պահեստապետ:

***

Մի տարի «Սովետական Վրաստան» թերթը փակման վտանգի տակ էր. շրջանային թերթն արդեն փակել էին: Մեծ տպաքանակ էր հարկավոր բաժանորդներով, որ չփակվեր:

Գյուղից-գյուղ էինք ընկել ծանոթ անծանոթով, որ հայկական թերթը չփակեն: Տեսնել էր պետք, թե ինչ շարժում էր սկսվել շրջանով մեկ: Տուն կար 2-3 օրինակ էր գրվում: Մեկն էլ մի անգամ կատակով ասաց.

-Ճար չեղավ, ծխախոտիս թուղթն էլ դրանով կանեմ, միայն թե հայկական թերթը էլ չփակվի:

Եվ թերթը չփակվեց: Ժողովուրդ էր կանգնած նրա թիկունքին:

A 91008 II

***

Մոսկովը: Ո՞վ չի ճանաչում ամենահաս այդ մարդուն. սպորտսմեն, մարզիչ: «Արարատ» ֆուտբոլային թիմի վերելքի տարիներին գալիս հորդորում էր բոլորիս, որ տղաներին օգնենք, որ լավ խաղան: Մենք էլ ընկերներով կոլխոզ-սովխոզներից բեռնատար ավտոմեքենայով կարտոֆիլ, պանիր էինք Երևան ուղարկում Մոսկովի հետ, ու նա տուն առ տուն մթերքը հասցնում էր ֆուտբոլիստներին:

«Ուրիշ Մոսկվա Սեմյոնովիչ չկա, նա մեկն է»:

***

Թերթից հիշեցրել էին, որ հոդված պետք է գրվեր Իսահակ Աբրահամյանի մասին: Իսահակը նախ Հայրենական պատերազմի մասնակից է, կյանքի մեծ ճանապարհ անցած անձնավորություն: Երկար տարիներ դատախազ, կուսակցական ղեկավար աշխատող և գործիչ: Այդ ամենից առավել նա տաղանդավոր մարդ է, մեծ էրուդիցիայի տեր ու իմ հին ընկերը:

Ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, որ իմ խոսքը նրա մասին սառնասիրտ ու անկողմնակալ լինի: Գործի մեջ ներգրավեցի մեր Կամոյին, և միասին գրեցինք արժանավոր այդ մարդու մասին մի ջերմ խոսք:

Արձագանքը նույնպես ջերմ էր, շրջապատը, մարդիկ մեծ հարգանք ունեն Իսահակի նկատմամբ, և հոդվածն ընդունվեց նույնպիսի ջերմությամբ: (Տե՛ս «Ջավախք իմ առասպելական»):

***

Մեկ անգամ մեր տանը նստած Կամոյի հետ զրուցում էին: Երգիծական էջի համար թերթի խմբագրությունը մի հոդված էր ինձնից ուզում: Մեր խոսակցության նյութը «վրաքաշների» և «սաչուի» մասին էր: Դե՛ «վրաքաշներն» այն մարդիկ են, ովքեր նվագախմբից մեծ փող են վերցնում քեֆ ուրախությունից առաջ ու շաբաշի ժամանակ հարյուրանոց տալիս նրանց, որ մյուս մասնակիցներն էլ ճարահատյալ մեծ փող տան:

«Սաչուն» էլ, դե՛, հարսանիքի ժամանակ փող հավաքելն է հարսանքավորներից: Երկուսն էլ ամոթալի, պասիվ չբերող երևույթ են, ու մտածում էինք ի՞նչ տեսքով կարելի է ընթերցողին ներկայացնել իմ խոսքը:

Հայրս կողքի սենյակում ծխելով քայլում էր ու ինչ որ բան փնթփնթում:

Մենք խոսում էինք բարձրաձայն, երբեմն էլ ծիծաղում: Զգիտեմ ինչ ասաց Կամոն բարձրաձայն, որ հայրս բացելով սենյակի միջնադուռը, զայրացած ասաց.

–Դու էլի՞ նկար, ծո օղուլ ամոթ է, ուրիշ բան չունի՞ք գրելու:

***

Վահան Տերյանի մասին հայրս շատ էր խոսում, պատմում էր իրենց մանկության օրերից, «Ախպոր պես էինք». ասում էր ու խնդում, աչքերը լցվում էին: Շատ փխրուն հոգի ուներ, տանել չէր կարողանում ամենաչնչին անարդարությունն էլ. ջրաղացում հասնում էր, օգնում ում ինչով կարողանում էր:

-Մեր տունը Վահանին հետ իրար ծոց կքնեինք: Ոտքերով յորղանը վեր կհաներ ու մի թելի կարերուն ծակերեն կաշեր. «Արութիկ, տե՛ս, ասպղեր կերևան»:

Վերջին հանդիպումը հիշելով դինու պահեստի դռանը, արտասվում էր. Էկա, տեսա գիմնազիստի շորերով մեկը ինձի կաշե: Ճանչեցի:

-Արութիկ ջան, ես եմ, Վանիկը, չճանչեցի՞ր:

-Մորքուրիս աչքերը մատնեցին, ու մենք փաթռված գուլայինք:

Էլ չտեսա իրան:

***

Իմ խնդրանքով հայրս շատ բան պատմեց Վահան Տերյանի հետ հանդիպումներից, ու հուշերն այդ տպագրվեցին Ախալքալաքի շրջանային թերթում և «Գրական թերթում»:

Ուրախությանը չափ չկար, կարդում էր թերթերն ու հրճվում, որ մի ծանր քար է ընկել իր հոգուց. ինքն էլ է խոսք գրել իր հարազատի մասին:

Ինչեր չէր տեսել այդ մարդը. թուրքական յաթաղանի ավերումներ Ջավախքում, մեծ փախուստ, գաղթ Մանգլիս, ետ վերադարձին ձյան բուքի տակ էր մնացել իր երեխաների հետ, հրաշքով փրկվել:

Իմաստուն, նահապետ մարդ էր հայրս՝ դյուրահավատ, բռնկուն, շատ էր սիրում կյանքը, բնությունն ու մարդուն: Մեծ կարոտներով ապրող, յավատես, մի փոքր էլ խռովկան: Մինչև վերջ հավատարիմ մնաց իր բարի նկարագրին:

***

Սարերի նման վեհ ու բարձր է Ջավախք աշխարհի մարդկանց հոգին. ուտող խմող, հյուրասեր: Սեղաններին ծով ուտելիք, ու հետո ուտելիքն ու խմելիքը սեղաններին չի էլ մնում. լավ ուտողներ էլ կան, դեղ ուտողներ: Մեկը կա, որ մետրով սեղան է ուտում: Ջափում են նախապես ճոխ սեղանը մետրով և մի 2-3 մետր տարածքը մի ծայրից սկսելով, սրբում է մինչև վերջ ինչ կա: Վերջում էլ գրազով ոչխարի խաշած դմակն է ուտում ամբողջապես:

Նման ուտողները երկկողմանի են ծամում, երկու ջրաղացքար են աշխատեցնում միանգամից: Զարմանալին էլ այն է, որ նման ուտողների մի մասը նույնիսկ նիհար է:

Բա որ 120 խինկալ ուտող էլ կա ընդ որում տնական խինկալներ՝ նորմալ, մեծ:

Ամոթով ժողովուրդ է լեռնականցին, չի սիրում լացկան մարդկանց.

-Ծո՛, մի լա, էս հող ու ջրին ամոթ է:

***

Քեֆի ժամանակ հաջողացրեցի լուսանկարել մի ընկերոջ, որը մի մեծ լոլիկ բերանին ոչ կարողանում էր ծամել, կուլ տալ, ոչ էլ դուրս հանել. աչքերը չռվել էին: Մի զավեշտական տեսարան:

Երկու օր անց լուսանկարը տարա ցույց տվեցի այդ նույն մարդուն.

-Ճանաչո՞ւմ ես:
-Ո՞վ է էս ապուշը,- կարմացավ նա:

***

Սերգեյ Իգիթյանը Խորհրդային Միության Գերագույն խորհրդի պատգամավոր էր Ջավախքից: Մի տարի վերևից շրջանի ղեկավար էին ուղարկել մեկին, որը ոչ տեղի ժողովրդի՝ հայերեն լեզուն գիտեր, ոչ էլ ռուսերեն: Թարգմանիչների օգնությամբ էր ղեկավարում:

Գերագույն մարմնի հերթական նստաշրջան մեկնելուց Սերգեյ Իգիթյանը հայտարարել էր, որ մինչև իր հետ գալը այդ ղեկավարը հեռացվելու է շրջանից, մանավանդ որ շատ դաժան ու չկամ անձնավորություն է:

Նստաշրջանի ընդմիջմանը Իգիթյանը մոտեցել էր Միկոյանին ու պատմել եղելությունը:

Մինչև Սերգեյ Իգիթյանը տուն կվերադառնար, նույն վերևներից անհաջող ղեկավարին հետ տարան:

Ժամանակներն այդպիսին էին, բա՛...

-Մե անքամմ,- պատմել է Իգիթյանը,- Մոսկվա կերթայինք նիստի:- Թիվլիզ-Մասկվա պոեզի մեջ էինք: Ճաշի ժամին ամեն մեկս հանեցինք ինչ փերել էին հետներս ուտելու: Ես ա սեղանին թրի փերածս ու ըսի. наш поросенок.

-Эта не поросенок, а целая свиноматка,- բարձրաձայն խնդաց կենտկոմի քարտուղար Մժավանաձեն:

***

Մեր սերունդը բախտավոր էր: Ճիշտ է, քառասունական թվականներին էլ կարիքն իրեն զգացնել էր տալիս, սակայն կյանքն ուրախ էր, մարդիկ ապրում էին ոչ միայն հացիվ: Զահելությունը մեծ եռանդով սովորում էր դպրոցներում և մանկավարժական ուսումնարանում, գործում էին դրական, երաժշտական խմբակները, կար թատրոն՝ հետաքրքիր ներկայացումներով: Ճիշտ է, պատերազմը տակնուվրա արեց շատ բան, սակայն մարդիկ ուժ գտան իրենց մեջ ոչ միայն վերականգնելու կորցրածը, այլև ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու իրենց կյանքը:

Մի փայլուն համաստեղություն էր երիտասարդությունը, որը և՛ պատերազմում, և՛ խաղաղ պայմաններում իրեն դրսևորեց տղամարդավարի:

Մկրտիչ Սարգսյան, Իսահակ Աբրահամյան, Սերգեյ Շիրինյան, Մյուդ Պետրոսյան, Հովիկ Զոլախյան, Սերգո Թորոյան, Ռաֆիկ Նանուշյան, Սերգեյ Փախլյան և ուրիշներ: Այս շարքը կարող էր ավելի ստվար լինել, եթե պատերազմից ետ վերադառնային նույնքան արժանավոր շատ զավակներ:

Կյանքի հորձանուտներում ամեն մեկն ապահովեց իր տեղը: Մկրտիչ Սարգսյանը ականավոր գրող, Իսահակ Աբրահամյանը պետական, կուսակցական գործիչ, Սերգեյ Փախլյանը պետական գործիչ, Ռաֆիկ Նանուշյանը գեղանկարիչ, Մյուդ Պետրոսյանը՝

վիրաբույժ, Սերգո Թորոյանը՝ բժիշկ, Հովիկ Զոլախյանը՝ իրավաբան, Սերգեյ Շիրինյանը՝ բանահավաք:

Դա մեր շրջապատն էր, մեր գողտրիկ քաղաքի պարծանքը: Իսկ շրջանի մասշտաբով որքան ականավոր զավակներ, որոնք բոլորը միասին Զավախք աշխարհի մի նոր լուսավոր էջն են:

Լեռնաշխարհն այսօր տխուր ծանր վիճակում է, չկան աշխատատեղեր, մարդիկ ապրուստ են հայթայթում քարից, հողից մեծ դժվարությամբ հաց քամելով, նոսրանում է հայաշխարհը այս գողտրիկ մեծ կարիքից, անուշադրությունից ու բարձիթողի վիճակից:

Հույսը հայ գործարարն է՝ աշխարհով մեկ սփռված, աշխարհով մեկ տարածված, որ համախմբված ու համագործակցված տեր կանգնի թե՛ մայր Հայրենիքին և թե՛ Զավախքին:

Կամո (Կամսար) Սարիբեկյան

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՀՈԴՎԱԾՆԵՐ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐԻՑ

1967

ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոգդանովկայի շրջանի Օրոջալար գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության անասնաբույծները հնգամյակի առաջին տարին եզրափակեցին անասունների գլխաքանակի աճի և մթերատվության բարձրացման գործում ձեռք բերած աչքի ընկնող հաջողություններով:

Կաթնապրանքային ֆերման, որի վարիչն է Վ. Հանեսյանը, արտադրել է 2.319 ցենտներ կաթ: Դա 115 ցենտներով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: Համապատասխանաբար ավելացել է նաև կովերի կաթնատվությունը, որը տարեվերջին հասել է 2.200 կիլոգրամի: Սա շրջանում ամենաբարձր բնագիծն է: Այն բրիգադը, որ ղեկավարում է կոմունիստ Վ. Բաղդասարյանը, տարվա ընթացքում մեկ կովից ստացել է 2.250 կիլոգրամ կաթ: Բազմաթիվ առաջավորներ կարողացել են հասնել ավելի բարձր արդյունքների: Միջնակարգ դպրոցից արտադրություն եկած Ալվարդ Հանեսյանը իր խնամքին հանձնված յուրաքանչյուր կովի կաթնատվությունը հասցրել է 2.370 կիլոգրամի: Կաթի արտադրության պարտավորությունները զգալիորեն գերակատարել են կթվորուհիներ Փ. Տոնոյանը, Ս. Զոկանդարյանը և ուրիշներ: Արտադրական առաջադրանքները գերակատարած կթվորուհիները հավելյալ վարձատրության կարգով ֆերմայից ստացել են 160 ցենտներ կաթ:

Բայց ինչու միայն կաթի արտադրության ավելացման մասին: Կոլտնտեսությունը առաջընթաց քայլ է կատարել նաև մսի արտադրության բնագավառում: Նախատեսված 280-ի դիմաց խոշոր եղջերավոր անասունների ֆերման արտադրել է 296 ցենտներ միս: Մսի արտադրության ավելացման գործում իրենց համեստ լուման են մտցրել բոլոր անասնապահները: Արոտային շրջանում փորձված հովիվներ Ա. Թթյանը, Ի. Բաղոյանը մեկ-երկու տարեկան 90 գլուխ մատղաշներից յուրաքանչյուրի կենդանի քաշը օրական ավելացրել են 800-900 գրամով և բտման սեզոնից հետո դրանք պետությանն են վաճառել միջակ և միջակից բարձր գիրությամբ:

Ֆերմայի կոլեկտիվը միշտ էլ իր առաջնահերթ խնդիրն է համարել պետական պարտավորությունների ժամանակին կատարումը: Մթերակայան է հանձնվել 220-ի փոխարեն 232 տոննա կաթ, 460-ի դիմաց 470 ցենտներ միս: Դրա շնորհիվ նախորդ տարվա 69 հազա-

ի դիմաց անցյալ տարի ֆերման ստացել է 75 հազար ռուբլու դրամական եկամուտ:

Ֆերմայի մարդկանց գործերը լավ են ընթանում նաև այս տարի: Նախապատրաստված սկսելով անասունների ձմեռումը, նրանք բոլոր նախապայմաններն ստեղծել են մսերքների արտադրության բնագավառում ձեռք բերած հաջողությունը պահպանելու նաև առաջիկայում: Անասնաշենքերը հարմարավետ են, տաք ու լուսավոր: Ժամանակին կոմպլեկտավորվել է անասնապահների կազմը: Ձմռան ամիսներին այդ դժվարին տեղամասն են ուղարկվել գործիմաց մարդիկ:

Տարիների փորձը ցույց է տվել, որ Օրոջալարում կաթի 55-60 տոկոսը ստացվում է մսուրային շրջանում, ուստի այդ շրջանի հաջող անցկացումը և անասնապահական մթերքների ավելացումը կախված են կերի բազայից: Կուտակված 1.298 տոննա կոշտ կերը, 245 տոննա սիլոսը, խտացրած և հատիկաֆուրաժային կերերի մեծ պաշարը լրիվ կբավարարեն մսուրային շրջանի պահանջները: Մսուրային շրջանի առաջին երկու ամսում (նոյեմբեր, դեկտեմբեր) ծնել է 30 կով: Լիակերակրման և հոգատար խնամքի շնորհիվ ծնած յուրաքանչյուր կով օրական տալիս է 10-12 կիլոգրամ կաթ, իսկ առանձին կովերի կաթնատվությունը հասնում է 16-18 կիլոգրամի: Լավ է խնամվում մատղաշը:

Առաջավոր հորթապահ Զ. Քեյանի խնամած հորթերի օրական միջին քաշաճը հասնում է 400-450 գրամի: Նախրապահներ Մ. Թաղայանը, Ի. Կոբելյանը ջանք չեն խնայում 60 երինջների խնամքը օրինակելի կազմակերպելու, տարևերջին նրանց ֆերմայի բարձրակիթ կովերի շարքը փոխադրելու համար:

Կաթնապրանքային ֆերմայի կոլեկտիվը խոստացել է 1967 թվականի վերջին ունենալ 470 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում 230 գլուխ կով, յուրաքանչյուր 100 կովից ստանալ և պահպանել 95 հորթ, ամեն մի կովից կթել 1.900 կիլոգրամ կաթ, պտուղությանը վաճառել 225 տոննա կաթ, 48 տոննա միս:

Օրոջալարի անասնապահները այդ ցուցանիշներով են դիմավորելու Մեծ հոկտեմբերի փառապանծ 50-ամյակը:

17 հունվարի

ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԲՈԼՈՐ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ

Ախալքալաքի շրջանի Իխտիլա գյուղի կոլտնտեսության հաշվետու-ընտրական ժողովում կոլտնտեսության վարչության նախագահ Ա. Մկրտչյանի զեկուցումից երևաց, որ անցյալ տարում որոշ հաջողություններ են ձեռք բերվել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման և անասնապահական մթերքների արտադրության ավելացման գործում:

Ագրոկոմպլեքսի լրիվ կիրառումը կոլտնտեսությանը հնարավորություն տվեց հեկտարից ստանալու 13,8 ցենտներ հացահատիկ: Նախորդ տարվա համեմատությամբ հացահատիկի համախառն տր-

տադրությունն ավելացավ 1.719 ցենտներով: Չնայած խիստ ցրտերին, դաշտավարները կարողացան կարտոֆիլի մեկ հեկտարի բերքատվությունը հասցնել 70, բանջարեղենինը 254 ցենտների:

Անասնապահների աշխատանքում նույնպես նկատվում է որոշ բեկում: Կոլտնտեսությունը գերակատարել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի ավելացման պլանը: Յուրաքանչյուր 100 կովից ստացվել և պահպանվում է 104 հորթ: Եթե 1964 թվականին յուրաքանչյուր կովի կաթնատվությունը կազմում էր 1.365, 1965 թվականին 1.668 կիլոգրամ, ապա 1966 թվականին այն հասավ 1.752 կիլոգրամի: Նախորդ տարվա համեմատությամբ կաթի համախառն արտադրությունն ավելացել է 124 ցենտներով:

Կոլտնտեսականները լրջորեն են նախապատրաստվում առաջիկա գարնանացանին: Կատարված է 330 հեկտար ցրտահերկ, ցանված է 68 հեկտար աշնանացան ցորեն: Ցանքերը աշնանը սնուցվել են հանքային պարարտանյութերով: Նորոգված են տրակտորները ու կցովի գործիքները, մաքրված ու ցանքային կոնդիցիայի հասցված գարնանացանին անհրաժեշտ բոլոր տեսակի սերմացուները, դաշտ է փոխադրված 550 տոննա օրգանական պարարտանյութ:

Ժողովում բացահայտվեցին նաև կոլտնտեսության և նրա վարչության աշխատանքում տեղ գտած թերությունները: Կոլտնտեսությունը թերակատարել է մանր եղջերավոր անասունների գլխաքանակի և մթերատվության ավելացման առաջադրանքները: Նվազել է մաքինների պտղաբերությունը, ոչխարների բրդատվությունը: Տարվա ընթացքում զանազան պատճառներով կորստի է մատնվել 21, հարկադիր մորթի ենթարկվել 131 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Այսպիսի պայմաններում բոլորովին էլ զարմանալի չէ, որ գյուղտնտարտեղը թերակատարել է պետությանը միս, բուրդ վաճառելու առաջադրանքները և նախորդ տարվա համեմատությամբ 11.728 ռուբլով պակասել են դրամական եկամուտները:

Կոլտնտեսությունում քիչ չեն կոլտնտեսային դեմոկրատիայի և աշխատանքային կարգապահության խախտումները: Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է կոլտնտեսականների հինգ ժողով և վարչության տասը նիստ միայն: Աշխատունակ 560 կոլտնտեսականից 30 չեն կատարել աշխօրերի պարտադիր մինիմումը, այդ թվում 21 կոլտնտեսական ու կոլտնտեսուհի ոչ մի աշխօր չեն վաստակել: Կոլտնտեսականներ Ծ. Դիլանյանը, Ս. Բախչագուլյանը, Կ. Քամալյանը, Լ. Դեմուրյանը և ուրիշներ օգտվում են կոլտնտեսականի բոլոր իրավունքներից, սակայն հեռու են հանրային աշխատանքներից:

– Մեր կոլտնտեսությունը,– ասաց իր ելույթում կոլտնտեսական Պ. Լազգյանը,– վարելահողերի խիստ կարիք է զգում: Մեզ մոտ յուրաքանչյուր կոլտնտեսականի մշակելու համար բաժին է ընկնում ընդամենը 0,20 հեկտար հողամաս, շրջանի միջինից 0,30 հեկտարով պակաս: Դա, ինչ խոսք, խանգարում է մեր առաջընթացին: Ժամանակը չէ՞ արդյոք լուծելու բոլորիս հուզող կենսական հարցը: Այս

գործում իրենց խոսքը պետք է ասեն շրջանի զեկավար կազմակերպությունները և հանրապետության համապատասխան օրգանները:

Կոլտնտեսական Պ. Հովսեփյանը իր ելույթը նվիրեց տնտեսության դեռևս չօգտագործված ռեզերվներին:

- Մեր հաջողությունները ավելի մեծ կլինեին, եթե մենք ճիշտ կազմակերպեինք հանրային հոտի արոտային շրջանը,- ասում է նա: - Արոտավայրերը ռացիոնալ չենք օգտագործում, անասուններին յայլաղ են բարձրացնում ուշացումով, այնտեղից դյուղ վերադարձնում ժամանակից շուտ: Դա բացասաբար է անդրադառնում մթերատվության վրա:

Հովսեփյանը առաջ է քաշում յայլաղում անասնաշենքեր և «Սամսարի գել» կոչվող լճակի ջրերի հաշվին ջրամբար կառուցելու հարցերը: Վերջինս կլուծի անասունների ջրով ապահովելու և արոտավայրերը ոռոգելու պրոբլեմները:

Կոլտնտեսականներ Մ. Բալասանյանը, Ս. Աբգարյանը, Գ. Դարբինյանը և ուրիշներ յուրջ թերություններ բացահայտեցին գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացման, կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման բնագավառներում:

Վարչության գործունեության ակտիվ հաշվետու ժողովը ընդունեց գործնական միջոցառումներ: Ժողովը որոշեց հոբելյանական տարում հեկտարից ստանալ 10 ցենտներ հացահատիկ, 150 ցենտներ կարտոֆիլ, 280 ցենտներ բանջարեղեն, 30 հեկտար հողատարածություն մաքրել քարերից և դարձնել մեքենահարմար: Կերի բազան ամրապնդելու նպատակով որոշված է 15 հեկտարով ընդարձակել միամյա խոտաբույսերի ցանքերը: Նշված է յուրաքանչյուր 100 կովից ստանալ և պահպանել նույնքան հորթ, յուրաքանչյուր 100 մաքուց 98 գառ, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1.900 կիլոգրամի, մեկ ոչխարի բրդատվությունը՝ 2,7 կիլոգրամի: Ընթացիկ տարում կոլտնտեսությունը պետությանը վաճառելու է 2.000 ցենտներ կաթ, 300 ցենտներ միս, 35 ցենտներ բուրդ, 1.800 ցենտներ կարտոֆիլ, 620 ցենտներ հացահատիկ: Որոշվել է նաև յայլաղում 500 դլուխ խոշոր եղջերավոր անասունի համար կառուցել անասնագոմ, սղոցարան, լիովին ավարտել ոռոգման ցանցի և ջրմուղի վերակառուցումը:

26 հունվարի

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործարար մթնոլորտում անցավ Ախալքալաքի շրջանի գյուղատնտեսության առաջավորների հավաքը, որը լսեց և քննության առավ գյուղատնտեսության արտադրական վարչության պետ Մ. Ալելիշվիլու՝ «1966 թվականի գյուղատնտեսական տարվա արդյունքները և հնգամյակի երկրորդ տարվա խնդիրները» զեկուցումը:

- Շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները, կենսագործելով ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումները,- նշում է զեկուցողը,- զգալի հաջողություններ հասան գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու գործում: Նախորդ տարվա համեմատությամբ յուրաքանչյուր կովի կաթնատվությունն ավելացավ 101 կիլոգրամով, իսկ կաթի համախառն արտադրությունը՝ 801,9 տոննայով: Խանդոյի, Բուռնաշեթի, Բուդաշենի կոլտնտեսությունները ամեն մի կովից կթեցին 2.365-2.558 կիլոգրամ կաթ:

Չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, շրջանի տնտեսությունները հացահատիկային կուլտուրաների հեկտարի միջին բերքատվությունը հասցրին 10,5 ցենտների:

Շրջանը հաջողությամբ կատարեց պետությանը գյուղատնտեսական մթերքների վաճառքի առաջադրանքը:

Սակայն, ինչպես նշվեց խորհրդակցությունում, այս հաջողությունները դեռևս չեն սպառում եղած հնարավորությունները, իսկ առանձին կոլտնտեսություններ և սովխոզներ շարունակում են ետ մնալ:

Շրջանի էկոնոմիկայի կարևոր ճյուղերից մեկը կարտոֆիլագործությունն է: Դրանից է ստացվում կոլտնտեսությունների դրամական եկամուտների զգալի մասը: Մինչդեռ կարտոֆիլի բերքատվությունը ընդհանուր առմամբ դեռևս ցածր է: Գոման, Տուրցխ, Ալաստան, Բեժանո և այլ գյուղերի կոլտնտեսությունների ղեկավարները հանդես են բերում կարտոֆիլի ցանքատարածությունները կրճատելու և արտադրությունը իջեցնելու վնասակար տրամադրություններ: Այլ կերպ ինչո՞վ բացատրել, որ վերոհիշյալ տնտեսություններում կարտոֆիլի մեկ հեկտարի բերքատվությունը անցած տարում կազմեց հազիվ 25-30 ցենտներ:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի լայն փոխանակություն, որի ընթացքում բազմաթիվ արժեքավոր առաջարկություններ արվեցին և նոր պարտավորություններ ստանձնվեցին 1967 թվականի համար:

Խանդոյի կոլտնտեսության կուսակազմակերպության քարտուղար Կ. Մարտիրոսյանը իր ելույթում պատմեց այն հաջողությունների մասին, որ ձեռք է բերել կոլտնտեսությունը (նախագահ Մ. Մելիքյան) հնգամյակի առաջին տարում: Անասնապահական մթերքների արտադրությունն աճել է շեշտակիորեն, կոլտնտեսությունը երկու անգամ ավելի շատ մթերքներ է վաճառել պետությանը, քան 1965 թվականին: Երկուսից-երեք անգամ ավելացել են կոլտնտեսականների եկամուտները:

- Մենք,- շարունակում է Մարտիրոսյանը,- հնգամյակի երկրորդ տարվա պարտավորությունները կկատարենք պանծալի տարեդարձի օրը՝ նոյեմբերի 7-ին, և նախորդ տարվա համեմատությամբ 10 տոկոսով միս, 15 տոկոսով կաթ, 12 տոկոսով բուրդ, 25 տոկոսով հացահատիկ, 22 տոկոսով կարտոֆիլ ավելի կվաճառենք հարազատ պետությանը:

- Մենք՝ անասնապահության աշխատողներս,- ասում է իր ելույթում Զակի կոլտնտեսության կթվորուհի, սոցիալիստական աշ-

խատանքի հերոս Վ. Թորոսյանը, - ոչ մի ջանք չենք խնայի հոբել-յանական տարվա խնդիրները հաջողությամբ կատարելու համար: Անցյալ տարի իմ խնամած 12 կովից ես ստացա և աճեցրի 13 հորթ, մեկ կովից պլանի 1.900-ի և պարտավորության 2.000-ի դիմաց ստա-ցա 2.300 կիլոգրամ կաթ: Մրցման հրավիրելով Խանդոյի կոլտնտես-ության առաջավոր կթվորուհի Ժ. Պապոյանին, ես խոստանում եմ ընթացիկ տարում ամեն մի կովից ստանալ մեկական հորթ ու կթել 2.600 կիլոգրամ կաթ:

Բուդաչենի կոլտնտեսության նախագահ Հ. Հակոբյանը իր ելույթում կանգ առավ դեռևս չօգտագործված ռեզերվների վրա:

-Ճիշտ է,- ասաց նա,- մեր արտելը անցած տարի դերակատարել դյուղատնտեսական մթերքների արտադրության և վաճառքի առաջադրանքները, սակայն ձեռք բերած հաջողությունները մեզ չեն գոհացնում: Բարձր է արտադրվող մթերքների ինքնարժեքը: Մեր ունեցած 170 հեկտարը ծածկված է քարակույտերով և թմբերով: Եթե մենք վերացնենք դրանց, հողամասերը դարձնենք մեքենահարմար, ապա զգալիորեն կբարձրացնենք հացահատիկի և կարտոֆիլի արտադրությունը, կիջեցնենք դրանց ինքնարժեքը:

Հավաքում ելույթներ ունեցան և բարձր պարտավորություններ ստանձնեցին նաև Բուռնաշեթի, Բարալեթի կոլտնտեսությունների նախագահներ Վ. Բոչոյանը, Ա. Խմալաձեն, Ազավրեթի դյուղսովետի նախագահ Գ. Ավագյանը և ուրիշներ:

Վերջում ելույթ ունեցավ Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար Ս. Պետրոսյանը, որն ամփոփեց խորհրդակցության արդյունքները:

Կուսակցության շրջկոմի երկրորդ քարտուղար Վ. Գաբրիելյանը հրապարակեց շրջանային ժյուրիի որոշումը՝ կուսշրջկոմի և շրջսովետի գործկոմի փոխանցիկ կարմիր դրոշը Խանդոյի կոլտնտեսությանը հանձնելու մասին: Դաշտավարության ասպարեզում առաջավոր ճանաչված Բուռնաշեթի կոլտնտեսությանը հանձնվեց շրջանի գյուղատնտեսության արտադրական վարչության փոխանցիկ կարմիր դրոշը:

Առաջավորների հավաքը ընդունեց Ախալցիխեի շրջանի գյուղատնտեսության առաջավորների մրցահրավերը, որոշեց շարունակել մրցությունը Լիտվական ՍՍՀ Ուկմերգեի շրջանի հետ, ստանձնեց հոբելյանական տարվա պարտավորություններ.

Անասնապահության գծով

Շրջանի կոլտնտեսություններում և սովխոզներում սեփական հոտի վերարտադրության հաշվին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը տարեվերջին հասցնել 28.100-ի, այդ թվում կովերինը՝ 8.640-ի, մանր եղջերավոր անասուններինը՝ 83.650-ի, այդ թվում մաքիներինը՝ 51.340-ի, խոզերինը՝ 1.600 գլխի:

Արտադրել 3.465 տոննա միս, 15 հազար տոննա կաթ, 208 տոննա բուրդ: Նախորդ տարվա համեմատությամբ մսի համախառն արտադրությունն ավելացնել 18, կաթինը՝ 10, բրդինը՝ 8 տոկոսով: Մեկ կովի միջին կաթնատվությունը հասցնել 1.640, յուրաքանչյուր ոչխարի բրդատվությունը՝ 2,6 կիլոգրամի: Բուռնաշեթի, Ղազալարի,

Զակի, Թախչայի կոլտնտեսություններում յուրաքանչյուր կովից ստանալ 2.500-2.800 կիլոգրամ կաթ, իսկ Աբուլ, Բեժանո, Զամդուրա, Կիրովական գյուղերի կոլտնտեսություններում ամեն մի ոչխարից ստանալ 3 կիլոգրամ բուրդ: Յուրաքանչյուր 100 մայր անասունից ստանալ և պահպանել 90 հորթ, 93 գառ, 1.400 խոճկոր: Հոկամի կաթնատնտեսական սովխոզում, Վարեանի, Իխտիլայի, Մեծ Սամսարի, Կաջոյի կոլտնտեսություններում յուրաքանչյուր 100 կովից ստանալ և աճեցնել նույնքան հորթ:

Մթերական հանձնել միայն միջակ ու միջակից բարձր գիրության անասուններ, խոշոր եղջերավոր անասուններ 240, մանր եղջերավոր անասուններ 40 և խոզեր՝ 80 կիլոգրամից ոչ պակաս միջին կենդանի քաշով:

Դաշտավարության գծով

Բազմակողմանիորեն նախապատրաստվել և հաջողությամբ անցկացնել գարնանացանը, անթերի կիրառել ցանքի, մշակության և բերքահավաքի ագրոտեխնիկական միջոցառումները, պայքար ծավալել հացահատիկային կուլտուրաների ամեն մի հեկտարից 15 ցենտներ, կարտոֆիլի պլանտացիաների յուրաքանչյուր հեկտարից 120 ցենտներ բերք ստանալու համար: Բարալեթի, Օրջայի, Դիլիսկայի, Զամդուրայի, Կիրովականի կոլտնտեսությունները կպայքարեն հեկտարից 18-20 ցենտներ հացահատիկի, իսկ Խուլգումոյի, Մաջադիայի, Կարտիկամի, Կորխի կոլտնտեսությունները՝ 170-200 ցենտներ կարտոֆիլի միջին բերքի համար:

Հանրային հոտի կերի բազան ամրապնդելու նպատակով ընթացիկ տարում կուտակել 45 հազար տոննա կոշտ, 35 հազար տոննա հյութալի կերեր, առանձնացնել 1,5 հազար տոննա հատիկաֆուրաժ, 2,5 հազար տոննա կարտոֆիլ: Խոտաբույսերի հեկտարի բերքատվությունը հասցնել 25, բազմամյա խոտաբույսերինը՝ 30, արհեստական խոտհարքներինը՝ 25, սիլոսային կուլտուրաներինը՝ 120 ցենտների:

Երկրագործության կուլտուրան բարձրացնելու և արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու նպատակով ամեն կերպ ընդլայնել գյուղատնտեսական արտադրության մեքենայացումը, արմատավորել ցանքի, մշակության և բերքահավաքի առաջավոր եղանակները: 500 հեկտար կարտոֆիլի ցանքն ու բերքահավաքը կատարել մեքենաների միջոցով:

Կարտոֆիլի, բանջարեղենի, կերային արմատապտուղների ցանքը կատարել պարարտացված հողամասերում: Այդ նպատակով ձեռք բերել 3.000 տոննա հանքային պարարտանյութ, դաշտ փոխադրել 120 հազար տոննա գոմաղբ:

Նախորդ տարվա համեմատությամբ կոլտնտեսություններում և սովխոզներում 30 տոկոսով ընդարձակել հացահատիկի, 45 տոկոսով խոտաբույսերի մեքանայական բերքահավաքը:

Մինչև նոյեմբերի 7-ը ավարտել մթերքների վաճառքի տարեկան առաջադրանքները: Պետությանը վաճառել 10.660 տոննա կաթ, 2.450 տոննա միս, 208 տոննա բուրդ, 1.950 տոննա հացահատիկ, 9.700 տոննա կարտոֆիլ և 900 տոննա խոտ:

Շինարարություն

Անասնապահության կուլտուրան բարձրացնելու նպատակով 8 կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմաներում տեղադրել ավտոմատ խմոցներ, շրջանում 100 տոկոսով ոչխարների խուզը կատարել էլեկտրախուզիչ ագրեգատներով, լրիվ մեքենայացնել կերերի սիլոսացումը: Կառուցել և շահագործման հանձնել 600 գլուխ խոշոր և 5.000 գլուխ մանր եղջերավոր անասունների համար անասնաշենքեր:

Աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման նպատակով գյուղերում կառուցել 5 ակումբ և գրադարան, 7 բաղնիք, սպորտային 10 հրապարակ, լրիվ ավարտել գյուղերի էլեկտրիֆիկացումը, տնկել 42 հազար դեկորատիվ և պտղատու ծառեր, կառուցել 20 կիլոմետր երկարությամբ գյուղական նոր և նորոգել 50 կիլոմետր հին ճանապարհներ:

28 հունվարի

ԴԱՄԱԼԱՅԻՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ

Ասպինձայի շրջանի բարձրալեռ Դամալա գյուղի կոլտնտեսության հաշվետու ժողովում ելույթ ունեցող կոլտնտեսականներից յուրաքանչյուրը պատմում էր տնտեսության ձեռք բերած հաջողությունների, դեռևս չօգտագործված ռեզերվների մասին, իր կոնկրետ առաջարկությունն էր անում կոլտնտեսության հետագա զարգացման համար:

Կոլտնտեսության նախագահ Ա. Նահապետյանի զեկուցման մեջ, ինչպես նաև արտելականների ելույթներում, տրվեցին կոլտնտեսության վարչության և կոլտնտեսականների գործունեության կոնկրետ վերլուծությունն ու հնգամյակի առաջին տարում կատարած գործերի գնահատականը: Նախորդ տարվա համեմատությամբ, ցորենի հեկտարի բերքատվությունը ավելացել է 4, գարունը՝ 2,5, կարտոֆիլինը՝ 11, բանջարեղենինը՝ 21 ցենտներով:

Կոլտնտեսականները շատ բան ունեին ասելու անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման, կերերի կուտակման, մթերքների ինքնարժեքի իջեցման մասին: Փաստ է, որ մեկ ցենտներ բրդի ինքնարժեքը մեկ տարվա ընթացքում իջել է 359, մեկ ցենտներ մսինը՝ 248, մեկ ցենտներ կաթինը՝ 11 ռուբլով: Կոլտնտեսության դրամական եկամուտները ավելացել են 21.185 ռուբլով, աճել է կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը:

Դամալացիներն հաջող են սկսել հնգամյակի երկրորդ տարին: Կերերի հարուստ պաշարը հնարավորություն է տալիս ապահովելու հանրային հոտի բարեհաջող ձմեռումը: Լավ է ընթանում կովերի ծինը, ավելանում է կաթնատվությունը: Եռամսյակային պլանի

44-ի դիմաց կոլտնտեսությունը պետությանը վաճառել է 58 ցենտներ միս, 110-ի փոխարեն 120 ցենտներ կաթ:

Դաշտավարները լավ են պատրաստվում դիմավորելու հորելյանական տարվա գարնանացանը: Նրանք գտել, ցանքային կոնդիցիայի են հասցրել հացահատիկային և սիլոսային կուլտուրաների սերմացուները, տեսակավորել են սերմացու կարտոֆիլ: Մեխանիզատորները գարնան-դաշտային աշխատանքների համար նախապատրաստել են գյուղատնտեսական տեխնիկան: Դաշտավարական բրիգադի ղեկավար Մ. Ղուկասյանը իր բրիգադի անունից պարտավորվել է հեկտարից ստանալ 12 ցենտներ հացահատիկ, 120 ցենտներ կարտոֆիլի բերք: Կոլտնտեսության գյուղատնտես Մ. Հակոբյանը նշեց, որ Դամալայի հողերը ոռոգման խիստ կարիք ունեն, իսկ ոռոգման ցանցն ընդարձակելու հնարավորություններ կան: Պետք է ձեռնամուխ լինել ջրհան կայանի կառուցմանը, որի շնորհիվ ոռոգելի կդարձվի մի քանի հարյուր հեկտար հողատարածություն: Նա միաժամանակ նշեց, որ այդ մասին վաղուց է խոսվել, մինչդեռ հանրապետության ջրային մինիստրությունը գործնական միջոցների չի դիմում ջրհան կայանի կառուցման հարցը լուծելու համար:

Կոլտնտեսականներ Հ. Հակոբյանը, Վ. Դանիելյանը, Գ. Մանուկյանը և ուրիշներ խոսեցին անասնաբուծության զարգացման բնագավառում դեռևս չօգտագործված ռեզերվների մասին: Նրանք նշեցին, որ անբավարար է անասունների արհեստական սերմնավորման գործի կազմակերպումը: Դա է պատճառը, որ անցած տարում կովերի 32 և ոչխարների 29 տոկոսը ստերջ մնաց:

Ժողովին մասնակցում էր և ելույթ ունեցավ կուսակցության Ասպինձայի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար Գ. Աղդգոմելյանն:

Հաշվետու ժողովն ընդունեց որոշում, որի մեջ նշվեցին կոնկրետ միջոցառումներ գյուղատնտեսության բոլոր ճյուղերի արդյունավետության հետագա բարձրացման համար: Որոշվեց մինչև տարեվերջը խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասցնել 635-ի, այդ թվում կովերինը 170-ի, մանր եղջերավոր անասուններինը 1.280-ի, այդ թվում ոչխարներինը 700-ի: Յուրաքանչյուր 100 կովից ստանալ 90 հորթ և յուրաքանչյուր 100 մաքուց 95 գառ, արտադրել 26 տոննա միս, 153 տոննա համախառն կաթ: Դամալայցիները պարտավորվեցին հացահատիկային կուլտուրաների ամեն մի հեկտարից հավաքել 10 ցենտներ, կարտոֆիլի յուրաքանչյուր հեկտարից 100 ցենտներ, պտղատու այգիների ամեն մի հեկտարից 40 ցենտներ բերք, շահագործման հանձնել կոլտնտեսության գրասենյակի նոր շենքը, հիմնական նորոգման ենթարկել Ասպինձա-Դամալա խճուղին, կառուցել ջրհան կայան, մթերքների պահեստ:

18 փետրվարի

ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐԸ ԴԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

[Գուրգեն Արզումանյան]

Երբ Բարալեթի կոլտնտեսության (Ախալքալաքի շրջան) նախընտրական ժողովում Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածու առաջադրվեց արտելի անվանի մեխանիզատոր Գուրգեն Խաչատուրի Արզումանյանը, ժողովի բոլոր մասնակիցները միահամուռ պաշտպանեցին այդ առաջարկությունը: Նա այդ վստահությանը արժանացել է կոլտնտեսային դաշտերում կատարած անձնվեր աշխատանքով:

1953 թվականին Բարալեթ գյուղում կազմակերպվեց շրջանում 3-րդ ՄՏ կայանը: Գյուղական շատ երիտասարդներ մեծ սիրով աշխատանքի ընդունվեցին այնտեղ: Դրանց թվումն էր Սուրբամի մեխանիզատորական դասընթացները նոր ավարտած 25-ամյա Գուրգեն Արզումանյանը: Բոլորը հիացմունքով էին դիտում, թե հետաքրքրասեր ու եռանդուն երիտասարդը ինչպիսի ուշադրությամբ ու սիրով է ուսումնասիրում տրակտորն ու կոմբայնը, կալսիչն ու սերմացուիչը, կարտոֆիլացան մեքենան, տիրապետում գյուղատնտեսական մեքենայի «գաղտնիքներին»:

Հաջորդ տարվա գարնանը Արզումանյանի ղեկավարած տրակտորը արդեն գործում էր անխափան, շուտ տալիս Բարալեթի կոլտնտեսության սեւահողերը, վերացնում դաշտամիջյան թմբերը, յուրացնում խամ ու խոպան նոր հողեր:

- Բայց միայն տրակտոր ղեկավարելը քիչ է,- մտածում է Արզումանյանը,- պետք է աշխատել նաև կոմբայնի վրա: Եվ նա շուտով նստեց կոմբայնի ղեկի մոտ: ՄՏ կայանի Բարալեթի բրիգադի անդամ Արզումանյանին այնուհետև տեսնում ենք Բարալեթ, Կաջո, Իխթիլա, Մերենիա և այլ գյուղերի կոլտնտեսություններում բերքահավաք կատարելիս: Գուրգենը այս աշխատանքում էլ աչքի է ընկնում մեքենան վարելու իր հմտությամբ ու վարպետությամբ, դառնում շրջանի առաջավոր կոմբայնավարներից մեկը:

1958 թվականին, երբ գյուղատեխնիկան հանձնվեց կոլտնտեսությանը, Արզումանյանը արդեն կատարելապես տիրապետում էր իր գործին: Նա նշանակվեց տրակտորային բրիգադի ղեկավար, և ահա 9-րդ տարին է, ինչ նրա բրիգադի մեխանիզատորները մշակում են Բարալեթի կոլտնտեսության դաշտերը, պայքարում բարձր բերքի համար: Գ. Արզումանյանը աշխատանքում իրեն դրսևորել է որպես գործիմաց մեխանիզատոր: Մշտապես ուշադրություն դարձնելով տրակտորային աշխատանքի որակի վրա, սարքին պահելով տեխնիկան, նրա ղեկավարած կոլեկտիվը սեղմ ժամկետներում է միշտ կատարում վարը, ցանքը, բերքահավաքը, թույլ չի տալիս ագրոկանոնների խախտում: Ահա թե ինչու ամեն տարի բրիգադը իր մշակած ցանքատարածություններից ստանում է բարձր բերք:

Ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում ավարտելով աշնանացանը և կատարելով 800 հեկտար ցրտահերկ, Արզումանյանի բրիգադը դրել է հոբելյանական տարվա առատ բերքի հիմքը: Ա-

ռաջիկա գարնանը կոլտնտեսությունը ցրտահերկի վրա ցանելու է 300 հեկտար հացահատիկ, 64 հեկտար կարտոֆիլ, 125 հեկտար խոտաբույս և այլ կուլտուրաներ: Ըստ որում ցանքն ամբողջությամբ կատարվելու է մեքենայական եղանակով:

Գուրգեն Արզումանյանը արտադրության առաջավոր լինելու հետ միասին, հասարակական ակտիվ աշխատող է. նա կուսքյուրոյի և կոլտնտվարչության անդամ է: Նրան հաճախ կարելի է տեսնել մեխանիզատորներով ու կոլտնտեսականներով շրջապատված, նրանց հետ աշխատանքի առաջավոր փորձի, տնտեսության առջև դրված խնդիրների և այլ հարցերի մասին զրուցելիս:

Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունների Բարալեթի N 121 ընտրական օկրուգի ընտրողները մարտի 19-ին մեկ մարդու պես իրենց ձայնը կատարեցին արժանավոր թեկնածու, փորձված մեխանիզատոր Գուրգեն Խաչատուրի Արզումանյանի օգտին:

11 մարտի

ԼԱՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԸ [Վախտանգ Մազմանյան]

Կոկիա գյուղի (Ախալքալաքի շրջան) կոմունիստները հարգանքով են խոսում Վախտանգ Մազմանյանի մասին: Նա այդ հարգանքը վաստակել է նրանով, որ ավելի քան տասը տարի սիրով կատարում է պրոպագանդիստի լուրջ ու պատվավոր աշխատանքը:

Ընթացիկ ուսումնական տարում Վ. Մազմանյանը ղեկավարում է «Քաղաքական գիտելիքների հիմունքները» ուսումնասիրող քաղղպրոցի աշխատանքը: Քաղղպրոցի բոլոր 22 ունկնդիրներն էլ պարապմունքներին հաճախում են կանոնավոր ու բարեխղճորեն, ճշտությամբ կատարում պրոպագանդիստի տված բոլոր հանձնարարությունները: Ուսումնական տարվա սկզբից այստեղ պարապմունքներն ընթանում են առանց ընդհատումների: Շատ ունկնդիրներ ձեռք են բերել գրքի վրա ինքնուրույն աշխատելու փորձ, խոր կերպով ըմբռնում են անցած նյութը, կարողանում են ընդհանրացումներ անել և անցածը կապել արդիականության հետ: Այդպիսի ունկնդիրներից են Հ. Աբաջյանը, Ս. Մազմանյանը, Ա. Գալստյանը, Վ. Նահատակյանը, Ս. Մոսիկյանը և ուրիշներ:

Պրոպագանդիստ Վ. Մազմանյանը լուրջ ուշադրություն է դարձնում պարապմունքի նախապատրաստմանը:

- Պարապմունքին նախապատրաստվելիս,- ասում է նա,- ամենից առաջ հաշվի եմ առնում ունկնդիրների կազմը: Հասկանալի է, թե որքան տհաճ է, երբ զրույցի ընթացքում կապ չի ստեղծվում պրոպագանդիստի և ունկնդիրների միջև նյութը հետաքրքիր չմատուցելու պատճառով: Թեման շարադրելիս աշխատում եմ խոսել պարզ ու հասկանալի, զրույցին տալով պատմողական ընույթ, քանի որ ամենալավ մեթոդը պարզապես պատմելու մեթոդն է:

Պրոպանգանդիստը նախօրոք կարդում է անցնելիք թեմային վերաբերող բոլոր աղբյուրները, կազմում է պարապմունքի ընդարձակ պլան, նշում է, թե ինչպես պետք է անցնելիք թեման կապել ի-

բենց կոլտնտեսության առջև դրված կոնկրետ խնդիրների հետ: Գեղարվեստական գրականությունից հատվածները, քարտեզները, դիագրամաները, ալբոմները և ցուցադրական այլ նյութերը Մագմանյանի պարապմունքի անբաժան ուղեկիցներն են:

Այս քաղդպրոցի աշխատանքի հաջողությունը բացատրվում է նաև նրանով, որ կոլտնտեսային կուսակազմակերպությունը (քարտուղար՝ Վ. Նահապետյան) հետևողականորեն զբաղվում է կոմունիստների քաղաքական ուսուցման հարցերով, անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս պրոպագանդիստին:

30 մարտի

ՓԱՌՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅՈՒՄ

Նշանակված ժամից դեռ շատ առաջ Բոգդանովկայի շրջանի բոլոր գյուղերից հազարավոր մարդիկ հավաքվել էին ավանի զբոսայգին: Հյուրեր կային Թբիլիսիից, Լենինականից, Ծալկայից, Հայկական ՍՍՀ Ստեփանավանի և Ղուկասյանի շրջաններից: Մարդիկ այստեղ եկել էին մասնակցելու Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակին կանգնեցված փառքի հուշարձանի բացման արարողությանը:

Ուղիղ ժամը 12-ին կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար Վ. Դուրգարյանը ներածական խոսքով բացեց միտինգը: Ելույթ է ունենում Խոջաբեկ գյուղի բնակիչ, 75-ամյա Մանան Ղարսլյանը:

- Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից,- ասում է նա,- շատ-շատերի հետ միասին ռազմաճակատ մեկնեցին նաև իմ երկու որդիները: Նրանք ազնվարար կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ, երկուսն էլ զոհվեցին թշնամու դեմ մղված կատաղի մարտերում նրա համար, որ սովետական մարդը ընդմիշտ խաղաղ ու ազատ ապրի:

Մենք, սովետական երկրի միլիոնավոր մայրերս, թույլ չենք տա, որ նոր պատերազմի հրձիգները իրագործեն իրենց աղետաբեր պլանները: Բոլոր մայրերի անունից կոչ եմ անում՝ կորչի՛ պատերազմը: Շնորհակալությո՛ւն մեր կուսակցությանն ու կառավարությանը՝ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնելու համար: Փառքի այս հուշարձանը սրբավայր կդառնա բոլոր մայրերի համար:

- Միլիոնավոր մարդկանց հետ միասին ես էլ ռազմաճակատ գնացի և տրակտորի փոխարեն նստեցի տանկի ղեկի մոտ,- ասաց իր ելույթում Բոգդանովկայի կոլտնտեսության մեխանիզատոր Անդրեյ Գուրանովը: Թշնամին ջախջախվեց: Ես վերադարձա հայրենի գյուղ և անցա իմ սիրած գործին՝ սկսեցի կոմբայն վարել: Այժմ բոլոր մեխանիզատորների հետ միասին աշխատում եմ հանրային գաշտերում, որ է՛լ ավելի առատ լինի բերքը, է՛լ ավելի հզոր լինի մեր հայրենիքը:

Հուզիչ էր Գոնդուրայի բուժտեղամասի ատամնաբույժ Ռոկուհի Վարդապետյանի ելույթը:

- Հայրենական պատերազմում կորցրի ամուսնուս,- ասում է նա,- իմ խնամքի տակ մնաց երկու փոքրահասակ երեխա: Մեր կուսակցությունն ու կառավարությունը մենակ չթողին, ջերմ հոգատարությամբ շրջապատեցին իմ ընտանիքը: Այժմ մեծ տղաս Ռևիկը, Երևանում հանրապետական հեղափոխական թանգարանի գլխաշխատող է, փոքրը՝ Լևոնը, ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ասպիրանտ է նույն համալսարանում:

Միտինգում ելույթներ ունեցան Հայրենական պատերազմի մասնակից Ռ. Տրախլյանա-Մկրտչյանը, նախկին պարտիզան, Գանձայի միջնակարգ դպրոցի դասատու Ա. Մարգարյանը, Վրացական ՍՍՀ նկարիչների միության նախագահ Ջ. Լեժավան, Ուչմանայի կոլտնտեսության նախագահ Վ. Դարբինյանը:

Ավարտվում են ելույթները: Կուսշրջկոմի քարտուղար Վ. Դուրգարյանը կտրում է հուշարձանը ծածկող սպիտակ կտավի թելը և բոլորի առաջ բացվում է տարբեր ազգությունների ներկայացուցիչ չորս զինվորի և նրանց առջև գլուխ խոնարհած, սգացող կնոջ դիմանկարներով հուշարձանը (հեղինակ՝ հանրապետության վաստակավոր նկարիչ Գ. Ա. Օչիաուրի): Հնչում են Սովետական Միության և Վրացական հանրապետության պետական հիմները: Զոհվածների հիշատակին նվիրված մոնտաժով ելույթ են ունենում Բոգդանովկայի միջնակարգ դպրոցի պիոներ-դպրոցականները: Փողային նվագախմբի տխուր մեղեդիների տակ շրջանի հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչները ծաղկեպսակներ են դնում հուշարձանի պատվանդանին:

25 հունիսի

ԱՆՀԱՊԱՂ ՎԵՐԱՑՆԵԼ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընթացիկ տարում Ախալքալաքի շրջանի բոլոր տնտեսություններում աճեցվել է գարու և ցորենի առատ բերք, որն իրոք հրեշյանական է: Հողի աշխատավորները, զինված ժամանակակից տեխնիկայով, կազմակերպված դուրս են եկել դաշտ և պայքարում են բերքահավաքը սեղմ ժամկետում և անկորուստ անցկացնելու համար:

Շրջանում ընթացիկ տարում կատարվելու է մոտ 15 հազար հեկտար հասկավոր կուլտուրաների բերքահավաք: Առ 15-ը սեպտեմբերի հնձված է 6.500 հեկտար տարածություն, որից կալված է 4.020 հեկտարի բերքը:

Աշխատանքային բեղմնավոր առօրյա են ապրում Բարալեթի կոլտնտեսականները: Արտերում, կալերում, պահեստներում աշխատանքային եռուզեռ է: Բոլորը մեկ մարդու պես ձգտում են աճեցրած առատ բերքը հավաքել ժամանակին և պատվով կատարել պետությանը հացահատիկ վաճառելու պլան-պատվերը: Մրցության ա-

ռաջին շարքերումն են մեխանիզատորները: Փորձված կոմբայնավար Միհրան Խմալաձեն, ուշի-ուշով հետևելով մրցակից կոլտնտեսականներ Սերգեյ Արզումանյանին, Սանդրո Նաթենաձեին, զգալիորեն գերակատարում է արտադրական առաջադրանքները և օրական կոլտնտեսության կալերն է ուղարկում 14-15 բունկեր հացահատիկ: Արտելի կալերում արդեն կուտակվել է 500 տոննայից ավելի դարի ու ցորեն, որից 100 տոննան զտվել ու առանձնացվել է որպես սերմացու, 25 տոննա էլ վաճառվել է պետությանը:

Բերքահավաքի ավանդարդումն են նաև էխտիլայի կոլտնտեսության անդամները: Կազմակերպված են հնձի դուրս եկել դաշտավարական երեք բրիգադների ավելի քան 200 կոլտնտեսականներ, որոնցից յուրաքանչյուրը զգալիորեն գերակատարում է հնձի և օրանի փոխադրման առաջադրանքները: Հատկապես արժանի են հիշատակման հնձվորներ Մերուժան Ղարաբեկյանը, Գագիկ Մկրտչյանը, որոնք լեռնային դաշտամասերում օրական հնձում են 0,8-ական հեկտար գարու բերք: Խրախուսելին այն է, որ կոլտնտեսությունում հնձված օրանը անմիջապես փոխադրվում է կալատեղ ու կալսվում:

Մեքենահարմար տեղամասերում կոմբայնային ագրեգատ անխափան է աշխատեցնում մեխանիզատոր Սանդրիկ Մկրտչյանը: Նախատեսված 6-ի դիմաց նա օրական հնձում է 8-10 հեկտար աշնանացան ցորեն և ամեն մի հեկտարից պահեստ է ուղարկում 24 ցենտներից ավելի հացահատիկ: Բերքահավաքի առաջին օրերի արդյունքները ցույց են տալիս, որ ամեն մի հեկտարից ամբարվում է 20 ցենտներ հացահատիկի միջին բերք, որը 6 ցենտներով գերազանցում է սահմանված առաջադրանքը: Իսկ այն բրիգադը, որի ղեկավարն է Արտաշես Մկրտչյանը, հեկտարից ամբարում է 25 ցենտներ հացահատիկ:

Կան բոլոր նախադրյալները, որ կոլտնտեսությունը պետությանը 40 տոննա հացահատիկ վաճառելու առաջադրանքը իրացնի զգալի գերակատարումով:

Հացահատիկայինների բերքահավաքը կազմակերպված սկսեցին և արագ թափով առաջ են տանում նաև Դիլիսկա, Բավրա, Կարտիկամ, Օրջա, Վարևան, Խանդո գյուղերի կոլտնտեսությունները, Վաչիանի, Կարդաշի, Սուլդայի, Հոկամի սովխոզները և այլ տնտեսություններ:

Սակայն, ինչպես հայտնաբերեցին ստուգայցի մասնակիցները, ոչ բոլոր տնտեսություններում է բերքահավաքը կազմակերպված ընթանում: Նկատվում են մեծ թերություններ կոմբայնների աշխատանքում, զգալի են հացահատիկի կորուստները, խզում է առաջացել հնձի և կալսման միջև:

Արագվայի կոլտնտեսության դաշտումն ենք: Լսում ենք ծղոտի փոխադրման վրա աշխատող կոլտնտեսականներ Ռաֆիկ Ուռնանյանի, Գուրգեն Այվազյանի արդարացի բողոքը այն մասին, որ կոմբայնային բերքահավաքը կոլտնտեսությունում կատարվում է անորակ, ու մեծ են հացահատիկի կորուստները: Նրանց ներկայությամբ հնձված դաշտի մեկ քառակուսի մետրի վրա հաշվեցինք ավելի քան 70 հատիկ: Դա նշանակում է, որ Արագվայի կոլտնտեսությունը

մոտավոր հաշվումներով ամեն մի հեկտարից կորցնում է 5-6 ցենտներ հացահատիկ:

Բերքահավաքի առաջին իսկ օրերից խախտվեց աշխատանքի պլան-գրաֆիկը Ագանայի կոլտնտեսությունում: Դա աշխատանքի վատ կազմակերպման հետևանք է: Դաշտավարական երեք բրիգադներից հնձի են դուրս գալիս 10-12 մարդ: Կոլտնտեսականների մի զգալի մասը առանց թույլտվության մեկնել է գյուղից: Ցավոք սրտի, դրանց թվում կան նաև կուսակցականներ (Աշիկ Բերոբյան, Օնիկ Այվազյան, Սասուն Սարգսյան), որոնք լքելով գյուղը, կատարում են անձնական գործեր, իսկ կուսկազմակերպությունը չի զբաղվում նրանց հարցով:

Բերքահավաքի այս եռուն օրերին որոշ տնտեսություններում ոչ արդյունավետ են օգտագործվում կոմբայնային ագրեգատները: Այսպես, Մաջադիայի կոլտնտեսությունում կոմբայնավար Շոթա Ալեքյանը կիսով չափ է կատարում օրվա առաջադրանքը: Ագրեգատը աշխատեցնում է խափանումներով: Պատճառն այն է, որ գարնանացանից հետո դաշտերը չեն հարթվել:

Բացմաթիվ են այն դեպքերը, երբ կոմբայնների այս կամ այն մասը ջարդվելու պատճառով մեքենաները կանգ են առնում, տալով պարապուրդներ: Սեպտեմբերի 13-ին, օրինակ, գրեթե չաշխատեցին Ալաստանի և Լոմաաուրցխի կոլտնտեսությունների Սերբոր Սերոբյանի և Արտավազդ Շորաչյանի կոմբայնները: Երբ մեքենաները խափանվեցին, մեխանիզատորները դաշտում երկար սպասեցին «Գյուղատնտեխնիկայի» Բարալեթի բաժանմունքի շրջիկ արհեստանոցին: Սակայն նրանք տեղում օգնություն չստացան և ստիպված կոմբայնները զգալի հեռավորությունից փոխադրեցին արհեստանոց...

70 հեկտարի վրա կոմբայնային հունձ է կատարվելու Ալաթուման գյուղի կոլտնտեսությունում: Սակայն մեքենան գործի չի դրվում կոմբայնավար չունենալու պատճառով: Մեխանիզատոր Մյասնիկ Գալոյանը ինքնակամ հեռացել է գյուղից: Այդ պատճառով էլ ցորենի հունձը կատարվում է ձեռքով:

Ջակի կոլտնտեսությունում Սեյրան Յորդանյանի ղեկավարած կոմբայնը հունձը կատարում է անորակ, բարձրից, որը տեղիք է տալիս անասնակերի մեծ կորստի: Նախատեսված 8-ի դիմաց նա օրական հազիվ հնձում է 4-5 հեկտար տարածություն: Առաջադրանքի թերակատարման հիմնական պատճառն այն է, որ կոմբայնավարը չունի աշխատանքի համապատասխան փորձ:

Ջավախքի լեռնաշխարհի հաճախակի փոփոխվող կլիմայական պայմանները պահանջում են հողի աշխատավորից ավելի խելացիորեն կազմակերպել գործը, արդյունավետ օգտագործել բարենպաստ եղանակի ամեն մի օրը և արագ թափ հաղորդել բերքահավաքի աշխատանքներին:

21 սեպտեմբերի

ԼԱՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՏ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Կոլտնտեսության նախագահ Հ. Գրիգորյանը հաշվետար Մ. Կարախանյանի հետ հանրագումարում էր բերքահավաքի առաջին հնգօրյակի արդյունքները: Նրանց դեմքին խաղում էր ժպիտը, որի մեջ կարելի էր տեսնել հողի աշխատավորների բերկրանքը իրենց քրտնաջան աշխատանքի բարձր արդյունքի համար:

Այո, հպարտանալու շատ բան ունեն դիլիսկացիները: Ջէ՞ որ իսկական հորելյանական բերք են աճեցրել նրանք, բերք, որի հավասարը վաղուց չեն հիշում նույնիսկ տարեց կոլտնտեսականները:

Այդ օրը որոշեցինք լինել բերքահավաքի վճռական տեղամասերում, ծանոթանալ կոլտնտեսականների և մեխանիզատորների աշխատանքին:

Աշնանացան «Մրթելի դոլի» ցորենի դաշտումն ենք: Ագրոտեխնիկ-բրիգադավար Մ. Գոքորյանը հողաչափը ձեռքին արտի եզրին կանգնած դիտում էր հեռվում երևացող կոմբայնները:

- Սրանք մեզ ուղղակի փրկում են,- ցույց տալով արդեն մոտեցող կոմբայնը,- ասաց նա կուսակցմակերպության քարտուղար Ա. Մոսոյանին, որը վերստուգիչ հանձնաժողովի անդամների հետ դաշտ էր եկել հնձի որակը ստուգելու համար: Քարտուղարը գլխի շարժումով հավանություն տվեց բրիգադավարին և շարունակեց իր աշխատանքը:

Մենք գրույցի բռնվեցինք բրիգադավարի հետ:

- Ինչո՞վ է հայտնի Դիլիսկայի հացը, որ բոլորը հիացմունքով են խոսում:

Բրիգադավարն աշխուժացավ և իսկույն պատասխանեց.

- Շատ բանով: Այ, հենց հիմա տեսեք:

Նա պոկեց մի հասկ, ափերի մեջ տրորեց, հատիկները հարդից մաքրեց և, ցույց տալով մեզ, շարունակեց խոսքը.

- Տեսնո՞ւմ եք ինչքան խոշոր են հատիկները, կարծես նռան հատիկներ լինեն: Էս ցորենից ստացվում է համեղ հաց:

- Իսկ գարի՞ն:

- Այս կուլտուրան էլ է հռչակված, հանրապետության գաբեջրի գործարանների բարձրորակ հումքն է:

- Իսկ ի՞նչ կասեք բերքի մասին:

- Բերքն առատ է: Իմ ղեկավարած բրիգադի հողերը թեև անջրդի են, բայց էլի շատ լավ բերք կա: Բրիգադի անդամները խոստացել են հորելյանական տարին բարձր բերքի տարի դարձնել, և նրանք կատարում են իրենց խոստումը, հեկտարից միջին հաշվով պահեստ են հանձնում 25 ցենտներ հացահատիկ:

Բրիգադավարների հետ մեր գրույցը ընդհատեց առաջին կոմբայնի սուլոցը: Այդ պահին կոմբայնին մոտեցավ բեռնատար ավտոմեքենան և սկսեց դանդաղ ընթացքով շարժվել նրա կողքով:

Բացվեց մի գրավիչ տեսարան, կոմբայնի ծնկաձև լայն խողովակից ցորենը անընդհատ հոսանքով թափվում էր ավտոմեքենայի թափքի մեջ: Մի քանի րոպե անց մեքենայի թափքը արդեն ցորենով

լեփ-լեցուն էր: Ավտոմեքենան սլացավ դեպի գյուղ, իսկ կոմբայնը, շուռ գալով ընդարձակ արտի մյուս կողմը, անհայտացավ հեռվում տարածվող արտերում:

Հաջորդ շրջադարձից հետո, որը տևեց մոտ կես ժամ, ծանոթացանք կոմբայնավարի հետ: Զրույցի ընթացքում նա ամեն կերպ խուսափում էր իր աշխատանքի մասին որևէ դովասանական խոսք ասելուց:

- Աշխատում եմ այնպես, ինչպես աշխատում են ուրիշ շատ կոմբայնավարներ, և հետո ընդամենը 5 օր է, ինչ աշխատում եմ այս կոմբայնի վրա, հետևապես այժմ դեռ վաղ է հաջողությունների մասին խոսել:

Կոմբայնավարի ժլատ խոսքերից մեզ հազիվ հաջողվեց իմանալ, որ նա իր ապրեգատով առաջադրանքի 8-ի փոխարեն օրական հնձում է 14-15 հեկտար և կոլտնտեսության պահեստն ուղարկում մինչև 25 բունկեր հացահատիկ:

- Կոմբայնավար Հովհաննես Կարախանյանը 10-րդ տարին է, ինչ աշխատում է Դիլիսկայում: Իր համեստությամբ և աշխատանքով մեծ համբավ է վայելում կոլտնտեսությունում,- ասաց բրիգադավարը:- Նա հանրապետության առաջավոր կոմբայնավարների շարքում իր արժանի տեղն ունի: Հինգ օր է, ինչ նա կոմբայնի վրա է բարձրացել, հնձել է 70 հեկտար և պահեստ ուղարկել 130 տոննա հացահատիկ:

***

Դիլիսկացիների հացահատիկային տնտեսությունը կառավարելը այնքան էլ հեշտ գործ չէ: Այստեղ ոչ միայն տնտեսությունն է մեծ, այլև, երբ վրա է հասնում օգոստոսի վերջին տասնօրյակը, դաշտերը միանգամից ոսկեգծվում են, հետևապես կարճ ժամանակում մեծ աշխատանք պետք է կատարել՝ հնձել, կալսել և ամբարել բերքը: Եթե ժամկետը ձգձգվի, բերքի մի մասը կկորչի, հանրային տնտեսությունը մեծ վնաս կկրի:

Բայց դժվարությունները հաղթահարվում են, երբ մարդիկ իրենց գործին վերաբերվում են գիտակցորեն, երբ գործողության մեջ են դրվում բոլոր հնարավորություններն ու միջոցները:

... Ընդարձակ հրապարակի վրա տարածված են կոլտնտեսության կալերը: Մեծ շեղջերը է՛լ ավելի են բարձրացնում Դիլիսկայի հացահատիկի համբավը: Անընդհատ հոսանքով ավտոմեքենաներն ու տրակտորաքարշ սայլակները արագ կալ են հասցնում հացահատիկը: Տասնյակ կոլտնտեսականներ չորացնում են դարին ու ցորենը, ապա պարկերն են լցնում, կշռում, ուղարկում մթերակայան, պահեստավորում եկող տարվա սերմացուն, առանձնացնում են կոլտնտեսականներին բաժանելու ենթակա բերքը:

Աշխատանքային վերելքը շարունակվում է Դիլիսկայում: Մեխանիզատորները արագ թափով առաջ են տանում ցրտահերկը, աշնանացան են կատարում ընդարձակ տարածությունների վրա: Կերահայթայթման բրիգադը շարունակում է կերի սիլոսացումը արևածաղկի կանաչ զանգվածից:

Դիպլոմացիները մտահոգված են նաև եկող տարվա համար և պատրաստվում են նոր բնագծեր նվաճելու հնգամյակի երրորդ տարում:

26 սեպտեմբերի

ԿՈՄԵՐԻՏԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐՈՒՄ

Կոմերիտմիության Ախալքալաքի շրջանային XXII կոնֆերանսի պատգամավորների թվում էին առաջավոր մեխանիզատորներ, դաշտավարներ, անասնապահներ և արտադրության այլ աշխատողներ: Նրանք հավաքվել էին ամփոփելու հաշվետու ժամանակաշրջանում շրջանի կոմերիտկազմակերպության կատարած աշխատանքը, ուղիներ նշելու թերությունները վերացնելու, տեղական կոմերիտկազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում, ինչպես նշվեց կոնֆերանսում, շրջանի ԼԿԵՄ շատ կազմակերպություններում ծնվել են հիանալի նախաձեռնություններ, արմատավորվել աշխատանքի նոր ձևեր ու մեթոդներ, որոնք մեծ չափով օգնել են երիտասարդների կոմունիստական դաստիարակության լավագույն կազմակերպմանը, նրանց աշխատանքային ակտիվության զարգացմանը:

Բուռնաշեթի կոլտնտեսության ԼԿԵՄ կազմակերպության նախաձեռնությամբ ծավալված նախահոկտեմբերյան սոցմրցությունը մեծ արդյունք տվեց, օգնեց կոլտնտեսությանը բարձրացնելու արտադրական ցուցանիշները: Երիտասարդների ակտիվ մասնակցությամբ այստեղ ընթացիկ տարում յուրաքանչյուր հեկտարից ամբարվել է 30 ցենտներ հացահատիկ և 327 ցենտներ կարտոֆիլ: Անասնապահական ֆերմայի երիտասարդ կոլեկտիվը 11 ամսում յուրաքանչյուր կովից ստացել է ստանձնած պարտավորությունից 560 կիլոգրամով ավելի կաթ: Ձեռք բերած այս բարձր ցուցանիշների համար արտելի ԼԿԵՄ կազմակերպությունը արժանացավ Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի հուշադրոշին:

ԼԿԵՄ շրջկոմը և սկզբնական կազմակերպությունները լուրջ աշխատանք են կատարել անասնապահության բնագավառում: Շրջանում գործում են կոմերիտական - երիտասարդական 7 ֆերմա, 13 օղակ և 11 խումբ:

Կոնֆերանսում նշվեցին հոդագործներ Գ. Ղազարյանի (Վաչիան), Շ. Յորդանյանի (Զակ), Յ. Խոսրոտաշվիլու (Հոկամ), Ս. Դարբինյանի (Էխտիլա), երիտասարդ անասնապահներ Ջ. Կուրդինյանի (Բուռնաշեթ), Լ. Այվազյանի (Կուլիկամ), Հ. Դավթյանի (Բավրա) անունները, որոնք կրում են «Փարոս» պատվավոր կոչումը: Մրցության մեջ առաջնություն շահող 27 երիտասարդներ հոբելյանական տարում պարգևատրվել են Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրերով, իսկ 5 անասնապահներ «Հանրապետության լավագույն անասնապահ» դիպլոմով:

Կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Շիպակցյանը, ինչպես նաև ելույթ ունեցող պատգամավորները, խոսելով ձեռք բերած արտադրական հաջողությունների մասին, աչքաթող չարեցին գոյություն ունեցող թերությունները, նշեցին, որ մի շարք գյուղերում (Ալաստան, Լոմատուրցխ, Գոման և այլն) հաճախ ձախողվել են քաղխմբակների պարապմունքները, անբավարար է դասախոսական պրոպագանդայի դրվածքը:

Կոնֆերանսում լուրջ խոսակցություն տեղի ունեցավ երիտասարդության հանգստի կազմակերպման հարցի շուրջը: Այդ կարևոր գործը, ինչպես ցույց տվեց կոնֆերանսը, գրեթե բոլոր գյուղերում անբավարար է կազմակերպված:

Էական թերություններով են բնութագրվում դպրոցական ԼԿԵՄ կազմակերպությունները:

Տուրցխի միջնակարգ դպրոցի դասատու Օ. Օքրոյանը իր ելույթում քննադատեց կոմերիտմիության շրջկոմին երիտասարդների հանգստի կազմակերպման գործով ընդհուպ չզբաղվելու համար:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին շրջլուսբաժնի վարիչ Կ. Կարախանյանը, գյուղտեխնիկումի և ռուսական միջնակարգ դպրոցի ԼԿԵՄ կազմակերպությունների քարտուղարներ Է. Ղինոյանը, Ռ. Կուրղինյանը և ուրիշներ:

Կոնֆերանսում ելույթ ունեցան կուսշրջկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Պետրոսյանը և Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի անդամ ընկ. Վ. Դյատիշչևը:

Կոնֆերանսը ընտրեց շրջկոմի նոր կազմ և Վրաստանի ԼԿԵՄ XXVII համագումարի պատգամավորներ:

Շրջկոմի նորընտիր պլենումը ԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար ընտրեց Մ. Քոչոյանին, իսկ երկրորդ քարտուղար Բ. Զեդգինիձեին:

***

Բոգդանովկայի շրջանի կոմերիտկազմակերպությունները իրենց հերթական կոնֆերանսը դիմավորեցին արտադրության և երիտասարդների կոմունիստական դաստիարակության սոցարեկցում ձեռք բերած զգալի հաջողություններով: ԼԿԵՄ շրջկոմի նախաձեռնությամբ ծավալված սոցմրցման շնորհիվ կոմերիտական - երիտասարդական շատ ֆերմաներ ու բրիգադներ ձեռք են բերել բարձր ցուցանիշներ: Արտադրության առաջավորների շարքերումն են Ուչմանայի, Թորիայի, Խոջաբեկի, Կալինինոյի, Գորելովկայի և այլ կոլտնտեսությունների բազմաթիվ կոմերիտականներ ու երիտասարդներ:

Շրջանում ավանդական են դարձել արտադրության երիտասարդ առաջավորների հավաքները: Ամեն տարի գարնանը նրանք հավաքվում և ամփոփում են անցած տարվա արդյունքները, որոշում նոր տարվա բնագծերը և հենց այստեղ էլ ԼԿԵՄ շրջկոմը նվերներ և պատվագրեր է հանձնում առաջավորներին:

Նշելով հաշվետու ժամանակաշրջանում շրջանի կոմերիտկազմակերպությունների ձեռք բերած հաջողությունները, զեկուցողը ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ս. Ղուկասյանը և ելույթ ունեցող-

ները ավելի շատ խոսեցին թերությունների մասին: Ամենալուրջ բացերից մեկն այն է, որ շրջանի ավելի քան 200 երիտասարդներ խուսափում են հանրօգուտ աշխատանքից, կտրվել են կոմերիտկազմակերպություններից: Հետին պլան է մղված ՀամԼԿԵՄ շարքերում նոր անդամներ ընդունելու գործը շրջանի կոլտնտեսային սկզբնական կոմերիտկազմակերպություններում:

Կոնֆերանսի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին պատգամավոր Փոքր Խանչալիի ութամյա դպրոցի ավագ ջոկատավար Ռ. Նոսոյանի ելույթը: Խոսելով դպրոցի պիոներական ու կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի, այդ կազմակերպությունների ու կոլտնտեսության միջև եղած սերտ կապի մասին, նա միաժամանակ քննադատեց ԼԿԵՄ շրջկոմին՝ ավագ ջոկատավարների մշտական գործող սեմինարի պարապմունքները գաղափարական ցածր մակարդակով անցկացնելու համար:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Ս. Բդոյանը (սպորտդպրոցի դիրեկտոր), Ա. Բլոյանը (Փոկա գյուղի կոլտնտեսության ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար), Լ. Դանոյանը (Հեչտիայի միջնակարգ դպրոցի ավագ ջոկատավար), Վ. Սլաստուխինը (Կալինինոյի կոլտնտեսության ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար) և ուրիշներ:

Կոնֆերանսում ելույթ ունեցավ կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ. Դուրգարյանը: Կոնֆերանսի աշխատանքին մասնակցում էր ՎԼԿԵՄ Կենտկոմի ներկայացուցիչ Վ. Սարիբեկյանը:

Շրջկոմի նորընտիր պլենումը շրջկոմի առաջին քարտուղար ընտրեց Ս. Ղուկասյանին, իսկ երկրորդ քարտուղար՝ Ն. Զախունաշվիլուն:

23 դեկտեմբերի

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Ախալքալաքի շրջսպառմիությունը (նախագահ՝ Կ. Աղասարյան) շարունակում է պայքարը հոբելյանական տարին բարձր ցուցանիշներով եզրափակելու համար:

Սպառմիությունը, որը 3.000 փայատերերով միավորում է մեկ քաղկոոպ և 3 գյուղկոոպ, ձեռք է բերել զգալի հաջողություններ: Բավական է նշել թեկուզ այն փաստը, որ վերջին 5 տարում շրջանում ապրանքաշրջանառությունն աճել է 50 տոկոսով և հասել 11 միլիոն ռուբլու: Այս տարվա անցած 11 ամիսների ապրանքաշրջանառության պլանն իրացվել է 102,3 տոկոսով: Անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ բնակչությանը ավելի է վաճառված 898 հազար ռուբլու արդյունաբերական ապրանքներ և

մթերքներ: Գյուղի բնակիչն այժմ իր շրջանում կարող է ձեռք բերել ցանկացած ապրանքը, տնային գործածության առարկաներ և անհրաժեշտ այլ պիտույքներ: Միայն այս տարվա անցած ամիսներին շրջկենտրոնում և գյուղերում վաճառքի են հանվել տարբեր մարկայի 500 սառնարան, 230 լվացքի մեքենա, 720 ռադիոընդունիչ, 38 դաշնամուր, մեծ քանակությամբ կարի մեքենաներ, կահույք և այլն:

Բնակչության սպասարկման գործն ավելի արդյունավետ կազմակերպելու, վաճառվող ապրանքների որակը բարձրացնելու և ասորտիմենտն ընդլայնելու նպատակով սերտ համագործակցություն է սկսվել առևտրի ցանցի և մատակարարող ձեռնարկությունների միջև: Դրա շնորհիվ այս տարի նկատելիորեն լավացել է ստացվող ապրանքների որակը, շրջսպառմության ցանցում պակասել է այսպես կոչված «դանդաղաշարժ» ապրանքների քանակը:

Զգալի հաջողություններ են ձեռք բերվել նաև փայտանձման, գյուղատնտեսական մթերքների և հումքի գնման, գրքի վաճառքի ուղղությամբ:

Ապրանքաշրջանառության պլանները գերակատարելու համար ծավալված սոցմրցությունում նոր բնագծեր են նվաճել քաղկոոպը, Սուլդայի, Բարալեթի, Ախալքալաքի գյուղկոոպները, շրջսպառմության մթերման գրասենյակը: Գյուղում կուլտուրական առևտուր ծավալելու գործում մեծ հաջողություն ունեն Կարտիկամի, Գոմանի գյուղական խանութները:

Շրջանում լայն ծավալ է ստացել առևտրական օբյեկտների շինարարությունը: Շրջկենտրոնում և գյուղերում նորակառույց շենքերի կողքին բարձրանում են մթերային և արդյունաբերական ապրանքների խանութներ, հասարակական սննդի օբյեկտներ: Միայն վերջին երկու տարում կառուցվել և շահագործման են հանձնվել շրջսպառմության գրասենյակի շենքն ու ակումբ-գրադարանը, Սուլդայի գյուղկոոպի գրասենյակը, 4 խորտկարան և ճաշարան, հացի 2 փուռ, 5 հանրախանութ: Նոր խանութներ են բացվել Բավրա, Պրտենա, Բոզալ, Տրկնա և այլ գյուղերում:

Վերջերս քաղաքի Լենինի փողոցի նորակառույց եռհարկ բնակելի տան առաջին հարկում բացվեց նոր խանութ 12 աշխատողներով: Խանութն ունի սննդամթերքների, արդյունաբերական և տնտեսական ապրանքների, ավտոպահեստամասերի, էլեկտրասարքերի վաճառքի և այլ բաժիններ: Նույն փողոցի վրա շարունակվում է երկհարկանի ունիվերսալ խանութի շինարարությունը: Այս օբյեկտները շահագործման կհանձնվեն եկող տարի: 1968 թվականին շարք կմտնեն նաև հացի մեքենայացված փուռը և որմնաբլոկների արտադրամասը: Նոր խանութներ կբացվեն Խուլգումո, Վարևան գյուղերում:

Հոբելյանական տարում ձեռք բերած այս հաջողությունների համար էր, որ սպառմության կոլեկտիվը արժանացավ ցենտրոսոյուզի վարչության և պետական առևտրի ու սպառողական կոոպերացիայի աշխատողների արհմիության կենտկոմի հոբելյանական պատվոգրին:

Սակայն պետք է նշել, որ Ախալքալաքում առևտրի կազմակերպման գործը դեռ ունի լուրջ թերություններ, հաճախ են խախտվում կուլտուրական առևտրի տարրական պահանջները: Առանձին խանութներում, հասարակական սննդի օբյեկտներում նկատվում են թերակշռումների, թերաչափումների դեպքեր, որոշ խանութներում և պահեստներում ապրանքները պահվում են անխնամ, անկանոն թափված են դարակներում: Առանձին տեղերում չկան բողոքի, պահանջի ու առաջարկի գրքեր, վատ է կազմակերպված ապրանքների ցուցադրումը:

Շրջսպառմիության վարչությունը, քաղկոոպը, գյուղկոոպները պետք է վերացնեն այդ թերությունները և նոր հաջողություններով հասնեն բնակչության սպասարկման ու նրանց պահանջմունքների բավարարման գործում:

26 դեկտեմբերի

1968

ՈՒՍՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿԸ – ՀԱՄԱԳՈՒՍԱՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ [Ռոբերտ Կուրղինյան]

Այդ օրը դասարանում արտակարգ աշխուժություն էր: Ով հանդիպում էր Ռոբերտին, ջերմ սեղմում էր նրա ձեռքը և սրտանց շնորհավորում: Ռոբերտը, այդ բարեկազմ, սիրունատես և գանգրահեր տղան ամոթխածությամբ, թեթևորեն ժպտում էր և բոլորին սրտագին շնորհակալություն հայտնում:

Առաջին անգամ չէր, որ առիթ էր լինում շնորհավորելու նրան: 17 տարեկան այդ պատանուն այս անգամ գերազանց սովորելու, անցկացված դպրոցական օլիմպիադաներում և սպորտային մրցումներում առաջնություն շահելու, դպրոցական ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար վերընտրվելու համար չէր, որ շնորհավորում էին, այլ կոմերիտմիության շրջանային կոնֆերանսում Վրաստանի ԼԿԵՄ XXVII համագումարի պատգամավոր ընտրվելու մեծ վստահության ու պատվին արժանանալու համար:

Ռոբերտ Մնացականի Կուրղինյանը Ախալքալաքի Վ. Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի գերազանցիկ աշակերտ է, աչքի է ընկնում իր համեստությամբ ու աշխասիրությամբ: Նրան միշտ կարելի է տեսնել դպրոցականներով շրջապատված զրուցելիս: Նա, որպես կոմերիտմիության քարտուղար, ձգտում է լավ ճանաչել ոչ միայն կոմերիտականներին, այլև դպրոցի բոլոր աշակերտներին, խելացի խորհուրդներով օգնում է հետ մնացողներին, ընկերական վերաբերմունքով և սկզբունքային քննադատությամբ ուղղում նրանց մեջ եղած այն ամենը, ինչ անհամատեղելի է սովետական դպրոցականի անվան հետ:

Ռ. Կուրղինյանի ղեկավարությամբ սկզբնական կոմերիտական կազմակերպությունը մեծ օգնություն է ցույց տալիս դպրոցի դիրեկցիային դպրոցականների ուսման առաջադիմությունը բարձրացնելու, դիտակցական կարգապահությունը ամրապնդելու, նրանց կոմունիզմի կառուցողի բարոյական կոդեքսի սկզբունքներով դաստիարակելու գործում: Ռոբերտը բարեխղճորեն է կատարում իր վրա դրված բոլոր պարտականությունները, որի շնորհիվ ձեռք է բերել բարձր հեղինակություն ոչ միայն ուսուցչական կոլեկտիվում, աշակերտների շրջանում, այլև Ախալքալաքի կոմերիտական ակտիվի շրջանում:

Ուսման մեջ Ռ. Կուրղինյանի առաջավոր լինելու, նրա ակտիվ աշխատանքի մասին են վկայում այն բոլոր գովասանագրերն ու պատվոգրերը, որոնց նա արժանացել է Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի և Ախալքալաքի շրջկոմի, դպրոցի դիրեկցիայի, Գուդաութայի «Ասի» հանրապետական պիոներական ճամբարի ղեկավարության կող-

մից: Նա գերազանց առաջադիմությամբ ավարտել է նաև քաղաքի երաժշտական յոթնամյա դպրոցը:

Ռ. Կուրզինյանը հաստատ որոշել է մտնել բժշկական ինստիտուտ:

27 փետրվարի

ՀԵԿՏԱՐԻՑ 30 ՑԵՆՏՆԵՐ ՑՈՐԵՆ

Դիլիսկայի սերմնաբուծական կոլտնտեսությունում (Ախալքալաքի շրջան) լայն արմատավորում է գտել աշնանացան «անքիստ-1» տեսակի ցորենի մշակությունը: Մեխանիզատորները և երկրագործները 200 հեկտարի վրա աճեցրել և անկորուստ են հավաքում բարձր բերքը: Նախատեսված 15-ի փոխարեն յուրաքանչյուր հեկտարից ստացվում է 30 ցենտներ հատիկ: Այս ցուցանիշը շրջանում ամենաբարձրն է:

Շուտով կսկսվի աշնանացանը: Դիլիսկացիները «անքիստ-1» ցորենի սերմացուով կզբաղեցնեն 300 հեկտար տարածություն, որի համար առանձնացրել են 75 տոննա լավորակ սերմացու: Ցանքը կատարվելու է լավ մշակված հողամասերում: Ինչպես միշտ, այս անգամ էլ ցանք կկատարեն մեխանիզատորներ Ս. Գաբրիելյանը, Ե. և Լ. Կարախանյանները: Նրանք պարտավորվել են աշնանացանը ավարտել սեղմ ժամկետում և հեկտարից ստանալ 35 ցենտներ միջին բերք:

ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հանրային հոտը հյութալի կերերով ապահովելու գործը գտնվում է դիլիսկացիների ուշադրության կենտրոնում: Կերերի սիլոսացման առաջին շրջանում նրանք ոլոռի և վարսակի ցանքերի խառնուրդից պատրաստեցին 700 տոննա հյութալի կեր: Այժմ սկսվել է կերերի կուտակման երկրորդ շրջանը: 100 հեկտար սիլոսացու արևածաղկի պլանտացիաներից հավաքվում է 160-170-ական ցենտներ բերք: Մեխանիզատոր Լ. Ղաթրջյանը սիլոսահավաք կոմբայնով օրական 6-ի դիմաց հավաքում ու մանրացնում է 12 հեկտարի կանաչ զանգված: Իրենց քրտնաջան աշխատանքով աչքի են ընկնում նաև մեխանիզատորներ Խ. և Շ. Կարախանյանները, որոնք տրակտորաքարշ սայլակներով կանաչ զանգվածը անմիջապես փոխադրում են գյուղ և դատարկում սիլոսի հորերը:

Դիլիսկայի կոլտնտեսականները խոստացել են պատրաստել 2.000 տոննա հյութալի կեր, կամ մեկ կովի համար՝ 5 տոննա:

24 սեպտեմբերի

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

Լարված աշխատանքի օրեր են Բոգդանովկայի շրջանի Խոջաբեկ գյուղի կոլտնտեսությունում: Այստեղ միաժամանակ են սկսվել և՛ ցանովի խոտի (բարձրադիր դոտում), և՛ հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը, և՛ կերի սիլոսացումը, և՛ սառնավարը:

Գյուղտնտարտելում նախապես կազմվեց խոտհնձի ու հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի օրացուցային պլան, դասավորվեցին ուժերը: Դա հնարավորություն տվեց աշխատանքային ութ օրում հավաքել և դիզել ավելի քան հազար տոննա խոտ, պատրաստել 400 տոննա սիլոս: Այժմ տնտեսությունում հնձվում են ցանովի խոտաբույսերի, մարգագետինների վերջին հեկտարները: Խոջաբեկցիները պարտավորվել են հանրային հոտի համար կուտակել 2.600 տոննա կոշտ և պատրաստել 700 տոննա հյութալի կեր, որը ձմռան մսուրային շրջանում լիովին կբավարարի անասունների պահանջը:

Խոջաբեկում կազմակերպված սկսվեց նաև հասկավոր կուլտուրաների բերքահավաքը: Երբ դաշտ դուրս եկան Մաքսիմ Արզումանյանի և Գրիգոր Վարդանյանի կոմբայնային ագրեգատները, կոլտնտեսականների ուրախությունը կրկնապատկվեց: Եվ դա հասկանալի էր: Բոլորը գիտեին, որ փորձված մեխանիզատորները այս անգամ էլ կաշխատեն արդյունավետ և 320 հեկտար դարու ցանքերի բերքահավաքը երկար ժամանակ չի պահանջի: Բերքահավաքի սկզբից մեխանիզատորները, պլանի 6-ի դիմաց, օրական հնձում են 8-ական հեկտարի բերք:

Կոմբայնների անխափան աշխատանքը ապահովելու, հացահատիկն ու ծղոտը ժամանակին դաշտից փոխադրելու նպատակով, կոլտնտվարչությունը առանձնացրել է տրակտորաքարշ երեք սայլակ, վեց ավտոմեքենա: Փոխադրական միջոցների արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնձի և բերքի փոխադրման միջև խզում չի առաջանում:

Կալում ևս եռում է աշխատանքը: Հացահատիկի չորացման ու մաքրման գրաֆիկը հաջողությամբ պահպանվում է: Երկու «ՎԻՄ» սերմնազտիչները, որոնց աշխատանքը ղեկավարում է մեխանիզատոր Մերուժան Արզումանյանը, ոչ մի ժամ պարապուրդ չեն տալիս: Դրա շնորհիվ գերակատարվում են օրվա պլանները:

Արտելի երկրագործներն ու մեխանիզատորները քաջ գիտակցում են, որ այժմվանից պետք է դրվի եկող տարվա առատ և կայուն բերքի հիմքը: Ահա թե ինչու, բերքահավաքին զուգընթաց, այստեղ արագ թափով է կատարվում սառնավարը: Գործի դրված չորս դիզելային տրակտորները աշխատում են անխափան, և օրվա առաջադրանքները գերակատարվում են սիստեմատիկաբար:

Տրակտորիստներ Արտյուշ Մոսոյանը, Սերգեյ Գորոյանը հերկը կատարում են ագրոտեխնիկական կանոնների համաձայն: Մեխանիզատորները որոշել են նախատեսված 500-ի դիմաց կատա-

բել 600 հեկտար ցրտահերկ, միաժամանակ հողը մացնել 2.000 տոննա օրգանական պարարտանյութ:

Ջավախքում ոսկեղօծ աշուն է: Հողի աշխատավորը հավաքում է քրտնաջան աշխատանքով աճեցրած բերքը, պատվով կատարում պետության հանդեպ ունեցած պարտավորությունը, վարձատրվում առատորեն: Լիություն է բերում ամեն մի օրը նաև խոջաբեկցուն:

26 սեպտեմբերի

ԱՅՍՊԻՍԻՆ ԵՆ ՄԵՐ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ

Ախալքալաքի շրջանի կոլտնտեսություններում ու սովխոզներում, հիմնարկ-ձեռնարկություններում ու դպրոցներում աշխատում են ու սովորում բազմաթիվ կոմերիտականներ, որոնք աչքի են ընկնում դեպի աշխատանքը և ուսումը ունեցած իրենց բարձր գիտակցականությամբ ու պարտաճանաչությամբ:

Կարտիկամ գյուղում կոմերիտականների և երիտասարդների թիվը հասնում է 70-ի: Նրանց գերակշռող մասը աշխատում է կոլտնտեսային արտադրության մեջ: Դրվատանքի շատ խոսքերի է արժանի կոմերիտական-երիտասարդական բրիգադը, ուր ընդգրկված են 15 կոմերիտականներ ու երիտասարդներ: Երիտասարդ կարտոֆիլագործները, տարեսկզբին մտնելով սոցմրցության մեջ, խոստացան ցանքը և մշակումը կատարել սեղմ ժամկետում, ագրոտեխնիկայի կանոններին համապատասխան, աճեցնել բարձր բերք: Տված խոսքը նրանք պատվով կատարեցին: Ամեն մի հեկտարից նախատեսված 180-ի դիմաց պահեստավորեցին 200 ցենտներ կարտոֆիլ, իսկ կոմերիտուհիներ Ն. Պողոյանը, Ն. Ամիրխանյանը և ուրիշներ իրենց մշակած հողատարածությունից հեկտարի հաշվով ստացան 220-230 ցենտներ բերք: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո որպես հերթապահուհի այս կոլտնտեսությունում է աշխատում Վեներա Երանոսյանը: Դա 17-ամյա կոմերիտուհու աշխատանքի սկիզբն է:

Կուլիկամ գյուղում է ծնվել Աղնիվ Համբարյանը: 1961 թվականին նա արծաթե մեդալով ավարտեց միջնակարգ դպրոցը, իսկ 1966 թվականին՝ բարձր առաջադիմությամբ Մոսկվայի N 1 բժշկական ինստիտուտի դեղագործական ֆակուլտետը: Արդեն երկրորդ տարին է, ինչ նա աշխատում է Ախալքալաքի շրջանային դեղատունը որպես դեղորայքի թողարկիչ և հսկիչ: Բոլորը մեծ հարգանքով են խոսում նրա մասին որպես լավագույն մասնագետի, հասարակական ակտիվ աշխատողի:

Արագվայի միջնակարգ դպրոցում բարձր առաջադիմությամբ, գիտակցական կարգապահությամբ և հասարակական ակտիվ աշխատանքով աչքի են ընկնում կոմերիտականները: Պիոներական

կազմակերպության օժանդակությամբ կոմերիտականները մեծ Լենինի ծննդյան 100-ամյակին նվիրված ֆոտոստենդներ են պատրաստել: Պատմության խմբակի անդամների և բարձր դասարանների կոմերիտականների ուժերով կազմված ֆոտոալբոմում զետեղված են Հայրենական պատերազմի մասնակից կոմերիտականների ու երիտասարդների լուսանկարները, որոնք պատմում են նրանց սխրագործությունների մասին: Դպրոցի ԼԿԵՄ կազմակերպությունը ամեն կերպ ձգտում է այն բանին, որ չլինեն երկտարեցներ, բոլորը սովորեն միայն լավ և գերազանց գնահատականներով:

Ախալքալաքի մեքենայացված N 18 շրջիկ շարասյան կոլեկտիվում բոլորը ճանաչում են էքսկավատորավար Խաչիկ Ղազարյանին: Սովետական բանակում ծառայելուց հետո նա աշխատեց միջշրջանային ջրային տնտեսությունում որպես բուլդոզերավար ու էքսկավատորավար. տասնյակ կիլոմետրեր հողը ճեղքելով ջուր տվեց ծարավ դաշտերին, ջրմուղներ բացեց Ջավախքի գյուղերի համար: Կոմերիտական մեխանիզատորն այժմ շրջկենտրոնում բնակելի տների, արտադրական, կուլտուր-կենցաղային նշանակման շենքերի հիմքերն է փորում, սիստեմատիկաբար գերակատարելով օրվա առաջադրանքը:

Սոնյա Զիվչյանը չառարկեց, երբ Խուլգումոյի կոլտնտեսությունում առաջարկեցին հորթապահուհու աշխատանք: Նա այդ գործին վարժվել էր դեռևս դպրոցում սովորելու տարիներին, երբ արձակուրդների ժամանակ օգնում էր հարազատներին: Այդ օրվանից անցել է չորս տարի: Սոնյան ամեն տարի 50-60 մատղաշ հորթ է աճեցնում և բարձր քաշաճով հանձնում նախրապաններին: Այս տարի կոմերիտմիության շարքերում ընդունվելու ժամանակ նա խոստացավ իր խնամքին հանձնված նորածին հորթերի օրական միջին կենդանի քաշը ավելացնել 650-700-ական գրամով: Տված իր խոստումը նա պատվով կատարեց:

Այսպիսին են մեր կոմերիտականները, որոնք չբավարարվելով ձեռք բերածով, միշտ նայում են առաջ, անձնվիրաբար պայքարում նոր բնագծերի համար:

3 դեկտեմբերի

1969

ՆՎԱՃՈՒՄ Է ՍՐՏԵՐԸ

Ավարտվեց աշխատանքային օրը: Բոգդանովկայի շրջանի Մեծ Գոնդուրայի կոլտնտեսության կոմունիստների, անկուսակցական ակտիվիստների մի մեծ խումբ սովորականի պես տան ճամփան չբռնեց, այլ շարժվեց դեպի կոլտնտեսարչության շենքը:

Սկսվում է կոլտնտեսային կուսակազմակերպության կից մարքսիզմ-լենինիզմի հիմունքներն ուսումնասիրող դպրոցի (ուսման չորրորդ տարի) եզրափակիչ պարապմունքը: Ունկնդիրների դեմքերին նկատվում է լրջություն: Չէ՞ որ նրանք այսօր հանրապետարելու են ամբողջ ուսումնական տարում անցածը: Պրոպագանդիստ Վ. Միքայելյանը, ինչպես միշտ, հակիրճ խոսք է ասում միջազգային ասպարեզում և երկրի ներքին կյանքում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին, հետո անցած թեմաների շուրջը նախապես կազմված հանդուցային հարցերով դիմում է ունկնդիրներին:

Ընկերական աշխույժ զրույցին ակտիվորեն մասնակցում են անասնապահ Գ. Զիչոյանը, թռչկատու, Հայրենական պատերազմի մասնակից Հ. Առաքելյանը, կոլտնտեսական Ս. Շիրինյանը, փոստի գյուղական բաժանմունքի աշխատակիցներ Ա. Վարդանյանն ու Վ. Համբարյանը և ուրիշներ: Նրանք իրենց պատասխաններում մեծ տեղ են տալիս գյուղի կուլտուրական շինարարության, կենցաղի բարելավման բնագավառում կոլտնտեսությունում կատարված տեղաշարժերին: Խոսում են արտադրական այն վերելքի մասին, որ առաջ է բերել մեծ Լենինի ծննդյան 100-ամյակի նախապատրաստությունը:

Հանրադումարային պարապմունքը ցույց տվեց, որ կոմունիստների և անկուսակցական ակտիվիստների հետ կատարվող քաղաքական աշխատանքը զգալիորեն նպաստել է նրանց մտահորիզոնի ընդլայնմանը, աշխատանքային ակտիվության բարձրացմանը: Գյուղում չկա աշխատանքի մի բնագավառ, որտեղ չզգացվի կոմունիստների առաջատար դերը: Նրանք ակտիվորեն մասնակցում են ընակչության մեջ կատարվող ագիտացիոն-մասսայական աշխատանքներին, պարզաբանում են կուսակցության և կառավարության որոշումները, մասսայականացնում գիտության նվաճումներն ու գյուղատնտեսության առաջավորների փորձը, օգնում կոլտնտեսականներին ժամանակին բացահայտելու և վերացնելու կոլտնտեսային արտադրության մեջ եղած թերությունները:

Ամեն անգամ, երբ գաղափարական բարձր մակարդակով, բոլոր ունկնդիրների ակտիվության պայմաններում է ավարտվում դպրոցի պարապմունքը, պրոպագանդիստ Վ. Միքայելյանի դեմքին

գոհունակության ժպիտ է երևում: Այդ ժպիտը մենք նկատեցինք և այսօր, ամփոփիչ պարապմունքն ավարտվելուց հետո:

Քսաներկու տարի առաջ էր, երբ Հնչտիայի ութամյա դպրոցի դասատու Վելիխան Սուրենի Միքայելյանը առաջ քաշվեց պրոպագանդիստ և սկսեց պարապել կոմերիտականների հետ:

Ինչպե՞ս անել, որ աշխատանքը ցանկալի արդյունք տա, ինչպե՞ս կազմակերպել գործը, որ դա նպաստի երիտասարդության գաղափարական դաստիարակությանը: Ահա այս հարցերն էին, որ մտահոգում էին նրան:

Երիտասարդական խանդավառություն ու համապատասխան պատրաստականություն ուներ Միքայելյանը: Սակայն պակասում էր փորձը: Այդ բացը լրացրին ժամանակը, աշխատանքի ավագ ընկերները: Անցան տարիներ: Եվ Միքայելյանը տիրապետեց մարդկանց սրտերը նվաճելու պրոպագանդիսական արվեստին:

Շուրջ քսան տարի է, ինչ նա հայրենի Մեծ Գոնդուրա գյուղումն է: Պրոպագանդիստի աշխատանքը դարձել է նրա երկրորդ պրոֆեսիան: Ընթացիկ տարում Վ. Միքայելյանը ղեկավարում է նաև միջնակարգ դպրոցի Վ. Ի. Լենինի առանձին աշխատություններն ուսումնասիրող տեսական սեմինարը:

Պրոպագանդիստ Միքայելյանը ակտիվորեն մասնակցում է կուսշրջկոմի քաղլուսկաբինետում անցկացվող սեմինարներին, տեսական կոնֆերանսներին, մեթոդական հարցերին նվիրված խորհրդակցություններին և ինքը հաճախ հանդես է գալիս ռեֆերատներով: Նա «Գիտելիք» ընկերության շրջանային բաժանմունքի դասախոսական խմբի անդամ է, այս օրերին աշխատավորության առջև հանդես է գալիս լենինյան ընթերցումներով:

7 հունիսի

ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ախալքալաքի շրջանի կոլտնտեսություններում ու սովխոզներում սկսվել է անասնակերի կուտակման ամենապատասխանատու շրջանը:

Ավելի քան 700 հեկտար տարածություն են գրավում Դիլիսկայի կոլտնտեսության ցանովի խոտհարքները: Բերքը անկորուստ հավաքելու նպատակով կոլտնտվարչությունն ու կուսակցական կազմակերպությունը ստեղծել են կերհայթայթման բրիգադ: Գործը խելացիորեն կազմակերպելու շնորհիվ այստեղ աշխատանքային ութ օրում ավարտվեց խոտհունձը և սկսվել են խոտի տեղափոխման և դիզման աշխատանքները:

Երբ Վաչիանի սովխոզում սկսվեց խոտհունձը, շատերի հետ դաշտ դուրս եկավ մեխանիզատոր Ալեքսանդր Վախտանգիշվիլին և Խոսպիայի տեղամասում գործի դրեց խոտհնձիչ մեքենան: Այժմ նա մեքենան աշխատեցնում է անխափան, հնձում է մաքուր: Առաջավոր մեխանիզատորը նախատեսված 5-ի փոխարեն օրական հնձում է

6-7 հեկտար խոտհարք: Այդ նույն տեղամասում հնձի է դուրս եկել նաև մեխանիզատոր Միխայիլ Կալայչևը: Նա նույնպես առաջադրանքները կատարում է պատվով: Երկու մեխանիզատորները մրցում են միմյանց հետ և աշխատանքային երեք օրում հնձեցին 39 հեկտար կորնգանի ցանքատաշտ:

Լավ են աշխատում նաև Խանդոյի, Օրջայի, Բարալեթի, Զակի, Կոբխի և ուրիշ գյուղերի կոլտնտեսությունների դաշտավարներն ու մեխանիզատորները:

Շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները պարտավորվել են այս տարի պատրաստել 25.000 տոննա սիլոս, հիմնականում ցանովի կերաբույսերի հաշվին, որոնց ցանքատարածությունները հասնում են 2.278 հեկտարի: Ավելի քան 1.800 հեկտար տարածություն են գրավում արևածաղկի ցանքերը: Հասկանալի է, որ այժմ անհրաժեշտ է լավ մշակել ու խնամել պլանտացիաները, ամեն կերպ ապահովել բավարար քանակությամբ սիլոսի մասսայի ստացումը: Խանդոյի, Դիլիսկայի, Օրջայի և մյուս գյուղերի կոլտնտեսությունները ժամանակին են կատարում ցանքերի ոռոգումը, խնամքն ու մշակումը:

Սակայն ոչ ամենուրեք է, որ գործը լավ է կազմակերպված: Վաչիանի սովխոզի Խոսպիայի տեղամասի, Բավրայի, Կոմելիայի, Կաջոյի, Մաջադիայի, Կարտիկամի կոլտնտեսությունների արևածաղկի ցանքերը խեղդվել են մոլախոտերի մեջ: Ասենք նաև, որ այս տնտեսություններում թերագնահատվում է վայրի բույսերի սիլոսացումը:

Վերոհիշյալ տնտեսությունների ղեկավարները պետք է վճռական միջոցների դիմեն հանրային հոտը հյութալի կերով ապահովելու համար: Դանդաղել այդ գործում, նշանակում է հենց այժմվանից ձախողել մսի ու կթի արտադրությունն ավելացնելու վերաբերյալ ստանձնած պարտավորությունները:

26 հուլիսի

ՖԵՐՄԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Գորելովկայի կոլտնտեսությունը (Բոգդանովկայի շրջան) գտնվում է ծովի մակերևույթից 2.080 մետր բարձրության վրա: Շրջեցե՛ք նրա ալպյան բուսականությամբ հարուստ արոտավայրերը, բլուրներն ու սարերը, իջե՛ք ձորակները, ամեն տեղ դուք կզգաք ծաղիկների արբեցնող բույրը, կտեսնեք աղբյուրները, որոնց ջրերը փարթամացնում են բուսականությունը, հագեցնում շրջապատի բնության ծարավը:

Կոլտնտեսությունը տարեցտարի բարելավում է հանրային անասունների ցեղայնությունը, ավելացնում մթերատվությունը: Շրջանում արտադրված անասնաբուծական մթերքների 15 տոկոսից ավելին տալիս է խոշոր եղջերավոր՝ ավելի քան 2.400 և մանր եղջերավոր 14 հազար անասուն ունեցող առաջավոր այս տնտեսությու-

նը: Այդ գործում իրենց ավանդարդային դերն են կատարում գյուղի կոմունիստները:

Երբ տարեսկզբին կուսակցական կազմակերպության ժողովում կոմունիստները քննարկում էին այն հարցը, թե ինչպես հասնել անասնաբուծության զարգացման նոր վերելքի, ամբողջ սրությամբ դրվեց այդ բնագավառը գործիմաց, կարող կադրերով ապահովելու հարցը: Կուսակազմակերպությունը լրջորեն զբաղվեց արտադրության մեջ կոմունիստների ուժերը ճիշտ տեղաբաշխելու, անասնաբուծական ֆերմաները լավագույն կադրերով ամրապնդելու գործով: Անասնաբուծության վճռական տեղամասերն ուղարկվեցին մեծ թվով կոմունիստներ և կոմերիտականներ: Կոլտնտեսային կուսակազմակերպության 5 անդամներից 16-ն աշխատում են անասնապահական ֆերմաներում:

Շիտակություն, պարզություն, պարտաճանաչություն և թերությունների նկատմամբ անհանդուրժողականություն այսպիսին են կովաբուծական N 2 ֆերմայի վարիչ, կոմունիստ Միխայիլ Տամիլինի բնավորության գծերը:

Գյուղի աշխատավորության շրջանում մեծ հեղինակություն է վայելում կուսշրջկոմի անդամ, կթվորուհի Մելինա Զուբկովան: Նա տարեցտարի բարձրացնում է իր խնամքին հանձնված կովերի կաթնատվությունը, մրցության մեջ միշտ էլ հաղթանակով է դուրս գալիս: Այս տարվա անցած 8 ամսում Մելինան խնամում է 12 կով, յուրաքանչյուրից ստացել է մեկական հորթ և 1.600 կիլոգրամ կաթ: Կուսակցական կազմակերպությունը մասսայականացնում է առաջավոր կթվորուհու փորձը:

Իսկական գործի մարդ է, կոմունիստ, նախրապահ Պյոտր Օսլոպովը: Նրան է հանձնված 1967-1968 թթ. ծնված բտվող մոգիների խնամքը: Փորձված անասնապահը ինչպես միշտ, այս տարի ևս լավ ցուցանիշների է հասել: Երեք ամսում 200 գլուխ խոշոր եղջերավոր անասուններից ամեն մեկի կենդանի միջին քաշը արոտային շրջանում ավելացել է 60 կիլոգրամով:

Ավելի քան 25 տարի է, ինչ հովիվ է աշխատում կոմունիստ Վլադիմիր Կարևը: Երկար տարիների աշխատանքի փորձով դարձել է իր գործի վարպետը, աճեցրել է մի քանի հազարի հասնող գառներ, համալրել մաքիների կազմը, ամեն կերպ ձգտել է բարձրացնել հանրային հոտի մթերատվությունը:

Դրվատանքի շատ խոսքեր կարելի է ասել կոլտնտեսության գոոտեխնիկ, կոմունիստ Վասիլի Իվանովիչ Տամիլինի հասցեին: Մշտական հոգսերով տարված, շրջում է նա հոտից հոտ, նախրից նախիր, ստուգում է անասնապահների աշխատանքը, զրուցում մարդկանց հետ, ոգևորում նրանց:

Սակայն այս բոլորը չէ: Նա սիրով է կատարում նաև ագիտատորի պարտականությունը: Միշտ էլ նրա սրտաբաց զրույցները գրավում են անասնապահներին, որոնց հետաքրքրում են միջազգային իրադրության, մեր պետության ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, ինչպես նաև շրջանի և հանրապետության անասնապահների ձեռք բերած հաջողությունները:

Գորբաչովկայի անանուապահները, իրենց ամանդարդում ունենալով կոմունիստներին, վերակատարել են անանուապահական մթերքների արտադրության և պետությանը վաճառելու կիսամյա պլանը և այժմ պայքարում են տարեկան պլանները ևս վերակատարելու, մեծ Լենինի ծննդյան 100-ամյակն արժանավայել դիմավորելու համար:

11 սեպտեմբերի

ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՆ՝ ՁԵՎԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Սովետական մարդկանց աշխատանքի հարուստ փորձը ցույց է տվել, որ գործարար սոցմրցությունը բարձրացնում է մասսաների ստեղծագործական ակտիվությունը, ապահովում է կուսակցության ու կառավարության առաջադրած խնդիրների կատարումը:

Ահա թե ինչու Ախալքալաքի շրջանի Մաջադիա գյուղի կոլտնտեսականները մեծ գոհունակությամբ ընդունեցին Կորիա գյուղի արտելի հետ կնքած պայմանագրի կետերը: Բայց կոլտնտեսության սկզբնական կուսակազմակերպության բյուրոն հետևողական չեղավ մրցությունը գլխավորելու հարցում: Նրա քարտուղար Ա. Պարոնյանը գլխավորը համարեց ոչ թե ստանձնած պարտավորությունների կատարման համար գյուղի աշխատավորներին մոբիլիզացնելը, այլ խոստումները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կուսբյուրոն մրցությանը տվել է ձևական բնույթ, պայմանագիրը հաստատելուց հետո երբեք չի անդրադարձել դրա կատարման ընթացքն ստուգելու հարցին:

Նման անհանդուրժելի վերաբերմունքը, անշուշտ, իր վնասակար ազդեցությունն է թողել տնտեսության գործունեության վրա: Սոցմրցության պայմանագրում առանձնակի ուշադրություն էր դարձված գյուղատնտեսական մեքենաները լրիվ բեռնվածությամբ օգտագործելու և բերքահավաքն անկորուստ անցկացնելու հարցերին: Մինչդեռ հացահատիկային կուլտուրաների մասսայական բերքահավաքի վճռական օրերին գործի չդրվեց ունեցած երկու կոմբայնը, դրա հետևանքով խզում առաջացավ հնձի, փոխադրման և կալսման միջև: Սեպտեմբերի 10-ի տվյալներով, ձեռքով հնձած 203 հեկտար հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության միայն 38 հեկտարի բերքն էր կալված:

Կոլտնտեսության ղեկավարները անհրաժեշտ չհամարեցին սոցմրցության պայմանագիրը հանել չհրկիզվող արկղից նույնիսկ այն ժամանակ, երբ առաջացան խոշոր կորուստներ, վնասներ ու լուրջ դժվարություններ: Նրանք չանդրադարձան մրցությանը, աշխատավորներին չմոբիլիզացրին տված խոստումները կատարելու համար: Դրա հետևանքը եղավ այն, որ անցած ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, կաթի համախառն արտադրությունը նվազեց 94 ցենտներով, թերակատարվեց պետությանը կաթ վաճառելու պարտավորությունը:Մի՞թե կարևոր գործին ձևական վերաբերմունք ունենալու արդյունք չէ այն, որ

պայքար չկազմակերպվեց անասունների կորուստ չտալու մասին պայմանագրային կետի կատարման համար: Տնտեսությունը կորցրեց 16 խոշոր, 146 մանր եղջերավոր անասուն: Կոլտնտեսությունում չափազանց դանդաղ տեմպերով ու ձգձգումներով են ընթանում շինարարական աշխատանքները: Մոտենում է ձմեռը, բայց մաջդիացիները չեն շտապում խոզանոցի շենքի կառուցումն ավարտելու, 350 տոննա տարողությամբ կարտոֆիլի խրամատը օգտագործման հանձնելու գործում:

Պարզ է, որ տնտեսությունում եղած աչքի ընկնող թերությունների ոչ մի պատճառ չի կարող արդարացնել Մաջդիայի կոմունիստներին: Կուսակազմակերպության որոշ անդամներ խուսափում են արտադրության վճռական տեղամասերում աշխատելուց: Նույնիսկ կան կոմունիստներ, որոնք եկամտի աղբյուրներ են որոնում հեռավոր վայրերում, անտեսում են հարազատ արտելի ու կոլտնտեսականի բարձր պատիվը: Կուսբյուրոն անհանդուրժելի կերպով հաշտվել է ստեղծված վիճակի հետ, հոդ չի տանում կոմունիստների պատասխանատվությունը և ավանգարդային դերը բարձրացնելու համար:

Սոցմրցության պայմանագրում մեծ տեղ է տրված առաջավոր փորձի ուսումնասիրմանն ու արմատավորմանը: Սակայն այս հարցը նույնպես վրիպել է կուսբյուրոյի ուշադրությունից: Այնինչ շատ կոմունիստներ ու կոլտնտեսականներ անձնուրաց աշխատանքի օրինակներ են ցուցաբերում և ընդօրինակելու շատ բան կա նրանց մոտ: Չի մասսայականացվում վճռական տեղամասերին ամրացված կոմունիստներ Գ. Գրիգորյանի, Ա. Վարդիկյանի, Ս. Հովհաննիսյանի, Գ. Զորկնցյանի, առաջավոր կթվորուհի Վ. Հովհաննիսյանի, կթվոր Վ. Ղազարյանի, մեխանիզատորներ Ա. Ալեքյանի, Մ. Խեդրյանի և ուրիշների ուսանելի փորձը:

Կոլտնտեսությունում նշված թերությունները չէին լինի, եթե կուսկազմակերպությունը նպատակասլաց կերպով զրաղվեր կոմունիստների, կոմերիտականների ու արտելի բոլոր անդամների կոմունիստական դաստիարակության հարցերով, տարվող ագիտզրույցներն ու քաղինֆորմացիաները սերտորեն կապեր տնտեսական խնդիրների կատարման հետ, պայքարեր աշխատանքային կարգապահության բարձր մակարդակի համար:

Մաջդիայում լարված աշխատանքային օրերն են: Շարունակվում են կերերի կուտակումը, բերքի կալսումը, ցրտահերկը, կարտոֆիլի բերքի հավաքման և անասունների մսուրային շրջանին նախապատրաստվելու աշխատանքները: Կոլտնտեսության կուսբյուրոն պետք է հրաժարվի սոցմրցության նկատմամբ ձևական վերաբերմունքից, ապահովի մրցության հրապարակայնությունը, աշխատավորներին մոբիլիզացնի գյուղատնտեսական տարին հաջողությամբ եզրափակելու, մեծ Լենինի ծննդյան 100-ամյակի պատվին ստանձնած պարտավորություններն անթերի կատարելու, կոլտնտեսականների համամիութենական առաջիկա համագումարը արտադրական հաջողություններով դիմավորելու համար:

30 սեպտեմբերի

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՋԱՆՔԵՐՈՎ

Ախալքալաքի շրջանի Լոմատուրցխ գյուղի կոլտնտեսությունը լուրջ հաջողություններով է եզրափակում հնգամյակի չորրորդ տարին: Հացահատիկային կուլտուրաների յուրաքանչյուր հեկտարից, նախատեսված 13,5-ի դիմաց, ստացվել է 16,3 ցենտներ միջին բերք, իսկ Հայկ Խաչատրյանի ղեկավարած դաշտավարական բրիգադը յուրաքանչյուր հեկտարից հավաքել է 21 ցենտներ հացահատիկ: Ցուցանիշները բարձր են հատկապես անասնապահության ընդլայնում: Կովաբուծական ֆերման ամեն մի կովից տարեկան պլանի 1.700-ի պարտավորության 1.720-ի դիմաց, ստացել է 1.738 կիլոգրամ կաթ: Նախորդ տարվա համեմատությամբ ամեն մի կովի կաթնատվությունը ավելացել է 520 կիլոգրամով, իսկ համախառն կաթի արտադրանքը՝ 228 ցենտներով: Գերակատարումով են իրացվել պետությանը գյուղատնտեսական մթերքներ վաճառելու առաջադրանքները:

Այս բոլոր հաջողությունները սերտորեն կապված են կոլտնտեսության կուսակազմակերպության ամենօրյա գործունեության հետ: Կուսբյուրոն բացառիկ ուշադրություն է նվիրում կադրերի ընտրությանն ու տեղաբաշխմանը: Արտադրական տեղամասերի ղեկավարումը հանձնարարված է գործիմաց, իրենց աշխատանքը սիրող մարդկանց: Կաթնապրանքային ֆերմայի վարիչը, դաշտավարական բրիգադների ղեկավարները և արտադրության մյուս կազմակերպիչները կոմունիստներ են: Հենց նրանք էլ կուսակազմակերպության որոշումները հասցնում են մասսաներին, աշխատանքի լավագույն օրինակով են վարակում բոլորին, մոբիլիզացնում կոլտնտեսականներին ընդունված որոշումները կենսագործելու: Բարի համբավ են վայելում կոմունիստ կթվորուհի Բեթխեհեմ Ղուկասյանը, մեխանիզատորներ Արտավազդ Շորողյանը, Լուկաշին Իրիցյանը, կարտոֆիլագործներ Աննման Հարությունյանը, Ինքուլյ Բերաքչյանը և ուրիշներ:

Այս բոլորի մասին կուսկազմակերպության հաշվետու-ընտրական ժողովում խոսեց կուսբյուրոյի քարտուղար Ա. Տոնոյանը: Սակայն, ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցող կոմունիստները կուսկազմակերպության և նրա բյուրոյի աշխատանքներում բացահայտեցին լուրջ թերություններ:

- Մեզ մոտ,- ասաց իր ելույթում կոմունիստ Ս. Խաչատրյանը,- երբեմն ուշացումներով են հրավիրվում կուսակցական ժողովները և բյուրոյի նիստերը, ոչ բոլոր ժողովներն են լավ նախապատրաստվում և անցկացվում, որոշ կոմունիստներ ակտիվորեն չեն մասնակցում քննարկվող հարցերին, որի հետևանքով ընդունված առանձին որոշումներ կոնկրետ չեն, գործարար բնույթ չեն կրում:

Կուսանդամներ Հ. Խաչատրյանը, Վ. Գալստյանը նշեցին, որ բանջարաբուծությունը տարիներ առաջ կոլտնտեսության դաշտավարության առավել եկամտաբեր ճյուղն էր, ոչ միայն ապահովում

էր տնտեսության ու կոլտնտեսականների պահանջարկը, այլև նրա տված բանջարեղենը դուրս էր բերվում շուկա՝ վաճառքի: Սակայն, չգիտես ինչու, վերջին տարիներին բանջարաբուծությունը դուրս է մղվել ցանքաշրջանառությունից: Կուսակցական կազմակերպությունն ու կոլտնտեսության վարչությունը պետք է մտածեն այդ մասին և եկող տարվանից վերականգնեն բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը:

Ժողովը լուրջ թերություն համարեց այն, որ կուսբյուրոն անբավարար է օգնել ու ղեկավարել կոմերիտական կազմակերպությանը: Կուսակցական ժողովներում և բյուրոյի նիստերում կոմերիտական աշխատանքին վերաբերող հարցեր գրեթե չեն քննարկվել: Կուսբյուրոյի քարտուղարն ու անդամները չեն հետաքրքրվել ԼԿԵՄ կազմակերպության աշխատանքով:

Հաշվետու ժողովը նշեց, որ գյուղում մասսայական-քաղաքական աշխատանքը անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվում: Հազվադեպ են կազմակերպվում դասախոսություններ ու զեկուցումներ գյուղի աշխատավորության համար, քաղուսուցման պարապմունքները երբեմն ձախողվում են:

Հաշվետու-ընտրական ժողովն ընդունեց գործնական միջոցառումներ, ընտրեց կուսբյուրոյի նոր կազմ:

20 Նոյեմբերի

ՏԱՐԻՆԵՐ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[Զուլիետա Բալասյան]

Ախալքալաքի շրջանում բոլորին քաջ հայտնի է կթվորուհի Զուլիետա Բալասյանի անունը: Նրան լավ գիտեն իբրև կոմունիստ կթվորուհու, անխոնջ անասնապահի, հասարակական աշխատողի:

Մարդիկ նրան ճանաչեցին, երբ նրա լուսանկարը տեղ գտավ շրջանի գյուղատնտեսության առաջավորների պատվո տախտակում: Հետո նրան ընտրեցին Վրաստանի կոմկուսի XXIII համագումարի պատգամավոր և, վերջապես, լրագրերն ավետեցին, որ Ախալքալաքի շրջանի Բուռնաշեթ գյուղի կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայի կթվորուհի Զուլիետա Սենեքերիմի Բալասյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Նա կոլտնտեսության կուսբյուրոյի անդամ է, գյուղական սովետի դեպուտատ:

***

Դեռ չէր բոլորել Զուլիետայի 17 տարին, երբ նա սկսեց աշխատել կոլտնտեսությունում որպես հերթապահուհի: Երկու տարի անց Բալասյանն ստանձնեց կթվորուհու պարտականությունը: Աշ-

խատանքային առաջին եռամսյակը ավարտելուց հետո աղջիկն իմացավ, որ առաջադրանքները փոքր-ինչ թեթևացարել է: Դա շատ մտահոգեց նրան:

- Ոչինչ,- հուսադրեց կոլտնտեսության նախագահը,- դու դեռ անփորձ ես, կսովորես և այն ժամանակ ավելի լավ կլինեն գործերը: Կարևորն այն է, որ աշխատանքը սիրես, եթե դա այդպես է, ապա միշտ կհաղթես:

Այդ օրից անցել է ավելի քան 10 տարի: Ջուլիետան մեծացել է, կոփվել արտադրության մեջ: Անցած տարիները սովորական չէին նրա համար: Դրանք համառ աշխատանքի ու որոնումների տարիներ էին, որոնք սկսվել են անասունների ձմռան-մսուրային շրջանից, ծնի կամպանիայից և ավարտվել արոտի շրջանով:

Անցած տարիները բերել են հարգանք, պատիվ, ճանաչում: Ջուլիետա Բալասյանը, երբ առաջին անգամ խնամելու ընդունեց կովերի խումբը, կոլտնտեսությունում ամեն մի կովի միջին կաթնատվությունը 2.100 կիլոգրամ էր կազմում: Թեև դա վատ ցուցանիշ չէր, բայց կթվորուհին գիտեր, որ դեռևս շատ կան անասունների կաթնատվությունը բարձրացնելու հնարավորություններ, և նոր վճռականությամբ շարունակեց պայքարը արտադրական նոր հաջողություններ ձեռք բերելու համար:

Աշխատասեր կթվորուհին մեկ կովի կաթնատվությունը հասցրեց 3.000 կիլոգրամի: Դա էլ չբավարարեց նրան:

Նոր բնագիծ ձեռք բերելու համար, նա սոցիալիստական մրցության հրավիրեց ֆերմայի առաջավոր կթվորուհի Սոնյա Մղդեսյանին և պարտավորվեց իր խնամած ամեն մի կովից պլանով նախատեսված 3.000-ի դիմաց կթել 3.800 կիլոգրամ կաթ: Անվանի կթվորուհու եռանդը կրկնապատկվել է հատկապես Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի պատվին ծավալված մրցության այս օրերին: Պատվով կատարելով իր խոստումը, Ջ. Բալասյանը այս տարվա անցած 11 ամսում հասավ ռեկորդային ցուցանիշի: Նա ամեն մի կովից միջին թվով կթել է 3.880 կիլոգրամ կաթ: Դա 640 կիլոգրամով գերազանցում է կոլտնտեսության միջին ցուցանիշը: Առանձին բարձրակիթ կովերից կթվորուհին ստացել է 4.020-4.675 կիլոգրամ 4,3 տոկոս յուղայնությամբ կաթ:

Ջուլիետա Բալասյանը պայքարում է մինչև դեկտեմբերի վերջը իր խնամած կովերի միջին կաթնատվությունը հասցնել 4.020 կիլոգրամի:

18 դեկտեմբերի

ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Գործարար քննադատության և ինքնաքննադատության մթնոլորտում անցավ Ախալքալաքի շրջանի Սուլդայի մսա-կաթնային սովխոզի սկզբնական կուսակազմակերպության հաշվետու-ընտրական ժողովը:

Ինչպես զեկուցողը կուսկոմիտեի քարտուղար Մ. Մոսիկյանը, այնպես էլ մտքերի փոխանակությանը մասնակցող կոմունիստները լուրջ թերություններ բացահայտեցին կուսակազմակերպության և նրա կոմիտեի աշխատանքներում:

Նշվեց, որ կուսակցական կազմակերպությունը լրիվ պատասխանատվություն չի կրել սովխոզի գործերի, նրա բոլոր ճյուղերի զարգացման համար:

Սուլդայի սովխոզը տարիներ շարունակ աշխատում է ոչ շահութաբեր: Այս տարի էլ թերակատարվել են մայր անասունների գլխաքանակի ավելացման, դրանց մթերատվության բարձրացման, հացահատիկային կուլտուրաների, կարտոֆիլի ու խոտաբույսերի բերքատվության վերաբերյալ ստանձնած սոցիալիստական պարտավորությունները, իսկ առանձին ճյուղերում նաև պլանային առաջադրանքները:

-Մեր սովխոզները,- ասաց իր ելույթում կոմունիստ Վ. Յորդանյանը,- կարտոֆիլագործությունը զարգացնելու, կերի ճակնդեղ մշակելու լայն հնարավորություններ ունի, բայց դրանք խիստ անբավարար են օգտագործվում: Բերքատվությանը մեծապես վնասում է պլանատցիաների վատ մշակումը:

Անասունների ցածր մթերատվության հիմնական պատճառը անբավարար խնամքն ու կերակրումն է, բարեկարգ անասնաշենքերի պակասը: Ջմեռը մտել է իր իրավունքների մեջ, սակայն կաթնապրանքային ֆերման դեռևս լրիվ ապահովված չէ անասնախնամողներով: Սուլդայի և Դաղեշի տեղամասերում կթվորուհիներն աշխատում են գերբեռնվածությամբ, յուրաքանչյուրը խնամում է 22-25 գլուխ կով: Դա, անշուշտ, բացասաբար է անդրադառնում մթերատվության վրա: Այդ մասին խոսեցին կոմունիստներ Ա. Նահապետյանը, Վ. Ավետիսյանը և ուրիշներ:

Ժողովում առանձնապես սուր քննադատության ենթարկվեցին ներկուսակցական աշխատանքի թերությունները: Նշվեց, որ կուսկոմիտեն, տեղամասային կուսկազմակերպությունները վատ են նախապատրաստել ու անցկացրել ժողովները, չեն ապահովել կոմունիստների ակտիվ մասնակցությունը քննարկվող հարցերին, ընդունված որոշումների մի մասը մակերեսային, ոչ գործարար բնույթ է կրել: Կուսկազմակերպության անդամներից մի քանիսը չունեն կուսակցական հանձնարարություններ, ակտիվորեն չեն մասնակցում կուսակցական կյանքին: 124 կոմունիստներից արտադրության վճռական տեղամասերում աշխատում է ընդամենը 15 հոգի:

Հաշվետու-ընտրական ժողովին մասնակցում էր և ելույթ ունեցավ Ախալքալաքի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ս. Պետրոսյանը: Ժողովն ընդունեց կոնկրետ որոշումներ և ընտրեց կուսկոմիտեի նոր կազմ:

30 դեկտեմբերի

35 ՀԱԶԱՐ ՏՈՆՆԱ ՍԻԼՈՍԻ ՀԱՄԱՐ

Անասունների մթերատվությունը շեշտակիորեն ավելացնելու գործում, ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի հուլիսյան պլենումի որոշումներում, վճռական նշանակություն ունի կերի բազայի ստեղծումը: Այդ նպատակով Բոգդանովկայի շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները նախատեսված 32 հազարի դիմաց արդեն պատրաստել են մոտ 30 հազար տոննա սիլոս:

Տարիներ առաջ շրջանի տնտեսությունները մեծ դժվարությամբ էին սիլոսանյութ հայթայթում: Նրանք հնձում էին խոտհարքները, թմբերի ու միջնակների վայրի բույսերը, որոնցից ստացվում էր քիչ քանակությամբ և ցածր որակի կանաչ զանգված: Այժմ շրջանում սիլոսանյութի բազա ստեղծելու համար արմատավորվել է միամյա խոտաբույսերի՝ ոլոռի, վարսակի, վիկի, կորնգանի և արևածաղկի մշակությունը: Այդ ցանքերը 1965 թվականի 1.370 հեկտարից հասել են 2.500 հեկտարի և բարձր բերք են տալիս:

Աշխատանքային եռուզեռ է Հեշտիայի կոլտնտեսությունում: Այստեղ խոտհնձի ու կերերի սիլոսացմանը մասնակցում են շուրջ 400 կոլտնտեսականներ, որոնք աշխատանքային մի քանի օրում, տարեկան առաջադրանքի 1.400-ի դիմաց, պատրաստել են 1.600 տոննա սիլոս:

Աշխատանքը լավ է կազմակերպված նաև Ժդանովականի կոլտնտեսությունում, ուր նախատեսված է յուրաքանչյուր կովի համար պատրաստել 5 տոննա սիլոս: Առաջին արդյունքները գոհացուցիչ են: Այստեղ արդեն կուտակվել է 800 տոննա սիլոս, 500 տոննա էլ կպատրաստվի կերերի սիլոսացման երկրորդ շրջանում հիանալի աճած, հեկտարից 180-200 ցենտներ կանաչ զանգված խոստացող արևածաղկի ցանքերից: Ժդանովականցիները ձեռնամուխ են եղել նաև բնական խոտհարքներից ստացվող բերքից բարձրորակ սիլոս պատրաստելու աշխատանքներին:

Դրվատանքի է արժանի Գանձայի մսակաթնային սովխոզի դաշտավարների աշխատանքը: Կերերի սիլոսացումն առաջ է տարվում լայն ճակատով: Աշխատանքը լավ կազմակերպելու շնորհիվ Գանձայում օրական միջին հաշվով հավաքվում և խրամատներն է լցվում 300 տոննա կանաչ մասսա: Հաշվի առնելով իրենց հնարավորությունները, նրանք խոստացել են պատրաստել 4.400 տոննա սիլոս:

Կերի սիլոսացումը հաջող են կազմակերպել Ուչմանայի, Թորիայի, Փոքր Խանչալիի, Խոջաբեկի և ուրիշ կոլտնտեսություններ, որոնք արդեն կատարել են սիլոսի կուտակման տարեկան պլանները:

Սակայն կերի կուտակման աշխատանքները ոչ ամենուրեք են հաջող կազմակերպված: Առանձին տնտեսություններում խախտվում են սիլոսի պատրաստման կանոնները: Սպասովկա, Եֆրեմովկա, Ջիգրաշեն և այլ գյուղերի կոլտնտեսություններում կանաչ զանգ-

վածը ընդմիջումներով է լցվում խրամատները: Դա սիլոսի փչացման ու կորուստների տեղիք կտա:

Մյուս թերությունն այն է, որ շրջանի որոշ տնտեսություններում դանդաղ է ընթանում սիլոսային կառույցների շինարարությունը: Փոքր Արագյալ, Ռոդիոնովկա, Նոր Խուլգումա, Սաթխա և ուրիշ գյուղերի կոլտնտեսություններ ապահովված չեն անհրաժեշտ տարողությամբ տիպային խրամատներով և այդ պատճառով էլ սիլոսի մի մասը լցվում է անբարեկարգ հորերը:

Կերի անհրաժեշտ պաշարների ստեղծումը, մասնավորապես սիլոսային լավորակ կառույցների շինարարությունը պահանջում են կոլտնտեսությունների ղեկավարների և գյուղատնտեսության վարչության մասնագետների ամենօրյա ուշադրությունն ու օգնությունը:

25 օգոստոսի

ՍՐՏԱՌՈՒՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ավանդութային է դարձել Ուկմերգե-Ախալքալաք մրցությունը:

Հինգերերորդ տարին է, ինչ եղբայրական երկու հանրապետությունների՝ Լիտվական ՍՍՀ Ուկմերգեի և Վրացական ՍՍՀ Ախալքալաքի շրջանների աշխատավորները մրցում են իրար հետ: Փոխադարձ այցելությունների միջոցով մրցակիցները ծանոթանում են շրջանների տնտեսական և կուլտուրական շինարարության հաջողություններին, սովորում միմյանցից, կատարում փորձի փոխանակում:

Աշնանային մեղմ պայծառ օր է: Ախալքալաք տանող ոլորապտույտ ճանապարհի եզրին, Ռուսթավելու բարձրաքանդակի մոտ հավաքվել են կուսակցական, կոմերիտական, արհմիութենական աշխատողներ, պիոներ-դպրոցականներ: Ջերմ սրտերով են նրանք եկել դիմավորելու լիտվացի իրենց բարեկամներին: «Բարի գալո՛ւստ մեր բարեկամներին» լոզունգն արտացոլում է ներկաների սրտառուչ ու ջերմ զգացումները:

Ահա մոտեցող «Վոլգա» մեքենաներից իջնում են Ուկմերգեի շրջանի աշխատավորների ներկայացուցիչները: Ծափահարություններ, ծաղիկներ, ջերմ գրկախառնումներ: Պիոներները աղ ու հաց են մատուցում հյուրերին:

Զորս օր տևեց լիտվացիների փոխայցելությունը: Ուկմերգեից եկած պատվիրակները եղան Խուլգումոյի, Բուռնաշեթի կոլտնտեսություններում, Վաչիանի մսա-կաթնային սովխոզում, Կոթելիայի և շրջկենտրոնի մեքենայացված պանրագործարաններում, ծանոթացան շրջանի և քաղաքի տեսարժան վայրերին, եղան Ասպինձայի շրջանի «Վարձիա» մայրաքաղաքում:

Շրջկենտրոնի մշակութային տանը տեղի ունեցավ երկու շրջանների սոցիալիստական մրցության արդյունքների հանրագու-

մարմանը նվիրված երեկո, որը բացեց կուսակցության Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Թ. Լազարիշվիլին:

Հուզիչ էին Ախալքալաքի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ս. Պետրոսյանի և Ուկմերգեի շրջանի պատվիրակության ղեկավար, կուսակցության շրջկոմի կազմակերպական բաժնի վարիչ Անտոնաս Կերզայի ելույթները. դրանք լոկ խոսքեր չեն, այլ սրտի թելադրանք՝ ներշնչված մի մեծագույն գաղափարով՝ սովետական ժողովուրդների անխախտ ու եղբայրական բարեկամությամբ:

Գործարար մրցությունը երկու շրջանների աշխատավորներին նոր հաջողություններ է բերել: Ուկմերգեցիները դերակատարել են արդյունաբերական արտադրանքի թողարկման այս տարվա երեք եռամսյակների պլանները: Գնալով ավելանում է այն ձեռնակությունների թիվը, որոնք ժամկետից շուտ են իրացնում հնգամյակի վերջին տարվա առաջադրանքները: Գյուղատնտեսության բնագավառի աշխատավորները, չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, ամեն մի հեկտարից ապահովել են 19,7 ցենտներ հացահատիկի միջին բերքի ստացումը, յուրաքանչյուր 100 հեկտար հողահանդի դիմաց արտադրել են 312 ցենտներ կաթ, 66,7 ցենտներ միս:

Ախալքալաքի տնտեսություններն արդեն ավարտել են հացահատիկայինների հունձը: Հեկտարից 18-ի դիմաց ամբարել են 20 ցենտներ միջին բերք: Շրջանի բերքատվության միջին ցուցանիշը զգալիորեն գերազանցել են Բուռնաշեթի, Խանդոյի, Բարալեթի, Դիլիսկայի կոլտնտեսությունները, Վաչիանի, Զակի սովխոզները: Շրջանում հաջողությամբ առաջ է ընթանում կարտոֆիլի բերքահավաքը: Պարենային և կերային այդ արժեքավոր կուլտուրայի պլանտացիաների ամեն մի հեկտարից (արդեն հավաքվել է մոտ 800 հեկտարի կարտոֆիլ) ստացվում է 160 ցենտներ միջին բերք՝ անցյալ տարվա 65-ի դիմաց:

Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է կաթի, մսի, բրդի արտադրությունն ու դրանց վաճառքը պետությանը:

Հավաքում ողջույնի ջերմ խոսք ասացին պիոներ-դպրոցականները, ապա ելույթ ունեցան Յու. Շաքարյանը (N զորամաս), շրջկենտրոնի վրացական միջնակարգ դպրոցի աշակերտուհի Ն. Սեսաձեն, շրջանային «Փարոս» թերթի խմբագիր Մ. Խոցանյանը և ուրիշներ:

Հանդիպման երեկոն ավարտված է: Բեմահարթակի վրա են դեղարվեստական ինքնագործ խմբերը: Նրանք կատարում են հայկական, վրացական, լիտվական, ռուսական ժողովրդական երգեր ու պարեր: Թովիչ են, անթառամ ու հավերժ ժողովուրդների անխախտ բարեկամությամբ տոգորված այդ երգերը:

27 հոկտեմբերի

1971

ԵՐԱԶԱՆՔ, ՈՐ ԿՅԱՆՔ Է ԱՌԵԼ

Կարծես երեկ էր պայուսակը ձեռքին դպրոց էր վազում Օֆելյան: Բոլոր աշակերտների պես նա էլ ուզում էր մեծանալ:

Մեծացավ աննկատելիորե՞ն:

Նա հաջողությամբ ավարտեց Բոգդանովկայի շրջանի Օրոջալար գյուղի միջնակարգ դպրոցը: Ավարտեց ու կանգնեց կյանքի շեմին: Կանգնեց մտազբաղ, ո՞ւր գնալ: Առաջ դպրոց էր գնում, հիմա՞: Հաստատ որոշեց գնալ մանկավարժ ծնողների ճանապարհով: Օֆելյան ընդունվեց Կիրովականի (Հայկական ՍՍՀ) հեռակա մանկավարժական ինստիտուտի բիոքիմիայի ֆակուլտետը: Այժմ հինգերորդ կուրսի ուսանողուհի է: Նա իր իսկ սովորած դպրոցում էլ դասավանդում է քիմիա, ղեկավարում քիմիական խմբակի աշխատանքը:

Երիտասարդ ուսուցչուհին սիրում է իր մասնագիտությունը, հմտացել է իր աշխատանքում, սերտորեն կապված է իր սաների հետ ու նրանց առջև բացում է քիմիայի ու բնության «գաղտնիքները»:

5 մայիսի

ՖԵՐՄԱՅԻ ՀՄՈՒՏ ՎԱՐԻՉԸ [Ստեփան Թարզյան]

Ուրախ ու երջանիկ են եղել Ստեփան Թարզյանի մանկությունն ու պատանեկությունը: Նա չի տեսել ու ճաշակել նախասովետական գյուղի այն տառապանքները, որ կրել են իր ծնողները:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Ստեփանը ընդմիշտ կապվեց անասնապահական ֆերմայի հետ, դարձավ նախրապան: Այնուհետև, երբ նրան առաջադրեցին կովաբուծական ֆերմայի վարիչ, փորձեց հրաժարվել: Պատճառաբանեց, որ ֆերմայի գործերը լավ չեն ու ինքը չի կարող այն դուրս բերել ստեղծված դրությունից:

Հուզվեցին և ծնողները, խոսեցին կոլտնտեսության ղեկավարների հետ, բայց ոչինչ փոխել չկարողացան: Ստեփանը կոմունիստ է, որոշումը կայացրել են կուսկազմակերպությունն ու կոլտնտվարչությունը, ուրեմն պետք է աշխատել: Երիտասարդ կոմունիստը խորապես զգաց իրեն վստահված գործի լրջությունը և ջանք չխնայեց արդարացնելու համար:

Իրար հաջորդեցին տարիները: Ֆերմայի նոր վարիչը շրջապատվեց կարող ուժերով, նրա կողքին կանգնեցին փորձված անասնապահներ, շատ բան սովորեց նրանցից:

Այժմ որքան խորամուխ ես լինում Ս. Թարզյանի՝ ֆերմայի վարիչի 17 տարվա աշխատանքային գործունեության մեջ, ծանոթա-

նում թվերի հետ, այնքան ավելի ես համոզվում, որ նա իրոք շատ բան է արել անասնապահական մթերքների արտադրությունն ավելացնելու գործում:

Ահա անցյալ տարվա ցուցանիշները: Ստեփան Թարզյանի ղեկավարած ֆերման, յուրաքանչյուր 100 կովից ստացել և պահպանում է նույնքան հորթ. ամեն մի կովի կաթնատվությունը պլանի՝ 1.870-ի պարտավորության՝ 2.900-ի դիմաց հասցրել է 3.001 կիլոգրամի, պետությանը նախատեսվածից 130 տոննա ավելի կաթ է վաճառել: Տասներորդ տարին է, ինչ շրջանում ֆերման առաջնությունը ոչ ոքի չի զիջում և 1966 թվականից ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի մասնակից է:

Ֆերմայի փորձված վարիչը մեծ պատվի է արժանացել: Բանի՛-քանի՛ անգամ նա մասնակցել է գյուղատնտեսության առաջավորների շրջանային ու հանրապետական խորհրդակցություններին, պատմել իր ղեկավարած ֆերմայի հաջողությունների մասին, ասել, թե ինչպես են անասնապահները հասնում լավ արդյունքների: Բանի՛-քանի՛ անգամ են հանդիսավոր պայմաններում ղեկավարները ու աշխատանքային ընկերները տեղեկացել նրա ձեռքը, շնորհակալություն հայտնել լավ աշխատանքի համար, պարգևատրել նրան, նոր հաջողություններ ցանկացել: Գրեթե ամեն տարի նրա անունը հիշատակվում է արտադրության առաջավորների շարքում. տեղ գտնում կոլտնտեսության և շրջանի առաջավորների պատվո տախտակներում:

1970 թվականի վերջերին Ստեփան Թարզյանի կենսագործունեությունը հարստացավ մի նոր, ավելի ուրախալի երևույթով: Նա կուսակցության շրջանային կոնֆերանսում ընտրվեց Վրաստանի կոմկուսի XXIV համագումարի պատգամավոր:

Բոգդանովկայի շրջանի Ուչմանա լեռնային գյուղի կոմունիստների պատգամավոր Ստեփան Ալեքսանի Թարզյանը շատ բան կարող է ասել հանրապետության կոմունիստների համաժողովում: Եթե ինքը ելույթ ունենա, ապա կպատմի, թե ինչ է տվել իրենց մեծ Լենինի հիմնադրած կոմունիստական կուսակցությունը, կքննարկի, թե ինչպիսին են և ինչպիսին կդառնան Ուչմանան ու Բոգդանովկայի շրջանը IX հնգամյակում: Չի սխալվի, ո՛չ, այդ ամենը նա լավ գիտե, որտից կբխի ասելիքը:

26 մայիսի

ԱՅԴՊԵՍ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ՏՎԱԾ ԽՈՍՔԸ

Անասնապահության հետագա զարգացման, կաթի, մսի ու բրդի արտադրությունն ավելացնելու համար հանրապետությունում ծավալված մրցության նախաձեռնողներից են նաև Բոգդանովկայի շրջանի կոլտնտեսային ու սովխոզային աշխատավորները:

Միահամուռ հավանություն տալով հարազատ կուսակցության XXIV համագումարի պատմական որոշումներին, բոգդանովկա-

ցիները լայն պայքար են մղվել իններորդ հնգամյակում նոր բնագծեր նվաճելու համար:

Օգտագործելով իրենց ռեզերվները, ավելի բարելավելու աշխատանքը, ընթացիկ տարվա անցած ամիսներին անասնապահները հասել են գգալի հաջողությունների: Հունիսի 1-ի տվյալներով, շրջանը կիսամյա պլանով նախատեսված 4.900 տոննայի դիմաց պետությանն է վաճառել 4.964 տոննա կաթ: Նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, վերամշակման է հանձնվել 1.234 տոննայով ավելի կաթ: Միջին հաշվով, ամեն օր յուղպանրագործարանին է հանձնվում ավելի քան 90 տոննա կաթ, անցյալ տարվանից 20 տոննայով ավելի:

Ուչմանայի, Մեծ Արագյալի, Սպասովկայի, Եֆրեմովկայի կոլտնտեսություններն արդեն կատարել են նոր հնգամյակի առաջին տարվա կաթի վաճառքի պլանները և արդեն պետությանը կաթ են վաճառում եկող տարվա հաշվին: Այդ տնտեսությունների անասնապահները պարտավորվել են կաթի վաճառքի 1972 թվականի առաջադրանքները իրացնել ընթացիկ տարում:

Ամբողջ շրջանի անասնապահների պարտավորությունն է մինչև օգոստոսի 10-ը, տարեկան պլանի 10.400 տոննայի, պարտավորության 13.500 տոննայի փոխարեն, պետությանը վաճառել 15.000 տոննա բարձր յուղայնությամբ կաթ:

Լավ հիմքերի վրա է դրված նաև մսի արտադրության ու վաճառքի գործը:

Շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները կիսամյա պլանի 400-ի դիմաց մթերակետ են հանձնել 460 տոննա միս: Պետությանը միս վաճառելու կիսամյա առաջադրանքները գգալիորեն գերակատարել են Խոջաբեկ, Փոքր Խանչալի, Ուչմանա, Եֆրեմովկա, Ժդանովական, Կալինինո և այլ գյուղերի կոլտնտեսությունները:

22 հունիսի

ԱԶՆՎՈՐԵՆ Է ԾԱՌԱՅՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

[Արտյուշ Սահարյան]

Ախալքալաքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ, Գումբուլդո գյուղի բնակիչ Արտյուշ Սահարյանը սիրում էր ավտովարորդի մասնագիտությունը, սովորել և ավարտել էր ավտովարորդների դասընթացները: Այդ մասնագիտությամբ էլ նա սովետական բանակ զորակոչվեց:

Ահա արդեն երկրորդ տարին է, ինչ Արտյուշը իր օրինակելի ծառայությամբ աչքի է ընկնում զորամասում: Մարտական և քաղաքական գերազանց հաջողությունների, օրինակելի կարգապահության համար նրա անունը գրանցվել է զորամասի պատվո գրքում: Նա պարգևատրվել է գովասանագրով:

- Հարգելի Լյուդվիկ և Արևհատ,- գրում են զորամասից,- ուրախ ենք Ձեզ հաղորդելու, որ Ձեր որդին Արտյուշը, մեզ մոտ ծառայելու ժամանակ ցուցաբերում է բարձր, օրինակելի կարգապա-

հուժյուն. խոհեմ բնավորությամբ օրինակ է ծառայում իր ընկերներին, կերազանց է տիրապետում տեխնիկային: Զորամասի հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում Ձեզ՝ հայրենասեր որդի դաստիարակելու համար:

22 հունիսի

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴՊՐՈՑՆ Է

Ախալքալաքի շրջանում վերջին մի քանի տարում դպրոցական նոր շենքեր են կառուցվել մի շարք գյուղերում, դպրոցները համալրվել բարձրագույն կրթությամբ որակյալ կադրերով, զգալի միջոցներ են հատկացվել դպրոցների նյութա-տեխնիկական բազան ամրապնդելուն: Պոլիտեխնիկական կրթությունն արմատավորելու նպատակով հատկացված են ուսումնա-փորձնական հողամասեր, որտեղ աշակերտներն աճեցնում են տարբեր տեսակի կուլտուրաներ, պտղատու ծառերի որոշ տեսակներ:

Շրջանի լուսավորության ճակատի աշխատողները, տարեվերջի քննությունների հետ մեկտեղ, ձեռնամուխ եղան նոր 1971/72 ուսումնական տարվա նախապատրաստման գործին:

Առաջիկա ուսումնական տարում շրջանի դպրոցներում աշխատելու են 20 նոր շրջանավարտներ: Զգալի աշխատանք է կատարված որակավորման ուղղությամբ: Շրջանի 210 ուսուցիչներ ընդգրկված են հեռակա մանկավարժական ինստիտուտների ուսուցման ցանցում: Տարբեր առարկաների 45 ուսուցիչներ սովորել են Թբիլիսիի, Երևանի և Լենինականի ուսուցիչների որակավորման դասընթացներում:

Ավարտված է պարտադիր հասակ ունեցող 7-15 տարեկան երեխաների հաշվառումը: Այս տարի հանրակրթական դպրոցներում սովորելու է ավելի քան 21 հազար աշակերտ, այդ թվում 2.300 առաջին դասարանցիներ: Բաներիտ, գյուղերիտ և հեռակա դպրոցներում առանց արտադրությունից կտրվելու սովորելու են 350 երիտասարդներ:

Շրջանի դպրոցների մեծ մասն ավարտել է շենքերի և գույքի վերանորոգման աշխատանքները: Հիմնական վերանորոգման են ենթարկվել Կարտիկամի, Սուլղայի, Կուլիկամի, Մեծ Սամսարի և ուրիշ միջնակարգ դպրոցների շենքերը:

Բավարար աշխատանք է կատարվում դպրոցաշինարարության բնագավառում: Դպրոցական տիպային նոր շենքեր են կառուցվում Դոգաշենում (շահագործման է հանձնվելու այս տարի), Դաղեշում, Զակում, Խանդոյում և այլուր:

Սակայն նոր ուսումնական տարվա նախապատրաստության աշխատանքներում թերությունները ևս քիչ չեն: Զգացվում է մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, ռուսաց և օտար լեզուների, երգեր-ազգագրության, նկարչության և գծագրության դասատուների կարիք:

Որոշ գյուղերում անհանդուրժելի է վիճակը նոր դպրոցական շենքերի կառուցման ասպարեզում: Վաչիան, Քարցեփ, Մյասնիկյան, Մաջաղիս, Էխտիկա և այլ գյուղերում անցյալ ուսումնական տարիներին դասերը տեղի էին ունենում հին, կիսախարխուլ շենքերում, որոնք այլևս հնարավոր չէ օգտագործել: Վատ է կազմակերպված նոր լույս տեսած դասագրքերի առաքումը: Ոչ բոլոր դպրոցներն են ապահովված դասագրքերով ու գրենական պիտույքներով:

Անհրաժեշտ է, որ լուսավորության մինիստրությունը, շրջանային կուսակցական և սովետական կազմակերպությունները, շրջլուսբաժինը վերացնեն նշված թերությունները. դպրոցները բազմակողմանիորեն նախապատրաստեն նոր ուսումնական տարվան:

10 օգոստոսի

ՄԵԾ ՎԱՍՏԱԿԻՆ՝ ՄԵԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

[Վարազդատ Ալվարյան]

Աշխատանքը փառքի գագաթներ է նվաճում: Այդ գագաթները մեկ-երկու տարում չեն նվաճվում, նույնիսկ մի տասնամյակն էլ քիչ է:

Վարազդատ Մինասի Ալվարյանը աշխատանքային հարուստ կենսագրություն ունի:

Նա ծնվել է Ախալքալաքում, ավարտել տեղի մանկավարժական տեխնիկումը: Երկու տարի գյուղում ուսուցչություն արել, ապա զորակոչվել է սովետական բանակ. կռվել ֆաշիստական հորդաների դեմ, պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, վիրավորվել ռազմաճակատում: Պատերազմի հաղթական ավարտից հետո, վերադարձել է տուն և տիրապետել հաշվապահի դժվարին ու շատ կարևոր մասնագիտությանը: Շատ հիմնարկ-ձեռնարկություններում է աշխատել նա, իսկ 1967 թվականից՝ կենցաղսպասարկման վարչության գլխավոր հաշվապահի պարտականությունն է կատարում: Նա միաժամանակ ակտիվ հասարակական աշխատող է: Բազմիցս ընտրվել է կուսակազմակերպության քարտուղար, աշխատել պրոպագանդիստ ու ագիտատոր:

Վարազդատ Ալվարյանը կյանքի իմաստը, անձնական երջանկությունը միշտ աշխատանքում է տեսել: Վրաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակի հոբելյանի օրը նրա կուրծքը զարդարվեց «Կենցաղի ծառայության գերազանցիկ» կրծքանշանով: Բարեկամները դեռ չէին հասցրել շնորհավորել նրան, երբ Ալվարյանի կենսագրությունը հարստացավ մի նոր, ուրախալի իրադարձությամբ: Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վարազդատ Մինասի Ալվարյանին վերջերս շնորհվեց հանրապետության վաստակավոր հաշվապահի պատվավոր կոչում:

Մեծ վաստակին՝ մեծ գնահատական:

19 օգոստոսի

- Մինիստրի ընդարձակ առանձնասենյակում հավաքվել են կոլեգիայի անդամներ, մինիստրության պատասխանատու աշխատողներ, մասնագետներ: Վրացական ՍՍՀ մեքենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրության կոլեգիայի ընդլայնված նիստ է: Ներկաները լարված ուշադրությամբ լսում են մինիստր ընկ. Գ. Ա. Դուշիձեի «Ուլթերորդ հնգամյակի արդյունքները և 1971 թ. խնդիրները» զեկուցումը:

... Ձայնը տրվում է Բոգդանովկայի գլխավոր յուղպանրագործարանի դիրեկտոր Շ. Սահակյանին: Նա խոսում է վստահ, առանց չփոթվելու, թվերով ու փաստերով ցույց տալիս իր ղեկավարած համերաշխ ու աշխատասեր կոլեկտիվի հնգամյակի բեղմնավոր աշխատանքը ի փառս մեր մեծ հայրենիքի:

Հարազատ կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել ձեռնարկության բանվոր-ծառայողների ու մասնագետների արդյունավետ աշխատանքը, սոցիալիստական մրցությամբ ձեռք բերած մեծ հաջողությունները: 1966-1970 թվականներին գործարանին 12 անգամ շնորհվել է Հանրապետության Մինիստրների սովետի, Վրացարհխորհրդի և մինիստրության փոխանցիկ կարմիր դրոշը, ՍՍՀՄ մեքենի և կաթնեղենի մինիստրության ու ՍՍՀՄ սննդի արդյունաբերության աշխատողների արհմիության կենտկոմի պատվոգիրը: Գործարանի ամենաաչքի ընկնող 8 աշխատող պարգևատրվել է «ՍՍՀՄ մեքենի և կաթնեղենի արդյունաբերության սոցմրցման գերազանցիկ» կրծքանշանով, 27 բանվոր-ծառայողներ արժանացել են կոմունիստական աշխատանքի հարվածային բարձր կոչման: 1967 թվականին գործարանին շնորհվել է կոմունիստական աշխատանքի ձեռնարկության պատվավոր կոչումը:

Հարթ ու հեշտ չի եղել գործարանի աշխատանքային ուղին: Դժվարություններ են եղել, բազմաթիվ խոչընդոտներ, սակայն դրանք հաղթահարվել են ժամանակին, և ամեն եռամսյակ, ամեն տարի եղրափակվել է արտադրական փայլուն հաղթանակներով:

Բոգդանովկայի գլխավոր յուղպանրագործարանը հանրապետության իր տիպի ձեռնարկությունների թվում խոշորագույններից մեկն է: Բավական է ասել, որ Վրաստանում արտադրվող չվեցարական պանիրների մոտ 50 տոկոսը այստեղ է արտադրվում, էլ չենք խոսում կաթնաշաքարի, յուղի, վրացական պանիրների և արտադրվող մյուս արժեքավոր մթերքների մասին, որոնք իրենց բարձր որակով և համային հատկություններով մեծ համբավ են ձեռք բերել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Հնգամյակի տարիներին պլանով նախատեսված 11.290 հազարի դիմաց բոգդանովկացիները թողարկել են 12.463 հազար ռուբլու ապրանքային արտադրանք: Հնգամյա պլանը գործարանը գերակատարումով իրացրեց դեռ 1970 թվականի օգոստոսի 15-ին: Այդ տարիներին կատարած աշխատանքը բնութագրող տասնյակ թվեր ու փաստեր կարելի է բերել: Նշենք դրանցից մեկը. միայն արտադրան-

քի ինքնարժեքի իջեցման հաշվին ստացվել է 271 հազար ռուբլու տնտեսում:

Յուղպանրագործները մեծ թափով ու ավելի վճռականությամբ սկսեցին նոր հնգամյակը՝ նպատակ ունենալով էլ ավելի բարելավել անցած հնգամյակում ձեռք բերած բարձր ցուցանիշները: Դեռ հուլիսի 16-ին այստեղ իրացվեց կաթնամթերքների արտադրության իննամսյա առաջադրանքը: Վերամշակվել է 9 հազար տոննա կաթ, երկրին տրվել են 976 տոննա տարբեր տեսակի պանիրներ, 61 տոննա կարագ, 48 տոննա կաթնաշաքար, 52 տոննա թթու և անարատ կաթնամթերք:

Տարեկան պլանը ժամկետից շուտ կատարելու համար մղվող պայքարը նոր հաղթանակ բերեց գործարանի կոլեկտիվին: Հայրենիքին զեկույց է տրվել, որ իրացված է մթերքների արտադրության նոր հնգամյակի առաջին տարվա առաջադրանքը:

Ձեռնարկության կոլեկտիվը հպարտանում է իր առաջավոր մարդկանցով, ինչպիսիք են Հ. Գրիգորյանը, Հ. Ջանանյանը, Վ. Ղազարյանը, Շ. Թանգյանը և շատ ու շատ ուրիշներ:

Արտադրության կոլեկտիվի հաջողությունները մեծ չափով կախված են ղեկավարությունից: Լավ ու հմուտ ղեկավար ունեն բոգդանովկացիները: Գործարանի դիրեկտոր Շ. Սահակյանը հոգատար, ազնիվ, իր մասնագիտությունում հմտացած, համեստ ու հանգիստ բնավորությամբ մարդ է: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր աշխատող, հանձինս Սահակյանի, տեսնում է իր մտերիմին ու հարազատին, ընկերոջն ու բարեկամին, մի մարդու, որը ամբողջ եռանդով նվիրված է իր գործին և բոլորի հետ ուս-ուսի տված ստեղծում է գործարանի փառքը:

Կուսակցության XXIV համագումարը առանձնապես նշեց սովետական մարդկանց նյութական բարեկեցության հետագա բարձրացման հարցը: Այդ խնդրի հաջող լուծման գործում իրենց տվանդն են ներդնելու նաև բոգդանովկացիները: Այժմ այստեղ՝ Գորելովկայում կառուցվում է Անդրկովկասում ամենահզոր յուղպանրագործարանը, որ տարեկան կվերամշակի 11-12 հազար տոննա կաթ, այնքան, որքան 1970 թվականին վերամշակել էին շրջանի 7 գործարանները միասին վերցրած:

Նոր ձեռնարկությունում աշխատատար բոլոր պրոցեսները կմեքենայացվեն և կավտոմատացվեն, մեքենաներն ու մեխանիզմները կստացվեն եղբայրական Հունգարիայից: Շինարարները պարտավորվել են գործարանը շահագործման հանձնել 1972 թվականին:

Կոլեկտիվի արտադրական նվաճումները չի կարելի պատկերացնել առանց այն մեծ հաջողությունների, որ ձեռք են բերել շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները: Նրանց արտադրած կաթը վերամշակվում է հենց տեղում, շրջանում գործող ձեռնարկություններում: Ինն ամսում նախատեսված 90 հազարի դիմաց օդոստոսի 1-ի դրությամբ շրջանում արդեն մթերվել էր ավելի քան 102 հազար ցենտներ կաթ: Դրվատանքի են արժանի Ուշմանայի, Սպասովկայի, Թորիայի, Կաթնատուի և մյուս գյուղերի կոլտնտեսությունների և սովխոզների աշխատավորները, որոնք մեծ ջանասիրությամբ պայ-

քարում են հարազատ կուսակցության XXIV համագումարի պատմական որոշումները կենսագործելու համար:

Մինչև կգրվեին այս տողերը, Մոսկվայից ուրախալի լուր ստացվեց այն մասին, որ գործարանին՝ ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի արդյունքների համար, շնորհվել է ՍՍՀՄ կաթնեղենի և մսեղենի մինիստրության ու ՍՍՀՄ սննդի արդյունաբերության կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը և դրամական առաջին կարգի պարգև:

9 սեպտեմբերի

ՁԵՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ Է ԿՐՈՒՄ

- Սոցիալիստական և կոմունիստական շինարարության բոլոր փուլերում սոցիալիստական մրցությունը եղել և մնում է որպես մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը զարգացնելու, սոցիալիստական կոլեկտիվիզմը ձևավորելու հուժկու միջոց,- ասված է «Սոցիալիստական մրցության կազմակերպման հետագա բարելավման մասին» ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի որոշման մեջ:

Սոցիալիստական մրցությունը մասսաների մեջ ծնում է աշխատանքային խանդավառություն, ստեղծարարություն, առաջ է քաշում միլիոնավոր առաջավորների ու նորարարների, ռացիոնալիզատորների ու գյուտարարների:

Սակայն Բոգդանովկայի շրջանի Ջիգրաշենի կոլտնտեսային կուսակազմակերպությունը և կոլտնտեսության վարչությունը այդ կարևոր գործին ձևական մոտեցում են ցուցաբերում: Աշխատավորների սոցիալիստական մրցությունը կազմակերպելու ու ղեկավարելու գործն այստեղ ամբողջովին անուշադրության է մատնված: Կուսակազմակերպության բյուրոյի քարտուղար Գ. Քսոյանն ասում է, որ կոլտնտեսությունը տարեսկզբին սոցիալիստական մրցության պայմանագիր է կնքել Հարևան՝ Խոջաբեկ գյուղի կոլտնտեսության հետ: Իրոք, այդ պայմանագիրը կա, բայց՝ միայն թղթի վրա, ձևականորեն: Ստանձնած պարտավորությունները խիստ միօրինակ են, ընդհանուր բնույթի և չեն բխում կոլտնտեսության ռեալ հնարավորություններից, նրա առջև դրված հրատապ խնդիրներից: Ավելին. պայմանագրի մասին կոլտնտեսականները ոչ մի տեղեկություն չունեն: Պայմանագիրը հաստատելուց հետո, կուսակցական կազմակերպության բյուրոն հետևողական չեղավ մրցությունը գլխավորելու գործում, չանդրադարձավ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը ստուգելու հարցին:

Նման անհանդուրժելի վերաբերմունքը, անշուշտ, իր վնասակար ազդեցությունն է թողել տնտեսության գործունեության վրա: Սոցմրցության պայմանագրում առանձնակի ուշադրություն էր դարձված անասնապահական մթերքների արտադրության ավելացման վրա: Մինչդեռ այս բնագավառում առաջընթաց քայլ չի կատարվել, և կոլտնտեսությունը իր ցածր ցուցանիշներով հանդերձ

շրջանում ետ մնացողի անպատվաբեր անունն է կրում: Այսպես, անցած տարվա ութ ամսում, նախորդ տարվա նույն ժամակամիջոցի համեմատությամբ, ֆուրաժային ամեն մի կովի կաթնատվությունը նվազել է 93 կիլոգրամով: Այդ նույն ժամանակամիջոցում, վատ խնամքի ու կերակրման պատճառով, կորստի է մատնվել ու հարկադիր մորթվել 57 խոշոր, 435 մանր եղջերավոր անասուն: Մոտավոր հաշվումներով, կոլտնտեսությունն ավելի քան 22 հազար ռուբլու վնաս է կրել:

Մի թե մրցությանը ձևական վերաբերմունք ցուցաբերելու հետևանք չէ այն, որ դաշտավարական ոչ մի բրիգադ լրիվ կազմով չի մասնակցում խոտհնձին և հացահատիկայինների բերքահավաքին: Այսպես, Արշակ Եղեկյանի և Զարգանդ Մնիչյանի ղեկավարած բրիգադներում 25-30-ի փոխարեն դաշտ են դուրս գալիս 5-6 հնձվոր: Ըստ որում, վերջիններս էլ լրիվ չեն օգտագործում աշխատանքային օրն ու թերակատարում են առաջադրանքները:

Պարզ է, որ ոչ մի պատճառաբանություն չի կարող արդարացնել աչքի ընկնող թերությունները: Ջիգրաշենի կուսկազմակերպության որոշ անդամներ խուսափում են արտադրության վճռական տեղամասերում աշխատելուց: Ցավոք, նույնիսկ կան կոմունիստներ (Ս. Քթոյան, Ա. Ուստյան, Ա. Եղեկյան, Վ. Համբարյան և ուրիշներ՝ թվով 11 հոգի), որոնք եկամտի աղբյուրներ են որոնում հեռավոր վայրերում, անտեսում են հարազատ կոլտնտեսության պատիվը: Կոմունիստների վատ օրինակն ընդօրինակել են մեծ թվով կոմերիտականներ ու երիտասարդներ: Դրանցից մեկն է նաև ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Վ. Պողոսյանը: Կուսբյուրոն անհանդուրժելի կերպով հաշտվել է ստեղծված վիճակի հետ, հոգ չի տանում կոմունիստների ու կոմերիտականների պատասխանատվությունը և ավանգարդային դերը բարձրացնելու համար:

Սոցմրցության պայմանագրում մեծ տեղ է տրված առաջավոր փորձի ուսումնասիրմանն ու արմատավորմանը: Այս հարցերը նույնպես վրիպել են կուսբյուրոյի ուշադրությունից: Այնինչ շատ կոմունիստներ, կոմերիտականներ ու կոլտնտեսականներ անձնվեր աշխատանքի օրինակ են ցույց տալիս և նրանցից ընդօրինակելու շատ բան կա: Ջեն մասսայականացվում, օրինակ, առաջավոր կթվորուհիներ Սաթենիկ (շրջսովետի դեպուտատ) և Մանուշակ Խոդիկյանների, Կ. Օգենցյանի, Ա. Պողոսյանի աշխատանքի մեթոդները: Այնինչ որանք մեկ կովից կոլտնտեսության միջինից 550-700 կիլոգրամ կաթ ավելի են կթել: Անուշադրության է մատնվել փորձված մեխանիզատորներ կոմունիստ Գ. Կարապետյանի, Մ. Ղազարյանի, շարքային կոլտնտեսականներ Ս. Կարապետյանի, Ռ. Մնիչյանի, Գ. Եղեկյանի և շատ ուրիշների ուսանելի փորձը:

Ավելորդ չի լինի ասել, որ կուսկազմակերպության բյուրոն և ագիտակոլեկտիվը գրեթե մոռացության են տվել քաղմասսայական աշխատանքի այնպիսի կարևորագույն հարցերը, ինչպիսիք են գյուղատնտեսական գիտության նվաճումների պրոպագանդան, ցուցադրական ագիտացիայի կազմակերպումը:

Նշված թերությունները չէին լինի, եթե կուսակազմակերպությունը նպատակասլաց զբաղվեր կոմունիստների, կոմերիտականների դաստիարակության հարցերով, տարվող ագիտպրոպագանդներն ու քաղինֆորմացիաները սերտորեն կապվեին տնտեսական խնդիրների կատարման հետ, պայքար տարվեր աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու համար:

Ջիգրաշենում աշխատանքի լարված օրեր են: Շարունակվում են կերերի կուտակումը, հացահատիկայինների բերքահավաքը, անասունների մուրային շրջանին նախապատրաստվելու աշխատանքները: Այդ աշխատանքները հաջողությամբ կատարելու գործում վճռական դեր կարող է խաղալ աշխատավորների գործարար սոցիալիստական մրցությունը:

11 սեպտեմբերի

ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԳԱՆՔ Է ՎԱՅԵԼՈՒՄ

[Վարդան Երանոսյան]

Փողոցով անցնելիս գրեթե ոչ մի ծանոթ չի վրիպում նրա ուշադրությունից: Մեկին ձեռքով պատիվ է տալիս, բարևում, մյուսի մոտ կանգնում, զրուցում, երրորդին ինչ-որ խորհուրդներ է տալիս և գոհունակության ժպիտը դեմքին շարունակում է իր ճանապարհը:

Այս մշտաժպիտ և պատկառանք ներշնչող մարդը ներքին գործերի Ախալքալաքի շրջանային բաժանմունքի աշխատակից, միլիցիայի ավագ վարպետ Մնացականի Երանոսյանն է:

Շուրջ 28 տարի շարունակ նա միլիցիայի մարմիններում է աշխատում: Դժվարին է եղել նրա անցած ուղին, բայց այդ դժվարությունները նա կարողացել է հաղթահարել իր հաստատուն կամքի, հետևողականության, աշխատանքի նկատմամբ մեծ սիրո շնորհիվ:

- Ինձ շատ է դուր գալիս իմ աշխատանքը:- Մինչև միլիցիայում աշխատելը եղել եմ սովետական բանակում, կռվել ֆաշիստների դեմ: Զորացրվել, եկել եմ այստեղ: Զգում եմ, որ ճիշտ եմ վարվել, որ սա է իմ իսկական տեղը:

Միլիցիայի փորձված աշխատողը իր երկարամյա աշխատանքի տարիներին համառորեն պայքարել է հանցագործների և հասարակական համակեցության կանոնները խախտողների դեմ: Նրա ծառայության ցուցակը հիանալի, երբեմն հերոսական գործերի ցուցակ է: Կոմունիստ միլիցիոները միշտ էլ արդարացրել է իրեն, բազմիցս արժանացել խրախուսանքների, պարգևատրվել 7 մեդալով ու բազմաթիվ գովասանագրերով:

Այս ամենի շնորհիվ է, որ նա աշխատանքի իր ընկերների, ծանոթների ու բարեկամների մեջ մեծ հեղինակություն և հարգանք է վայելում:

11 նոյեմբերի

1972

ՍՐՏԱՌՈՒՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երեք տարի առաջ էր: Ախալքալաքի Վլ. Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի երրորդ դասարանցիներն ընդունվեցին պիոներական կազմակերպության շարքերը: Մանոթանալով Նիկոլայ Օսիպովի «Երկաթե ճուտիկը» գրքույկի հերոս՝ Հովհաննես Կոխլիկյանի սխրագործություններին, որոշեցին ջոկատն անվանել նրա անունով:

Պիոներները նամակով դիմեցին Մոսկվայում բնակվող, Հայաստանում քաղաքացիական կռիվների հերոս, պահեստի գնդապետ Հովհաննես Կոխլիկյանին:

«Մեր պիոներական ջոկատը կրում է Ձեր անունը: Պիոներական հասակից սխրանքներով լի ձեր մարտական ուղին մեզ էլ է ոգեշնչում, սովետական մարդու Ձեր կերպարը մեզ համար օրինակ է ծառայում: Մենք երդվում ենք բարձր պահել պիոների կոչումը, լավ և գերազանց սովորել, դառնալ հայրենիքի արժանավոր քաղաքացիներ...

Խնդրում ենք այցելել մեզ»:

Այս բոլորին հաջորդեցին հերոսի մասին պատմող բազմաթիվ հետաքրքիր փաստերի, տեղեկությունների, լուսանկարների և հուշերի հավաքումը և ջոկատի պիոներների կողմից դպրոցի մարտական փառքի թանգարանում առանձին բաժին ստեղծելը:

Շարունակվում են նամակագրությունները, և ... վերջապես «Երկաթե ճուտիկը» ժամանում է Ջավախք:

Արտակարգ աշխուժություն էր տիրում այդ օրը Ախալքալաքի մշակույթի տան ընդարձակ դահլիճում: Այստեղ էին հավաքվել կուսակցական, կոմերիտական, պիոներական աշխատողներ, մտավորականության ներկայացուցիչներ: Ամենուրեք կարմիր վզկապներ էին փողփողում, ալ դրոշների ծփանքից դահլիճն ալիքվում էր: Այստեղ հանդիսավոր հավաքույթ էր՝ նվիրված հին պիոներ, պիոներական գործին ամբողջ էությամբ նվիրված Հովհաննես Կոխլիկյանի հանդիպմանը: Միջոցառման կազմակերպիչները՝ ռուսական միջնակարգ դպրոցի Զոյա Կոսմոդեմյանսկայայի անվան N 2 պիոներական դրուժինայի պիոներներն էին:

Ցերեկույթն սկսված է: Պիոներական խրոխտ քայլերգից հետո ընթերցվում է դրուժինայի նիստի որոշումը՝ Կոխլիկյանին պատվավոր պիոներ ընտրելու մասին:

Նախագահողը դպրոցի դիրեկտորի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալ Լ. Աթարյան-Հովհաննիսյանը խոսքը տալիս է շրջանի պիոներական շարժման վետերան Ա. Գուլանյանին: Նա ներկաներին ծանոթացնում է Կոխլիկյանի իմաստա-

լից կյանքի ու հեղափոխական գործունեության մանրամասնություններին: Ապա ելույթ են ունենում 5-րդ դասարանի աշակերտուհի, Կոխլիկյանի անվան պիոներական ջոկի խորհրդի անդամ Կ. Եփրիկյանը, դրուժինայի խորհրդի նախագահ Մ. Կիրակոսյանը, աշակերտական ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Մ. Մելիքյանը, Կոխլիկյանին նվիրված իր բանաստեղծությունն է արտասանում 7-րդ դասարանցի Ե. Ռաֆայելյանը, դիշերօթիկ և վրացական միջնակարգ դպրոցների պիոներների անունից ողջույնի խոսք են ասում Ս. Պապոյանը և Ֆ. Սեսաձեն, կուսշրջկոմի երկրորդ քարտուղար՝ Թ. Լազարաշվիլին:

Պիոներ-դպրոցականները հուշանվերներ են հանձնում Հ. Կոխլիկյանին:

Վերջում ելույթ է ունենում օրվա հերոս Հովհ. Կոխլիկյանը: Նա պատմում է պիոներիայի անցած ուղու մասին, հուշեր՝ վետերան պիոներների, իր առաջիկա պլանների մասին, շնորհակալություն հայտնում իր փոքրիկ բարեկամներին՝ հրավերի և ջերմ ընդունելության համար:

Միահամուռ կերպով լսվում է կոմունիստական կուսակցությանը տրվող պիոներների խոսքը՝ «Մի՛շտ պատրաստ»:

Դահլիճում թևածում են դրուժինայի պիոներների սիրած «Օալյոնոկ» տոնական երգի մեղեդիները:

Ներկաները բաժանվում են իրենց բարեկամից՝ կրկին հանդիպելու մեծ ցանկությամբ:

15 փետրվարի

ՆՎԱՃՎԱԾ ԲԱՐՁՐՈՒՆՔՆԵՐ, ՆՈՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կուսակցության Բոգդանովկայի շրջկոմում, շրջսովետի գործկոմի գյուղատնտեսության վարչությունում զրվատանքի շատ խոսքեր տվեցին Եֆրեմովկայի գյուղի կոլտնտեսության ու նրա մարդկանց մասին: Կոլտնտեսությունը հաղթող է ճանաչվել սոցիալիստական մրցության մեջ և անասնաբուծության բնագավառում 1971 թվականին ձեռք բերած լավագույն ցուցանիշների համար նվաճել է կուսշրջկոմի և շրջսովետի գործկոմի փոխանցիկ դրոշը:

Կոլտնտեսության հիմնական արտադրական ճյուղը անասնաբուծությունն է: Ֆերմաներում հաշվվում է ավելի քան 660 գլուխ տավար, այդ թվում՝ 260 կով, 2.870 գլուխ մանր եղջերավոր անասուն, այդ թվում՝ 1.800 մաքի:

Շրջանում Եֆրեմովկայից ավելի շատ կովեր ու մաքիներ ունեցող տնտեսություններ կան, բայց ոչ բոլորն են Եֆրեմովկացիների չափ կաթ, միս, բուրդ և այլ մթերքներ արտադրում:

Սոցիալիստական պարտավորությունների կատարումը դարձել է այստեղի ամեն մի աշխատավորի պատվի գործ: Կոլտնտեսության վարչությունը (նախագահ՝ Վ. Մկրտումով), կուսակցական կազմակերպությունը (քարտուղար՝ Ալ. Սոսլոնով) սիստեմատիկաբար քննարկվում են մրցության ընթացքը, առաջավորներն արժանանում են նյութական ու բարոյական խրախուսանքի: Վերջերս հանրագումարվեցին 1971 թվականի գյուղատնտեսական տարվա արդյունքները, որոնք մեծ ուրախություն պատճառեցին այստեղի աշխատավորներին: Կովերի միջին կաթնատվության պլանը գերակատարվել է 589 կիլոգրամով: Կաթի համախառն արտադրությունը հասել է 689 տոննայի, որը 1970 թվականի մակարդակը գերազանցում է 214 տոննայով: Կթվորուհիներ Անաստասիա Մարկինան, Մարիա Ստրուկովան, Մարիա Ռիբինան և ուրիշներ իրենց խնամած ամեն մի կովից կթել են 100-145 կիլոգրամ կաթ ավելի, քան կոլտնտեսության միջինն է:

Ուրախացնող են ոչխարաբուծների հաջողությունները, որոնք մեկ ոչխարի բրդատվությունը 2,4-ի դիմաց հասցրել են 2,7 կիլոգրամի: Բրդի համախառն արտադրության առաջադրանքը գերազանցվել է 1.100 կիլոգրամով:

Ուսանելի է Եֆրեմովկայի կոլտնտեսականների փորձը մսի արտադրության ավելացման բնագավառում: Երկրորդ տարին է, ինչ նրանք ինտենսիվ կերակրման եղանակով բուծում են մատղաշ անասուններ և հանձնում պետությանը: Այսպես, անցած տարվա հուլիսից այդ եղանակով կերակրման դրված 12-14 ամսական հասակ ունեցող 18 գլուխ անասունները յուրաքանչյուրը 330 կիլոգրամ միջին քաշով, այս տարվա հունվարի սկզբներին վաճառվեցին պետությանը:

Հարկ է նշել, որ մեկ գլուխ վաճառված անասունի դիմաց տնտեսությունը պետությունից ստացել է 870 ռուբլի:

Բարձր մթերատվությունը հնարավորություն ընձեռեց նախատեսված 288-ի դիմաց 1971 թվականին մթերակետ հանձնել 683 տոննա կաթ, իրացնելով կաթի վաճառքի երկուսուկես տարվա առաջադրանքը, 55-ի փոխարեն՝ 74,7 տոննա միս, 6,1-ի դիմաց 7,2 տոննա բուրդ:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը նպաստել է կոլտնտեսության շահութաբերության, դրամական եկամուտների աճին: Անցած տարում եկամուտը հասել է 430 հազար ռուբլու, այդ թվում 400 հազարը ստացվել է միայն անասնաբուծությունից: Ավելացել է նաև կոլտնտեսականների դրամական վարձատրությունը և բաշխվող մթերքների քանակը: Տարվա ընթացքում միայն կաթնապրանքային ֆերմայի 40 աշխատողները (չհաշված հավելյալ վարձատրությունը) ստացել են 98.233 ռուբլու աշխատավարձ: Կթվորուհիներից յուրաքանչյուրի ամսական միջին աշխատավարձը (հաշված լրացուցիչ վարձատրությունը) կազմել է մոտ 300 ռուբլի:

Այս հաջողություններն իրոք ակնհայտ են, սակայն չեն հանգստացնում Եֆրեմովկայի կոլտնտեսականներին: Նրանց բոլորի

ուշադրությունը այժմ կենտրոնացվել է հնգամյակի երկրորդ տարում կոլտնտեսությանը ոչ ամբողջ ծառայած խնդիրները կենսագործելու վրա:

Որոշված է 1972 թվականի վերջին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասցնել 680-ի, այդ թվում՝ կովերինը՝ 265-ի, պահել 2.600 գլուխ մանր եղջերավոր անասուն, այդ թվում՝ 1.850 մաքի: Մեկ ֆուրաժային կովից պլանի 2.300-ի դիմաց ստանալ 2.400 կիլոգրամ կաթ:

Կթվորուհիներ Անաստասիա Մարկինան և Մարիա Ստրուկովան ձգտում են նվաճել 3.200-3.400 կիլոգրամի բնագծերը:

Յուրաքանչյուր ոչխարի բրդատվությունը այս տարի 2,4-ի դիմաց կհասցվի 2,8 կիլոգրամի: Ա. Զիվիլգենևի ղեկավարած բրիգադը պարտավորվել է յուրաքանչյուր 100 գլուխ մայր ոչխարից ստանալ 92 գառ., մեկ ոչխարից խուզել 3 կիլոգրամ բուրդ:

Ինտենսիվ բուման կդրվեն 1971 թվականին ծնված 104 հորթեր, որոնք միջակ և միջակից բարձր դիրքության հասցվելուց հետո կվաճառվեն պետությանը:

Գործնական քայլեր կկատարվեն կերերի կուտակման ուղղությամբ: Կկառուցվի ու շահագործման կհանձնվի տիպային անասնաշենք՝ 180 գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար, կաթնապրանքային ֆերմաներից մեկում կտեղադրվեն ավտոմատ խմոցներ և գոմաղբափոխադրիչներ: Պլանավորված է շահագործման հանձնել գյուղմեքենաների դարաժ և 500 տոննա տարողությամբ հացահատիկի պահեստ:

Պլանի՝ 293-ի դիմաց պետությանը կվաճառվի 560 տոննա կաթ, 55-ի փոխարեն՝ 78 տոննա միս, 6,2-ի դիմաց՝ 7,5 տոննա բուրդ:

17 փետրվարի

ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոմերիտմիությանն Ախալքալաքի շրջանային XXIV կոնֆերանսում շրջկոմի քարտուղար Մ. Քոչոյանը իր զեկուցման մեջ նշեց, որ շրջանի կոմերիտականներն ու երիտասարդները, անձնվիրաբար աշխատելով ավագ սերնդի հետ միասին, բարձր ցուցանիշներով եզրափակեցին նոր հնգամյակի առաջին տարին: Ավելի քան 1.800 կոմերիտականներ լավագույն աշխատանքով նշանավորեցին «Կենսագործել ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները» համամիութենական լենինյան ստուգարքը:

Շրջանը ամբողջովին լուրջ հաջողություններ է ձեռք բերել գյուղատնտեսության բնագավառում: Կատարվել և դերակատարվել են հացահատիկային կուլտուրաների, կերաբույսերի, անասնապահական մթերքների արտադրության և վաճառքի առաջադրանքները: Այդ բոլորի մեջ իրենց ավանդն են ներդրել կոմերիտականներն ու երիտասարդները: 1971 թվականին ԼԿԵՄ շրջկոմը նվաճեց Վրաստանի կոմերիտմիության Կենտկոմի հոբելյանական դրոշը: Կոնֆերան-

սում նշվեց Բուռնաշեթի կոլտնտեսության և Վաչիանի սովխոզի ԼԿԵՄ կազմակերպությունների լավագույն աշխատանքը, որի համար առաջինը արժանացավ Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրին, իսկ երկրորդը Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրին և հուշադրոշին:

Ըստ արժանվույն գնահատելով կատարված գրական աշխատանքը ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցող պատգամավորները միաժամանակ նշեցին, որ առանձին երիտասարդական կոլեկտիվներ իրենց գործունեությամբ դեռևս չեն բավարարում ներկա պահանջները: Մի շարք գյուղերի (Բեժանո, Կոթելիա, Արագվա, Աբուլ և այլն) կոլտնտեսություններում անասնապահների պակասի պատճառով երբեմն վտանգ է ստեղծվում անասունների մսուրային շրջանը հաջող անցկացնելու համար և դա այն ժամանակ, երբ վերոհիշյալ, ինչպես նաև այլ գյուղերում տասնյակ կոմերիտականներ պարապ թափառում են, կամ թե ժամանակավոր աշխատանքի են մեկնում այլ վայրեր: Չի կարելի աչք փակել նաև այն փաստի հանդեպ, որ հետզհետե նոսրանում են երիտասարդ մեխանիզատորների շարքերը, որի պատճառով գյուղատնտեսական աշխատանքների վճռական օրերին զգացվում է մեխանիզատորների պակաս, իսկ երկհերթ աշխատանքի կազմակերպումը պրոբլեմ է դառնում:

Շրջանի կոմերիտականների զգալի մասը դպրոցականներ են: Աճող սերնդի կոմունիստական դաստիարակության ուղղությամբ կատարած լավագույն աշխատանքի համար կոնֆերանսում զվեստի խոսքեր ասվեցին շրջկենտրոնի Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Վ. մայակովսկու անվան, Ազավրեթի, Ալաստանի, Վարևանի, Պրտենայի և այլ գյուղերի դպրոցների մասին: Սակայն, ինչպես ցույց տվեց կոնֆերանսը, այդ ասպարեզում թերությունները դեռ քիչ չեն: Դրա մասին են վկայում այն փաստերը, որ դպրոցական ԼԿԵՄ կազմակերպությունների 2.350 անդամներից 306-ը չեն հաստատում: Ուսման առաջադիմությունը հատկապես ցածր է Տուրքիի, Խորենիայի, Բեժանոյի, Աբուլի, Կարտիկամի, Օլավերի դպրոցներում:

Կոնֆերանսում քննադատության ենթարկվեց կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքը, նշվեց, որ դեռևս բավարար չեն աշխատում գրադարաններն ու ակումբները, վատ է դրված գրքի պրոպագանդան: Գրադարաններում ու ակումբներում մեծ մասամբ աշխատում են համապատասխան կրթություն չունեցող մարդիկ, իսկ ԼԿԵՄ շրջկոմը ու աշխատավորների դեպուտատների շրջսովետի կուլտուրայի բաժինը անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում այդ հարցին:

Կոնֆերանսում ելույթներ ունեցան Վ. Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Մ. Մելքոնյանը, Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի դիրեկտոր Վ. Մանուկյանը, Կարզախի սովխոզի և Բուռնաշեթի կոլտնտեսության ԼԿԵՄ կազմակերպությունների քարտուղարներ Ս. Ստեփանյանը և Գ. Ավետյանը, շրջլուսավար Կ. Կարախանյանը, Լոմատուրցիի դպրոցի ավագ ջոկատավար Լ. Ավագյանը, Մաջոպիայի կոլտնտե-

սության կուսակցմակերպության քարտուղար Ա. Վարդիկյանը, կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Թ. Լազարիշվիլին և ուրիշներ:

Կոնֆերանսը ընտրեց շրջկոմի նոր կազմ և Վրաստանի ԼԿԵՄ XXIX համագումարի պատգամավորներ:

Նորընտիր շրջկոմի առաջին պլենումը շրջկոմի առաջին քարտուղար ընտրեց Մ. Քոչոյանին, երկրորդ քարտուղար՝ Լ. Մետրևելին:

29 փետրվարի

ՄԵԾ ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ

[Մարինե Մելքոնյան]

Դպրոցական զանգը նոր էր ազդարարել վերջին դասի ավարտը, երբ Մարինե Մելքոնյանին հայտնեցին, որ իրեն կոմերիտմիության շրջկոմում կանչում են:

Ինչո՞ւ են կանչում, մտածում էր նա ճանապարհին և փորձում գտնել հարցի պատասխանը:

Շրջկոմի քարտուղարը սիրալիր ընդունեց, աթոռ առաջարկեց նստելու և ասաց.

-Շրջկոմը երաշխավորում է քեզ դպրոցում ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար ընտրել, քո թեկնածությունը ջերմորեն պաշտպանում են նաև դպրոցի դիրեկցիան և կուսկազմակերպությունը:

Աղջիկը շառագունեց:

- Ինձանից տարիքավորներ և փորձ ունեցող կոմերիտականներ շատ կան դպրոցում,- փորձում էր առարկել 16 տարին նոր բոլորած Մարինեն:

Դա 1970 թվականին էր: Ախալքալաքի Վ. Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցում անմխիթար վիճակում էր կոմերիտական աշխատանքը:

... Օգտակար ու հետաքրքիր միջոցառումները հաջորդեցին միմյանց, կազմակերպվեցին հանդիպումներ, երեկոներ, էքսկուրսիաներ, քննարկումներ, բանավեճեր, օգնություն՝ հանրային դաշտերում աշխատողներին: Բայց այդ ամենի հետ միասին ամենակարևորն էր օգնել դպրոցի դիրեկցիային և պիոներական կազմակերպությանը՝ սովորողների ուսման առաջադիմությունը բարձրացնելու, նրանց կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի սկզբունքներով դաստիարակելու գործում: Շուտով շատերը հարգանքով սկսեցին խոսել կոմերիտական կազմակերպության նոր քարտուղարի մասին, իսկ ոմանք էլ՝ ձգտել նմանվելու նրան:

Մ. Մելքոնյանը այժմ 10-րդ դասարանի աշակերտուհի է: Տասը տարի շարունակ նա կրում է դերազանցիկի պատվավոր անունը, նրա լուսանկարը չի իջնում դպրոցի ու ԼԿԵՄ շրջկոմի պատվո տախտակներից: Նա այժմ էլ աչքի է ընկնում իր համեստությամբ, կարգապահությամբ և աշխատասիրությամբ: Նրան հաճախ կարելի է տեսնել ընկերներով շրջապատված զրուցելիս. իր խելացի խոր-

հուրգներով նա օգնում է հետ մնացողներին, վերացնում նրանց մեջ եղած այն ամենը, ինչ անհամատեղելի է սովետական դպրոցական բարձր անվան հետ:

Ուսման մեջ և հասարակական աշխատանքներում առաջավոր ու ակտիվ լինելու մասին են վկայում այն բոլոր գովասանագրերն ու պատվոգրերը, որ նա ստացել է ԼԿԵՄ շրջկոմից և դպրոցի ղեկավարությունից, լուսավորության մինիստրության այն 4 դիպլոմները, որոնց արժանացել է պատանի մաթեմատիկոսների, գրականագետների հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերում հաղթող ճանաչվելու համար:

Կոմերիտմիության շրջանային կոնֆերանսը շատերի հետ միասին Վրաստանի ԼԿԵՄ XXIX համագումարի պատգամավոր ընտրեց նաև Մարինե Մելքոնյանին:

Ժպտում է Մարինեն, և կարծեք թե այդ ժպիտն էլ համոզում է բոլորին, որ կարդարացնի այդ մեծ վստահությունը:

4 մարտի

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

[Արսեն Մոսոյան]

Հաշվետու-ընտրական ժողովն ավարտվել էր: Տեղի էր ունենում նորընտիր կուսբյուրոյի նիստ: Ում ընտրել քարտուղար, մտածում էին շատերը և մտովի կանգ առնում Ա. Մոսոյանի թեկնածության վրա: Եվ կուսբյուրոյի անդամները միաձայն նրան ընտրեցին քարտուղար:

Դա 1965 թվականին էր: Արդեն շուրջ յոթ տարի է, ինչ Արսեն Բարսեղի Մոսոյանը անընդմեջ ընտրվում է Դիլիսկայի (Ախալքալաքի շրջան) կոլտնտեսային կուսկազմակերպության բյուրոյի քարտուղար:

Արտասովոր ոչինչ չկա նրա կենսագրության մեջ: Նույնիսկ, ինչպես ինքն է ասում, այն կարելի է պատմել երկու խոսքով: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, եկել արտադրություն, աշխատել է որպես շարքային կոլտնտեսական, դարբնոցում երկաթ է կռել, այնուհետև սովորել է Երևանի գյուղմեխանիզացիայի տեխնիկումում, եղել է գյուղմեքենաների գարաժի վարիչ, ղեկավարել է դաշտավարական բրիգադը, ապա առաջ քաշվել որպես կոլտնտվարչության նախագահի տեղակալ:

Հիրավի, թվում է, թե ոչ մի արտակարգ բան չկա այդ քառասունն անց մարդու կենսագրության մեջ: Բայց, երբ խորապես ենք ծանոթանում Արսենի կյանքի պատմությանը, մեր առջև բացվում է նրա ներքնաշխարհը, իր ամբողջ գեղեցկությամբ: Աշխատելով կոլտնտեսային արտադրության տարբեր տեղամասերում, նա ձեռք է բերել հմտություն: Իր լավագույն հատկությունների և հոգատար վերաբերմունքի շնորհիվ նվաճել է կոմունիստների, բոլոր կոլտնտեսականների սերն ու համակրանքը, բազմիցս ընտրվել է կոլտնտվարչության անդամ, գյուղսովետի դեպուտատ, պարգևատրվել է բազ-

մաթիվ պատվոգրերով, արժանացել խրախուսանքի: Ա. Մոսոյանը անձնվեր աշխատանքի շնորհիվ 1971 թվականին Վրացական ՍՍՀ - Գերագույն սովետի նախագահության հրամանագրով արժանացավ հանրապետության գյուղատնտեսության վաստակավոր աշխատողի պատվավոր կոչմանը:

Դիլիսկայի կոլտնտեսության սկզբնական կուսակազմակերպությունը դարձել է մարտունակ, և դա, անշուշտ, Ա. Մոսոյանի հմուտ ղեկավարության արդյունքն է: Նա շարունակ հոգում է կոմունիստների և կոլտնտեսականների ստեղծարար նախաձեռնությունը զարգացնելու, նրանց ակտիվությունը և ավանգարդային դերը բարձրացնելու մասին:

- Արսենը պահանջկոտ է աշխատանքում, սիրում է, որ ամեն ինչ արվի տեղին ու ժամանակին,- ասպես են ասում նրա մասին կուսշրջկոմում և վկայակոչում փորձված քարտուղարի գործերը:

Կուսբյուրոն կոմունիստների ուժերը ճիշտ է տեղաբաշխել արտադրության վճռական ճյուղերում, և արտադրության բոլոր օղակները այժմ ղեկավարում են փորձված կոմունիստները: Թվով 38 կուսանդամ և թեկնածու աշխատում են դաշտավարական և մեխանիզատորական բրիգադներում, անասնապահական ֆերմաներում: Նրանք լավ օրինակ են ծառայում բոլորին, բարձր են պահում կոմունիստի պատվավոր կոչումը: ՍՄԿԿ անդամներ Շ. Գաբրիելյանը, Ա. Թոքմաջյանը, Ա. Գրիգորյանը և ուրիշներ իրենց ջանասիրությամբ ու նվիրվածությամբ վայելում են բոլորի սերն ու հարգանքը, հայրենանվեր աշխատանքով նպաստում գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Բոլոր կոմունիստներն ունեն կուսակցական հանձնարարություն, որոնց միջոցով կուսբյուրոն զարգացնում է նրանց ակտիվությունը:

Կուսակազմակերպությունը զգալի փորձ է կուտակել սոցմրցության կազմակերպման ու ղեկավարման առպարեզում: Այստեղ սոցմրցությունը արտադրության կառավարմանը աշխատավորներին ներգրավելու, հանձնարարված գործի համար յուրաքանչյուրի անձնական պատասխանատվությունը բարձրացնելու արդյունավետ ձևերից մեկն է:

Կոլտնտեսության և կուսակազմակերպության հետևողական աշխատանքի շնորհիվ Դիլիսկայի կոլտնտեսությունը բռնել է վերելքի հաստատուն ուղին:

Դիլիսկացիների համար արդյունավետ եղավ հատկապես 1971 թվականը՝ հնգամյակի առաջին տարին: Նոր առաջընթաց քայլեր կատարվեցին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման և անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման ընդարձակումներում:

Այս հաջողությունները, սակայն, չեն հանգստացնում Դիլիսկայի կոմունիստներին: Կուսակազմակերպությունն այժմ իր ուշադրությունը կենտրոնացրել է հնգամյակի երկրորդ տարվա խնդիրների վրա: Իսկ ծառացած նոր խնդիրները մեծ են: Նախորդ տարվա համեմատությամբ, 15-20 տոկոսով ավելանալու են գյու-

զատնտեսական մթերքների արտադրությունը և դրանց վաճառքը պետությանը:

Միշտ լինել այնտեղ - ուր ավելի դժվար է, շարունակ դանվել մրցության առաջին շարքերում, գերակատարել ստանձնած պարտավորությունները - ահա այսպիսի նշանաբանով են աշխատում Դիլիսկայի կոմունիստները:

18 ապրիլի

ՎԵՐԱՑՆԵԼ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏՎՈՎ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ ծավալի դաշտային աշխատանքներ է կատարելու այս գարնանը Բոգդանովկայի շրջանի Գոնդուրայի սովխոզը: Նա 1.644 հեկտարի վրա ցանելու է տարբեր կուլտուրաներ:

Հնգամյակի երկրորդ տարում հողից առավելագույնը ստանալու համար շատ բան է արվել սովխոզում: Դաշտավարները և մեխանիզատորները դեռ անցյալ տարվա աշնանից են դրել ընթացիկ տարվա բերքի հիմքը: Ավելի քան 1.500 հեկտար հողատարածություն նախապատրաստվել է գարնանացանին, լրացվել է սերմերի պակասը, դրանք հասցվել ցանքային կոնդիցիայի, բարձրորակ նորոգվել է տեխնիկան, դաշտ է փոխադրվել ավելի քան 2.500 տոննա օրգանական պարարտանյութ:

Երբ դաշտերն ազատվեցին ձյան ծածկոցից, տնտեսության մարդիկ գործի անցան: Դաշտավարական հինգ տեղամասերում սկսեցին աշխատել տարբեր մակնիշի 20 տրակտորներ, բազմաթիվ կցվող գործիքներ:

Աշխատանքային եռուզեռ է սովխոզի Փոքր Գոնդուրայի տեղամասում (կառավարիչ՝ Մ. Վարդապետյան): Փորձված մեխանիզատորներ Ժ. Խոդերյանը և Խ. Սարգսյանը օրական 15-16-ական հեկտար ցանք են կատարում:

Գարնան-դաշտային աշխատանքներին արագ թափ են հաղորդել նաև Մամզարայի (կառավարիչ՝ Կ. Ավետիսյան) և Մեծ Գոնդուրայի (կառավարիչ՝ Ա. Ղարաչյան) ագրոտեղամասերը:

Գոնդուրայինները միաժամանակ հաջողությամբ առաջ են տանում ցանքերի մշակությունը: Նրանք ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում ավարտեցին 147 հեկտար աշնանացան հաճարի և վիկի ցանքատարածությունների վաղ գարնանային սնուցումը: Շարունակվում են կորնգանի ցանքերի խնամքն ու մշակումը, հողը նախապատրաստվում է 70 հեկտար կարտոֆիլի ցանքի համար:

Ուշագրավ է սովխոզի բանվորների, մեխանիզատորների կատարած աշխատանքը նոր հողեր յուրացնելու, մեքենահարմար հողատարածություններն ընդարձակելու ուղղությամբ: Մեխանիզատորները համագործակցելով դաշտավարական բրիգադների հետ, կարճ ժամանակում քարերից ու քարակույտերից մաքրեցին 50 հեկ-

տար հողատարածություն: Միայն Մամգարայում տրակտորիստներ Պետրոս և Անդրանիկ Մանուկյանները դաշտերից հեռացրին 280 խորանարդ մետր քար:

Չնայած կատարված աշխատանքին, սովխոզի գարնան-դաշտային աշխատանքներում կան թերություններ: Բանն այն է, որ շրջանի այս խոշոր տնտեսությունը դեռևս լրիվ ապահովված չէ հող մշակող անհրաժեշտ մեքենաներով և գործիքներով: Զգացվում է հատկապես շարքացանների, գութանների կարիքը: Այսպես, «Բելառուս» մակնիշի 6 տրակտոր գործի չի դրվում շարքացաններ չլինելու պատճառով: Նույն վիճակումն են փոխադրամիջոցները: 8 ավտոմեքենա անսարք կանգնած է: Այստեղ էլ զգալ է տալիս պահեստամասերի պակասը: Առանձին տրակտորներ ու գործիքներ աշխատում են խափանումներով: Սովխոզը չունի պարարտանյութ շաղ տվող մեքենա, որի պատճառով հանքային պարարտանյութերը ձեռքով են շաղ տրվում, որով խախտվում է հողերի պարարտացման ագրոտեխնիկան: Հարկ է նշել, որ պարարտանյութերի մատակարարումն էլ անբավարար է կազմակերպված:

Այդ մասին դիտեն «Վրացդյուղտնտեխնիկայի» Ախալցիխեի միջշրջանային մատակարարման բազայի ղեկավարները, բայց նրանք էլ իրենց ուսերը թոթվում են, որ իրենք էլ պահանջված քանակությամբ կցվող գործիքներ ու պահեստամասեր չեն ստանում: Դրա մեջ էլ որոշ ճշմարտություն կա: Վերջին խոսքը, ինչպես ասում են, պատկանում է «Վրացդյուղտնտեխնիկա» հանրապետական միավորմանը:

Գոնդուրայի սովխոզի մարդիկ ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի պատվին լուրջ պարտավորություններ են ստանձնել: Նրանք խոստացել են յուրաքանչյուր հեկտարից հավաքել 17 ցենտներ հացահատիկի, 30 ցենտներ խոտաբույսերի, 140 ցենտներ կարտոֆիլի միջին բերք:

Սովխոզի դաշտավարների և մեխանիզատորների նշանաբանը պետք է լինի՝ սեղմ ժամկետում և բարձր որակով կատարել գարնան-դաշտային աշխատանքները, անթերի իրացնել ստանձնած այդ բարձր պարտավորությունները:

Պետք է սպասել, որ գյուղատնտեսական վերադաս մարմինները, իրենց հերթին, կօգնեն սովխոզի աշխատավորներին կատարելու ստանձնած պարտավորությունները:

13 մայիսի

Հեշտիայի (Բոգդանովկայի շրջան) N 2 միջնակարգ դպրոցի Նելսոն Ստեփանյանի անվան պիոներական դրուժինան (ավագ ջոկատավար՝ Ս. Սիմոնյան) ամեն ինչ անում է լենինյան պիոներիայի 50-ամյակը արժանավայել դիմավորելու համար:

Երկրորդ տարին է, ինչ դրուժինայի 300-ից ավելի պիոներներ դնում են համամիութենական «Միշտ պատրաստ» նշանաբանի ուղերթներով:

Առաջնորդվելով «Ապրել, սովորել և աշխատել լենինաբար» սկզբունքով, նրանք պատվով են կատարում իրենց պարտականությունները, բոլոր գործերում քայլում առջևից:

Պատանի լենինյանները մեծ սիրով են մասնակցում «Պիոներական կառույց» երթուղու աշխատանքներին: Անցած մեկ և կես տարում նրանք հավաքել են 3 տոննա մետաղի ջարդոն, 1.800 շիշ, 3 տոննա թղթի մակուլատուրա և հնոտի՝ Զուկոտիայի պիոներ-դպրոցականների պալատի կառուցման ֆոնդի համար: Այդ շինարարությանն են հատկացվել նաև պիոներ-դպրոցականների շաբաթօրյակներից ստացված գումարները:

Դպրոցում ստեղծված է ինտերնացիոնալ բարեկամության անկյուն, ուր ցուցադրված են տարբեր երկրների պիոներների վզկապներ, միութենական հանրապետությունների պիոներական թերթեր, մեր հայրենիքի տարբեր քաղաքների և արտասահմանյան երկրների դպրոցականներից ստացված բարեկամական նամակներ, տեսարժան վայրերը պատկերող ալբոմներ:

Այստեղ հաճախ կազմակերպվում են ցերեկույթներ, երեկույթներ՝ նվիրված եղբայրական հանրապետություններին: Այդ աշխատանքները հատկապես աշխուժացել են վերջերս, երբ սովետական բազմազգ ժողովուրդը նախապատրաստվում է ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին:

Պիոներական դրուժինայի ուշադրության կենտրոնումն է պիոներներին հեղափոխական և մարտական ավանդույթներով դաստիարակելու գործը: Պիոներները նյութեր են հավաքում Մեծ հայրենականում զոհված շրջանավարտների, ուսուցիչների, համադյուղացիների վերաբերյալ: Դրուժինան ունի գյուղի տարեգրությանը, Հայրենական պատերազմում զոհվածներին, գյուղի նախկին պիոներներին և պիոներ աշխատողներին նվիրված ալբոմներ:

Պիոներները վերցրել են գյուղի մանկապարտեզի և առաջին-դասարանցիների շեֆությունը: Երեխաները մեծ սիրով են օգնում իրենց փոքրիկ բարեկամներին: Ընթացիկ ուսումնական տարում մանկապարտեզի սաների համար բեմադրվել են Հ. Թումանյանի «Շունն ու կատուն», Վ. Վարդանյանի «Անհաշտ քոթոթները», առաջինդասարանցի հոկտեմբերիկներին օգնել են կազմակերպելու «Կարմիր աստղիկի տոնը» և «Հրաժեշտ այբբենարանին» հանդեսը:

16 մայիսի

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

Այս անգամ Ախալքալաքի Ս. Մ. Կիրովի անվան մշակույթի տան դահլիճը տրամադրվել էր Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի սաներին: Բարեկամության երեկո էր՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա հոբելյանին. օրակարգն էր «Ղազախական ՍՍՀ-ն»:

Բացման խոսքով հանդես է գալիս Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Թ. Լազարաշվիլին:

«Ղազախստանը եղբայրական հանրապետությունների ընտանիքում» թեմայով զեկուցում կարդաց քաղաքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի դիրեկտոր, հանրապետության վաստակավոր ուսուցիչ Վ. Մանուկյանը:

Ելույթ է ունենում և շնորհակալական խոսք ասում Ղազախստանի ներկայացուցիչ Սադանայ Դուլյեմբեկովը: IX դասարանի աշակերտուհի Սուսաննա Գալստյանը ընթերցում է Ալմա-Աթայի N 1 միջնակարգ դպրոցից ստացված ողջույնի և շնորհակալության հեռագիրը:

Այնուհետև դպրոցի 5-10-րդ դասարանների աշակերտները հանդես են գալիս «Իմ Ղազախստան» գրական-գեղարվեստական բովանդակալից մոնտաժով:

«Մենք հզոր Միության հանրապետությունները» շարքից բարեկամական երեկոների նախաձեռնողը կուսշրջկոմն է: Այս տարվա անցած ամիսներին նման երեկոներ են կազմակերպվել քաղաքի Մայակովսկու, Դեմիրճյանի անվան միջնակարգ, դիշերօթիկ և վրացական միջնակարգ դպրոցներում: Երեկոները նվիրվել են Ռուսաստանի Ֆեդերացիային, Ուկրաինական, Բելոռուսական, Վրացական միութենական հանրապետություններին: Նման երեկոները կանցկացվեն նաև առաջիկայում:

27 մայիսի

ՓՈԽԱՆՑԻԿ ԴՐՈՇՆԵՐ՝ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Տոնականորեն զարդարված նորակառույց կուլտուրայի տան դահլիճն էին հավաքվել Ախալքալաքի շրջանի Բուռնաշեթի կոլտնտեսության աշխատավորները: Այստեղ էին եկել անասնապահներ ու մեխանիզատորներ, կարտոֆիլագործներ ու բանջարաբույծներ, հյուրեր հարևան գյուղերից, շրջանի կուսակցական, սովետական աշխատողներ:

1971 թվականին գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում ձեռք բերած հաջողությունների համար կոլտնտե-

սությունը նվաճել է ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀԱՄԿԿ-ի փոխանցիկ կարմիր դրոշը և դրամական առաջին կարգի պարգև:

Հանդիսավոր ժողովը ներածական խոսքով բաց է անում կոլտնտեսության նախագահ, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Վ. Քոչոյանը.

Զայնը տրվում է հանրապետության գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Դ. Նիկուրաձեին: Ներկաների բուռն ծափահարությունների ներքո նա փոխանցիկը հանձնում է հաղթողներին:

Բարձր պարգևի առթիվ բուռնաշնթիներին շնորհավորեցին կուսշրջկոմի առաջին քարտուղար Ս. Պետրոսյանը, Ղազալարի կոլտնտեսության նախագահ, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ե. Մուրադյանը: Ապա շնորհակալական խոսք են ասում կոլտնտեսուհի Թ. Աղաբաբյանը, գյուղատնտես Մ. Դավթյանը, ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Գ. Ավետյանը, կոլտնտեսության նախագահ Վ. Քոչոյանը:

***

Իններորդ հնգամյակի առաջին տարվա սոցիալիստական մրցությունը նոր հաղթանակ բերեց Բոգդանովկայի շրջանի Ուչմանայի բարձրալեռ կոլտնտեսության աշխատավորներին: Նրանք 1971 թվականին գերակատարեցին գյուղատնտեսական մթերքների արտադրության և պետական վաճառքի առաջադրանքները: Տնտեսությունը մեկ ֆուրաժային կովից պլանի 2.400-ի դիմաց ստացավ 3.006 կիլոգրամ կաթ: Պետությանը 188-ի դիմաց վաճառվեց 372 տոննա կաթ, 41,5-ի փոխարեն 63,5 տոննա միս, 43-ի դիմաց 45 ցենտներ բուրդ: Միայն անասնաբուծությունից ստացված եկամուտը տնտեսությունում կազմեց 270 հազար ռուբլի, մաքուր շահույթը 53 հազար ռուբլի:

Ձեռք բերած այս հաջողությունների և համամիութենական սոցիալիստական մրցության մեջ հաղթող ճանաչվելու համար ուչմանացիներին շնորհվել է ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրության ու մթերումների արհմիության Կենտկոմի նախագահության փոխանցիկ կարմիր դրոշը և դրամական առաջին կարգի պարգև:

Ուչմանայի կոլտնտեսային ակումբում օրերս տեղի ունեցավ հանդիսավոր ժողով նվիրված փոխանցիկ կարմիր դրոշը հանձնելուն: Վրացական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրի առաջին տեղակալ Դ. Նիկուրաձեն դրոշը հանձնեց կոլտնտեսության նախագահ Վ. Դարբինյանին: Ելույթ են ունենում դպրոցի դիրեկտոր Պ. Հարոսյանը, կոմերիտկազմակերպության քարտուղար Ժ. Ղազարյանը, կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ. Դուրգարյանը: Կոլտնտեսության նախագահ Վ. Դարբինյանը կոլտնտեսականների անունից շնորհակալություն հայտնեց կուսակցությանն ու կառավարությանը ուչմանացիների աշխատանքը բարձր գնահատելու համար, հավաստիացրեց, որ նրանք այսուհետև էլ կաշխատեն կրկնապատկված եռանդով, ամեն ինչ կանեն ՍՍՀՄ կազմավորման պլանային հոբելյանը արժանավայել դիմավորելու համար:

8 հուլիսի

ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ավանքավանքի շրջանում սկսվել են մասսայական խոտհունձը, կերի սիլոսացումն ու սենաժի պատրաստումը: Գյուղի աշխատավորները ամեն ինչ անում են կերերի կուտակման կամպանիան կազմակերպված անցկացնելու համար:

Աշխատանքը լավ է կազմակերպված Դիլիսկայի կոլտնտեսությունում: Այստեղ կերերի կուտակման գրեթե բոլոր աշխատանքները մեքենայացված են: Խոտհարքներում բարձր արտադրողականությամբ աշխատում են խոտհնձիչ ութ ագրեգատ, սիլոսահավաք երկու կոմբայն և այլ տեխնիկա: Հովհաննես, Շմավոն և Խորեն Կարախանյանները, որոնց ագրեգատները ունեն երեքական հնձիչ, օրական հնձում են 20-ական հեկտար կորնգանի դաշտ: Սենաժի գանգված հավաքող, տնտեսությունում առաջին անգամ գործի դրված «ՎԻՍՐ» մակնիշի կոմբայնը, որը ղեկավարում է փորձված տրակտորիստ Լ. Կարախանյանը, ամեն օր հնձում և մանրացնում է 70-80 տոննա զանգված: Դիլիսկայի կոլտնտեսականները շրջանում առաջինը զեկուցեցին 250 տոննա սենաժի պատրաստման մասին: Բայց դա վերջնական ցուցանիշ չէ: Մարդիկ որոշել են պատրաստել ևս 250 տոննա սենաժ:

Բնական և ցանովի խոտհարքներում աճած առատ բերքը ոտքի է հանել Էխտիլայի նորաստեղծ սովխոզի մարդկանց:

Դաշտ են դուրս եկել հարյուրավոր դաշտավարներ, որոնք զբաղված են խոտի հավաքման, տեղափոխման և դիզման աշխատանքներով: Ջիաքարշ հնձիչների վրա աշխատող բանվորներ Ս. Դարբինյանը, Ա. Մինասյանը, Մ. Սարգսյանը խոտաբուլյաների հնձի օրվա առաջադրանքները միշտ գերակատարում են:

Սովխոզում խոտհնձին զուգընթաց կազմակերպված է ընթանում կերի սիլոսացումը: Տնտեսության մեխանիզատորները աշխատանքային երկու օրում վայրի խոտաբուլյաներից պատրաստել են 60 տոննա հյութալի կեր:

Կոթելիայի կոլտնտեսությունն անցյալ տարի թերակատարեց կոշտ և հյութալի կերերի կուտակման առաջադրանքը և ձմռան ամիսներին կանգնեց լուրջ դժվարությունների առաջ: Նախորդ տարվա սխալը չկրկնելու համար տնտեսության ղեկավարներն այս տարի համեմատաբար լավ նախապատրաստվեցին կերերի կուտակմանը: Աշխատելով կիրովագրադցիների օրինակով, տնտեսության մեխանիզատորները որոշել են 198 հեկտար խոտաղաշտերի բերքը հավաքել 12 աշխատանքային օրում: Մեխանիզատորներ Գ. Ալեքսիվիլին և Ա. Զուբաչովիլին 2-3 հեկտարով գերակատարում են հնձիչ ագրեգատների օրվա առաջադրանքները: Կոլտնտեսականներ Շ. Իսակիձեն, Յա. Բերիձեն, Է. Մայուրաձեն և ուրիշներ ամեն օր գերանդիով հնձում են 0,65-0,70 հեկտար բնական խոտհարք: Կոլտնտեսականների և մեխանիզատորների ջանքերով հավաքվել և գյուղ փոխադրվել 55 տոննա խոտ:

Խոտհունձը արագ թափ է ստացել նաև Վաչիանի, Կարտիկամի, Հոկամի սովխոզներում, Վարևանի, Արագվայի, Բեժանոյի կոլտնտեսություններում:

Հաշվի առնելով մեր հանրապետության առաջավոր շրջանների փորձը, առանձին տնտեսություններ որոշեցին այս տարի պատրաստել 2.750 տոննա սենաժ, որի աշխատանքներն արդեն սկսել են Խուլգումոյի, Բուռնաշենթի կոլտնտեսությունները, Վաչիանի, Կարգախի սովխոզները:

Սակայն կերերի կուտակման այս վճռական օրերին ամենուրեք չէ, որ գործը լավ է կազմակերպված: Առանձին տնտեսություններ ապահովված չեն համապատասխան մեխանիզմներով ու ագրեգատներով: Խոտհնձիչների, քարշակների, մետաղյա լարերի, հնձիչ դանակների և այլ պահեստամասերի մեծ պահանջարկ կա: «Վրացգյուղտնտեխնիկա» հանրապետական միավորման Ախալցիխեի միջշրջանային մատակարարման կետը պետք է, որ օգնություն ցույց տա շրջանի տնտեսություններին, բավարարի նրանց արդարացի պահանջը:

Ախալքալաքի շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները պարտավորվել են այս տարի կուտակել 52 հազար տոննա կոշտ և 32 հազար տոննա հյութալի կեր: Այս բնագիծը ձեռք բերելու բոլոր հնարավորությունները կան: Հարկավոր է մոբիլիզացնել գյուղի բոլոր աշխատավորների ուժերը, ապահովել ստանձնած պարտավորության անթերի կատարումը:

1 օգոստոսի

ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԸ՝ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՆ

Ախալքալաքի շրջանի բարձրադիր գոտու կոլտնտեսություններում և սովխոզներում շարունակվում է կերերի կուտակումը, ցածրադիր գոտում սկսվել է հացահատիկային կուլտուրաների մասսայական բերքահավաքը:

ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների կենսագործման ուղղությամբ ծավալված սոցմրցության յուրաքանչյուր օրը աշխատանքային նոր հաջողություններ է բերում հողի աշխատավորին: Նա իր տրամադրության տակ ունենալով հարուստ տեխնիկա՝ հացահատիկային 110 կոմբայն, 150-ից ավելի բեռնատար ավտոմեքենա, խոտհունձ կատարող, հացահատիկը մաքրող, գտող ու տեսակավորող բազմաթիվ մեքենաներ ու սարքեր, ամեն կերպ ձգտում է բերքը հավաքել սեղմ ժամկետում, առանց կորստի, անթերի կատարել հացամթերումները:

Աշխատանքային եռուզեռ է Սուլղայի սովխոզի դաշտերում: Այստեղ կերերի կուտակմանը և հացահատիկայինների բերքահավաքին մասնակցում են մի քանի հարյուր բանվոր-ծառայողներ: Մյասնիկյանի ագրոբաժանմունքում մեխանիզատորներ Հակոբ Արաքյանն ու Ռուբեն Զաքարյանը օրական 5-6-ական հեկտար վարսակի խոտ-

հարք են հնձում: Զորացած խոտն անմիջապես տեղափոխվում ու դեզավորվում է: Ամբողջ սովխոզում արդեն կուտակվել է 1.700 տոննա բնական և ցանովի խոտ, որից 400 տոննան դեզավորել է Դաղեշի տեղամասում կենսաթոշակառուներից կազմված կերհայթայթման բրիգադը՝ Թևան Անդուլյանի գլխավորությամբ: Տնտեսությունում խոտահավաքը շարունակվում է, շուտով կսկսվի նաև արևածաղկի սիլոսացումը: Սուլդացիներն անում են ամեն ինչ՝ 2.900 տոննա խոտի (անցյալ տարվանից 500-ով ավելի) և 2.000 տոննա հյութալի կերի կուտակման պարտավորությունները կատարելու համար:

Դիլիսկայի սերմնաբուծական կոլտնտեսության ընդարձակ ցանքատարածություններում գործում է 11 կոմբայն: 1.900 տոննա բերք ամբարելու, այդ թվում պետությանը 280-ի փոխարեն 364 տոննա հացահատիկ վաճառելու ձգտումը համակել է բոլորին: Բարեկամներն էլ են օգնության ձեռք մեկնել դիլիսկացիներին: Գորիի շրջանից այստեղ են փոխադրվել 3 կոմբայն, որոնք անխափան աշխատում են Վարդ Ղաթրջյանի, Հրանտ Քոչատաշյանի դաշտավարական բրիգադներում: Կոմբայնավարներ Թենգիզ Տերունաշվիլու, եղբայրներ Զավեն և Մուրթազ Ճեղելիձենների ու տնտեսության մեխանիզատորներ Ենգիբար, Գևորգ և Հովհաննես Կարախանյանների միջև յուրահատուկ մրցություն է սկսվել: Նրանցից յուրաքանչյուրը կոմբայնով օրական հնձում ու կալսում է 10-12 հեկտար ցանքատարածություն և հեկտարից պահեստ հանձնում 20-22 ցենտներ հացահատիկ:

Կորխ գյուղի կոլտնտեսության դաշտում ենք: Երկարատև անձրևներից ու կարկտից հետո հացաբույսերը պառկել են, միահյուսվել: Կրկնակի դժվարություն է առաջացել: Սակայն դժվարությունը հաջողությամբ է հաղթահարվում: Փորձված կոմբայնավար Աբրահամ Ավագյանը մեքենան աշխատեցնում է մեծ վարպետությամբ, հունձը կատարում է ցածրից, կորուստներ չի տալիս:

Սակայն այս ամենով հանդերձ, բերքահավաքի գործում կան լուրջ թերություններ: Այս օրերին ամենամեծ հոգսեր ունեցողները մեխանիզատորներն են, որոնք միշտ չէ, որ դժվարությունների՝ ագրեգատների համար պահեստամասեր չունենալու պատճառով: Այսպես, Վաչիանի սովխոզում խախտվում է ցրտահերկի գրաֆիկը: Բերքահավաքից հետո ազատված հողամասերում սառնավարը ձգձգվում է: Պահեստամասեր չունենալու պատճառով դիզելային 3 տրակտոր գործի չեն դրվում: Կորխի կոլտնտեսությունում Գորիից օգնության կարգով այստեղ բերված կոմբայնը մեկ օր աշխատելուց հետո խափանվեց: Զորրորդ օրն է, ինչ ագրեգատը չի աշխատում՝ նորից պահեստամասի պակասի պատճառով:

Շրջանի տնտեսությունները պահեստամասերի պակասը լրացնելու բազմաթիվ պահանջներ են ներկայացրել, սակայն հանրապետական համապատասխան կազմակերպությունները և առաջին հերթին Ախալցիխեի միջշրջանային պահեստամասերի մատակարարման կետը լռում են:

Կոլտնտեսությունների և սովխոզների մեծ մասը չունի հացահատիկի տիպային պահեստ կամ չորանոց: Կուտակված հացահա-

տիկն ու կորնգանի սերմացուն անձրևից պաշտպանելու համար ձեռք չեն բերվել բրեզենտե ծածկոցներ:

Երկրորդ տարին է, ինչ Օրջայում ավարտվել է 500 տոննա տարողությամբ հացահատիկի պահեստի շինարարությունը, բայց թե ե՞րբ կհանձնվի շահագործման՝ հայտնի չէ, քանի որ կառույցի հատակի ասֆալտապատման պարտականությունը ոչ մի կազմակերպություն իր վրա չի վերցնում: Ինչ-ինչ պատճառներով ձգձգվում է նաև Կաջոյի սովխոզում հացահատիկի նոր պահեստի շինարարությունը:

Հացահատիկի պահպանման գործը վատ է կազմակերպված հատկապես սովխոզներում, Աբուլի, Բեժանոյի, Խանդոյի և այլ կոլտնտեսություններում: Այստեղ մեծ մասամբ հողածածկ տանիք ունեցող շենքերում են լցվում կորնգանի սերմացուն, ցորենն ու գարին, հատիկաֆուրաժային կերերը:

Ժամանակն է, որ շրջանի կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավարները մտահոգվեն տիպային պահեստներ, չորանոցներ, ասֆալտապատ կալեր պատրաստելու մասին:

Սրանք մասնակի թերություններ չեն: Կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավարները, շրջսովետի գյուղատնտեսական վարչությունը պետք է կոնկրետ միջոցներ ձեռնարկեն եղած թերությունները արագորեն վերացնելու, բերքահավաքը կազմակերպված անցկացնելու համար:

26 օգոստոսի

ՀՈՒԶԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հուզված էին բոլորը: Բայց ամենքից շատ անհանդիստ էր դպրոցի դիրեկտոր Հովհաննես Քարտաշյանը: Նա չկարողացավ սրտին ասել, մի պահ կարկամեց ու հուզմունքով իր սաներին բարի ճանապարհ մաղթեց, պատվիրեց, որ չմոռանան դպրոցը, ուսուցիչներին, որ այս հրաժեշտը միայն հրաժեշտ չլինի, այլ նաև ապագա հանդիպման գրավական:

Դա Բոգդանովկայի շրջանի առաջին միջնակարգ դպրոցի առաջին շրջնավարտների հրաժեշտի երեկոյին էր, ուղիղ 35 տարի առաջ:

Ու սաները, իրոք չմոռացան: Եվ, չնայած շատ ուշացումով, որոշեցին հանդիպել իրար: Օրերս նրանք տարբեր վայրերից սրտի թրթիռով բռնեցին իրենց այնքա՜ն ծանոթ ու հարազատ դպրոցի ճամփան:

Առավոտ է: Բոգդանովկա ավանի հայկական միջնակարգ դպրոցի ուսուցչանոցում հավաքվել են նախկին դպրոցական ընկերները, դասատուները: Նրանք այստեղ են եկել հին օրերի, անմոռաց հուշերի կանչով: Առաջվա պես կենսախինդ են, առույգ, թեև շատերի մազերին ձյուն է իջել: Կնճիռներ կան դեմքերին: Դպրոցի նախ-

կին դիրեկտոր Հովհ. Բարտաշյանը և նախկին ժողկրթբաժվար Արմենակ Գուլանյանը հաղիվ են հասցնում պատասխանել իրենց նախկին աշակերտներին. բոլորը ցանկանում են գրույցի բռնվել, մաքեր փոխանակել:

Հնչում է զանգը: Դասասենյակ են մտնում ու տեղեր գրավում նախկին աշակերտները, կուսակցական, սովետական աշխատողներ, մտավորականության ներկայացուցիչներ, այս ուսումնական տարվա շրջանավարտները: Վերջիններս ծաղկեփնջեր են նվիրում ավագ սերնդի ներկայացուցիչներին:

Դպրոցի այն ժամանակվա կոմերիտկազմակերպության քարտուղար, դասարանի ավագ Սարգիս Զաքարյանը գլխահակ զեկուցում է, որ 31 շրջանավարտներից 22-ը մասնակցել են Մեծ հայրենականին, 15-ը ընկել մարտի դաշտում՝ քաջի մահով, մեր հայրենիքի և Եվրոպայի երկրների ազատագրության համար մղված մարտերում: Զոհվել են Արա Ղարսլյանը, Խորեն Հարոսյանը, Հմայակ Գրիգորյանը, Ռուբեն Ղազարյանը և ուրիշներ: Ներկաները հոանկայս ու լռությամբ հարգում են զոհվածների հիշատակը:

Սկսվում է սովորական բաց դասը: Այն «Ինչպես եմ ապրել 35 տարում» թեմայով վարում է պատմության այն ժամանակվա դասատու Հովհ. Բարտաշյանը. նորից լսվում է վաստակաշատ մանկավարժի, լեզվական բարձր կուլտուրայի տեր այդ մարդու գրավիչ ձայնը:

- Կյանքի ճամփաները շատ հեռու են տարել ձեզ,- ասում է նա,- Դուք ստացել եք բարձրագույն կրթություն, դարձել մանկավարժներ, արտադրության հրամանատարներ, ակտիվորեն մասնակցում եք կոմունիզմի կառուցման մեծ գործին:

Ելույթ են ունենում ու իրենց անցած ուղու մասին պատմում նախկին սաները՝ Գանձայի (Բոգդանովկայի շրջան) միջնակարգ դպրոցի դասատու Կամսար Թանգամյանը, Լենինականի N 18 մանկապարտեզի վարիչ Թորի Ներսիսյանը, նրա քույր (կենսաթոշակառու, մանկավարժ) Կալեփսի Ներսիսյանը, Երևանի Մնջոյանի անվան օրգանական քիմիայի ինստիտուտի գիտաշխատակից Վաղինակ Ավագյանը, Մեծ Արագյալի (Բոգդ. շրջան) ութամյա դպրոցի ուսուցիչ Սարգիս Դալիբալթյանը, Երևանի ավտոմատ գործարանի բրիգադավար Անանիա Գրիգորյանը, Լենինականի տաքսամոտորային պարկի աշխատակից Արամ Զոբանյանը:

Դասատուն ամփոփում է դասը: Գոհ է բոլորից, բարձր է գնահատում իր նախկին սաների անցած ճանապարհը ու կրկին կոչ անում՝ անջատում չլինի, այլ նոր կամրջում, երբեք խզում չլինի ու օրերը թող միշտ բարի լինեն իր սաների համար:

Սկսվում է հանդիսման հանդիսավոր մասը: Այն բաց է անում Բոգդանովկայի միջնակարգ դպրոցի դիրեկտոր Ի. Պողոսյանը: Հյուրերին ջերմորեն ողջունում են Ախալքալաքի ռուսական միջնակարգ դպրոցի դիրեկտոր Ա. Գուլանյանը, Բոգդանովկայի շրջլուսբաժվար Խ. Թումասյանը, Բոգդանովկայի միջնակարգ դպրոցի կուսկազմակերպության քարտուղար Հ. Խոդիկյանը, այս տարվա շրջա-

նավարտ Ջ. Ղարսլյանը, կուսշրջկոմի քարտուղարներ Ս. Ղուկասյանը, Վ. Սապրիկինը:

Հանդիպման մասնակիցները բաժանվեցին՝ կրկին հանդիպելու մեծ ցանկությամբ:

12 սեպտեմբերի

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ

Այս անգամ Ախալքալաքի կինոթատրոնի ընդարձակ դահլիճը տրամադրվել էր երիտասարդությանը: Բարեկամության երեկո էր՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա հոբելյանին: Երեկոյին հրավիրված էին Հայկական ՍՍՀ Ղուկասյանի շրջանի երիտասարդության ներկայացուցիչները:

«Հայ և վրացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը» թեմայով զեկուցում կարդաց կուսշրջկոմի երկրորդ քարտուղար ընկ. Թ. Լազարիշվիլին:

Ներկաներին ողջունեցին Ղուկասյանի ԼԿԵՄ շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Գրիգորյանը, զինկոմիսար Վ. Պողոսյանը, Ախալքալաքի Դ. Դեմիրճյանի և վրացական միջնակարգ դպրոցների աշակերտներ Կ. Խոդիկյանը, Մ. Ալելիշվիլին, ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Վ. Քոչոյանը:

Երեկոյի մասնակիցների համար ցուցադրվեց «Բարեկամություն» կինոնկարը:

Ղուկասյանից եկած հյուրերը ծանոթացան Ախալքալաքի տեսարժան վայրերին, եղան Ալաստան գյուղում, թարմ ծաղիկներ դրեցին Սովետական Միության հերոս Լևոն Դարբինյանի կիսանդրուն:

3 հոկտեմբերի

ԱՍՊԻՆՁԱՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Վերջին մի քանի տարում Ասպինձայի շրջանում լայն թափ են ստացել շինարարական աշխատանքները: Կառուցվել և շահագործման են հանձնվել դպրոցական շենքեր, կուլտուր-լուսավորական, առևտրական ու կենցաղային սպասարկման օբյեկտներ, անասնապահական, սիլոսային կառույցներ:

Կառուցողական աշխատանքները արագ թափով առաջ են ընթանում նաև այս տարի:

Օրերս շրջկենտրոնում գյուղական շինարարության N 3 տրեստի Ախալցիխեի N7 շարժական մեքենայացված շարասյունը շահագործման հանձնեց եռհարկանի վարչական շենքը, որը զբաղեցնում են կուսակցության և կոմերիտմիության շրջկոմները,

շրջսովխոզի գործկոմը իր բաժիններով և շրջանային «Ասպինձա» թերթի խմբագրությունը:

Դամալայում կոլտնտեսության միջոցներով կառուցվում է խոշոր եղջերավոր անասունների՝ 220 գլուխ կովերի ու մատղաշի համար քարաշար անասնաշենք: Այստեղ կտեղադրվեն ավտոմատ խմոցներ, գոմաղբափոխադրիչներ, կեր փոխադրող ու մանրացնող սարքեր: Մինչև տարվա վերջը շարք կմտնի տիպային շենքը: Եկող տարվանից այստեղ կտեղադրվի 1.000 համարանոց ավտոմատ հեռախոսակայանը: Շուտով շահագործման կհանձնվեն պետբանկի երկհարկանի շենքը՝ շրջկենտրոնում և տիպային դպրոցական մի շենք՝ Ձվելի գյուղում:

Շրջանի Օրդոբա, Խիզաբավրա, Օշորա և այլ գյուղերում կառուցվում են կոլտնտեսության գրասենյակների և ակումբա-գրադարանային նոր շենքեր:

Արագ թափ է հաղորդվել Վարձիայում տուրիստական բազայի շինարարությանը: Կենտրոնական ջեռուցմամբ այս շենքը, որ շահագործման կհանձնվի 1973 թվականին, կունենա 220 տեղանոց հյուրանոց, ճաշարան, խաղասենյակներ, գարաժներ և այլ հարմարություններ: «Վարձիա» հանքային ջրերի բազայի վրա Խրթվիսի գյուղից ոչ հեռու տարածության վրա առաջ են ընթանում հանքային ջրերի լցման գործարանի շինարարական աշխատանքները: Գործարանը տարեկան կլցնի հինգ միլիոն շիշ հանքային ջուր և կառաքի ոչ միայն մեր Մեծության տարբեր ծայրամասերը, այլև նրա սահմաններից դուրս:

19 դեկտեմբեր

ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Մեծ Արագյալի (Բոգդանովկայի շրջան) կոլտնտեսությունը որոշակի հաջողություններ է ձեռք բերել հնգամյակի երկրորդ տարում: Անցած տասնմեկ ամսում տարեկան պլանի 2.150-ի դիմաց յուրաքանչյուր կովից ստացվել է 2.265 կիլոգրամ կաթ: Տնտեսությանը զգալի օգուտ է տվել մատղաշների ինտենսիվ եղանակով կերակրումը. հանձնված մսի դիմաց ստացվել է 21.600 ռուբլի մաքուր շահույթ: Գերակատարվել են կաթի և մսի վաճառքի, ինչպես նաև խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակի աճի տարեկան առաջադրանքները: Հանրային հոտի կուշտ ու տաք ձմեռումն ապահովելու համար կուտակվել են մոտ 2.000 տոննա կոշտ կեր, 1.450 տոննա սիլոս և 250 տոննա սենաժ:

Հաջողությունները, անշուշտ, ավելի մեծ կլինեին, եթե կոլտնտեսության սկզբնական կուսակազմակերպությունը լիովին օգտագործեր կոլտնտեսության գործունեության նկատմամբ վերահսկողության իր իրավունքը, մոբիլիզացներ կոմունիստների ու-

ժերը տնտեսության բոլոր ճյուղերում առաջադրանքների կատարումը ապահովելու համար: Ընթացիկ տարում, օրինակ, պլանով նախատեսված 14-ի դիմաց հեկտարից ստացվեց 8 ցենտներ հացահատիկ, 100-ի փոխարեն ընդամենը 32 ցենտներ կարտոֆիլ, իսկ 26 հեկտար ճակնդեղի պլանտացիաները ոչ մի կիլոգրամ բերք չտվեցին: Կոլտնտեսությունում զգալիորեն ետ է մնում ոչխարաբուծությունը: Անասնապահության այդ ճյուղը տարիներ շարունակ վնասաբեր է: Ընթացիկ տարում յուրաքանչյուր հարյուր մաքուց ստացվել է 73 գառ, նախատեսված 2,6-ի դիմաց ամեն մի ոչխարից 2,1 կիլոգրամ բուրդ: Եթե այս բոլորին ավելացնենք 315 գլուխ մանր եղջերավոր անասունների անկումները և հարկադիր մորթը, ապա պարզ կլինի, թե կոլտնտեսությունը որքան վնաս է կրել ոչխարաբուծությունից: Սակայն սկզբնական կուսակազմակերպության ուշադրությունից վրիպել են այս թերությունները: Նա հոգ չի տարել իր մարտունակությունը բարձրացնելու, կոմունիստների ակտիվությունն ու նախաձեռնությունը զարգացնելու, տնտեսության արդյունավետ գործունեությունը ապահովելու մասին:

Կուսբյուրոն անբավարար է զբաղվել կոլտնտեսության արտադրության վճռական տեղամասերում կոմունիստների ուժերը ճիշտ տեղաբաշխելու հարցով, ուստի նրանցից քչերն են աշխատում դաշտավարության և անասնապահության մեջ, իսկ ոմանք էլ, այդ թվում Աղունիկ Սանոսյանը, բրիգադավար-հովիվներ Տիգրան Սանոսյանը, Լևոն Աղջոյանը և ուրիշներ, չեն ապահովում իրենց ավանգարդային դերը արտադրության մեջ:

Խախտելով ՍՄԿԿ կանոնադրության պահանջները, կուսակազմակերպությունը սիստեմատիկաբար չի հրավիրել կուսժողովներ և կուսբյուրոյի նիստեր, օրակարգի հարցերը չի նախապատրաստել, որի հետևանքով կոմունիստների մի մասը ակտիվորեն չի մասնակցել հարցերի քննարկմանը, իսկ ոմանք էլ անհարգելի պատճառներով բացակայել են ժողովներից: Կուսբյուրոն բավարար ուշադրություն չի նվիրել կոմունիստներին աշխատանքի նկատմամբ բարձր պատասխանատվության և թերությունների նկատմամբ անհանդուրժողականության ոգով դաստիարակելուն, քննադատության ու ինքնաքննադատության ծավալմանը: Առանձին կոմունիստներ, օգտվելով այս ամենից (Վ. Գինոսյան, Վ. Ծառուկյան, Ս. Աղջոյան, Վ. Թորոսյան, Ս. Պողոսյան, Հ. Սանոսյան և Կ. Մղդեսյան) խախտում են կուսակցական և աշխատանքային կարգապահությունը, խուսափում հանրօգուտ աշխատանքից և, կտրվելով կուսակցական կյանքից, եկամտի հեշտ աղբյուրներ են որոնում հանրապետությունից դուրս վայրերում: Սակայն անհանդուրժելի այս վիճակը բոլորովին չի անհանգստացրել սկզբնական կուսակազմակերպությանը:

Կուսակազմակերպությունը անուշադրության է մատնել սոցիալիստական մրցությանը: Տարեսկզբին ստանձնած պարտավորությունները հաստատելուց հետո կուսբյուրոն ոչ մի անգամ չի անդրադարձել սոցմրցության հարցին, և այսպիսով սոցմրցությունը կրել է ձևական բնույթ:

Կուսակազմակերպության տեսադաշտից վրիպել է նաև կոմունիստների քաղաքական ուսուցման խնդիրը: Կուսակրթության սիստեմի անցած ուսումնական տարում անկանոն է դրծել քաղդպրոցը, ունկնդիրներից շատերը հաճախ բացակայել են պարապմունքներից, դեպքից-դեպք են կազմակերպվել դասախոսություններ, «Հարվածային» պատի թերթը լույս է տեսել մեծ ուշացումներով: Կուսակազմակերպությունն այժմ էլ անբավարար աշխատանք է կատարում ՍՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումի որոշումը կենսագործելու, կուսակցական փաստաթղթերի փոխանակումը նախապատրաստելու ուղղությամբ:

Այս բոլորից հետո զարմանք է պատճառում այն, որ հաշվետու - ընտրական ժողովում ո՛չ կուսբյուրոյի քարտուղար Գ. Գրիգորյանը, ո՛չ էլ ելույթ ունեցող կոմունիստները առողջ քննադատությամբ չբացահայտեցին նշված թերությունները:

Կոլտնտեսության նորընտիր կուսբյուրոն պետք է անհրաժեշտ հետևություններ անի և քաղաքական-դաստիարակչական աշխատանքի ծավալմամբ զարգացնի կոմունիստների ակտիվությունն ու ստեղծարար նախաձեռնությունը, բարձրացնի կուսակազմակերպության մարտունակությունը և աշխատավորների ուժերն ուղղի կոլտնտեսության առջև դրված խնդիրների հաջող կատարմանը:

19 դեկտեմբերի

1973

ԲՈԼՈՐ ՃՅՈՒՂԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ԵԿԱՄՏԱԲԵՐ

Ախալքալաքի շրջանի Կորիս գյուղի կոլտնտեսության հաշվետու-ընտրական ժողովում կոլտնտեսության վարչության նախագահ Ա. Մակարյանի զեկուցումից երևաց, որ անցյալ տարի կոլտնտեսությունը որոշ հաջողություններ է ձեռք բերել գյուղատնտեսական կուլտուրաների, մասնավորապես կարտոֆիլի արտադրության ավելացման գործում: Տնտեսությունը 95 հեկտար կարտոֆիլի պլանտացիաների ամեն մի հեկտարից պլանի 145-ի, պարտավորության 150-ի դիմաց ստացել է 174,2 ցենտներ միջին բերք և միայն այդ ճյուղից ստացել է 147.400 ռուբլու եկամուտ, այսինքն այնքան, որքան եկամուտ են բերել մյուս ճյուղերը միասին վերցրած:

Կոլտնտեսականները լրջորեն են նախապատրաստվում առաջիկա գարնանացանին: Կատարված է 420 հեկտար ցրտահերկ, նորոգված են տրակտորներն ու կցովի գործիքները, մաքրված ու ցանքային կոնդիցիայի հասցված հացահատիկայինների, խոտաբույսերի, կարտոֆիլի սերմացուն:

Սակայն կոլտնտվարչության հաշվետվությունից և կոլտնտեսականների ելույթներից երևաց, որ այստեղ տեղ են գտել լուրջ թերություններ: Թերակատարվել են հացահատիկի, խոտաբույսերի, սիլոսային կուլտուրաների բերքատվության առաջադրանքները:

Բայց ամենալուրջ թերությունը անասնապահության խիստ ետ մնալն է: Կոլտնտեսությունը շարունակ թերակատարում է անասունների գլխաքանակի ավելացման առաջադրանքները: Մոտ 1.400 հեկտար հողահանդ և 308 տնտեսություն ունեցող այս գյուղի կոլտնտեսությունը պահում է միայն 369 խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում՝ 80 կով, 1.288 մանր եղջերավոր անասուն, 66 խոզ:

Ցածր է անասունների մթերատվությունը: Յուրաքանչյուր կովի կաթնատվությունը 1.500 և ամեն մի ոչխարի բրդատվությունը 1,9 կիլոգրամից չի անցնում: Անցած տարի յուրաքանչյուր 100 մաքուց ստացվել է ընդամենը 79 գառ և մեկ մերուկից՝ 6 խոճկոր:

Ավելի վատ է վիճակը մսի արտադրության գործում: Այստեղ անուշադրության է մատնված անասունների բուծումն ու գիրացումը: 1972 թվականին առանց գիրացնելու պետությանն է վաճառվել յուրաքանչյուրը 196 կիլոգրամ միջին քաշով 2-3 տարեկան հասակի 16 խոշոր և 33-ական կիլոգրամ միջին քաշով 321 մանր եղջերավոր անասուն: Տնտեսությունը նախատեսված 400-ի դիմաց արտադրեց ընդամենը 249 ցենտներ միս:

Ահա թե ինչու պետությանը միս վաճառելու առաջադրանքը «կատարելու» համար կոլտնտվարչությունը դիմել է ավելի հեշտ միջոցի՝ խոտանել և մթերական է հանձնել 4 կով և երկու ցուլ:

Անասնապահական մթերքների արտադրության ցածր լինելու մյուս պատճառն էլ վատ խնամքի և կերակրման հետևանքով առաջացող անկումներն ու հարկադիր մորթն է: Միայն անցած տարում կորուստի է մատնվել 22 խոշոր և 226 մանր եղջերավոր անասուն, 6 խոզ:

Այս բոլորից հետո պարզ է, թե ինչու կոլտնտեսության անասնապահական ֆերմաները 32 հազար ռուբլու վնաս ունեն և իրենց վրա են կրում շրջանում ետ մնացողի անպատվաբեր անունը:

Կորխցիները հետևություն չեն արել ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀԱՄԿՄ-ի «1972-1973 թվականների ձմռանը անասնապահական մթերքների արտադրությունն ու մթերումներն ավելացնելու համար անասնապահության աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցություն ծավալելու մասին» որոշումից: Մասուրային շրջանի այս օրերին անասունները ոչ լիարժեք (ի դեպ, նախորդ տարի մեծ չափով թերակատարվեց կոշտ և հյութալի կերերի կուտակման պլանը) են կերակրվում, հոգատար խնամք չի տարվում նրանց նկատմամբ: Ավելին, 1971-1972 թվականներին ծնված հորթերը, որոնք համալրելու են նախիրը, տեղավորված են նեղ վանդակներում, նրանց ներկա վիճակը լավ բան չի խոստանում:

- Կարտոֆիլը դաշտավարության առաջատար ճյուղն է: Երբ ետ ենք նայում, տեսնում ենք, որ այդ արժեքավոր կուլտուրայի արտադրության բնագավառում բավական առաջ ենք անցել,- ասաց իր ելույթում կոլտնտեսական Գ. Ավագյանը: Բայց երբ առաջ ենք նայում, բոլորիս համար պարզ է դառնում, որ մեր հնարավորություններից ետ ենք մնում: Եթե պլանտացիաների մշակության ագրոտեխնիկան, մասնավորապես ոռոգումը բարձր մակարդակով կատարենք, հեկտարից կստանանք 220-230 ցենտներ բերք: Այդ մասին է խոսում այն փաստը, որ մեր որոշ բրիգադներ գերազանցում են այդ ցուցանիշը, իսկ մյուսները միևնույն պայմաններում ստանում են շատ ավելի քիչ բերք:

- Վերջին տարիներին կոլտնտեսությունը չի կարողանում լուծել կերի, առանձնապես հյութալի կերի անհրաժեշտ պաշար ստեղծելու հարցը,- ասաց կոլտնտեսական Ա. Թոփուզյանը:- Անմշակ թողնելու հետևանքով սիլոսացու արևածաղկի 60 հեկտարանոց դաշտի յուրաքանչյուր հեկտարից նախատեսված 200-ի դիմաց հավաքեցինք և սիլոսացրինք միայն 19 ցենտներ զանգված: Մեզ մոտ եռին պլան է մղված կերային արմատապտուղների մշակությունը: Կար ժամանակ, երբ կերի ճակնդեղ էինք մշակում և հիանալի բերք էինք աճեցնում: Սակայն, չգիտես ինչու, այդ էժան ու օգտակար կուլտուրայի մշակությունը հանվեց ցանքաշրջանառությունից:

Կոլտնտեսական Վ. Օրջայանը, կթվորուհի Ա. Ափոզյանը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Գ. Բասենցյանը, ոչխարաբուծական և կաթնապրանքային ֆերմաների վարիչներ Խ. Թոփուզյանը, Մ. Եփրիկյանը նույնպես խոսեցին անասնապահության ետ մնալու պատճառների մասին:

Հաշվետու-ընտրական ժողովում ամբողջ սրությամբ դրվեց աշխատանքային կարգապահության հարցը: Ելույթ ունեցողներ կոլտնտեսական Վ. Աթանյանը, դյուղատնտես Շ. Իրիցյանը, կուսակազմակերպության քարտուղար Ռ. Մինասյանը նշեցին, որ կոլտնտեսությունում ցածր է աշխատանքային կարգապահությունը: Կոլտնտեսականներից շատերը լքում են աշխատանքը, ընտանիքը և եկամտի հեշտ աղբյուրներ են որոնում հանրապետությունից դուրս: Անցյալ տարի աշխատունակ 681 կոլտնտեսականից 15-ը ոչ մի օր չի աշխատել:

Ժողովին մասնակցեց և ելույթ ունեցավ ժողովրդական վերահսկողության շրջկոմի նախագահ Մ. Կիրակոսյանը:

Վարչության գործունեության առթիվ ժողովն ընդունեց գործնական միջոցառումներ, ընտրեց կոլտնտվարչության նոր կազմ: Կոլտնտեսության նախագահ վերընտրվեց Ա. Մակարյանը:

10 փետրվարի

ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՒՄԷ ՁԵՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ

Երբ մամուլում տպագրվեց ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀԱՄԿՍ-ի «1972-1973 թվականների ձմռանը անասնապահական մթերքների արտադրությունն ու մթերումները ավելացնելու համար անասնապահության աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցություն ծավալելու մասին» որոշումը, Ախալքալաքի շրջանի կոլտնտեսային ու սովխոզային աշխատավորները, սոցիալիստական բարձր պարտավորություններ ստանձնեցին մսի, կաթի, բրդի արտադրությունն ավելացնելու և դրանց վաճառքի պլանները գերակատարելու համար:

Կուսակցական կազմակերպությունները ժամանակին գլխավորեցին աշխատավորների նախաձեռնությունը և մի շարք միջոցառումներ իրականացրեցին հանրային հոտի հետագա զարգացման ու անասնապահական մթերքների արտադրությունն ավելացնելու համար, և այնտեղ, ուր մրցությունը կազմակերպվեց խելացիորեն, պատշաճ հսկողություն սահմանվեց բոլոր տեղամասերի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նկատմամբ, ձեռք են բերվել առաջին հաջողությունները: Օրջայի կոլտնտեսությունը (նախագահ՝ Ա. Նազարեթյան, կուսակազմակերպության քարտուղար՝ Ժ. Արևյան) ծավալված համամիութենական սոցմրցությունում արդեն ձեռք է բերել առաջին հաջողությունը: Ընթացիկ տարվա անցած տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, այստեղ ավելացել է ինչպես կովերի կաթնատվությունը, այնպես էլ կաթի համախառն արտադրությունը: Ստանձնած պարտավորությունների կա-

տարման գործում որոշ հաջողություն են հասել նաև Դիլիսկայի, Խուլգումոյի կոլտնտեսությունները, Վաչիանի սովխոզը:

Սակայն, ինչպես ցույց տվեց սոցիալիստական մրցության ընթացքը վերահսկող շրջանային շտաբի հերթական նիստը, ոչ ամենուր է սոցիալիստական մրցությունը կրում գործարար բնույթ:

Մի շարք տնտեսությունների ղեկավարներն ու սկզբնական կուսակազմակերպությունները միջոցներ ձեռք չեն առնում աշխատանքը բարելավելու, աշխատողների պատասխանատվությունը բարձրացնելու և տված խոսքը կատարելու համար: Ետ մնացող տնտեսությունների պատճառով է, որ շրջանում ամբողջովին վերցրած, հունվար-փետրվար ամիսներին, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, փուրաժային մեկ կովի կաթնատվությունը նվազել է 21 կիլոգրամով, կաթի համախառն արտադրությունը՝ 1.093 ցենտներով: Հատկապես վատ է դրությունը Կոթելիայի կոլտնտեսությունում (նախագահ՝ Վ. Աշեյաշվիլի, կուսակազմակերպության քարտուղար՝ Վ. Մեսրեսի): Մի՞թե հանդուրժելի է, որ այստեղ տարեցտարի նվազում է կովերի կաթնատվությունը (առ 1-ը մարտի յուրաքանչյուր կովից ստացվել է ընդամենը 21 կիլոգրամ կաթ 17 կիլոգրամով պակաս անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ): Դրությունը բարվոք չէ նաև Խանդոյի կոլտնտեսությունում (նախագահ՝ Վ. Դանիելյան, կուսակազմակերպության քարտուղար՝ Ծ. Թորոսյան): Կոլտնտեսության աշխատավորներին, մասնագետներին պետք է մտահոգի անասունների մթերատվության խիստ նվազումը: Այսպես, օրինակ, ընթացիկ տարվա առաջին երկու ամսում Խուլգումոյի անասնապահները յուրաքանչյուր կովից 137 կիլոգրամ պակաս կաթ են ստացել՝ անցյալ տարվա նույն ժամանակամիջոցում ստացածի համեմատությամբ:

Աշխատանքի վերակառուցում չի նկատվում նաև շրջանի առանձին սովխոզներում (դիրեկտոր՝ Լ. Կարապետյան, կուսակազմակերպության քարտուղար՝ Կ. Մուրադյան) ընթացիկ տարվա փետրվար ամսում, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, 164 ցենտներով պակասել է կաթի համախառն արտադրությունը, 193 ցենտներով Ալաստանի սովխոզում (դիրեկտոր՝ Վ. Հովհաննիսյան, կուսակազմակերպության քարտուղար՝ Պ. Երոյան): Հասկանալի է, որ այդ պայմաններում շրջանն ամբողջապես վերցրած, չէր կարող կատարել պետությանը կաթ վաճառելու պլանպատվերները: Շրջանում 465 ցենտներ կաթ պակաս է մթերվել, քան անցյալ տարվա փետրվարին:

Վերջերս մամուլում հրապարակեցին Ախալքալաքի շրջանի սոցիալիստական պարտավորությունները: Հիշեցնենք, որ ստանձնած պարտավորությունները ստանում են օրենքի ուժ, և բոլորը պատասխանատու են դրանց կատարման համար: Պետք է հուսալ, որ այս տարվա անցած ամիսներին անասնապահության գործում տեղ գտած թերությունների համապատասխան հետևություններ կանեն ինչպես շրջանի ղեկավար մարմինները, այնպես էլ ետ մնացող տնտեսությունների ղեկավարներն ու կուսակազմակերպությունները, գործողության մեջ կդնեն իրենց ունեցած բոլոր հնարավորություն-

ները և կապահովեն ստանձնած պարտավորությունների կատարումը: Դրանով կգնահատվեն յուրաքանչյուր ղեկավարի աշխատանքը, նրա անտեսությունը ղեկավարելու ունակությունները:

22 մարտի

ԱՐԺԱՆԱՑԱՎ ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆԻՆ

Հենց սկզբից ասենք, որ մեր խոսքը Ախալքալաքի շրջանի Դիլիսկայի կոլտնտեսության դաշտավարական N2 բրիգադի ղեկավար Հրանտ Անդրանիկի Քոչատաշյանի մասին է:

... Այդ օրը բոլորը շնորհավորում էին նրան: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների, երկարամյա և բեղմնավոր աշխատանքի համար Հ. Քոչատաշյանը պարգևատրվել էր Լենինի շքանշանով: Համեստ ժպիտը դեմքին, Հրանտը սեղմում է ծանոթների, բարեկամների, աշխատանքային ընկերների ձեռքը. հուզմունքից խոսք չէր գտնում պատասխանելու նրանց սրտաբուխ, անկեղծ շնորհավորանքներին:

Բրիգադի համար ռեկորդային ցուցանիշների տարի հանդիսացավ 1972 թվականը: Նրա անդամների, ինչպես նաև բրիգադ սպասարկող մեխանիզատորներ Լյուդվիգ Դաթրջյանի, Արսեն և Շմավոն Կարախանյանների և մյուսների խնդիրն էր հորելյանական տարում ստեղծել հարուստ հեկտարներ: Նրանց գործադրած ջանքերը փայլուն արդյունք տվեցին: Բրիգադը հացահատիկայինների ամեն մի հեկտարից պլանի 17,5-ի դիմաց ստացավ 22 ցենտներ միջին բերք, բազմամյա խոտաբույսերի հեկտարի բերքատվությունը 30-ի փոխարեն հասցրեց 45 ցենտների, իսկ կարտոֆիլի 21,5 հեկտար պլանտացիաների յուրաքանչյուր հեկտարը առաջադրանքի 123-ի դիմաց տվեց 185 ցենտներ միջին բերք: Առանձին տեղամասերից հեկտարից ստացվեց 230-250 ցենտներ կարտոֆիլ:

Բրիգադի արտադրական այս վերելքը զգալիորեն բարձրացրեց եկամուտները, բարելավեց կոլտնտեսականների բարեկեցությունը: Բավական է ասել, որ բրիգադի անցյալ տարվա դրամական եկամուտը հասավ 83 հազար ռուբլու: Առատորեն վարձատրվում են նրա անդամները: Միայն լրացուցիչ վարձատրության կարգով կոլտնտեսականները ստացան 15 տոննա հացահատիկ, 40 տոննա կարտոֆիլ, մոտ 30 տոննա անասնակեր և այլն: Դաշտավարներից յուրաքանչյուրի աշխատավարձը բանվորական 120 օրում (սեզոնային չորս ամսում) կազմում է ավելի քան 500 ռուբլի:

Այս բոլոր հաջողությունները, ինչ խոսք, բրիգադի բոլոր անդամների, բրիգադը սպասարկող մեխանիզատորների ակնիվ ու ջանասեր աշխատանքի արդյունք են:

Հ. Քոչատաչյանի բրիգադը ունի 320 հեկտար հողատարածություն, ուր մշակվում են 10-ից ավելի տարբեր կուլտուրաներ:

- Երբ հողը ճանաչում ես, հասկանում նրա լեզուն, մշակում ինչպես հարկն է, նա էլ հատուցում է քո աշխատանքը,- ասում է բրիգադավարը:

- Հրանտը պահանջկոտ է, սիրում է, որ ամեն ինչ արվի տեղին ու ժամանակին,- այսպես են ասում նրա մասին կոլտնտեսության ղեկավարները:

Կոմունիստ բրիգադավարը գյուղում աչքի է ընկնում նաև որպես հասարակական ակտիվ աշխատող: Նա բազմիցս ընտրվել է կոլտնտեսության կուսբյուրոյի անդամ, գյուղական սովետի դեպուտատ, մեծ բարեխղճությամբ ու հաջողությամբ է կատարում բոլոր հանձնարարությունները, որի համար էլ նվաճել է ոչ միայն համագյուղացիների, այլև շրջանի աշխատավորների համակրանքը:

***

Ինչպես գյուղի բոլոր աշխատավորները, նույնպես և Հ. Քոչատաչյանի բրիգադի երկրագործները, ծանոթանալով ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի, ՀԱՄԿՄ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի՝ «1973 թվականին հացահատիկի և հողագործության մյուս մթերքների արտադրությունն ու մթերումները ավելացնելու համար գյուղատնտեսության աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցությունն ծավալելու մասին» որոշմանը, հնգամյակի երրորդ, վճռական տարվա համար նախանշել են նոր, ավելի բարձր բնագծեր: Դեռ անցած տարվա աշնանից նրանք մտահոգվեցին 1973 թվականի բարձր բերքի մասին: Աշնանացանը կատարվեց ցրտահերկ արված, լավ մշակված հողերի վրա: 46 հեկտարի վրա ցանված բարձր բերքատու «անքիատ-1» ցորենը, մինչև ձյան գալը, փարթամորեն աճեց ու թփակալվեց:

Բարձր բերքի «դաղտնիքը» պարարտացված հողերի, տեսակավոր սերմերի, լիարժեք հեկտարների մեջ է: Ահա թե ինչու բրիգադի անդամները մաքրել ու խնամքով պահպանում են գարնանացանի համար անհրաժեշտ բոլոր կուլտուրաների սերմացուն: Լավագույն ժամկետներում է կատարվել 90 հեկտար սառնավարը: Կարտոֆիլին հատկացված 24 հեկտար հողատարածության ամեն մի հեկտարում մտցվել է 800 կիլոգրամ սուպերֆոսֆատ, 30 տոննա օրգանական պարարտանյութ:

Լենինի շքանշանակիր Հրանտ Քոչատաչյանի ղեկավարած դաշտավարական բրիգադի անդամների խոսքը մեկ է՝ 1973 թվականին հեկտարից ստանալ 25 ցենտներ հացահատիկ, 200 ցենտներ կարտոֆիլ, 48 ցենտներ բազմամյա խոտարույսեր:

27 մարտի

ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔ

Բազմամարդ էր Ախալքալաքի շրջանային կինոթատրոնի ընդարձակ դահլիճը: Շրջանի բոլոր կոլտնտեսություններից ու սովխոզներից այստեղ էին հավաքվել առաջավոր մեխանիզատորները իրենց անցյալ տարվա աշխատանքները հանրագումարելու, հնգամյակի երրորդ տարվա սոցիալիստական նոր պարտավորություններ ստանձնելու համար:

Զեկուցում է շրջսովետի գործկոմի գյուղատնտեսության վարչության պետ Մ. Ալելիշվիլին: Զեկուցողը, ինչպես նաև ելույթ ունեցողները դրականը նշելու հետ միաժամանակ խոսեցին նաև մեխանիզատորների աշխատանքում դեռևս տեղ գտած թերություններից, առանձին տնտեսություններում դաշտավարության անբավարար մեքենայացման մասին:

Մասնավորապես նշվեց, որ հսկողության բացակայության պատճառով հողի նախացանքային մշակումը, հատկապես վարի ագրոտեխնիկան խախտվում է Զունչխայի, Կոթելիայի, Արագվայի, Աբուլի կոլտնտեսություններում, Իխտիլայի, Կարզախի, Կաջոյի, Ալաստանի սովխոզներում և այլ տնտեսություններում: Դեռևս լուրջ ուշադրություն չի նվիրվում հացահատիկայինների և կերաբույսերի ցանքը շարքացանով կատարելուն Սուլդայի, Ալաստանի սովխոզներում, Բեժանոյի, Աբուլի կոլտնտեսություններում և այլն: Շրջանի ոչ մի տնտեսությունում կոմպլեքսային մեքենայացման չի ենթարկվել կարտոֆիլի մշակումը: Խորհրդակցությունում ելույթ ունեցավ և նրա աշխատանքն ամփոփեց կուսշրջկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Պետրոսյանը:

Մեխանիզատորների հավաքի մասնակիցները, մտնելով համամիութենական մրցության մեջ և վերանայելով իրենց հնարավորությունները, ստանձնեցին նոր բարձր պարտավորություններ: Նրանք որոշեցին 10 հազար հեկտար գարնանացան կուլտուրաների ցանքը կատարել մեքենաների միջոցով աշխատանքային 12 օրում, ագրոտեխնիկական բարձր մակարդակով, 2.870 հեկտար կարտոֆիլի պլանտացիաների 500 հեկտարի աշխատանքները ենթարկել կոմպլեքսային մեքենայացման: Դիլիսկա, Օրջա, Խանդո, Բարալեթ գյուղերի կոլտնտեսությունների, Հոկամի, Վաչիանի, Կարզախի, Կարտիկամի սովխոզների մեխանիզատորները խոստանում են կարտոֆիլի մշակման հիմնական աշխատանքները ամբողջությամբ կատարել մեքենաների օգնությամբ: Ընթացիկ տարում յուրացնել 100 հեկտար խամ ու խոպան հող, քարերից ու քարակույտերից մաքրել 4.500 հեկտար հողատարածություն, մակերեսային բարելավման ենթարկել 200 հեկտար արոտավայր: Մեկ հեկտար պայմանական վարի ինք-

նարժեքն իջեցնել 10 տոկոսով, երեք տոկոսով խնայել ծախսվող վառելանյութերը և 4 տոկոսով՝ պահեստամասերը:

19 ապրիլի

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՌ ԿԱՆ

Ուղեցույց ունենալով գաղափարական հարցերի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի ցուցումները, իրենց գործունեությունը վերակառուցելով կուսակցության XXIV համագումարի պահանջներին համապատասխան, Ախալքալաքի շրջանի շատ սկզբնական կուսակազմակերպություններ անցյալ ուսումնական տարում զգալի աշխատանք կատարեցին կոմունիստների ու ակտիվիստների գաղափարատեսական մակարդակը բարձրացնելու համար:

Լավ արդյունքների հասան և ուսումնական տարին հաջողությամբ ավարտեցին Դիլիսկայի, Մաջադիայի, Արագվայի, Բուռնաշևթի կոլտնտեսությունների, Վաչիանի սովխոզի, գարեջրի գործարանի և այլ կուսակցական կազմակերպությունները: Դրանց առընթեր գործող սեմինարներում, քաղդպրոցներում պարապմունքները տեղի ունեցան գաղափարական բարձր մակարդակով, բարձրացավ ունկնդիրների ակտիվությունը:

Սակայն նախորդ ուսումնական տարում կուսակցական կրթության սիստեմում կային մի շարք թերություններ: Պահանջկոտության և վերահսկողության բացակայության հետևանքով Սուլդայի, Կաջոյի սովխոզների, Բարալեթի, Կոթելիայի, Բեժանոյի կոլտնտեսությունների, կապի հանգույցի, ավտոտրանսպորտային ձեռնարկության սկզբնական կուսակազմակերպություններում խախտվել էր պարապմունքների անցկացման գրաֆիկը, ուսուցումը տեղի էր ունենում գաղափարական ցածր մակարդակով, չէր ապահովվել ունկնդիրների ակտիվ մասնակցությունը թեմաների քննարկմանը: Առանձին տեղերում դեռևս չի հաղթահարվել ձևականությունը քաղաքական ուսուցման մեջ, ուսումնասիրվող թեմաները չեն կապվում կոմունիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ:

Շրջանի կուսակցական կազմակերպություններն այժմ նախապատրաստական լայն աշխատանք են կատարում անցյալ տարվա սխալները չկրկնելու, կոմունիստների քաղաքական ուսուցումը հաջող կազմակերպելու համար:

Առաջիկա ուսումնական տարում շուրջ 4.500 մարդ, այդ թվում 2.900 կոմունիստներ սովորելու են կուսակցական և տնտեսագիտական ուսուցման տարբեր օղակներում: Կոմպլեկտավորվել են քաղդպրոցները և սեմինարները: Կուսշրջկոմը մշտապես հոգ է տանում պրոպագանդիստական կադրերի ընտրության, պատրաստման

ու վերապատրաստման մասին: Նոր ուսումնական տարում աշխատելու են 189 պրոպագանդիստներ, որոնցից 32-ը առաջ են քաշվել այս տարի, 180-ն ունի բարձրագույն կրթություն, մեծ մասը՝ պրոպագանդիստական աշխատանքի հարուստ փորձ: Պրոպագանդիստներին օգնություն ցույց տալու նպատակով քաղլուսկաբինետի գրադարանը հարստացվել է քաղաքական նոր գրականությամբ:

Պրոպագանդիստներին մեթոդական օգնություն ցույց տալու, նրանց աշխատանքի փորձն ընդհանրացնելու նպատակով շրջկոմը քաղլուսկաբինետին կից ստեղծել է ութ հոգուց բաղկացած մեթոդական խորհուրդ, հաստատել պրոպագանդիստների սեմինարների ղեկավարներ: Վերջիններս լինելու են նաև տեղերում, օգնություն են ցույց տալու պրոպագանդիստներին և կուսկազմակերպություններին պարապմունքները գաղափարական բարձր մակարդակով անցկացնելու գործում:

Շրջկոմի ուշադրության կենտրոնումն է նաև մարքսիզմ-լենինիզմի տեսությունն ինքնուրույն ուսումնասիրողներին օգնելու հարցը: Ինքնուրույն պարապելու են 190 կոմունիստներ: Առանձնացված կոնսուլտանտների համար կկազմակերպվեն հրահանգչական, մեթոդական սեմինար-խորհրդակցություններ: Ընթացիկ ուսումնական տարում մոտ 4.000 կոմերիտականներ և երիտասարդներ կուսումնասիրեն Վ. Ի. Լենինի կենսագրությունը, քաղաքական գիտելիքների, մարքս-լենինյան փիլիսոփայության հիմունքները, նրանց համար զրույցներ կկազմակերպվեն կուսակցության, մեր երկրի ներքին և արտաքին կյանքի կարևորագույն իրադարձությունների շուրջը:

Սակայն կուսկրթության սիստեմի նոր ուսումնական տարվա նախապատրաստության գործում դեռ կան թերություններ: Հոկամի, Ալաստանի, Կարտիկամի սովխոզների կուսկազմակերպությունները մինչև օրս չեն կազմել ղեկավար աշխատողների տնտեսագիտական ուսուցման հեռանկարային պլաններում չեն կոմպլեկտավորել համապատասխան դպրոցներ: Տնտեսագիտական ուսուցման օղակները դեռևս լրիվ ապահովված չեն մասնագետ պրոպագանդիստներով: Քաղուսուցման շատ օղակներ չունեն հայերեն լեզվով գրականություն, որը բացասաբար կանդրադառնա ուսման որակի վրա:

Ախալքալաքի կուսշրջկոմը և սկզբնական կուսկազմակերպությունները կոնկրետ միջոցների պետք է դիմեն նշված թերությունները վերացնելու, նոր ուսումնական տարին հաջողությամբ անցկացնելու համար:

22 ապրիլի

ԳՈՐԾԻՄԱՑ ԱՇԽԱՏՈՂԸ
[Սկրտիչ Կարախանյան]

Շուրջ 15 տարի է, ինչ Դիլիսկայի (Ախալքալաքի շրջան) կոլտնտեսության հաշվապահությունը վարում է Մկրտիչ Կարախանյանը: Այս խոշոր և բազմաճյուղ տնտեսության հաշվապահության աշխատողների գործը այնքան էլ հեշտ չէ: Նրանք ամեն օր գործ ունեն 25-ից ավելի գլխավոր հաշիվների հետ: Մկրտիչը իր օգնականներ Զ. Գաբրիելյանի, Հ. Գրիգորյանի հետ շատ ջանքեր է թափում, որպեսզի հաշվային աշխատանքները գտնվեն ամուր հիմքերի վրա: Գլխավոր հաշվապահն ամեն տարի խնամքով կազմում է կոլտնտեսության արտադրական-ֆինանսական պլանը և բոլոր կոլտնտեսականների հետ միասին պայքարում, որպեսզի յուրաքանչյուր բրիգադ, ֆերմա կատարի իր առաջադրանքները: Նրա ղեկավարությամբ տարվա սկզբից վերանայվում ու սահմանվում են արտադրական նորմաների, վարձատրության չափը և այլն:

Հաշվապահ Մ. Կարախանյանը տեխնիկական ու կազմակերպական լայն օգնություն է ցույց տալիս դաշտավարական, մեխանիզատորական բրիգադներին, անասնապահական ֆերմաներին: Նա կազմում է նրանց արտադրական պլանները և վերահսկում, որ ճշտորեն կատարվի սկզբնական հաշվառումը, հաշվապահությանը ժամանակին ներկայացվեն օրվա կատարած աշխատանքի արդյունքները, կաթի ստացման ու ծախսման հաշվետվությունը: Այս բոլորը բարձրացնում է ֆերմաների վարիչների, բրիգադավարների, մասնագետների պատասխանատվությունը:

Եթե փորձենք իմանալ տնտեսության վերելքը ընդհանրացնող թվերը, (նույնիսկ արտադրական բոլոր ճյուղերինը առանձին-առանձին ըստ տարիների), գործին տեղյակ հաշվապահը չի դիմի գրքերին ու հաշվեմատյաններին. նա բանավոր կասի, որ կոլտնտեսության դրամական եկամուտները 1960 թվականի 275 հազարի դիմաց այժմ հասնում են 925 հազար ռուբլու, վերջին տասնամյակում կոլտնտեսության անբաժանելի ֆոնդը աճել է 859 հազար ռուբլով, որ 1972 թվականին կոլտնտեսությունը մոտ 200 հազար ռուբլու եկամուտ է ստացել և այլն:

- Մեր գլխավոր հաշվապահը իր գործը չի համարում միայն թվերն անգիր իմանալն ու հաշիվները մաքուր պահելը,- ասում է կոլտնտվարչության նախագահ Հ. Գրիգորյանը,- մեկ էլ տեսար եկավ, թե այսքան եկամուտ է կուտակվել, եկեք ավանս բաժանենք, հավելյալ վարձատրություն տանք, կամ էլ այս կամ այն մթերքի ինքնարժեքը բարձրացել է, հարկավոր է կրճատել ծախսումները: Հաշվային աշխատանքների և հաշվառման ճիշտ դրվածքի շնորհիվ կոլտնտեսությունում չկան ֆինանսական կարգապահության խախտումներ, կրճատվել են դեբիտորական պարտքերը և այլն:

Կոմունիստ Մ. Կարախանյանը միաժամանակ ակտիվ հասարակական աշխատող է: Բազմիցս գլխավորել է կոլտնտեսային կու-

սակցական կազմակերպության աշխատանքը: Այժմ վարչության անդամ է, գյուղական սովետի դեպուտատ, ղեկավարում է կուսակազմակերպության քաղինֆորմատորների խումբը:

Այս բոլորի համար է, որ Մկրտիչ Արտեմի Կարախանյանը գյուղում մեծ հեղինակություն է վայելում: Կոլտնտեսականները հարգում են նրան, հաշվի նստում հետը:

30 ապրիլի

ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՎԱՐՊԵՏԸ
[Աշոտ Նորվարդյան]

Աշոտ Նորվարդյանը Ախալքալաքի շրջանի Բուռնաշեթ գյուղի կոլտնտեսության առաջավոր կարտոֆիլագործներից է: Նա ամեն տարի իր մշակած ցանքերից բարձր բերք է հավաքում: Անցյալ տարի այն բրիգադը, որի անդամն է Նորվարդյանը, ամեն մի հեկտարից ստացավ 267 ցենտներ կարտոֆիլ, իսկ ինքը Աշոտը իր մշակած մեկ հեկտար պլանտացիայից հավաքեց 310 ցենտներ կարտոֆիլ: Նրա մշակած մեկ հեկտարը կոլտնտեսությանը տվեց 8.100 ռուբլու եկամուտ, այդ թվում 3.200 ռուբլու մաքուր շահույթ:

Առաջավոր կարտոֆիլագործը այս տարի մշակելու է 1.2 հեկտար կարտոֆիլի պլանտացիա և պարտավորվել է հեկտարի հաշվով ստանալ 320 ցենտներ բերք: Ա. Նորվարդյանը այսօր Թբիլիսիում մասնակցում է մայիսմեկյան շքերթին:

1 մայիսի

ԱՎԵԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

ՍՄԿԿ XXIV համագումարը խնդիր դրեց բարձրացնել արհմիությունների դերը, ուժեղացնել նրանց գործունեությունը ոչ միայն արտադրության կառավարման գործում աշխատավորներին ներգրավելու ուղղությամբ, այլև մոտիկից զբաղվել նրանց կուլտուր-կենցաղային հարցերով:

Այս կարևոր խնդիրը կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ, նրա օգնությամբ ու աջակցությամբ հաջողությամբ է կատարում Կարտիկամի (Ախալքալաքի շրջան) սովխոզի արհմիութենական կազմակերպությունը:

Կարտիկամում շատ բան է փոխվել մարդկանց կյանքում ու կենցաղում: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, փոստի բաժանմունք, բուժտեղամաս, գյուղական խանութ, անասնաբուժական կետ, փուռ և այլն: Բանվորների մեծ մասը կառուցել է անհատական բնակելի տներ: Կարտիկամը հեռախոսային գծերով կապված է շրջկենտրոնի և հարևան գյուղերի հետ: Քիչ են այն տները, որտեղ չկան գազաջախներ, հեռուստացույցեր, լվացքի մեքենաներ, սառնարաններ:

Այս բոլորը լավ է, սակայն սովխոզի բանվոր-ծառայողների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման գործում դեռևս կան էական թերություններ, որոնց վերացման վրա էլ իր ուշադրությունը բևեռել է տեղի արհմիութենական կազմակերպությունը:

Կարտիկամում տարիներ առաջ կառուցված բաղնիքը երբեքդ տարին է չէր աշխատում: Գյուղի ավելի քան 2.200 բնակիչների կենցաղային այս շատ կարևոր օբյեկտը գործի դնելու պահանջը չէր լուծվում: Արհմիութենական կազմակերպության նախաձեռնությամբ, սովխոզի դիրեկցիայի և գյուղսովետի աջակցությամբ բաղնիքի շենքը կապիտալ վերանորոգման ենթարկվեց և մոտ օրերս շահագործման կհանձնվի: Շուտով կավարտվեն Կուլիկամի տեղամասի գրասենյակի, բուժկետի և դրադարանի շենքերի հիմնական նորոգումները: Այս գործում ևս արհկազմակերպությունը ցուցաբերեց իր միջամտությունը:

Զմռան առաջին ամիսներին Կարտիկամի և Բավրայի տեղամասերում անբավարար էր կազմակերպված կուլտուր-լուսավորական աշխատանքը: Կարտիկամի գրադարանը չէր տաքացվում, Բավրայում գրադարանը հաճախ փակ էր մնում:

Գյուղական սովետի կուլտուր-կենցաղային հանձնաժողովի հետ արհմիութենական կազմակերպությունը զբաղվեց գրադարանների աշխատանքի բարելավմամբ: Բավրայում գրադարանի նոր վարիչ նշանակվեց, իսկ Կարտիկամի գրադարանի աշխատանքի համար ստեղծվեցին նորմալ պայմաններ: Կուլտուր-լուսավորական այս օբյեկտներում այժմ վիճակն այլ է: Այստեղ հաճախ են կազմակերպվում գրքերի ընթերցումներ, զրույցներ, զեկուցումներ: Գրադարանի աշխատողներն ու ակտիվը հաճախ լինում են սովխոզի ֆերմաներում, զրուցում են անասնապահների հետ, կազմակերպում նրանց սոցիալիստական մրցությունը, մասսայականացնում առաջավորների աշխատանքի փորձը:

Կարտիկամում և սովխոզի մյուս գյուղերում հարցեր էլ կան, որոնք չեն կարող լուծվել առանց շրջանային և վերադաս մարմինների օժանդակության և միջամտության: Կարտիկամ գյուղում անբավարար է կազմակերպված բանվորների և ծառայողների կինոսպասարկումը միայն այն պատճառով, որ շրջանի այս մեծ գյուղը չունի ակումբի շենք:

Գյուղի բնակիչները զրկված են կենցաղսպասարկման լայն հնարավորություններից:

Նշված թերությունները շտկելու մասին վերադաս մարմիններին հասցեագրված սովխոզի դիրեկցիայի, արհմիութենական և մյուս կազմակերպությունների բազմաթիվ բողոքները անհետևանք են մնացել:

Կարտիկամի անասնապահական սովխոզի արհմիութենական կազմակերպությունը (տեղկոմի նախագահ՝ Ս. Խոջանյան) սովխոզի դիրեկցիայի և համապատասխան զեկավար մարմինների օգնությամբ պետք է ավելի մոտիկից զբաղվի բանվոր-ծառայողների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման հարցերով:

8 մայիսի

ՓՈԽԱՆՑԻԿԸ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՆԵՐԻՆ

Ախալքալաքի շրջանի գյուղատնտեսության աշխատողները անցյալ տարի լուրջ հաջողությունների հասան կարտոֆիլագործության զարգացման բնագավառում: Չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, նրանք 2.646 հեկտար պլանտացիաների յուրաքանչյուր հեկտարից ստացան 117 ցենտներ կարտոֆիլի միջին բերք: Ավելի բարձր ցուցանիշների հասան Բուռնաշեթի, Դիլիսկայի, Օրջայի, Ղադոյի, Արագվայի կոլտնտեսությունները, Վաչիանի, Հոկամի, Սուլդայի սովխոզները, ուր կարտոֆիլի հեկտարի բերքատվությունը կազմեց 179-261 ցենտներ:

Կարտոֆիլի բարձր բերքը շրջանին հնարավորություն տվեց պլանի 13.300-ի, պարտավորություն 14.000-ի դիմաց մթերակայան հանձնել 18.038 տոննա բարձրորակ կարտոֆիլ:

Կարտոֆիլագործները լավ են աշխատում նաև այս տարի: 2.856 հեկտար կարտոֆիլի ցանքը կատարվեց ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում: Այժմ մեծ աշխատանք է տարվում պլանտացիաները լավ մշակելու, բերքահավաքին նախապատրաստվելու համար:

Անցյալ տարվա ձեռք բերած բարձր ցուցանիշներով շրջանի կարտոֆիլագործները հաղթող ճանաչվեցին սոցիալիստական մրցությունում և նվաճեցին Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի և արհմիությունների հանրապետական խորհրդի փոխանցիկ կարմիր դրոշը:

Օրերս Ախալքալաքի կուսշրջկոմի դահլիճում կայացավ փոխանցիկ կարմիր դրոշի հանձնմանը նվիրված հանդիսավոր ժողով, որին մասնակցում էին առաջավոր կարտոֆիլագործներ, մեխանիզատորներ, կուսակցական, սովետական աշխատողներ:

Հանդիսավոր ժողովը ներածական խոսքով բացեց Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ս. Պետրոսյանը:

Զայնը տրվում է Վրացական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստր Ի. Ռթվելիաշվիլուն: Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, վրացական հանրապետական խորհրդի անունից նա ջերմորեն շնորհավորեց շրջանի կարտոֆիլագործներին բարձր պարգևի առթիվ և նորանոր հաջողություններ ցանկացավ հնգամյակի վճռական տարվա առաջադրանքները անթերի կատարելու գործում: Ներկաների բուռն ծափահարությունների ներքո նա փոխանցիկ դրոշը հանձնեց մրցության հաղթողներին:

Կրզախի սովխոզի կուսկազմակերպության քարտուղար Կ. Մուրադյանը, Վաչիանի, Իստիլայի, Հոկամի սովխոզների դիրեկտորներ Մ. Ղարիբյանը, Ս. Քերոբյանը, Օ. Ալեքիշվիլին, Բուռնաշեթի, Ղադոյի, Խանդոյի, Արագվայի, Դիլիսկայի, Օրջայի, Մաջաղիայի կոլտնտեսությունների նախագահներ Վ. Քոչոյանը, Ե. Մուրադյանը, Վ. Դանիելյանը, Գ. Թաթարյանը, Հ. Գրիգորյանը, Ա. Մարտի-

ռոյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ իրենց ելույթներում ջերմ շնորհակալություն հայտնեցին Վրաստանի կոմկուսի Կենտկոմին, հանրապետության կառավարությանը շրջանի կարտոֆիլագործների աշխատանքը, բարձր գնահատելու համար, խոստացան այսուհետև էլ ջանք ու եռանդ չխնայել ստանձնած պարտավորությունները կատարելու, գյուղատնտեսական տարին արտադրական նորանոր նվաճումներով եզրափակելու համար:

Շրջանային հավաքի մասնակիցները մրցության հրավիրեցին Ծալկայի շրջանի կարտոֆիլագործներին: Վերանայելով իրենց հնարավորությունները, նրանք ստանձնեցին սոցիալիստական նոր պարտավորություններ, խոստացան կարտոֆիլի պլանտացիաների յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունը հասցնել 140 ցենտների, համախառն բերքը՝ 40 հազար տոննայի, պլան-առաջադրանքի 14 հազարի դիմաց պետությանը հանձնել 19 հազար տոննա կարտոֆիլ, 1974 թվականի սերմացուի համար առանձնացնել 12 հազար տոննա և իբրև անասնակեր՝ 5 հազար տոննա կարտոֆիլ: Դիլիսկայի, Խանդոյի, Օրջայի, Բուռնաշեթի կոլտնտեսությունները, Իստիլայի, Վաչիանի սովխոզները պարտավորվեցին պետությանը հանձնել 1.000-3.000 տոննա կարտոֆիլ:

21 հուլիսի

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Բոգդանովկայի շրջանի Սաթխա գյուղի կոլտնտեսության կուսակցմակերպության հաշվետու-ընտրական ժողովում, որը տեղի ունեցավ անցած տարվա վերջերին, կոմունիստները քննադատության նշանաբանով բացահայտեցին կուսակցական կազմակերպության և նրա բյուրոյի աշխատանքի թերությունները, միջոցառումներ նշեցին դրանք վերացնելու համար:

Կոլտնտեսությունը, ամբողջովին վերցրած, անցյալ տարի չկատարեց գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության պետական առաջադրանքը: Հացահատիկային կուլտուրաների յուրաքանչյուր հեկտարից պլանի 14,5-ի դիմաց այն կազմեց 5 ցենտներ, իսկ կարտոֆիլինը՝ 66 ցենտներ:

Կոմունիստներ Ռ. Դուշուկյանը, Հ. Նանայանը, Խ. Էլբակյանը նշեցին, որ ցածր բերքատվության հիմնական պատճառը հողերի նախացանքային մշակության, ցանքի (գարնանացանը տևել է 2 ամիս), բերքահավաքի ագրոկանոնների անբավարար կիրառումն էր, մեքենայական աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը:

Կոմունիստների առաջարկով ժողովի որոշման մեջ հատուկ կետ մտցվեց այս տարվա գարնանացանին համակողմանիորեն նախապատրաստվելու մասին: Կուսբյուրոն (քարտուղար՝ Հ. Նանայան) հետևողական աշխատանք կազմակերպեց այդ որոշումը կենսագոր-

ծելու համար: Ժամանակին լրացվեց սերմերի պակասը, գարնանացանի անհրաժեշտ բոլոր տեսակի սերմացուն հասցվեց ցանքային կոնդիցիայի, կոմպլեկտավորվեցին դաշտավարական և մեխանիզատորական բրիգադները, գործնական քայլեր կատարվեցին գյուղատնտեսական տեխնիկան նորոգելու, դաշտերը պարարտացնելու ուղղությամբ: Գարնան առաջին իսկ օրերից արագ թափ հաղորդվեց վար ու ցանքին: Կարճ ժամանակում կատարվեց 250 հեկտար խոզնավար, 160 հեկտար կրկնավար, 470 հեկտար տարբեր կուլտուրաների ցանք: Հատկանշական է, որ 5 հեկտար կարտոֆիլ Սաթխայում առաջին անգամ ցանվեց կարտոֆիլացան մեքենաներով:

Կոլտնտեսությունը անասնապահության զարգացման, անասունների մթերատվության բարձրացման մեծ հնարավորություններ ունի: Դրանք խելացիորեն օգտագործելու դեպքում յուրաքանչյուր ֆուրաժային կովից կարելի է ստանալ 2.000 և ավելի կիլոգրամ կաթ: Անցած տարի կաթնապրանքային ֆերման ամեն մի կովից 156 կիլոգրամով պլանային առաջադրանքից պակաս կաթ է կթել, համախառն կաթի արտադրության պլանը թերակատարել է 1.627 ցենտներով: Ա. Նանայանը, Բ. Իսոյանը և ուրիշներ նորընտիր կուսբյուրոյի առջև խնդիր դրեցին լուրջ ուշադրություն դարձնել անասնապահության զարգացմանը, գործնական միջոցներ ձեռնարկել կովերի կաթնատվությունը բարձրացնելու համար: Կոմունիստների այդ պահանջը կատարելու ուղղությամբ ևս կուսբյուրոն որոշակի աշխատանք կատարեց: Ֆերման ամրապնդվել է հմուտ անասնապահ կադրերով, բարելավվել է անասունների խնամքն ու կերակրումը, աշխուժացել է ագիտացիան - մասսայական աշխատանքն անասնապահների շրջանում: Ֆերմայում ստեղծված է կարմիր անկյուն: Ագիտատորները զրույցներ ու զեկուցումներ են կազմակերպում, դրանք սերտորեն կապվով կոլտնտեսության առջև դրված խնդիրների հետ: Կուսկազմակերպությունը իր ձեռքն է վերցրել անասնապահների սոցմրցության կազմակերպման գործը: Այդ ամենի շնորհիվ զգալիորեն ավելացել է կաթի համախառն արտադրությունը:

Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ կուսբյուրոն դեռ կոմունիստների արած բոլոր առաջարկությունները չէ, որ հետևողականորեն կիրառում է կյանքում: Կուսբյուրոյի ուշադրությունից դուրս է մնացել ոչխարաբուծական ֆերման, որը շարունակ վնասով է աշխատում: Վերջին երեք տարում մանր եղջերավոր անասունների անկումներից և հարկադիր մորթից տնտեսությունը կրել է մոտ 600 ցենտներ մսի կորուստ: Միայն անցած տարվա ընթացքում կորստի է մատնվել 906 գլուխ մանր եղջերավոր անասուն: Հուսալի չէ ոչխարաբուծության վիճակը նաև այս տարի: Անցած ամիսներին անկումը կազմել է 1.209 գլուխ մանր եղջերավոր անասուն, այդ թվում 314 գառ: Յուրաքանչյուր 100 մաքուց միջին թվով ստացվել է միայն 58,1 գառ:

Կուսբյուրոն անհրաժեշտ ղեկավարություն և օգնություն ցույց չի տալիս կոմերիտական կազմակերպությանը: Անմիխիթար է կոմերիտականների քաղաքական ուսուցման գործը: Քաղուսուցման խմբակի պարապմունքները դեպքից-դեպք են տեղի ունենում, կոմե-

րիտականների մի մասը խուսափում է հանրօգուտ աշխատանքից, նրանցից 12-ը, կարվելով կոմերիտական կյանքից, մեկնել են գյուղից. եկամտի հեշտ աղբյուրներ են որոնում հանրապետությունից դուրս վայրերում:

Միանգամայն անբավարար է շրջանի ամենախոշոր գյուղերից մեկի (468 տնտեսություն, 2460 բնակիչ) բնակչության կենցաղսպասարկումը: Գյուղը զրկված է կենցաղսպասարկման լայն հնարավորություններից, չեն գործում կոշիկի, էլեկտրասարքերի վերանորոգման, կարի ատելիոնար արհեստանոցները, բաղնիքը, վարսավիրանոցը, չի կարգավորված բնակիչների ավտոբուսային երթևեկության գործը, չեն կենսագործվում այս և մի շարք այլ հարցերի շուրջը կոմունիստների արած առաջարկությունները:

Սաթխայի կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը և նրա բյուրոն պետք է աշխատեն այնպես, որ կոմունիստների բոլոր քննադատական դիտողություններն ու առաջարկությունները կենսագործվեն կյանքում:

7 օգոստոսի

ՎՃՌԱԿԱՆ ԹԱՓ ՀԱՂՈՐԴԵԼ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆԸ

Ախալքալաքի շրջանի կոլտնտեսություններում և սովխոզներում սկսվել է կերերի կուտակման վճռական շրջանը: Գյուղի աշխատավորները պայքարում են 5.920 տոննա կոշտ կեր (այդ թվում 36.122 տոննա խոտ), 44.535 տոննա հյութալի կեր կուտակելու համար: Ուրախալի է նշել, որ շրջանում կազմակերպված ընթացավ սենաժի պատրաստումը: Պատրաստվել է ավելի քան 8.396 տոննա սենաժ, պլանի 4.250-ի դիմաց: Բարձրորակ և արժեքավոր այս կերի կուտակման առաջադրանքները գլխավորեն գերակատարել են Բարալեթի, Խուլգումոյի, Դիլիսկայի, Օրջայի կոլտնտեսությունները, Կարտիկամի, Վաչիանի սովխոզները և ուրիշ տնտեսություններ:

Կազմակերպված աշխատանքի հիանալի օրինակ են ցույց տալիս Բարալեթի կոլտնտեսականներն ու մեխանիզատորները: Սենաժի պատրաստման պլանն իրացնելուց հետո, նրանք հաջողությամբ առաջ են տանում խոտհունձը: Տրակտորային խոտհնձիչ ագրեգատները անխափան են աշխատեցնում գյուղատնտեսության վաստակավոր աշխատող Գ. Արզումանյանի մեխանիզատորական բրիգադի անդամներ Վ. Ամիրշատյանը, Ս. Արզումանյանը, Ա. Բաքարյանը, Շ. Գվարամաձեն, որոնք օրական 5-ի դիմաց 6,5-7-ական հեկտար մերամյա խոտաբույս են հնձում:

Խոտհնձի աշխատանքներում լավ օրինակ են ցույց տալիս Խուլգումոյի, Ղազոյի, Թոթխայի, Բուռնաշեթի, Օրջայի, Արագվայի կոլտնտեսությունները, Կաջոյի անասնապահական սովխոզը:

Սակայն պետք է ասել, որ շրջանի առանձին տնտեսություններում դանդաղ են ընթանում կերերի կուտակման աշխատանքները, կան նկատելի թերություններ:

Մաջադիայի կոլտնտեսությունում խզում է առաջացել հնձի և խոտի տեղափոխման միջև: Վաղուց է, ինչ ավարտվել է «Դախունդա» և «Զադա» կոչվող 100 հեկտար հողամասերի բազմամյա և միամյա խոտաբույսերի հունձը, բայց կանաչ զանգվածը չի տեղափոխվում փոխադրամիջոցների պակասի պատճառով: Կոլտնտեսության 4 ավտոմեքենաներից միայն մեկն է աշխատում, այն էլ խափանումներով, քանի որ պահեստամասերով ապահովված չէ:

Կորխ գյուղի կոլտնտեսությունում խախտվում են սիլոսի պատրաստման կանոնները: Այստեղ սիլոսի զանգվածը լցվում է այնպիսի խրամատում, որը վերանորոգված և մաքրված չէ: Վարորդները դաշտից բերված կանաչ զանգվածը կշռում են իրենց հայեցողությամբ:

Սակայն սա բոլորը չէ: Անհանդուրժելին այն է, որ գլխացավանքից ազատվելու համար կոլտնտվարչությունը որպես սիլոսի զանգված օգտագործում է մոլախոտերով խեղդված արևածաղկի բույսերը, որոնց սիլոսացումը նախատեսված էր աշնանը: Ըստ երևույթին, Կորխում դեռևս թերագնահատվում է հյութալի կերերի նշանակությունը, և անցյալ տարիների նման կոլտնտեսության ղեկավարները մտադիր են այս տարի էլ ձախողել կովերի կերակրման առաջադրանքը:

Շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները սիլոսի պատրաստման առաջադրանքն աշնանը իրացնելու են սիլոսացու արևածաղկի հաշվին, որի ցանքերը շրջանում հասնում է 2.324 հեկտարի: Սակայն, ցավոք, պետք է նշել, որ արևածաղկի մշակումը ոչ ամենուրեք է օրինակելի կազմակերպված: Անմշակ թողնելու պատճառով Վարևանի, Մաջադիայի, Կոթելիայի կոլտնտեսությունների, Ախալքալաքի անտառանտեսության Ալաստանի սովխոզի և ուրիշ այլ տնտեսություններում արևածաղկի ցանքերը կորել են մոլախոտերի մեջ: Լավ բան չի կարելի ասել նաև 143 հեկտար կերային արմատապտուղների պլանտացիաների մասին, որոնց մշակումը ևս հետին պլան է մղված:

Հանրային հոտը անհրաժեշտ կերերով ապահովելու հարցը այսօր է վճռվում, որի հաջող լուծման համար պահանջվում են մեծ ջանքեր: Ուստի շրջսովետի գործկոմի գյուղատնտեսության վարչությունը, կոլտնտեսություններն ու սովխոզները պետք է վճռական թափ հաղորդեն կերերի կուտակման աշխատանքներին:

30 օգոստոսի

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բոգդանովկայի շրջանի Ջիդրաշեն գյուղի կոլտնտեսությունում դեկտեմբերի 1-ի տվյալներով, նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ, կովերի կաթնատվությունը ավելացել է 190-ական կիլոգրամով, կաթի համախառն արտադրությունը՝ 770 ցենտներով: Ավելացել է մսի արտադրությունը: Որոշ հաջողություններ կան նաև տնտեսության մյուս ճյուղերում, որոնց մասին խոսվեց կուսակազմակերպության հաշվետու-ընտրական ժողովում:

Տարվելով այդ հաջողությունները թվարկելով, կուսակազմակերպության քարտուղար Վ. Վալադյանի հաշվետու-զեկուցման մեջ շատ քիչ խոսվեց տնտեսության արագ վերելքն արգելակող թերությունների մասին: Բանն այն է, որ տնտեսությունում շատ են թերությունները ու բացերը: Անասնապահական ֆերմաները շահութաբեր չեն, նույնիսկ չեն արդարացնում իրենց վրա կատարած ծախսումները: Մեծ թիվ են կազմում անասունների անկումները, հարկադիր մորթն ու ստերջությունը: Թերակատարվում են կարտոֆիլի բերքատվության առաջադրանքները:

Հաշվետու ժողովը նշեց, որ այս թերությունները չէին լինի, եթե կուսակազմակերպությունը ճշտորեն իրականացներ կոլտնտեսության գործունեության նկատմամբ վերահսկողության իր իրավունքը և վճռական պայքար կազմակերպեր թերությունները վերացնելու համար:

Կոմունիստներ Բ. Ուսայանը, Բ. Պողոսյանը նշեցին, որ կոլտնտեսության առանձին ճյուղերում արտադրության մակարդակը դեռևս ցածր է և գործը տարվում է հնացած մեթոդներով: Դա հատկապես վերաբերում է անասնապահությանը: Վերջին տարիներին անասունների գլխաքանակը մեծ չափով ավելացել է, բայց մթերատվությունը դեռ ցածր է: Մեկ կովից ստացվում է 1.200-1.300 կիլոգրամ կաթ, յուրաքանչյուր ոչխարից՝ 2 կիլոգրամ բուրդ: Լուրջ աշխատանք չի կատարվում ֆերմաները մշտական կադրերով ապահովելու, անասունների առհմային կազմը բարելավելու, աշխատատար պրոցեսները մեքենայացնելու ուղղությամբ:

Ելույթ ունեցողներից շատերը նշեցին, որ կոլտնտեսությունում տեղ գտած թերությունները մեծ մասամբ բացատրվում են կուսակցական, կազմակերպական և քաղաքական աշխատանքի անբավարար դրվածքով: Ագիտատորները և քաղինֆորմատորները հազվադեպ են անցկացնում զրույցներ ու զեկուցումներ: Հաշվետու ժամանակաշրջանում շատ քիչ դասախոսություններ և զեկուցումներ են կարդացվել: Այդ բանում մեղքի մեծ բաժինը ընկնում է նաև կուսշրջկոմի դասախոսական խմբի վրա:

Ժողովում լուրջ խոսակցություն տեղի ունեցավ այն մասին, որ կուսբյուրոյի տեսադաշտից դուրս են մնացել սոցմրցության կազմակերպման, աշխատանքային կարգապահության ամրապնդման

հարցերը: Տարվա ընթացքում ոչ մի անգամ չի քննարկվել աշխատավորների մեջ սոցիալիստական մրցության ծավալման, սոցպարտավորությունների կատարման ընթացքը: Փաստեր բերվեցին այն մասին, որ առանձին կոմունիստներ (Լ. Բթոյան, Ա. Ուստյան, Ա. Կոբելյան, Կ. Եզեկյան և ուրիշներ) թույլ են տվել կուսակցական և աշխատանքային կարգապահության խախտումներ, ամիսներով լքել են աշխատանքը, բացակայել են կուսժողովներից, չեն մուծել անդամավճար: Մինչդեռ կուսկազմակերպությունն ու նրա բյուրոն կտրուկ միջոցների չեն դիմել նման կոմունիստների հանդեպ:

Հաշվետու-ընտրական ժողովը լուրջ թերություններ բացահայտեց ներկուսակցական աշխատանքում: Ասվեց, որ խախտվում են և ընդհանուր ժողովների հրավիրման ժամկետները: Ժողովներն անց են կացվում սակավ թվով կոմունիստների ներկայությամբ, քննարկվում են հիմնականում ընթացիկ գյուղատնտեսական կամպանիաներին վերաբերող հարցեր. ընդունված որոշումների կատարման վերահսկողությունը թույլ է:

Բացահայտված թերությունները վերացնելու համար ժողովը ընդունեց համապատասխան որոշում, ընտրեց կուսբյուրոյի նոր կազմ ու կուսակցական շրջանային հերթական կոնֆերանսի պատգամավորներ:

11 դեկտեմբերի

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱԿԱՐԴԱԿԻՆ

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի հուլիսյան պլենումում, 1973 թ. առաջին կիսամյակի ժողովրդատնտեսական պլանի ու սոցիալիստական պարտավորությունների կատարման արդյունքների և կուսակցական ու պետական կարգապահության հետագա ամրապնդման, հնգամյակի երրորդ, վճռական տարում սոցիալիստական մրցության արդյունավետության բարձրացման միջոցառումների մասին հարցը քննարկելիս, քննադատական լուրջ դիտողություններ արվեցին մասնավորապես Ախալքալաքի շրջանի կուսակցական կազմակերպության հասցեին:

Վերջերս տեղի ունեցած կուսշրջկոմի պլենումը, որը քննարկում էր Վրաստանի կոմկուսի Կենտկոմի հուլիսյան պլենումի արդյունքները և շրջանի կուսկազմակերպության խնդիրները հարցը, անցավ քննադատության ու ինքնաքննադատության, սոցմրցության կազմակերպման գործում եղած ձևականության, նշված թերությունների վերացման, սկզբնական կուսկազմակերպությունների մարտունակության հետագա բարձրացման, տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում շրջանի առջև դրված խնդիրների անվերապահ կատարման նշանաբանով:

- Բանն այն է,- նշված է կուսշրջկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Պետրոսյանի զեկուցման մեջ,- որ ետ մնացող տնտեսությունների վատ աշխատանքի պատճառով շրջանն ամբողջապես վեր-

ցած 1972-1973 թթ. ամռան շրջանում, նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ, պակաս է իրացրել 1.786 ցենտներ միս և 1.660 ցենտներ կաթ:

Առանձնապես մեծ հաջողություններ չբերեց նաև առաջին կիսամյակը: Եվ եթե, այնուհետև, ասում է զեկուցողը, շարունակենք աշխատել այնպես, ինչպես մինչև օրս, ապա հաղթահարել ստեղծված դրությունը, ապահովել տարվա սկզբին ստանձնած սոցպարտավորությունների կատարումը, որը, ինչ խոսք, շրջանին պատիվ չի բերի:

Ահա թե ինչու, ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցողները, միահամուռ հավանություն տալով Վրաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումի եզրակացություններին և որոշումներին, իրենց ուշադրությունը կենտրոնացրին դեռևս չլուծված խնդիրների վրա, նշեցին, որ կուսակցական-կազմակերպական և քաղաքական աշխատանքի բարելավմամբ, եղած ռեզերվների ավելի լրիվ օգտագործմամբ, կուսակցական, պետական և աշխատանքային կարգապահության հետագա ամրապնդմամբ շրջանի տնտեսությունները ի վիճակի կլինեն հաջողությամբ եզրափակել գյուղատնտեսական տարին:

Չնայած նրան, որ մսի վաճառքի առաջին կիսամյակի առաջադրանքը շրջանը կատարել է 159 տոկոսով, այնուամենայնիվ անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ պետությանը պակաս է տրվել 551 ցենտներ միս: Առաջվա պես մեծ մտահոգություն են պատճառում Զունչիսայի, Թոթխամի կոլտնտեսությունները, Կարզախի սովխոզը, Ալաստանի անտառտնտեսությունը, որոնք միասին վերցրած 576 ցենտներով թերակատարեցին մսի վաճառքի վեց ամսվա առաջադրանքը:

Անասնապահության անբավարար վիճակը բնութագրվում է նաև նրանով, որ մթերվում է ոչ կոնդիցիոն անասուն, որից տնտեսությունները կրում են զգալի վնաս: Այսպես, անցած ամիսներին պետությանը հանձնված 2.985 գլուխ տավարի միջին կենդանի քաշը կազմել է ընդամենը 220-ական կիլոգրամ այն ժամանակ, երբ շրջանների շատ տնտեսություններում այդ ցուցանիշը հասնում է 300 և ավելի կիլոգրամի:

Պլենումում նշվեց տավարի մատղաշի ինտենսիվ բուման մեծ առավելությունները, տնտեսական շահավետությունը: Սակայն կուսակցական կազմակերպությունները, մասնագետները, տնտեսությունների ղեկավարները գործնական շատ քիչ բան են անում այդ առաջավոր մեթոդի մասսայական արմատավորման ուղղությամբ:

Պլենումում նշվեց, որ հատկապես լուրջ մտահոգություն է պատճառում կաթի արտադրության ցածր մակարդակը նախ և առաջ սովխոզներում, որոնք անցյալ տարվա համեմատությամբ պետությանը կաթի հանձնումը նվազեցրել են ավելի քան 3.000 ցենտներով: Դա է պատճառը, որ շրջանը ամբողջապես վերցրած կաթի մթերման վեցամսյա առաջադրանքը կատարեց 89 տոկոսով:

Փաստերը վկայում են, որ այս ուղղությամբ նույնպես շրջանում քիչ բան է արվում: Այլ կերպ ինչով բացատրել, որ 1971 թվականի առաջին կիսամյակի համեմատությամբ ընթացիկ տարվա

նույն ժամանակամիջոցին պետությանը պակաս է հանձնվել 9.342 ցենտներ կաթ:

Պլենումը սովխոզների ղեկավարներից, կուսակցական կազմակերպություններից խիստ կերպով պահանջից լրջորեն զբաղվել անասունների մայրական կազմի բարելավման, գլխաքանակի ավելացման, մթերատվության բարձրացման հարցերով, անհանդուրժելի համարեց այն հանգամանքը, որ կոլտնտեսությունների համեմատությամբ սովխոզներում յուրաքանչյուր ֆուրաժային կովի կաթնատվությունը ցածր է 189 կիլոգրամով: Հենց այդ սովխոզների պատճառով է, որ շրջանը, պլանի համեմատությամբ, հունվար-հունիս ամիսներին պետությանը պակաս է հանձնել ավելի քան 14 հազար ցենտներ կաթ:

ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումը անասնապահության հետագա զարգացման միջոցառումների թվում նշեց նաև ընդհանուր նախիրում կովերի տեսակարար կշռի ավելացման անհրաժեշտությունը: Կուսշրջկոմի պլենումում նշվեց, որ այդ ուղղությամբ ևս շրջանի տնտեսություններում վերջին տարիներին քիչ բան է կատարվել: Բավական է ասել, որ կովերի տեսակարար կշիռը հանրային հոտի ընդհանուր նախիրում կազմում է ընդամենը 28,8 տոկոս, առանձին տնտեսություններում ավելի քիչ, այն ժամանակ, երբ հանրապետության բազմաթիվ առաջավոր սովխոզներում ու կոլտնտեսություններում այդ ցուցանիշը հասնում է 40-45 տոկոսի:

– Անասնապահության ներկա անբավարար վիճակը,- նշվեց պլենումում,- պետք է բացատրել ոչ միայն նրա ցածր կուլտուրայով, այլև նրանով, որ ֆերմաներում ոչ միշտ է լավ կազմակերպվում աշխատանքը, ճիշտ չեն տեղաբաշխվում կադրերը, կուսակցական կազմակերպությունները և տնտեսությունների ղեկավարները ինչպես հարկն է չեն զբաղվում անասնապահական կադրերի դաստիարակմամբ: Կայուն հիմքերի վրա չի դրված կերի կայուն բազա ստեղծելու հարցը:

Պլենումը ամբողջ սրությամբ դրեց գյուղատնտեսական ընթացիկ աշխատանքների հստակ կազմակերպումը, խոտի, ծղոտի, սիլոսի, սենաժի կուտակման պլանների և սոցպարտավորությունների անթերի կատարումը, սկզբնական կուսկազմակերպություններից պահանջեց ուշադրության կենտրոնում պահել անասնապահության զարգացման համար խոշոր նշանակություն ունեցող այդ պրոբլեմը:

– Մենք,- վերջում ասում է զեկուցողը,- լիովին ընդունում ենք Վրաստանի կոմկուսի Կենտկոմի հուլիսյան պլենումում մեր հասցեին արած քննադատությունը նաև այն մասին, որ լրիվ բեռնվածությամբ չեն աշխատում շրջանի արդյունաբերական առանձին ձեռնարկություններ, որ առաջադրված խնդիրներին համապատասխան իր աշխատանքը դեռևս չի վերակառուցել շրջսպառմությունը, և առևտրի դործում եղած կոպիտ խախտումները առաջացնում են աշխատավորների օրինական դժգոհությունը, իսկ ադմինիստրատիվ օրգանները անբավարար են պայքարում այդ խախտումների դեմ: Պլենումում լուրջ խոսակցություն տեղի ունեցավ աշխատանքային ու պետական կարգապահության հետագա ամրապնդման

անհրաժեշտության մասին, ղեկավար կադրերից, բոլոր կոմունիստներից պահանջվեց միշտ լինել իրենց կոչման բարձրության վրա, անողոք պայքար մղել պորտաբույծների, հասարակական կարգ ու կանոնը խախտողների դեմ և աշխատավորների բոլոր ուժերը մոբիլիզացնել շրջանի առջև դրված տնտեսական խնդիրների հաջող կատարմանը:

Մաքերի փոխանակությանը մասնակցեցին, մթերումների պետական վարչության գլխավոր տեսուչ Վ. Գալստյանը, Ղազոյի կոմունիստության նախագահ, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ե. Մուրադյանը, Թբիլիսիի «Իսանի» կոշիկի ֆաբրիկայի Ախալքալաքի ֆիլիալի դիրեկտոր Ս. Բաբայանը, ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը, Հոկամի գյուղսովետի գործկոմի նախագահ Ա. Միքելաձեն, տպարանի դիրեկտոր Դ. Բաղրատունին, գյուղատնտեսության վարչության պետ Մ. Ալելիշվիլին և ուրիշներ, որոնք Վրաստանի կոմկուսի Կենտկոմի հուլիսյան պլենումի որոշումների լույսի տակ կուսշրջկոմից, սկզբնական կուսկազմակերպություններից պահանջեցին անհրաժեշտ հետևություններ անել շրջանի հասցեին արված քննադատությունից, բարելավել կուսակցական-քաղաքական աշխատանքը, միևնույն ժամանակ առաջ քաշեցին մի շարք պրոբլեմներ, որոնց լուծումը կենսական նշանակություն կունենա շրջանի էկոնոմիկայի հետագա զարգացման գործում: Ընկ. Ալելիշվիլին, օրինակ, առաջ քաշեց կարտոֆիլի ցանքերը լրիվ ոռոգելի դարձնելու պրոբլեմը: Դրա լուծումը հնարավորություն կընձեռի այդ կուլտուրայի արտադրությունը շրջանում հասցնել մինչև 75 հազար տոննայի և ամեն տարի պետությանը վաճառել առնվազն 45 հազար տոննա կարտոֆիլ: Այնուհետև պահանջվեց արագացնել մսի կոմբինատի շինարարությունը, որը թույլ կտա անասունների մորթը կատարել տեղում, որի տնտեսական նշանակությունը անվիճելի է:

Պլենումի մասնակիցներին չբավարարեց Կարգախի սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Կ. Մուրադյանի ելույթը, որը տնտեսության անասնապահության անբավարար վիճակը փորձեց բացատրել միայն օբյեկտիվ պատճառներով:

Պլենումի աշխատանքին մասնակցեց և ելույթ ունեցավ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի անդամության թեկնածու Հ. Բլրցյանը:

Պլենումը ընդունեց ընդարձակ որոշում, որն ուղղված է վերոհիշյալ թերությունների վերացմանը, հնգամյակի վճռական տարվա առաջադրանքների և ստանձնած սոցպարտավորությունների կատարմանը:

Ախալքալաքի կուսշրջկոմի XI-XIII պլենումների միջև ընկած ժամանակամիջոցում շրջկոմի բյուրոյի ընդունած որոշումների կատարման ընթացքը՝ պլենումի օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցեց շրջկոմի երկրորդ քարտուղար Թ. Լազարաշվիլին:

1974

ԳՈՆԴՈՒՐԱՑԻՆԵՐԻ ԽՈՍՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

- Աշխատանքը ճիշտ կազմակերպելու գործում, նույնիսկ կլիմայական անբարենպաստ պայմաններում էլ կարելի է լավ արդյունքների հասնել:

Այսպես են ասում Բոգդանովկայի շրջանի Գոնդուրայի անասնապահական սովխոզի աշխատողները, ելնելով իրենց փորձից:

Իրոք, 1973թվականը նպաստավոր տարի չէր: Սակայն սովխոզի դիրեկցիան (դիրեկտոր Ս. Նազարյան), կուսկազմակերպությունը (կոմիտեի քարտուղար Գ. Թադևոսյան) մոբիլիզացրին դաշտավարներին և անասնապահներին ու հասան ցանկալի արդյունքների:

Սովխոզի էկոնոմիկայում մեծ տեղ է գրավում անասնապահությունը: Ֆերմաներում հաշվվում է ավելի քան 3 հազար խոշոր (640-ը կով) և մոտ 10 հազար մանր եղջերավոր (6 հազարը մաքի) անասուններ: Առանձնապես բարձր արդյունքների հասան սովխոզի Մամզարայի և Մեծ Գոնդուրայի բաժանմունքները, ուր ժամկետից շուտ կատարվեց կաթի առաջադրանքը: Ակտիվ աշխատանքով հատկապես աչքի ընկան անասնապահներ Եղիշե Մանուկյանը, Շուշանիկ Մանասյանը, Ելենա Ադամյանը, Քնարիկ և Ցիալա Շամիլյանները և ուրիշներ:

Ուսանելի է Գոնդուրայի անասնապահների փորձը մսի արտադրության ավելացման բնագավառում: Նրանք հաջողությամբ շարունակում են ինտենսիվ եղանակով մատղաշ անասունների բուծումը և հասնում ցանկալի արդյունքների: Այսպես, անցյալ տարի բավել և մթերակետ է հանձնվել 211 անասուն, յուրաքանչյուրը 318 կիլոգրամ միջին քաշով: Տնտեսությունը, հանձնված այդ անասուններից ստացել է 110 հազար ռուբլու մաքուր եկամուտ: Այդ նույն եղանակով այժմ կերակրվում են 1972 թվականին ծնված մատղաշներ, որոնք պետությանը կհանձնվեն այս տարվա հունվար-ապրիլ ամիսներին, յուրաքանչյուրը 315-320 կիլոգրամի հասնելուց հետո: Տնտեսությունում հատուկ ուշադրություն է դարձվում կերի կայուն բազա ստեղծելու հարցին: Անցյալ տարի սովխոզը գերակատարեց հացահատիկային կուլտուրաների, ցանովի և բնական խոտհարքների բերքատվությունները: Հարկ է նշել, որ միամյա խոտաբույսերի ամեն մի հեկտարից ստացվեց 36, կորնդանի յուրաքանչյուր հեկտարից 36,2 ցենտներ խոտ: Սովխոզում դիզել են 5.300 տոննա կոշտ կեր, պատրաստել են 3.750 տոննա սիլոս, 1.040 տոննա սենաժ, կուտակել 350 տոննա կերային արմատապտուղներ, ինչպես նաև մեծ քանակությամբ կարտոֆիլ և հատիկաֆուրաժ: Կերի այս հարուստ

պաշարը լիուլի կապահովի հանրային հոտի պահանջը մսուրային շրջանում:

Այս ամենով հանդերձ չի կարելի չնշել սովխոզում տեղ գտած բացերն ու թերությունները: Եկամտաբեր չէ ոչխարաբուծական ֆերման: 1973 թվականին մեկ ոչխարից առաջադրանքի 2,8 կիլոգրամի դիմաց ստացվեց 1,8 կիլոգրամ բուրդ, 100 մաքուց՝ 80 գառ: Զանազան պատճառներով կորստի է մատնվել 1.001 և հարկադիր մորթվել՝ 1.600 մանր եղջերավոր անասուն: Մոտավոր հաշվումներով ֆերման 40 հազար ռուբլու վնաս է կրել:

Խոշոր եղջերավոր անասունների ֆերմայի հաջողությունները շատ ավելի մեծ կլինեին, եթե արտադրության մեջ արմատավորվեին գիտության նվաճումները, լրիվ կիրառվեին գոտեխնիկական կանոնները: Ֆերմաներում դեռևս ետին պլան է մղված աշխատատար գործողությունների մեքենայացումը, մեքենայացված չէ կովերի կթիթը, մինչդեռ կթվորուհիներն ունեն մաքսիմում ծանրաբեռնվածություն. նրանցից յուրաքանչյուրը խնամում և կթում է 18-20 կով: Անասնապահական ֆերմաները լրիվ ապահովված չեն տիպային շենքերով, եղածներն էլ չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին: Դեռևս ցածր է կարտոֆիլի, սիլոսային կուլտուրաների բերքատվությունը:

Այժմ սովխոզի բոլոր մարդկանց ուշադրությունը կենտրոնացվել է 1974 թվականին տնտեսության առջև ծառացած խնդիրները կենսագործելու վրա:

Սովխոզը լիովին պատրաստ է առաջիկա գարնանացանին: Կազմակերպված սկսելով ձմռան-մսուրային շրջանը, անասնապահները աշխատում են մեծ եռանդով: Սովխոզի մարդիկ գտնում են, որ ցանքերի մշակությունը բարելավելու, ջրվի տարածությունները ընդարձակելու և ճիշտ օգտագործելու միջոցով կարելի է մեծ չափով բարձրացնել կարտոֆիլի, արմատապտուղների, խոտաբույսերի բերքատվությունը: Նախատեսվում է բարելավել արոտավայրերը և որոշ տարածություններ խոտհարք դարձնել: Միջոցներ են ձեռք առնվում գյուղտեխնիկայի հանրապետական միավորման շրջանային բաժանմունքի օժանդակությամբ մեքենայացնելու անասնապահության աշխատատար պրոցեսները:

Որոշված է 1974 թվականին մեկ փերամային կովից ստանալ 1.800 կիլոգրամ կաթ, ամեն մի ոչխարից խուզել 2,8 կիլոգրամ բուրդ, մեկ հեկտարից հավաքել 18 ցենտներ հացահատիկ, 120 ցենտներ կարտոֆիլ: Պետությանը հանձնել 1.165 տոննա կաթ, 258 տոննա միս, 23 տոննա բուրդ, 200 տոննա կարտոֆիլ և այլն:

Կասկածից վեր է, որ գոնդուրացիները հայրենանվեր աշխատանքով կանեն ամեն ինչ ստանձնած պարտավորությունները անթերի իրացնելու համար:

5 հունվարի

ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Բոգդանովկայի շրջանի Ղաստրմա գյուղի կոլտնտեսության մեխանիզատոր Խ. Ղուկասյանը հմտորեն է տիրապետում տրակտորիստի և կոմբայնավարի մասնագիտություններին: Անցյալ տարի համամիութենական սոցիալիստական մրցությունում ձեռք բերած հաջողությունների համար (տրակտորային աշխատանքների տարեկան պլանը փափուկ վարի հաշվով իրացրել է 110 տոկոսով) նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Առաջավոր մեխանիզատորը, արձագանքելով կուսակցությանը և սովետական ժողովրդին ուղղված ՍՄԿԿ Կենտկոմի դիմումին և մտնելով համաժողովրդական մրցության մեջ, վճռել է հնգամյակի որոշիչ տարվա գարնանացանի և բերքահավաքի առաջադրանքները կատարել ժամկետից շուտ և գերակատարումով, 10 օր աշխատել խնայված վառելանյութի հաշվին և տրակտորային աշխատանքների ինքնարժեքն իջեցնել երեք տոկոսով:

14 փետրվարի

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԵՐԿԱՐԱՏԵՎ ՎԱՐԿԵՐ

Գյուղանկի շրջանային գրասենյակը անցյալ տարի շրջանի կոլտնտեսություններին տրամադրեց ավելի քան 535 հազար ռուբլի երկարատև վարկ, որն օգտագործվեց դաշտավարության, հանրային անասնապահության զարգացման, արտադրական օբյեկտների շինարարության և այլ նպատակների համար: Այս տարի երկարատև վարկի գումարը կկազմի 600 հազար ռուբլի:

ԱՃՈՒՄ ԵՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԵՐԸ

Հանրային տնտեսության տարբեր գյուղերից ստացված եկամուտների շնորհիվ տարեցտարի աճում են շրջանի կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը: Դրանք 1973 թվականին կազմեցին 150 հազար ռուբլի: Այդ գումարի մի մասը ծախսվել է տնտեսական և կուլտուրական շինարարության, անասուններ ձեռք բերելու և այլ նպատակների համար:

160 ՀԱԶԱՐ ՌՈՒԲԼՈՒ ՇԱՀՈՒՄ

Շրջանի խնայդրամարկղները անցյալ տարի աշխատավորությանը վաճառեցին 196 հազար ռուբլու պետական երևքտոկոսանոց ներքին շահող փոխառության պարտատոմսեր: Դրանց շահումների դիմաց վճարվել է 120 հազար ռուբլի: Երկու պարտատոմս շահել են 2.500-ական ռուբլի և մեկը 1.000 ռուբլի: Այդ նույն տարում աշխատավորները գնել են 39.600 ռուբլու դրամարկային վիճակախաղի տոմսեր և դրանց շահումների դիմաց ստացել մոտ 24 հազար ռուբլի: Մեկ պարտատոմս շահել է «Ժիգուլի» մակնիշի ավտոմեքենա:

Աճել է նաև ավանդատուների թիվը:

ՄՐՑՈՒՄ ԵՆ ԱՎՏՈՎԱՐՈՐԴՆԵՐԸ

Ավտոտրանսպորտային ձեռնարկության վարորդների միջև մրցություն է ծավալվել առանց հիմնական նորոգման 100 հազար և ավելի կիլոմետր ավտովազքի համար:

Ավտովարորդներ Ս. Ֆիգելը, Վ. Վարդանյանը, Ռ. Պարոնյանը, Կ. Կոնստանտինովը և ուրիշներ իրենց մեքենաներով (տարբեր մակնիշի) արդեն անցել են ավելի քան 200 հազար կիլոմետր՝ առանց հիմնական վերանորոգման:

ՆԱՍՏ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ

Շրջանում հաշվվում է 1.938 բազմազավակ մայր, այդ թվում 114-ը հերոսուհի մայրեր են: Անցյալ տարի նրանք պետությունից ստացել են ավելի քան 137 հազար ռուբլի նպաստ:

Դավնիա գյուղի բնակիչ, հերոսուհի մայր Գոհարիկ Գալստյանը, որն ունի 13 երեխա, 1951 թվականից մինչև օրս պետությունից ստացել է 6.110 ռուբլի նպաստ: Նրա վեց աղջիկներից երկուսը ամուսնացել, ընտանիք են կազմել, յոթ տղաներից մեկը ծառայում է սովետական բանակում, մյուսը սովորում է պրոֆտեխնիկական ուսումնարանում, երեխաներից չորսը դիշերօթիկ դպրոցի սաներ են:

Գոհարիկի ամուսինը Թամանյան փառապանծ դիվիզիայի նախկին զինվոր Ստեփան Գալստյանը, որ պարգևատրված է երեք մեդալներով, այժմ Կարզախի սովխոզի բանվոր է:

28 փետրվարի

ԵՎ ԱՇԽԱՏՈՒՄ Է, ԵՎ ՍՈՎՈՐՈՒՄ
(Ջուլիետտա Պետրոսյան)

Այդ օրը նա երբեք չի մոռանա: Աշխատում էր դաշտում, իրեն ամրացված կարտոֆիլի ցանքատարածության քաղհան - փխրեցումն էր կատարում, երբ կանչեցին կուսակցության շրջանային կոմիտե: Գնաց սովորականի նման, մի քիչ անհանգստացած: Այստեղ նրան շնորհավորեցին բարձր պարգևի համար, հաջողություն մաղթեցին: Պարգևը Լենինի ծննդյան 100-ամյակի հոբելյանական մեդալն էր:

Հուզվեց, չիմացավ ինչ ասի: Լռեց, խոսում էին միայն աչքերը, ու ինչքա՜ն շատ բան ասացին դրանք, ինչքա՜ն բան հասկացան նրան շրջապատողները:

Դա մի պայծառ օր էր, որը, չնայած իր չորսամյա վաղեմությանը, Ջուլիետտա Պետրոսյանի հիշողության մեջ մնացել է երեկվա նման թարմ:

Անցան օրեր, Ախալքալաքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի նախկին շրջանավարտ, Խուլդումոյի կոլտնտեսության կարտոֆիլագործ Ջ. Պետրոսյանը հաղթող դուրս եկավ սոցիալիստական մրցությունից, բարձր գնահատվեց նրա աշխատանքը: Համագյուղացիները նրան ընտրեցին շրջանային սովետի դեպուտատ: Նա ջանասիրությամբ կատարեց իր այդ պարտականությունները, արդարացրեց ընտրողների վստահությունը: Շրջանում նոր էր

բացվել Թբիլիսիի «Իսանի» կոշիկի ֆաբրիկայի մասնաճյուղը: Շատերի հետ Ջուլիետան ոտք դրեց մասնաճյուղի կարի արտադրամասը: Նրա համար սկսվեց նոր, խոստումնալից կյանք, մասնագիտական որակավորում ստանալու մի շրջան. Նորեկ աղջիկը արտադրության մեջ մի պահ չփոթվեց, չիկնեց աղջկական ամոթխածությամբ, հուզվեց...

Բայց դա մի պահ էր...

... Իսկ հետո ինքն էլ չիմացավ ինչպես մերվեց կոլեկտիվին, ինչպես ընտելացավ մեքենաների ռիթմիկ ձայնին, ինչպես սովորեց Թբիլիսիում որակավորման դասընթացներում:

Համեստ աղջիկը օրնօրի ավելի հաստնացավ աշխատանքում, աշխատանքը դարձավ ավելի արտադրողական (125-130 տոկոսով պլանների դերակատարում): Աշխատանքից ծնվեցին այն հարդանքն ու պատիվը, որ այժմ ունի բանվորուհին:

Եվ մասնաճյուղում հարվածային ու նախանձախնդիր այդ համեստ աղջկա աշխատանքը չվրիպեց ոչ գործընկերների և ոչ էլ մասնաճյուղի ղեկավարների աչքից: Նախ նրան երաշխավորեցին ընդունվել անցած աշնանը շրջկենտրոնում բացված Ախալցիխեի պրոֆտեխնիկական ուսումնարանի մասնաճյուղը, միաժամանակ ընդառաջեցին դառնալ ձևաղների խմբի սովորող, ձեռք բերել մասնագիտական գիտելիքներ, հետո ընտրեցին ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար:

Հեշտ չէ այդքան ծանրաբեռնվածության հետ միասին ղեկավարել նաև մասնաճյուղի 98 անդամ ունեցող կոմերիտական կազմակերպության աշխատանքները, բայց Ջուլիետան մեծ բարեխղճությամբ ու սրտացավությամբ է կատարում իր վրա դրված պարտականությունները: Մեծ են նրա ջանքերը իրենց կազմակերպության աշխատանքներում, և պատահական չէ, որ վերջերս նա իբրև պատգամավոր մասնակցեց Վրաստանի կոմերիտմիության XXX համագումարի աշխատանքներին, բոլորի հետ համաժողովում քվեարկեց հարազատ կուսակցության կանխագծումները կենսագործելու երիտասարդության երջանիկ ապագայի օգտին:

8 մարտի

ՖԱԲՐԻԿԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

Թբիլիսիի տրիկոտաժի N 3 ֆաբրիկայի Բոգդանովկայի մասնաճյուղը (պետ Մ. Արզումանյան) իններորդ հնգամյակի ծնունդ է: Նա մոտ երկու տարվա պատմություն ունի: Բայց նրա կոլեկտիվը այդ կարճ ժամանակամիջոցում հասել է գգալի հաջողություններ: Մասնաճյուղի թողարկած տղամարդկանց, մանկական մարզազգեստները, լողազգեստները մեծ զոհունակությամբ են ընդունվում ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ Հյուսիսային Կովկասում, Արևմտյան և Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Ղազախստանում և այլուր: Առևտրական շատ կազմակերպություններ

գրում են, որ մասնաճյուղի ուղարկած արտադրանքը սպառվում է երկու-երեք օրում, և գնորդները մեծ գովեստով են խոսում արտադրանքի որակի ու արտաքին ձևավորման մասին: Դա օրինական հպարտություն է պատճառում տրիկոտաժագործներին, որոնք դրանից նոր լիցք են ստանում:

Ֆաբրիկայի մասնաճյուղը անցած տարվա արտադրանքի թողարկման պլանը կատարեց 102,4 տոկոսով, ստացավ 220 հազար ռուբլու արտապլանային շահույթ:

Մասնաճյուղում աշխատում են 220 բանվորներ, որոնց միջին աշխատավարձը կազմում է 150-160 ռուբլի: Նրանցից շատերը արտադրության առաջավորներ են, լավ են յուրացրել արտադրության տեխնոլոգիան: Բանվորուհիներից 29-ը արտադրանքի թողարկման տարեկան առաջադրանքները իրացրել են 10 ամսում, շատերը, այդ թվում Սվետլանա Ալեքսանյանը, Սաթիկ Էլոյանը, Մաղիկ Զոմարյանը, Լարիսա Գոմցյանը, Մանուշակ Սուքիասյանը և ուրիշներ, կատարել են մեկ ևկես տարվա նորմա: 20 բանվորուհիներ պարգևատրվել են ՀամԼԿԵՄ Կենտկոմի՝ «1973 թվականի հարվածային» կրծքանշանով:

Մասնաճյուղի բանվորները ոչ միայն լավ են յուրացրել արտադրության տեխնոլոգիան, այլև անում են մի շարք արժեքավոր առաջարկություններ, որոնց արմատավորումով ոչ միայն ավելանում է արտադրանքի թողարկումը, այլև բարելավվում է դրա որակը:

Այստեղ դնալով ընդլայնվում է արտադրանքի տեսականին: 1974 թվականից մասնաճյուղի բանվորները յուրացրել և արդեն թողարկում են տղամարդկանց ֆուֆայկաներ:

Քննարկելով ՍՄԿԿ Կենտկոմի՝ կուսակցությանը և սովետական ժողովրդին ուղղված դիմումը, արձագանքելով համամիութենական սոցիալիստական մրցություն ծավալելու մասին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի, ՀԱՄԿՄ-ի, ՀամԼԿԵՄ Կենտկոմի, որոշմանը, մասնաճյուղի կոլեկտիվը բարձր պարտավորություններ է ստանձնել:

Ընդունված հանդիպական պլանում առանձնահատուկ տեղ է հատկացվել կոլեկտիվի խոստումին թողարկել ավելի շատ, ավելի լավորակ, ավելի պակաս ծախսումներով արտադրանք: Զեռնարկության մարդիկ այժմ եռանդուն աշխատանք են կատարում, որպեսզի հնգամյակի որոշիչ տարվա արտադրանքի թողարկման առաջադրանքը կատարեն դեկտեմբերի 22-ին, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնեն 2, արտադրանքի ինքնարժեքը իջեցնեն 3 տոկոսով, ձեռք բերեն 250 հազար ռուբլու արտապլանային շահույթ:

4 ապրիլի

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ ՈՒԿԱՆՈՆԻ ՀԱՄԱՐ

Ախալքալաքի շրջանի կուսակցական ակտիվի ժողովը քննարկեց սոցիալիստական օրինակելիության ամրապնդման, իրավախախտումների կանխման ու հասարակական կարգուկանոնի ամրապնդման գործում կուսկազմակերպությունների խնդիրների հարցը Զեկուցումով հանդես եկավ շրջանի դատախազ Ի. Աբրահամյանը

Ժողովը նշեց, որ կուսակցական, սովետական, հասարակական կազմակերպությունները և վարչական մարմինները վերջին ժամանակներս իրականացրել են մի շարք միջոցառումներ, որոնք դրականապես են անդրադարձել իրավախախտողների և իրավախախտումների շուրջը անհանդուրժողականություն ստեղծելու, հասարակական կարգուկանոնի ամրապնդման նկատմամբ մարդկանց պատասխանատվությունը բարձրացնելու վրա:

Սակայն ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցողները Զակի սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Դ. Պալյանը, Դիլիսկայի կոյտնտեսական Ֆ. Յալլոյանը, ներքին գործերի բաժնի պետ Մ. Տեփոյանը, Վաչիանի սովխոզի դիրեկտոր Մ. Ղարիբյանը, Մաջադիայի դպրոցի դիրեկտոր Ե. Շիրինյանը, ժողդատավոր Խ. Սահակյանը, ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը և ուրիշներ նշեցին, որ հանցագործությունների և իրավախախտումների դեմ մղվող պայքարը դեռևս անբավարար է: Դա, մասնավորապես, վերաբերում է շրջանային ժողդատարանին, որի աշխատանքը լրիվ չի վերակառուցվել պահանջվող խնդիրներին համապատասխան:

Պորտաբուծության, հարբեցողության, առևտրի և բնակչության կենցաղային սպասարկման կանոնների խախտումների դեմ մղվող պայքարում չի երևում հասարակայնության դերը:

Ժողովում հասարակական կարգուկանոնը խախտելու օրինակներ բերվեցին շրջկենտրոնից, Գումբուրդո, Խանդո, Բեժանո, Կոկիա, Ալաթուման և ուրիշ գյուղերից, որը պետք է բացատրել կուսկազմակերպությունների, գյուղսովետների, կոմերիտական և մյուս կազմակերպությունների անբավարար աշխատանքով:

Ակտիվի ժողովի աշխատանքը ամփոփեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Ս. Մովսիսյանը:

Ակտիվի ժողովը ընդունեց բանաձև, որի հիմքում դրված են հակահասարակական երևույթների դեմ պայքարն ուժեղացնելու կոնկրետ միջոցառումներ:

13 ապրիլի

Կոլտնտեսության, շրջկենտրոնի առաջավորների պատվո տախտակներում, ինչպես նաև սոցիալիստական մրցության հաղթողների շրջանային պատվոգրքում անվանի շատ մարդկանց թվում կտեսնեք նաև Ասպինձայի շրջանի Ռուսթավի գյուղի Շ. Ռուսթավելյու անվան կոլտնտեսության թռչնաբույծ Էթերի Դավլաշերիձեի լուսանկարը, կկարդաք նրա մասին:

Էթերին դեռ, դպրոցական տարիներին, մասնավորապես արձակուրդների ժամանակ, հաճախ էր լինում դաշտավարների, անասնապահների, մասնավորապես թռչնաբուծական ֆերմայի աշխատողների մոտ, օգնում էր նրանց և շատ բան սովորում նրանցից:

Ավարտելով միջնակարգ դպրոցը, կոմերիտուհի աղջիկը որոշեց գնալ ֆերմա:

- Երբորդ տարին է, ինչ նա աշխատում է որպես թռչնաբույծ: Անշուշտ, դա մեծ ժամանակամիջոց չէ, բայց այդ տարիներն էլ բավական էին, որ Էթերին ձեռք բերեր փորձ ու հմտություն, դառնար իր սիրած գործի վարպետը:

Է. Դավլաշերիձեն առաջին իսկ տարվանից դարձավ մրցության հաղթող: Անցյալ տարի, օրինակ, նա իր խնամած ածան հավերի յուրաքանչյուրից պլանի 115-ի և պարտավորության 120-ի դիմաց ստացավ 138 ձու, իսկ այս տարվա չորս ամսում գերակատարեց թռչունների ձվատվության կիսամյա առաջադրանքը:

Առաջավոր կոլտնտեսուհուց ետ չեն մնում նաև աշխատանքի գծով նրա ընկերուհիներ Մակդա և Դաշա Միկլաուրիները, Թամարա Սանդրոսովան և ուրիշներ, որոնք իրենց համերաշխ աշխատանքով և թռչունների լավ խնամքի ու կերակրման շնորհիվ հասնում են ցանկալի արդյունքների:

Ռուսթավիի կոլտնտեսության թռչնաբույծները որոշել են մինչև հնգամյակի որոշիչ տարվա վերջը յուրաքանչյուր ածան հավի ձվատվությունը պլանի 130-ի դիմաց հասցնել 153-ի, պետությանը վաճառել 460 հազար ձու և 20 ցենտներ սպիտակ միս: Ավելի բարձր պարտավորություն է ստանձնել Է. Դավլաշերիձեն: Նա խոստացել է անկորուստ պահպանել իր խնամած թռչունները և ամեն մի ածան հավից միջին թվով ստանալ 160 ձու:

20 հունիսի

ԶԲՈՍԱՅԳԻ ՄԻԱՅՆ ԱՆՈՒՆՈՎ

Ում էլ հարցնենք, թե ինչ է նշանակում զբոսայգի, իսկույն կպատասխանի՝ ծառապատված, անհրաժեշտ հարմարություններ ունեցող մի հաճելի վայր, ուր մարդիկ անց են կացնում իրենց կուլտուրական հանգիստը:

Բայց պատահում են նաև զբոսայգիներ, որոնք իրենց նպատակին չեն ծառայում: Այդպիսիներից է Ախալքալաքի շրջկենտրոնի N 2 զբոսայգին:

Կար ժամանակ, երբ զբոսայգին (շահագործման է հանձնվել 1952 թվականին) ուներ ծառուղիներ, ցայտաղբյուրներ, ծաղկանոց, խաղադաշտ, էլեկտրական լուսավորություն և այլն: Մի քանի տարի առաջ այդուն կիր կառուցվեց և շահագործման հանձնվեց կապի շրջանային հանգույցի շենքը, որն ավելի մարդաշատ դարձրեց զբոսայգին:

Թվում էր, թե մարդկանց կուլտուրական աճող պահանջմունքներին զուգընթաց ավելի կբարեկարգվեր զբոսայգին, կավելանային նրա հարմարությունները: Սակայն, սպասածին հակառակ, մոռացվեց զբոսայգու գոյությունը: Տեղական կազմակերպությունների անուշադրության հետևանքով այդուց չքացան ցայտաղբյուրը, նստարանների մի մասը, «կարկտահարվեց» ծաղկանոցը, խափանվեցին էլեկտրական լամպիոնները, տեղ-տեղ քանդվեց ու խարխլվեց ցանկապատը:

Որքան էլ տարօրինակ թվա, սակայն փաստ է, որ զբոսայգին դարձել է արոտավայր, այժմ այստեղ անարգել արածում են անասունները: Հանրօգուտ աշխատանքից խուսափող որոշ մարդկանց համար այն դարձել է աչքից հեռու, խաղաղ ու անվրդով անկյուն:

Հաճախ են մարդիկ դիմում մեզ, ցանկանալով իմանալ, թե՞րբ է, արդյոք, բարեկարգվելու քաղաքային զբոսայգին, և ե՞րբ հնարավորություն կունենան իրենց կուլտուրական հանգիստն անցկացնելու այստեղ:

Թող այս հարցին պատասխանեն աշխատավորների դեպուտատների շրջանային և քաղաքային սովետների գործկոմների ղեկավար ընկերները:

15 օգոստոսի

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Եղևնիների անտառապատ լեռներով շրջապատված, գեղատեսիլ Ճոբարեթի՝ Սովետական Միության հերոս Լևոն Դարբինյանի անվան պիոներական ճամբարում այս ամառ հանգստանում է Ախալքալաքի շրջանի ավելի քան 370 երեխա:

Շրջանի ղեկավար մարմինները, ճամբարը կազմակերպող պետական հիմնարկների, տարբերական և միջնակարգ դպրոցների, պե-

տական առևտրի և այլ արհմիությունների շրջկոմները բավական աշխատանք կատարեցին ճամբարականների ամառային հանգիստը կազմակերպելու գործում: Վերանորոգվել է ճամբար տանող անբարեկարգ ճանապարհը, կարգի է բերվել ջրմուղը, նորոգվել ու կահավորվել են ննջարանները:

Ճամբարի ղեկավարները (պետ՝ Ա. Իրիցյան) ամեն ինչ անում են, որպեսզի երեխաները ոչ միայն հանգստանան ու կազդուրվեն, այլև մի նոր բան սովորեն, նոր գիտելիքներով հարստանան:

Ավագ ջոկատավար Գ. Բաբայանի ղեկավարությամբ ջոկատավարներ Մ. Ֆարմանյանը, Վ. Հարությունյանը, Ս. Բալասանյանը, Յու. Գրիգորյանն արդեն մի քանի արշավ ու էքսկուրսիա են կազմակերպել Հայրենի բնությունն ուսումնասիրելու նպատակով: Պիոներները եղել են անտառում գտնվող մարմարի հանքավայրերում, Ասպինձայի շրջանի Դամալայի կոլտնտեսության բայլաղում, գրի են առել իրենց տպավորությունները: Ալաստան գյուղում, Լ. Դարբինյանի կլուսնդրու մոտ կազմակերպվել է գրուժինայի հավաք, պիոներները հանդիպում են ունեցել հերոսի ընտանիքի անդամների հետ, լսել նրանց հուշերը՝ Լ. Դարբինյանի մասին:

Այստեղ լավ է կազմակերպված նաև երեխաների կուլտուրական հանգիստը: Գործում են կինոսիրողների, գրական, երգի-պարի, պատանի բնասերների և այլ խմբակներ: Մանկավարժներ՝ Ս. Վարդանյանը, Վ. Բալաշյանը, Մ. Խաչատրյանը, Ֆ. Հակոբյանը և ուրիշներ պիոներների համար կազմակերպել են զրույցներ՝ «Պիոներիայի 40-ամյակը», «Երեխաները անտառի բարեկամն են», «Մեր ճամբարի պատմությունը», «Շրջանի անտառները» և այլ թեմաներով: Պատանի բնասերների խմբակի անդամները բույսերից, ծաղիկներից, միջատներից, քարերից կազմել են կոլեկցիաներ ու հերբարիումներ, որպեսզի նվիրեն իրենց դպրոցներին:

Ճամբարի ֆիզկուլտուրայի աշխատանքները ղեկավարում է մարմնամարզիկ Գ. Մինասյանը: Նա ամեն ինչ անում է առողջ սերունդ դաստիարակելու համար: Նրա ղեկավարությամբ անցկացվել են ռազմական խաղեր, շախմատի, վոլեյբոլի, սեղանի թենիսի ջոկային առաջնության մրցումներ, առաջնակարգ տեղեր գրավողները իրավունք են ստացել մասնակցելու եզրափակիչին:

Երաժշտության դասատու Ս. Այվազյանի դեղարվեստական ինքնագործ խումբը մի քանի համերգ է կազմակերպել ճամբարականների, ծնողների և հյուրերի համար:

22 օգոստոսի

ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅՈՒՄ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՌՈՒԶԵՌ Է

Բոգդանովկայի շրջանի համայնական դաշտերում օրնորի լայն ծավալ է ստանում կերերի կուտակումը:

Օռլովկայի կոլտնտեսությունում ենք: Անասնապահական շենքերի մոտ երևում են մարդիկ, մեքենաներ: Այստեղ ղոոտեխնիկ Ս. Թաղյանի ղեկավարությամբ սիլոս է պատրաստվում:

- Երկու խրամատ 600 տոննա տարողությամբ սիլոս ենք լցրել, պատրաստել 200 տոննա սենաժ,- ասում է տնտեսության նախագահ Լ. Վարդանյանը և ցույց տալիս սիլոսանյութի մի հսկա զանգված:

Նրա վրա հանդում է մեխանիզատոր Վլ. Սուխարուկովի «ԳՏ-54» մակնիշի տրակտորը, որը մամլում է արևածաղիկ-վարսակի ցանքերից հնձված և խրամատի մեջ լցված կանաչ զանգվածը, մինչև այն նստի, ամրանա:

- Այս խրամատներում էլ լցնելու ենք 400 տոննա, 800 տոննա էլ պատրաստելու ենք առաջիկայում և հյութալի կերերի կուտակման պլանը կգերակատարենք,- շարունակում է նախագահը:

Գյուղից ոչ հեռու անխափան գործում է «Վիխր-ԿՍ 1-8» մակնիշի սիլոսահավաք կոմբայնը, որին ղեկավարում է փորձված մեխանիզատոր Մ. Տերեխովը: Նա օրական մեկուկես արտադրական նորմա է կատարում: Տրակտորիստներ Վասիլի և Ալեքսեյ Տամիլինները, Վ. Կալմիկովը, Ա. Բելոուսովը կանաչ զանգվածն անմիջապես տեղափոխում են գյուղ:

Աշխատանքը լավ է կազմակերպված Օռլովկայի հարևան Գորելովկայի խոշոր տնտեսությունում: Այստեղ դաշտ են դուրս եկել և ծերերը, և դեռահասները, մանկավարժներն ու գյուղական սովետի աշխատակիցները, գործի է դրված ամբողջ տեխնիկան: Հավաքվում է կոլտնտեսության 2.028 հեկտար ցանովի և բնական խոտհարքերի բերքը: Մեխանիզատորներ Ի. Բալաբանովը, Ա. և Ի. Գոնչարովները տրակտորաքարշ հնձիչներով օրական հնձում են 45-50 հեկտար ցանովի խոտհարք:

Դաշտավարական N 2 բրիգադի հանդամասում ենք: Այստեղ շատերի հետ զերանդիով հունձ է կատարում նաև կոլտնտեսության տնտեսագետ Պ. Կալմիկովը: Քանի որ բրիգադում հաջող են գործերը, նրանից խնդրում ենք տալ լավագույնների անունները: Նա ամենից առաջ նշում է հնձվորուհիներ Մարտա Կարսակայի, Մարինա Ելեցկայայի, Պելագեյա Գոնչարովայի անունները, որոնք, մրցելով տղամարդկանց հետ, օրական 0,5-0,60 հեկտար բնական խոտ են հնձում. ապա ավելացնում է հովիվներ Վ. Բատուրինի, Ա. Զուբկովի, Գ. Գոնչարովի, շինարարներ Մ. Կալևի, Տ. Սուխարուկովի անունները, որոնք զգալիորեն գերազանցում են հնձի օրվա առաջադրանքները:

Անցած տարի ձմռան-մսուրային շրջանը հաջող անցկացնելու շնորհիվ Խոջաբեկի կոլտնտեսությունը բարձր ցուցանիշներ

ձեռք բերեց անասնապահական մթերքների արտադրությունն ավելացնելու բնագավառում:

Այդ հաջողությամբ ոգեշնչված, կոլտնտեսականները մեծ եռանդով ձեռնամուխ եղան կերերի կուտակման աշխատանքներին և շրջանում առաջիններից մեկն ավարտեցին սիլոսի և սենաժի պատրաստման աշխատանքները: Մի քանի օրում խրամատավորվեց 1.700 տոննա սիլոս և 500 տոննա սենաժ:

Կերերի կուտակման աշխատանքների տեմպերը օրեցօր արագանում են Սաթխա, Ժդանովական, Կաթնատու, Թորիա, Ուչմանա, Մեծ Արագյալ, Մեծ Խանչալի և այլ գյուղերի կոլտնտեսություններում:

Հարկ է նշել, որ կոլտնտեսություններին և սովխոզներին այդ գրծում աջակցում և շեֆական օգնություն են ցույց տալիս շրջանի հիմնարկ-ձեռնարկությունները: Սակայն վերոհիշյալ առաջավոր տնտեսությունների կողքին կան ետ մնացողներ, որոնք կերերի կուտակման աշխատանքներում դանդաղում են: Աշխատանքային թույլ կարգապահության հետևանքով Փոկա, Փոքր Խանչալի, Ջիդբաշեն, Օրոջալար, Նոր Խուլգումո, Ռոդիոնովկա գյուղերի կոլտնտեսություններում ոչ քիչ թվով կոլտնտեսականներ, Գանձայի սովխոզում բանվոր-ծառայողներ չեն մասնակցում կերերի կուտակման աշխատանքներին: Հիմնականում այդ և այլ պատճառներով է, որ շրջանում իզուր է առաջացել հնձի և խոտի տեղափոխման մի ջև: Ավելի շատ ու բազմատեսակ կերերը վճռական նշանակություն ունեն հանրապետության ամենախոշոր անասնապահական շրջաններից մեկի՝ Բոգդանովկայի համար: Ուստի եղած հնարավորությունները լիովին օգտագործելու, կերերի կուտակման առաջադրանքները անթերի կատարելու դեպքում բոգդանովկացիները կարող են հասնել զգալի նվաճումների, անասունների գլխաքանակի ավելացմանը, նրանց մթերատվության բարձրացմանը:

29 օգոստոսի

ՀՆՉԵՑ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ: Քաղաքի Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցը կազմ ու պատրաստ սպասում էր իր 630 սաներին: Ժամը ուղիղ 8-ին նոր ուսումնական տարվան նվիրված հանդիսության ժամանակ աշակերտներին ողջույնի խոսք ասաց դպրոցի դիրեկտոր Կարապետ Կարախանյանը: Այնուհետև ելույթ ունեցան պատմության դասատու Հովհաննես Քարտաշյանը, դպրոցի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Սոս Խաչատրյանը, աշակերտներ Գայանե Երեմյանը, Գայանե Գրիգորյանը, ծնող Ռաֆիկ Սահակյանը: Ուսուցիչներն ու սաները ուրախ տրամադրությամբ հանդիպեցին միմյանց և սկսեցին նոր ուսումնական տարին:

Այս ուստարում հիանալի նվեր ստացան Մաջադիա, Խանդո, Լոմատուրցխ գյուղերի դպրոցականները: Նրանք նոր ուսումնական

տարին սկսեցին կահավորված նորակառույց դպրոցական շենքերում: Շրջանի Բուդաշեն գյուղում բացվեց լրիվ միջնակարգ դպրոց:

Նոր ուսումնական տարին բարձր կազմակերպվածությամբ սկսեցին Հովհ. Թումանյանի, Վ. Մայակովսկու անվան, գիշերօթիկ, Սուլդա, Օրջա, Ալաստան, Կորխ և այլ գյուղերի միջնակարգ դպրոցները:

3 սեպտեմբերի

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ախալքալաքին հատուկ է ճոխ աշուն: Առատությունն արտերից ելնում-անցնում է կարտոֆիլի պլանտացիաները:

Պարենային այս արժեքավոր կուլտուրայի բերքահավաքը, ինչպես շրջանի բոլոր, այնպես էլ Մաջաղիա գյուղի կոլտնտեսությունում կազմակերպված է ընթանում: Տնտեսության հողագործների հետ միասին պատվաբեր սահմանագիծ է նվաճում աշակերտների արտադրական բրիգադը, որի աշխատանքը 10-րդ տարին է, ինչ ղեկավարում է տեղի միջնակարգ դպրոցի կուսկազմակերպության քարտուղար, արտադասարանական-արտադպրոցական աշխատանքների կազմակերպիչ Գրիգոր Գրիգորյանը: Քանի՞-քանի՞ անգամ է բրիգադն օգնել կոլտնտեսությանը մասնակցել խոտհնձին ու հացահատիկայինների բերքահավաքին, կարտոֆիլի ու բանջարեղենի ցանքերը մշակել, հանդես եկել ընդհանուր հավանություն ստացած, «Դաշտավարությանը երիտասարդական հոգատարություն» նախաձեռնությունով:

Բայց հնգամյակի որոշիչ տարին բրիգադի համար աննախընթաց տարի դարձավ: Նոր մշակած հողատարածության յուրաքանչյուր կտորը առատորեն է վարձահատույց լինում: Երկու հեկտար սեղանի ճակնդեղի պլանտացիայից պլանի 175-ի դիմաց ստացվեց 200-ական ցենտներ բերք:

Իսկ կարտոֆիլի ցանքադաշտերում բերքը ռեկորդային է. 8 հեկտարից առաջադրանքի 150-ի և պարտավորության 160-ի փոխարեն ստացվում է 200-ական ցենտներ բարձրորակ կարտոֆիլ կոլտնտեսության միջինից 55 ցենտներով ավելի:

Ավետիս Սողբաթյանը, Վալյա Վարդիկյանը, Հովհաննես Մոսիկյանը, Ժաննա Ղազարյանը, Վարդ Շիրինյանը ու էլի IX, X դասարանների թվով 63 կոմերիտականներ ու երիտասարդներ են մշակել պլանտացիաները: Նույնիսկ գարնանային և ամառային անբարենպաստ եղանակները արգելք չկարողացան հանդիսանալ: Նրանք ցանքը կատարեցին մեքենաներով, հեկտարի հաշվով հող մտցրեցին 600 կիլոգրամ հանքային, 40-50 տոննա օրգանական պարարտանյութեր: Հողատարածությունների փխրեցումը, քաղհանը, բուկլիցն ու ուռգումը կատարվեցին ժամանակին, ագրոտեխնիկական կանոններին համապատասխան:

22 հոկտեմբերի

ԳՅՈՒՂՍՈՎԵՏԸ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատավորների դեպուտատների Դամալայի (Ասպինձայի շրջան) գյուղսովետի գործկոմը (նախագահ՝ Խ. Սոֆոյան), գործողության ծրագիր դարձնելով «Գյուղական և ավանային սովետների աշխատանքը բարելավելու մասին» ՍՄԿԿ Կենտկոմի 1971 թվականի որոշումը, ղեկավարվելով է իր աշխատանքը: Ժամանակին գումարվում են սովետի սեսիաներն ու գործկոմի նիստերը, աշխուժացրել են իրենց աշխատանքը մշտական հանձնաժողովները: Սեսիաներում և գործկոմի նիստերում քննարկվող հարցերը նախապատրաստվում են համակողմանիորեն: Դրանց նախապատրաստումը և ընդունած որոշումների իրագործմանը ակտիվորեն մասնակցում են դեպուտատներն ու ակտիվիստները: Այս բոլորը տալիս է իր դրական արդյունքը: Գյուղսովետը հաջողությամբ է կատարում իր առջև դրված տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրները:

Դեռ տարեսկզբին գյուղսովետը մրցության մեջ մտավ նույն շրջանի Խիզաբավրայի գյուղսովետի հետ և պարտավորվեց ժամկետից շուտ և դերակատարումով իրացնել մթերումների և բնակչությունից գանձվող դրամական միջոցների տարեկան առաջադրանքը: Դյուղատնտեսական մշտական հանձնաժողովը, որը ղեկավարում է դեպուտատ Գ. Ֆարմանյանը, մանրամասն ուսումնասիրեց և գործկոմի քննարկմանը դրեց սոցպարտավորությունների կատարման հարցը: Ընդունված որոշման կենսագործման շնորհիվ գյուղսովետը հաջողությամբ իրացրեց գյուղատնտեսական մթերքների մթերումների ինամսյա պլան-պարտավորությունը, հաղթող ճանաչվեց սոցմրցությունում, նվաճեց կուսշրջկոմի և շրջսովետի գործկոմի փոխանցիկ դրոշը:

Գյուղատնտեսական մշտական հանձնաժողովը արդյունավետ աշխատանքը, սակայն, միայն սրանով չի բնութագրվում: Նրա նախաձեռնությամբ գյուղսովետի դեպուտատներն ու աշխատողները շեֆական օգնություն են ցույց տալիս կոլտնտեսությանը: Այս տարի, օրինակ, նրանք մշակել են երկու հեկտար կարտոֆիլ, կես հեկտար բանջարեղեն և հասել ցանկալի արդյունքների: Բացի այդ, գյուղսովետի աշխատողների ուժերով հնձվել է 5 հեկտար հացահատիկի ցանքադաշտ, հավաքվել և անասնաշենքերի մոտ է փոխադրվել 15 հեկտար բնական խոտհարքների բերքը:

Տեղական սովետների վերջին ընտրություններից հետո դեպուտատների հետ ունեցած հանդիպումների ժամանակ ընտրողները նրանցից պահանջեցին ավելի մոտիկից զբաղվել գյուղի բարեկարգման, ժողկրթության, բնակչության կենցաղային և բուժական սպասարկման բարելավման հարցերով: Դրանց քննարկումը սովետի սեսիաներում և գործկոմի նիստերում միշտ էլ գործնական բնույթ է կրում:

Անցյալ տարվա վերջին գյուղսովետի սեսիան որոշում ընդունեց աշխատավորներին խմելու ջրով ապահովելու համար շարունակել Օթա-Դամալա կիսավարտ ջրմուղի շինարարությունը: Արդեն վերսկսվել են այդ աշխատանքները և շուտով գյուղի տարբեր թաղամասերում կկանգնեցվեն ջրածորակներ, կլուծվի նաև անասնապահական ֆերմաները ջրով ապահովելու հարցը:

Գյուղսովետի կուլտուր-կենցաղային մշտական հանձնաժողովը (նախագահ Գ. Սահակյան) ուսումնասիրեց գյուղի բնակչության կենցաղսպասարկման հարցը: Դեպուտատ Ա. Բաղդասարյանը այդ ոլորտում հայտնաբերված թերությունները դրեց շրջսովետի գործկոմի առջև: Համատեղ ուսումնասիրությունը անհրաժեշտ պայմաններ ստեղծեց բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավման համար: Այժմ Դամալայում գործում են 100 համարանոց ավտոմատ հեռախոսակայանը, վարսավիրանոցը, կոշիկի վերանորոգման կետը: Շուտով շարք կմտնի էլեկտրասարքերի վերանորոգման արտադրամասը: Բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկման կապակցությամբ մեծ աշխատանք են կատարում փոստի բաժանմունքը, գյուղական խանութը, բուժկետը, մանկապարտեզը և այլ օբյեկտներ: Գյուղի միջնակարգ դպրոցի ղեկավարությունն ու ակումբի աշխատողները կազմակերպել են ինքնագործ խմբակներ, որոնք հաճախ են ելույթներ ունենում: Ակումբում սիստեմատիկաբար ցուցադրվում են կինոնկարներ:

Գյուղսովետը գլխավորում է դեպուտատների աշխատանքը, հոգում է կոլտնտեսային արտադրության վճռական տեղամասերում նրանց ուժերը ճիշտ տեղաբաշխելու, նրանց դերը բարձրացնելու մասին: Գրեթե բոլոր 29 դեպուտատներն էլ բարձր են պահում իրենց կոչումը, ճշտորեն կատարում պարտավորությունները: Կթվորուհի Զ. Մարգարյանը, որ խնամում է 18 կով, դերակատարել է դրանց կանթեղատվության այս տարվա 11 ամիսների առաջադրանքը: Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր տրակտորիստ Ա. Սահակյանը իրացրել է տրակտորային աշխատանքների տարեկան պլանը:

Արտադրության առաջավոր կոլտնտեսականները հաճախ հանդես են գալիս գովելի նախաձեռնություններով, իրենց ակտիվ մասնակցությամբ օգնում գյուղսովետին նկատված թերությունները վերացնելու, նրա առջև դրված խնդիրները կենսագործելու համար:

Աշխատելով գործնականությամբ, Դամալայի գյուղսովետը ձգտում է դեպուտատների աշխատանքը նպատակամղել գյուղի տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում նորանոր հաջողությունների հասնելու համար:

12 դեկտեմբերի

ՆԱ ԻՐ ՏԱՐԵՐՔԻ ՄԵՋ Է

[Գառնուշ Մանուկյան]

- Գրեցե՛ք մեր պրոպագանդիստի մասին,- ասաց Վաչիանի սովխոզի (Ախալքալաքի շրջան) Զամդուբայի տեղամասի կուսկազմակերպության քարտուղար Վ. Պողոսյանը:

Պրոպագանդիստ Գառնուշ Մանուկյանը պարապմունքից հետո զրույցի էր բռնվել իր ղեկավարած մարքսիզմ-լենինիզմի հիմունքների քաղաքական սոցիոմների հետ: Զրույցն ավարտելուց հետո, խնդրեցի պատմել կենսագրությունը:

- Նրա կենսագրությունը նույնքան պարզ ու հասարակ է, որքան ինքը,- մեր զրույցին միջամտեց ունկնդիրներից մեկը:

Մանուկյանը ծնվել ու մեծացել է Զամդուբա գյուղում, ավարտել Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Մանկավարժական աշխատանքի 30 տարվա փորձ ունի, ղեկավարում է գյուղական ութամյա դպրոցը, 25 տարուց ավելի է, ինչ պրոպագանդիստական աշխատանք է կատարում: Տարիները իմաստավորել են նրան, դարձրել փորձաշատ, հմուտ մանկավարժ ու պրոպագանդիստ: Նա միշտ եղել է պարտաճանաչ ու աշխատասեր, ձգտել ճիշտ կազմակերպել պարապմունքները, օգնել ունկնդիրներին, նրանց հաղորդել ավելի խոր գիտելիքներ: Որպեսզի զրույցները լինեն ավելի ներգործուն և գաղափարական խոր բովանդակությամբ հագեցված, պրոպագանդիստը նախապատրաստվում է խնամքով, անհրաժեշտ նյութեր է վերցնում մամուլից, համապատասխան գրականությունից: Եվ որ ամենակարևորն է, ուսումնասիրվող նյութը սերտորեն առնչվում է սովխոզի, իրենց տեղամասի առջև դրված կոնկրետ խնդիրների հետ:

Ընթացիկ ուսումնական տարում, ծրագրային թեմաները ուսումնասիրելուց բացի, քաղաքացի ունկնդիրները ծանոթացել են Լ. Ի. Բրեժնևի և ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Ֆորդի հանդիպումների, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության և Ֆրանսիայի. Բրեժնևի կատարած այցերի արդյունքներին, մեր երկրի ներքին և արտաքին կյանքի կարևորագույն իրադարձություններին:

Պրոպագանդիստ Գ. Մանուկյանի հետևողական աշխատանքի շնորհիվ քաղաքացի շատ ունկնդիրներ ինքնուրույն աշխատելու փորձ են ձեռք բերել, ակտիվորեն մասնակցում են պարապմունքներում ծավալված զրույցներին: Այդպիսիների թվումն են դաշտավարական բրիգադավարներ Մ. Հովհաննիսյանը, Վ. Պողոսյանը, Շ. Մելքոնյանը, կաթնապրանքային ֆերմայի վարիչ Ի. Հովհաննիսյանը, մեխանիզատոր Վ. Աղնաուրյանը, բանվոր Վ. Սիմոնյանը և ուրիշներ: Սրանք բոլորն էլ արտադրության առաջավորներ են:

Պրոպագանդիստը շարունակ հարստացնում է իր գիտելիքները, բարձրացնում պրոպագանդիստական վարպետությունը։ Նա ակտիվորեն մասնակցում է քաղաքական կրթության կազմակերպված պրոպագանդիստների սեմինարներին, հաճախ ինքն է ելույթ ունենում, իր փորձը հաղորդում մյուսներին։ Քաղաքական կրթության տեղի է ունեցել նրա ղեկավարած քաղդպրոցի ցուցադրական պարապմունքը շրջանի պրոպագանդիստների մասնակցությամբ։

15 փետրվարի

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ԲՈՒՌՆԱՇԵԹՑԻՆԵՐԻՆ

Տոնականորեն զարդարված մշակույթի տան դահլիճն էին հավաքվել Բուռնաշեթի կոլտնտեսության (Ախալքալաքի շրջան) 500-ից ավելի աշխատողներ՝ անասնապահներ ու մեխանիզատորներ, կարտոֆիլագործներ ու բանջարաբույծներ, հյուրեր հարևան գյուղերից, շրջանի կուսակցական և սովետական աշխատողներ։

Բուռնաշեթցիները հանդիսավոր շատ միջոցառումներ են անցկացրել։ Սակայն այդ օրվա միջոցառումը թերևս ամենահանդիսավորն էր։ 1974 թվականին հողագործական և անասնապահական մթերքների արտադրությունն ու մթերումները ավելացնելու համար, գյուղատնտեսության աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցության արդյունքներով կոլտնտեսությունը նվաճել է ամենաբարձր պարգևը՝ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի, ՀԱՄԿՄ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշն ու դրամական առաջին պարգևը։ Գյուղի աշխատավորները հնգամյակի որոշիչ տարում պետությանը վաճառեցին 630 հազար ռուբլու գյուղատնտեսական մթերքներ։ Կոլտնտեսականների մեկ մարդաօրվա արժեքը հասավ 7 ռուբլու։

Հանդիսավոր ժողովը ներածական խոսքով բացեց կոլտնտեսության կուսակցամակերպության քարտուղար Ի. Նորվարդյանը։

Զայնը տրվում է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի անդամության թեկնածու, «Սովետական Վրաստան» թերթի խմբագիր Հ. Բլրցյանին։

Ներկաների բուռն ծափահարությունների ներքո նա փոխանցիկ դրոշը հանձնում է հաղթողներին։ Ջերմորեն շնորհավորելով բուռնաշեթցիներին, մրցությունում հաղթելու առթիվ, ընկ. Բլրցյանը նրանց ցանկանում է աշխատանքային նորանոր հաջողություններ։ Նա խոսում է հնգամյակի ավարտական տարում կոլտնտեսության առջև դրված խնդիրների մասին, հույս հայտնում, որ բուռնաշեթցիները, ինչպես միշտ, կլինեն սոցմրցության առաջին շարքերում, ուժ ու եռանդ չեն խնայի նոր, ավելի բարձր բնագծեր նվաճելու համար։

Կոլտնտեսության նախագահ, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Լենինի շքանշանակիր Վ. Քոչոյանը, կթվորուհի Զ. Հարությունյանը, դաշտավարության բրիգադավար Վ. Կուր-

զինյանը, անասնապահ Ա. Ավագյանը, մեխանիզատոր Ա. Նորվարդյանը, գյուղի միջնակարգ դպրոցի X դասարանի աշակերտուհի Ց. Ավագյանը, արհմիության տեղկոմի նախագահ Մ. Կուրղինյանը և ուրիշներ իրենց ելույթներում շնորհակալություն հայտնեցին կուսակցությանը և կառավարությանը՝ իրենց աշխատանքը բարձր գնահատելու համար, խոստացան, որ այսուհետև էլ կաշխատեն կրկնապատկված եռանդով:

Պարգևատրվածներին շնորհավորեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Ա. Մովսիսյանը:

Ի պատասխան կուսակցության և կառավարության հոգատարության, բուռնաշեթցիները վերանայեցին տարեսկզբին ստանձնած սոցիալիստական պարտավորությունները: Նրանք որոշեցին հնգամյակի եզրափակիչ տարում պարտավորությունից ավելի պետությանը վաճառել 100 տոննա կարտոֆիլ, 12 տոննա հացահատիկ, 10-ական տոննա կաթ և միս, մեկ տոննա բուրդ և շարունակել շեֆական օգնությունը շրջանի ետ մնացող կոլտնտեսություններին: Վարևանի կոլտնտեսությունում, օրինակ, կարտոֆիլի սլանտացիաները ոռոգելու համար կառուցել ջրամբար:

Վերջում ժողովի մասնակիցների համար տրվեց համերգ:

18 մարտի

ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ախալաքալքի շրջանի աշխատավորները հաջողությամբ եզրափակեցին հնգամյակի որոշիչ տարին: Կատարվել են բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների առաջադրանքները: Գնալով անտեսապես ավելի են ամրապնդվում կոլտնտեսություններն ու սովխոզները: 27 անտեսություններից 23-ը գյուղատնտեսական տարին փակեցին շահույթով և ստացան մեկ միլիոն 700 հազար ռուբլու եկամուտ:

Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ հաղթող են ճանաչվել Բուռնաշեթի և Դիլիսկայի կոլտնտեսականները, նվաճել են ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի, ՀԱՄԿԽ-ի, ՀամԼԿԵՄ Կենտկոմի, Մինիստրների սովետի, հանրապետության արհխորհրդի և ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշն ու դրամական առաջին կարգի պարգևը:

Լավ ելադիծ են վերցրել անասնապահները ընթացիկ տարում: Անցած երկու ամսում, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ շրջանում փուրաժային կովի կաթնատվությունն ավելացել է 33 կիլոգրամով, իսկ համախառն կաթի արտադրությունը՝ 2.529 ցենտներով: Պետությանը հանձնված է 6.727 ցենտներ բարձրորակ միս:

Վերելքը, անշուշտ, նկատելի է: Սակայն այն, ինչ ձեռք է բերվել, բավարար համարել չի կարելի, քանի որ դեռևս լրիվ չեն օգտագործվում եղած ռեզերվները:

Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի օրերս տեղի ունեցած պլենումում հանդես գալով «Վրաստանի կոմկուսի XIV պլենումի արդյունքները և շրջանի կուսակցական կազմակերպությունների խնդիրները» զեկուցմամբ, կուսշրջկոմի առաջին քարտուղար Ա. Մովսիսյանը գլխավորապես կանգ առավ այն թերությունների վերացման վրա, որոնք դեռևս կան շրջանի էկոնոմիկայի զարգացման գործում, կուսակցական-կազմակերպական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքը ներկա պահանջների մակարդակին բարձրացնելու խնդիրների վրա:

Քննադատաբար ելույթ ունեցան նաև շրջսովետի գործկոմի նախագահ Ռ. Եփրիկյանը, Թախչայի, Խանդոյի կոլտնտեսային կուսկազմակերպությունների քարտուղարներ Թ. Ղազարյանը, Մ. Թորոսյանը, ներքին գործերի շրջանային բաժնի պետ Մ. Տեփոյանը, շրջսպառմիության նախագահ Օ. Ալեքիշվիլին, կուսշրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը, շրջսովետի գործկոմի ղեկավարչության գլխավոր գոոտեխնիկ Մ. Ֆիդանյանը, «Վրացդյուղտեխնիկա» հանրապետական միավորման շրջանային բաժանմունքի կառավարիչ Վ. Եփրիկյանը, հասարակական սննդի ձեռնարկությունների դիրեկտոր Դ. Բագրատունին, Թոթխամի կոլտնտեսության մեխանիզատոր, կուսշրջկոմի բյուրոյի անդամ Մ. Բասենցյանը:

Նշվեց, որ իններորդ հնգամյակի անցած չորս տարիներին շրջանի էկոնոմիկայի զարգացման տեմպերը զգալիորեն ետ են մնացել նախատեսվածից: Կաթի վաճառքի չորս տարիների պլանը 27 տնտեսությունից 20-ն են կատարել, մսինը 13-ը, կարտոֆիլինը 11-ը, բրդինը 9-ը:

Հատկապես ետ են մնում Աբուլի, Վարևանի, Կորխի, Բեժանոյի կոլտնտեսությունները, Կաջոյի, Զակի, Կարզախի, Ալաստանի սովխոզները և այլ տնտեսություններ: 1974 թվականին 15 տնտեսություն կարտոֆիլի և 11-ը հացահատիկի ավելի ցածր բերք ապահովեցին, քան շրջանն ամբողջությամբ վերցված, որի հետևանքով շրջանը մոտ հինգ հազար տոննա կարտոֆիլի, ավելի քան 10 հազար տոննա հացահատիկի կորուստ ունեցավ:

Պլենումում բացահայտվեցին նաև այն թերությունները, որոնք տեղ են գտել արդյունաբերության և շինարարության բնագավառներում, առևտրի և սպասարկման ոլորտում և մյուս կազմակերպությունների աշխատանքում:

Վերոհիշյալ և ուրիշ թերությունները հետևանք են հստակ կազմակերպված աշխատանքի բացակայության, աշխատատար պրոցեսների ոչ բավարար մեքենայացման, աշխատանքային թույլ կարգապահության: Հողը, ոռոգման ջուրը, պարարտանյութերը վատ են օգտագործվել, պատշաճ բարձրության վրա չի գտնվում կատարման վերահսկողությունն ու ստուգումը:

Կատարման վերահսկողության և ստուգման անբավարար դրվածքով պետք է բացատրել, որ Բեժանոյի, Վարևանի, Կորխի, Աբրագվայի, Աբուլի կոլտնտեսությունների, Սուլդայի, Կորխի և մի շարք ուրիշ գյուղերի դպրոցների կուսակցական կազմակերպությունները անբավարար են իրականացնում ադմինիստրացիայի գոր-

ծունեության նկատմամբ վերահսկողության ունեցած իրենց իրավունքները: Ժողովներում ընդունվում են ոչ կոնկրետ, ոչ ոքի չպարտավորեցնող որոշումներ: Եվ պատահական չէ, որ վերոհիշյալ տեղերում առկա են աշխատանքային, կուսակցական կարգապահության խախտումները:

Կատարման ստուգման ոչ ճիշտ դրվածքով պետք է բացատրել, որ առանձին կոլտնտեսություններում խախտվում են կոլտնտեսականների վարձատրման կանոնները, անտեսվում է ընդհանուր ժողովների, վարչության նիստերի դերը, չի ապահովվում կոլտնտեսականների մի մասի մասնակցությունը ժողովներին: Շատ տեղերում անգործության են մատնված վերստուգիչ հանձնաժողովները:

Միահամուռ հավանություն տալով Վրաստանի կոմկուսի Կենտկոմի XIV պլենումի որոշումներին, պլենումը կուսշրջկոմի, սկզբնական կուսակազմակերպությունների, սովխոզների առջև խնդիր դրեց՝ կատարելագործել կազմակերպական և քաղաքական աշխատանքի ձևերն ու մեթոդները, որոշումների կատարման վերահսկողությունն ու սիստեմատիկ ստուգումը, ըստ ամենայնի բարձրացնել կատարողական կարգապահությունը, մարդկանց ջանքերը նպատակամղել հնգամյակի եզրափակիչ տարվա և, ամրողջությամբ վերցրած, հնգամյակի առաջադրանքների և սոցպարտավորությունների կատարմանը:

Պլենումի աշխատանքին մասնակցում էր և ելույթ ունեցավ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի անդամության թեկնածու, «Սովետական Վրաստան» թերթի խմբագիր Հ. Բլրցյանը:

22 մարտի

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ

«Վրացգյուղտեխնիկա» հանրապետական միավորման Ախալքալաքի բաժանմունքը, որ գերակատարումով է իրացրել տրակտորների և կցվող գործիքների նորոգման առաջին եռամսյակի պլանը, որոշել է մինչև շաբաթօրյակի օրը նորոգել ևս հինգ կոմբայն, ավտոմեքենաների 20 շարժիչ: Ապրիլի 19-ին մեխանիզատորները և ավտովարորդները կոլտնտեսությունների և սովխոզների դաշտերը կփոխադրեն 1.200 տոննա օրգանական պարարտանյութ, այլ շրջաններից կբերեն 140 տոննա գյուղատնտեսական բեռ:

Շրջանի պիոներական, կոմերիտական կազմակերպությունները հավաքելու են 90 տոննա մետաղի ջարդոն, 30 հազար շիշ: Բնակչության և անասնատնտեսության աշխատողների ուժերով կտնկարկվի ավելի քան 10 հազար դեկորատիվ և պտղատու ծառ, 30 հեկտար տարածության վրա կստեղծվեն դաշտապաշտպան անտառշերտեր:

Կարմիր շաբաթօրյակը որոշել են բարձր արտադրողական աշխատանքով նշանավորել գլխավորող պանրագործարանի, բնակչության կենցաղային սպասարկման և ջրային տնտեսության վարչությունների, ավտոտրանսպորտային ձեռնարկությունների, N 18 շարժական մեքենայացված շարասյան կոլեկտիվները: 10 ապրիլի

ԴԱՇՏԵՐՈՒՄ ԵՌՈՒԶԵՌ Է

Բոգդանովկայի շրջանի Սաթխայի կոլտնտեսության դաշտավարներն ու մեխանիզատորները, օրեցօր լայն թափ հաղորդելով գարնանացանին, պարտավորվել են եզրափակիչ տարում ստանալ 22 ցենտներ հացահատիկ, 120 ցենտներ կարտոֆիլ, 35 ցենտներ բազմամյա խոտաբույսեր և այլն:

Անխափան ու բարձր արտադրողականությամբ օգտագործելով կոլտնտեսության հարուստ տեխնիկան, կոմունիստ Վարազդատ Նանյանի ղեկավարած տրակտորային բրիգադի մեխանիզատորները ամենասեղմ ժամկետում ավարտեցին խոտաբույսերի և կարտոֆիլի ցանքը:

Կոլտնտեսությունում կազմակերպված են ընթանում դաշտերը քարերից ու քարակույտերից մաքրելու, նոր հողեր յուրացնելու աշխատանքները: Հիանալի աճել են 100 հեկտար «անքիստ-1» աշնանացան ցորենի ցանքերը, որոնք վաղ գարնանը բարձրորակ փոցխվել ու սնուցվել են ազոտային ու ֆոսֆորային պարարտանյութերով: Քարահավաքին մասնակցում են 250-ից ավելի կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ: Նրանք արդեն մաքրել են ավելի քան 550 հեկտար ցանքադաշտ: Կոլտնտեսությանը մեծ օգնություն է ցույց տալիս «Վրացդյուղտեխնիկայի» շրջանային բաժանմունքի մելիորատիվ մեքենայացված ջոկատը: Անցած աշնանը և այս տարի բաժանմունքի մեխանիզատորները յուրացրել և շրջանառության մեջ են դրել 60 հեկտար նոր հողեր, որոնցից 40-ի վրա գարնանը հացահատիկայինների ցանք է կատարվել: Առաջիկայում ջոկատը կյուրացնի ևս 60 հեկտար խամ ու խոպան հողեր:

Կարտոֆիլի 60 հեկտար պլանտացիաներից կոլտնտեսությունում առաջին անգամ 25 հեկտարում արմատավորվում է կոմպլեքսային մեքանայացում: Արդեն ձեռք են բերվել պլանտացիաների միջշարային տարածությունները մշակող և բերք հավաքող անհրաժեշտ սարքեր ու մեքենաներ:

10 մայիսի

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ

[Փեփրոնե Եղիազարյան]

Ախալքալաքի շրջանի Ազավրեթ գյուղում է ծնվել Փեփրոնե Եղիազարյանը: Առանձնահատուկ ոչ մի բան չկա նրա կենսագրության մեջ: Սիրել է երիտասարդ հասակից իրեն նվիրել մանուկների ուսուցման և դաստիարակության վեհ գործին: Մինչև VI դասարանը նա սովորել է Ալթայի երկրամասի Ցենրալնայա Ուսադբայի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցում և արծաթե մեդալով ավարտելուց հետո աշխատանքի է անցել նույն դպրոցում որպես տարրական դասարանների ռուսաց լեզվի ուսուցչուհի: Դա երազկոտ, աշխույժ ու եռանդով լեցուն աղջկա նոր կյանքի սկիզբն էր:

1961 թվականին Եղիազարյանը հեռակա կարգով ավարտում է Երևանի Լենինգրադի անվան ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը և աշխատանքի է անցնում Կոկիայի (Ախալքալաքի շրջան) ութամյա դպրոցում:

Շրջանում շատերն են ճանաչում նրան: Ռուսաց լեզվի շատ դասատուներ ներկա են եղել շրջլուսաբաժնի մեթոդական կաբինետի կողմից կազմակերպած նրա բաց դասերին, կամ էլ շրջանային սեմինարներում և իրազեկություններում լսել ռուսաց լեզվի դասավանդմանը նվիրված նրա զեկուցումները, որոնցից մեկը «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկան նոր ծրագրերով» զեկուցումը, հավանության է արժանացել լուսավորության մինիստրության կողմից և կարգացվել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

Փեփրոնն Եղիազարյանի աշխարհը դպրոցն է, դասերն ու սանները:

Սովորողների մեջ նա դաստիարակում է մի ընդհանուր վարքագիծ, որը պարտադիր է թե՛ դպրոցում, թե՛ տանը, և թե՛ փողոցում, և ամենակարևորը ռուսաց լեզվի նկատմամբ սեր առաջացնելն է: Փեփրոնն միշտ էլ հանում է իր նպատակին, չունի երկարեցիներ և «երկուսներով» սովորող աշակերտներ:

Դպրոցականները սիրով, ծնողները գովասանքով, գործընկերներն ակնածանքով են արտասանում սիրելի ուսուցչուհու անունը: Եվ դա նրա աշխատանքը գնահատելու ամենալավ չափանիշն է ու վկայությունը:

20 մայիսի

ՀԱՐԳՎԱԾ ՄԱՐԴԸ

[Թոմաս Հովհաննիսյան]

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Բոգդանովկայի շրջանի Թորիա գյուղի բնակիչ Թոմաս Հովհաննիսյանը մեկնեց ռազմի դաշտ պաշտպանելու հայրենիքը: Թամանյան 89-րդ դիվիզիայի մարտիկների հետ ահեղ մարտերում նա հասավ մինչև Բեռլին և ցուցաբերած արիության համար պարգևատրվեց Կարմիր աստղի երկու շքանշանով ու մեդալներով:

Ետպատերազմյան տարիներ: Ավելի քան քսան տարի Հովհաննիսյանը ղեկավարեց Բոգդանովկայի շրջանի Թորիա գյուղի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսությունը, որը այդ տարիներին հաստատուն տեղ գրավեց շրջանի առաջավոր տնտեսությունների շարքում:

Գյուղատնտեսության բնագավառի փորձված աշխատողը պատերազմի տարիների պարգևներին ավելացրեց նաև նորերը: Նա պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, մեդալներով, ինչպես նաև պատվոգրերով:

Գվարդիայի նախկին ավագ Թ. Հովհաննիսյանը հանրապետական կարգի անհատական կենսաթոշակառու է և վաստակած հարգանք է վայելում:

24 մայիսի

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրացական ՍՍՀ Գերագույն և տեղական սովետների ընտրությունների առթիվ ծավալված ագիտացիոն-մասսայական աշխատանքին ակտիվորեն են մասնակցում Ախալքալաքի կուսշրջկոմի դասախոսական խմբի և «Գիտելիք» ընկերության շրջանային բաժանմունքի անդամները, ինչպես նաև գյուղական մտավորականությունը: Կուսշրջկոմի մշակած թեմատիկ պլանի համաձայն, տեղերում կարդացվել է 32 դասախոսություն հետևյալ թեմաներով՝ «ՍՍՀՄ սահմանադրությունն ամենադեմոկրատականն է աշխարհում», «Ընտրական սիստեմը ՍՍՀՄ-ում», «Բուրժուական կեղծ դեմոկրատիան», «Լ. Ի. Բրեժնևի արտասանած ճառը Կրեմլի համագումարների պալատում կայացած հանդիսավոր ժողովում»:

Կուսշրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժինն ու շրջսովետի կուլտուրայի բաժինը կազմել են շրջիկ բրիգադ գյուղերում ընտրողների համար զեկուցումներ և համերգներ կազմակերպելու համար:

Շրջկոմի քաղլուսկաբինետում սահմանված է հերթապահություն, ընտրողներն ու ագիտատորները ստանում են իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Այստեղ առանձնացված է ընտրական գրականություն: Պատերին փակցված պլակատները, դիագրամները պատմում են նախորդ ընտրություններից հետո շրջանի ձեռք բերած հաջողությունների, հնգամյակի եզրափակիչ տարվա պլանների մասին:

27 մայիսի

ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ [Հրանուշ Քորոյան]

... Գյուղական ակումբում նախընտրական ժողով էր: Դիլիսկայի (Ախալքալաքի շրջան) կոլտնտեսականները պետք է առաջադրեին Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածու: Առաջինը ելույթ է ունենում կաթնապրանքային ֆերմայի կթվորուհի Սեգա Զոփունյանը: Արտահայտելով ժողովականների ջերմ ցանկությունը, նա առաջարկում է դեպուտատության թեկնածու առաջադրել ֆերմայի N 1 բրիգադի կթվորուհի Հրանուշ Ենոքի Քորոյանին:

Բոլորը ջերմորեն պաշտպանում են այդ առաջարկությունը, նշում Հրանուշի արժանիքները:

Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունների N 122 ընտրական օկրուգի ընտրական հանձնաժողովը պրանցել է Բորոյանի թեկնածությունը:

Հրանուշ Բորոյանը ունի մեր օրերի երիտասարդ մարդուն բնորոշ կենսագրություն: Եթե թերթես նրա կյանքի էջերը, որը փոքրիկ մի պատմություն է, կտեսնես այս լուսավոր ճանապարհը, որով հաստատակամորեն քայլել է Դիլիսկացի կթվորուհին: Ծնվել է Դիլիսկայում, ավարտել տեղի միջնակարգ դպրոցը, հետո շատերի հետ եկել արտադրություն: Դա 1957 թվականին էր:

... 1963 թվականից Հրանուշ Բորոյանը մեծ սիրով ու խանդավառությամբ է կատարում կթվորուհու դժվարին պարտականությունն ու իր անբասիր աշխատանքով վաստակել է համագյուղացիների սերն ու համակրանքը, դարձել անասնապահության բնագավառի ճանաչված աշխատող:

Ամեն անգամ, երբ ամփոփվում են ֆերմայի ու բրիգադի աշխատանքի արդյունքները, շատերի հետ ուրախանում է նաև կթվորուհի Հրանուշը: Կաթի հաշվառման տեղեկագրերում և սոցմրցության հաղթողների առաջին շարքերում միշտ տեղ գտած նրա անվան տակ գրված է լինում ստանձնած բարձր պարտավորության կատարման ցուցանիշը:

Նոր հաջողությամբ է նշանավորվել Հրանուշի աշխատանքը հատկապես հնգամյակի որոշիչ տարում: Նա իր խնամած 14 կովերի յուրաքանչյուրից ստացել է մեկական հորթ և առաջադրանքի 1.970-ի դիմաց կթել 2.155 կիլոգրամ կաթ:

Ֆերմայի կթվորուհիները, երբ ծանոթացան մամուլում հրապարակված ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի նամակին՝ ուղղված էստոնական ՍՍՀ «Վիլյանդի» սովխոզի կթվորուհի Լեյդա Պեպսին, նոր ուժով ու խանդավառությամբ անցան գործի: Նրանցից յուրաքանչյուրը, հետևելով անվանի կթվորուհու օրինակին, ստանձնեց բարձր պարտավորություններ: Հրանուշը խոստացել է այս տարի 14 կովից ստանալ նույնքան հորթ, յուրաքանչյուրի կաթնատվությունը պարտավորության 2.400-ի դիմաց հասցնել 2.600 կիլոգրամի:

Խոստումնալից են ընթացիկ տարվա անցած ամիսների արդյունքները: Զորս և կես ամսում առաջավոր կթվորուհին մեկ կովից արդեն կթել է 899 կիլոգրամ կաթ, նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ 301 կիլոգրամով ավելի:

Հրանուշ Ենոքի Բորոյանը աչքի է ընկնում նաև հասարակական աշխատանքում:

***

... Շուրջ 600 ընտրող էր հավաքվել Ախալաքալաքի շրջանի Դիլիսկայի N 122 ընտրական օկրուգում հանդիպում ունենալու Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածու, կթվորուհի Հրանուշ Ենոքի Բորոյանի հետ:

Նախընտրական ժողովը ներածական խոսքով բացեց օկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահ Հ. Գրիգորյանը:

Խոսքը տրվում է վստահված անձ, կոլտնտեսության գյուղատնտես Ս. Գաբրիելյանին: Նա ջերմորեն է խոսում դեսպուտատության թեկնածուի արժանիքների մասին և ներկաներին կոչ անում հունիսի 15-ին միահամուռ ձայն տալ արժանավոր թեկնածու, Իլլիսկայի կոլտնտեսության կթվորուհի Հ. Քորոյանի օգտին:

29 մայիսի

ԹԵԹՐԻԾՂԱՐՈՑԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հնգամյակի ավարտական տարին արտադրական բարձր ցուցանիշներով եզրափակելու համար Բոգդանովկայի շրջանի Օռլովկայի կոլտնտեսության (նախագահ Լ. Վարդանյան) աշխատողները լայն մրցություն են ծավալել: Նրանք գերազանցումով իրացրին կաթի արտադրության և վաճառքի առաջին կիսամյակի պլան-պարտավորությունները: Անցած 6 ամսում կաթնապրանքային ֆերմայում ֆուրաժային ամեն մի կովից ստացվել է 1. 160 կիլոգրամ կաթ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, 266 կիլոգրամով ավելի, ըստ որում կաթի համախառն արտադրությունն ավելացել է 107 տոննայով. կոլտնտեսությունը պետությանն է վաճառել 436 տոննա կաթ: Մինչև օգոստոսի 1-ը այդ ցուցանիշը կհասցվի 600 տոննայի և դրանով կնվաճվի տարվա բնագիծը, իսկ 320 տոննա էլ արտապլանային կարգով կվաճառվի մինչև տարեվերջ:

Օռլովկացիները տարիների իրենց փորձով համոզվել են, որ անասնապահական մթերքների արտադրության ասպարեզում լավ արդյունքների հասնելու ռեալ երաշխիքը կերի կայուն բազայի ստեղծումն է: Նրանք ջերմորեն ընդունեցին Թեթրիծղարոյի շրջանի գյուղի աշխատավորների հայրենասիրական կոչը և պարտավորվեցին այս տարի կուտակել 2.040 տոննա խոտ, պատրաստել 560 տոննա սիլոս:

Ամենուրեք փարթամ բուսականություն է աճել: Դաշտ են դուրս եկել դաշտավարական երկու բրիգադների և մեխանիզատորական բրիգադի անդամները, որոնք արագ թափով առաջ են տանում խոտհունձը և կերի սիլոսացումը: Այստեղ վաղ առավոտից մինչև մայրամուտ չի դադարում աշխատանքը: Սիլոսահավաքի կոմբայններով մեխանիզատորներ Մ. Տերեխովը, Ա. Տամիլինը հնձում են կորնգանի 260 տոննա կանաչ զանգված: Մեխանիզատորներ Ի. և Վ. Սուխոռուկովները դիզելային տրակտորներով պնդացնում են սիլոսանյութը, հետևում որակին:

Կերի սիլոսացումն ավարտելուց հետո կոլտնտեսականները ձեռնամուխ կլինեն սենաժի պատրաստմանը: Այդ նպատակով չթուլացող տեմպերով առաջ է տարվում 250 տոննա տարողությամբ նոր խրամատի շինարարությունը:

22 հուլիսի

ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Կոնկրետ ի՞նչ անել, որպեսզի շրջանառության մեջ դրվեն ունեցած բոլոր հնարավորությունները, շեշտակիորեն բարձրացվի կարտոֆիլի բերքատվությունը, հաղթահարվի առանձին տնտեսությունների ետ մնալը, որո՞նք են կարտոֆիլի զարգացման հեռանկարները: Այս հարցերի շուրջ դրծարար խոսակցություն ծավալվեց Ախալքալաքի շրջանի կուսակցական-տնտեսական ակտիվի օրերս տեղի ունեցած ժողովում, որին մասնակցում էին կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավարներ, գյուղսովետի նախագահներ, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների քարտուղարներ, գյուղատնտեսներ, դաշտավարական և մեխանիզատորական բրիգադավարներ, դպրոցների դիրեկտորներ, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ:

Ժողովին ներկա էին նաև Հանրապետության գյուղատնտեսության և մթերումների մինիստրությունների, «Վրացգյուղտեխնիկա» հանրապետական միավորման, այլ մամիններ և Ծալկայի շրջանի ղեկավար աշխատողներ:

Զեկուցողը՝ կուսշրջկոմի առաջին քարտուղար Ա. Մովսիսյանը և ելույթ ունեցող ընկերները նշեցին, որ շրջանի կուսակցական կազմակերպությունների, տնտեսությունների ղեկավարների, գյուղատնտեսության բնագավառի բոլոր աշխատողների ուշադրության կենտրոնում է՝ «Հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում կարտոֆիլի երաշխավորված բերք ապահովելու և նրա արտադրությունն ավելացնելու մասին» Վրաստանի կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների սովետի համատեղ որոշումը:

1974 թվականին կարտոֆիլի պլանտացիաների ամեն մի հեկտարից հավաքվեց 132 ցենտներ միջին բերք, պարտավորության 18.400-ի փոխարեն պետությանը վաճառվեց 21.400 տոննա բարձրորակ կարտոֆիլ, որը շրջանի տնտեսություններին բերեց 790 հազար ռուբլու զուտ եկամուտ: Այդ նույն տարում կարտոֆիլի արտադրության և պետական վաճառքի հնգամյա առաջադրանքները իրացրին Բուռնաշեթի, Խանդոյի, Օրջայի, Թոթխամի կոլտնտեսությունները, Վաչիանի սովխոզը և այլ տնտեսություններ:

Շրջանի կարտոֆիլագործները պարտավորվել են հնգամյակի եզրափակիչ տարում արտադրել 40 հազար տոննա կարտոֆիլ, որից 21 հազար տոննան վաճառել պետությանը:

Այդ նպատակով շրջանում լուրջ քայլեր են արվել: Ագրոտեխնիկական լավագույն ժամկետում, բարձրորակ սերմացուով է կատարվել 2.930 հեկտար կարտոֆիլի ցանքը: Եվ, չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, կարտոֆիլի բարձր բերք է հասունացել: Դրան մեծապես նպաստեցին արհեստական անձրևացնող սարքերի, մանր մելիորացիայի (գործի դրվեցին նորակառույց 15 ջրամբարներ), շարժական պոմպակայանների միջոցով պլանտացիա-

ների ոռոգումը, ցանքերի բարձրորակ մշակումը, լրացուցիչ սնուցումները:

Նախնական հաշվումները ցույց են տալիս, որ կարտոֆիլի հեկտարի միջին բերքատվությունը կհասնի 155 ցենտների, համախառն արտադրությունը 44 հազար տոննայի, պետությանը կվաճառվի 25 հազար տոննա, կիրացվի պետությանը կարտոֆիլի վաճառելու հնգամյա առաջադրանքը:

Վաչիանի սովխոզի կարտոֆիլագործները 315 հեկտար տարածության ամեն մի հեկտարից միջին հաշվով կապահովեն 200 ցենտներ միջին բերքի ստացումը, պետությանը կհանձնեն 4.500 տոննա կարտոֆիլ: Բուռնաշենի կոլտնտեսությունը վաճառելու է 1.500, Կարտիկամի սովխոզը 2.300 տոննա կարտոֆիլ:

Ջերմորեն արձագանքելով կուսակցության XXV համագումարն արժանավայել դիմավորելու համար սոցմրցություն ծավալելու մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշմանը, շրջանի աշխատավորները հանդես են գալիս հայրենասիրական նախաձեռնություններով: Դիլիսկայի կոլտնտեսությունը որոշել է ներկա տարի կարտոֆիլի պլանացիաները ընդարձակել 100 հեկտարով հասցնելով 300 հեկտարի: Այդ նախաձեռնությունը, որին հետևեցին նաև այլ տնտեսություններ, հավանության արժանացավ կուսշրջկոմի բյուրոյի կողմից:

Ժողովը միաժամանակ նշեց, որ մի շարք տնտեսություններում վատ են օգտագործվում եղած հնարավորությունները, թերագնահատվում է կոմպլեքսային մեքենայացման նշանակությունը:

Հանրապետության մելիորացիայի և ջրային տնտեսության մինիստրությունը ձգձգում է Զրեսի և Բուռնաշենի ջրամբարների, առևարի միջնորտությունը երկու հազար տոննա տարողությամբ կարտոֆիլի պահեստների շինարարությունը: Նաև նշվեց, որ «Սորտսեմովչ» կազմակերպության Ախալցխեի մթերման գրասենյակը շրջանի տնտեսություններին վատ է ապահովում տեսակավոր սերմերով:

Ակտիվի ժողովում ելույթներ ունեցան Զակի սովխոզի համանուն տեղամասի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Ֆ. Պոգոսյանը, Կաջոյի սովխոզի դիրեկտոր Վ. Ալեքսանյանը, «Վրացգյուղտեխնիկա» միավորման շրջանային բաժանմունքի գլխավոր ինժեներ Է. Ուզունյանը, Դիլիսկայի կոլտնտեսության կուսկազմակերպության քարտուղար Ա. Մոսոյանը, գյուղատնտեսական աշխատողների արհմիության շրջկոմի նախագահ Լ. Մետրևելին, Էխտիլայի սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Ռ. Ռոստակյանը, Մաջաղիայի միջնակարգ դպրոցի դիրեկտոր Գ. Վարդիկյանը, Խանդոյի կոլտնտեսության դաշտավարական բրիգադավար Մ. Սահակյանը, Վաչիանի սովխոզի գյուղատնտես Ֆ. Իգիթյանը, շրջսպառմության մթերման գրասենյակի դիրեկտոր Վ. Ղազարյանը, ինչպես նաև «Վրացգյուղտեխնիկա» հանրապետական միավորման նախագահի տեղակալ Ն. Ճղոնիան, գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Ա. Հասանովը, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի բուսաբուծության սեկտորի վարիչ Գ. Կալանդարաշվիլին, կուսակցության Ծալկայի շրջկոմի առաջին քարտուղար Ա. Սկաչկովը:

Ժողովը քննարկված հարցի շուրջն ընդունեց բանաձև և ՍՄԿԿ XXV համագումարը արժանավայել նվերներով դիմավորելու կոչ՝ ուղղված շրջանի ժողովրդական տնտեսության բոլոր աշխատողներին:

Հաշված օրեր են մնացել մասսայական բերքահավաքին: Պետք է սպասել, որ շրջանի աշխատավորները հավատարիմ կմնան տված խոսքին, պատվով կկատարեն ստանձնած պարտավորությունները:

23 սեպտեմբերի

ՍԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ

[Ռոզա Մանվելյան]

Ուսուցի՜չ: Որքան պարտավորեցնող է: Նա պետք է նաև մարդկային լավագույն հատկությունների կրողը լինի, մարդ, առանց որի ոչ բժիշկ կդառնաս, ոչ գիտնական, առանց որի կույր կլինես մտքով:

Վաղուց, շատ վաղուց աշակերտական նստարանին հրաժեշտ տված մարդիկ իրենց սրտի նվիրական անկյունում պահում են սիրելի ուսուցչի կերպարը, հպարտանում նրա աշակերտը լինելու համար:

Այդպիսիներից է Ախալքալաքի Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Ռոզա Մանվելյանը:

Նա Ջավախք է եկել Թբիլիսիի 42-րդ միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով, ապա օտար լեզուների ինստիտուտը գերազանց առաջադիմությամբ ավարտելուց հետո:

Ռոզան իր համեստ բնավորությամբ, աշխատասիրությամբ դարձել է դպրոցի լավագույն մանկավարժներից մեկը, վայելում է ողջ ուսուցչական կոլեկտիվի սերն ու հարգանքը: Նա աշակերտների հոգում կարողանում է բորբոքել իսկական սեր գիտության, կյանքի, հայրենիքի և իր դասավանդած առարկայի նկատմամբ: Նրա սաները բոլորն էլ սիրով են սովորում անգլերեն լեզուն:

Ռոզա Մանվելյանը միաժամանակ հասարակական աշխատանքի ակտիվ նախաձեռնող է. ղեկավարում է դպրոցի օտար լեզվի մեթոդական հանձնաժողովը:

4 հոկտեմբերի

1976

ՁՈՒԳԱԿՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

Հասկավոր կուլտուրաների բարձր բերք աճեցրին Բոգդանովկայի շրջանի Հեշտիայի կոլտնտեսությունում: Կոլտնտեսականներն ու մեխանիզատորները բոլոր ուժերը մոբիլիզացրել են 460 հեկտարի բերքն արագ և անկորուստ հավաքելու համար: Գործի է դրված հացահատիկային հինգ կոմբայն, ըստ որում երկուսը օգնության կարգով ուղարկվել է Ախալցիխեի շրջանի Մինաձեի սովխոզից: Բարձր արտադրողականությամբ է աշխատում կոլտնտեսությունում և շրջանում առաջին անգամ գործի դրված «Նիվա-5» մակնիշի նոր կոմբայնը, որի ղեկի մոտ է նստած մեխանիզատոր Ալեքսան Էդնատոսյանը: Ամեն օր նա հնձում ու կալսում է 5-6 հեկտարի բերք:

Բերքը դաշտից կալ փոխադրելու պարտականությունները արագ և անկորուստ են կատարում Բոլնիսի շրջանից այստեղ եկած 3 ավտովարորդները, որոնք օրական դրեթե երկու առաջադրանք են կատարում:

Առաջին արդյունքները գոհացուցիչ են: Ամեն մի հեկտարից միջին հաշվով ստացվում է 25-30 ցենտներ հացահատիկ:

Կալում ևս եռում է աշխատանքը: Մեխանիզատոր Սեդրակ Հովասյանը, սերմազտիչ աշխատեցնելով մինչև ուշ երեկո, ամեն օր մաքրում է 20-22 տոննա հացահատիկ:

Հացահատիկի մթերման առաջադրանքը 70 տոննա է, որից 50-ն արդեն կատարված է, և 150 տոննա էլ կհանձնվի: Լրացուցիչ 130-ը հեշտիացիները պետական շտեմարան են ուղարկելու Կուբանի երկրագործների օրինակով:

Կոլտնտեսականներն ու մեխանիզատորները հաջողությամբ են կատարում կերի կուտակման պարտավորությունները: Արդեն հավաքվել է 1.500 տոննա խոտ, պատրաստվել է 1.700 տոննա սիլոս, 1.370 տոննա սենաժ: Աշխատանքները շարունակվում են: Հավաքվում է 230 հեկտար առատ աճած վարսակի ցանքաղաշտերի կանաչ զանգվածը:

Բերքահավաքից անմիջապես հետո հակավորվում է ծղոտը: Մեխանիզատորներ Ալեքսան Մարկոսյանը և Աբրահամ Անտանոսյանը ծղոտամամլիչներով օրական հակավորում են 18-20 տոննա ծղոտ: Արդեն անասնաշենքերի մոտ է փոխադրված ու դիզված 360 տոննա ծղոտ:

Այստեղ արագ թափով առաջ են ընթանում ցրտահերկն ու աշնանացանը: Առանց պարարտացնելու ոչ մի հեկտար վար չի կատարվում: Հերկված 300 հեկտար տարածությունը պարարտացվել է հանքային աղերով: Նորից թեժ պայքարի մեջ են մեխանիզատորնե-

ը: Հովսեփ և Գեորգի Բաղդասարյանները (հայր և որդի), Սուրեն Գրքիկյանը նախապատրաստում են հողը, իսկ Ամիկոս Քիշոյանն ու Պետրոս Անտանոսյանը «անքիստ-1» ցորենի ընտիր սերմացուով առաջ են տանում աշնանացանը:

Հեշտիայի կոլտնտեսականների և մեխանիզատորների խոսքը մեկն է՝ 5-8 օրով կրճատել բերքահավաքի, ցրտահերկի, աշնանացանի ժամկետները, զգալիորեն գերակատարել հացահատիկի, կերի արտադրության և մթերումների՝ տասներորդ հնգամյակի առաջին տարվա սոցիալիստական պարտավորությունները:

2 սեպտեմբերի

ԽՈՍՏՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ԳՏՈՒՄՈՎ

Կոնկրետ ի՞նչ է արվել կարտոֆիլի առատ բերք աճեցնելու համար, ի՞նչ պետք է արվի բերքը սեղմ ժամկետում, առանց կորստի հավաքելու, մթերումների առաջադրանքը անթերի կատարելու, առանձին տնտեսությունների ետ մնալը հաղթահարելու, եկող տարվա բարձր բերքի հիմքերը դնելու համար:

Այս հարցերի շուրջը գործարար խոսակցություն ծավալվեց Ախալքալաքի շրջանի կուսակցական-տնտեսական ակտիվի ընդլայնված ժողովում, որին մասնակցում էին կոլտնտեսությունների, սովխոզների, գյուղսովետների ղեկավարներ, կուսակազմակերպությունների քարտուղարներ, գյուղատնտեսներ, դաշտավարական և մեխանիզատորական բրիգադների բրիգադավարներ, կարտոֆիլագործներ: Ժողովին ներկա էին հանրապետության գյուղատնտեսության մինիստրության, «Վրացգյուղտեխնիկա» հանրապետական միավորման, առևտրական և մթերող վերադաս մարմինների ներկայացուցիչներ:

Զեկուցումով հանդես եկավ կուսշրջկոմի առաջին քարտուղար Ա. Մովսիսյանը:

- Բրյանսկի մարզի գյուղատնտեսության աշխատողների տված խոստումը հայրենիքին՝ ծանրակշիռ ավանդ ներդնել երկրի արդյունաբերական շրջանները կարտոֆիլով վերամշակող ձեռնարկությունները հումքով ապահովելու մասին,- ասում է զեկուցողը,- լայն արձագանք է գտել նաև մեր շրջանում: Բենարկելով հայրենասիրական այդ նախաձեռնության առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի նամակը, շրջանի կարտոֆիլագործները լայն թափ են հաղորդել բերքահավաքի նախապատրաստությանը, որոշել են բերքահավաքը կատարել նախատեսված ժամկետից շուտ և անկորուստ, զգալիորեն գերազանցել նոր հնգամյակի առաջին տարվա համար սոցիալիստական պարտավորությամբ նախատեսված բնագծերը:

Շրջանի կուսակցական և սովետական կազմակերպությունները, տնտեսությունների ղեկավարները, գյուղատնտեսական բնագավառի աշխատողները, ուշադրության կենտրոնում պահելով «Կարտոֆիլի երաշխավորված բերք ապահովելու, նրա արտադրությունն ավելացնելու մասին» Վրաստանի կոմկուսի Կենտկոմի որոշումը, դեռ անցած տարվա աշնանից պայքար ծավալեցին հնգամյակի անդրանիկ տարում 43 հազար տոննա կարտոֆիլի համախառն բերք հավաքելու և 24 հազարը պետությանը վաճառելու համար: Այդ բնագիծը նվաճելու և այն գալիորեն գերազանցելու համար շրջանում լուրջ քայլեր են կատարվել: Ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում կատարվեց 3.008 հեկտար կարտոֆիլի ցանք: Եվ, չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին (երկարատև անձրևներ, կրկնակի ցրտահարություն, երաշտ), շրջանում կարտոֆիլի բարձր բերք է աճել: Դրան մեծապես նպաստել են մի շարք միջոցառումներ: Ցանքը կատարվել է թարմացած սերմացուով, մեքենայական եղանակով: Պլանտացիաների լիարժեքությունն ապահովելու նպատակով մեկ հեկտարի վրա տնկվել է միջին հաշվով 36 ցենտներ կարտոֆիլ:

Նախորդ տարիների համեմատությամբ ավելի արդյունավետ են օգտագործվել պարարտանյութեր: Հող են մտցվել 1.753 տոննա օրգանական, 5.378 տոննա հանքային պարարտանյութեր: Ռացիոնալ օգտագործվեցին ջրային բոլոր ռեսուրսները:

Հանրապետության վերադաս մարմինների ու կազմակերպությունների օգնությամբ վերջին երկու տարում շրջան են փոխադրվել կարտոֆիլատնկիչ ու կարտոֆիլահան 250 մեքենա, բազմաթիվ կուլտիվատորներ, արհեստական անձրևացնող 100 սարք, շարժական ջրհան պոմպակայաններ ու սարքեր: Շահագործման է հանձնվել Զրեսի հզոր ջրհան կայանը:

Վաչիանի սովխոզի մեխանիզատորների կարտոֆիլի բոլոր պլանտացիաները կոմպլեքսային եղանակով մշակելու նախաձեռնությունը, որը Վրաստանի կոմկուսի Կենտկոմի կողմից հավանություն է արժանացել, լայն արձագանք գտավ շրջանում և հանրապետությունում:

Ահա թե ինչու Վրաստանի կոմկուսի Կենտկոմը Վաչիանում կազմակերպեց գիտա-գործնական կոնֆերանս, որին մասնակցում էին նաև հանրապետության հիմնական կարտոֆիլագործական շրջանների ներկայացուցիչներ:

Վաչիանցիների օրինակով, շրջանում կարտոֆիլի շուրջ 1.700 հեկտար պլանտացիաների միջշարային տարածությունների մշակումը կատարվեց մեքենայական եղանակով: Պատասխանատվության բարձր զգացումով այդ առաջավոր եղանակի արմատավորմանը ձեռնամուխ եղան Դիլիսկայի, Օրջայի, Թոթխամի, Բարալեթի, Պրտենայի կոլտնտեսությունները, Կարզախի, Սուլդայի, Էխտիյայի, Ալաստանի սովխոզները:

Կոլտնտեսություններում և սովխոզներում բավարար աշխատանք է կատարվում կարտոֆիլի բերքահավաքի ու մթերումների շրջանը պատրաստ դիմավորելու համար:

Ժողովը միաժամանակ նշեց, որ ձեռք բերածը շրջանի հնարավորությունների սահմանը չէ: Բանն այն է, որ տնտեսություններում դեռևս կան չօգտագործված ռեզերվներ ու հնարավորություններ: Այսպես, առանձին տնտեսություններում անորակ է կատարվում հողի նախացանքային մշակումը, չեն պահպանվում ցանքի նորմաները, ցանքը կատարում են վատորակ սերմերով, ձգձգում են պլանտացիաների մշակման և ոռոգման աշխատանքները: Շատ տեղերում տնտեսվում է քիմիական միջոցներով մոլախոտերի դեմ մղվող պայքարը: Այդ և նման այլ պատճառներով իրենց ունեցած հնարավորություններից ավելի ցածր բերք են աճեցրել Մաջադիայի, Կոթելիայի, Խուլգումոյի կոլտնտեսությունները, Կաջոյի, Հոկամի սովխոզները:

Տեխնիկան բերքահավաքին նախապատրաստելու վերաբերյալ վերջերս կատարված ստուգատեսը պարզել է, որ շրջանի ունեցած 142 կարտոֆիլահան մեքենաներից 35-ը անսարք վիճակում են: Բերքահավաքի տեխնիկան դեռևս պատրաստ չէ Վաչիանի, Կոթելիայի, Օրջայի կոլտնտեսություններում, Վաչիանի, Կարտիկամի, Կաջոյի սովխոզներում: Առանձին տնտեսություններում ձգձգվում է կարտոֆիլի պահեստների ու խրամատների նորոգումը, նորերի կառուցումը գյուղշին մինիստրության N 18 մեքենայացված շարժական շարասյան և միջկոլտնտեսային շինկազմակերպության կողմից:

Ժողովում ծավալված մտքերի լայն փոխանակությանը մասնակցողների խոսքը մեկն է՝ կազմակերպված անցկացնել բերքահավաքը, պետությանը հանձնել 24 հազար տոննա կարտոֆիլ, այդ թվում 15 հազար տոննան Թբիլիսիի աշխատավորներին:

Ակտիվի ժողովին մասնակցում էին և ելույթ ունեցան Վրացական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Ա. Ի. Մգելաձեն և «Վրացգյուղտեխնիկա» հանրապետական միավորման նախագահի առաջին տեղակալ Մ. Ի. Թեոդորաշվիլին:

Ակտիվի ժողովը քննարկված հարցի շուրջն ընդունեց բանաձև, որում մեծ տեղ է տրված կարտոֆիլի արտադրությունն արդյունաբերական հիմունքներով զարգացնելու, առաջիկայում շրջանում կաթնակարտոֆիլագործական խոշոր տնտեսություններ կազմակերպելու հարցերին:

Ժողովի մասնակիցները դիմում ընդունեցին՝ ուղղված շրջանի բոլոր կարտոֆիլագործներին:

30 սեպտեմբերի

ԱԳԻՏ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԸ ՅԱՅԼԱՂՆԵՐՈՒՄ

Ս. Մ. Կիրովի անվան կուլտուրայի տան ագիտ-գեղարվեստական բրիգադը, դիրեկտոր Խ. Մարտիկյանի ղեկավարությամբ, համերգային ելույթներ է ունեցել շրջանի Խանդոյի, Կոթելիայի, Բուռնաշեթի, Ղադոյի, Խուլգումոյի կոլտնտեսությունների, Զակի, Էխտիլայի, Կարտիկամի սովխոզների բյուլավոր անասնապահների առջև: «Գիտելիք» ընկերության դասախոսներ Հ. Լևանյանը, Լ. Ղինոյանը, Ա. Շիպակցյանը և ուրիշներ զեկուցումներ ու զրույցներ են անցկացրել անասնապահներին հետաքրքրող հարցերի շուրջը:

Ագիտ-գեղարվեստական բրիգադը ծրագրել է սպասարկել նաև Ախալքալաքի շրջանի ամառային արոտավայրերում գտնվող հանրապետության մյուս շրջանների անասնապահներին:

«ԱԽԹԱՄԱՐ»ԱՆՍԱՄԲԼԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Ախալքալաքում հաջողությամբ ելույթ ունեցավ «Հայհամերգ» միավորման «Ախթամար» երգի-պարի անսամբլը: Արտիստները հանդես եկան շրջկենտրոնում, Վաչիան, Բարալեթ, Խանդո, Դիլիսկա, ինչպես նաև Բոգդանովկայի շրջանի Գանձա, Սաթխա, Հեշտիա և այլ գյուղերում:

Ամենուրեք հանդիսատեսը բուռն ծափահարություններով ընդունեց Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհիներ Աննա Նշանյանի, Վարդուհի Խաչատրյանի, ասմունքող Հրաչուհի Ջինանյանի, անսամբլի երաժշտական խմբի ղեկավար՝ քյամանչահար Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստ Հրաչյա Մուրադյանի, ինչպես նաև պարուհիներ Էմմա Մնացականյանի ու Աննա Կարապետյանի ելույթները:

ՆՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

Շրջլուսաբաժնի մեթոդկաբինետին կից բացվել է նոր գրադարան, որի նպատակն է շրջանի մանկավարժներին տրամադրել մասնագիտական գրականություն: Գրադարանն արդեն ունի շուրջ 1.000 կտոր մանկավարժական-մեթոդական, ինչպես նաև գեղարվեստական գիտահանրամատչելի գրականություն: Առաջիկայում գրադարանը կհամալրվի նոր գրականությամբ:

Շրջանի դպրոցներին կից գործում է 64 գրադարան, ուր հաշվվում է ավելի քան 45 հազար կտոր գրականություն, որից ավելի քան 3 հազարը մանկավարժական-մեթոդական:

9 հոկտեմբերի

ՖԱԲՐԻԿԱՆ ԳՈՐԾԱՐԿԵԼ ԺԱՄԿԵՏԻՆ

Ախալքալաքում առաջին քայլերն են կատարվում անասնաբուծությունը արդյունաբերական հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: Կառուցվում են խոշոր եղջերավոր անասունների մատղաշների աճեցման միջտնտեսային համալիր, թռչնաբուծական ֆաբրիկա, առաջիկա մի քանի տարում շահագործման կհանձնվեն կաթնային և խոզաբուծական համալիրներ:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության այս առաջատար ճեռնակությունների մեջ շրջանում ուրույն տեղ է գրավում Դիլիսկա գյուղի կոլտնտեսության տերիտորիայում կառուցվող թռչնաբուծական համալիրը: Այն մեծ է իր նշանակությամբ, ծավալով ու նախագծային արժեքով: Պատվիրատու կոլտնտեսությունները շինարարությանը հատկացրել են երկու միլիոն 500 հազար ռուբլի: Ֆաբրիկայի արտադրական օբյեկտները և օժանդակ ճեռնարկությունները գրաղեցնելու են 20 հեկտար տարածություն: Ճեռնարկությունն իր տեխնոլոգիայով, աշխատանքի կազմակերպման ձևերով, արտադրական պրոցեսների մեքենայացման մակարդակով և այլ ցուցանիշներով հանրապետության միջկոլտնտեսային ճեռնարկություններում խոշորներից մեկն է լինելու:

Թռչնաբուծական ֆաբրիկայում 25 հազար հավից բաղկացած մայրական կազմը կոմպլեկտավորվելու է այնպիսի ցեղերի ու գծերի հավերով, որոնցից ստացված սերունդն օժտված լինի վաղ հասունացող և մսատվության բարձր հատկություններով: տարեկան արտադրվելու է 6,5 միլիոն ձու և տարվա բոլոր ամիսներին ձու է մատակարարվելու առևտրական կազմակերպություններին: Մշտական գործող ինկուբատորային արտադրամասի շնորհիվ կլոր տարին չի դադարի ճտերի արտադրությունը: Տարեկան արտադրվելու է 133 տոննա թռչնի միս (կենդանի քաշով) և բնակչությանը կվաճառվի ավելի քան 100 հազար ճուտ:

Բացի հիմնական արտադրամասերից, ֆաբրիկան ունենալու է օժանդակ արտադրամասեր՝ կաթնայրան, կերերի և մթերքների պահեստներ, սպանդանոց, սանիտարական թողարկման կետ, բուժարան-աղբաջրերի մաքրման կայան, ինչպես նաև՝ տիպային դրասենյակ, սպասարկող անձնակազմի համար բնակելի տուն և այլն:

Նկատի ունենալով կառույցի կարևորությունն ու ծավալը հանրապետության գյուղական շինարարության մինիստրությունը շինարարությունը հանձնարարել է իր ենթակայության տակ գտնվող Ախալքալաքի N 18 և Ախալցխեի N 8 հատուկ շարժական մեքենայացված շարասյուներին: Մոնտաժային աշխատանքներին օգնում է «Վրացգյուղտեխնիկա» շրջանային բաժանմունքը:

Ի՞նչ վիճակումն է ֆաբրիկայի շինարարությունը: Գործի սկիզբը դրվել է 1972 թվականին, իսկ ավարտականը՝ 1976-ն է: Առայժմ կատարված է շինմոնտաժային աշխատանքների ավելի քան 80 տոկոսը:

Բայց մինչև տարեվերջը կգործարկվի համալիրը: մեր կարծիքով ոչ: Բանն այն է, որ չի սկսված կախոյարանի շինարարությունը, դեռ տեղադրված չեն ծանրաքաշ ավտոմոբիլային կշեռքները, լրիվ ստացված չեն առանձին արտադրամասերի տեխնիկական սարքավորումները: Էլի ուրիշ մանր-մունր կարգավորումները դեռևս շատ ջանք են պահանջում օբյեկտի գործարկման համար: Դրանում մեղք ունեն նաև նախագծող կազմակերպությունները, որոնք շինարարության ավարտին մոտ «չտկումներ» են կատարում նախագծում: «Վրացգյուղտեխնիկայի» շրջանային միավորումը ժամանակին ձեռնամուխ եղավ թռչնանոցներում ԴՊ-300 մակնիշի կերաբաշխիչների մոնտաժավորմանը: Երկու թռչնանոցում գործն արդեն գլուխ էր եկել, երբ հանկարծ տեղադրված սարքերը հնացած համարվեցին, անհամապատասխան ժամանակի պահանջներին, և դրանք ԿԿՊ-8,5 նոր մակնիշի կերաբաշխիչներով փոխարինելու նոր նախագիծ ստացվեց Վրաստանի շինարարության պետական նախագծային ինստիտուտից: Բավական ժամանակ է անցել, իսկ այդ սարքերը չկան, ու հայտնի չէ, թե երբ տեղ կհասնեն:

Ինչ խոսք, նախագծողների մեղքը կարող է «թեթևացնել» այն հանգամանքը, որ համալիրը նորություն է, և, հետևապես, չորս տարի առաջ կազմած նախագծում կարող էին լինել անճշտություններ: Բայց ինչո՞վ բացատրել, որ հանկարծ նախագծային այդ ինստիտուտը գրչի մի հարվածով ջնջեց և փոխեց ֆաբրիկայի տարբեր արտադրամասերը միացնող ներքին ասֆալտապատ ճանապարհներ գցելու իր նախկին որոշումը, ընդունեց նորը կառուցել հակասանիտարիա առաջացնող կոշտ ճանապարհներ: Երևի, նախագծողների կարծիքով, ասֆալտածածկ ճանապարհն էլ «հնացել են», եկել է դրանք փոխելու ժամանակը:

Այդ և նման այլ պատճառներով այժմ կանգ են առել ֆաբրիկայի ներսի տերիտորիայի և շրջակայքի բարեկարգման աշխատանքները:

Վերոհիշյալ իրադրությունը հիմք է տալիս ասելու, որ համալիրի գործարկումն այս տարի տեղի չի ունենա: Իսկ որպեսզի մինչև տարեվերջ այն շարք մտնի, պատվիրատու և շինարարական կազմակերպությունները անհապաղ պետք է վերացնեն նշված թերությունները: Նրանց պետք է ամենագործնական օգնություն ցույց տան շրջանի համապատասխան ղեկավար կազմակերպությունները, հանրապետության գյուղմինիստրությունն ու «Վրացգյուղտեխնիկա» հանրապետական միավորումը:

9 հոկտեմբերի

Ախալքալաքի շրջանի Օրջա գյուղի կոլտնտեսությունը տարեցտարի նորանոր հաջողություններ է ձեռք բերում: Բեղմնավոր է նաև տասներորդ հնգամյակի առաջին տարվա անցած ինն ամիսների աշխատանքը: Կարմրապրանքային ֆերման, որը ղեկավարում է արհմիության անդամ Հ. Արևյանը, այդ ժամանակամիջոցում յուրաքանչյուր կովից ստացել է 1.668 կիլոգրամ կաթ նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ 45 կիլոգրամով ավելի, ըստ որում, կաթի համախառն արտադրանքն ավելացել է 150 ցենտներով: Ֆերմայի անասնապահները ինտենսիվ եղանակով աճեցրել և յուրաքանչյուրը 320 կիլոգրամ միջին կենդանի քաշով պետությանն են հանձնել 54 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Մինչև տարեվերջ կհանձնվի ևս 45 գլուխ տավար:

Կոլտնտեսությունում արդեն ավարտվել է հացահատիկային-ների և կերաբույսերի բերքահավաքը: Ցնայած կարկտահարությանը, յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 22 ցենտներ հացահատիկային-ների միջին բերք: Կազմակերպված առաջ են ընթանում անասունների մսուրային շրջանի հաջող անցկացման աշխատանքները: Կոլտնտեսությունը դերակատարումով է իրացրել պետությանը հացահատիկ, անասնակեր, կաթ, բուրդ վաճառելու առաջադրանքները:

Այս բոլորի մեջ մարմնավորված են կոլտնտեսականների և մեխանիզատորների անձնվեր աշխատանքն ու եռանդը: Անձնական օրինակ են ցույց տալիս հանրապետության վաստակավոր մեխանիզատոր Մ. Հարությունյանի ղեկավարած մեխանիզատորների բրիգադի անդամներ Մ. Անտոնյանը, Ա. Կիսկիմյանը, հայր ու որդի Մամիկոն և Վարդան Անտոնյանները, Ա. Ղարիբյանը, իսկ կարտոֆիլի կոմպլեքսային մշակումը իրենց ձեռքն էին վերցրել արհմիության անդամներ Գ. Պարոնյանը, Գ. Անտոնյանը և Պ. Մկոյանը:

Կոլտնտեսության արհմիութենական կազմակերպության վերջերս կայացած հաշվետու-ընտրական ժողովում զեկուցողը՝ տեղկոմի նախագահ Ա. Անտոնյանը, հանրագումարելով հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքը, միաժամանակ ժողովականների ուշադրությունը սրեց կոլտնտեսության և արհմիութենական կազմակերպության աշխատանքներում դեռևս գոյություն ունեցող մի շարք թերությունների վրա:

Ժողովում նշվեց, որ տնտեսության ետ մնացող տեղամասը ոչխարաբուծական ֆերման է, որի եկամուտները տարիներ շարունակ չեն աճում: Անհանդուրժելի է, որ այս տարի ֆերմայի 783 մայր ոչխարից ստացվել է ընդամենը 645 գառ, ցածր է բրդատվությունը, անուշադրության է մատնված ֆերմայի աշխատողների սոցիալիստական մրցությունը: Արհկազմակերպության տեսադաշտից դուրս են մնացել նաև գյուղի աշխատավորների շրջանում տարվող կուլտուր-մասսայական աշխատանքների կազմակերպումը, նրանց կենցաղային սպասարկման հարցերը: Էքսկուրսիաներ, տուրիստական

ուղևորություններ կազմակերպելու. հանգստյան տների ու սանատորիաների ուղեգրերով ապահովելու գործը հետին պլան է մղված:

Այս և այլ հարցերի մասին ժողովում խոսեցին դաշտավարական բրիգադի ղեկավար Հ. Կարապետյանը, մեխանիզատոր Մ. Անտոնյանը, կոլտնտեսության վարչության նախագահ Ա. Նազարեթյանը և ուրիշներ:

Ժողովը գործնական միջոցառումներ նշեց բացահայտված թերությունները վերացնելու համար և ընտրեց արհկազմակերպության տեղական կոմիտեի նոր կազմ:

13 նոյեմբերի

ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ

[Վոլոդյա Հովհաննիսյան]

Ախալքալաքի շրջանի Վաչիանի սովխոզի Զամդուրիայի ագրոքիմիական կայանի N 14 բրիգադի գործերը վատ էին ընթանում: Անընդհատ փոփոխվում էին բրիգադավարները (5 տարում 8 բրիգադավար), սակայն գործը տեղից չէր շարժվում, թերակատարվում էին արտադրական առաջադրանքները:

Անհրաժեշտ էր բրիգադը դուրս բերել ծանր վիճակից: Սովխոզի դիրեկցիան և կուսակցական կազմակերպությունը, բաժանմունքի բանվորների երաշխավորությամբ, Վոլոդյա Հովհաննիսյանին այս տարվա սկզբին նշանակեցին բրիգադավար, համոզված լինելով, որ տնտեսության առաջավոր բրիգադավար, հանրապետության Դերագույն սովետի դեպուտատ Մյասնիկ Հովհաննիսյանի բրիգադի անդամ, մրցության մեջ միշտ հաղթող շարքային հողագործը կարողանալու իրենց վստահությունը:

Եվ նրանք չսխալվեցին:

Նոր բրիգադավարը առաջին իսկ օրից եռանդով գործի անցավ: Իր ողջ կազմակերպական ընդունակությունները դրեց բրիգադի ներսում աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու, հանձնարարված գործի նկատմամբ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը բարձրացնելու համար:

Այս բոլորի հետ միասին, հետևելով նորին ու առաջավորին, բրիգադը դաշն կնքեց մեքենայի հետ, կազմ ու պատրաստ դիմավորեց հնգամյակի առաջին տարվա գարունը: Բոլոր տեսակի կուլտուրաների, այդ թվում նաև կարտոֆիլի ցանքը կատարվեց սեղմ ժամկետում, ագրոկանոններին համապատասխան: Երիտասարդ բրիգադավարին միշտ կարելի էր տեսնել դաշտերում և պլանտացիաներում կարտոֆիլի հեկտարների լիարժեքությանը, մյուս աշխատանքների որակին հետևելիս: Ցանքին հաջորդեց մշակումը:

Եթե հողագործները նոր բրիգադավարի ղեկավարությամբ ամեն ինչ արին բարձր բերք աճեցնելու համար, ապա հողն էլ պարտքի տակ չմնաց. առատորեն վարձատրեց իրեն խնամքով մշակողին: Նշենք, որ Վոլոդյա Հովհաննիսյանի ղեկավարած բրիգադը ամեն մի հեկտարից ստացավ 30 ցենտներ հացահատիկի, 6 ցենտներ կորնգա-

նի, 15 ցենտներ վիկի, 19 ցենտներ խոտաբույսի բերք՝ զգալիորեն բարձր է սովխոզի միջին ցուցանիշներից: Բացի այդ, 15 հեկտար տարածությունից պլանի 170-ի և պարտավորության 180-ի փոխարեն բրիգադի անդամները պահեստավորում են 340, իսկ առանձին հեկտարներից՝ 360-370-ական ցենտներ կարտոֆիլ: Բրիգադը ամեն մի հեկտարի հաշվով պետությանը հանձնեց 250 ցենտներ կարտոֆիլ, ու արդեն ղեկուցել են 200 տոննա բարձրորակ կարտոֆիլ հանձնելու մասին:

Այս ցուցանիշները սահման չեն Վ. Հովհաննիսյանի ղեկավարած բրիգադի համար եկող տարվա բնագիծը հեկտարից 400 ցենտներն է: Հուսանք, որ այս խոստումը ևս դրծից չի բաժանվի:

18 նոյեմբերի

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բոգդանովկայի շրջանի Կաթնատու դյուղի կոլտնտեսությունն զգալի հաջողություններ է հասել հնգամյակի առաջին տարվա 10 ամսում: Յուրաքանչյուր հեկտարից 16-ի դիմաց ստացվել է 26 ցենտներ հացահատիկ, 10 ցենտներով գերակատարվել են կարտոֆիլի, 22 ցենտներով սիլոսի կանաչ զանգվածի բերքատվության առաջադրանքները:

Կաթնատուցիները զգալիորեն ավելացրել են նաև կաթի համախառն արտադրությունը:

Որոշակի են հաջողությունները մսի արտադրության բնագավառում. 660-ի փոխարեն արտադրվել է 700 ցենտներ միս (կենդանի քաշով): Կոլտնտեսությունը 2-3 ամիս շուտ և գերակատարումով է իրացրել պետությանը գյուղատնտեսական մթերքներ վաճառելու պլանը:

Տնտեսությունը, սեփական հոտի վերարտադրության հաշվին, գերակատարումով է իրացրել խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակի ավելացման առաջադրանքները: Լավ նախադրյալներ են ստեղծվել հանրային հոտի մսուրային շրջանը բարեհաջող անցկացնելու համար կուտակվել է անհրաժեշտ քանակություն մթերք:

Անցած տարիների համեմատությամբ, զգեթե կրկնապատկվել են կոլտնտեսության դրամական եկամուտները, զգալիորեն բարձրացել է կոլտնտեսականների մարդ-օրերի արժեքը: Այդ բոլորի ձեռքբերման գործում մեծ ավանդ են ներդրել կոմունիստները՝ կոլտնտեսության նախագահ, Լենինի շքանշանակիր Ա. Հակոբյանը, դաշտավարական բրիգադավար Յա. Խանջյանը, ֆերմաների վարիչներ Թ. Աղաջանյանը, Գ. Բդոյանը, մեխանիզատորներ Վ. Հակոբյանը, Ն. Խաչատրյանը և շատ ուրիշներ: Այդ նրանք են մոբիլիզացնում գյուղի աշխատավորների ուժերը կոլտնտեսության առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Այն մասին, թե կոմունիստներն ինչպես են աշխատել վերջին մեկ տարում, հանդամանորեն խոսվեց օրերս տեղի ունեցած հաշվետու-ընտրական կուսժողովում: Բայց ժողովը չբավարարվեց միայն հաջողություններն արձանագրելով: Կոմունիստները, մտահոգված հարազատ կոլտնտեսության բախտով ու նրա վաղվա օրով, քննադատորեն մոտեցան կատարված աշխատանքին, բացահայտեցին գոյություն ունեցող թերությունները, արեցին արժեքավոր առաջարկություններ:

- Մեր նվաճումներն ավելի շատ կլինեին, եթե կարողանայինք ժամանակին հայտնաբերել ու օգտագործել կոլտնտեսության ներքին բոլոր ռեզերվները: Երբեմն անտեսում ենք գյուղատնտեսական աշխատանքների որակը, խախտում ցանքերի մշակության ժամկետները և ագրոտեխնիկա,- ասաց կուսբյուրոյի քարտուղար Թ. Աղաջանյանն իր հաշվետու զեկուցման մեջ: Նա թվեր և փաստեր բերեց արտադրվող անասնապահական մթերքների, մասնավորապես, կաթի ցածր որակի վերաբերյալ:

Աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու ու այդ գործում կուսկազմակերպության դերը բարձրացնելու մասին խոսեց կոմունիստ Յա. Աղաջանյանը:

- Որոշ կոլտնտեսականներ,- ասաց նա,- դաշտային աշխատանքների վճռական օրերին գյուղից «չվում են», կամ էլ գյուղում մնալով հանրային ախշատանքներին չեն մասնակցում: Դա է պատճառը, որ կարտոֆիլի պլանատացիաների առանձին հեկտարների մշակումը ձգձգվեց, աշխատանքները անորակ կատարվեցին: Հիմնականում մելիորացիայի և ջրային տնտեսության Ախալքալաքի միջջրջանային վարչության մեղքով ձգձգվեց ջրամբարի կառուցումը գյուղում, ջուրը ժամանակին ցանքադաշտերը չհասցվեց, և հավաքվեց կարտոֆիլի ցածր բերք:

Ժողովում նշվեց, որ կուսկազմակերպությունը արտադրության մեջ ճիշտ չի տեղաբաշխել կոմունիստների և կոմերիտականների ուժերը: Առանձին կոմունիստներ և կոմերիտականներ խուսափում են անասնապահության բնագավառում աշխատելուց: Անասուններ խնամողների պակասի պատճառով արոտային շրջանում 150 հորթերի «խնամքը» հանձնվել էր անչափահասներին: Անհանդուրժելի է, որ ԼԿԵՄ կազմակերպության քարտուղարի ընթացիկ տարվա մայիսին բանակ զորակոչելուց հետո կազմակերպությունը մինչև օրս իր քարտուղարը չունի:

Կոմունիստներ Հ. Բդոյանը, Ա. Աղաջանյանը, Ն. Խաչատրյանը և ուրիշներ նշեցին, որ անկանոն է գործել ընթացիկ քաղաքականությունն ուսումնասիրող քաղդպրոցը, ժամանակին լույս չի տեսել պատի թերթը: Նրանք միաժամանակ քննադատեցին կուսշրջկոմին քիչ դասախոսություններ ու զեկուցումներ կազմակերպելու համար:

Կոմունիստների առաջարկությունների հիման վրա ժողովը միջոցառումներ մշակեց բացահայտված թերությունները վերացնելու համար, ընտրեց կուսբյուրոյի նոր կազմ:

25 նոյեմբերի

1977

ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

«Գյուղտեխնիկա» հանրապետական միավորման շրջանային բաժանմունքի մելիորատիվ ջոկատը, կոլտնտեսություններն ու սովխոզները անցյալ տարի նախատեսված 200-ի փոխարեն յուրացրել են 330 հեկտար խամ ու խոպան հողեր: Պլանավորված է մինչև հնգամյակի վերջը շրջանառության մեջ դնել ևս 570 հեկտար նոր հողեր:

Խոպան հողերի յուրացման առաջադրանքները զգալիորեն գերակատարել են Գորելովկայի, Օռլովկայի և Փոկայի կոլտնտեսությունները: Յուրացրած հողատարածությունների 250 հեկտարը կվերածվի կուլտուրական արոտավայրերի:

***

Պետության օգնությամբ և սեփական միջոցներով շրջանի կոլտնտեսությունները լայն թափ են հաղորդել արտադրական տարբեր օբյեկտների շինարարությանը: Հեշտիայի կոլտնտեսությունը կառուցել է տիպային հորթանոց 200 անասունի համար: Որոշված է եկող տարի այստեղ կառուցել և շահագործման հանձնել ոչխարանոց՝ 800 գլխի համար: Դրանով կլուծվի հանրային հոտը տիպային անասնաշենքերով ապահովելու պահանջը: Մեծ Արագյալի կոլտնտեսությունը շահագործման է հանձնել ոչխարանոց՝ 800 գլխի համար: Դրանով կլուծվի հանրային հոտը տիպային անասնաշենքերով ապահովելու պահանջը: Մեծ Արագյալի կոլտնտեսությունը շահագործման է հանձնել ոչխարանոց՝ 1.000, Սպասովկայի կոլտնտեսությունը՝ կովանոց՝ 200 անասունի համար: Սեփական միջոցներով Մեծ Խանչալի և Խոջաբեկ գյուղերի կոլտնտեսություններում կառուցվել են հացահատիկի, կարտոֆիլի և հանքային պարարտանյութերի պահեստներ:

***

Շրջանում առաջին քայլերն են կատարվում անասնապահությունը արդյունաբերական հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: Կաթնատուի կոլտնտեսության տերիտորիայում շուտով կավարտվի խոշոր եղջերավոր անասունների բման միջկոլտնտեսային համալիրի շինարարությունը: Այստեղ տարեկան կբուվի 3.000 անասուն, որը հնարավորություն կտա պետությանը վաճառել ավելի քան 1.000 տոննա բարձրորակ միս:

Շարունակվում է կաթնային համալիրի շինարարությունը Գորելովկայի կոլտնտեսությունում: Այս ձեռնարկությունը շահագործման է հանձնվելու այս տարի ու կունենա Կովկասյան գորշ ցեղի բարձր մթերատու 600 կով:

Շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները նախատեսված 1.200-ի դիմաց կատարել են 1.970 հեկտար աշնանացան, որից 1.364 հեկտար զբաղեցնում են ցորենի ցանքերը: Ցանքը կատարվել է նեղշար եղանակով բարձր բերքատու «Անքիստ-1» և «Կավկազ» սորտի ցորենով: Մնացած տարածությունը զբաղեցնում են միամյա խոտաբույսերը: Այս դաշտերից հավաքված կանաչ զանգվածից կպատրաստվի սիլոս ու սենաժ:

Շրջանի կոլտնտեսությունների առաջավոր կթվորուհիները մրցում են իրենց խնամած կովերի յուրաքանչյուրի տարեկան միջին կաթնատվությունը 3.500 կիլոգրամի հասցնելու համար: 3.500-ականների շարժումը գնալով ընդարձակվում է:

Մրցությունը գլխավորում է Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Ժենյա Մուրադյանը: Նա ամեն մի կովից կթել է 4.000 կիլոգրամ կաթ:

Հոբելյանական տարում բարձր ցուցանիշներ ձեռք բերին նաև նույն կոլտնտեսության կթվորուհի Արուսյակ Պիճիկյանը, Ուչմանայի կոլտնտեսության կթվորուհի Աննա Թարզյանը:

7 հունվարի

«ԱՐՇԱԼՈՒՅՍ» ԹԵՐԹԻ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Անցած տարվա հուլիսին Բոգդանովկայի «Արշալույս» շրջանային թերթի խմբագրությունը հայտարարել էր շրջանի կոլտնտեսությունների և սովխոզների կերի հայթայթմանը մասնակցող մեխանիզատորների ու ավտովարորդների մրցույթ և սահմանել մրցանակներ:

Օրերս ամփոփվեցին մրցույթի արդյունքները: Թերթի խմբագիր Մ. Սեդրակյանը հանդիսավոր պայմաններում առաջին մրցանակը (պատվոգիր և ձեռքի անվանական ժամացույց) հանձնեց Ժդանովականի կոլտնտեսության առաջավոր մեխանիզատոր Արտյուշ Կրունկյանին, որը ՄՏԶ-50 մակնիշի տրակտորով հնձել է 462 հեկտար ցանովի խոտհարք, դեզանոց է փոխադրել 42 տոննա խոտ:

Երկրորդ երկու մրցանակները (պատվոգրեր, արժեքավոր նվերներ) հանձնվեցին Կալինինոյի կոլտնտեսության ավտովարորդ Միխայիլ Կարատովին, որը փոխադրել է 958 տոննա տարբեր տեսակի կեր, և Ասիարայի կոլտնտեսության մեխանիզատոր Ռուբեն Քոսոյանին, որը ձեռքով (լեռնալանջերում, թեք տարածություններում) և տրակտորաքարշ հնձիչով 190 հեկտար խոտհարք է հնձել, փոխադրել է 260 տոննա խոտ:

Երրորդ մրցանակներին արժանացան և պատվոգրերով ու հուշանվերներով պարգևատրվեցին Նոր Խուլգումոյի և Փոկայի կոլտնտեսությունների ավտովարորդներ Հակոբ Գիգոյանը, Հրանտ Մկրտչյանը, Մեծ Խանչալի, Մեծ Արագյալի, Գորելովկայի կոլտնտեսությունների մեխանիզատորներ Մարկոս Մարանջյանը, Հենրիկ Սանոսյանը, Իլարիոն Գոնչարովը:

2 փետրվարի

ՃԱՆԱՉՈՒՄ

[Ռոզա Արզումանյան]

Համեստ, բայց ընդօրինակման արժանի կենսագրություն ունի Ռոզա Արզումանյանը: Միջնակարգ դպրոցից Բոգդանովկայի շրջանի հայրենի խոջաբեկ գյուղի կոլտնտեսությունն տանող ճանապարհը շատ բան փոխեց նրա կյանքում: Բարեկամացավ հողի հետ, կարտոֆիլ մշակեց, ստացավ իր աշխատանքային առաջին մկրտությունը, ապա ոտք դրեց շրջկենտրոնի կարի ֆաբրիկա, որը նրա համար մի նոր աշխարհ էր: Այստեղ տիրապետելու էր մեքենաների զաղտնիքներին, ձեռք էր բերելու եզրակարող բանվորուհու մասնագիտություն:

Ուշիմ ու համեստ աղջիկը կարճ ժամանակամիջոցում վաստակեց գործընկերների ու ողջ կոլեկտիվի սերն ու հարգանքը: Ինքն էլ չզգաց, թե ինչպես բարի հմբավ տարածվեց իր մասին: Սովորականի նման աշխատում է, գերակատարում արտադրական նորմաները, միշտ քայլելով սոցմրցության առաջին շարքերում:

Ռոզայի համար արդասաբեր էր հատկապես իններորդ հնգամյակը: Իր անհատական առաջադրանքը նա կատարեց 160 տոկոսով, դարձավ հնգամյակի առաջամարտիկներից մեկը: Հեշտությամբ նվաճեց նաև տասներորդի առաջին երկու տարիների բնագծերը: Առաջավոր բանվորուհին 1977 թվականի հոկտեմբերից աշխատում է ընթացիկ տարվա հաշվին: Նրա ձեռքով կարած մանկական հագուստեղենը լայն ճանաչում է գտել Մուրթյան մի շարք քաղաքներում:

Ռոզա Արզումանյանի նվիրական աշխատանքն աննկատ չի մնացել, նա պարգևատրվել է ՀամԼԿԵՄ Կենտկոմի «Իններորդ հնգամյակի երիտասարդ գվարդիական» կրծքանշանով, արժանացել ֆաբրիկայի «Հմուտ վարպետի» բարձր կոչման, բազմիցս խրախուսվել շրջանային «Արշալույս» թերթում: Նրա լուսանկարը տեղ է գտել ֆաբրիկայի և ԼԿԵՄ շրջկոմի պատվո տախտակների վրա:

1977 թվականին Ռոզան արժանացավ կոլեկտիվի մեծ վստահությանը. նրան երաշխավորեցին ընդունվելու ՍՄԿԿ շարքերը, ապա ընտրեցին ժողովրդական դեպուտատների Բոգդանովկայի ավանային սովետի դեպուտատ:

Սակայն, սա դեռ բոլորը չէ: Վերջերս էր, որ Ռոզան իբրև պատգամավոր մասնակցեց կոմերիտմիության շրջանային կոնֆերանսին: Երեք ունենալով, նա իր բրիգադի անունից պարտավորվեց հնգամյակի առաջադրանքները կատարել 4, անձնական հնգամյակը 3,5 տարում: Կոնֆերանսի մասնակիցները անվանի բանվորուհուն մեծ պատվի արժանացրին, նրան ընտրելով Վրաստանի ԼԿԵՄ XXXI համագումարի պատգամավոր: Նա շատ ուրախացավ և այդ մեծ պատիվը վերագրեց ֆաբրիկայի կոլեկտիվին, եզրակարողների առաջավոր բրիգադին:

– Դե, պարզ է, եթե մեր բրիգադի անդամները լավ չաշխատեին, առաջադրանքները մշտապես չկատարեին, իմ թեկնածությունը չէին տա: Մեր աղջիկները բոլորն էլ արժանի են այդ պատվին:– Այդպես է գնահատում Ռոզան ընկերուհիների աշխատանքը:

Որոնող, ջանասեր ու նախաձեռնող բանվորուհու ոգուն անչափ հարազատ է հասարակական աշխատանքը: Նա ֆաբրիկայի արհմիութենական կազմակերպության կոմիտեի անդամ է, երիտասարդ կոմերիտականների խմբի խորհրդատու, ավանային սովետի կուլտուր-լուսավորական մշտական հանձնաժողովի քարտուղար: Շատ նախաձեռնություններ են կյանքի կոչվել Ռոզայի և իր ընկերուհիների հայրենանվեր աշխատանքով:

9 փետրվարի

ԱՌԱՋԱՎՈՐ ԲՐԻԳԱԴԱՎԱՐԸ

[Մյասնիկ Հովհաննիսյան]

Ախալքալաքի շրջանի Վաչիանի սովխոզի դաշտավարական բրիգադի ղեկավար, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Մյասնիկ Վահանի Հովհաննիսյանի աշխատանքը միշտ էլ բեղմնավոր է եղել: Հմուտ կազմակերպչի ղեկավարությամբ բրիգադը ամբողջովին աշխատում է առանձնահատուկ խանդավառությամբ, պայքարում դաշտերի բերքատվությունը բարձրացնելու, ՍՄԿԿ XXV համագումարի պատմական որոշումներն անթերի կատարելու համար:

Տասներորդ հնգամյակի առաջին տարում Հովհաննիսյանի ղեկավարած բրիգադը հեկտարից ստացել է 26 ցենտներ հացահատիկ, 220 ցենտներ կարտոֆիլ:

Բրիգադի բոլոր անդամներին աշխատանքային նոր լիցք հաղորդեցին գյուղի բոլոր աշխատավորներին ուղղված ՍՄԿԿ Կենտկոմի նամակը, կուսակցության Կենտկոմի որոշումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պանծալի 60-րդ տարեդարձի մասին:

Լայնորեն ծավալելով սոցիալիստական մրցությունը, բրիգադն այժմ նոր պարտավորություններ է ստանձնել և խոստացել հոբելյանական տարում հացահատիկայինների հեկտարի միջին բերքատվությունը հասցնել 27, իսկ կարտոֆիլինը՝ 250 ցենտների: Համոզված ենք, որ Հովհաննիսյանի հմուտ ղեկավարությամբ ու օգնությամբ բրիգադը պատվով կկատարի հոբելյանական տարվա բարձր պարտավորությունները:

Երկար տարիների անխոնջ աշխատանքի շնորհիվ Մ. Հովհաննիսյանը մեծ հեղինակություն է վայելում: Նա այժմ ընտրվել է Վրաստանի արհմիությունների XVI համագումարի պատգամավոր:

18 փետրվարի

ԱՆՍԱՀՄԱՆ ՆՎԻՐՈՒՄՈՎ

[Ռոզա Մելքոնյան]

Մերենիա գյուղի (Ախալքալաքի շրջան) միջնակարգ դպրոցի ուսուցչուհի է Ռոզա Մելքոնյանը:

Տակավին երիտասարդ էր Ռոզան, երբ բարձր առաջադիմությամբ ավարտեց ու հրաժեշտ տվեց շրջկենտրոնի միջշրջանային մանկավարժական ուսումնարանն և աշխատանքային կենսագրության առաջին տողերը գրեց շրջանի նախ Բուենաշեթ գյուղի տարրական, ապա Մերենիա գյուղի միջնակարգ դպրոցներում, պատասխանատվության մեծ զգացումով նվիրվեց մանկավարժի ոչ դյուրին, սակայն պատվավոր գործին:

Ետևում են մնացել մանկավարժական աշխատանքի շուրջ 25 տարիները, որոնց ընթացքում ծնվեցին նրա աշխատանքային հաջողությունները, փորձն ու հմտությունը, ինչպես նաև մեծ հարգանքն ու հեղինակությունը աշակերտական, ուսուցչական կոլեկտիվներում, գյուղի աշխատավորության շրջանում:

- Երեխաների աշխարհը իմ սրտին մոտ է, իմ երազանքը, իմ վերադարձած պատանեկությունն է,- ասում է ուսուցչուհին:

Իր խոսքերին հավատարիմ, փորձված ուսուցչուհին այժմ ամեն օր առաջին դասարան է մտնում նոր նախաձեռնություններով, միջոցառումների բազմաբովանդակ պլանները մտքի մեջ պահած, իր սաների պայծառ հայացքներից ջերմացած: Ռոզան միշտ էլ հասնում է նպատակին, չունի «երկուսներով» սովորող երեխաներ:

Ռոզա Մելքոնյանի տքնաջան աշխատանքն աննկատ չի մնացել, միշտ բարձր է գնահատվել դպրոցի դիրեկցիայի կողմից, լայն ճանաչում գտել շրջանում: Անցած տարի փորձի փոխանակման նպատակով շրջլուսաբաժնի մեթոդկաբինետի կողմից կազմակերպված թվարանության (երրորդ դասարանում) նրա բաց դասին ներկա են դանվել շրջանի 22 դպրոցների տարրական դասարանների ուսուցիչներ ու դասվարներ: Ուսուցչուհու մասին դրվատանքի շատ խոսքեր են ասվել շրջանային մամուլում:

Որոնող, ջանասեր ու նախաձեռնող ուսուցչուհու հոդուն անչափ հարգալի են նաև հասարակական աշխատանքները: Նա կանանց շրջանային խորհրդի անդամ է: Դպրոցի վարչության, արհմիութենական, կոմերիտական, պիոներական կազմակերպությունների շատ նախաձեռնություններ կյանքի են կոչվել Ռոզա Մելքոնյանի ջանադիր աշխատանքով:

8 մարտի

ԱՇԽՈՒԺ ՈՒ ԵՌԱՆԴՈՎ ԼԵՑՈՒՆ

[Կարինե Խոդիկյան]

Կարծես երեկ էր պայուսակը ձեռքին դպրոց էր վազում Կարինեն: Մեծացավ աննկատելիորեն, գերազանց գնահատականներով ավարտեց Ախալքալաքի Դ. Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցը: Ավարտեց ու կանգնեց կյանքի շեմին: Կանգնեց մտադրած. ո՞ւր գնալ: Առաջ դպրոց էր գնում, հիմա՞: Հաստատ որոշեց գնալ մանկավարժ մոր ճանապարհով: Կարինեն ընդունվեց Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Հետո որոշեց և՛ աշխատել, և՛ սովորել: Մեկ տարուց հետո փոխադրվեց նույն ֆակուլտետի հեռակա բաժինը, ապա ստանձնեց իր նախկին դպրոցի ավագ ջոկատավարուհու պարտականությունը:

Դա երազող, աշխույժ ու եռանդով լեցուն աղջկա նոր կյանքի սկիզբն էր:

Աշխատանքային առաջին ամիսներ, առաջին աշխատավարձ: Ապա հարգանք, սեր՝ ինչպես պիոներ-դպրոցականների, այնպես էլ մանկավարժների շրջանում:

Զորրորդ տարին է, ինչ Կարինե Խոդիկյանը ղեկավարում է շրջանի խոշորագույն դպրոցներից մեկի պիոներական կազմակերպությունը, որը քայլում է շրջանի առաջավոր դրուժինաների շարքում: Դպրոցի դիրեկցիայի, կոմերիտական կազմակերպության օգնությամբ Կարինեի շատ նախաձեռնություններ կյանքի են կոչվել: Թեմատիկ վիկտորինաները, փառատոները, «ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքում» նշանաբանով բարեկամության հավաքները, սոցիալիստական երկրների մանկական կազմակերպությունների տարելիցների նշումը դարձել են ավանդույթ:

Մտեք դպրոցի գեղեցիկ կահավորված պիոներական սենյակը, և դուք կծանոթանաք բազմաթիվ այլ նախաձեռնությունների ու նորություններ. հեղինակը ավագ ջոկատավարուհին է: Ահա «Փունջ» ու «Ոգնի» էկրանները, ուր գրանցվում են «գերազանց» և «անբավարար» գնահատականներ ունեցող պիոներների ազգանունները: Հերթապահ պիոները ձեզ կծանոթացնի ինտերնացիոնալ բարեկամության ակումբի աշխատանքի հետ: Ակումբի անդամները բարեկամական կապեր են հաստատել մեր երկրի և սոցիալիստական քաղաքների դպրոցականներ հետ:

Կարինե Խոդիկյանն աշխատանքում ձեռք բերած հաջողությունների մասին խոսելիս չի առանձնացնում իրեն, կամ որևէ մեկի, այլ պարզապես նշում է, որ դրանց մեջ իրենց մասն ունեն նաև ուսուցիչները, կոմերիտականներն ու պիոներ-դպրոցականները:

8 մարտի

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻՆ

Ախալքալաքի շրջանում լայնորեն են նախապատրաստվում Վ. Ի. Լենինի ծննդյան 107-րդ տարեդարձի և Մեծ Հոկտեմբերի 60-ամյակի պատվին կազմակերպվող շաբաթօրյակին:

«Վրացդյուղտեխնիկա» միավորման շրջանային բաժանմունքի մեխանիկական արհեստանոցի կոլեկտիվը, որը Լենինյան շաբաթօրյակները կազմակերպված անցկացնելու հարուստ փորձ ունի, որոշել է ապրիլի 16-ին իրացնել գյուղատնտեսական տեխնիկայի աշնան-ձմեռային նորոգումների առաջադրանքը, պլանից ավելի նորոգել 4 տրակտոր, 5 կոմբայն:

Գիսավորող պանրայուղգործարանի կոլեկտիվը որոշել է մինչև շաբաթօրյակի օրը կատարել 5 տոննա արտադրական ծրագիր, իսկ շաբաթօրյակի օրը ցույց տալ բարձրարտադրողական աշխատանքի օրինակ՝ զգալիորեն գերակատարել օրվա առաջադրանքները:

Կոմունիստական շաբաթօրյակը բարձրարտադրողական աշխատանքով նշանավորելու ձգտումով են տոգորված նաև Թբիլիսիի «Իսանի» կոշիկի ֆաբրիկայի Ախալքալաքի մասնաճյուղի, տեղարդկոմբինատի, ավտոտրանսպորտային ձեռնարկությունների կոլեկտիվների, Դիլիսկայի, Խուլգումոյի կոլտնտեսությունների, Վաչիանի, Կարտիկամի սովխոզների երկրագործներն ու անասնապահները:

Շաբաթօրյակի օրը կտնկարկվի շուրջ 7 հազար դեկորատիվ ու պտղատու ծառ: Շրջանի պիոներ-դպրոցականները, հիմնարկ ձեռնարկությունների կոլեկտիվները կհավաքեն ու վերամշակման կուղարկեն 150 տոննա մետաղի ջարդոն:

12 մարտի

ՄԻԱՀԱՄՈՒՌ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Վրացական ՍՍՀ սահմանադրության նախագծի հրապարակումը քաղաքական ու աշխատանքային բուռն վերելք է առաջ բերել Բոգդանովկայի շրջանում: Կոլտնտեսություններում, սովխոզներում, հիմնարկ-ձեռնարկություններում տեղի ունեցող բազմամարդ միտինգներում աշխատավորները միահամուռ հավանություն են տալիս նախագծին, պարտավորվում աշխատել կրկնապատկված եռանդով, ժամկետից շուտ նվաճել հնգամյակի հարվածային տարվա բնագծերը:

Մեծ Արադյալ գյուղի աշխատավորների միտինգում կոլտնտեսության նախագահ, Լենինի շքանշանակիր Ա. Սեյրանյանն իր ելույթում ասաց.

– Նախագծի հոդվածներում արտացոլված են քաղաքական, տնտեսական, սոցիալական այն բոլոր վերափոխումները, որոնք տեղի են ունեցել ներկայումս գործող սահմանադրությունն ընդունելուց հետո, և մարդ համոզվում է, թե ինչպիսի հոյակապ ուղի է անցել մեր հանրապետությունն այդ տարիների ընթացքում: Մեր

կոլտնտեսականները, ջերմորեն արձագանքելով ու հավանություն տալով նախագծին, համակված են էլ ավելի բարձր բնագծեր նվաճելու ձգտումով:

Միտինգում ելույթ ունեցան կթվորուհի, հանրապետության Գերագույն սովետի դեպուտատ Ժ. Մուրադյանը, զոոտեխնիկ Մ. Պիճիկյանը, անասնապահ Հ. Պիճիկյանը և ուրիշներ:

Միտինգի մասնակիցները պարտավորվեցին յուրաքանչյուր կովի կաթնատվությունը հասցնել 3.700 կիլոգրամի, մեկ ոչխարից խուզել 3 կիլոգրամ բուրդ, պետությանը վաճառել 900 տոննա կաթ, 160 տոննա միս, 6,5 տոննա բուրդ:

1 ապրիլի

ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

[Աղասի Սեյրանյան]

Կարևոր չէ, թե ինչ աշխատանք ես կատարում: Կարևորն այն է, թե քո աշխատանքով ինչպես ես նպաստում հասարակության բարօրությանը: Նա, ով բարեխղճորեն, լավագույն ձևով է կատարում այդ պարտականությունը, միշտ հարգանք ու պատիվ ունի: Այդպիսի մարդկանցով հպարտանում է կոլեկտիվը, ամբողջ ժողովուրդը:

Ահա նրանցից մեկը՝ Բոգդանովկայի շրջանի Մեծ Արագյալի կոլտնտեսության նախագահ Աղասի Ավագի Սեյրանյանը:

Տարիներ առաջ Մեծ Արագյալի կոլտնտեսությունը իր վրա էր կրում ետ մնացողի անպատվաբեր անունը: Ցածր էր հացահատիկային կուլտուրաների, կերային բույսերի բերքատվությունը, եկամտաբեր չէին անասնապահական ֆերմաները:

Կուսակցության շրջանային կոմիտեն, շրջսովետի գործկոմը կտրուկ միջոցներ ձեռնարկեցին կոլտնտեսության ղեկավարությունը ուժեղացնելու, տնտեսությունը զարգացման լայն ճանապարհ դուրս բերելու համար:

Նրանց երաշխավորությամբ կոլտնտեսականները 1969 թվականին վարչության նախագահ ընտրեցին մասնագիտությամբ զոոտեխնիկ Աղասի Սեյրանյանին: Գործիմաց կադրերով ապահովվեցին դաշտավարական բրիգադները, անասնապահական ֆերմաները:

Նորընտիր կոլտնտվարչությունն ու կուսակցական կազմակերպությունը լրջորեն զբաղվեցին աշխատանքային կարգապահության ամրապնդման, հանձնարարված գործի նկատմամբ կոլտնտեսականների պատասխանատվության բարձրացման հարցերով: Գործի դրվեցին չօգտագործված բազմաթիվ ռեզերվներ ու հնարավորություններ: Առաջին պլան մղվեցին կոլտնտեսականների, մասնավորապես, անասնապահների կուլտուր-կենցաղային պայմանների, անասնապահության կուլտուրան բարձրացնելու հարցերը: Կարճ ժամանակամիջոցում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին խոշոր ու մանր եղջերավոր անասունների համար տիպային շենքեր, յայլաղում կացարան անասնապահների համար: Անասնագոմերում

տեղադրվեցին ավտոմատ խմոցներ, աղբի հեռացման մեխանիզմներ: Հանրային հոսքի ցեղային կազմը բարելավելու նպատակով կարգավորվեց արհեստական սերմնավորման գործը, իսկ մսի արտադրության ավելացման նպատակով շրջանում ու հանրապետությունում առաջինն այստեղ արմատավորվեց խոշոր ու մանր եղջերավոր անասունների աճեցման ինտենսիվ եղանակը:

Այս բոլորը, ինչ խոսք, լավ արդյունքներ տվեցին:

Այժմ, երբ խորամուխ ես լինում Սեյրանյանի ղեկավարած կոլտնտեսության գործունեության մեջ, ծանոթանում թվերի հետ, համոզվում ես, որ նա իրոք շատ բան է արել գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու մթերումներն ավելացնելու գործում: Բավական է նշել, որ տնտեսության եկամուտները գրեթե քառապատկվել են, կոլտնտեսականների մեկ մարդ-օրի արժեքը հասել է 7,4 ռուբլու: Ընդամենը 170 տնտեսություն ունեցող կոլտնտեսության ֆերմաներում հաշվվում են 900 խոշոր եղջերավոր (այդ թվում՝ 280 կով), 2.100 մանր եղջերավոր անասուններ: Յուրաքանչյուր ֆուրաժային կովից ստացվում է 2.700-2.800 կիլոգրամ կաթ: Հանրապետության Գերագույն սովետի դեպուտատ, կթվորուհի Ժենյա Մուրադյանը, Սիրանուշ Թորոսյանը և ուրիշներ մեկ կովի կաթնատվությունը հասցրել են 3.100-3.600 կիլոգրամի:

Առաջընթաց է տալիս նաև դաշտավարությունը: Մեկ հեկտարից ստացվում է 25 ցենտներ հացահատիկի, 57 ցենտներ միամյա, 50 ցենտներ բազմամյա խոտի բերք: Բնական խոտհարքների ամեն մի հեկտարից հավաքվում է 30 ցենտներ խոտ: Սրանք հնարավորություն են տալիս հանրային հոսքի համար կուտակելու կերի առատ պաշարներ:

Ինչպես իններորդ հնգամյակում, այնպես էլ նոր հնգամյակի մեկնարկային տարում կոլտնտեսությունը գերակատարումով է իրացրել գյուղատնտեսական մթերքների արտադրության ու պետության դրանց վաճառքի սոցիալիստական բարձր պարտավորությունները, որի համար բազմիցս արժանացել է կուսակցության շրջկոմի ու շրջսովետի գործկոմի փոխանցիկ դրոշների, դրամական պարգևների, իսկ երկրագործներն ու անասնապահները պարգևատրվել են կառավարական շքանշաններով, մեդալներով ու թանկարժեք նվերներով:

Անցած տարիները նախագահի համար որոնումների, դժվարությունների հաղթահարման ու հաջողությունների մի ամբողջ շարք են եղել: Նրա հայրենանվեր աշխատանքը աննկատ չի մնացել, գնահատվել է ըստ արժանվույն: Սովետական կառավարությունը նրան պարգևատրել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով: Վերջերս Ա. Սեյրանյանի կուրծքը զարդարեց կառավարական ամենաբարձր պարգևը՝ Լենինի շքանշանը, որին վաստակաշատ նախագահը արժանացել է համամիութենական սոցիալիստական մրցության մեջ ձեռք բերած հաջողությունների, 1976 թվականին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու պետությանը դրանց վաճառքը ավելացնելու, պլանների ու սոցպարտավո-

բությունների կատարման դրծում ցուցաբերած աշխատանքային արիության համար:

Կոլտնտեսության որոնող ու նախաձեռնող ղեկավարի ու արտադրության կազմակերպչի հոգուն անչափ հարազատ են նաև հասարակական աշխատանքները: Ազատին կուսակցության շրջանային կոմիտեի, կոլտնտեսականների հանրապետական խորհրդի անդամ է, շրջանային սովետի դեպուտատ: Նրա հայրենասիրական աշխատանքով իրականացվել են բազմաթիվ հանձնարարություններ և ինքնուրույն նախաձեռնություններ:

Այժմ կոլտնտեսության կրկնակի շքանշանակիր նախագահ Ազատի Սեյրանյանի, բոլոր կոլտնտեսականների առջև ծառացած են լուրջ խնդիրներ: Նրանց սրտերում նոր ծրագրեր, նոր երազանքներ կան, նոր բնագծեր ձեռք բերելու վճռականություն: Կուսակցության կողմից գյուղատնտեսության աշխատողներին առաջադրված նոր պահանջներից ելնելով, նրանք վերանայել են տարեսկզբին ընդունած սոցպարտավորությունները և ստանձնել նորը: Նրանք որոշել են՝ 1977 թվականին յուրաքանչյուր կովի միջին կաթնատվությունը հասցնել 3.000, մեկ ոչխարի բրդատվությունը՝ 3 կիլոգրամի, արտադրել 170 տոննա միս (կենդանի քաշով), 800 տոննա կաթ, 6,5 տոննա բուրդ. գյուղատնտեսական մթերքների վաճառքի առաջադրանքները, որոնք նախորդ տարվա ցուցանիշները գերազանցում են 10-12 տոկոսով, իրացնել ժամկետից 3 ամիս շուտ:

Մեծ Արագյալի կոլտնտեսության անդամներն իրենց փորձված նախագահի ղեկավարությամբ խոսքը գործի կվերածեն, կնվաճեն նախանշած նոր բնագծերը:

2 ապրիլի

ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

Տասներորդ հնգամյակի առաջին տարին նոր հաջողություններ բերեց Բոգդանովկայի լեռնային շրջանի աշխատավորներին: Տեղաշարժը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում է: Մասնավորապես, զգալի են շրջանի տնտեսությունների առաջատար ճյուղի, անասնաբուծության բնագավառի աշխատավորների նվաճումները: Կատարվեցին գյուղատնտեսական բոլոր տեսակի մթերքների մթերումների, խոշոր ու մանր եղջերավոր անասունների գլխաքանակի ավելացման, կերերի կուտակման առաջադրանքները: Պլանառաջադրանքի 16.250-ի դիմաց պետությանն է հանձնվել 18.061 տոննա կաթ, 4.428-ի փոխարեն՝ 4.580 տոննա միս, 385-ի դիմաց՝ 407 տոննա բուրդ: Հացահատիկի վաճառքի պլանային առաջադրանքը իրացվել է 174, կարտոֆիլինը 175 տոկոսով:

Նախորդ տարվա համեմատությամբ, ավելի մթերվել է 1.166 տոննա կաթ, 550 տոննա միս, 110 ցենտներ բուրդ: Բարձրացել են հանձնվող մթերքների որակական ցուցանիշները: Այս բոլորի շնորհիվ զգալիորեն ավելացել են կոլտնտեսությունների ու սովխոզների եկամուտները, բարձրացել է շահութաբերությունը: Յուրաքանչյուր

100 հեկտար հողահանդի դիմաց կոլտնտեսությունների համախառն եկամուտը ավելացել է 1.748 ռուբլով:

Այս, ինչպես նաև արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացման, 1976 թվականի ժողովրդատնտեսական պլանի հաջող կատարման համար Բոգդանովկայի շրջանը հաղթող է ճանաչվել հանրապետության շրջանների ինչպես նաև անասնապահության բնագավառի աշխատողների միջև ծավալված սոցմրցությունում և նվաճել է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի, արհմիությունների հանրապետական խորհրդի, Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ երկու կարմիր դրոշը:

Օրերս շրջկենտրոնի մշակույթի տանը տեղի ունեցավ դրոշների հանձնման հանդիսավոր արարողությունը: Այստեղ էին հավաքվել կուսակցական, սովետական աշխատողներ, կոլտնտեսությունների, սովխոզների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, կուսակազմակերպությունների քարտուղարներ, գյուղատնտեսության առաջավորներ, Բոգդանովկայի մոտակից Ախալքալաքի, Հայկական ՍՍՀ Անիի և Ղուկասյանի շրջանների աշխատավորների պատվիրակները:

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի անդամության թեկնածու, «Սովետական Վրաստան» թերթի խմբագիր Հ. Բլրցյանը, հաղթողներին է հանձնում փոխանցիկ դրոշներ, ինչպես նաև թերթի խմբագրության հուշադրոշներ, դիպլոմներ, պատվոգրեր՝ մի շարք առաջավոր կարտոֆիլագործների: Նա ջերմորեն շնորհավորեց բոգդանովկացիներին, համոզմունք հայտնեց, որ, ինչպես միշտ, այսուհետև էլ նրանք ավելի մեծ թափ կհաղորդեն սոցիալիստական մրցությանը տասներորդ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար, Մեծ Հոկտեմբերի 60-ամյակը կդիմավորեն աշխատանքային նորանոր հաջողություններով:

Կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Մ. Մաքսուևը, Գորելովկայի գյուղսովետի գործկոմի նախագահ Պ. Զուբկովան, Գանձայի սովխոզի դիրեկտոր Ս. Գրիգորյանը, Բոգդանովկայի կոլտնտեսության հովիվ Գ. Կաբատովը, Գոնդուրայի սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Գ. Թադևոսյանը և ուրիշներ ելույթներում շնորհակալական խոսք ասացին կուսակցությանն ու կառավարությանը, իրենց աշխատանքը բարձր գնահատելու համար:

Այս բարձր պարգևներին արժանանալու առթիվ շրջանի աշխատավորությանը ջերմորեն շնորհավորեցին կուսակցության Անիի շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Անտիկյանը, կուսակցության Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը, կուսակցության Ղուկասյանի շրջկոմի առաջին քարտուղար Շ. Ալեքսանյանը:

***

Տասներորդ հնգամյակի մեկնարկային տարում ձեռք բերած նվաճումների համար Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի, արհմիությունների հանրապետական խորհրդի և Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշներով պարգևատրվել են նաև Բոգդանովկայի գլխավորող յուղպան-

բագործարանի (դիրեկտոր՝ Շ. Սահակյան) կոմունիստական աշխատանքի կոլեկտիվը և Խոջաբեկի Կալինինի անվան կոլտնտեսությունը (նախագահ՝ Կ. Վարդանյան):

12 ապրիլի

ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է

Հարվածային աշխատանքի հիանալի օրինակ ցույց տվին Ախալքալաքի շրջանի գյուղատնտեսության բնագավառի աշխատողները 1976 թվականին: Արտադրության մեջ արմատավորելով գիտության նվաճումներն ու առաջավորների փորձը, նրանք գերակատարեցին գյուղատնտեսական հիմնական մթերքների արտադրության ու վաճառքի առաջադրանքները: Կլիմայական անբարենպաստ պայմաններում, նախատեսված 17-ի դիմաց հեկտարից ապահովվեց 20 ցենտներ հացահատիկի, 130-ի փոխարեն՝ 136 ցենտներ կարտոֆիլի միջին բերքի ստացումը: Բարձր բերք հավաքվեց բազմամյա ու միամյա խոտաբույսերի ցանքադաշտերից: Ցուրաժային ամեն մի կովից պլանավորված 1.783-ի դիմաց միջին թվով ստացվեց 1.897 կիլոգրամ կաթ: Արտադրվեց 16.472 տոննա կաթ, 5.200 տոննա միս (կենդանի քաշով): Շրջանն առաջին անգամ պետությանը վաճառեց 4.500 տոննա հացահատիկ, որը պլանից ավելի է 1.400, իսկ պարտավորությունից՝ 900 տոննայով, 26.200 տոննա կարտոֆիլ, կամ՝ 2.200 տոննայով ավելի սոցպարտավորությունից:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման շնորհիվ զգալիորեն ավելացան կոլտնտեսությունների ու սովխոզների դրամական եկամուտները, բարձրացավ մեկ մարդ-օրի արժեքը: Ձեռք բերած բարձր ցուցանիշների համար շրջանի շատ տնտեսություններ, բրիգադներ ու ֆերմաներ, արտադրության առաջավորներ պարգևատրվեցին կուսակցության շրջկոմի և շրջգործկոմի փոխանցիկ կարմիր դրոշներով, հուշադրոշներով:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացման, 1976 թվականի ժողովրդատնտեսական պլանի հաջող կատարման համար ծավալված սոցիալիստական մրցությունում հաղթող է ճանաչվել ու Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի, արհմիությունների վրացական հանրապետական խորհրդի և Վրաստանի ԼԿԵՄ՝ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշով պարգևատրվել է նաև Ախալքալաքի շրջանը:

Օրերս կուսակցության շրջկոմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ փոխանցիկ դրոշի հանդիսավոր հանձնումը: Կուսակցության շրջանային կոմիտեի ընդլայնված պլենումը, որին մասնակցում են կուսակցական, սովետական աշխատողներ, կոլտնտեսությունների, սովխոզների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, արտադրության առաջավորներ, հյուրեր մրցակից Բոգդանովկայի

շրջանից, ներածական խոսքով բացեց կուսակցության Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Գ. Ս. Շուգարովը:

Ձայնը տրվում է Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ ընկ. Օ. Ե. Ձերքելիային: Ներկաների բուռն ծափահարությունների ներքո նա բարձր պարգևը հանձնեց հաղթողներին, նրանց ջերմորեն շնորհավորեց ու ցանկացավ հոբելյանական տարում աշխատել ավելի լավ, ավելի արդյունավետ ու որակով:

Վաչիանի, Կարտիկամի, Ալաստանի սովխոզներին, Բուռնաշեթի, Դիլիսկայի, Ղաղոլարի կոլտնտեսություններին, մի շարք տնտեսությունների դաշտավարական ու մեխանիզատորների առաջավոր բրիգադների ղեկավարների, կարտոֆիլագործների հանձնվեցին «Սովետական Վրաստան» հանրապետական թերթի հուշադրոշներ, պատվո դիպլոմներ, պատվոգրեր՝ 1976 թվականին կարտոֆիլի արտադրության ու մթերումների բնագավառում ձեռք բերած բարձր ցուցանիշների համար: Պարգևները առաջավորներին հանձնեց թերթի խմբագիր Հ. Ա. Բլրցյանը:

Կուսշրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը շրջանի աշխատավորների անունից ջերմ շնորհակալություն հայտնեց պարտավորեցնող պարգևների համար, կուսակցությանն ու կառավարությանը հավաստիացրեց, որ շրջանի աշխատավորները ամեն ինչ կանեն գյուղատնտեսական մթերքների ավելացման ասպարեզում հնգամյակի պլանները ժամկետից շուտ կատարելու, կուսակցության առաջադրանքները անշեղորեն կենսագործելու համար:

Կուսակցությանն ու կառավարությանն ուղղված շնորհակալության խոսք ասացին Հոկամի գյուղսովետի գործկոմի նախագահ Վ. Մելիքիձեն, ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ս. Ստեփանյանը, Բարալեթի հիվանդանոցի բժիշկ Շ. Ափոզյանը, շրջկենտրոնի Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի ուսմասվար Հ. Գաբրիելյանը և ուրիշներ:

Ներկաները մեծ խանդավառությամբ ընդունեցին Վրաստանի կոմկուսի Կենտկոմին, Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետին, արհմիությունների հանրապետական խորհրդի Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի ուղղված ողջույնի նամակ:

14 ապրիլի

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՆ ՏԱԲԱԾՎՈՒՄ ԻՐԱՅԻՆԵՐԸ

Անասնապահության զարգացման համար հիանալի հողակլիմայական պայմաններ ունի Բորժոմի շրջանի Տարածվուրի կոլտնտեսությունը, որի խոշոր եղջերավոր անասունների ֆերմայում (ուրիշ ֆերմաներ չկան) հաշվվում է շուրջ 600 անասուն:

Ֆերմայի կոլեկտիվը, նրա նոր վարիչ, Միհրան Հարությունյանի, գոտեմարտիկ, կուսակցական քարտուղար Անդրանիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ, ուժ ու եռանդ չի խնայում անասունների մսուրային շրջանն ու ծինը հաջող անցկացնելու համար:

Ֆերմայի 330 կովից 250-ը արդեն ծնել է: Ստացված մատղաշները պահպանվում են առանց կորստի: Դրանում մեծ բաժին ունեն հերթապահներ Արուսյակ Հովսեփյանը, Վարդուշ Հակոբյանը, Լուսիկ Այվազյանը, Թուփիտ Մուրադյանը, որոնց խնամած հորթերի յուրաքանչյուրի օրական միջին քաշաճը հասնում է 550-600 գրամի:

Առաջավոր կթվորուհիներ Աշխեն Հովակիմյանը, Սիրուշ Պետրոսյանը և ուրիշներ ամեն մի կովից օրական կթում են 8-10 կիլոգրամ կաթ: Այս օրերին, նախորդ տարվա համեմատությամբ, ֆերման օրական 150-200 կիլոգրամով ավելի կաթ է ստանում, Առաջին եռամսյակում պետությանը վաճառվել է 54 տոննա կաթ:

Արձագանքելով Վրաստանի կոմկուսի բոլոր աշխատավորներին ուղղված «Մսի արտադրության ավելացումը մեր ընդհանուր գործն է» նամակին, անասնապահների կոլեկտիվը նոր թափով է ներգրավել ավելի շատ ու բարձրորակ միս արտադրելու պայքարին: Կոլտնտեսությունը ժամկետից շուտ ու գերակատարումով իրացրեց պետությանը միս վաճառելու առաջին եռամսյակի առաջադրանքը:

-Հետևելով առաջավոր շրջանների անասնապահների օրինակին,- ասում է կոլտնտվարչության նախագահ Ալեքսան Մարտիրոսյանը,- մենք որոշել ենք լայնորեն կիրառել խոշոր եղջերավոր անասունների մատղաշի ինտենսիվ աճեցման եղանակը: Առաջին քայլերն արդեն արվել են: Ֆերմայում մարտի սկզբներից գիրացման է դրվել 6-8 ամսական հասակի 78 հորթ: Հոգատար խնամքի ու կերակրման շնորհիվ անասնապահներ Զորքին Այվազյանը, Վոլոդյա Մուրադյանը, Հրաչյա Հովսեփյանը մատղաշների յուրաքանչյուրի օրական միջին կենդանի քաշաճը հասցրել են 800 գրամից մինչև մեկ կիլոգրամի: Դրանք մթերակետ կհանձնվեն հունիսի սկզբներին յուրաքանչյուրը 250-260 կիլոգրամ միջին կենդանի քաշով: Հունիս ամսից բացի դրվելու ևս 150 մատղաշ: Դրանք աշնանը միջակ ու միջակից բարձր գիրությամբ կվաճառվեն պետությանը:

Կոլտնտվարչությունն և կուսակցական կազմակերպության ուշադրության կենտրոնումն է նաև դաշտավարությունը, կերի բազայի ամրապնդումը: Հոդագործները առանձին կարևորություն են տալիս առաջավոր եղանակների արմատավորմանը: Նախորդ տարվա համեմատությամբ, 103 հեկտարով ավելացվելու են դարնանացան կուլտուրաների ցանքատարածությունները, առաջին անգամ 30 հեկտարի վրա կմշակվի զարի, կերաբույսերի (հիմնականում վարսակ) ցանքադաշտերը կհասցվեն 320 հեկտարի, որից մի մասը նոր յուրացված հողերում:

Մտնելով Մեծ հոկտեմբերի 60-ամյակի պատվին ծավալված սոցիալիստական մրցության մեջ, Տաքածղուրի կոլտնտեսականները նպատակ են դրել հեկտարից ստանալ 18 ցենտներ հացահատիկ, 30 ցենտներ բնական խոտ, 70 ցենտներ սենաժի կանաչ զանգված, մեկ կովի կաթնատվությունը, պլանի 2.000-ի դիմաց, հասցնել 2.100 կիլոգրամի, պետությանը վաճառել 563 տոննա կաթ, 80 ցենտներով գերակատարել մսի մթերման առաջադրանքը:

30 ապրիլի

ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Մարդաշատ էր Ախալքալաքի երաժշտական դպրոցը: Այսուհանդերձ չի հավաքվել Մեծ Հոկտեմբերի 60-ամյակին նվիրված երաժշտական դպրոցների հանրապետական մրցույթ-ստուգատեսի Ախալքալաքի գոտու՝ Ախալքալաքի, Բոգդանովկայի ու Ասպինձայի շրջանների երաժշտական դպրոցների սանները:

Մրցույթ-ստուգատեսում հաղթող ճանաչվեց և հանրապետական ժյուրիի բարձր գնահատականին արժանացավ Ախալքալաքի երաժշտական դպրոցը (դիրեկտոր՝ Յու. Սարիբեկյան):

Դպրոցի սաներից երկուսը՝ հինգերորդդասարանցիներ Մ. Իրիցյանը (դաշնամուրային խումբ, դասատու՝ Ա. Գրիգորյան) առաջնություն շահեցին և իրավունք ստացան մասնակցելու հանրապետական մրցույթ-ստուգատեսին:

Ապրիլի 28-ին Ռուսթավելու անվան թատրոնի համերգային դահլիճում կայացավ հանրապետական մրցույթ-ստուգատեսը: Սպարտակ Վարդիկյանը դարձավ հանրապետական մրցույթի դափնեկիր և ստացավ առաջին կարգի դիպլոմ: Նա կատարեց Ա. Ջիմաքաձեի «Խորումի» և Գ. Կամալդինովի «Ռոմանս» գործերը: Իսկ Մարինե Իրիցյանն արժանացավ մինիստրության գովասանագրին:

1 մայիսի

ԴՐՈՇՆԵՐ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Բոգդանովկայի շրջանի Հեշտիա գյուղի Թումանյանի անվան կոլտնտեսության աշխատավորները հիանալի նվերներով նշանավորեցին հնգամյակի երկրորդ՝ հոբելյանական տարին:

Հանրային հոտի համար ավելի շատ և բարձրորակ կերեր կուտակելու, հանրապետական մրցույթներում հաղթելու համար կոլտնտեսությունը պարգևատրվել է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, հանրապետության արհմիությունների խորհրդի և Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշով:

Վերջերս այդ կապակցությամբ կոլտնտեսության մշակույթի տանը տեղի ունեցավ հանդիսավոր ժողով: Ներկաների բուռն ծափահարություններով նրքա կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար Միքայել Մաքսուր մրցույթյան հաղթողներին հանձնեց փոխանցիկ կարմիր դրոշը: Նա ջերմորեն շնորհավորեց հիշատակյալներին և նրանց ցանկացավ աշխատանքային նորանոր հաղթանակներ:

Կոլտնտեսության նախագահ Ռազմիկ Վարդանյանը, դյուզատնտես Միշա Սանամյանը, կուսակցամակերպության քարտուղար Բերոբ Յաժյանը, կոլտնտեսության անդամ Վազգեն Արոյանը, մեխանիզատորների բրիգադավար Հովսեփ Էդնատոսյանը, գլխավոր զոոտեխնիկ Սերգեյ Տոնականյանը, դաշտավարական բրիգադավար Հովհան Էդնատոսյանը շնորհակալություն հայտնեցին ի-

ընենց աշխատանքը բարձր գնահատելու համար, խոստացան, որ ցուցաբերված հոգատարությանը կպատասխանեն հայրենանվեր աշխատանքով, կպայքարեն հնգամյակի առաջադրանքները չորս տարում կատարելու համար:

Պարգևատրվածներին ողջունեցին Թորոսի կոլտնտեսության նախագահ Կարապետ Պետրոսյանը, Հեղտիայի գյուղսովետի գործկոմի նախագահ Ֆելիքս Գրաբսկին, Հեղտիայի N 1 դպրոցի դիրեկտոր Ներսես Սիմոնյանը:

Ոգևորված աշխատանքային այդ մեծ հաղթանակով, կոլտնտեսականները, այլ պարտավորությունների թվում, խոստացան 220 հեկտարով ընդարձակել բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունները դրանք հասցնելով 550-ի, կատարել 457 հեկտար դարու և միամյա խոտաբույսերի (վիկ, ոլոռ, վարսակ) խառը ցանք և այլն: 1978 թվականին տնտեսությունում կկուտակվի 3.547 տոննա կոշտ կեր, այդ թվում 1.500 տոննա սենաժ: Պատրաստվելու է 1.600 տոննա սիլոս, պահեստավորվելու են 500 տոննա արմատապտուղ, 200 տոննա կարտոֆիլ և 220 տոննա հատիկաֆուրաժ:

***

Հոբելյանական տարին աշխատանքային նվաճումների տարի էր նաև Բոգդանովկայի շրջանի Մեծ Արագյալի կոլտնտեսության համար: Այստեղ դերակատարվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների պլան-առաջադրանքները: Կոլտնտեսությունը հաղթող ճանաչվեց հանրապետական սոցիալիստական մրցությունում և արժանացավ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, հանրապետության արհխորհրդի, Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշի:

Կուսակցության շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Միքայել Մաքսիմը կոլտնտեսականների հանդիսավոր ժողովում պատվավոր պարգևը հանձնեց կոլտնտվարչության նախագահ, Լենինի շքանշանակիր Աղասի Սեյրանյանին:

***

Խանդոյում (Ախալքալաքի շրջան) հանդիսավոր իրադրության մեջ կարտոֆիլագործներին հանձնվեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, հանրապետության արհխորհրդի, Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը, որին նրանք արժանացել են կարտոֆիլագործների հանրապետական սոցմրցության մեջ ձեռք բերած բարձր արդյունքների համար: Տասներորդ հնգամյակում այս արդեն երկրորդ անգամ է, որ կոլտնտեսությունը արժանանում է այդ բարձր պարգևին:

Ընդունելով պարգևը, որը հանձնեց կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Դիվի Շուգարովը, կոլտնտվարչության նախագահ Մաթևոս Սահարյանը, ինչպես նաև արհմիության տեղկոմի նախագահ Հարություն Ալագուլյանը, N 4 դաշտավարական բրիգադի ղեկավար Ռաֆիկ Հակոբյանը, գյուղատնտես Մանուկ Բասենցյանը, դպրոցի դիրեկտոր Վաղինակ Պապոյանը շնորհակալություն հայտնեցին հարգված կուսակցությանն ու կառավարությանը իրենց աշխատանքը բարձր գնահատելու համար, խոստացան հնգամյակի եր-

բորդ տարում կարտոֆիլի հեկտարի միջին բերքատվությունը հասցնել 230 ցենտների և պետությանը վաճառել 1.500 տոննա բարձրորակ կարտոֆիլ:

1 մայիսի

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ

Թբիլիսիի «Իսանի» կոշիկի ֆաբրիկայի Ախալքալաքի մասնաճյուղի կոլեկտիվը այս հոբելյանական տարվա անցած ամիսներին զգալի աշխատանք է կատարել արտադրության արդյունավետության բարձրացման, արտադրանքի որակի բարելավման ուղղությամբ: Զորս ամսվա արդյունքներով մասնաճյուղը հաղթող է դուրս եկել սոցիալիստական մրցությունում, նվաճել է ֆաբրիկայի պատվոգիրը և արժանացել դրամական պարգևի:

Հաղթող կոլեկտիվի կոմունիստները բարձր տրամադրությամբ եկել էին կուսակցական կրթության սիստեմի իրենց վերջին, հանրագումարային պարապմունքին: Կուսակցական կազմակերպությունը հետևողական աշխատանք է կատարել կոմունիստների, կոմերիտականների, անկուսակցական ակտիվիստների քաղաքական կրթությունը հաջողությամբ կազմակերպելու, այն առաջադրված խնդիրների մակարդակին բարձրացնելու համար: Ուսումնական տարվա ընթացքում հաճախակի քննարկվել են քաղաքական ուսուցման հետ կապված առանձին հարցեր, և կուսակազմակերպությունը կոնկրետ միջոցներ է նշել ՍՍՀՄ ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, ինչպես նաև տնտեսական դիտելիքների հիմունքներն ուսումնասիրող դպրոցների աշխատանքը հաջողությամբ կազմակերպելու համար: Դպրոցների պարապմունքներում մեծ տեղ են տրվել առաջավոր փորձի ուսումնասիրման ու տարածման հարցերին: Մասնաճյուղի բանվորների շրջանում մասսայականացվել է «Իսանի» կոշիկի ֆաբրիկայի ձևարար, պետական մրցանակի դափնեկիր Գիվի Ռիմնիոթավելու, ինչպես նաև մասնաճյուղի շատ առաջավորների ու նորարարների փորձը:

Փորձված պրոպագանդիստներ, կենսաթոշակառու Կարապետ Հայրապետյանի և դիշերօթիկ միջնակարգ դպրոցի դասատու Արշալույս Խոնիկյանի դեկավարությամբ, կուսլուսցանցի ուսումնական տարվա հենց սկզբից քաղպրոցները դործել են կանոնավոր, ունկնդիրներից շատերը կազմել են ուսումնասիրված դրականության կոնսպեկտներ, ձեռք բերել գրքի վրա ինքնուրույն աշխատանքի փորձ: Դպրոցների պարապմունքներն անցել են կենդանի, ընկերական զրույցի մթնոլորտում, որ կարևոր է սերտորեն զուգակցվել արտադրական խնդիրների հետ: Կազմակերպվել են նաև հետաքրքիր զրույցներ, զեկուցումներ մեր երկրի ներքին և արտաքին կյանքի կարևորագույն իրադարձությունների շուրջը, որոնք ևս մեծապես նպաստել են ուսումնասիրվող նյութերի խոր յուրացմանը:

Հանրագումարային պարապմունքում ունկնդիրների ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով պրոպագանդիստները

յուրաքանչյուր թեմայի հանգուցային հարցերը նախապես հայտնել էին նրանց, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան կրկնելու անցած նյութը, կազմակերպել էին զրույցներ ու կոնսուլտացիաներ, պարզաբանել նրանց համար դժվար ըմբռնելի հարցերը, նշել անելիքները: Այս բոլոր նախապատրաստական աշխատանքները զուգակցելով հանրագումարային պարապմունքի ճիշտ կազմակերպման հետ, պրոպագանդիստները կարողացան եզրափակիչ պարապմունքը նույնպես անցկացնել ակտիվ, կենդանի զրույցի միջոցով, որը հնարավորություն տվեց ունկնդիրներին ազատ կերպով արտահայտելու իրենց մտքերը, լրացնելու և ուղղելու ելույթ ունեցողներին:

«ՍՄԿԿ XXV համագումարը արդյունավետության և որակի մասին», «Մրցություն և մրցակցություն», «Արժեք և ինքնարժեք», «Ինչպես օգտագործել ժամանակը», «ԽՍՀՄ ներքին քաղաքականությունը», «ՍՍՀՄ արտաքին քաղաքականությունը» այս և պրոպագանդիստների առաջադրած այլ հարցերին մտածված և սպառիչ պատասխաններ տվեցին կուսակազմակերպության քարտուղար Ջ. Պետրոսյանը, ունկնդիրներ Հ. Մոսոյանը, Ս. Սևիկյանը, Վ. Կարախանյանը, Ա. Միրանյանը, Լ. Էգնատոսյանը, Լ. Ազգդոմելյաձեն, Շ. Մուրադյանը, Օ. Շաշիկյանը և ուրիշներ:

Եզրափակիչ պարապմունքը միաժամանակ ցույց տվեց, որ կոմունիստների քաղաքական ուսուցման գործում կան նաև թերություններ: Դպրոցները կոմպլեկտավորելու ժամանակ կուսակազմակերպությունը հաշվի չէր առել առանձին ունկնդիրների պահանջը: Կան ընկերներ, որոնք չունեն համապատասխան կրթություն, ընդգրկվել են տնտեսագիտական հիմունքների ուսումնասիրման դպրոցում և տարվա ընթացքում հաճախ կանգնել դժվարությունների առջև, անբավարար են յուրացրել անցած թեմաները: Ուստի պատահական չէր, որ նրանք պասիվ էին, չէին մասնակցում զրույցին:

Մասնաճյուղի կուսակազմակերպությունը եկող ուսումնական տարում լրջորեն պետք է զբաղվի դպրոցները ճիշտ կոմպլեկտավորելու հարցով, կուտակած դրական փորձի հիման վրա նոր ուսումնական տարում է՛լ ավելի բարելավի կոմունիստների քաղաքական ուսուցման գործը:

2 հունիսի

ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՈՒՀԻՆ՝ ԴԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ (Սիրանույշ Մոսոյան)

Խոհեմությունը, ջանասիրությունն ու նվիրվածությունը գործին Բոգդանովկայի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսության կարտոֆիլագործուհի Սիրանույշ Սեթի Մոսոյանին բնորոշող գծերն են: 1957 թվականին միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա աշխատում է արտադրության մեջ, իր համեստ բաժինը մտցնում հանրային տնտեսության ամրապնդման գործում:

Աշխատանքի առաջին երկու տարում նա հորթեր խնամեց, հետո դարձավ դաշտավարության բնագավառի աշխատող: Տարիների ընթացքում նա կատարելագործվեց իր աշխատանքում, մեծ փորձ կուտակեց, դարձավ ճանաչված կարտոֆիլագործուհի:

Եվ ամեն տարեվերջին, երբ ամփոփվում են Զ. Մղդեսյանի ղեկավարած իրենց դաշտավարական բրիգադի արդյունքները, մյուս գործընկերների հետ միասին ուրախանում է նաև Սիրանույշը: Կարտոֆիլի բերքի հաշվառման տեղեկագրերում նրա անվան տակ միշտ գրված է լինում ստանձնած բարձր պարտավորությունը գերազանցող ցուցանիշ:

1976 թվականին իր մշակած մեկ հեկտար տարածությունից նա ապահովեց 200 ցենտներ միջին բերքի ստացումը, որը կոլտնտեսության միջինից ավելի է 34 ցենտներով:

Այդ ցուցանիշների համար անվանի կարտոֆիլագործուհին պարգևատրվեց «Սոցիալիստական մրցության հաղթողի» կրծքանշանով և արժանացավ կոմունիստական աշխատանքի հերոսի կոչման:

– Պարգևներն ինձ ավելի են պարտավորեցնում, գրանց ես կպատասխանեմ գործով,– հայտարարեց նա:

Եվ Ս. Մոսոյանը պարտավորվեց 1977 թվականին նորից մշակել մեկ հեկտար կարտոֆիլ, սակայն այժմ այդ տարածությունից ստանալ 250 ցենտներ բերք:

Իր գործին անսահմանորեն նվիրված կոլտնտեսուհին այս տարվա գարնանը չթուլացող եռանդով մասնակցեց կարտոֆիլի ցանքին: Նա հետևում էր, որ ցանքը կատարվի լավորակ սերմերով, ագրոկանոններին համապատասխան, ուացիոնալ օգտագործվեն տեղական և հանքային պարարտանյութերը:

Արտադրության առաջավոր լինելու հետ միասին, Ս. Մոսոյանը հասարակական ակտիվ աշխատող է: Տեղական սովետների նախորդ ընտրությունների ժամանակ նա ընտրվեց շրջանային սովետի դեպուտատ և պատվով է կատարել իր պարտականությունները:

Հաշվի առնելով առաջավոր կոլտնտեսուհու արժանիքները, համագյուղացիները նրան կրկին առաջադրեցին շրջանային սովետի դեպուտատության թեկնածու և վստահ են, որ նա նորից կարդարացնի իրենց հույսերը:

5 հունիսի

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀՈԳՍԵՐ

Մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության հարցերը եղել և մնում են մեր կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկը: Ահող սերնդի գաղափարա-դաստիարակչական աշխատանքներում մեծ դեր է պատկանում նաև մանկական ու դպրոցական գրադարաններին: Պետք է նշել, որ Ախալքալաքի շրջանի ման-

կական ու դպրոցական գրադարաններից շատերը լավ են կատարում այս խնդիրները:

Մասնավորապես, այս տարի շատ գրադարաններ զգալի աշխատանք են կատարում Մեծ Հոկտեմբերի 60-ամյա հոբելյանը արժանավայել դիմավորելու համար: Գրադարաններում կազմակերպվում են հեղափոխության հաղթանակից հետո անցած տարիներին ԽՍՀՄ էկոնոմիկայի, գիտության ու կուլտուրայի, կենցաղի բնագավառներում ձեռք բերված վիթխարի նվաճումների մասին քննարկումներ, գրական-գեղարվեստական երեկոները, հաղիպումներ հին կոմունիստների, Հայրենական պատերազմի վետերանների, արտադրության առաջավորների հետ, ուր երիտասարդները ծանոթանում են ավագ սերունդների հեղափոխական, մարտական և աշխատանքային ավանդներին:

Այդ տեսակետից լավագույն աշխատանքով աչքի են ընկնում շրջկենտրոնի N 2 մանկական, Դ. Դեմիրճյանի, Թումանյանի, Մայակովսկու անվան, Խանդոյի, Լոմատուրցկի, Մաջագիայի, Բուղաշենի գյուղական դպրոցների և Դիլիսկայի, Ալաստանի, Վաչիանի մանկական գրադարանները:

Սակայն ամե՞ն ինչ է արվում, որպեսզի մանկական ու դպրոցական գրադարանները դառնան գրքի պրոպագանդայի, սովորողների կոմունիստական դաստիարակության իսկական օջախներ:

Գրադարանային գործի հաջողությունը պայմանավորված է տեղական կուսակցական, սովետական, արհմիութենական կազմակերպությունների օգնությամբ: Մինչդեռ գրադարանների մի մասն այդ կազմակերպությունների տեսադաշտից դուրս է մնացել: Բանը նրանումն է, որ մի շարք գրադարաններ տեղավորված են այնպիսի անհարմար շենքերում, ուր ոչ միայն չի կարելի մասսայական որևէ միջոցառում կազմակերպել, այլև նույնիսկ գրքային ֆոնդը պահել: Այսպես, օրինակ, շրջանային N1 մանկական գրադարանը գրադեցնում է երկու փոքր սենյակ, չունի ամենատարրական հարմարություններ անգամ: Ընդամենը 40 քառակուսի մետր տարածության վրա «պահվում են» շուրջ 31 հազար կտոր գիրք, հարյուրավոր ամսագրեր ու թերթեր, դրանց մի մասը, իհարկե, թափված է գետնի վրա, շատ գրքեր ժամկետից շուտ շարքից դուրս են գալիս: Այս բոլորից հետո խոսք լինել չի կարող գրադարանի նորմալ աշխատանքի, այն ճաշակով կահավորելու, նրա գեղարվեստական ձևավորման մասին: Գրադարանի սուղ պայմանները ստիպում են գրադարանի աշխատողներին միջոցառումներ անցկացնելու գեպքում դռնից դուռ ընկնել: Դրանով է բացատրվում, որ շրջկենտրոնի և մոտակա գյուղերի հանրակրթական դպրոցների սովորողները հաճախ հեռու են մնում գրադարանից:

Անմխիթար վիճակում է նաև Բարալեթի միջնակարգ դպրոցի գրադարանը: Այն տեղավորված է դպրոցական հին շենքի հարմարություններից զուրկ, խոնավ սենյակում: Այդ է պատճառը, որ դպրոցի 204 աշակերտներից շատ քչերն են օգտվում գրադարանից: Ավելին, ոմանք նույնիսկ մոռացել են նրա գոյության մասին: Գրե-

թե նույն վիճակումն են Կարսիկամի, Կուլիկամի միջնակարգ, Բուղավենի ութամյա հանրակրթական դպրոցների գրադարանները:

Մասսայական հանրակրթական դպրոցների մի շարք ղեկավարների և գրադարանների հետ զրույցից պարզվեց, որ բացի վատ պայմաններից, գրադարանների աշխատանքին խանգարում է սովորողների համար նախատեսված ծրագրային գրականության անբավարար քանակը:

Այսպես, Մարտունիի ութամյա դպրոցի գրադարանն ունի ընդամենը 2.372 կտոր գիրք, ըստ որում արտադասարանական ընթերցանության համար երաշխավորված տարբեր հեղինակների (հայերեն, ռուսերեն) 39 ստեղծագործությունից միայն 3-4-ը: Գրեթե նույնն է վիճակը դպրոցի վրացական բաժնի գրադարանում: Ավելացնենք նաև այն, որ այստեղ շատ գրքեր մնում են անշարժ, չեն ընթերցվում ծրագրային նյութին անհամապատասխան լինելու պատճառով:

Շրջանի մանկական և դպրոցական գրադարաններում զգացվում է նաև հայ դասական ու մանկական գրողների ստեղծագործությունների խիստ պակաս: Մատների վրա կարելի է հաշվել Խ. Աբովյանի, Պ. Պռոշյանի, Շիրվանզադեի, Հ. Պարոնյանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի և այլոց ստեղծագործությունները:

Դպրոցական գրադարաններն ապահովված չեն նաև մեթոդական գրականությամբ: Ճիշտ է, ժողկրթարժնի մեթոդ-կաբինետի նորաստեղծ գրադարանը նման գրականությամբ գրադարաններն ապահովելու, նրանց աշխատողներին պրակտիկ մեթոդական օգնություն ցույց տալու ուղղությամբ արդեն առաջին քայլերն է արել, սակայն դրանք բավարար համարել չի կարելի, քանի որ ինքը, այդ գրադարանը ևս զգում է թե՛ գրականության, թե՛ վերապատ օրգանների օգնության կարիքը:

Սովորողների գրադարանային սպասարկումը լավագույն ձևով կազմակերպելուն խանգարում է նաև մասնագիտական կադրերի պակասը: Շրջանի մանկական և դպրոցական գրադարաններում աշխատողների միայն հինգ տոկոսն ունի մասնագիտական և բարձրագույն կրթություն: Մի՞թե հիմնականում դա չէ պատճառը, որ առանձին տեղերում գրքերի մշակում և նոր գրքի պրոպագանդում չի կատարվում:

Մեր հայրենիքի յուրաքանչյուր օրը լի է նորություններով, իրագործություններով, հաջողություններով: Դրանց հետ է հասունանում նոր սերունդը՝ կոմունիզմի արժանավոր կառուցողը: Ահա թե ինչու շրջանի կուսակցական, սովետական ղեկավար մարմինները պետք է ստեղծեն բոլոր անհրաժեշտ պայմանները աճող սերնդի գաղափարական-գաստիարակչական աշխատանքը օրինակելիորեն կազմակերպելու համար:

25 հունիսի

ՓՈՔՐ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի կողմից հավանության արժանացած Ախալքալաքի շրջանի տնտեսությունների մանր մելիորացիայի փորձը լայն տարածում է գտել հանրապետության շրջաններում: Այդ փորձն ուսումնասիրելու նպատակով Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմը վերջերս Ախալքալաքում կազմակերպեց հանրապետական սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում էին գյուղական շրջկոմների քարտուղարներ, մելիորացիայի և ջրային տնտեսության մինիստրության, նրա շրջանային վարչությունների աշխատողներ, Ախալքալաքի շրջանի կոմերիտական-երիտասարդական կարտոֆիլագործական բրիգադների ղեկավարներ:

Սեմինարը, որը տեղի ունեցավ Բուռնաշևթի առաջավոր կոլտնտեսությունում, ներածական խոսքով բացեց Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ի. Օրջոնիկիձեն: Կարդացվեց հինգ զեկուցում: Ախալքալաքի շրջսովետի գործկոմի նախագահ Ռ. Երիկյանը զեկուցեց «Փոքր մելիորացիայի մեր փորձը» թեմայով: ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ի. Օրջոնիկիձեի զեկուցումը նվիրված էր «Խիզախում են երիտասարդները» թեմային: «Մելիորացիան և բերքը», «Հանրապետության մելիորատորների խնդիրները», «Ինտենսիվացման ճանապարհով» թեմաներով զեկուցումներ կարդացին հանրապետության մելիորացիայի և ջրային տնտեսության մինիստրի տեղակալ Գ. Կվատաձեն, Թբիլիսիի հիդրոտեխնիկայի և մելիորացիայի գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Բոկերիան, Ախալքալաքի ԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար Ս. Ստեփանյանը:

Ելույթ ունեցան Թելթրիծդարոյի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ա. Աբեսաձեն, Գուրջանի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Գ. Մաչխաշվիլին, Աբաշայի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Թ. Միմինոշվիլին, Գորիի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ա. Ծվերավան, Թելավիի շրջանի Ռուիսպիրի կոլտնտեսության ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Գ. Բուտխուզին, Հոկամի սովխոզի մելիորատոր Ն. Միքելաձեն, Բուռնաշևթի կոլտնտեսության նախագահ, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Վ. Քոչոյանը:

Սեմինարի աշխատանքներն ամփոփեց Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ի. Օրջոնիկիձեն: Վերջում նա ԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրեր և դիպլոմներ հանձնեց Ախալքալաքի շրջանի մի շարք առաջավոր կարտոֆիլագործների:

Երկրորդ օրը հյուրերը եղան Վաչիանի սովխոզում, Դիլիսկայի կոլտնտեսությունում, ծանոթացան այդ տնտեսությունների կարտոֆիլի կոմպլեքսային մշակության և մանր մելիորացիայի փորձի հետ, ապա այցելեցին Ասպինձայի շրջան, եղան Վարձիա պատմական մայրաքաղաքում:

26 հուլիսի

ՊՈԵԶԻԱՅԻ ՏՈՆԱՀԱՆԴԵՍԸ ԳԱՆՁԱՅՈՒՄ

Կրկին տերյանական շնչով էին լցված Գանձան ու շրջանային կենտրոն Բոգդանովկա ավանը: Տերյանական պոեզիայի տոնահանդես էր, այս անգամ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակին: Շրջկենտրոնի Տերյանի անվան մշակույթի տանը հուլիսի 23-ին «Մեծ Հոկտեմբերը և սովետական պոեզիան» թեմայով տեղի ունեցավ գիտական կոնֆերանս, որին մասնակցում էին Թբիլիսիից, Երևանից ու Բաքվից ժամանած գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, շրջանի կուսակցական, սովետական մարմինների աշխատողներ, աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչներ: «Հոկտեմբերյան հեղափոխության թեման Մայակովսկու, Տաբիձեի, Վուրգունի և Զարենցի ստեղծագործություններում», «Լենինի կերպարը սովետական պոեզիայում», «Տերյանի ուղին դեպի հեղափոխություն», «Տերյանը և վրացական գրականությունը» թեմաներով զեկուցումներ կարդացին կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի երկրորդ քարտուղար Պ. Վլասովը, Հայաստանի գրողների պատվիրակության անդամներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Գրիգորյանը, Վրաստանի գրողների միության քարտուղար, պրոֆեսոր Գ. Ցիցիշվիլին: Ներկաները ուշադրությամբ ունկնդրեցին Վահան Տերյանի դուստր, դրականագետ Նվարդ Տերյանի, ադրբեջանական գրողների պատվիրակության ղեկավար Հ. Բաբաևի, Սամեդ Վուրգունի որդի Վագիֆ Սամեդ օղլու, պոետ Կարլո Կալաձեի և ուրիշների ելույթները:

Գիտական կոնֆերանսից հետո անցկացվեց «Երկնագույն կրակ» միջոցառումը: Գրողները, արվեստագետները հանդիպում ունեցան շրջանի հասարակայնության ներկայացուցիչների հետ:

Տոնահանդեսը շարունակվեց նաև հաջորդ օրը: Բոլոր ճանապարհները մարդկանց տանում էին դեպի հանճարեղ բանաստեղծի ծննդավայր Գանձա գյուղը: Այդ օրը պոետի հայրենիքը հյուրընկալել էր շուրջ 10 հազար մարդ: Նրանց թվումն էին անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների գրող-արվեստագետների պատվիրակություններ, հյուրեր Ախալցիխեի, Ախալքալաքի, Հայկական ՍՍՀ Ղուկասյանի, Ամասիայի, Անիի շրջաններից, Լենինական, Էջմիածին, Աբովյան քաղաքներից:

Տոնահանդեսի մասնակիցները մեծ գոհունակությամբ դիտեցին բանաստեղծի տուն-թանգարանը, Վրաստանի ու Հայաստանի նկարիչների լավագույն գործերը ներկայացնող շարժական ցուցահանդեսը, ծանոթացան Գանձայի տեսարժան վայրերին: Ապա, որպես հավերժացում տերյանական տոնի՝ գրող-արվեստագետները գյուղամերձ գեղատեսիլ սարահարթում հիմնադրեցին «Պոետների ծառուղի»:

... Սկսվում է տոնահանդեսը: Հակիրճ ներածականով այն բաց է անում հանդիսության կազմկոմիտեի նախագահ, կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի քարտուղար Մ. Մաքսուևը: Ամբիոնին է

մոտենում Վրաստանի գրողների միության քարտուղար, պատվիրակության ղեկավար պրոֆեսոր Գիորգի Ցիցիշվիլին:

- Հայ մեծ բանաստեղծ, հասարակական գործիչ, կոմունիստ Վահան Տերյանը իրոք որ արժանի է մեծարանքի,- ասում է նա:- Ժողովուրդների բարեկամության երգիչը իր մեծ ու ճշմարիտ ճանապարհին միշտ եղել է արդարության հետ: Ահա թե ինչու նրան հավասարապես թանկ են գնահատում սովետական բոլոր ժողովուրդները: Պոեզիայի և բարեկամության այս հանդեսը տոնահանդես է բոլորիս համար:

Հայաստանի գրողների միության քարտուղար, պատվիրակության ղեկավար Մկրտիչ Սարգսյանն այսպես ավարտեց իր ելույթը.

- Ջավախքի գեղատեսիլ լեռները, բազմերանգ ծաղիկներով զարդարված դաշտերն ու մարգագետինները, քնարական երևկոները գոյություն ունեին նաև Տերյանից առաջ, սակայն նա՝ ամենաքնարական քնարերգուն, իր մեծ տաղանդով իմաստավորեց այս ամենի խորհուրդը և, բյուրեղացած բանաստեղծություններ դարձնելով, տվեց իր ժողովրդին: Շնորհակալություն Վրաստանի կոմկուսի Կենտկոմին և կառավարությանը, Բոգդանովկայի շրջանային կուսակցական և սովետական մարմիններին՝ տերյանական պոեզիայի տոնահանդեսը ավանդույթային դարձնելու համար:

Վահան Տերյանի ուսանելի կյանքը, գրական ու հեղափոխական գործունեությունը բնութագրող ջերմ ելույթներ ունեցան Ադրբեջանի գրողների պատվիրակության ղեկավար, պրոֆեսոր Հ. Բաբաևը, կուսակցության Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը, կուսակցության Լենինականի քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Նինա Աղաջանյանը, Աբովյանի քաղսովետի գործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Հայկանուշ Ղահրամանյանը, Տերյանի հայրենակից, երիտասարդ ստեղծագործող Վ. Ղազարյանը, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ, գրող Բ. Սեյրանյանը, պոետներ Վահագն Դավթյանն ու Հարությունն Հովնաթանը:

Պոետներ Վախտանգ Գորգանելին, Վիլայեթ Ռուստամզադեն, Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Կարենցը, Դավիթ Հովհաննեսը, վաստակավոր ուսուցիչ Ա. Կարապետյանը, պոետ-թարգմանիչ Գիվի Շահնազարը արտասանեցին իրենց նոր բանաստեղծությունները՝ նվիրված Վահան Տերյանին: Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցիչ Հ. Դանաղյանը (Էջմիածին) Տերյանի տուն-թանգարանին նվիրեց Պ. Մակինցյանի խմբագրությամբ Տերյանի ստեղծագործությունները և Լենինի «Պատերազմ և հեղափոխություն» երկի տերյանական թարգմանության 1920 թ. հրատարակությունը: Ընթերցվեց ՍՍՀՄ գրողների միության քարտուղար Կ. Սիմոնովի հեռագիրը՝ ուղղված տոնահանդեսի մասնակիցներին:

Ապա բեմահարթակը տրամադրվում է Հայֆիլհարմոնիայի ժողգործիքների անսամբլին: Նրանց հետ երգում ու պարում են տոնահանդեսի բոլոր մասնակիցները, երգում է ողջ Գանձան:

30 հուլիսի

ՖԱԲՐԻԿԱՅԻ ԿԱՆԱՅՔ

Բոգդանովկայի կարի ֆաբրիկայի բարձրորակ արտադրանքը հայտնի է ոչ միայն Հանրապետությունում, այլև նրա սահմաններից շատ հեռու: Տարեցտարի բարելավվում են նրա ցուցանիշները, արտադրության մեջ արմատավորվում են նորը, առաջավորը:

Ձեռնարկությունում աշխատում են շատ առաջավորներ, որոնք սիստեմատիկաբար կատարում ու գերակատարում են արտադրական պլաններն ու սոցիալիստական պարտավորությունները:

Ֆաբրիկայի ստեղծման առաջին իսկ տարվանից (1969 թ.) կարի արտադրամասում ՀամԼԿԵՄ անդամ, կարող բանվորուհի Հռոմսիմ Սարգսյանը: Անցած տարիների ընթացքում նրա ձեռքի տակով անցել է նորածին երեխաների 200 հազար ռուբլու հագուստեղեն: Նրա պատրաստած արտադրանքը բարձր գնահատականի է արժանացել Մոսկվայում, Նովոսիբիրսկում, Աշխաբադում, Խարկովում, Ցելինոգրադում և այլ քաղաքներում:

Ձեռնարկության առաջավորներից են կարի արտադրամասի մրցակից բանվորուհիներ, ՍՄԿԿ անդամ Վարդուշ Արզումանյանն ու Մանուշակ Զախոյանը, որոնք իններորդ հնգամյակի անձնական առաջադրանքները գերակատարելու, մրցությունում հաղթող ճանաչվելու համար պարգևատրվել են «Սոցմրցության հաղթողի» կրծքանշաններով: Նրանք մեկ ամիս շուտ են զեկույց տվել ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի առաջադրանքները գերակատարելու մասին, իսկ այժմ պայքարում են տարեկան պլանները մինչև նոյեմբերի 7-ը կատարելու համար: Այս բոլորի շնորհիվ է, որ Վարդուշի և Մանուշակի լուսանկարները մշտապես տեղ են գտել ֆաբրիկայի առաջավորների պատվո տախտակում:

Համեստ ու աշխատասեր է նաև պիտակներ կպցնող Լենա Անանիկյանը: Նա սիրով ու պատասխանատվությամբ է կատարում իր պարտականությունը:

Եզրակարող Լյուբա Բալաբանովան արտադրություն է եկել միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո: Նա միշտ գերակատարում է արտադրական պլանները, ակտիվորեն մասնակցում ֆաբրիկայի հասարակական աշխատանքներին ու դարձել է ամբողջ կոլեկտիվի սիրելին: Գնահատելով այս արժանիքները, ֆաբրիկայի բանվորները նրան վերջերս ընտրեցին ավանային սովետի դեպուտատ:

Ձեռնարկության առաջավորներից են նաև շրջանային սովետի դեպուտատ Եվրաքսյա Պոգոզյանը, Ռոզա Արզումանյանը, Եվրաքսյա Խաչատրյանը, Շուշիկ Ադամյանը, Արփիկ Մինասյանը, Օվսաննա Մանուկյանը, Ելենա Շահբազյանը և ուրիշներ: Նրանց և մյուս՝ թվով 220 բանվորուհիների նվիրական աշխատանքի շնորհիվ է, որ ֆաբրիկան ժամկետից շուտ կատարեց արտադրանքի իրացման և թողարկման իններ ամիսների առաջադրանքները, արտադրելով շուրջ երկու միլիոն ռուբլու արտադրանք: Նախորդ տարվա համեմատությամբ, 0,3 տոկոսով բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը, 0,1 տոկոսով նվազել արտադրանքի ինքնարժեքը:

Գործարանի կոլեկտիվը որոշել է տարվա մնացած ամիսներին ևս աշխատել խնայողաբար, տարեկան առաջադրանքը իրացնել մինչև դեկտեմբերի 20-ը, տալ 30 հազար ռուբլու լրացուցիչ բարձրորակ արտադրանք:

29 հոկտեմբերի

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

Կոմերիտմիության Բոգդանովկայի շրջանային հերթական XXVI կոնֆերանսը ՍՄԿԿ XXV համագումարի և Վրաստանի կոմկուսի XXV համագումարի որոշումների լույսի ներքո քննարկեց հաշվետու ժամանակամիջոցում կոմերիտկազմակերպությունների կատարած աշխատանքը կոմերիտականների, ամբողջ երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում:

Ինչպես զեկուցողը շրջկոմի առաջին քարտուղար Ա. Քուրդողլյանը, այնպես էլ ելույթ ունեցող ընկերները հանգամանորեն խոսեցին շրջանի առջև դրված խնդիրների կատարման գործում կոմերիտականների, ամբողջ երիտասարդության դրական աշխատանքի մասին:

Կոնֆերանսի մասնակիցները գոհունակությամբ ընկալեցին այն թվերը, որոնք խոսուն կերպով վկայում են կոմերիտականների, շրջանի ամբողջ երիտասարդության կատարած հանրօգուտ աշխատանքը կոլտնտեսային և սովխոզային դաշտերում, անասնապահական ֆերմաներում և արտադրական ձեռնարկություններում: Այսպես, օրինակ, գյուղատնտեսության բնագավառում աշխատող շուրջ 2 հազար կոմերիտականների ու երիտասարդների ուժերով ընթացիկ տարում կուտակվել է 56 հազար տոննա խոտ, պատրաստվել 53 հազար տոննա սիլոս, 28 հազար տոննա սենաժ: Փոկայի, Կալինինոյի, Գորելովկայի, Սպասովկայի, Հեշտիայի, Մեծ Արագյալի կոլտնտեսությունների, Գոնդուրայի սովխոզի ԼԿԵՄ կազմակերպությունները ուշագրավ աշխատանք են կատարում կոմերիտականների ու երիտասարդության շրջանում, ապահովելով նրանց ավանդարդային դերն արտադրությունում: Իրենց նվիրված աշխատանքով մեծ անուն են վաստակել դաշտավարներ Ս. Ուստյանը, Ռ. Մահտեսյանը, Ա. Աղաջանյանը, մեխանիզատորներ Խ. Բդոյանը, Ս. Իսպիրյանը, Վ. Մեդվեդևը, կթվորուհիներ Ա. Դալոզլյանը, Բ. Միքայելյանը, Մ. Պետրոսյանը և շատ ուրիշներ: Կարի ֆաբրիկայի կոմերիտական-երիտասարդական բրիգադի անդամներ Ժերմինե և Ժանետա Պողոսյանները, Հ. Սարգսյանը, Հ. Մզիկյանը, Ա. Ուստյանը, Զ. Մանուկյանը հաջողությամբ իրացրեցին տասներորդ հնգամյակի երկրորդ տարվա իրենց առաջադրանքները և այժմ աշխատում են 1978 թվականի հաշվին:

Խոսելով շրջանի առջև դրված խնդիրների կատարման դրծում կոմերիտականների և երիտասարդության կատարած աշխատանքի մասին, ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցողները վեր հանեցին դեռևս գոյություն ունեցող թերությունները և նշեցին դրանց վերացման ուղիները: Նշվեց, որ որոշ կոմերիտական կազմակերպություններում (Զիգրաշենի, Խոջաբեկի, Օլովկայի, Ռադիոնովկայի կոլտնտեսություններում) անբավարար աշխատանք է կատարվում ֆիզկուլտուրայի և սպորտի հետագա զարգացման ու մասսայականացման ուղղությամբ: Ժողկրթբաժնի վարիչ Տ. Ոսկանյանը իր ելույթում մասնավորապես նշեց, որ ոչ բոլոր հանրակրթական դպրոցներում է իր բարձրության վրա գտնվում սովորողների առաջադիմությունը:

Կոնֆերանսի աշխատանքին մասնակցում էին և ելույթ ունեցան Վրաստանի կոմկուսի Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար Ս. Մաքսոևը, Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի երկրորդ քարտուղար Ի. Օրջոնիկիձեն:

***

Նորընտիր շրջկոմի առաջին պլենումը կոմերիտմիության Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար ընտրեց Ա. Բուրդուղյանին, երկրորդ քարտուղար Ժ. Սնխչյանին, քարտուղար Թ. Հակոբյանին:

1 դեկտեմբերի

1979

ՓՈԽԱՆՑԻԿ ԴՐՈՇԸ ՀԱՆՁՆՎԵՑ

Արագվայի (Ախալքալաքի շրջան) կոլտնտեսության դաշտավարությունը չի կարելի պատկերացնել առանց կարտոֆիլագործության, որն արդեն խոր արմատներ է գցել գյուղատնտեսական արտադրության մեջ, դարձել նրա առաջատար և եկամտաբեր ճյուղը:

Տարիներ շարունակ բնության հետ գոտեմարտելով, Արագվայի հողագործը գտել է այդ արժեքավոր կուլտուրայի աճեցման բանալին, տարեց տարի բարձրացնել բերքատվությունը:

Տասներորդ հնգամյակի երեք տարիներին կոլտնտեսությունը նախատեսվածից 980 տոննայով ավելի կարտոֆիլ է արտադրել, 1.200 տոննայով գերազանցել մթերումների առաջադրանքը: Հատկապես արդասաբեր էր հնգամյակի հարվածային տարին: Կարտոֆիլի 95 հեկտար պլանտացիաների ամեն մի հեկտարից պլանի 160-ի փոխարեն պահեստավորվեց 180 ցենտներ բերք, համախառն արտադրանքը կազմեց 1.715 տոննա, որից 1.076 տոննա հանձնվեց պետությանը (պլանային առաջադրանքը 655 տոննա էր): Կոլտնտեսականներին լրացուցիչ վարձատրության դիմաց բաշխվեց 200 տոննա կարտոֆիլ: Նախորդ տարվա համեմատությամբ, 12 ռուբլով նվազեց մեկ ցենտներ կարտոֆիլի ինքնարժեքը և կարտոֆիլագործությունից ստացված դրամական եկամուտը հասավ 42 հազար ռուբլու:

1978 թվականին կարտոֆիլի արտադրության ավելացման գործում ձեռք բերած հաջողությունների շնորհիվ հանրապետական սոցիալիստական մրցության մեջ հաղթող ճանաչվելու համար կոլտնտեսությունն արժանացավ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, Վրացարհխորհրդի և ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին:

Օրերս կոլտնտեսության տոնականորեն զարդարված ակումբում տեղի ունեցավ փոխանցիկ դրոշի հանձնման արարողությունը:

Ժողովը, որին մասնակցում էին ավելի քան 300 կոլտնտեսականներ, հյուրեր հարևան շրջաններից, շրջանի կուսակցական, սովետական աշխատողներ, բացեց կոլտնտեսության կուսկազմակերպության քարտուղար Սարգիս Սևիկյանը:

Ներկաների բուռն ծափահարությունների ներքո կուսակցության Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը դրոշը հանձնում է հաղթողներին, մաղթում նոր հաջողություններ հնգամյակի չորրորդ տարվա սոցիալիստական պարտավորությունների կատարման ու գերակատարման գործում:

Կոլտնտեսության վարչության նախագահ Միտուշ Արևյանը, կարտոֆիլագործուհի Համիկ Փիլթակյանը, մեխանիզատոր Խաչիկ

Բամանչաջյանը դաշտավարական բրիգադավար Թումաս Հունանյանը, կլիմորուհի Սոֆիկ Ղադյանը, կաթնապրանքային ֆերմայի վարիչ Իլյուշ Բուռնուսուզյանը և ուրիշներ շնորհակալություն հայտնեցին կուսակցությանն ու կառավարությանը իրենց աշխատանքը բարձր գնահատելու համար, հավաստիացրին, որ այսուհետև էլ կաշխատեն մեծ եռանդով ու նվիրվածությամբ, ջանք չեն խնայի 1979 թվականին նոր հաջողությունների հասնելու համար:

Ժողովի մասնակիցները որոշեցին ընթացիկ տարում 7 հեկտարով ընդարձակել կարտոֆիլի ցանքատարածությունները, աշխատատար բոլոր գործողությունները մեքենայացնել, հեկտարից ապահովել 200 ցենտներ միջին բերքի ստացումը, պլան-առաջադրանքի 700-ի դիմաց պետությանը վաճառել 1.200 տոննա կարտոֆիլ: Առաջավոր բրիգադավարներ Թումաս Հունանյանը, Արշալույս Ռայիսյանը խոստանում են մեկ հեկտարից ստանալ 220-230 ցենտներ բերք:

15 մարտի

ՆԱՀԱՆՋԵԼ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԴԻՐՔԵՐԻՑ

Տարիներ շարունակ Կորխ գյուղի կոլտնտեսությունը Ախալքալաքի շրջանում համարվում էր առաջավոր: Այն կատարում և գերակատարում էր գյուղատնտեսական մթերքների արտադրության և վաճառքի առաջադրանքները:

Սակայն, ցավոք, տնտեսությունն այժմ, փոխանակ առաջադիմելու, իր վրա է կրում ետ մնացողի անպատվաբեր անունը: Դրությունը բարվոք չէր հատկապես անցյալ տարի: 108 հեկտար կարտոֆիլի պլանտացիաների բերքատվությունը առաջադրանքի 150-ի դիմաց, կազմեց 88-ական ցենտներ: Դաշտավարական վեց բրիգադներից չորսը ձախողեցին հացահատիկի արտադրության պլանը: Թերակատարվեցին բազմամյա, միամյա խոտաբույսերի, սիլոսային կուլտուրաների բերքատվության առաջադրանքները: Յուրաքանչյուր 100 մայր անասունից ստացվեց 80 հորթ և 65 գառ, որոնց մի մասն էլ կորստի մատնվեց: Մեկ կովի կաթնատվությունը նախորդ տարվա համեմատությամբ պակասեց 23 կիլոգրամով: Թերակատարվեց նաև մսի արտադրության պլան-առաջադրանքը: Նվազեցին դրամական եկամուտները: Կոլտնտեսությունը 24 հազար ռուբլու վնաս կրեց:

Հենց այժմ էլ ազազակող թերություններ կան անասունների մասուրային շրջանի կազմակերպման, գարնանացանի նախապատրաստման աշխատանքներում: Ոչխարաբուծական ֆերմայում պակասում է երեք հովիվ, կաթնապրանքային ֆերմայի կթվորուհիների պակասը լրացվեց միայն վերջերս: Ինչպե՞ս կարելի է հաշտվել այնպիսի դրության հետ, երբ դեռ լրիվ պատրաստ չէ գյուղատնտեսական տեխնիկան, և կարտոֆիլի ցանքի համար առանձնացված 4.200 ցենտներ սերմացուն դրեթե փչացման վտանգի տակ է: Այս փաստը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ կոլտնտվարչությունը, կուսակցական կազմակերպությունը, բրիգադավարներն ու մասնագետները

անհրաժեշտ պատասխանատվություն հանդես չեն բերում և, ըստ երևույթին, նրանց չի մտահոգում այն հանգամանքը, որ այս տարի ևս կարող է կրկնվել անցյալ տարվա դառը փորձը, ձախողվել կարտոֆիլի արտադրության առաջադրանքի կատարումը:

Կոլտնտեսություններում տեղ են գտել նաև կոլտնտեսային դեմոկրատիայի խախտման դեպքեր: Ամենից առաջ, անտեսվում է ընդհանուր ժողովի դերը: Գլխավոր և հիմնական հարցերը լուծվում են միայն վարչության նիստերում:

Քննադատության են արժանի նաև շրջանային և հանրապետական առանձին կազմակերպություններ գյուղի հոգսերի ու կարիքների հանդեպ նրանց ոչ սրտացավ վերաբերմունքի համար: Առանձնապես սրությամբ է դրվելու ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրը. Օրվա խնդիր պետք է համարել Թափարվան գետի վրա ջրհան կայանի կառուցման հարցը: Կառույցն ավարտելուց հետո առոգելի կդառնան տնտեսության ոչ միայն կարտոֆիլի, այլև մյուս կուլտուրաների զգալի տարածություններ: Նույնը պետք է ասել նաև դպրոցական, ակումբ-գրադարանի, կոլտնտեսության գրասենյակի նոր շենքերի շինարարության հարցերի վերաբերյալ:

Վերջում մնում է ասել, որ կոլտնտեսությունը, շրջանի ղեկավար մարմինների օգնությամբ, պետք է արդյունավետ օգտագործի եղած ռեզերվները, մոբիլիզացնի կոլտնտեսականներին աշխատելու օրվա պահանջներին համապատասխան: Միայն այդ ճանապարհով հնարավոր կլինի վերականգնել Կորխի կոլտնտեսության բարի համբավը:

24 մարտի

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

Կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի նիստերի դահլիճում օրերս տեղի ունեցած ընդլայնված խորհրդակցությունը, որին մասնակցում էին շրջանի կոլտնտեսությունների և սովխոզների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ) ավանային և գյուղական սովետների նախագահներ, գյուղատնտեսության մասնագետներ, կուսակցական կազմակերպությունների քարտուղարներ, քննարկեց «Գյուղատնտեսական մթերքների հնգամյակի երեք տարիներին առաջացած ճեղքվածքի վերացման գործում գյուղատնտեսության բնագավառի աշխատողների խնդիրները, որոնք բխում են 1979 թվականի մարտի 2-ին, Մոսկվա քաղաքի Բաումանյան ընտրական օկրուգում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ - Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկեր Լ. Ի. Բրեժնևի արտասանած ճառից» հարցը:

Հաղորդումներով հանդես եկան սոցիալիստական մրցությունը ղեկավարող շրջանային հանձնաժողովի նախագահ Ա. Գորոյանը, շրջսովետի գործկոմի գյուղվարչության պետ Ա. Արզումանյանը:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին շրջսովետի գործկոմի նախագահ Լ. Վարդանյանը, Բոգդանովկայի կոլտնտեսությունների նախագահ Ս. Ղուկասյանը, կուսշրջկոմի քարտուղարներ Պ. Վլասովը, Ա. Սանոսյանը, Գորելովկայի կոլտնտեսության նախագահ Կ. Մարկինը, շրջսովետի գյուղվարչության գլխավոր գյուղատնտես Կ. Մղդեսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ հնգամյակի երեք տարիներին, 1975 թվականի համեմատությամբ, մսի արտադրությունը շրջանում աճել է 9,4, կաթինը՝ 9,3 տոկոսով: Պլան-առաջադրանքից 1.380 տոննայով ավելի լուրդ է վաճառվել պետությանը:

Լայն ասպարեզ է տրվել մատղաշների ինտենսիվ աճեցման առաջավոր եղանակին: Առաջին քայլերն են արվում անասնապահությունը արդյունաբերական հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: Այս տարի շրջկենտրոնի կոլտնտեսություններում շարք մտավ 3.000 գլուխ խոշոր եղջերավոր անասունի մատղաշի աճեցման համալիրը, մինչև տարեվերջ շահագործման կհանձնվի կաթնային համալիրը Գորելովկայում՝ 600 կովի համար:

Խոսելով ձեռք բերած այս և այլ հաջողություններ մասին, խորհրդակցության մասնակիցները կանգ առան նաև չլուծված պրոբլեմների ու հարցերի վրա, կոնկրետ առաջարկություններ արեցին դրանց վերացման ուղղությամբ:

Թեև կատարվել է հնգամյակի երեք տարիների կաթի վաճառքի պլան-առաջադրանքը (առաջավոր տնտեսությունների գերակատարման հաշվին), սակայն շրջանը 2.479 տոննայով թերակատարել է կաթի արտադրության երեք տարիների պլանը: Կաթի արտադրության առաջադրանքները շրջանի 24 տնտեսությունից միայն 7-ն են իրացրել: Կալինինոյի, Օրոջալարի, Գորելովկայի կոլտնտեսությունները պլանավորվածից 419-817 տոննայով պակաս կաթ են արտադրել:

Բրդի արտադրության պլան-առաջադրանքները շրջանում թերակատարել են 16, իսկ վաճառքինը՝ 15 տնտեսություն: Շրջանը 245 տոննայով պակաս միս է հանձնել պետությանը:

Անասնապահության վերելքին խոչընդոտել են մայր անասունների ցածր տոկոսը հանրային հոտում, կովերի և ոչխարների ստերջությունը, մեծ թիվ կազմող անկումներն ու հարկադիր մորթը:

Բավական է ասել, որ հնգամյակի անցած երեք տարիներին, չհաշված հարկադիր մորթը, կորստի է մատնվել 1.003 գլուխ խոշոր և 19 հազար մանր եղջերավոր անասուն, ամեն տարի ստերջության պատճառով 1.800-2.000 հորթ և 8-10 հազար զառ պակաս է ստացվել:

Իսկ եթե չլիներին անկումները և ստերջությունը, շրջանում կրկնակի չափով ավելի շատ մթերքներ կարտադրվեր, և կգերազանցվեին առաջադրանքները:

Միաժամանակ նշվեց, որ շրջանի կուսակցական, սովետական, գյուղատնտեսական մարմինները հնգամյակի չորրորդ տարվա առաջին իսկ ամիսներից նոր ուժով են ծավալել պայքարը թերությունների ու բացերը վերացնելու, գյուղմթերքների արտադրության

և վաճառքի ճեղքվածքը փակելու, հնդամյակի առաջադրանքների կատարելու համար:

Առաջին արդյունքները գոհացուցիչ են: Մսի վաճառքի առաջին եռամսյակի պլան-առաջադրանքը գերակատարվել է 101, կթինը՝ 468 տոննայով: Բարձրացել է արտադրված մթերքների որակը: Մթերակետ հանձնված խոշոր եղջերավոր անասունների միջին կենդանի քաշը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 44 կիլոգրամով, հասել 344-ի: Խորհրդակցությունում ընդհանրացվեց Բոգդանովկայի կոլտնտեսություն-համալիրը, Կալինինոյի, Եֆրեմովկայի և այլ տնտեսությունների ծնրաքաշ անասուններ աճեցնելու փորձը, որոնց մթերակետ հանձնած անասունների միջին կենդանի քաշը կազմել է 369-402-ական կիլոգրամ:

Առաջին եռամսյակի նվաճումներն ամրապնդելու, հնդամյակի մնացած երկու տարում կորցրածը վերականգնելու, պլանով նախատեսված գյուղմթերքների աճն ապահովելու նպատակով խորհրդակցության մասնակիցները շրջանի գյուղատնտեսության բնագավառի աշխատողների անունից որոշեցին.

Մսի արտադրության ու նրա որակը բարձրացնելու նպատակով ավելի լայնորեն արմատավորել անասունների կերակրման ինտենսիվ եղանակը, պետությանը հանձնվող խոշոր եղջերավոր անասունների յուրաքանչյուրի միջին կենդանի քաշը հասցնել 345, գառներինը՝ 31 կիլոգրամի: Հասնել այն բանին, որ ամեն տարի պետությանը վաճառվի 5.300-5.400 տոննա միս (հաշված նաև բնակչությունից գնումները):

Որոշվեց կովերի գլխաքանակը հանրային հոտում այս տարի հասցնել 40, եկող տարի՝ 42 տոկոսի: Դա հնարավորություն կտա ոչ միայն ավելացնելու կաթի արտադրությունը, այլև կհամալրի 1.200-1.300 գլուխ հորթերով:

Անասնապահության կուլտուրան բարձրացնելու, անասունների ցեղայնությունը բարելավելու, ստերջությունը վերացնելու նպատակով կոլտնտեսություններում և սովխոզներում լայնորեն արմատավորել կենդանիների արհեստական սերմնավորման եղանակը, ծավալել անասնաշենքերի շինարարությունը, աշխատատար պրոցեսների մեքանայացումը: Շրջանի 4 տնտեսություններում կառուցել տիպային կովանոցներ, 5-ում՝ ոչխարանոցներ, 8-ում՝ կերախոհանոցներ: Ֆերմաներում 2.500 խոշոր եղջերավոր անասունի համար տեղադրել դոմաղբափոխադրիչներ և ավտոմատ խմոցներ:

Վճռականորեն բարելավել անասնապահական կադրերի հետ տարվող աշխատանքը: Ֆերմաների վարիչների, բրիգադավարների կազմն ամրապնդել իրենց գործը սիրող մասնագետներով: Անասնապահության աշխատողների որակավորումը բարձրացնելու նպատակով տնտեսություններում կազմակերպել հատուկ դասընթացներ, լայնորեն կիրառել նյութական և բարոյական խրախուսման ձևեր ու մեթոդներ: Ամեն կերպ բարելավել անասնապահների աշխատանքի և կենցաղի պայմանները:

Անասնապահական մթերքների արտադրության և վաճառքի նախատեսված բնագծերը նվաճելու, սոցիալիստական մրցությունը

ղեկավարելու համար շրջանում ստեղծվել է կուսակցական, սովետական, գյուղատնտեսական մարմինների ղեկավար աշխատողներից կազմված շտաբ:

Խորհրդակցության աշխատանքներն ամփոփեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ. Քոչոյանը:

1 մայիսի

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ախալքալաքի կուսշրջկոմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտագործնական կոնֆերանս նվիրված սոցիալիստական մրցության կազմակերպման հարցերին: Միջոցառմանը մասնակցում էին շրջկոմի անդամներն ու անդամության թեկնածուները, հիմնարկ-ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավարները, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների քարտուղարները, արհմիութենական կազմակերպությունների բանկոմների և տեղկոմների նախագահները:

Կոնֆերանսը բացեց Ախալքալաքի կուսշրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը:

Կոնֆերանսում «Ախալքալաքի շրջանային կուսակցական կազմակերպության սոցիալիստական մրցության կազմակերպական փորձը» հիմնական զեկուցումով հանդես եկավ կուսշրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը: Սոցիալիստական մրցությունը ղեկավարող շրջանային հանձնաժողովի քարտուղար, ժողովրդական դեպուտատների շրջսովետի գործկոմի գյուղվարչության գլխավոր գոտեմարտիկ Մ. Ցիգանյանը ելույթ ունեցավ «Սոցմրցության արդյունքների սիստեմատիկ հանրագումարումը մրցության հիմնական լծակն է» հարակից զեկուցմամբ: ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ս. Ստեփանյանի զեկուցումը նվիրված էր «Սոցիալիստական մրցությունը երիտասարդությանը սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու կարևոր միջոց է» թեմային: Գյուղատնտեսության աշխատողների արհմիության շրջկոմի նախագահ Լ. Մեսրևելին կարդաց «Սոցիալիստական մրցությունը աշխատավորների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց էր զեկուցումը:

Ուշադրավ էին «Փարոս» շրջանային թերթի բաժնի վարիչ ատաստանապահական սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Գ. Սիմոնյանի, կոշիկի «Իսանի» արտադրական միավորման Ախալքալաքի ֆաբրիկայի բանվորուհի Վ. Մխիթարյանի, տեղարդկոմբինատի դիրեկտոր Ա. Մուրադյանի զեկուցումները նվիրված «Սոցմրցության հրապարակայնությունը», «Մրցությունը կուսակցական ղեկավարությունը», «Մրցությունը և արտադրանքի որակի բարձրացումը», «Մրցության գործարար բնույթը» թեմաներին:

Գիտագործնական կոնֆերանսի արդյունքները հանրագումարեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը:

9 մայիսի

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ

Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի հերթական պլենումը, որի աշխատանքին մասնակցում էին շրջանի հիմնարկ-ձեռնարկությունների, սովխոզների, գյուղսովետների, դործկոմների, դպրոցների ղեկավարներ, սկզբնական կուսակազմակերպությունների քարտուղարներ, պրոպագանդիստներ, քաղինֆորմատորներ, ակտիվիստների ղեկավարներ, քննարկեց «Գաղափարական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման կենսագործման ուղղությամբ շրջանի կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին հարցը:

Զեկուցումով հանդես եկավ կուսշրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը:

- ՍՄԿԿ Կենտկոմի այդ որոշումը,- ասաց զեկուցողը,- ծրագրային փաստաթուղթ է տևական ժամանակաշրջանի համար: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ մեր շրջանում որոշումը ընդունվեց ջերմորեն: Աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը դիտելով որպես կոմունիզմի համար պայքարի կարևոր ճակատ, կուսակցությունը խնդիր է դնում ամեն կերպ ապահովել գաղափարական-քաղաքական, աշխատանքային և բարոյական դաստիարակության միասնությունը:

Հասունացած գաղափարական պրոբլեմների լուծման գործում մեծ ավանդ է ներդնում ՍՄԿԿ Կենտկոմի դիսավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևը: Նրա ելույթներում, «ՍՄԿԿ գաղափարական աշխատանքի հրատապ հարցերը», «Մալայա զեմլյա», «Վերածնունդ», և «Խոպան» աշխատություններում հետագա զարգացում են ստացել պրոպագանդայի և ագիտացիայի լենինյան սկզբունքները:

Գաղափարական աշխատանքի բոլոր օղակների գործունեությունը աշխուժացնելու, դրանց աշխատանքը ներկա պահանջներին համապատասխան կազմակերպելու նպատակով կուսշրջկոմը կազմել և արդեն գործողության մեջ է դրել գաղափարական միջոցառումների ծավալուն պլան:

Գաղափարական աշխատողների հզոր բանակը թվով հազար մարդ, կուսակազմակերպությունների ղեկավարությամբ կոմունիստների, շրջանի աշխատավորների ստեղծագործական ակտիվությունն ու նախաձեռնությունը նպատակամղում են արտադրության արդյունավետության ապահովմանը, պլանային առաջադրանքների և սոցպարտավորությունների կատարմանը: Անցած վեց ամիսներին կոլտնտեսություններն ու սովխոզները նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ պետությանը վաճառել են 818 տոննայով ավելի կաթ, 13 ցենտներով ավելի բուրդ և 50 հազարով ավելի ձու: Դիլիսկայի, Խանդոյի, Բուռնաշեթի, Արագվայի, Օրջայի, Ղազոլարի կոլտնտեսային, Վաչիանի, Կարտիկամի սովխո-

գային, շրջանային հիվանդանոցի և այլ ձեռնարկությունների կուսակազմակերպությունները որոշակի փորձ են կուտակել պրոպագանդան ու ագիտացիան ի սպաս դնելու պլան-առաջադրանքների կատարմանը:

Կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, դպրոցներն այժմ ավելի մոտիկից են զբաղվում աշխատավորներին սոցիալիստական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու հարցերով: Վերջին վեց ամսում այդ թեմաներով շրջանի աշխատավորության համար կարդացվել են 120 զեկուցում ու դասախոսություն, ռազմա-հայրենասիրական թեմաներով կազմակերպվել են բազմաթիվ երեկոներ, հանդիպումներ Հայրենական պատերազմի վետերանների և արտադրության առաջավորների հետ:

Ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցողները միաժամանակ նշեցին, որ ինֆորմացիոն գաղափարա-դաստիարակչական աշխատանքի դրվածքում դեռևս լուրջ թերություններ ու բացեր կան: Շրջանի ոչ բոլոր կուսակազմակերպություններն են վերակառուցել իրենց աշխատանքը, դեռ կոնկրետ քայլեր չեն ձեռնարկել գաղափարա-դաստիարակչական աշխատանքներում տեղ գտած ձևականությունը վերացնելու գործում:

Պլենումն ընդգծեց, որ առանձին սկզբնական կուսակազմակերպություններ ետին պլան են մղել աթեիստական պրոպագանդան, դեռևս թույլ է անցյալի մնացուկների, մեր հասարակությանը խորթ երևույթների դեմ մղվող պայքարը: Քիչ չեն դեպքերը, երբ դաստիարակչական աշխատանքի շրջանակներից դուրս են մնում հասարակական կարգուկանոնը խախտող, հանրօգուտ աշխատանքից խուսափող մարդիկ: Այդ պայքարը դեռևս անարդյունավետ է, քանի որ կուսակցական, կոմերիտական և մյուս կազմակերպությունները չեն հենվում աշխատավորական կոլեկտիվների, բնակչության լայն խավերի գործնական աջակցության վրա: Այդ մտքն արտահայտվեց մտքերի փոխանակությամբ հանդես եկողների ելույթներում:

Պլենումը լսեց կուսշրջկոմի քարտուղար Ա. Ավագյանի հաղորդումը պլենումից պլենում ընկած ժամանակամիջոցում շրջկոմի բյուրոյի գործունեության մասին:

ՍՄԿԿ Կենտկոմի, հանրապետական կուսակցական ակտիվի ժողովի որոշումներն ընդունելով որպես գործողությունների մարտական ծրագիր, պլենումը նշեց գործնական միջոցառումներ:

Պլենումի աշխատանքին մասնակցեց և ելույթ ունեցավ Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Վ. Մ. Սիրաձեն:

14 հուլիսի

ՊՈԵԶԻԱՅԻ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ ԳԱՆՁԱՅՈՒՄ

Բոգդանովկայի մշակույթի տան դահլիճն այս անգամ ավելի բազմամարդ էր, առիթը՝ յուբիլինակ: Նշվում էր վրաց-սովետական գրականության հարանի դեմքերից մեկի՝ բանաստեղծ Ի. Նոնեշվիլու և հայ մեծ բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 60-ամյակները:

Հոբելյանական երեկոն բացեց կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի երկրորդ քարտուղար Պ. Վլասովը: Ելույթ է ունենում շրջանային «Արշալույս» թերթի խմբագիր Մ. Սեդրակյանը:

– Պոեզիայի երկրպագուներիս ուրախությունը կրկնակի է, քանի որ մեր հյուրերն են անվանի բանաստեղծներ, վրաց սովետական գրականության ասպետ Նոնեշվիլին ու սովետահայ գրականության թագուհի Կապուտիկյանը: Նրանց այցելությունը վրաց և հայ ժողովուրդների բարեկամության օրրան Ջավախք մեծ խորհուրդ ունի, առհավատչյան է այն բանի, որ շարունակվում է մեր մեծերի՝ Ծերեթելու և Սունդուկյանի, Թումանյանի և Ճավճավաձեի, Իսահակյանի և Լեոնիձեի, Տաբիձեի ու Ջարենցի, Դեմիրճյանի ու Գամսախուրդիայի արտամոտությունն ու հոգեհարազատությունը:

Հոբելյարներին ողջույնի ջերմ խոսքերով դիմեցին ժողովուրդների Բոգդանովկայի շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ Ի. Փալիաշվիլին, Փոկայի գյուղական սովետի գործկոմի նախագահ Շ. Զորջյանը: Հետո բեմահարթակը տրամադրվեց երգողներին, ասմունքողներին: Հանդես են գալիս վրացֆիլհարմոնիայի վոկալ գործիքային եռյակը (Գիա Կվեշավա, եղբայրներ Ջեմալ և Գոգի Ախրարաձեներ), Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհի Վարդուհի Խաչատրյանը, ժողովրդական արտիստուհի Հրաչուհի Զինանյանը, Փոկայի միջնակարգ դպրոցի դասատու Թ. Քլոյանը, բանաստեղծ Վ. Հովսեփյանը, լրագրող Ժ. Մնեչյանը, Բոգդանովկայի միջնակարգ դպրոցի աշակերտուհիները:

Վերջում հուզիչ ելույթներ ունեցան Ի. Նոնեշվիլին և Ս. Կապուտիկյանը: Նրանց հանձնվեցին հուշանվերներ:

Հաջորդ օրը նշվեց տերյանական պոեզիայի օրը: Բանաստեղծի ծննդավայր Գանձան կրկին հյուրընկալել էր պոեզիայի բազմահազար սիրահարների: Նրանց թվում էին գրողներ, մշակույթի ներկայացուցիչներ Թբիլիսիից, Երևանից, հյուրեր Ախալքալաքի, Ծալկայի շրջաններից:

Տոնահանդեսի մասնակիցները մեծ պատվանվեր դիտեցին Տերյանի տուն-թանգարանը, ծանոթացան Գանձայի տեսարժան վայրերին:

Սկսվում է տոնահանդեսը: Այն բացում է Բոգդանովկայի կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ. Քոչոյանը:

Ամբիոնին է մոտենում Գանձայի Տերյանի անվան միջնակարգ դպրոցի դիրեկտոր Մ. Դուրգարյանը: Վրաստանի գրողների միության անունից խոսք է ասում Ի. Նոնեշվիլին: Նա այսպես է ավարտում իր ելույթը. «Մենք խոնարհվում ենք Վահան Տերյանի՝

բանաստեղծի ու քաղաքացու, վրաց ժողովրդի մեծ բարեկամի պայծառ հիշատակի առջև: Կեցցե Վահան Տերյանի պոեզիան»:

Ապա մեծ քնարերգուին ուղղված սրտի ջերմ խոսքեր ասացին Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստուհի Հ. Ջինանյանը, Գանձայի Ռուսթավելու անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչ Վ. Ղազարյանը, Փոկա գյուղից երիտասարդ բանաստեղծ Մ. Հովսեփյանը, Ախալքալաքի գավառագիտական թանգարանի դիրեկտոր Ա. Կարապետովը և տպարանի դիրեկտոր Դ. Բագրատունին:

Վերջում ելույթ ունեցավ բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, նմուշներ արտասանեց իր ստեղծագործություններից և՝ ի նշան բարեկամության ու եղբայրության, Ի. Նոնեշվիլուն նվիրեց իր ռուսերեն նոր ժողովածուն:

Տերյանական պոեզիայի տոնահանդեսն ավարտվեց գեղարվեստական բաժնով:

26 հուլիսի

ՁՈՒԳԱԿՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

Բոգդանովկայի շրջանի Գոնդուրայի անասնապահական սովխոզի ցանովի և բնական խոտհարքներում փարթամ բուսականություն է աճել: Դաշտավարները և մեխանիզատորները մրցություն են ծավալել կերային կուլտուրաների բերքահավաքը ժամանակին և անկորուստ անցկացնելու համար: Արդեն գերակատարված են սենաժի և սիլոսի պատրաստման առաջադրանքները: Նախատեսված 4.180-ի փոխարեն պատրաստվել է 4.300 տոննա սենաժ, 1.150-ի դիմաց՝ 3.470 տոննա սիլոս, կուտակվել է ավելի քան 2.000 տոննա խոտ: 3.300 տոննա խոտ և 1.200 տոննա ծղոտ կհավաքվի առաջիկայում: 30 հեկտարի վրա հիանալի աճած կերի ճակնդեղի պլանտացիաներից կամբարվի 1.500-1.600 տոննա արմատապտուղ և սիլոսի հետ միասին յուրաքանչյուր կովի համար կապահովվի ավելի քան 5 տոննա հյութալի կեր: Իր գոյության տարիներին սովխոզը երբեք չի ստեղծել այդքան կոշտ և հյութալի կերի պաշար:

Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, մեխանիզատոր Արտյուշ Առաքելյանը, որն ավելի քան 300 տոննա սիլոսի և սենաժի զանգված է փոխադրել խրամատների մոտ, խոտամբարձիչ մեքենայով դեզ դրել 400 տոննա խոտ, խոստանում է 1.500 տոննա խոտ կուտակելու առաջադրանքը գերակատարել 250 տոննայով: Նույն ագրեգատներով 1.000-1.200-ական տոննա խոտ դիզելու վճռականությամբ են իրենց աշխատանքը կազմակերպել Մամզարայի, Ղուլալիսի, Փոքր Գոնդուրայի ագրոբաժանմունքի մեխանիզատորներ Նիկոլայ Գոմցյանը և Վարդ Սահակյանը:

Սովխոզում հաջողությամբ առաջ է ընթանում նաև հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը: Քանի որ տնտեսության դաշտերում ամենուրեք այն սկսվեց միաժամանակ, սովխոզի դի-

ռեկցիան (դիրեկտոր Ս. Նազարյան) մշակեց կոնկրետ պլան, նպատակահարմարությունից ելնելով, աշխատող ուժն ու տեխնիկան առաջին հերթին ուղարկելով այնտեղ, ուր դրա կարիքն ավելի է զգացվում: Փոխադարձ օգնության սկզբունքով, շրջանի բարձրադիր գոտու տնտեսությունները, ուր հունձը համեմատաբար ուշ է սկսվում, բերքահավաք տեխնիկան տրամադրել են սովխոզին: Օգնում է նաև «Վրաց գյուղտեխպետկոմի» շրջանային բաժանմունքը: Գոնդուրայի դաշտերում այժմ գործում են 17 կոմբայն, և դրանց սպասարկող անհրաժեշտ փոխադրամիջոցներ: Կոմբայնավարները, օգտագործելով նպաստավոր եղանակի յուրաքանչյուր օրն ու ժամը, ձգտում են 500 հեկտար հասկավոր կուլտուրաների բերքահավաքն ավարտել սեղմ ժամկետում:

Սովխոզի ղեկավարները գոհունակությամբ են խոսում օգնության եկած «Վրացգյուղտեխպետկոմի» շրջանային բաժանմունքի, Բոգդանովկայի կոլտնտեսություն-համալիրի, Փոքր Խանչալիի կոլտնտեսության կոմբայնավարներ Մարտին Ծառուկյանի, Կարլեն Բաղդասարյանի, Աղվան Շուշանյանի, Ֆեոդոր Լուկյանովի, Իլյուշ Իսպիրյանի և ուրիշների մասին, ովքեր արժանի բաժին են ներդնում «բերքահավաք-79-ը» կազմակերպված անցկացնելու աշխատանքներում: Բերքն էլ առատ է, հեկտարից պահեստավորվում է 30-32 ցենտներ հացահատիկ:

Ակտիվորեն են աշխատում նաև ավտովարորդները: Նրանք արագ բեռնաթափում են հացահատիկ փոխադրող ինքնաթափ մեքենաներն ու անմիջապես վերադառնում կոմբայնների մոտ: Կալերում հաջող է կազմակերպված հացահատիկի չորացումն ու մաքրումը: Գործի դրված հինգ սերմնազտիչներն էլ աշխատում են բարձր արտադրողականությամբ: Հնձված դաշտերում ծղոտն անմիջապես հավաքվում ու փոխադրվում է դեզանոց: Դրանց հաջորդում է ցրտահերկը: Թրթուրավոր տրակտորներով կարճ ժամանակամիջոցում կատարվել է 300 հեկտար աշնանավար: Նրա մի մասը նախապատրաստվել է աշնանացանի համար: Առանց պարարտացնելու ոչ մի հեկտար սառնավար չի կատարվի: Օգնում են «Թրիալեթի-Ջավախեթի» կերհայթայթման միավորման մեխանիզատորները, որոնք օրական տնտեսության դաշտերն են փոխադրում 700-800 տոննա օրգանական պարարտանյութ:

Սովխոզի դիրեկցիան և կուսակցական կազմակերպությունը, սոցմրցություն ծավալելու հետ միասին, իրականացնում են նաև բանվորների և մեխանիզատորների բարոյական ու նյութական խրախուսման միջոցառումներ: Մշտական աշխատող անասնապահներն ու մեխանիզատորները որպես լրացուցիչ վարձատրություն կստանան 600-700 տոննա կոշտ կեր, պլանային ինքնարժեքով նրանց կվաճառվի 220 տոննա հատիկաֆուրաժ:

Դրա հետ մեկտեղ, սովխոզում դաշտային աշխատանքների կազմակերպման գործում կան նաև էական թերություններ: Տնտեսության ոչ բոլոր ագրոբաժանմունքներում է, որ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում կուտակվող կերերի բարձր որակն ապահովելու գործում: Սովխոզի դիրեկցիայի, ագրոբաժանմունքների ղեկա-

վարների ուշադրությունից վրիպել է դաշտերը քարերից մաքրելու, լրիվ մեքենահարմար դարձնելու հարցը: Դրանով պետք է բացատրել, որ բերքահավաքի այս օրերին Մամզարայի, Ղուլալիսի և ուրիշ ագրոբաժանմունքների դաշտերում աշխատող կոմբայնները երբեմն պարապուրդ են տալիս, թերակատարում են օրվա առաջադրանքները: Ագրոբաժանմունքների կալերում մեծ քանակությամբ հացահատիկ է կուտակվել, և դա այն դեպքում, երբ տնտեսությունը դեռ չի իրացրել պետությանը 190 տոննա հացահատիկ հանձնելու պարտավորությունը:

4 սեպտեմբերի

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԸ՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ [Սեդրակ Պապոյան]

Երեսունհինգ տարի: Բարեխիղճ, իր գործը սիրող, գործի նկատմամբ բարձր պատասխանատվություն ցուցաբերող մարդու համար այդ տարիները պետք է դառնան մեծ վաստակի ու հաղթանակների ուսանելի ճանապարհ:

- Այսպիսի ճանապարհ է անցել ու այժմ վաստակած հեղինակություն, հարգանք ու պատիվ է վայելում ժողովրդական դեպուտատների Ախալքալաքի շրջանային սովետի գործկոմի գյուղատնտեսության վարչության գլխավոր հաշվապահ Սեդրակ Պապոյանը:

Ընդամենը 18 տարեկան էր, որ գրվեցին նրա աշխատանքային գործունեության առաջին տողերը՝ երբ միջնակարգը գերազանց առաջադիմությամբ ավարտելուց հետո նա ստանձնեց Ախալցիխեի շրջանի Կոլթախևի գյուղի կոլտնտեսության հաշվապահի պարտականությունը: Նախընտրած մասնագիտության մեջ խորացավ, փորձ և հմտություն ձեռք բերեց Ախալքալաքի շրջանի Հայրենի Խանդո և ապա, Բուռնաշեթ գյուղերի կոլտնտեսություններում, Վաչիանի և Ախալքալաքի ՄՏ կայաններում, Հոկամի անասնապահական սովխոզում գլխավոր հաշվապահ աշխատելու 17 տարիներին: Հետո նրան վստահվեց Բոգդանովկայի շրջանի Գանձայի անասնապահական սովխոզի դիրեկտորի պատասխանատու աշխատանքը: 1963 թվականից առ այսօր Պապոյանի աշխատանքային գործունեությունը շարունակվում է Ախալքալաքի շրջգործկոմի գյուղվարչությունում:

Ս. Պապոյանը շատ ջանք ու եռանդ է ներդրել Ախալքալաքի և հարևան շրջանների հաշվապահական կադրերի պատրաստման ու դաստիարակության գործում, որոնցից շատերն այժմ վստահորեն գլխավորում են կոլտնտեսությունների, սովխոզների հաշվապահությունները, նա այժմ էլ երիտասարդ հաշվապահական կադրերի ուսուցիչն ու խորհրդատուն է: Պրակտիկ աշխատանքը նա միշտ զուգակցել է ուսման հետ: Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հեռակա բաժինը, Մոսկվա-

յի գյուղատնտեսական համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան:

1971 թվականին նույն ինստիտուտի գիտական խորհուրդը Պապոյանին շնորհում է տնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան: Նա հաջողությամբ դիսերտացիա է պաշտպանում «Կոլտնտեսային եկամուտների հաշվարկումն ու հաշվառքի կատարելագործումը» թեմայով:

Կոմունիստ Սեդրակ Պապոյանի սրտին մոտ են հասարակական աշխատանքները: Ընտրվել է կուսակցության Ախալքալաքի շրջկոմի անդամության թեկնածու, վերստուգիչ հանձնաժողովի անդամ, կոլտնտեսությունների և սովխոզների տնտեսական գործունեության վերլուծման բյուրոյի քարտուղարն է:

Սեդրակ Պապոյանի անբասիր ու բեղմնավոր աշխատանքը աննկատ չի մնացել: Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1968 թվականին նրան արժանացրել է Հանրապետության վաստակավոր հաշվապահի (առաջինը՝ Հանրապետությունում) պատվավոր կոչմանը: Բազմաթիվ մեդալները, պատվոգրերն ու դրամական պարգևները նրա հայրենանվեր գործերի արժանի գնահատականն են:

Թեև բոլորել է Սեդրակ Պապոյանի 56 տարին, սակայն նա երիտասարդական ավյունով է շարունակում կատարել իր պարտականությունները:

11 սեպտեմբերի

ԼՈՒՐԵՐ ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՑ

ԿԵՐԻ ԱՌԱՏ ՊԱՇԱՐՆԵՐ

Հանրային հոտի կուշտ ձմեռման համար շրջանի կոլտնտեսությունները ու սովխոզները կուտակել են 98.950 տոննա կոշտ և 53.400 տոննա հյութալի կերեր, այդ թվում՝ 54.400 տոննա խոտ, 32 հազար տոննա սենաժ և 44 հազար տոննա սիլոս: Նախորդ տարվա համեմատությամբ, կոշտ կերի պաշարն ավելացել է 25 հազար և հյութալի կերինը՝ 45 հազար տոննայով:

Մեկուկես տարվա կոշտ կերի պաշար են ստեղծել Ժդանովկանի, Մեծ Արագյալի, Ռոդիոնովկայի կոլտնտեսությունները, Գանձայի մասնագիտացված սովխոզը:

ՆՈՐԱԿԱՌՈՒՑՆԵՐ

Գոնդուրայի անասնապահական սովխոզում շահագործման հանձնվեց 200 գլխի համար կովանոցի ավլագային շենքը, որտեղ տեղադրվել են գոմաղբափոխադրիչներ և ավտոմատ խմոցներ: Առաջիկայում կստուգվորվեն էլեկտրակիթի ապրեգատներ:

Նոր անասնաշենքեր են կառուցվում Կալինինոյի, Փոքր Աբագայի, Մեծ Խանչալի, Սաթիայի կոլտնտեսությունների մոտ:

Խոտացրած կերերի տիպային պահեստներն են շարք մտել Հեշտիայի, Գորելովկայի, Խոջաբեկի, Նոր Խուլդումոյի, Ռոդիոնովկայի կոլտնտեսություններում, իսկ Փոքր Խանչալիի, Ղաուրմայի կոլտնտեսություններում կարտոֆիլի պահեստներ:

ՀԱՐՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՔԵՆԱՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԸ

Շրջանի կոլտնտեսությունների և սովխոզների մեքենահավաքակայանները տարեցտարի համալրվում են գյուղատնտեսական նոր տեխնիկայով: Շրջանում այժմ հաշվվում են տարբեր մակնիշի 445 տրակտոր, 284 ավտոմեքենա, հացահատիկային և սիլոսահավաք 227 քարշակ, 2.500-ից ավելի այլ մեքենաներ ու սարքեր:

Ընթացիկ տարում շրջանի տնտեսությունները ձեռք են բերել 35 տրակտոր, 18 ավտոմեքենա, տարբեր մակնիշի 14 կոմբայն և ուրիշ մեքենաներ ու կցվող սարքեր:

420 ՀԱԶԱՐ ՌՈՒԲԼՈՒ ԿՈՒԼՏՈՒՐ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Միջշրջանային «Թբիլեթի-Ջավախեթի» կերհայթայթման միավորումը, Վրացդյուղտեխսպեկոմի շրջանային բաժանմունքի մեխանիզատորական ջոկատը, կոլտնտեսությունները և սովխոզները կատարել են 420 հազար ռուբլու կուլտուր-տեխնիկական աշխատանք: Յուրացվել է 172 հեկտար խամ ու խոպան հողատարածություն, քարերից մաքրվել, արմատական բարելավման է ենթարկվել ավելի քան 450 հեկտար վարելահող, 170 հեկտար տարածություն վերածվել է կուլտուրական խոտհարքերի:

Հողերի բարելավման աշխատանքները բարձր մակարդակով կատարվեցին Եֆրեմովկայի, Փոքր Խանչալիի, Սաթիայի, Գորելովկայի և ուրիշ տնտեսություններում:

27 դեկտեմբերի

1980

ԾԱՎԱԼՎՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՆ

Ընտրական կամպանիայի այս եռուն օրերին Բոդդանովկայի շրջանի կուսակազմակերպությունների ագիտակոլեկտիվները քաղաքական բացատրական ծավալուն աշխատանք են կատարում: Կուսակցական կազմակերպություններին զգալի օգնություն են ցույց տալիս ընտրական տեղամասերում գործող 47 ագիտկետերն ու ընտրողների ակումբները: Թվով 500 ագիտատորներ ու քաղինֆորմատորներ մասսայականացնում են Վրացական ՍՍՀ ընտրությունների կանոնադրությունը, մանրամասնորեն բացատրում կոմունիստական կուսակցության մշակած և սովետական պետության կողմից իրականացվող խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը, կոնկրետ փաստեր են բերում նախորդ ընտրություններից հետո երկրում, մեր հանրապետությունում, շրջանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունների, կոմունիզմ կառուցող մեր մարդկանց աշխատանքային մեծագործությունների, սովետական դեմոկրատիզմի մասին և այլն:

Կուսակցության շրջկոմի քաղլուսկաբինետը ագիտակոլեկտիվների ղեկավարների համար անց է կացրել սեմինարներ և հրահանգչական խորհրդակցություն: «Վրացական ՍՍՀ Գերագույն և տեղական սովետների ընտրությունների կանոնադրությունները», «Ինչպես կազմակերպել հետաքրքիր և նպատակասլաց ագիտացիոն զրույց» թեմաներով: Կազմակերպվել է փորձի փոխանակում:

Միշտ բազմամարդ է Խոջաբեկ գյուղի ընտրական տեղամասի ագիտկետը, որի վարիչն է կոլտնտեսության տնտեսագետ Է. Մղդեսյանը: Ագիտատորներ, կոլտնտեսության կուսկազմակերպության քարտուղար Մ. Սահակյանը, զոոտեխնիկ Գ. Արզումանյանը, ինժեներ-մեխանիկ Ա. Ղարսլյանը, կոլտնտվարչության նախագահ Կ. Վարդանյանն ընտրողների հետ զրույցներ են անցկացրել «Վ. Ի. Լենինի ծննդյան 110-ամյակը», «Սովետական ընտրական սիստեմը», «ՍՍՀՄ քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները», «ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1979 թ.) պլենումի որոշումները» և այլ թեմաներով:

Նախընտրական ագիտացիան հաջող է կազմակերպված նաև շրջանի Ուչմանա, Թորիա, Կալինին, Սպասովկա գյուղերում, գլխավորող պանրայուղգործարանում:

19 հունվարի

Երբ 1975 թվականի դեկտեմբերի Մաթևոս Սահարյանն ստանձնեց կոլտնտեսության նախագահի պարտականությունը, որոշ մարդկանց թվաց, թե տնտեսությունում բոլոր հնարավորություններն ու ռեզերվները սպառվել են, նոր նախագահին քիչ բան է մնում անելու: Չէ՞ որ Խանդոյի կոլտնտեսությունը մինչ այդ արժանացել էր միութենական, հանրապետական, շրջանային փոխանցիկ դրոշների, պարգևատրվել ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի գլխավոր կոմիտեի դիպլոմներով: Սակայն շատերը, այդ թվում և վարչության նորընտիր նախագահը, պնդում էին, որ ռեզերվները սովորաբար չեն սպառվում, միայն պետք է դրանք գտնել, կյանքի կոչել:

Եվ խանդոցիները շարունակեցին իրենց լավ ավանդույթները: Տասներորդ հնգամյակի առաջին իսկ տարվանից նվիրված աշխատանքով ապահովեցին պետական առաջադրանքների կատարումը, կրկին քայլերով առաջավորների շարքում: Իհարկե, հաղթահարվեցին ժամանակավոր դժվարություններ և արգելքներ ևս: Բայց կյանքը ցույց տվեց, որ խանդոցիներն ու նրանց կոլտնտեսության նախագահը ճշմարտացի էին:

Ավելի քան չորս տարիների համառ, նվիրված աշխատանքը անուն, փառք ու պատիվ բերեց կոլտնտեսության նախագահ Մ. Սահարյանին: Միջնակարգ դպրոց, շարքային կոլտնտեսական, սովետական բանակ, բարձրագույն մասնագիտական կրթություն (գյուղատնտես), դաշտավարական բրիգադավար, կուսկոմիտեի նախագահ՝ ահա Մ. Սահարյանի աշխատանքային կենսագրությունը: Անցած չորս տարիներին նրա ղեկավարած կոլտնտեսությունում և գյուղում շատ բան է փոխվել:

Բնորոշ են, հատկապես, տնտեսության ցուցանիշները: Կոլտնտեսության գրամական եկամուտները 1976 թվականի 960 հազարից 1979 թվականին հասել են մեկ միլիոն 700 հազարի: Եռապատկվել են անբաժանելի ֆոնդերը: Կոլտնտեսությունը բոլոր դծերով դերակատարել է հնգամյակի չորս տարիների պետական առաջադրանքները, ապահովել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վաճառքի հնգամյա առաջադրանքները դերակատարելու մասին, հայրենիքի շտեմարաններն են ուղարկել 1.277 տոննա հացահատիկ, 7.456 տոննա կարտոֆիլ:

Կոլտնտեսությունը աննախընթաց հաջողություններ հասավ 1979 թվականին: Հեկտարից ստացվել է 32,5 ցենտներ հացահատիկ, 177 ցենտներ կարտոֆիլ, 613 ցենտներ կերային արմատապտուղներ, դերակատարվել են միամյա, բազմամյա խոտաբույսերի, սիլոսային կուլտուրաների բերքատվության պլան-առաջադրանքները: Մեկ կովի կաթնատվությունը հասել է 2.500 կիլոգրամի (1976-ի համեմատությամբ ավելացել է 600 կիլոգրամով), ամեն մի ոչխարից ստացվել է 3 կիլոգրամ բուրդ: Հաջողությունները շոշափելի են նաև

արտադրվող մթերքների որակի բարձրացման և ինքնարժեքի իջեցման ուղղությամբ: Մթերքների ինքնարժեքն այստեղ 25-30 տոկոսով ցածր է շրջանի կոլտնտեսությունների միջին ցուցանիշից:

Գյուղում մեծ թափ է ստացել արտադրական, կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարությունը: Անցած չորս տարում կառուցվել և շահագործման են հանձնվել խտացված կերերի միջտնտեսային արտադրամասը, 4 ոչխարանոց 800-ական գլխի համար, կովանոց, կարտոֆիլի պահեստ, գյուղմեքենաների վերանորոգման արհեստանոց, գրասենյակի երկհարկանի շենք, արդյունաբերական և մթերային ապրանքների խանութներ և այլ օբյեկտներ:

Հնգամյակի անցած տարիներին արտադրական հաջողությունները կոլտնտեսությանը բերեցին հանրապետական երկու, շրջանային փոխանցիկ մի քանի դրոշներ, 18 կոլտնտեսական արժանացան կառավարական շքանշանների և մեդալների, սոցմրցության հաղթողի կրծքանշանների:

Կոլտնտեսության նախագահ Մ. Սահարյանի բեղմնավոր աշխատանքի գնահատականն էլ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանն է:

Կոլտնտվարչությունը և կուսկոմիտեն այժմ ձեռնամուխ են եղել կոլտնտեսության հետագա վերելքի ապահովման միջոցառումների կենսագործմանը: Այդ միջոցառումների նպատակն է տասներորդ հնգամյակի մնացած առաջադրանքները կատարել Վ. Ի. Լենինի ծննդյան 110-րդ տարելիցի օրը, հնգամյակի ավարտական տարում հացահատիկի միջին բերքատվությունը հասցնել 35, կարտոֆիլինը՝ 200 ցենտների, յուրաքանչյուր կովից կթել 2.600 կիլոգրամ կաթ, ամեն մի ոչխարից ստանալ 3,2 կիլոգրամ բուրդ, ավելացնել մսի արտադրությունը: Որոշված է կառուցել և շահագործման հանձնել վառելանյութի, հացահատիկի, կարտոֆիլի նոր պահեստներ, կենցաղսպասարկման տաղավարներ, բաղնիք, հանրախանութ, ճաշարան, ցանքաղաշտերի լրիվ ջրարբիացումն ապահովելու նպատակով ստեղծել արհեստական երկու լիճ:

Ահա խոհեր, պլաններ, որոնք անհանգստացնում են կոլտնտեսության վարչության նախագահ Մաթևոս Սահարյանին:

Ահա մեր ժամանակների մարդը, որն աշխատանքային նոր սխրագործությունների է ոգեշնչում համագյուղացիներին, առաջնորդում նվաճելու նոր բնագծեր:

Եվ այդ բոլորի համար է, որ Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունների Ալաստանի N 143 ընտրական օկրուգի մեջ մտնող 11 գյուղերի աշխատավորները փետրվարի 24-ին, մոտենալով քվեատուփերին, ձայն կտան կոլտնտեսային գործերի հմուտ կազմակերպիչ, դեպուտատության արժանավոր թեկնածու Մաթևոս Միսաքի Սահարյանի օգտին:

19 փետրվարի

Տարիներ շարունակ Խուլգումոյի (Ախալքալաքի շրջան) կոլտնտեսականները կարտոֆիլ են մշակել և դժգոհ չեն եղել արդյունքներից. քայլել են առաջավորների շարքում: Իններորդ հնգամյակի առաջադրանքները բարձր ցուցանիշներով կատարելու, ծավալված մրցությունում հաղթելու համար, օրինակ, տնտեսությունը արժանացել է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Մինիստրների խորհրդի, Վրացարհխորհրդի, ԼԿԵՄ Կենտկոմի կարտոֆիլի դծով փոխանցիկ կարմիր դրոշի:

Սակայն վերջին տարիներս տնտեսությունը զիջեց իր դրված դիրքերը, սկսեց թերակատարել կարտոֆիլի արտադրության և վաճառքի առաջադրանքները: Տասներորդ հնգամյակի անցած չորս տարիներին կոլտնտեսությունը պետությանը պարտք է մնացել 1.030 տոննա կարտոֆիլ:

Ձեն գոհացնում հատկապես անցած տարվա արդյունքները: Կոլտնտեսությունը նախատեսված 163-ի փոխարեն ապահովեց միայն 99 ցենտներ կարտոֆիլի միջին բերքի ստացումը: Դաշտավարական չորս բրիգադներից և ոչ մեկը չկարողացավ իրացնել բերքատվության առաջադրանքներ, թեև կարտոֆիլի ցանքը կատարվել էր մեքենայական եղանակով, բարձրորակ սերմացուով, բարձր բերքատու հողերում: Բերքատվության առաջադրանքների ձախողումն անմիջականորեն առնչվում է աշխատանքի ոչ ճիշտ կազմակերպման, խիստ ցածր աշխատանքային կարգապահության հետ:

Աշխատունակ կոլտնտեսականների մեծ մասը խուսափում է հանրօգուտ աշխատանքից: Ավելի քան 178 խուլգումոցիներ, որոնք օգտվում են կոլտնտեսականի բոլոր իրավունքներից, առանց կոլտնտեսության թույլտվության, առանց գրանցման աշխատում են շրջկենտրոնի հիմնարկ-ձեռնարկություններում: Քիչ թիվ չեն կազմում այն կոլտնտեսականները, որոնք լքում են հանրային աշխատանքը, «եկամտի» աղբյուրներ որոնում հանրապետությունից դուրս, հեռավոր վայրերում: Դրանց թվումն են՝ Ստեփան Մանուկյանը, Ստեփան Գրիգորյանը, Թումաս և Արմենակ Մուրադյանները, Բաղդասար Մանվելյանը և ուրիշներ, թվով 46 կոլտնտեսական: Անհանդուրժելի է, որ գյուղում մնացող, ոչ մի տեղ «չչվող» 58 կոլտնտեսականներ (մեծ թվով կանայք) տարվա ընթացքում ոչ մի օր աշխատանքի դուրս չեն եկել: Այս բոլորից հետո պարզ է, թե ինչու կոլտնտեսության յուրաքանչյուր բրիգադի 150 աշխատունակ կոլտնտեսականներից դաշտային ոռոգման աշխատանքներին մասնակցել են միայն 20-22 մարդ, թե ինչու անբաններին հիմնականում փոխարինել են պիոներ-դպրոցականները:

Կոլտնտեսության վարչությունը և կուսակցական կազմակերպությունը, չգիտես ինչու, աշխատանքային կարգապահությունը խախտողների նկատմամբ հանդես են բերում լիբերալ վերաբերմունք և ավելորդ ներողամտություն: Ավելին, աշխատանքից խու-

սափորների հարցը ոչ մի անգամ քննարկման առարկա չի դարձվել: Եվ ինչպես կարող էր դառնալ, եթե կոլտնտեսությունում խախտվում է ներկոլտնտեսային դեմոկրատիան. ժամանակին չեն գումարվում ընդհանուր ժողովներ (տարվա ընթացքում հրավիրվել է կոլտնտեսականների մեկ ընդհանուր ժողով):

Խուլգումրի կոլտնտեսությունը բոլոր հնարավորություններն ունի կարտոֆիլագործություն տնտեսության առաջատար և եկամտաբեր ճյուղը դարձնելու համար: Կոլտնտվարչությունը (նախագահ՝ Հ. Զիվչյան) և կուսկազմակերպությունը (քարտուղար՝ Պ. Թոփալյան) պետք է ըստ ամենայնի բարձրացնեն աշխատանքային կարգապահությունը, լուրջ միջոցներ ձեռնարկեն այն կոլտնտեսականների նկատմամբ, ովքեր խախտում են աշխատանքային կարգապահությունը, հրաժարվում հանրօգուտ աշխատանք կատարելուց:

13 մարտի

ԱՍՊԻՆՁԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի 1977 թվականի որոշումը Ասպինձայի շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մասին մտել է գործողության մեջ:

Կառուցվել են.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

1978 թվականին շրջկենտրոնում շահագործման է հանձնվել 800 սովորողի համար եռհարկանի դպրոցական շենք՝ բոլոր հարմարություններով, Թմոկվի գյուղում ութամյա դպրոցի շենք 200 երեխայի համար:

Նոր ուսումնական տարվանից շարք կմտնի եռհարկանի տիպային դպրոցական շենքը Դամալա գյուղում: Իսկ Ասպինձա ավանում նախադպրոցականների համար կկառուցվի մսուր-մանկապարտեզի շենք:

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Շրջանում գնալով ընդարձակվում է առևտրական ցանքը, շարք են մտնում նոր խանութներ ու առևտրական կետեր: Վերջին երկու տարում կառուցվել է այդպիսի 12 օբյեկտ:

Անցած տարի Ասպինձա ավանի կենտրոնական փողոցի վրա շահագործման հանձնվեց առևտրական կենտրոնի երկհարկանի շենքը: Հանրախանութն ունի պատրաստի հագուստեղենի, գործվածքեղենի, կոշիկի, պարֆյումերային և մթերային ապրանքների բաժիններ, որտեղ աշխատում են առևտրական դասընթացներ ավարտած երիտասարդ աղջիկներ:

ԿԵՆՑԱՂՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՂԱՎԱՐՆԵՐ

Ասպինձա ավանում շարք է մտել բնակչության կենցաղսպասարկման տաղավարը, որն ունի կարի անհատական պատվերների, ռադիո-հեռուստացույցների, բնակարանային էլեկտրասարքերի վերանորոգման արտադրամասեր, վարսավիրանոց:

Կենցաղսպասարկման տաղավարներ ու կետեր են գործում Դամալա, Խիզաբավրա, Տոլոշ, Օշորա և այլ գյուղերում:

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ

Անցած տարի շրջկենտրոնում շահագործման հանձնվեց ութ բնակարանանոց տուն՝ անտառտնտեսության աշխատողների համար:

Այս տարի նախատեսված է կառուցել և շահագործման հանձնել 60 բնակարանանոց շենք ավանի բանվոր-ծառայողների համար, տիպային հյուրանոց, դատարանի և դատախազության վարչական շենք, բալնեոլոգիական պանսիոնատ՝ Վարձիայում:

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ, ՋՐՄՈՒՂՆԵՐ

Շահագործման հանձնվեց շրջանի լեռնային գոտու ամառային արոտավայրերը տանող, 10 կիլոմետր երկարությամբ Վարձիա-Նիալա ճանապարհը, որից կօգտվեն 12 կոլտնտեսություններ:

Շրջկենտրոնի բնակչությանը խմելու ջրով ապահովելու նպատակով, այս տարի կավարտվի նոր ջրմուղի շինարարությունը: Մինչև տարեվերջ շարք կմտնի նաև հզոր պոմպակայան:

ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

Շրջանում առաջին քայլերն են արվում անասնաբուծությունը արդյունաբերական հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: 1978 թվականից գործում է Ասպինձայի միջտնտեսային խոզաբուծական համալիրը: Մինչև նոյեմբեր ամիսը շահագործման կհանձնվեն Իգումալայի և Խիզաբավրայի կաթնային համալիրները, որոնցից յուրաքանչյուրը կունենա 200-ական գլուխ կովկասյան գորշ ցեղի բարձր մթերատու կով:

26 մարտի

ԼՈՌԻԵՐ ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՑ

ԿԱԹՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

Գորելովկայի Լենինի անվան կոլտնտեսությունում առաջին քայլերն են կատարվում անասնաբուծությունը արդյունաբերական հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: Տնտեսության բազայի վրա կառուցվում է կաթնային համալիր: Կաթի արտադրության այս խոշոր օբյեկտը, որը շահագործման է հանձնվելու ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում, կունենա 600 գլուխ կովկասյան գորշ ցեղի բարձրակաթնատու կով: Դրանցից յուրաքանչյուրի միջին կաթնատվությունը տարվա ընթացքում կհասնի 3.000-3.500 կիլոգրամի:

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԱՆԱՄՆԱՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բոգդանովկայի կոլտնտեսություն-համալիրի անասնապահները հիանալի նվեր ստացան: Շրջանի միջկոլտնտեսային շինարարական կազմակերպությունն ամառային արոտավայրերում շահագործման հանձնեց 12 առանձնասենյակով բնակելի տուն՝ բոլոր հարմարություններով:

ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

Շուտով շրջկենտրոնում շահագործման կհանձնվի մսուրմանկապարտեզի նոր շենք՝ 240 երեխայի համար: Արդեն ավարտվել են կառույցի նկուղային և առաջին հարկերը շինարարական աշխատանքները: Արագ թափով են ընթանում շրջկենտրոնի 420 աշակերտական տեղով միջնակարգ դպրոցի շենքի շինարարական աշխատանքները: Շենքը շահագործման է հանձնելու 1980-1982 ուսումնական տարում:

ԿԵՆՑԱՂՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՂԱՎԱՐ

Շրջկենտրոնում մինչև տարեվերջ շարք կմտնի կենցաղսպասարկման տաղավար 120 բանվորական տեղով: Տաղավարն ունենալու է վարսավիրանոց, կարի անհատական պատվերների, ռադիոհեռուստացույցների, բնակարանային էլեկտրասարքերի վերանորոգման, հագուստեղենի քիմիական մաքրման արտադրամասեր ու կետեր:

ՆՈՐ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Կոլտնտեսությունների միջոցներով շրջանի 12 գյուղերում կառուցվում են նոր բաղնիքների շենքեր: Նրանցից առաջինը գործարկվեց հեռավոր Գանձա գյուղում: Տարվա երրորդ եռամսյակում բաղնիքներ շահագործման կհանձնվեն Հեչտիա, Սաթխա, Փոկա, Գոնդուբա, Ջիգրաշեն, Թորիա և այլ գյուղերում:

ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

Շրջանի Ժդանովական և Մեծ Արագյալ գյուղերի կոլտնտեսություններում շահագործման հանձնվեցին 250-ական տոննա տարողությամբ խտացված կերերի պահեստներ: Մինչև այս տարվա հուլիսի 15-ը յուրաքանչյուրը 400 տոննա տարողությամբ պահեստներ կկառուցվեն Ուչմանայի, Սաթխայի կոլտնտեսություններում, իսկ մինչև տարեվերջ կավարտվի հանքային պարարտանյութերի պահեստների շինարարությունը Փոքր Խանչալի, Եֆրեմովկայի, Ասպարայի կոլտնտեսություններում:

19 հուլիսի

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Վրացական ՍՍՀ լուսավորության մինիստրության ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը Ախալքալաքում կազմակերպեց հանրակրթական դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացներ, որոնց մասնակցում էին Ախալքալաքի, Ախալցիխեի, Բոգդանովկայի, Ծալկայի, Թիթրիծղարոյի, Ադիգենի, Բորժոմի, Ասպինձայի և այլ շրջանների դպրոցների 150 մանկավարժներ:

Դասընթացներում պարապմունքներն անցկացնում էին Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության ուսուցիչների կատարելագործման ինստիտուտից, Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտից հրավիրված մասնագետներ, ինչպես նաև Ախալ-

քալքի շրջժողկոմբաժնի մեթոդկաբինետի լավագույն ուժերը: Դասախոսություններ կարդացվեցին մարքսիզմ-լենինիզմի հիմունքներից, հայոց լեզվից ու գրականությունից, մանկավարժությունից, հոգեբանությունից, իրավագիտությունից:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ՍՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վաղարշակ Բարսամյանը դասախոսություն կարդաց «Մարքսիզմ-լենինյան տեսության և ՍՄԿԿ-ի քաղաքականության արդի պրոբլեմները» թեմայով: Հայոց լեզվի և գրականության դասավանդման պրոբլեմներին նվիրված թեմաներով դասախոսություններ կարդացին նույն ինստիտուտի մանկավարժական գիտությունների խորհրդի հայոց լեզվի սեկտորի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիգեն Ավագյանը, գրականության սեկտորի ավագ գիտաշխատող Սերգեյ Հովհաննիսյանը:

Երևանի ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտի մանկավարժության ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Գևորգ Թումամյանն իր դասախոսությունը նվիրեց «Սովորողների ճանաչողական ունակությունների զարգացումը» թեմային:

Դասընթացների աշխատանքներն արդյունավետ անցկացնելու գործում գործնական օգնություն ցույց տվեցին Ախալքալաքի շրջժողկոմբաժինը, կուսակցական, սովետական մարմինները: Դասընթացների մասնակիցները ծանոթացան շրջանի տեսարժան վայրերին, եղան շրջկենտրոնի Դ. Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցի մարտական փառքի թանգարանում, Բոգդանովկայի շրջանի Գանձա գյուղում Վ. Տերյանի տուն-թանգարանում, Ասպինձայի շրջանում «Վարձիա» պատմական մայրաքաղաքում:

22 հուլիսի

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԵՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ավանդույթային է դարձել Բոգդանովկայի և Սադարեջոյի շրջանների սոցիալիստական մրցությունը: Այն նպաստել ու նպաստում է մրցակիցների բարեկամական համագործակցությանը, նրանց ստեղծագործական նախաձեռնության զարգացմանը, ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Վերջերս Բոգդանովկայի շրջանի պատվիրակությունը, կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Վ. Բոչոյանի ղեկավարությամբ, եղավ Սադարեջոյում: Կուսակցական-տնտեսական ակտիվը ժողովում վերլուծության ենթարկվեց հնգամյակի եզրափակիչ տարվա սոցիալիստական մրցության ընթացքը, կատարվեց փորձի փոխանակում:

Նույն նպատակն էր հետապնդում Սադարեջոյի շրջանի աշխատավորության փոխայցը Բոգդանովկա: Պատվիրակության ան-

դամները մասնակցեցին շրջանի կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովին:

Ժողովի մասնակիցները քննարկեցին «Հնգամյակի ավարտական տարվա առաջին կիսամյակի պլանների ու սոցիալիստական պարտավորությունների կատարման արդյունքները և շրջանի կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների խնդիրները՝ հանրապետական կուսակցական ակտիվի 1980 թվականի ժողովի լույսի ներքո» հարցը: Հաղորդումներով հանդես եկան Վրաստանի ԿԿ Բոգդանովկայի և Սագարեջոյի շրջկոմների քարտուղարներ Ա. Սանոսյանը և Թ. Քևկասիշվիլին:

Բոգդանովկացիները լուրջ հաջողություններ են ձեռք բերել գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների առաջադրանքները կատարելու գործում: Հուլիսի 1-ի տվյալներով, յուրաքանչյուր ֆուրաժային կովի կաթնատվությունը անցած տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ավելացել է 24 կիլոգրամով, կաթի համախառն արտադրությունը՝ 5.854 ցենտներով: Տարվա առաջին կիսամյակում կոլտնտեսությունները և սովխոզները պետությանը վաճառել են 103.873 ցենտներ կաթ, 14.179 ցենտներ միս, 1.400 ցենտներ բուրդ և այլ մթերքներ: Այս ցուցանիշներն զգալիորեն գերազանցում են սահմանված պլան-առաջադրանքները:

Կիսամյակային պլանները գերազանցումով են իրացրել նաև արդյունաբերական ձեռնարկությունները, տրանսպորտային, շինարարական, առևտրական և մյուս կազմակերպությունները:

Սոցմրցությունը լուրջ հաջողությունների է հասցրել նաև մրցակից Սագարեջոյի աշխատավորներին: Անցած վեց ամսում շրջանի արդյունաբերական ձեռնարկությունները թողարկել են 20 միլիոն 617 հազար ռուբլու և իրացրել 19 միլիոն 170 հազար ռուբլու արտադրանք, շինմոնտաժային կազմակերպությունները կատարել են 7,7 միլիոն ռուբլու աշխատանք: Մինչև տարեվերջ շրջանում շարք կմտնեն խոշոր գինեգործարանը, որը տարեկան տալու է 65 միլիոն ռուբլու արտադրանք, 600 տեղանոց մշակույթի տունը, ցեղային երինջների աճեցման համալիրը:

Լուրջ քայլեր են կատարվել գյուղատնտեսությունը արդյունաբերական հիմունքներով կազմակերպելու հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: Սագարեջոյում գործում են խոզաբուծական, խոշոր եղջերավոր անասունների բտման համալիրներ, թռչնաբուծական ֆաբրիկա, ոչխարաբուծական երկու խոշոր սովխոզներում 110 հազարի է հասել մանր եղջերավոր անասունների գլխաքանակը:

Սագարեջոյի աշխատավորների խոսքը մեկն է՝ պատվով կատարել տասներորդ հնգամյակով սահմանված 18 հազար 614 տոննա միս, 24.500 տոննա կաթ, 1.050 տոննա բուրդ, 156 միլիոն ձու արտադրելու սոցիալիստական պարտավորությունը:

Ժողովում ելույթ ունեցան Թորիայի կոլտնտեսության նախագահ Կ. Պետրոսյանը, Գորելովկայի անասնաբույծ Վ. Տամիլինը, Գոնդուրայի անասնապահական սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Մ. Ավետիսյանը, Բոգդանովկայի կարի ֆաբրիկայի դիրեկտոր Հ.

Զրաղացպանյանը, Գորելովկայի պանրագործարանի տեխնիկ-մեխանիկ Վ. Մոսկվիտինը:

Կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովի արդյունքները հանրագումարեց կուսշրջկոմի առաջին քարտուղար Վ. Քոչոյանը:

16 օգոստոսի

ՄՐՑՈՒՄ ԵՆ ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ

Խանդոյի սերմնաբուծական կոլտնտեսության 565 հեկտար ցանքագաշտերում աշխատում է 6 կոմբայն: Պետությանը 366-ի փոխարեն 414 տոննա հացահատիկ վաճառելու ձգտումը համակել է բոլորին: Կոմբայնավարներ, տրակտորային բրիգադավար Լ. Հակոբյանը, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Գ. Հակոբյանը, Մ. Հակոբյանը, Գ. Մելիքյանը, Ս. Զուռնաչյանը, Ս. Մելիքյանը հնձում են 120 հեկտար աշնանացան ցորենի արտը, 24-ի փոխարեն հեկտարից կալսում և չորանոց ուղարկում 40-45 ցենտներ ռեկորդային բերք:

Բարալեթի կոլտնտեսությունում բերքահավաքի քննությունը հաջող են բռնում կոմբայնավարներ Մ. Խմալիձեն, Հ. Արզումանյանը, Վ. Մուրճիկնելին և Ա. Մամուլյանը, որոնք արդեն 110-ական հեկտար հացահատիկի հունձ են կատարել և հեկտարից միջին հաշվով 30, իսկ առանձին տեղամասերում մինչև 35 ցենտներ ցորենի բերք հավաքել:

Բերքավահաքի առաջավորներից են նաև Կարզախի սովխոզի մեխանիզատորները: Մրցության աջթևայինների թվումն են կոմբայնավարներ Վ. Աբաջյանը, Մ. Կարապետյանը, Ա. Ֆիդանյանը և ուրիշներ: Կարզախում օրական հնձվում և կալսվում է 28-30 հեկտար հացահատիկայինների բերք: Ավելի քան 100 հեկտար աշնանացանի բերքահավաքը կատարվել է անջատ եղանակով: Տնտեսությունը պահեստավորել է 60 տոննա հացահատիկի և 33 տոննա կորնգանի սերմացու:

Դիլիսկայի, Օրջայի, Բուռնաշեթի, Արագվայի կոլտնտեսությունների, Կաջոյի, Զակի սովխոզների և այլ տնտեսությունների մեխանիզատորները, որոնք երկրագործների համագործակցությամբ հավաքում, ժամանակին փոխադրում են բերքը, կալատեղերում չորացնում, մաքրում, տեսակավորում են հացահատիկը, հաջողությամբ առաջ են տանում հացամթերումը:

ՊԱՅՔԱՐԸ ԵՐԱՇՏԻ ԴԵՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Շատ բարձր պետք է գնահատել Կորխի ու Օրջայի կոլտնտեսությունների հողագործների և մեխանիզատորների աշխատանքը: Այդ տնտեսությունների դաշտերի զգալի մասը տուժեց ցրտահարությունից, երաշտից ու կարկտահարությունից: Տեղերում ղեկավարները վճռական միջոցների դիմեցին: Կորխում 60 հեկտար լրիվ տուժած կարտոֆիլի պլանտացիաների յուրաքանչյուր հեկտար

մտցվեց 350 կիլոգրամ ազոտային պարարտանյութ: Կազմակերպվեց դաշտերի ոռոգումը ակոսային և արհեստական անձրևացման եղանակներով: Գործի դրված կոլտնտեսության 5 մղիչ պոմպերը և տնտեսությանը օգնության եկած շրջանային մելիորացիայի և ջրային տնտեսության վարչությունը շարժական ջրհան կայանները հնարավոր դարձրին ջրարբիացնել պլանտացիաները: Այնուհետև կատարվեց մոլախոտերի քաղհան: Այնպես որ, տուժած կարտոֆիլի պլանտացիաները լրիվ վերականգնվեցին: Շարունակվում են ցանքադաշտերի մշակության և ոռոգման աշխատանքները: Դրանց ակտիվորեն են մասնակցում միջնակարգ դպրոցից արտադրություն եկած կոմերիտականներ Ս. Խորշիկյանը, Հ. Իրիցյանը, Սիրուշ և Մանուշակ Ղանդիլյանները, Ս. Անանիկյանը և ուրիշներ:

Ինտենսիվ ոռոգման և լրացուցիչ սնուցման շնորհիվ լրիվ վերականգնվել են նաև Օրջայի կոլտնտեսության 65 հեկտար տուժած կարտոֆիլի ցանքադաշտերը: Այստեղ ևս շարունակվում են պլանտացիաների ջրարբիացման աշխատանքները: Կոլտնտեսության կարտոֆիլագործներն ու մեխանիզատորները ոռոգման համար օգտագործում են փոքր մելիորացիայի (տնտեսությունն ունի արհեստական երկու ջրամբար) հնարավորությունները: Ջրվորների մրցության առաջին շարքում են քայլում Գ. Սարգսյանը, Օ. Համբարյանը, Շ. Նիկողոսյանը, որոնք արժանացել են ՀԱՄԼԿԵՄ Կենտկոմի «Երիտասարդ դվարդիական» կրծքանշանի:

ՎԵՐԱՑՆԵԼ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսուհանդերձ, շրջանի բոլոր տնտեսությունները չէ, որ ապահովված են տեխնիկական միջոցներով ու պահեստամասերով, զգացվում է վառելանյութի, քսանյութի կարիք:

Այսպես, Մաջադիայի կոլտնտեսությունում,պահեստամասերի բացակայության պատճառով, մեքենահավաքականում իր «հանդիսան» է անցկացնում ծղոտամամլիչ մեքենան: Կորխի կոլտնտեսությունում օգոստոսի 24-ին կոմբայնավար Ս. Ափոզյանի Ս-5 կոմբայնի շարժիչը շարքից դուրս գալուց հետո, ագրեգատը դադարեց գործելուց: Մի քանի օր պահանջեց նորը ձեռք բերելու և կոմբայնը կրկին աշխատեցնելու համար:

Անլիվավոր տրակտորներով, պահեստամասերով և հատկապես հակավորման մետաղյա լարերով ու կանեփաթելերով ապահովված չլինելու պատճառով առանձին տնտեսություններում գործի չեն դրվում մամլիչ սարքավորումները, իսկ շատերն էլ աշխատում են պարապուրդներով:

Բեժանոյի կոլտնտեսությունում վառելանյութ չլինելու պատճառով 5 օր շարունակ գործի չդրվեց ավտոտրանսպորտը (7 բեռնատար ավտոմեքենա): Մինչդեռ դաշտերում, գյուղից 15-20 կիլոմետր հեռավորության վրա ավելի քան 700-800 տոննա խոտ մնում էր փոխադրելու: Այդ նույն պատճառով ձգձգվեցին նաև սիլոսի ու սենաժի կանաչ զանգվածի ժամանակին փոխադրումն ու խրամատավորումը:

Շրջանի ոչ բոլոր տնտեսություններն են, որ ապահովված են տիպային պահեստներով, ասֆալտապատ կալերով, էլ չենք խոսում

չորանոցների մասին: Կալերում կուտակված հացահատիկը անձրևից պաշտպանելու համար տնտեսություններից շատերը ձեռք չեն բերել բրեզենտե ծածկոցներ:

Օրջայի առաջավոր կոլտնտեսության կալում ենք: Առաջին հայացքից զգացվում է, որ մարդիկ նեղվում են, չեն կարողանում կուտակված 600 տոննա հացահատիկը զտելուց հետո ժամանակին պահեստավորել, սկսել դրա վաճառքը պետությանը: Բանն այն է, որ այսպես կոչված «տիպային» պահեստը գուրկ է հարմարություններից, կտուրը քանդված է, շիֆեր չլինելու պատճառով ծածկի վերանորոգումը չի սկսվում: Պարկերի պակասն էլ մի կողմից է խանգարում բերքի պահեստավորման, պետության հացահատիկ վաճառելու գործին: Նման վիճակ է նաև շրջանի շատ տնտեսություններում: Մեր այցելած բազմաթիվ տնտեսությունների ղեկավարները իրավամբ տրտնջում էին պարկերի մեծ պակասից:

Շրջանի ղեկավար մարմինները պետք է լրջորեն զբաղվեն տնտեսությունների հոգսերով, կոնկրետ միջոցներ ձեռնարկեն թերությունները արագորեն շտկելու համար:

2 սեպտեմբերի

ՀՆԳԱՄՅԱԿԸ՝ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ

Ախալքալաքի շրջանի Ղազոյի կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայի անասնապահների կոլեկտիվում նոր աշխատող չէ կթվորուհի Խանում Սահակյանը: Իր 22-ամյա աշխատանքի ընթացքում շատ դժվարություններ է տեսել ու հաղթահարել նա, շատ բան սովորել ավագ ու փորձված ընկերներից և ասա այդ ամենը ինքն է սովորեցրել նորեկ կթվորուհիներին:

Խանումը դարձել է իր գործի իսկական վարպետը: Տարիներ շարունակ իր խնամքին հանձնված կովերի յուրաքանչյուրից մեկական հորթ, ավելի քան 2.300-3.000 կիլոգրամ կաթ ստանալը Սահակյանի սովորական ցուցանիշներն են:

Վերջերս անասնապահների կոլեկտիվը ամփոփեց ընթացիկ տարվա անցած ինն ամիսների արդյունքները և պարզվեց, որ Խանումը հնգամյա անձնական առաջադրանքը իրացրել է չորս տարում, իր խնամած կովերի կաթնատվությունը, տարեկան պլանի 2.780-ի դիմաց, հասցրել 3.200 կիլոգրամի: Այն մինչև տարեվերջ կհասնի 3.600 կիլոգրամի:

Այս բոլորի արդյունքն է, որ շրջանի «3.500-ական» կթվորուհիների ակումբի անդամ Խանում Սահակյանը բարի անուն է վաստակել ոչ միայն գյուղում, այլև շրջանում:

Լավ աշխատանքի համար կթվորուհի Խ. Սահակյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, մեդալներով և սոցմրցության հաղթողի կրծքանշաններով:

11 հոկտեմբերի

Ասպինձայի շրջանի Դամալայի կոլտնտեսության կուսկոմիտեն քաղաքական-դաստիարակչական ու կազմակերպական աշխատանքն ուղղել է այն բանին, որ տնտեսությունը կատարի իր առջև դրված խնդիրները: Դրա շնորհիվ կոլտնտեսությունը հաջողությամբ է իրացրել անասնապլխաքանակի ավելացման, մսի, բրդի, պտուղբանջարեղենի պետական վաճառքի հնգամյակի առաջադրանքները: Կոլտնտեսականներն ու մեխանիզատորները ագրոտեխնիկական սահմանված ժամկետներում կատարեցին այս տարվա աշնանացանը, առաջ են տանում ցրտահերկն ու աշնանային մյուս աշխատանքները:

Կոլտնտեսության կուսկազմակերպության հաշվետու-ընտրական ժողովում նշելով դրականը, զեկուցողը կուսկոմիտեի քարտուղար Ս. Բալոյանը, ինչպես նաև ելույթ ունեցող կոմունիստները քննադատության և ինքնաքննադատության մթնոլորտում բացահայտեցին կոլտնտեսային արտադրության ղեկավարման և կուսկոմիտեի գործունեության մեջ տեղ գտած թերությունները ու բացերը: Նշվեց, որ կոլտնտեսությունը թերակատարել է գյուղատնտեսական առանձին կուլտուրաների բերքատվության, անասնապահական որոշ մթերքների արտադրության այս տարվա առաջադրանքները:

-Դաշտավարական ոչ մի բրիգադ չի իրացրել հացահատիկային կուլտուրաների բերքատվության պլանը, ցածր բերք է սպասվում կարտոֆիլի դաշտերից,- ասաց զեկուցողը: Բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ պայքար չեն մղում բրիգադային կուսխմբերը, ցածր է կոմունիստների ավանգարդային դերը:

Զեկուցողը խոստովանեց, որ այդ ուղղությամբ կուսկազմակերպությունը թույլ է աշխատել, չի ղեկավարել բրիգադային կուսխմբերի գործունեությունը: Թեև կան օբյեկտիվ պատճառներ (տևական երաշտ, կարկտահարություն), բայց ցածր բերքատվության հիմնական պատճառը պետք է բացատրել աշխատանքային թույլ կարգապահությամբ: Բավական է ասել, որ աշխատունակ 218 կոլտնտեսական չի կատարել մարդ-օրի պարտադիր մինիմումը, ըստ որում 90-ը բոլորովին չի մասնակցել հանրային աշխատանքներին: Դրանց թվում, ցավոք, կան նաև կոմունիստներ, սակայն կուսկազմակերպությունն ու կոլտնտավարչությունն այդպիսիների նկատմամբ ներողամիտ վերաբերմունք են ցուցաբերել:

Կոմունիստներին առանձնապես հուզում էր կարտոֆիլագործության ետ մնալու հարցը: Գյուղատնտես Մ. Հակոբյանը և դաշտավարական բրիգադի ղեկավար Ռ. Թումասյանն իրենց ելույթներում նշեցին, որ պլանատցիաների ցածր բերքատվության պատճառները շատ են, մասնավորապես այն, որ գրեթե ամեն տարի ցանքը կատարվում է վատ մշակված հողատարածություններում, խախտվում են մշակության ագրոկանոնները, անբավարար են կատարվում ոռոգումները:

- Անասնապահության ցուցանիշներն էլ գոհացուցիչ չեն,- ասաց կոլտնտեսության գոոտեխնիկ, կոմունիստ Ռ. Մարկոսյանը:- Հոկտեմբերի 1-ի տվյալներով, նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ, ֆուրաժային կովի կախվածությունը նվազել է 151 կիլոգրամով, կաթի համախառն արտադրությունը 315 ցենտներով: Դա շատ պատճառներ ունի, բայց հիմնականը զոոկանոնների խախտումն է, կովերի խնամքի ու կերակրման անբավարար կազմակերպումը: Նախորդում դեռևս մեծ տոկոս են կազմում ստերջ անասունները: Անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում նաև անասնապահական կադրերի, մասնավորապես կոմունիստների տեղաբաշխմանը: Անհանդուրժելի է, որ 71 կոմունիստից անասնապահության մեջ աշխատում է ընդամենը 5-ը:

Կոլտնտեսության նախագահ Ա. Վարդանյանը, խոսելով կոլտնտեսության և կուսակոմիտեի աշխատանքներում տեղ գտած թերությունների, դեռևս չօտագործված ռեզերվների մասին, միաժամանակ արդարացիորեն քննադատեց Վրացդյուղտեխսպեկտոմի շրջանային միավորմանն այն բանի համար, որ վերջինս թերանում է կոլտնտեսության հետ ունեցած պայմանագրային պարտավորությունների կատարման մեջ: Անցած տարի միավորման մեխանիզատորները ձախողեցին սառնավարը, անավարտ թողեցին յայլայում յուրացված 20 հեկտար նոր հողերի մշակության աշխատանքները:

Ժողովում լուրջ խոսակցություն տեղի ունեցավ ներկուսակցական, կոմերիտական, մյուս հասարակական կազմակերպությունների աշխատանքի մասին: Կոմունիստ Ա. Քերոբյանը նշեց, որ դեռևս լուրջ ուշադրություն չի նվիրվում կուսժողովների նախապատրաստությանն ու անցկացմանը: Առանձին կոմունիստներ անհարգելի պատճառով բացակայում են ժողովներից, ոմանք էլ ակտիվորեն չեն մասնակցում հարցերի քննարկմանը:

Ժողովում խոսվեց նաև գյուղի բարեկարգման մասին: Նշվեց, որ թեև աստիճանաբար փոխվում է Դամալայի դեմքը, բայց դեռևս շատ անելիքներ կան: Գովելի է, որ գյուղում սկսվեց միջնակարգ դպրոցի տիպային շենքի կառուցումը, սակայն երրորդ տարին է, ինչ շինարարական աշխատանքները դադարել են: Այս հարցի գործնական լուծումը կախված է Վրացական ՍՍՀ լուսավորության և գյուղական շինարարության մինիստրություններից, սակայն, չգիտես ինչու, վերջիններս գործնական քայլերի չեն դիմում:

Ժողովը, կոմունիստների քննադատական դիտողություններին հիման վրա, կոնկրետ միջոցառումներ մշակեց կուսակազմակերպության աշխատանքը բարելավելու համար:

4 նոյեմբերի

ԱՌԱՋԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐԸ

[Վարդազար Սևիկյան]

Վարդազար Սևիկյանը ծնվել, հասակ է առել Ախալքալաքի շրջանի Արագվա գյուղում: Դպրոցն ավարտել է ու ընկերացել տրակտորի ղեկին, սովորել, տքնել, հմտացել իր գործում, կատարյալ տիրապետելով կոմբայնավարի, էքսկավատորավարի բարդ մասնագիտություններին:

Արդեն 13 տարի է, ինչ Վարդազարն աշխատում է Վրացգյուղտեխսպեցկոմի Ախալքալաքի շրջանային բաժանմունքում: Փորձված էքսկավատորավարն ակտիվորեն է մասնակցում շրջանի տնտեսություններում բաժանմունքի մելիորատիվ ջոկատի կատարած կուլտուր-տեխնիկական աշխատանքներին, դաշտերի պարարտացմանը, ջրանցքների, գյուղատնտեսական այլ օբյեկտների հիմքեր է փորում, ոռոգման արհեստական ջրամբարներ ստեղծում: Նա բազմիցս սոցմրցության մեջ է մտել իր աշխատանքային ընկերների հետ և միշտ հաղթող ճանաչվել: Կոմունիստ մեխանիզատորը տասներորդ հնգամյակի իր անձնական առաջադրանքը կատարեց չորս և կես տարում:

Վ. Սևիկյանը բազմաթիվ գովասանագրերի, պատվոգրերի, սոցմրցության հաղթողի կրծքանշանների է արժանացել: Ահա քանի տարի է, ինչ նրա լուսանկարը չի իջնում շրջանի առաջավոր մարդկանց պատվո տախտակից:

21 ապրիլի

ՆՐԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ

[Գոհարիկ և Նորայր Պապոյաններ]

Գոհարիկ և Նորայր Պապոյանները ծնվել են Ախալքալաքի շրջանի Խանդո գյուղում, սովորել Ախալքալաքի Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցում: Ուսուցիչները սիրում էին այդ համեստ երազկոտ աղջկան ու տղային, հավատում նրանց ապագային:

Գերազանց գնահատականներով ավարտելով դպրոցը, շատ-շատերի նման նրանք էլ, առանց երկմտելու, ընտրեցին իրենց կյանքի ուղին: Նրանց երազանքի ու ցանկալի ապագայի «կամուրջը» Երևանի բժշկական ինստիտուտն էր: Գոհարիկը երկու տարի շուտ էր ավարտել միջնակարգը: Երկու տարի շարունակ բուհ ընդունվելու նրա փորձը հաջողությամբ չպսակվեց: Սակայն Գոհարիկը ամեն ինչ «կորած» չհամարեց, տնքնաջանորեն պարապեց: Շատ դժվարություններ հաղթահարելով, քույր ու եղբայր բարձրացան բժշկական

ինստիտուտի աստիճաններով, դարձան ինստիտուտի բուժֆակուլտետի ուսանողներ:

Դա 1978 թվականին էր: Երրորդ տարին է, ինչ Գոհարիկն ու Նորայրը միևնույն կուրսում կողք-կողքի նստած, համբերատար տիրապետում են բժշկի մասնագիտությանը: Ինստիտուտում կյանքն ու առօրյան իրենց ոլորտն են առել հետաքրքրասեր, կենսախինդ, խելամիտ երիտասարդներին: Իրենց բարեխղճությամբ ու դիտելիքներով, նախաձեռնությամբ ու հասարակական ակտիվ աշխատանքով նրանք ֆակուլտետում հարգված ու սիրված ուսանողներ են: Գոհարիկը կուրսի արհմիության տեղկոմի նախագահն ու ԼԿԵՄ կազմակերպության կոմիտեի անդամ է:

Կանցնի ուսումնական երեք տարի ևս Գոհարիկ և Նորայր Պապոյանների երազանքները կդառնան իրականություն, և նրանք բժշկի մասնագիտությամբ, դիպլոմները ձեռքներին, կվերադառնան հայրենի Ջավախք:

9 հունիսի

ՊՈԵԶԻԱՅԻ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Գրչակիցներին ուղղված կտակ հնչեցին հայ ժողովրդի մեծ կավակ Վահան Տերյանի բանաստեղծությունները ինտերնացիոնալ բարեկամության այն երեկոյին, որ անցած շաբաթ տեղի ունեցավ Բոդդանովկայի շրջանում: Վսեմ հայրենասիրությամբ, ժողովրդի հանդեպ իր պարտքի խոր գիտակցությամբ տոգորված բանաստեղծի այդ ոգեշունչ տողերը դարձան պոեզիայի ավանդական տերյանական օրերի լեյտմոտիվը: Այդ օրերը ամեն տարի անցկացվում են Գանձա գյուղում, ուր ծնվել է նոր կյանքի ոգեշունչ երգիչը: Երեկոյին բանաստեղծությունները, իրեն հատուկ վարպետությամբ, վրացերեն և հայերեն կարդաց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Բաբկեն Ներսիսյանը:

Խորապես նշանակալից է, որ հենց այստեղ, Անդրկովկասյան երկու հանրապետությունների սահմանների կցվանքում, Վահան Տերյանի հողում հավաքվում են վրաց ու հայ գրողները, որպեսզի կրկին ու կրկին, ամբողջ ձայնով մեծ սիրո ու խոր հարգանքի զգացումները արտահայտեն բանաստեղծ-տրիբունի նկատմամբ, որը անդնահատելի ավանդ է ներդրել հայերի ու վրացիների բարիդրացիական փոխհարաբերությունների ամրապնդման գործում:

Վրաց ժողովուրդը ակնածանքով է պահպանում Վահան Տերյանի հիշատակը, որն իր ամբողջ կյանքը, իր սրտի ողջ ավյունը նվիրաբերեց աշխատավորների շահերի համար քաջարի պայքարին, իր հզոր տաղանդը ի սպաս դրեց հայրենիքին: Բանաստեղծն առաջինը իր ժողովրդին ծանոթացրեց մեծ Լենինի բոցաշունչ խոսքին, դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հայերեն թարգմանեց հանճարեղ առաջնորդի աշխատությունները:

Վահան Տերյանը որդիական սեր էր տածում Վրաստանի, նրա հինավուրց գրականության ու արվեստի նկատմամբ: Նա թարգ-

մանել է «Վագրենավորի» նախերգանքը: Տակավին Մոսկվայի արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ուսանող Վահան Տերյանը Ակակի Ծերեթելու մահվան կապակցությամբ գրեց հոդված, ուր ամբողջ հայ ժողովրդի երախտագիտությունն արտահայտեց վրաց մեծ բանաստեղծի նկատմամբ:

Երեկոյին Բոգդանովկայի շրջանի աշխատավորներին, ամբողջ վրաց ժողովրդին սրտաբուխ ողջույն հաղորդեց Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Արամ Գրիգորյանը: Նա մասնավորապես նշեց, որ պոեզիայի տերյանական օրերում վառ կերպով մարմնավորվում է մեր ժողովուրդների բազմադարյան եղբայրությունը:

Պոեզիայի տերյանական օրերն ավարտվեցին հուլիսի 19-ին, Գանձա գյուղում, որին Տերյանը նվիրել է հիանալի տողեր: Հսկայական բացատում հավաքվել էր ավելի քան 15 հազար մարդ՝ Բոգդանովկայի, Ախալցիխեի, Ախալքալաքի շրջանների աշխատավորներ, Հայաստանի - Ստեփանավանի, Ամասիայի, Ղուկասյանի շրջանների ներկայացուցիչներ, Թբիլիսիից, Երևանից և Լենինականից ժամանած հյուրեր:

Միտինգում ելույթ ունեցան կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար Վ. Բոչոյանը, «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսի գլխավոր խմբագիր Կ. Սիմոնյանը, վրաց և հայ գրողներ, տեղական մտավորականության ներկայացուցիչներ: Ունկնդիրները ջերմ ծափահարություններով ընդունեցին բանաստեղծ Զ. Մեդուլաշվիլուն, որը հավաքվածներին ծանոթացրեց Վահան Տերյանի բանաստեղծությունների թարգմանություններին և արձակագիր Բ. Սեյրանյանին, որն ընթերցեց հայ մեծ բանաստեղծին նվիրած իր նովելը: Տերյանի, Վրաստանի ու Հայաստանի ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունները: Դրանք գովերգում էին ժողովուրդների բարեկամությունը, նրանց եղբայրությունը:

Պոեզիայի տոնին մասնակցեցին Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ն. Ճնթանավան և Վրաստանի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ն. Զանբերիձեն:

23 հուլիսի

ՆԱԽԱԳԱՀԸ [Եղիշե Մուրադյան]

Հիսուներեք տարեկան է Ախալքալաքի շրջանի բարձրալեռ Ղադո գյուղի կոլտնտեսության նախագահ Եղիշե Աշոտի Մուրադյանը: Նայելով նրա դեմքին, անմիջապես կռահում ես, որ կյանքն անցել է աշխատանքի բովում: Շարքային, սովետական բանակի ռազմիկ, հետո կրկին շարքային կոլտնտեսական, կոլտնտեսության հաշվետար, իսկ 1964 թվականից՝ կոլտնտվարչության նախագահ. ահա նրա կյանքի կարևորագույն փուլերը: Անցյալում տնտեսապես թույլ կոլտնտեսությունը արտադրության հմուտ կազմակերպչի ղե-

կավարությամբ ամրապնդվել է, խոշորացել, դառնալով շրջանի և հանրապետության առաջավոր բազմաճյուղ տնտեսություններից մեկը:

Ինչքան էլ խուսափենք թվերից ու փաստերից, միևնույն է, դրանց միջոցով են արտահայտվում մարդկանց աշխատանքը, դրա արդյունքները: Որքան էլ տարին անբարենպաստ լինի, Ղազոյի կոլտնտեսականները հեկտարից ստանում են 30-35 ցենտներ հացահատիկ, 180-200 ցենտներ կարտոֆիլ, ֆուրաժային կովից՝ 3 հազար կիլոգրամից ավելի կաթ, մի խոսքով գերակատարում գյուղատնտեսական բոլոր մթերքների արտադրության և մթերումների պլանպարտավորությունները: Տասներորդ հնգամյակի առաջադրանքները տնտեսությունն իրացրել է 4 և կես տարում: Իններորդ հնգամյակի համեմատությամբ, կոլտնտեսության դրամական եկամուտն ավելացել է ավելի քան 1 միլիոն ռուբլով, զուտ եկամուտը կրկնապատկվել է:

Կոլտնտվարչությունը և նրա նախագահ Ե. Մուրադյանը, տնտեսության վերելքի հետ միասին, առանձնահատուկ ուշադրություն են նվիրում աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմանը, հանրային նշանակության օբյեկտների կառուցմանը: Վերջին մի քանի տարում կառուցվել և շահագործման են հանձնվել բաղնիքը, բուժտեղամասը, խանութը, էլեկտրաաղացը, հացահատիկի, կարտոֆիլի պահեստները և այլ օբյեկտներ: Բազմաթիվ կոլտնտեսականներ կառուցել են նոր, հարմարավետ բնակարաններ:

- Բայց ավելի ունևոր, ավելի երջանիկ կլինի գյուղացիների վաղվա օրը,- նկատում է նախագահը:- Տասնմեկերորդ հնգամյակում մեր տնտեսությունը հսկայական առաջընթաց կունենա:

Եվ նա ոգևորված պատմում է, որ իրենց կոլտնտեսականները ծրագրել են տասնմեկերորդ հնգամյակը կատարել չորս տարում, իսկ նրա անդրանիկ տարում հացահատիկի հեկտարի բերքատվությունը հասցնել 45, կարտոֆիլինը՝ 280 ցենտներ, յուրաքանչյուր կովից կթել 3.250 կիլոգրամ կաթ, մեկ ոչխարից խուզել 3,1 կիլոգրամ բուրդ, 100 մայր անասունից ստանալ և անկորուստ պահպանել նույնքան հորթ, 95 դառ, պետությանը վաճառել 35 տոննա հացահատիկ, 500 տոննա կարտոֆիլ, 500 ցենտներ միս, 2.400 ցենտներ կաթ, 25 ցենտներ բուրդ:

Ղազոյի կոլտնտեսականների տարիների փորձով համոզվել են, որ իրենց հաջողությունների մեջ զգալի ավանդ ունի կոլտնտեսության հմուտ նախագահը: Պատահական չէ, որ Եղիշե Մուրադյանը մշտապես զգում է համագյուղացիների սերն ու հարգանքը: Սակայն նա միաժամանակ նկատում է, որ առանց կուսակցական կազմակերպության, գյուղական սովետի և, իհարկե, առանց ժողովրդի օգնության կոլտնտեսության վարչությունը միայնակ ոչինչ անել չէր կարողանա:

1970 թվականին Մուրադյանի հարազատ գյուղի, շրջանի և հարևան շրջանների աշխատավորները նրան ընտրեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ: Երկրի պետական իշխանության բարձրա-

գույն մարմնում նա ազնվորեն ծառայեց ժողովրդին, լիովին արդարացնելով ընտրողների վստահությունը:

Կուսակցության շրջկոմի անդամ, շրջանային սովետի դեպուտատ (առաջներում գործկոմի անդամ) Եղիշե Մուրադյանը հպարտությամբ կրում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանը, բազմաթիվ մեդալներ և սոցմրցության հաղթողի կրծքանշաններ:

Վերջերս էլ հացահատիկի, կարտոֆիլի և հողագործության ու անասնապահության մյուս մթերքների արտադրությունը և պետությանը դրանց վաճառքը ավելացնելու, տասներորդ հնգամյակի առաջադրանքների և պարտավորությունների կատարման գործում ձեռք բերած հաջողությունների համար ՍՍՀՄ Գերագույն սովետի հրամանագրով Եղիշե Մուրադյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով:

6 օգոստոսի

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

[Իշխան Նորվարդյան]

- Շատ համեստ է,- ասում են համագյուղացիներն ու ճանաչողները:

- Բարի է, անչափ բարի,- ավելացնում են աշխատանքային ընկերները,- աշխատասեր, նվիրված...

Ահա այն արժանիքները, որոնցով օժտված է Ախալքալաքի շրջանի Բուռնաշենի Կարա Ցետկինի անվան կոլտնտեսության կուսակազմակերպության քարտուղար, ոչխարաբուծական միացյալ ֆերմայի վարիչ Իշխան Նորվարդյանը, որին այնքան հարգում ու սիրում են թե գյուղում, թե շրջանում:

Ի. Նորվարդյանը բոլորել է կյանքի կես դարը: Նա ավարտել է գյուղական դպրոցը, ծառայել սովետական բանակում, եղել հողագործ, անասնապահ: 1968 թվականից ղեկավարում է ֆերման, իսկ 1970 թվականից կոլտնտեսային կուսակազմակերպությունը:

Բուռնաշենի բարձրալեռ կոլտնտեսությունը իր ձեռք բերած նվաճումներով հայտնի է ոչ միայն հանրապետությունում:

Ինն ներորդ և տասներորդ հնգամյակների տարիներին կոլտնտեսությունը պարգևատրվել է միութենական վեց, հանրապետական երեք և շրջանային բազմաթիվ փոխանցիկ դրոշներով, նրա անունը գրանցվել է ՍՍՀՄ ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսի համամիութենական պատվո տախտակին:

Այս հաջողությունները ձեռք են բերվել այն բանի շնորհիվ, որ կոլտնտվարչությունն ու սկզբնական կուսակազմակերպությունը բոլոր կոլտնտեսականների, կոմունիստների ուժերն ուղղել են գյուղատնտեսության շեշտակի վերելքի վերաբերյալ կուսակցության ու կառավարության որոշումների կատարմանը:

Կուսակազմակերպության քարտուղար Ի. Նորվարդյանը կուսաշխատանքի պրակտիկայում պրպտում, գտնում է նորը, ընդօրինակում լավագույնին. ամեն կերպ բարձրացնում է կուսբյուրոյի անդամների, բոլոր կոմունիստների ակտիվությունը, զարգացնում նախաձեռնությունը, նրանց ուժերը նպատակամղում տնտեսության առջև ծառացած խնդիրների հաջող կատարմանը: Նա հոգ է տանում այն մասին, որ ժողովներում և բյուրոյի նիստերում քննարկվող հարցերը լինեն բազմաբնույթ, նպաստեն կոլտնտեսության էկոնոմիկայի բարձրացմանը, կուսակցական-քաղաքական ու կազմակերպչական աշխատանքի բարելավմանը:

Կուսակազմակերպության 50 անդամներից ու անդամության թեկնածուներից 45-ը աշխատում են արտադրության վճռական տեղամասերում: Նրանք բոլորն էլ ունեն հասարակական հանձնարարություններ, ակտիվորեն մասնակցում են կուսակցական կյանքին: Իրենց լավագույն աշխատանքով կոմունիստի կոչումը բարձր են պահում կոլտնտեսության նախագահ Մերուժան Բոչոյանը, կաթնապրանաքային ֆերմայի վարիչ, «Պատվո նշանի» շքանշանակիր Ա. Բոչոյանը, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, կթիչուհի Ս. Բոչոյանը, N 2 դաշտավարական բրիգադի բրիգադավար, Լենինի շքանշանակիր Վ. Կուրղինյանը, կարտոֆիլագործ, Լենինի շքանշանակիր Ա. Մղդեսյանը, մեխանիզատորներ Մ. Ավագյանը, Ա. Նորվարդյանը, Մ. Հարությունյանը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը իր աշխատանքի տեղամասում նորի, առաջավորի նախաձեռնողն է:

Կուսակազմակերպության քարտուղար Իշխան Նորվարդյանի հայրենանվեր աշխատանքը աննկատ չի մնացել: Նա ընտրվել է գյուղական սովետի դեպուտատ, արժանացել է սոցմրցության հաղթողի կրծքանշանի և այլ պարգևների:

ՍՄԿԿ XXVI համագումարի, Վրաստանի կոմկուսի XXVI համագումարի որոշումներն անշեղորեն կենսագործելու, տնտեսության շահութաբերությունն ավելի բարձրացնելու նպատակով Բուենաշենի կոլտնտեսությունն ու սեզոնական կուսակազմակերպությունը իրականացնում են կենսականորեն անհրաժեշտ մի շարք գործնական միջոցառումներ: Ծրագրվել է տասնմեկերորդ հնգամյակը կատարել չորս տարում, նրա անդրանիկ տարում հեկտարից ստանալ 50 ցենտներ հացահատիկ, 270 ցենտներ կարտոֆիլ, յուրաքանչյուր կովի կաթնատվությունը հասցնել 3.700 կիլոգրամի, մեկ ոչխարից ստանալ 3,5 կիլոգրամ բուրդ, նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական մթերքների մթերումներն ավելացնել 10-12 տոկոսով:

Կոմունիստների, բոլոր կոլտնտեսականների նշանաբանն է սահմանված ընտրները նվաճել նոյեմբերի 7-ին, մեծ Հոկտեմբերի 64-ամյա տարեդարձի օրը:

3 սեպտեմբերի

ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՈՔԻ ՉԻ ԶԻՋՈՒՄ

[Աննա Թարզյան]

Գյուղատնտեսության աշխատողների համամիութենական տոնը արժանավայել նվաճումներով է դիմավորում Բոգդանովկայի շրջանի Ուչմանայի կոլտնտեսության կաթնապրանքային ֆերման (վարիչ՝ Աննա Թարզյան): Անցած ինն ամիսներին ֆերմայի կոլեկտիվը ֆուրաժային կովից տարեկան պլանի 2.500-ի փոխարեն ապահովել է 2.060 կիլոգրամ կաթի ստացումը: Մինչև տարեվերջ տարեկան առաջադրանքն զգալիորեն կգերակատարվի:

Ֆերմայի բոլոր անասնապահներն աշխատում են խղճի թելադրանքով, ջանք չեն խնայում նյութական բարիքների ստեղծման համար: Համընդհանուր գործում իր խոշոր ներդրումն է անում կթվորուհի, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, Հոկտեմբերյան հեղափոխության և «Պատվո նշան» շքանշանների ասպետ Աննա Թարզյանը: Նա «Արշալույս» շրջանային թերթին առընթեր 3.500-ական կթվորուհիների ակումբի հիմնադիրն ու նրա մշտական ղեկավարն է:

Անվանի կթվորուհին առաջ է անցել ոչ միայն գործընկերուհիներից, այլև իր մրցակիցը չունի շրջանում: Հոկտեմբերի մեկի տվյալներով, Աննան իր խնամքին հանձնված 12 կովերից ստացել և պահպանում է նույնքան հորթ, տարեկան առաջադրանքի 2.750-ի դիմաց ամեն մի կովից արդեն կթել է 2.860, իսկ առանձին դեպքերում՝ 3.100-3.200 կիլոգրամ կաթ: Նրա հանձնած 3.240 ցենտներ համախառն կաթի 92 տոկոսն առաջին կարգի է, յուղայնությունը բազիսայինից զգալիորեն բարձր:

Աննա Թարզյանի խոսքը մեկն է՝ շարունակել պայքարը և նվաճել հնգամյակի մեկնարկային տարվա գլխավոր բնագիծը՝ ամեն մի կովից ստանալ 3.560 կիլոգրամ կաթ:

10 հոկտեմբերի

ՍՈՏԿԱՆԳՆԵԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Աշնան գյուղատնտեսական աշխատանքների վճռական օրերն են: Զակի անասնապահական սովխոզի (Ախալքալաքի շրջան) աշխատավորները հավաքում են հացահատիկայինների վերջին հեկտարների բերքը, շարունակում կերերի կուտակման աշխատանքները, ձեռնամուխ են եղել կարտոֆիլի բերքահավաքին: Նրանք համակված են տասնմեկերորդ հնգամյակի անդրանիկ տարին արտադրական բարձր ցուցանիշներով եզրափակելու ձգտումով: Մասնավորապես արժանի ավանդ են ներդնում տնտեսության Գոմանի ագրոբաժանմունքի բանվորները: Ընթացիկ տարում նրանք առաջադրանքի 22-ի դիմաց հեկտարից հավաքել են 35 ցենտներ հացահատիկ, պահեստավորում են 120-125 ցենտներ կարտոֆիլ: Բարձր բերք են

խոստանում կերի արմատապտուղների պլանտացիաները: Ագրոարժանմունքի երկրագործները այժմվանից պնում են եկող տարվա բարձր բերքի հիմքը: Առանձնացվել և տեսակավորվել է գարնանացանի սերմացուն, ավարտին են մոտենում աշնանացանի և ստանավարի աշխատանքները: Կուտակվել է այնքան կեր, որ լրիվ կբավարարի հանրային հոտի պահանջը մսուրային շրջանում:

Օրերս հաշվետու-ընտրական կուսժողովին տրված զեկուցման մեջ ագրոարժանմունքի կուսբյուրոյի քարտուղար Պ. Մարտիրոսյանը և մտքերի փոխանակությանը մասնակցած կոմունիստները նշեցին, որ ձեռք բերված հաջողությունները գյուղատնտեսության վերելքն ապահովելու վերաբերյալ կուսակցության և կառավարության որոշումների կենսագործման արդյունք են:

Սակայն, ինչպես ցույց տվեց ժողովը, կուսբյուրոն և ագրոարժանմունքի ղեկավարությունը արտադրության ոչ բոլոր ճյուղերով են լրջորեն զբաղվել: Անասնապահական մթերքների, կարտոֆիլի, կերային կուլտուրաների արտադրության մակարդակը դեռևս ցածր է, քիչ բան է արվում գյուղատնտեսության կուլտուրան բարձրացնելու համար: Սեպտեմբերի տվյալներով, ֆուրաժային կովի կթնատվությունը. նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, նվազել է 286 կիլոգրամով: Յուրաքանչյուր 100 մայր անասունից ստացվել է 80 հորթ և 78 գառ: Զանազան պատճառներով կորուստի է մատնվել և հարկադիր մորթվել 201 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուն:

Այս բոլորը, ինչպես նշվեց ժողովում, հետևանք է այն բանի, որ կուսակազմակերպությունը հեռու է կանգնած արտադրությունից, գործնական քայլեր չի արել կոմունիստներին արտադրության վճռական ճյուղերում մասնավորապես, անասնապահական բրիգադներում տեղաբաշխելու, այդ օղակներում կուսակցական ազդեցությունն ապահովելու համար:

Կովարուծական և ոչխարաբուծական բրիգադների ղեկավարներ Ս. Հակոբյանը, Գ. Մարտիրոսյանը, հովիվ Բ. Բանդիկյանը հուզմունքով նշեցին, որ տնտեսությունը կարող էր մեծ եկամուտներ ստանալ անասնաբուծությունից, եթե ինչպես հարկն է լուծվեին բոլոր հարցերը, որոնք առնչվում են այդ ճյուղի զարգացման հետ: Բանն այն է, որ անասնապահական բրիգադները ապահովված չեն տիպային շենքերով, հները չեն նորոգվում, կտուրներից կաթող անձրևաջրերը և շենքերի միջանցուկ քամիները բացասաբար են ազդում անասունների մթերատվության վրա, նրանց անկումների պատճառ դառնում: Օրինական հարց է առաջանում՝ հապա ինչո՞ւ անասնապահական շենքեր կառուցելու, հները վերանորոգելու մասին ահազանգումները արձագանք չեն գտնում ինչպես շրջանային ղեկավար մարմինների, այնպես էլ հանրապետության գյուղմինիստրության կողմից:

- Կարտոֆիլագործությունը դաշտավարության առաջատար և եկամտաբեր ճյուղերից է,- ասաց իր ելույթում կենսաթոշակառու Գ. Պետրոսյանը:- Մենք կարող ենք հեկտարից 160-170 ցենտներ բերք ստանալ, եթե պլանտացիաները լրիվ ջրարբիացվեն: Բազմիցս

խոսվել է այդ մասին, ընդունվել են որոշումներ ջրամբար կառուցելու մասին, սակայն դրանք մնացել են թղթի վրա: Սովխոզի դիրեկցիան, միջկոլտնտեսային շինմիավորումը, կուսակազմակերպությունը պետք է կտրուկ միջոցների դիմեն ջրամբարը կառուցելու համար:

Ժողովում լուրջ խոսակցություն տեղի ունեցավ աշխատանքի կազմակերպման և կարգապահության ամրապնդման վերաբերյալ: Զեկուցողը, սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Մ. Հովհաննիսյանը և սովխոզի դիրեկտոր Մ. Անախասյանը նշեցին, որ ագրոբաժանմունքի 200 բանվորներ, այդ թվում նաև կոմունիստներ Ս. Հարությունյանը, Ա. Բանդիկյանը, Ա. Սողոմոնյանը, Վ. Աղաբալյանը և ուրիշներ, գործի ամենաթեժ օրերին լքում են աշխատանքը, մեկնում շրջանից դուրս, ընկնում այսպես կոչված «երկար» ռուբլու ետևից:

Ժողովում քննադատեցին կուսբյուրոյին այն բանի համար, որ անբավարար է ղեկավարում կոմերիտկազմակերպությունը, հոգ չի տանում երիտասարդության քաղաքական և աշխատանքային դաստիարակության մասին, կոմերիտական կազմակերպության դեմքը գրեթե չի երևում: Շատ երիտասարդներ չեն աշխատում արտադրության մեջ, ավելին, առանձին երիտասարդներ հակահասարակական արարքներ են թույլ տալիս, զբաղվում են թղթախաղով:

Ինչպես ցույց տվեց ժողովը, կուսբյուրոն լրջորեն չի զբաղվել ընդունած որոշումների կատարման, կուսակցության շարքերի համալրման հարցերով:

– Մի թե պարզ չէ,- ասաց իր ելույթում Ռ. Համբարյանը,- որ երիտասարդության հետ լավ աշխատելու դեպքում նրանցից լավագույններին կարելի էր ընդունել կուսակցության շարքերը:

Ժողովում խոսակցություն ծավալվեց գյուղի բարեկարգման, կուլտուրա-կենցաղային հարցերի շուրջը: Նշվեց, որ թեև այդ ուղղությամբ որոշ աշխատանք կատարվել է, սակայն այն բավարար համարել չի կարելի: Գյուղն ապահովված չէ խմելու ջրով, փոստի բաժանմունքը, երկու դրադարանները տեղավորված են մասնավոր շենքերում, չկան կենցաղսպասարկման օբյեկտներ:

Կոմունիստների քննադատական դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ժողովն ընդունեց կոնկրետ միջոցառումներ: Նորընտիր կուսբյուրոյից պահանջվեց ուժեղացնել կուսակցական-կազմակերպական և քաղաքական աշխատանքը, հետևողական պայքար ծավալել գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման բնագավառում ձեռք բերած ցուցանիշները էլ ավելի բարձրացնելու, եղած ռեզերվները լիովին օգտագործելու համար:

17 հոկտեմբերի

Ախալքալաքի շրջկենտրոնի Դ. Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցի արհկազմակերպության հաշվետու-ընտրական ժողովը հանրագումարեց տեղկոմի կատարած մեկ տարվա աշխատանքը:

Զեկուցողը՝ տեղկոմի նախագահ Վ. Աբոյանը, և ելույթ ունեցող ընկերները (դպրոցի դիրեկտոր Կ. Կարախանյան, ուսմասվար Վ. Հակոբյան, Տ. Քոսյան, Ռ. Օմփոսյան և ուրիշներ) նշեցին, որ այս կրթական օջախում խելացի և արդյունավետ է օգտագործվում կրթության և դաստիարակության գործի միասնության նկատմամբ կուսակցության ու կառավարության պահանջը: Ուրախալի է, որ դպրոցի դիրեկցիան, կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները կոորդինացնում են իրենց աշխատանքը, առաջնորդվելով «Սովորեցնելով դաստիարակել, դաստիարակելով սովորեցնել» նշանաբանով:

Արհկազմակերպության տեղկոմը մշտապես օգնել է դպրոցի ղեկավարությանը ուսման որակի բարձրացման, կարգապահության ամրապնդման, սովորողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների ուժեղացման գործում: Արհկազմակերպությունը ուշադրություն չի վրիպել ուսուցիչների վերատրավորման հարցը: Մանկավարժներից շատերը մասնակցում են ուսուցիչների որակավորման դասընթացներին, սիստեմատիկաբար զբաղվում ինքնազարգացմամբ, ուսումնասիրում են իրենց գործընկերների առաջավոր փորձը, հաճախակի կազմակերպում են բաց դասեր, հանդես գալիս զեկուցումներով:

Տեղկոմի նախաձեռնությամբ արտադրական խորհրդակցություններում քննարկվել են «Դաստիարակչական աշխատանքների ձևերն ու մեթոդները ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի ներքո» հարցը, Մոսկվա քաղաքի ժողովրդական կրթության աշխատողների կոչը: Մշակվել են միջոցառումներ՝ անընդհատ կատարելագործել դասի պլոցեսը, է՛լ ավելի բովանդակալից դարձնել դաստիարակչական աշխատանքը, ըստ ամենայնի բարձրացնել սովորողների գաղափարաքաղաքական զինվածության մակարդակը:

Այս բոլորի շնորհիվ է, որ դպրոցը 1980-1981 ուսումնական տարին փակել է 98,8 տոկոս առաջադիմությամբ, 58 շրջանավարտներից 10-ը ընդունվել են բուհեր, 24-ը՝ պրոֆտեխուսումնարաններ, միջնակարգ մասնագիտական հաստատություններ: Դպրոցում խստագույն վերացվել է երկտարեցիությունը, անթերի իրականացվում է պարտադիր մասին օրենքը:

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում աշխատանքային դաստիարակությանը: Արտադրության հիմունքներին զբաղոցականները ծանոթանում են Կարտիկամի սովխոզում և Թախչայի կրտանտեսությունում: Այս ուսումնական տարում, արհկազմակերպության և դիրեկցիայի նախաձեռնությամբ, Թբիլիսիի կոշիկի «Իսանի» արտադրական միավորման Ախալքալաքի մասնաճյուղի առաջավոր բանվորների մասնակցությամբ անցկացվել է համազբաղոցա-

կան միջոցառում, որի նշանաբանն է եղել «Աշխատանքի փարոսներ, մենք ձեր արժանի փոխարինողներն ենք»: Աշխատանքային ուսուցման ուսուցիչ Գ. Բաբայանի ղեկավարությամբ, Վրաստանում սովետական կարգերի հաստատման 60-ամյակի պատվին դպրոցում և շրջկենտրոնի մշակույթի տանը կազմակերպվել է դպրոցականների ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես:

Ելույթ ունեցողները միաժամանակ նշեցին արհկազմակերպության աշխատանքի մի շարք թերություններ: Նշվեց, որ տեղկոմը վատ է նախապատրաստել ժողովներում և տեղկոմի նիստերում քննարկվող հարցերը, այդ գործում լայնորեն չի ներգրավել արհմիության անդամներին, միշտ չէ, որ հետևողականություն է հանդես բերել բերել ընդունված որոշումների կատարումն ապահովելու գործում: Թեև դպրոցն ունի նյութական հարուստ բազա, տեխնիկական ուսուցման գրեթե բոլոր միջոցները, բայց առանձին ուսուցիչների կողմից դրանք ինչպես հարկն է չեն օգտագործվում: Դպրոցի վարչությանը անհանգստացնում է նաև այն, որ ցածր է «4» և «5»-երով սովորողների տոկոսը, դեռևս ամեն ինչ չի արվել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները կանխելու ուղղությամբ: Տեղկոմը լրջորեն չի զբաղվել արհմիության անդամների կուլտուրակենցաղային պայմանների բարելավման, նրանց հանգիստը լավ կազմակերպելու, սանատորիաների, հանգստյան տների և տուրիստական ուղեգրերով ապահովելու հարցերով: Քիչ են կազմակերպվել կոլեկտիվ կինոդիտումներ, էքսկուրսիաներ: Թեև ձմեռը արդեն մտել է իր իրավունքների մեջ, սակայն ոչ բոլոր ուսուցիչներն են ապահովված վառելիքով:

Հաշվետու-ընտրական ժողովը կոնկրետ միջոցառումներ մշակեց նշված թերությունները վերացնելու, արհկազմակերպության աշխատանքը ներկա պահանջներին համապատասխան կազմակերպելու վերաբերյալ:

12 դեկտեմբերի

ԳՅՈՒՂՍՈՎԵՏԻ ՓՈՍՏԸ

Սովետական իշխանության տարիներին Ախալքալաքի շրջանի Վաչիանի գյուղական սովետի գյուղերում հսկայական վերափոխումներ են կատարվել:

Վաչիանին, որ գյուղսովետի ամենախոշոր գյուղն է, ունի միջնակարգ դպրոց տեղավորված եռհարկանի հոյակապ շենքում, մշակույթի տուն, գրադարան-ընթերցարան, փոստի բաժանմունք, ստացիոնար կինո, մթերային, տնտեսական և արդյունաբերական ապրանքների խանութներ, ճաշարան-խորտկարան: Գյուղի գրեթե բոլոր բնակիչներն ապրում են նորակառույց տներում, օգտվում գազօջախներից, հեռուստահաղորդումներ դիտում Թբիլիսիից ու Մոսկվայից, շատերն ունեն անձնական օգտագործման ավտոմեքենաներ:

Նման վերափոխումներ են կատարվել նաև գյուղսովետի Զամգուրա, Մուրջախեթ, Խոսպիա, Խորենիա գյուղերում:

Սակայն այս ամենը դեռ չի բավարարում բնակիչների հարաճուն պահանջմունքները: Եվ իզուր չէ, որ գյուղսովետի և շրջանային կազմակերպությունների հասցեներով ուղարկվող բազմաթիվ նամակներ ու դիմումներ շոշափում են գյուղական բնակչության կյանքի ու կենցաղի տարբեր հարցեր, խոսում հաջողությունների և հոգսերի մասին, պահանջում վերացնել թերությունները, ըստ ամենայնի բարելավել մարդկանց կուլտուր-կենցաղային պայմանները:

Պետք է ասել, որ, մշտական գործող հանձնաժողովների, դեսպուտատների և ակտիվի օգնությամբ, գյուղսովետի գործկոմում (նախագահ՝ Ա. Բեգրակյան) ստացված գրեթե բոլոր նամակներն ու բողոքները ժամանակին ընթացք են ստանում: Գործկոմը հետևում է, որպեսզի բարձրացված հարցերը հնարավորին չափ լուծվեն, բացառվեն քաշքշուկները:

1981 թ. գործկոմը տարբեր բովանդակության 65 նամակ է ստացել: Դրական լուծում են ստացել անհատական բնակարաններ կառուցելու, հները վերանորոգելու մասին Գ. Քալաշյանի, Ա. Ղավրելիշվիլու, Գ. Օսիձեի (Խոսպիա գյուղ), Ս. Սերոբյանի (Զամգուրա), Ռ. Գալոյանի (Մուրջախեթ), Շ. Զաթաջյանի (Վաչիանի) և ուրիշների դիմումները: Դրականապես են լուծվել Հայրենական պատերազմի մի խումբ մասնակիցների պահանջները վառելիքով ապահովելու և երկարաժամկետ վարկ հատկացնելու մասին: Այսպես, օրինակ: Հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ Ս. Պողոսյանին հատկացվել է 1.500 ռուբլի երկարամյա վարկ:

Սակայն երբ գործին նայում ենք «ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի ներքո աշխատավորների նամակների և առաջարկությունների հետ տարվող աշխատանքի հետագա բարելավման միջոցառումների մասին» ՍՄԿԿ կենտկոմի որոշման պահանջներով, տեսնում ենք, որ գյուղական սովետի այդ կարևոր տեղամասում կան նաև թերություններ: Խոսքն այն մասին է, որ բնակիչների և գյուղական սովետի կողմից առաջ քաշված առանձին հարցերի լուծմանը (այնպիսի հարցեր, որոնք գյուղսովետն ի վիճակի չէ լուծելու) վերադասները ձևական մոտեցում են ցուցաբերում:

Ընթացիկ տարվա հունիսին ստացված՝ Վաչիանի տնտեսական ապրանքների խանութի վարիչ Լ. Աթոյանի նամակում խոսվում է գյուղի խանութների անմխիթար վիճակի մասին՝ դրանք անբարեկարգ են, որերորդ տարին է չեն վերանորոգվում, էլ ինչ խոսք կարող է լինել կուլտուրական առևտրի մասին: Գյուղսովետի գործկոմի հանձնարարությամբ առևտրի կենցաղասպասարկման և հասարակական սննդի մշտական գործող հանձնաժողովը (նախագահ՝ Հ. Մարգարյան) ուսումնասիրեց գյուղսովետի առևտրի կազմակերպման հարցը և այն քննարկվեց գյուղսովետի նստաշրջանում: Ընդունված որոշումը ներկայացվեց համապատասխան գյուղկոոպների փայատերերի ժողովների քննարկման: Անցել է ավելի քան վեց ամիս, բայց գյուղսովետի ընդունած որոշումը խանութների շենքերը վերանորոգելու, Վաչիանում նոր խանութ կառուցելու, հայի փուռում երկրորդ

վառարան տեղադրելու մասին և այլ հարցեր շրջսպառմության և Սուլդալի գյուղկոոպի կողմից գործնական լուծում չեն ստանում:

Վաչիանի գյուղսովետի գյուղերի բնակիչները կենցաղսպասարկման շատ քիչ ծառայություններից են օգտվում, այս բնագավառում շատ թերություններ ու բացեր կան,- գրում են մի խումբ բնակիչներ:- Տասը տարի առաջ սովխոզի կառուցած բաղնիքը կանոնավոր գործում էր, լավ էր սպասարկում գյուղի բնակչությանը: Սակայն երրորդ տարին է, ինչ բաղնիքը ենթակա է հիմնական վերանորոգման:

Վաչիանցիների բողոքը ժամանակին հասցվեց շրջսովետի գործկոմ, ապա բնակչության կենցաղսպասարկման վարչություն: 1980 թվականին կազմվեց օբյեկտի վերանորոգման նախահաշիվը և այնուհետև ... գործը տեղից չշարժվեց հանրապետության կենցաղսպասարկման մինիստրությունը ձգձգվում է նախահաշվով հատկացված գումարի (16 հազար ռուբլի) փոխանցումը կենցաղսպասարկման վարչություն:

Այս բոլորից հետո պարզ է, թե ինչու այս և նման այլ նամակների հեղինակները, տեղում կոնկրետ և սպառիչ պատասխան չստանալով, հարկադրված դիմում են հանրապետության կուսակցական, սովետական վերադաս մարմիններին, թերթերի խմբագրություններին, խնդրում նրանց միջամտությունը:

Վաչիանի գյուղական սովետին կոնկրետ օգնություն պետք է ցույց տան շրջանային սովետի գործկոմը, վերադաս մյուս մարմինները:

31 դեկտեմբերի

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

Մեծացել է Ախալքալաքի շրջանի կոմերիտական ինտերնացիոնալ ընտանիքը: Նրա 160 կազմակերպությունները միավորում են 12 հազար պատանիների ու աղջիկների, որոնք փառավոր էջեր են գրում շրջանի տարեգրության մեջ:

Օրերս շրջկենտրոնի կուլտուրայի տանը կայացած Վրաստանի ԼԿԵՄ Ախալքալաքի շրջանի XXIX կոնֆերանսին էին եկել այդ մեծ ընտանիքի լավագույն պատվիրակները: Եկել էին աշխատանքային մեծագործություններով, ամփոփում էին կատարվածը, մատնանշում հետագա անելիքները:

... Ժպիտ կար պատգամավորների դեմքերին ու հպարտություն: Իսկ հպարտությունը օրինական էր: Չէ՞ որ նրանց ջանքերով շրջանը բազմիցս դերակատարել է պլանային առաջադրանքները, և շրջանային կոմերիտական կազմակերպությունը երկու անգամ արժանացել է ՀամԼԿԵՄ փոխանցիկ կարմիր դրոշի, պարգևատրվել Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշով: Առաջնորդվելով «ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումները՝ գործողության մեջ», «ՀամԼԿԵՄ XIX համագումարին՝ բերք և բարձրորակ արտադրանք» նշանաբանով, շրջանը տասնմեկերորդ հնգամյակի առաջին տարում պետությանը առաջադրանքի 6.000-ի դիմաց վաճառեց 10.500 տոննա հացահատիկ, 27 հազարի փոխարեն 28 հազար 800 տոննա կարտոֆիլ, հանրային հոտի համար ստեղծեց կոշտ և հյութալի կերերի անհրաժեշտ պաշարներ: Աշխատանքի հիանալի օրինակ են ցուցադրել Դիլիսկայի, Բուռնաշեթի, Խանդոյի, Բարալեթի, Օրջայի, Մաջադիայի, Արագվայի կոլտնտեսությունները, Զակի, Կարտիկամի, Վաչիանի, Էխտելայի պետական տնտեսությունների կոմերիկականներն ու երիտասարդները:

Խանդոյի կոլտնտեսության կոմերիական-երիտասարդական բրիգադը, որը ղեկավարում է «Պատվո նշանի շքանշանակիր, Վրաստանի ԼԿԵՄ XXXI համագումարի պատգամավոր Լիդա Շահինյանը, յուրաքանչյուր հեկտարից՝ նախատեսված 160-ի փոխարեն, ապահովեց 220 ցենտներ կարտոֆիլի միջին բերք:

Վրաստանի լենինյան կոմերիոմիության մրցանակի դափնեկիր Լալա Փահլևանյանը կարտոֆիլի հեկտարի բերքատվությունը հասցրել է 230 ցենտների:

Բուռնաշեթի կոլտնտեսության «Հարուստ ֆերմայի համար» պայքարող բրիգադի բոլոր կթվորուհիները 3.500-ական են, իսկ ֆերմայի առաջավոր կթվորուհի, շրջանային «Փարոս» թերթի 3.500-ական կթվորուհիների ակումբի ղեկավար, հանրապետության Գերագույն սովետի դեպուտատ Սոնյա Քոչոյանը իր խնամած յուրաքանչյուր կովից ստացել է 4.100 կիլոգրամ կաթ:

Երիտասարդության ներդրումը որոշակի է արդյունաբերական, տրանսպորտային, շինարարական ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների ձեռք բերած հաջողություններում:

Կոնֆերանսում այս հարցերին անդրադարձավ կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար Ստեփան Ստեփանյանը: Նա ներկաներին ծանոթացրեց այն հայրենանվեր գործերին, որ կատարել է շրջանի երիտասարդությունը:

Բայց ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցողները (Ս. Սրմիկյան՝ Զակի սովխոզի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, Մ. Սահարյան՝ Խանդոյի կոլտնտեսության նախագահ, Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, Հ. Գաբրիելյան՝ շրջժողկրթության բաժնի վարիչ, Ս. Քոչոյան՝ Բուռնաշեթի կոլտնտեսության կթվորուհի, Մ. Կիրակոսյան՝ ֆիզկուլտուրայի և սպորտի շրջկոմի նախագահ, Ա. Ալեքսաշվիլի՝ Կոթելիայի կոլտնտեսության ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար, Խ. Իգիթխանյան՝ Կարտիկամի սովխոզի կուսկոմիտեի քարտուղար, Ռ. Լոմսաձե՝ ԼԿԵՄ շրջկոմի երկրորդ քարտուղար, Ս. Այվազյան՝ Կորխի միջնակարգ դպրոցի ավագ ջոկատավար և ուրիշներ), խոսելով կատարվածի մասին, չմոռացան նշել նաև աշխատանքում տեղ գտած թերությունները:

Արձանագրվեց, որ ինչպես ԼԿԵՄ շրջկոմը, այնպես էլ առանձին կոմերիտական կազմակերպություններ իրենց աշխատանքը դեռևս լրիվ չեն վերակառուցել ներկա պահանջներին համապատասխան: Թեև անասնապահությունը հայտարարվել է կոմերիտական հարվածային ճակատ, ու հաշվետու ժամանակաշրջանում անասնապահական ֆերմաներում աշխատանքի են անցել 129 պատանիներ ու աղջիկներ, սակայն ֆերմաների անասնապահական կոլեկտիվներում դեռևս փոքր թիվ են կազմում կոմերիտականներն ու երիտասարդները:

Սուլդայի, Կարգախի անասնապահական սովխոզների և այլ տնտեսությունների կոմերիտական կազմակերպությունները կոնկրետ ոչինչ չեն ձեռնարկում երիտասարդությանը անասնապահության ոլորտ ներգրավելու ուղղությամբ: Այս տնտեսությունների կաթնապրանաքային ֆերմաներում կթվորուհիները աշխատում են մաքսիմալ ծանրաբեռնվածությամբ, պակասում են անասնապահներ: Այդ է պատճառը, որ այս և այլ տնտեսություններում անասնապահական մթերքների արտադրության ու մթերումների ավելացման ուղղությամբ ցանկալի տեղաշարժեր չեն կատարվում:

Կոնֆերանսում խոսվեց այն մասին, որ որոշ երիտասարդներ, ավարտելով բարձրագույն ուսումնական հաստատություններ, պրոֆտեխուսումնարաններ, չեն ուզում նորից գյուղ վերադառնալ: Վերջին երկու տարում շրջանի գյուղական երկու պրոֆտեխուսումնարանների շրջանավարտների միայն 10 տոկոսն է մասնագիտական աշխատանքի անցել: Մինչդեռ շրջանի տնտեսություններն ունեն անասնապահական մեխանիզատորների, օպերատորների և այլ մասնագետների կարիք: Ամենացավալին այն է, որ հարյուրավոր երիտասարդներ խուսափում են հանրօգուտ աշխատանքից: Իսկ կոմերի-

տական կազմակերպությունները նրանց նկատմամբ հանդես չեն բերում անաչառ վերաբերմունք, բռնում են հաշտվողական դիրք:

Դեռևս անբավարար է կոմերիտմիության շրջկոմի կոմերիտական «Լուսարձակի» շտաբի և տեղերում նրանց պոստերի աշխատանքը:

Դրանցից շատերի տեսադաշտից դուրս են մնացել աշխատանքային կարգապահության հարցերը, հակահասարակական երևույթների դեմ մղվող պայքարը:

Կոնֆերանսում նշվեց, որ Աբուլի, Բեժանոյի, Խուլդումոյի կոլտնտեսությունների, Կաջոյի, Հոկամի սովխոզների և այլ տնտեսությունների ԼԿԵՄ կազմակերպություններում անբավարար հիմքերի վրա է դրված ներկոմերիտական աշխատանքը, ժողովներն անցնում են ցածր մակարդակով, չեն կենսագործվում ընդունված որոշումները:

Կոնֆերանսը ուշադրություն նվիրեց կոմերիտականների գաղափարադաստիարակչական աշխատանքների բարելավման հարցերին: Նշվեց, որ առանձին կոմերիտական կազմակերպություններում ցածր է գաղափարա-դաստիարակչական աշխատանքի մակարդակը, հաճախ ձևական մոտեցում է ցուցաբերվում սոցիալիստական մրցության կազմակերպմանն, առաջավոր փորձի պրոպագանդմանն նկատմամբ, անհրաժեշտ ուշադրություն չի նվիրվում երիտասարդության քաղաքական ուսուցմանը:

Լուրջ խոսակցություն տեղի ունեցավ երիտասարդության մասնագիտական կողմնորոշման, մատաղ սերնդի ուսումնադաստիարակչական, դեղագիտական, ֆիզիկական դաստիարակության, կուլտուրական հանգստի և այլ հարցերի շուրջ:

Կոնֆերանսում ելույթ ունեցան Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը և Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի բաժնի վարիչ Զ. Սոկոլովը:

Կոնֆերանսը, որն անցավ քննադատության և ինքնաքննադատության մթնոլորտում, մշակեց կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված շրջկոմի և ԼԿԵՄ կազմակերպությունների աշխատանքի բարելավմանը, ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների կենսագործմանը: Կոնֆերանսն ընտրեց շրջկոմի և վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմ, Վրաստանի ԼԿԵՄ XXXII համագումարի պատգամավորներ:

9 հունվարի

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍՈՑՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շրջանի կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովը՝ Գորիի և Հայկական ՍՍՀ Ստեփանավանի մրցակից շրջանների պատվիրակությունների մասնակցությամբ քննարկեց հնգամյակի մեկնարկային տարվա սոցիալիստական մրցության արդյունքները և նոր տնտեսական տարվա խնդիրները: Զեկուցումով հանդես եկավ կուսակցության Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը:

Ժողովում ելույթներ ունեցան Բուռնաշեթի կոլտնտեսության նախագահ Մ. Քոչոյանը, գյուղատնտեսության աշխատողների արհմիության շրջկոմի նախագահ Ի. Ծինծկալաձեն, Վաչիանի սերմնաբուծական սովխոզի բրիգադավար Կ. Աբաջյանը, ԼԿԵՄ շրջկոմի երկրորդ քարտուղար Ռ. Լոմսաձեն, Ալաստանի սովխոզի դիրեկտոր Յու. Նանուշյանը, Թբիլիսիի կոշիկի «Իսանի» արտադրական միավորման Ախալքալաքի ֆաբրիկայի գլխավոր ինժեներ Ն. Ցոմենկոն, ժողդեպուտատների Ստեփանավանի շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ Յու. Մարտիրոսյանը, Բարալեթի կոլտնտեսության կթվորուհի, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ռ. Խեչոյանը, ժողդեպուտատների Գորիի շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ Շ. Ջվարիձեն, Խոսպիայի սովխոզ-համալիրի կուսկոմիտեի քարտուղար Ս. Կարոյանը, կուսակցության Ախալքալաքի շրջկոմի երկրորդ քարտուղար Է. Մեսխիձեն:

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի 1981 թվականի նոյեմբերյան պլենումի որոշումներով պլենումում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի ցուցումներով, պաշտպանելով ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակը արժանավայել դիմավորելու մասին Մոսկվա քաղաքի առաջավոր ձեռնարկությունների կոլեկտիվների նախաձեռնությունը և զարգացնելով Լիտվական ՍՍՀ Ուկմերգեի, Հայկական ՍՍՀ Ստեփանավանի շրջանների, ինչպես նաև Գորիի շրջանի աշխատավորների հետ ավանդական մրցությունը, ի պատիվ պանծալի հոբելյանի, ժողովի մասնակիցները 1982 թվականի համար ստանձնեցին հետևյալ սոցիալիստական պարտավորությունները:

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Սեղմ ժամկետում և ագրոտեխնիկական բարձր մակարդակով կատարել 10.45 հեկտար հատիկաընդեղեն կուլտուրաների ցանքը, հեկտարի բերքատվությունը հասցնել 23 ցենտների: Պլանի 6.000-ի փոխարեն պետությանը վաճառել 6.200 տոննա հացահատիկ: Դիլիսկայի, Բուռնաշեթի, Խանդոյի, Օրջայի կոլտնտեսությունները, Կարտիկամի սովխոզը խոստացել են հեկտարից պահհստավորել 35-40 ցենտներ հացահատիկ:

Ցանել 3.200 հեկտար կարտոֆիլ և ապահովել 140-ական ցենտներ միջին բերք: Համախառն բերքը հասցնել 44.500 տոննայի: Դա հնարավորություն կտա պետությանը վաճառելու 29 հազար տոննա կարտոֆիլ առաջարկանքի 28.400-ի փոխարեն:

Շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները խոստանում են 112-ի դիմաց կուտակել 125 հազար տոննա կեր, այդ թվում 40 հազար տոննա ծղոտ, 25 հազար տոննա սենաժ, 35 հազար տոննա սիլոս:

«Վ բացգյուղտեխպեսակոմի» Ախալքալքի և Բարալեթի միավորումները խոստանում են գարնան-դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի վերանորոգումն ավարտել մարտի 1-ին, նախատեսվածից ավելի վերանորոգել 5 ավտոմեքենա, 10 տրակտոր, արտապլանային կարգով քարերից ու քարակույտերից

մաքրել 3 հազար հեկտար հողեր, անասնապահական ֆերմաներում 200 գլխի համար տեղադրել գոմաղբափոխադրիչներ:

Շրջանի մելիորացիայի և ջրային տնտեսության վարչության կոլեկտիվը խոստացել է արտադրական պլանները իրացնել մինչև դեկտեմբերի 1-ը, ջրաբերման առաջադրանքը կատարել 102, հիդրոտեխնիկական կառույցների հիմնական և ընթացիկ նորոգումների առաջադրանքը՝ 103 տոկոսով:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Անասունների խնամքի ու կերակրման, տոհմային աշխատանքների արմատական բարելավման միջոցով ապահովել անասնապահության մթերատվության հետագա աճը և 1982 թվականի վերջին շրջանի տնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասցնել 29.500-ի, այդ թվում կովերինը՝ 9.200 գլխի, մանր եղջերավոր անասուններինը՝ 83 հազարի, որից մաքիներինը՝ 53 հազար գլխի: Յուրաքանչյուր 100 մայր անասունից ստանալ 85 հորթ, 85 գառ, յուրաքանչյուր մերուկից 14 խոճկոր: Ցուրաժային կովի միջին կաթնատվությունը հասցնել 2.050 կիլոգրամի, ոչխարի բրդատվությունը՝ 2,4 կիլոգրամի, մսի համախառն արտադրությունը՝ 3.900, կաթինը՝ 17.900, բրդինը՝ 200 տոննայի:

1982 թվականին շրջանը (ներառյալ անձնական օժանդակ տնտեսությունները) պետությանը կհանձնի 5.610 տոննա միս, 18.800 տոննա կաթ, 296 տոննա բուրդ, մեկ միլիոն 850 հազար ձու, 50 տոննա ձուկ:

Յուրաքանչյուր տնտեսություն, գյուղական սովետ, գյուղական ծուխ կմշակի և կիրականացնի կոմպլեքս միջոցառումներ՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման ուղղությամբ, կարմատավորվի բնակչության հետ կոոպերացիան: Ապահովել խոշոր եղջերավոր անասունների վաճառքը պետությանը 300 կիլոգրամից բարձր, խոզերինը՝ 100 կիլոգրամ, ոչխարներինը 35 կիլոգրամ միջին կենդանի քաշով:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Թբիլիսիի կոշիկի «Իսանի» արտադրական միավորման Ախալքալաքի ֆաբրիկայի բանվոր-ծառայողները պարտավորվել են ձեռնարկության տարեկան արտադրական պլանը կատարել մինչև դեկտեմբերի 20-ը, արտադրանքի աճի տեմպը ավելացնել 7 տոկոսով:

Երևանի բետոնե կոնստրուկցիաների գործարանի կոլեկտիվը կպայքարի 15 հազար ռուբլու արտապլանային արտադրանք տալու համար: Արտադրանքի ինքնարժեքը կնվազեցվի 0,3 տոկոսով, կտնտեսվի 20 տոննա պայմանական վառելանյութ, 5 հազար կիլովատժամ էլեկտրաէներգիա:

Գլխավորող պանրայնի գործարանի աշխատողները խոստացել են կաթնամթերքների արտադրության տարեկան պլանը իրացնել մինչև դեկտեմբերի 20-ը, մինչև տարեվերջ արտապլանային կարգով տալ 40 հազար ռուբլու արտադրանք, երկու տոկոսով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, 5 հազար ռուբլով դերազանցել շահույթի պլանային առաջադրանքը:

Շրջանի շինարարական կազմակերպությունների N 21 և N 18 ՇՄՇ-ների, միջկոլտնտեսային շինվերանորոգման տեղամասի շինարարները խոստացել են տարվա ընթացքում արտապլանային կարգով կատարել 220 հազար ռուբլու շինմոնտաժային աշխատանք:

Արտադրական բարձր բնագծերի համար կպայքարեն շրջանի ավտոտրանսպորտային երկու ձեռնարկությունները: Նրանց կոլեկտիվները որոշել են արտապլանային եկամուտները հասցնել 13 հազար ռուբլու, բեռնատեղափոխման ինքնարժեքը նվազեցնել 1-1,5 տոկոսով, բեռնատար ավտոհավաքակայանների օգտակար շահագործման գործակիցը բարձրացնել 1,2 տոկոսով:

Սոցիալիստական բարձր պարտավորություններ են ստանձնել նաև առևտրի, բնակչության կենցաղսպասարկման, առողջապահության, լուսավորության, մշակույթի բնագավառի աշխատողները:

Շրջանի կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունները կազմակերպական և գաղափարական աշխատանքի բոլոր միջոցները կգործադրեն շրջանի աշխատավորների ակտիվությունը էլ ավելի բարձրացնելու, ստանձնած սոցպարտավորությունները անթերի կատարելու համար:

1 փետրվարի

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ [Անիչկա Իրիցյան]

Կորխի կոլտնտեսությունում (Ախալքալաքի շրջան) հարգանքով են խոսում կթվորուհի Անիչկա Իրիցյանի մասին:

1970 թվականին էր, երբ Անիչկան ծնողների օրինակով եկավ ֆերմա: Կոլեկտիվը սիրով ընդունեց նորեկին: Երկու տարի հորթապահ աշխատելուց հետո, նրան վստահեցին կթվորուհու դժվարին պարտականությունը. նա փոխարինեց մորը՝ ֆերմայի ճանաչված կթվորուհի Աստղիկ Եփրիկյանին: Շատ բան սովորեց փորձված կթվորուհի Ասանեթ Ափոզյանից, մյուս գործընկերներից: Երիտասարդ կթվորուհին կարճ ժամանակամիջոցում հմտացավ գործում, ձեռք բերեց լավագույն կթվորուհու համբավ: Անցած տասներկու տարիներին նա իր խմբի կովերից կթել և հանձնել է ավելի քան 2.600 ցենտներ կաթ. նախիրը համալրել է 120 հորթով:

Անիչկայի համար արգասաբեր էր հատկապես տասներորդ հնգամյակը, որը նա ավարտեց չորս և կես տարում:

1981 թվականին իր խնամքին հանձնված 11 կովերից նա ստացավ և պահպանեց 12 հորթ. յուրաքանչյուր կովի կաթնատվությունը նախատեսված 2.230-ի դիմաց հասցրեց 2.280 կիլոգրամի, կոլտնտեսության միջին ցուցանիշը գերազանցելով 222 կիլոգրամով: Իսկ առանձին բարձրակիթ կովերից ապահովեց 2.800-3.000 կիլոգրամ կաթի ստացումը:

Կաթնապրանքային ֆերմայի կոլեկտիվը, այդ թվում նաև Ա. Իրիցյանը, հաջողությամբ առաջ է տանում ընթացիկ մսուրային շրջանն ու ծնի կամպանիան: Անիչկայի խնամած կովերը ծնել են: Բոլոր հորթերն էլ գեր ու առողջ են: Հոգատար խնամքի ու լիակե-

բակրման շնորհիվ, նախորդ տարվա համեմատությամբ դդալիորեն բարձրացել են ինչպես ֆերմայի, այնպես էլ Իրիցյանի խնամքին հանձնված կովերի կաթնատվությունը ու կաթի յուղայնությունը: Կթվորուհիների շրջանում ծավալված մրցությունը կրկին գլխավորում է Իրիցյանը, որն արժանացել է սոցմրցության հաղթողի կրծքանշանների և այլ պարգևների, երկրորդ անգամ անընդմեջ ընտրվել է ժողդեպուտատների գյուղական սովետի դեպուտատ:

Սակայն կյանքում ամենահիշարժան տարեթիվը դարձավ 1982 թվականի հունվարը, երբ Վրաստանի արհմիությունների XVII համագումարը նրան ընտրեց ՍՍՀՄ արհմիությունների XVII համագումարի պատգամավոր:

1 փետրվարի

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻՆ

Սուլդայի անասնապահական սովխոզի երկրագործներն ու անասնապահները, նախօրոք ծրագրելով իրենց անելիքները, մրցություն են ծավալել կոմունիստական շաբաթօրյակը արտադրական լավ նվաճումներով դիմավորելու համար: Ապրիլի 17-ին անասնապահները կաշխատեն ֆերմաներում, դաշտավարները դաշտ դուրս կգան վար ու ցանքի: Նրանք որոշել են կատարել 100 հեկտար հացահատիկայինների ցանք, 50 հեկտար հողատարության վրա կատարել նախացանքային մշակում, դաշտ փոխադրել 500 տոննա օրգանական պարարտանյութ, տնկարկել 2.000 դեկորատիվ և պտղատու ծառեր:

10 ապրիլի

ՆՈՐ ԲՆԱԳԾԵՐ ՆՎԱՃԵԼՈՒ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

Բոգդանովկայի շրջանի Գոնդուրայի անասնապահական սովխոզի դաշտավարները հանրագումարի բերեցին տասնմեկերորդ հնգամյակի առաջին տարվա արդյունքները: Աշխատանքի հարվածային ճակատում նրանց հաջողությունն ակնհայտ է: Գերակատարվել են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի ընբքատվության և հողագործական բոլոր մթերքների պետհանձնումների պլան-առաջադրանքները:

Տնտեսության երկրագործներն ու մեխանիզատորները որոշեցին շարունակել հարվածային աշխատանքը, արտադրության նոր ռեզերվներ հայտնաբերելու և օգտագործելու միջոցով նվաճել նոր բնագծեր:

Կատարվել են աշնանացանը և ցրտահերկը, հող են մտցվել 170 տոննա հանքային աղեր, շարունակվում է օրգանական պարարտանյութերի փոխադրումը դաշտեր: Մինչև գարնանացանը կօգտագործվի ավելի քան 4.000 տոննա տեղական պարարտանյութ: Առանձնացված և ցանքային կոնդիցիայի է հասցված գարնանացանին

անհրաժեշտ սերմացուն, սորտաթարմացման է ենթարկվել և տեսակավորվել կարտոֆիլի սերմացուն:

Մեխանիզատորները պարտավորվել են 620 հեկտար տարբեր կուլտուրաների ցանքը կատարել 10-12 աշխատանքային օրում: Նախորդ տարվա համեմատությամբ կընդարձակվեն հացահատիկային կուլտուրաների, միամյա խոտաբույսերի ցանքատարածությունները: Նոր յուրացված 50 հեկտար հողերի վրա կմշակվեն միամյա խոտաբույսեր: Դա հնարավորություն կտա տնտեսությանը 200-220 տոննայով ավելացնելու կոշտ կերի պաշարը:

Առանձնակի ուշադրություն է դարձվելու կարտոֆիլի մշակությանը: Կմեքենայացվեն կարտոֆիլի ցանքը, մշակությունը, բերքահավաքը:

Մեծ աշխատանք է կատարվելու մոլախոտերը քիմիական ճանապարհով ոչնչացնելու, պլանտացիաները լրիվ ջրարբիացնելու նպատակով: Ձեռք են բերվել պահանջվող քանակությամբ թունաքիմիկատներ: Ընթացիկ տարում շարք կմտնի Դիլիֆի ագրոբաժանմունքի արհեստական ջրամբարը, որի ջրերով կոռոգվեն այդ բաժանմունքի 30 հեկտար կարտոֆիլի և 60 հեկտար առվույտի ցանքերը:

Գարնանացան բոլոր կուլտուրաների մշակության ագրոկոմպլեքսը լրիվ չափով կատարելու համար սովխոզի դիրեկցիան և կուսակցական կազմակերպությունը շատ բան են արել աշխատանքի հիշտ կազմակերպումն ապահովելու համար. մեխանիզատորական և դաշտավարական բրիգադները կոմպլեկտավորվել են գործիմաց ղեկավարներով, կատարվել է աշխատանքի բաշխում:

- Մեր հանրապետությանը իններորդ անգամ անընդմեջ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԿ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշով պարգևատրելը, տնտեսության կոլեկտիվին պարտավորեցնում է հնգամյակի երկրորդ տարին ևս նշանավորել նոր հաջողություններով,- ասում է սովխոզի դիրեկտոր Կարլեն Շամիլյանը: «Բերք-82-ի» պայքարում մենք կնվաճենք հեկտարից 30 ցենտներ հացահատիկ, 200 ցենտներ կարտոֆիլ, 40 ցենտներ խոտ, 500 ցենտներ կերի արմատապտուղ ստանալու բարձր բնագծերը: Պետությանը կհանձնենք 500 տոննա հացահատիկ, 700 տոննա կարտոֆիլ, դրանով իսկ կնպաստենք երկրի պարենային ծրագրի կատարմանը:

15 ապրիլի

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ախալքալաքում տեղի ունեցավ գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցում էին սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարներ, պրոպագանդիստներ, քաղինֆորմատորներ, ագիտակոլեկտիվների ղեկավարներ:

Կոնֆերանսը բացեց կուսակցության Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը: «Բարոյական դաստիարակութ-

յան լենինյան սկզբունքները և սկզբնական կուսակազմակերպությունների խնդիրները» զեկուցումով հանդես եկավ Վրաստանի ԿԿ Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Ա. Ավագյանը: Մաջադիայի միջնակարգ դպրոցի դիրեկտոր, հանրապետության կուլտուրայի վաստակավոր աշխատող Գ. Վարդիկյանը իր զեկուցումը նվիրեց «Դպրոցը աճող սերնդի բարոյական դաստիարակության հիմքն է» թեմային:

«Սկզբնական կուսակցական կազմակերպությունը և բարոյական դաստիարակության պրոբլեմները», «Մանկավարժական կոլեկտիվը և բարոյական դաստիարակությունը», «Երիտասարդության բարոյական դաստիարակության պրոբլեմները», «Բարոյական դաստիարակությունը և վարչական մարմինների պրոֆիլակտիկ միջոցառումների արդյունավետությունը» թեմաներով զեկուցումներ կարդացին Խանդոյի կոլտնտեսության կուսկոմիտեի քարտուղար Ա. Թորոսյանը, Հոկտմի ութամյա դպրոցի դիրեկտոր Թ. Մաղրաձեն, ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Վ. Մելիքյանը, շրջսովետի գործկոմի ներքին գործերի բաժնի պետի քաղդաստիարակչական գծով տեղակալ Մ. Մահտեսյանը:

Վերջում ելույթ ունեցավ կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Է. Մեսխիձեն:

27 ապրիլի

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՕՐԳԱՆԸ

Բոգդանովկայի շրջանի Հեշտիայի կոլտնտեսության «Կոմունիզմի ուղի» պատի թերթը (խմբագիր նախագահ Հովհ. Անտոնյան) իր շուրջն ստեղծել է թղթակիցների լայն ակտիվ: Նրանց և խմբագրի անդամներ Վ. Հովհաննիսյանի, Գ. Պիկոյանի, Վլ. Մնոյանի, Մ. Սիմոնյանի շնորհիվ թերթում լուսաբանվում է շրջանի ամենախոշոր գյուղի կոլտնտեսության մարդկանց բազմազան կյանքը, բացահայտվում են թերությունները: Անցյալ տարի լույս տեսած 14 և այս տարվա համարներում հանդես են եկել կոլտնտեսության ղեկավար աշխատողներ, գյուղատնտեսության մասնագետներ, շարքային կոլտնտեսականներ, մեխանիզատորներ:

Վրաստանի ԼԿԵՄ XXXII համագումարի պատգամավոր, անասնապահ Լ. Արոյանը, «Իմ փորձը» վերտառությամբ հոդվածում պատմում է, թե ինչպես է ինքը ապահովում բամբակ դրված խոշոր եղջերավոր անասունների մատղաշների բարձր քաշաճը: Թերթում իր ունեցած փորձի մասին գրել են նաև անասնապահ Վ. Բուրդուլյանը, հորթապահ Ժ. Հովսեփյանը, կթվորուհի Թ. Գրքիկյանը, մեխանիզատոր Գ. Բաղդասարյանը և ուրիշներ:

Պատի թերթը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում մրցությամբ ստանձնած սոցպարտավորությունների կատարման ընթացքը: Կոլտնտեսությունը հնգամյակի անդրանիկ տարում ներակայացրել է գյուղմթերքների արտադրության պետական պլան-տարեջրագրությունները: Այդ հաջողություններում ներդրում ունի

նաև պատի թերթը: Իզուր չէ, որ այն երկու տարի անընդմեջ արժանացել է «Արշալույս» շրջանային մրցանակի, պարգևատրվել կուսակցության շրջկոմի և շրջսովետի գործկոմի պատվոգրով:

Այս օրերին «Կոմունիզմի ուղի» պատի թերթը կոլտնտեսականներին պայքարի է կանչում հեկտարից 21 ցենտներ հացահատիկ, 130 ցենտներ կարտոֆիլ, ֆուրաժային կովից 2.010 կիլոգրամ կաթ, մի ոչխարից 2,6 կիլոգրամ բուրդ ստանալու, նախորդ տարվա համեմատությամբ պետությանը 10-12 տոկոսով ավելի գյուղմթերքներ վաճառելու համար:

Սակայն պատի թերթը ունի նաև թերություններ: Նրա համարներում թույլ է համարձակ քննադատությունն ու ինքնաքննադատությունը, միշտ չէ, որ վեր են հանվում ոչխարաբուծության, կարտոֆիլագործության և այլ բնագավառներում տեղ դտած թերությունները ծնող պատճառները:

Թերթի խոսքը աշխատավորների ստեղծագործական նախաձեռնության խթանման անսպառ աղբյուրն է: Ահա թե ինչու նրա խմբագրական կոլեգիան պետք է ավելի ուժեղացնի կապը ընթերցողների հետ, թերթը դարձնի ավելի մարտունակ:

6 մայիսի

ՎԱՏԱՀՈԹՅՈՒՆ [Լուկերիա Տոմիլինա]

Միջնակարգ դպրոցից հայրենի Օռլովկա գյուղի կոլտնտեսություն տանող ճանապարհը շատ բան փոխեց Լուկերիա Տոմիլինայի կյանքում: Բարեկամացավ հողի հետ, տիրապետեց տարբեր կուլտուրաների ցանքի, մշակության «գաղտնիքներին», ստացավ աշխատանքային առաջին մկրտությունը: 1976 թվականին, ծնողների օրինակով (մայրը կթվորուհի, հայրը հովիվ), ոտք դրեց կաթնապրանքային ֆերմա: Նրան միանդամից վստահեցին N 3 բրիգադի ղեկավարությունը: Ջեռներեց աղջիկը կարճ ժամանակամիջոցում վաստակեց բրիգադի անդամների սերն ու համակրանքը, արդարացրեց կոլտնտվարչության վստահությունը:

Մեծ չէ բրիգադը, սակայն այս փոքրիկ կոլեկտիվը հայտնի է իր լավ գործերով, ընդօրինակելու արժանի շատ բան ունի: Երբ տարեվերջին ամփոփվում են կաթնապրանքային ֆերմայի աշխատանքի արդյունքները, միջբրիգադային (երեքն են) մրցության հաղթողի առաջին շարքում միշտ տեղ է գտնում Տոմիլինայի բրիգադը: Նրա համար արգասաբեր էր հատկապես տասներորդ հնգամյակը. կոլեկտիվը կաթի արտադրության հնգամյա առաջադրանքն իրացրեց 110 տոկոսով: Հաջողությամբ են կատարվել նաև տասնմեկերորդ հնգամյակի անդրանիկ տարվա և ընթացիկ տարվա անցած ամիսների պլան-պարտավորությունները: Բրիգադի անդամները պայքարում են այս տարի յուրաքանչյուր կովի կաթնատվությունը հասցնել 2.500 կիլոգրամի:

Դեռ չի բոլորել Տոմիլինայի 25 տարին: Սակայն դրվել են նրա կենսագրության առաջին էջերը, որոնք լեցուն են աշխատասիրության, ընդհանուր գործի համար պայքարի վկայություններով:

Նա Գորելովկայի դյուզսովետի դեպուտատ է, կոլտնտեսության ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար, կոմերիտմիության շրջկոմի անդամ, ապրում է հանրային տնտեսության, երիտասարդների դործերով, խանդավառվում է մեծ ու փոքր հաջողություններով, միշտ անձնական օրինակ ցույց տալիս մյուսներին:

Լուկերիա Տոմիլինան առաջադրվել է դեպուտատության թեկնածու: Այդ վստահությունը նրան նոր ուժով կմղի դեպի աշխատանքային հաջողությունների՝ արդարացնելու ժողովրդի ընտրյալի բարձր կոչումը:

17 Հունիսի

ԿՈՒՍԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ [Կարլոս Մուսիկյան]

Կարլոս Մուսիկյանը Ախալքալաքի շրջանի Կաջոյի անասնապահական սովխոզի կուսակցական կոմիտեի քարտուղարն է:

Նրա անցած կյանքի քառասուներեք տարիները վերելքի, մաքառումների տարիներ էին: Նա հաջողությամբ ավարտեց միջնակարգ դպրոցը, ՀՍՍՀ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի հեռակա բաժինը, Բաքվի կուսակցական բարձրագույն դպրոցը: Հատիկի նման ծլել, աճել է նա մայր հողից, եղել է հողագործ, ակումբի վարիչ, դյուղական սովետի քարտուղար, սովխոզի ագրոբաժանմունքի կառավարիչ, արհմիության բանկոմի նախագահ, յոթ տարի անընդմեջ՝ սովխոզի կուսկոմիտեի քարտուղար:

Մեծ են քարտուղարի հոգսերը, դժվարություններ շատ կան, բայց նա ընկճվել չգիտի: Այդ մասին խոսք բացվելիս ասում է. «Առանց դժվարությունների կյանքը հետաքրքիր չէր լինի: Դրանց հաղթահարումը ավելի բովանդակալի և իմաստնացած է դարձնում մեր առօրյան»:

Կուսկազմակերպությունը քարտուղարի ղեկավարությամբ դնալով ավելի մարտունակ է դառնում, ավելի հմտորեն է խորանում արտադրության ղեկավարման հարցերի մեջ, հետևողականորեն իրականացնում ադմինիստրացիայի գործունեության նկատմամբ իր վերահսկողության իրավունքը, անխոնջ աշխատում է կադրերի հետ, բարձրացնում հանձնարարված դործի համար նրանց պատասխանատվությունը:

Սովխոզում հաշվվում է 187 կոմունիստ, որոնցից 115-ը անմիջականորեն աշխատում են արտադրության բնագավառում: Գրեթե բոլոր դաշտավարական բրիգադները, ֆերմաները ղեկավարում են միջնակարգ և մասնագիտական կրթությամբ կոմունիստները:

Բոլոր կոմունիստներն էլ ունեն մշտական և ժամանակավոր կուսակցական հանձնարարություններ, ակտիվորեն մասնակցում են կուսկազմակերպության կյանքին:

Մեխանիզատորներ Սերոբ և Նապոլեոն Առաքելյանները, Արմենակ և Խաչատուր Լսկավյան եղբայրները, կթվորուհիներ Ե. Ավագյանը, Մ. Տիտոյանը, հովիվներ Ա. Տոնոյանը, Ս. Փաշյանը, Ա. Քերոբյանը (բոլորն էլ կոմունիստներ) և շատ ուրիշներ իրենց աշխատած տեղամասերում հանդես են բերում բարձր պատասխանատվություն, գործուն մասնակցություն ցույց տալիս կուսկազմակերպության և սովխոզի առջև դրված խնդիրների հաջող լուծմանը:

Այստեղից էլ անվիճելի են հաջողությունները: Սովխոզը բարձր ցուցանիշներով եզրափակեց տասներորդ հնգամյակը, նոր հնգամյակի անդրանիկ տարին, շարունակում է նոր բնագծեր նվաճել նաև երկրորդ տարում:

Տնտեսությունը կատարել է խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակի ավելացման, գյուղատնտեսական հիմնական մթերքների արտադրության և պետությանը հանձնելու իննամսյա առաջադրանքները, կազմակերպված են առաջ ընթանում աշնան գյուղատնտեսական աշխատանքները, պատրաստվել է 860 տոննա սենաժ, 945 տոննա սիլոս, կուտակվել է 2.600 տոննա խոտ, իրացվել է 230 հեկտար աշնանացանի առաջադրանքը:

Մեծ ուշադրություն է դարձվում կոմունիստների և անկուսակցական աշխատողների քաղաքական դաստիարակությանը, նրանց գիտելիքների հարստացմանը: Բաժանմունքներում, գործող դպրոցներում և սեմինարներում ընդգրկված են բոլոր կոմունիստները, մեծ թվով անկուսակցական ակտիվիստներ: Բաղլուսավորությանը վերաբերող հարցերը ուսումնասիրվում և քննարկվում են կուսժողովներում, կոմիտեի նիստերում, լսվում են պրոպագանդիստների հաշվետվությունները, բարձրացվում է պահանջկոտությունը նրանց և ունկնդիրների նկատմամբ:

Կուսակցական կազմակերպությունը ակտիվ աշխատանք է ծավալել ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակի նախապատրաստության ուղղությամբ: Բաղինֆորմատորներն ու ագիտատորները հաճախ են անցկացնում մեծ տարելիցին նվիրված զրույցներ:

Կարլոս Մուսիկյանի ղեկավարած կուսակցական կազմակերպության բոլոր կոմունիստների, սովխոզի բոլոր բանվորների նվիրական ձգտումն է՝ նախատոնական յուրաքանչյուր օրը դարձնել հարվածային, հաջողությամբ եզրափակել ընթացիկ տնտեսական տարին:

19 հոկտեմբերի

1983

ԽՂՃԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

[Արշալույս Ռայիսյան]

Արագվայի (Ախալքալաքի շրջան) բազմակի դրոշակակիր կոլտնտեսությունը արտադրության առաջավորներ շատ ունի, որոնք շարունակ հոգ են տանում տնտեսության էկոնոմիկան ամրապնդելու մասին:

Բայց, ինչպես ասում են, լավից-լավն էլ կա: Կոլտնտեսության վարչության նախագահ Միտուշ Արևյանը դրվատանքի խոսքեր ասաց շատերի մասին, սակայն խնդրեց դրել դաշտավարական բրիգադավար Արշալույս Ռայիսյանի մասին:

Արագվա գյուղի հմուտ հողագործ, հետագայում՝ բրիգադավար, ապա՝ կոլտնտեսության նախկին նախագահ Հովհաննես Ռայիսյանի ընտանիքում է ծնվել նա: Մի ջնակարգ դպրոցն ավարտելուց հետո եկել է արտադրություն, անտեսանելի թելերով ձգել են հարազատ հողն ու ջուրը, հանդն ու արտը:

Ասա հարգանք, սեր՝ ինչպես աշխատանքային ընկերների, այնպես էլ կոլտնտեսականների կողմից: Հետո նրան վստահեցին նախ բանջարաբուծական, ապա դաշտավարական բրիգադի ղեկավարությունը: Երեսուն տարի շարունակ Արշալույսը աշխատանքային քննություն է բռնում:

Հիմնականում վերընթաց է եղել նրա ուղին:

Նշենք, որ Արշալույսի ղեկավարած N 3 դաշտավարական բրիգադը հաղթող է ճանաչվել իններորդ և տասներորդ հնգամյակների բոլոր տարիներին ծավալված մրցության մեջ, հնգամյա առաջադրանքները կատարել չորսական տարում:

Բրիգադի երկրագործները նոր եռանդով աշխատեցին նաև նոր հնգամյակի անցած երկու տարում՝ ՍՍՀՄ կազմավորման հոբելյանական տարում հացահատիկայիններին մեկ հեկտարից 23-ի փոխարեն ստացան 33 ցենտներ բերք, կարտոֆիլի յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունը 160-ի դիմաց հասցրին 223 ցենտների, միամյա և բազմամյա խոտաբույսերի հեկտարից համապատասխանաբար ապահովեցին 45 և 50 ցենտներ միջին բերք:

Բազմավաստակ բրիգադավարը միշտ գործել է խղճի թելադրանքով և հենց խղճին է պարտական աշխատանքային բերումների համար, որոնց շնորհիվ ընդունվել է ՍՄԿԿ շարքերը, տարիներ շարունակ ղեկավարել կոլտնտեսային կուսակազմակերպությունը, ընտրվել գյուղական սովետի դեպուտատ, կոլտնտվարչության անդամ, այժմ էլ կուսկոմիտեի, կոլտնտվարչության անդամ է, ղեկավարում է ժողվերահսկողության կոմիտեի աշխատանքը: Խղճին է պարտական, որ արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի,

պարգևատրվել մեդալներով, սոցմրցության հաղթողի կրծքանշաններով, պատվոգրերով:

Հիմա Արագվայում, թեթև ձյան ծածկոցի տակ, նիրհում է հողը, սակայն հանգիստ չեն բրիգադավարն ու բրիգադի անդամները, զբաղված են հնգամյակի առանցքային տարվա բերքի հոգսերով: Նրանց նպատակն է գարնանացանը կատարել աշխատանքային 10-12 օրում, հեկտարից ստանալ 30 ցենտներ հացահատիկ, 240 ցենտներ կարտոֆիլ:

5 մարտի

ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿԸ [Միսակ Տաշչյան]

Սովորական ու պարզ կենսագրություն ունի Միսակ Տաշչյանը: Ախալքալաքի շրջանի բարձրալեռ Օլավերդ գյուղում է ծնվել նա: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, ապա, գերազանց գնահատականներով ավարտելով Լենինականի ռադիոտեխնիկումը, զորակոչվել է բանակ: Բանակային կյանքը հոգեպես ու ֆիզիկապես կոփել է նրան, դարձրել գործիմաց, տոկուն:

Մեկուկես տարի է, ինչ Տաշչյանը ծառայում է հայրենիքին: Այդ ընթացքում ստորաբաժանման հրամանատարությունը մի քանի անգամ շնորհակալական նամակ է ուղարկել նրա ծնողներին Ալչալույս և Հասմիկ Տաշչյաններին: Վերջին նամակում, մասնավորապես, կարդում ենք.

«Հարգելի ծնողներ. այն զորամասի հրամանատարությունը, որտեղ ծառայում է կրտսեր սերժանտ, արդեն ՍՄԿԿ անդամ ձեր որդին, ի սրտե շնորհակալություն է հայտնում ձեզ նման հիանալի զավակ ու հայրենասեր դաստիարակելու համար: Միսակը մարտական և քաղաքական իր բարձր պատրաստությամբ արժանացել է բոլորի հարգանքին, մեծ հեղինակություն է վայելում զորամասի զինվորների ու սպաների, կոմունիստների ու կոմերիտականների շրջանում:

Դուք կարող եք հպարտանալ ձեր որդով»:

Նամակը ուրախություն պարգևեց ծնողներին: Նրանք իմացան, որ իրենց որդին դարձել է Լենինի մեծ կուսակցության անդամ: Ուրախությունն օրինական է:

10 մարտի

ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ ՀՈՒՍԱԴՐՈՒՄ ԵՆ

Ախալքալաքի շրջանում կազմակերպված սկսվեց կերի կուտակումը և այն ընթանում է արագ տեմպերով:

Նախատեսված է կուտակել 138 հազար տոննա կեր, այդ թվում 46 հազար տոննա խոտ, 20 հազար տոննա սենաժ, 33 հազար տոննա սիլոս և այլ կերեր:

Առ 1-ը օգոստոսի պատրաստվել է 24.380 տոննա սենաժ՝ պլանից 3.890 տոննա ավելի, և 9.121 տոննա սիլոս: Կերի սիլոսացումը առաջիկայում շարունակվելու է արևածաղկի հաշվին, որի առաջադրանքը նույնպես կգերակատարվի:

Մի շարք տնտեսություններում աշխատանքներն ընթանում են առավել արագ տեմպերով: Այսպես, մի քանի օրում Կարզախի սովխոզում հնձվել է բազմամյա և միամյա խոտաբույսերի ավելի քան 400 հեկտար, պատրաստվել են 1.050 տոննա սենաժ և 1.730 տոննա սիլոս:

- Փարթամորեն աճած կանաչ զանգվածի հնձի, տեղափոխման, խրամատավորման առաջամարտիկները կապալային եղանակով աշխատող նորաստեղծ բրիգադների մեխանիզատորներն են,- ասում է սովխոզի դիրեկտոր Մ. Թորոսյանը:- Հմուտ մեխանիզատորներ Վարազդատ Ցիդանյանի, Մելսիկ Բրոյանի, Արտաշես Գուլոյանի և Արշալույս Կարապետյանի ղեկավարած բրիգադները, շարունակելով կազմակերպված աշխատանքի օրինակ ցույց տալ, ձեռնամուխ են եղել խոտի տեղափոխման, դեղավորման, եահնձյա վարի աշխատանքներին:

Կարևոր կամպանիայի առաջին իսկ օրերից Արագվայի կոլտնտեսությունում տիրում էր մոբիլիզացիոն վիճակ: Տնտեսությունը շրջանում առաջիններից էր, որը գնկուցեց 645 տոննա սենաժի և 585 տոննա սիլոսի պատրաստման տարեկան առաջադրանքը գերակատարելու մասին: Կերի կուտակման աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցույց տալիս տնտեսության շուրջ 300 կոլտնտեսականներ, 20 մեխանիզատորներ, գործի են դրվել սիլոսահավաք երկու կոմբայն, տրակտորաքարշ 4 հնձիչ, նույնքան խոտ հավաքող ագրեգատ, անհրաժեշտ փոխադրամիջոցներ: Բարձր արդյունքներ են գրանցվում մեխանիզատորներ Ժորա Արոյանի, Արարատ Բուրդուղլյանի, Վանիկ Արոյանի, Մխոուշ Յայլախանյանի և ուրիշների անունների դիմաց: Համերաշխ աշխատանքով աչքի է ընկնում 30 հոգուց բաղկացած գերանդիավորների բրիգադը, որը հնձում է ճամփեզրերի, թմբերի, ոչ մեքենահարմար այլ տարածությունների խոտը:

Լավագույն աշխատանքի օրինակ են ցույց տալիս Դիլիսկայի, Բուռնաշեթի, Օրջայի, Զունչխայի, Ղազոլարի կոլտնտեսությունների, Զակի, Կարտիկամի սովխոզների, Խոսրովայի կոլտնտեսություն-համալիրի և ուրիշ տնտեսությունների կեր հայթայթողները:

Կերի կուտակումը շարունակվում է: Շրջանի աշխատավորները, գործունեության մարտական ծրագրին համալրելով ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի որոշումները, ձգտում են հանրային հոտը ապահովել լիարժեք և առատ կերապաշարով, պատվով կատարել պարենային ծրագրով առաջադրված խնդիրները:

6 օգոստոսի

ԿԱՆ ՆԱԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր ուսումնական տարին օրինակելիորեն սկսելու համար լուրջ աշխատանք է կատարվել Բոգդանովկայի շրջանում:

Զգալիորեն հարստացել է դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների ուսումնանյութական բազան: Ձեռք է բերված 50 հազար ռուբլու գույք ու սարքավորանք: Նոր ուսումնական տարում I-X դասարանների բոլոր աշակերտները կստանան անվճար դասագրքեր: Արդեն ստացվել է դասագրքերի 90 տոկոսը և բաշխվել դպրոցներին:

Շրջանում լայն թափ է ստացել դպրոցաշինությունը: Վերջին տասնամյակում կառուցվել և շահագործման է հանձնվել 8 դպրոցական շենք: Սեպտեմբերի 1-ից Բոգդանովկա քաղաքում շարք կմտնի 624 աշակերտական տեղով ռուսական միջնակարգ դպրոցի շենքը:

Շրջանի 15 դպրոցներում անցել են մեկհերթյա պարապմունքի: Գանձայի N2, Հեշտիայի N1, Օրոջալարի, Փոքր Արագյալի, Մամզարայի, Ուչմանայի, Տամբովկայի և այլ դպրոցներում ուսուցումը տարվելու է կաբինետային համակարգով:

Շատ բան է արվում սովորողների աշխատանքային դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը բարելավելու ուղղությամբ: Անցյալ ուսումնական տարում միջնակարգ դպրոցների 470 շրջանավարտներ ստացան տրակտորիստի, դաշտավար-մեխանիզատորի վկայականներ: Նրանցից շատերն աշխատանքի են անցել կոլտնտեսություններում ու սովխոզներում:

Զգալի աշխուժացում է նկատվում դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Այս ուղղությամբ, մասնավորապես, զգալի աշխատանք են կատարում Բոգդանովկայի հայկական և ռուսական, Գորելովկայի, Հեշտիայի, Մեծ Գոնդուրայի, Փոքր Խանչալի, Դիլիֆի միջնակարգ դպրոցները:

Սակայն պետք է ասել, որ նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներում կան նաև լուրջ թերություններ: Անցած ուսումնական տարում դպրոցներից մի քանիսը ուսումնական տարին փակեցին ուսումնադաստիարակչական աշխատանքում տեղ գտած թերություններով: Մի շարք դպրոցներ ապահովված չէին ռուսաց և օտար լեզուների, պատմության, աշխարհագրության, աշխատանքի ուսուցման, ֆիզկուլտուրայի որակյալ դասատուներով: Նշված առանձին առարկաներ Գանձայի N 1, N 2, Թորիայի,

Մեծ Արագյալի, Փոքր Խանչալի, Սաթխայի և գյուղական այլ դպրոցներում դասավանդում էին ոչ մասնագետ ուսուցիչներ:

Դպրոցականներին ապագա աշխատանքային գործունեության պատրաստելու, նրանց մեջ գործնական ունակություններ զարգացնելու նպատակին են ծառայում ուսումնա-փորձնական հողամասերը: Սակայն, չգիտես ինչու, այս կարևոր հարցը շրջանում զրեթե հետին պլան է մղված: Շրջանի դպրոցների կեսից ավելին ապահովված չէ անհրաժեշտ հողամասերով:

Դեռևս թույլ է պայքարը երկտարեցիության և մաղումների դեմ: Անցած ուսումնական տարում զանազան պատճառներով դպրոցներից մաղվել են 140 աշակերտ, որոնցից 55-ը՝ IX և X դասարանցիներ էին կազմում հատկապես Փոկայի, Հեչտիայի N2 և այլ դպրոցներում:

Շրջանի դպրոցներում գոյություն ունեցող այս և այլ թերությունները պետք է վերացվեն ամենակարճ ժամանակամիջոցում:

27 օգոստոսի

ՆՎԻՐՎԱԾ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

Ախալքալաքի մշակույթի տունը կրկին տոնական տեսք էր ընդունել: Ավանդույթ դարձած ժողովրդական ինքնագործունեության շրջանային հերթական ստուգատեսին մասնակցելու իրավունք ստացած ավելի քան 40 գյուղերի երգեցիկ խմբեր, նվագախմբեր, ինչպես նաև բազմաթիվ անհատ կատարողներ էին հավաքվել այստեղ:

Երաժշտական այդ խոշոր միջոցառումը նվիրված էր Գեորգիևակի տրակտատի պանծալի 200-ամյակին:

Բեմի վրա է Դիլիսկա գյուղի կուլտուրայի տան (դիրեկտոր՝ Վ. Ղաթրջյան) ինքնագործ խումբը Սիրանուշ Գաբրիելյանի ղեկավարությամբ: Դպրոցական Մանիկ Գաբրիելյանը արտասանում է Ի. Կաչպուրովի «24-ը հուլիսի 1783 թ.» բանաստեղծությունը, կոլտնտեսուհի Հայաստան Գոգորյանը երգում է Խ. Ավետիսյանի «Իմ եղեգն» երգը: Պարող աղջիկների և տղաների խումբը հաջողությամբ կատարում է «Սասունցիների պարը», «Լենինական» և «Հայկական ժողովրդական պարերի շարան» պարերը:

Ելույթ է ունենում Կոթելիա գյուղի ակումբին կից երգի-պարի ինքնագործ խումբը (պարուսույց՝ Գուլքանի Անանիաշվիլի): Ցիցինո Անանիաշվիլին, Մանանա Մեսրևելին, Ռուսիկո Ալելաշվիլին, Մայա Խուցիշվիլին, Ռոզա Բիբլուրիձեն վարպետությամբ կատարեցին «Բալթա մոխեուրի» պարը: Հանդիսականների ծափերի ուղեկցությամբ 14 հոգուց բաղկացած տղաների և աղջիկների խումբը կատարեց «Աճարուլի» ժողովրդական պարը: Ջերմորեն ընդունվեց «Մթիուլուրի» պարը Մ. Ղավրելիշվիլու և Ի. Բերիձեի կատարմամբ:

Ստուգատեսում կրկին հիանալի հանդես եկավ Ալաստանի կուլտուրայի տան խումբը (դեղմասվար Թագուհի Դավթյան): Ներկաներին մեծ բավականություն պատճառեց միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, ասմունքող Մարիամ Ղարաղաշյանի ելույթը, որը հիանալի արտասանեց Պ. Սևակի «Հայաստան» բանաստեղծությունը:

Տպավորիչ, գունեղ ու ինքնատիպ էին Խուլգումոյի գյուղական ակումբի (ղեկավար՝ Սիրանուշ Մուրադյան) երգի ու պարի ինքնագործ խմբի կատարած համարները: Կոյտնտեսուհիներ Թամարա Թոփալյանը, Շուշանիկ Եփրիկյանը, Սաիդա Մանվելյանը հուզիչ կերպով են կատարում տրակտատին նվիրված վրացական երգը: Աղջիկների կատարմամբ արտահայտիչ հնչեց «Ռոսսիա» երգ-պարը:

Մեծ հաջողությամբ անցան Գոգաշենի (ակումբի վարիչ Օլինկա Նաթենաձե), Խանդոյի (Վաղինակ Թորոսյան), Բարալեթի (Վոլոդյա Բաքարյան), Ջամդուրայի (Սաթենիկ Հովհաննիսյան), Սուլդայի (Իրինա Այվազյան), Բուռնաշեթի (Գևորգ Ավետիսյան) ակումբներին կից գործող ինքնագործ կոլեկտիվների ելույթները:

Երաժշտական տոնին իրենց մասնակցությունը բերեցին շրջանային կուլտուրայի տանը կից գործող մեծահասակների «Ջավախք» (ղեկավարներ՝ Գիվի Վարդապետով և Վալերի Ստեփանով) վոկալ-գործիքային անսամբլները:

Երգահանդեսի եզրափակիչ մասում բեմահարթակը տրամադրվեց հանրապետական օլիմպիադայի մրցանակակիր, երգի-պարի (գեղարվեստական ղեկավար՝ Յու. Սարիբեկյան, պարուսույց ՀՍՍՀ վաստակավոր արտիստ՝ Ա. Շաբոյան, խմբավար՝ Ա. Մելքոնյան) և ժողգործիքների (Գ. Վարդապետով, Գ. Սողոյան) անսամբլներին, որոնք գեղարվեստական մեծ հաճույք պատճառեցին հանդիսատեսին:

Ժողովրդական ստեղծագործության կոլեկտիվների ելույթները բարձր գնահատվեցին հատուկ հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ մտնում էին Վրացական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության ներկայացուցիչներ, կոմպոզիտորներ Գ. Ցիցիշվիլին, Է. Լոնդարիձեն և ՎՍՍՀ վաստակավոր արտիստ Մ. Ռաքվիաշվիլին:

13 հոկտեմբերի

ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ԿԱՊԱԼԻՆ՝ ԼԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Փորձը ցույց է տվել, որ արտադրության կազմակերպման ու խթանման առաջադիմական ձևը կոլեկտիվ կապալն է: Այդ մեթոդի արմատավորման ուղղությամբ Ախալքալաքի շրջանում առաջին քայլերն են արվում: Ներկայումս կոլեկտիվ կապալով շրջանում աշխատում է 23 բրիգադ, դրանցում հաշվվում է 1.834 մարդ, այդ թվում՝ 134-ը մեխանիզատորներ են: Բրիգադներին ամրացված է ավելի քան 10 հազար հեկտար հողատարածություն, որից 8.500-ը վարելահող է:

Բրիգադային կապալը լայն ճանապարհ է դուրս բերվել Կարզախի մսակաթնային սովխոզում: Նախկին դաշտավարական 8 բրիգադների փոխարեն այս տարվա հունիսին կազմակերպված 4 մեխանիզատորա-դաշտավարական բրիգադները ձեռք են բերել որոշակի հաջողություններ: Բրիգադները (ղեկավարներ Վ. Ֆիդանյան, Մ. Բրսոյան, Ա. Գուլոյան, Ա. Կարապետյան) աշխատանքային 12 օրում (անցած տարվա 25-ի փոխարեն) ավարտեցին կերերի կուտակումը, հացահատիկայինների բերքահավաքը: Կուտակվեց 3.000 տոննա խոտ, 470 տոննա ծղոտ, պատրաստվեց ավելի քան 4.000 տոննա սիլոս ու սենաժ:

Սովխոզի դիրեկցիան և կուսկոմիտեն ամեն կերպ ձգտում են բարձրացնել մեխանիզատորների պատասխանատվությունը, ավելացնել մեքենաների զբաղվածությունը, մեծացնել համակարգը: Վերջերս ձեռք բերվեցին տարբեր մակնիշի 6 տրակտոր, հացահատիկային և սիլոսահավաք կոմբայներ, կցվող մեքենաներ ու տարբեր: Հարուստ տեխնիկան հնարավորություն ընձեռեց կարճ ժամկետներում և ագրոտեխնիկական բարձր մակարդակով կատարելու սառնավարն ու աշնանացանը: Տնտեսությունում 1.200 հեկտար ցրտահերկ և 120 հեկտար աշնանացան ցորենի ցանք է կատարվել, դաշտ է փոխադրված 2.300 տոննա օրգանական պարարտանյութ:

Տնտեսության դիրեկտոր Մ. Թորոսյանը գրվատանքով է խոսում մեխանիզատորներ Վ. Այվազյանի, Վ. և Պ. Բրսոյանների, Ս. և Շ. Կարապետյանների, Վ. Նազարեթյանի և ուրիշների մասին, որոնք արժանի ավանդ են ներդրել տնտեսության հաջողություններում:

Կարզախցիների օրինակով են աշխատում Խուլգումոյի դաշտավարական-մեխանիզատորական երկու բրիգադները: Նրանցից յուրաքանչյուրը ինքնուրույն տնտեսաշվարկային միավոր է՝ անհրաժեշտ տեխնիկայով, մեխանիզատորական կադրերով: Լավ աշխատանքի շնորհիվ, բրիգադներում (ղեկավարներ՝ երկուսն էլ Ստեփան Թովալյան) զգալիորեն բարձրացել է տեխնիկայի արտադրողականությունը, մեխանիզմների օգտագործման գործակիցը: Կոլտնտե-

սությունում կերի կուտակման առաջադրանքը իրացվել է 130 տոկոսով, գերազանցվել են հացահատիկայինների, կերային կուլտուրաների բերքատվության պլան-առաջադրանքները:

Սակայն պետք է նշել, որ կոլտնտեսությունում ցածր է կարտոֆիլի բերքատվությունը: Հեկտարի բերքը 110-120 ցենտներից չի անցնում: Դրա պատճառներից մեկը վատորակ սերմացուով ցանք կատարելն է, անորակ մշակումը: Այդ հարցը լուրջ քննության առարկա դարձավ բրիգադային խորհրդակցությունում: Առաջիկա գարնանը աշխատանքային 8 օրում կատարվելու է կարտոֆիլի ցանքը մեքենայական եղանակով, բարձրորակ սերմացուով: Որոշվել է հնդամյակի չորրորդ տարում կարտոֆիլի հեկտարի բերքատվությունն ավելացնել 40, հացահատիկինը՝ 4, խոտաբույսերինը՝ 10 ցենտներով: Կոլտնտվարչությունն իր հերթին որոշել է բրիգադներին ժամանակին տրամադրել անհրաժեշտ միջոցներ և պայմաններ ստեղծել առաջադրված խնդրի հաջող լուծման համար, վարձատրությունը կատարել ըստ արտադրված արտադրանքի՝ համաձայնեցված վարձաչափերով:

Կապալային հիմունքներով աշխատող բրիգադների աշխատանքի առաջին արդյունքները առկա են նաև Սուլդայի մսակթնային սովխոզի համանուն, Ալաստանի սովխոզի Կոկիայի, Հոկամի սովխոզի Քարցեփի բաժանմունքներում:

Հաշվի առնելով կոլեկտիվ կապալի մեծ առավելությունները և այդ ձևով շրջանում աշխատողների փորձը, շրջանի ագրոարդյունաբերական միավորման ցուցումով, եկող տարի այդպիսի 30 բրիգադ կկազմակերպվի մյուս տնտեսություններում, իսկ 13 բրիգադ անասնապահության բնագավառում ձևանմուխ կլինի կապալային հիմունքներով մատղաշի աճեցման և բման աշխատանքներին:

5 հունվարի

ԱՇԽՈՒԺ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՄԵԹՈԴՈՎ

Բոգդանովկայի գլխավորող պանրայուղգործարանի սկզբնական կուսակազմակերպությանն առընթեր գործում է քաղաքատնտեսության հիմունքներն ուսումնասիրող դպրոց, ուր ընդգրկված են 18 կոմունիստներ ու անկուսակցական ակտիվիստներ:

Գործարանի կուսակազմակերպությունը (քարտուղար՝ Ռ. Ղազարյան) հետևողական աշխատանք է կատարում ունկնդիրների տնտեսական գիտելիքները պատշաճ մակարդակի բարձրացնելու գործում: Պրոպագանդիստ, գործարանի դիրեկտոր Օ. Գինոսյանը դպրոցի պարապմունքներն անց է կացնում աշխույժ զրույցի մեթոդով, ձգտելով ամեն կերպ բարձրացնել ունկնդիրների ակտիվությունը:

Ակտիվ մթնոլորտում անցավ նաև քաղդպրոցի եզրափակիչ պարապմունքը: Սկսելով այն, պրոպագանդիստն ունկնդիրներին առաջադրեց մի շարք հանգուցային հարցեր: Բոլորը ցանկություն հայտնեցին արտահայտվել առաջադրված հարցերի շուրջը: Գործա-

բանի ինժեներ-մեխանիկ Լ. Վարդանյանը, խոսելով կապիտալիզմի օրոք արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր-կապիտալիստական ձևի միջև եղած հակասության մասին, պատմում էր, որ այդ հակամարտությունները մեծ սրության են հասել:

Ո՞րն է կապիտալիստական շահագործման էությունը, ինչո՞ւ իմպերիալիզմը մեռնող փոքրամացիա է, ինչո՞ւմն է արտահայտվում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, որո՞նք են նրա փուլերը. այս և այլ հարցերի սպառիչ պատասխան են տալիս ունկնդիրներ Զ. Նորսոյանը, Ռ. Ղազարյանը, Շ. Սահակյանը, Ա. Մանվելյանը, Է. Ստամբոլցյանը, Ս. Այվազյանը, Դ. Մանվելյանը և ուրիշներ:

Վերջում պրոպագանդիստը հանրագումարեց պարապմունքը: Ունկնդիրները որոշեցին հաջորդ ուսումնական տարում ուսումնասիրել քաղաքատնտեսության սոցիալիզմի բաժինը:

5 Հունիսի

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺԻՇԿԸ

Չի դադարում բուժաշխատողների մասին նամակների հոսքը խմբագրություն: Դրանցից են, մասնավորապես, Ախալքալաքի շրջանից Հ. Ստամբոլցյանի թղթակցությունը Դաղեշի բուժկետի վարիչ Հրանուշ Վարդանյանի մասին: Ջերմությամբ է շնչում Վ. Մանուկյանի ինֆորմացիան, ուր նկարագրվում է շրջկենտրոնի հոսպիտալի գինեկոլոգ Զոյա Ռայիսյանի աշխատանքը: Սրտի խոսք է ասված Ախալցխեի և Բոգդանովկայի շրջանային հիվանդանոցների վիրաբույժներ Մկրտիչ Բանանյանի մասին այդ հիվանդանոցներում բուժված Գ. Կիրակոսյանի ու Գ. Ենգիբարյանի նամակներում:

Ցավոք, հնարավոր չէ ոչ միայն տպագրել, այլև մեկ առ մեկ թվարկել բոլոր նման թղթակցությունները: Ուստի ստորև տպագրում ենք դրանցից մեկը:

***

(Սեյրան Սեյրանյան)

1964 թվականին Սեյրանը, բժշկի դերազանց գնահատականներով դիպլոմը ձեռքին, զորակոչվեց խորհրդային բանակի շարքերը: Հայրենիքի նկատմամբ սրբազան պարտքը կատարելուց հետո նա կրկին վերադարձավ Երևան, աշխատանքի անցավ արյան փոխներարկման ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

Բայց երիտասարդին գյուղն էր ձգում, հայրենի Ջավախքը, ուր բժշկի կարիք էր զգացվում: Ընդառաջեցին: Եվ նա մեկնեց շրջանում «ամենանեղ» համարվող տեղամասը հայրենի Սուլդա գյուղը:

Սկսվեցին բժիշկ Սեյրան Սեյրանյանի գործունեության բուռն տարիները: Հեշտ չէ աշխատել գյուղական տեղամասում: Ամեն ինչ հարկավոր էր անել ինքնուրույն, արագ կողմնորոշվել,

ստեղծագործարար մոտենալ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, հաճախակի լինել ֆերմաներում, բրիգադներում, գյուղացիների բնակարաններում ամենուրեք, ուր մարդիկ զգում էին նրա կարիքը:

Երբ հարցնում ես իր մասին, գրեթե ոչինչ չի ասում, բայց ոգևորությամբ պատմում է երկար տարիների փորձ ունեցող բուժքույրեր Մանուշակ Ղազարյանի, Ասյա Միքայելյանի և ուրիշների մասին:

Բարձր է գնահատվում կոմունիստ Սեյրան Արտավազդի Սեյրանյանի աշխատանքը: Հանրապետության առողջապահության մինիստրությունը վերջերս նրան պարգևատրեց «Առողջապահության գերազանցիկ» կրծքանշանով: Նա բազմիցս արժանացել է շրջանի բուժմիավորման խրախուսանքին, պարգևատրվել կուսակցության շրջկոմի և շրջսովետի պատվոգրերով:

Կոմունիստ Ս. Սեյրանյանը մասնագիտական աշխատանքը զուգակցում է հասարակական գործունեության հետ: Նա բուժաշխատողների արհմիության շրջկոմի նախագահության անդամ է, սիրով կատարում է գյուղխորհրդի դեպուտատի, ժողովրդական դրուժիննիկի պարտականությունները: Եվ այս ամենի համար է, որ բոլորը միշտ սիրով ու ակնածանքով են արտասանում հարգված բժշկի անունը: Իսկ դա նրա աշխատանքը գնահատելու ամենալավ չափանիշն է ու վկայությունը:

ԴԵՊԻ ԳԱՆՁԱ, ՏԵՐՅԱՆԻ ՄՈՏ

Մենակության մեջ գիշերում անքուն
Հիշում եմ կրկին դաշտերը անծայր,
Արտերի ծովը ոսկեղեն, ծփուն –
Երեկոների հանգիստը պայծառ...

Գանձային հարող անծայր դաշտը նորից լցվել էր մարդկային հոծ բազմությամբ: Հազարավոր մարդիկ, ամեն տարվա պես, եկել էին Գանձա, եկել Տերյանի մոտ...

Հուլիսի 22-ն է, կեսօր:

Բեմահարթակ են բարձրանում հանդիսության պատվավոր հյուրերը: Տերյանական պոեզիայի ավանդական օրվան նվիրված միտինգը բացում է Վրաստանի կոմկուսի Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար Վասիլ Քոչոյանը: Նա ջերմ շնորհակալություն է հայտնում հանդիսության հյուրերին և բազմահազար հանդիսատեսներին իրենց մեծ հայրենակցի հիշատակը հարգելու և Գանձա ժամանելու համար:

Ապա սրտի ջերմ ու սրտաբուխ խոսքեր են ասում Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, գրականագետ Աբրամ Գրիգորյանը, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ Բենիկ Սեյրանյանը, Օրենբուրգից ժամանած

տերյանական, պրոֆեսոր Լեոնիդ Բոլշակովը, բանաստեղծ-թարգմանիչներ Գիվի Շահնազարն ու Զեզվա Մեղուլաշվիլին, մեխանիկատոր Վլադիմիր Կուզնեցովը և ուսուցչուհի Գյուլնարա Բոբուլաշվիլին և ուրիշներ:

Միտինգն ավարտված է: Բայց դաշտում թևածում են երգն ու երաժշտությունը...

Մեր խնդրանքով, պոեզիայի տերյանական օրերից իրենց տպավորություններն են պատմում.

Վրաստանի կոմկուսի Բոդդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար.

- Այսօր 18-րդ անգամ անցկացվեց պոեզիայի տերյանական օրը: Դա, հիրավի, բարեկամության և ինտերնացիոնալիզմի տոն է, որն արժանի տեղ է գտել մեր Հանրապետության ժողովրդական տոների շարքում:

Հիշում եմ, այս տոնը հիմնադրվեց որպես շրջանային միջոցառում:

Այժմ նրա մասշտաբները դուրս են եկել անգամ Վրաստանի սահմաններից, ինչպես որ մեծ բանաստեղծի հայրենակիցների ստեղծարար աշխատանքի արդյունքների համբավը:

Շատ է փոխվել Գանձան (Բոդդանովկայի շրջանն ընդհանրապես): Սակայն նա է՛լ ավելի գեղեցիկ ու վերափոխված կլինի եկող տարի հուլիսին, երբ կնշվի մեծն Տերյանի 100-ամյակը: Այդ ժամանակ հյուրերին կընդունեն Գանձայի նորակառույց 600-տեղանոց մշակույթի տունը, հիմնովին վերակառուցված Տերյանի տուն-թանգարանը, սոցիալ-կենցաղային նշանակության նոր օբյեկտներ:

Գանձացիները, բոլոր բոդդանովկացիները սիրով կընդունեն իրենց հյուրերին:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

- Արդեն քանի՛երորդ անգամ վրաց օրհնյալ հողում անց է կացվում պոեզիայի տերյանական օրը:

Ավանդական է դարձել հայ պոեզիայի մեկ այլ տոն ևս՝ Վարդատոնը:

Մի ժողովրդի պոեզիայի երկո՛ւ ավանդական տոն՝ դրկից ժողովրդի հողում:

Մի՞թե դա հոյակապ չէ: Մի՞թե դա չէ հիրավի եղբայրությունը, հիրավի ինտերնացիոնալիզմը: Մի՞թե դա չէ մեր երկու հնադարյան ժողովուրդների և նրանց մշակույթների բարեկամության ու փոխմերձեցման վկայությունը:

Աքանչելի է այս տոնը: Շնորհակալություն Վրաստանի կոմկուսի Կենտկոմին և կառավարությանը, Հանրապետության՝ Հայաստանում շատ սիրված ղեկավարությանը, Վրաստանի գրողների միությանը, Բոդդանովկայի կուսշրջկոմին, որ այսպես հարգում են հայ մեծ բանաստեղծի հիշատակը:

Լ. ԲՈԼՇԱԿՈՎ

Պրոֆեսոր

- Երրորդ անգամ եմ հաճելի հնարավորություն ունենում ներկա լինելու պոեզիայի այս հիասքանչ տոնին: Տերյանի միջոցով ես հարազատացա ողջ Ջավախքին և ամեն պատեհ առիթով ուրախությամբ եմ գալիս Բոգդանովկա:

Իմ մեծ սիրո համեստ վկայությունն է «Առաջինները» գիրքը, որ լույս կտեսնի շուտով: Այն բոգդանովկացի առաջին կոմունիստին Վահան Տերյանին ու նրա հայրենիքի այսօրվան ու այսօրվա կոմունիստ-հայրենակիցներին նվիրված մի երկ է, որ լույս կտեսնի 100.000 օրինակ տպաքանակով:

Եվ, վերջապես, այս տպավորիչ տոնը դրդեց գրելու «Անմահությանը նախորդած շաբաթ» պատմվածքը Վահան Տերյանի կյանքի վերջին օրերին մասին:

Օրենբուրգում այս տարվա մայիսի 8-ին բացվեց Տերյանի անվան փառքի թանգարանը, որի ցուցանմուշները պատմում են նաև այս տոնակատարության մասին:

Է. ԳԱԼԱՎԱՐՅԱՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ

- Հիանալի միջոցառում է: Այն մեր ժողովուրդների բարեկամության ևս մի վկայությունն է, ինտերնացիոնալիզմի ևս մի խորհրդանիշը:

Հազարավոր մարդիկ են հավաքվում Գանձայում: Դա Տերյանի պոեզիայի, ինչպես նաև նրա հարազատ Բոգդանովկայի նկատմամբ մարդկանց սիրո վկայությունն է:

Զ. ՄԵԴՈՒԼԱՇՎԻԼԻ

Բանաստեղծ-թարգմանիչ

- Երջանիկ եմ, որ մի անգամ էլ առիթ ունեցա մասնակցելու պոեզիայի տերյանական օրվան: Տերյանի պոեզիան ինքնին բարեկամության պոեզիա է:

Այս տոնը, ինչպես որ Տերյանի պոեզիան է, է՛լ ավելի է մերձեցնում, բարեկամացնում մարդկանց:

24 հունիսի

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՌԵՎՍ ԿԱՆ

Տասներորդ հնգամյակի վերջերին էր, որ Ախալքալաքում, դեպի օդանավակայան տանող ճանապարհի եզրին սկսվեց ճոպանուղիների սարքավորանքի գործարանի շինարարությունը:

Այդ ձեռնարկությունը, որը կառուցվում է ՍՍՀՄ ծանր և տրանսպորտային մեքենաշինության մինիստրության պատվերով, առանձնապես է աչքի ընկնելու իր տեխնոլոգիայով, արտադրական պրոցեսների մեքենայացմամբ ու ավտոմատացմամբ և, վերջապես, իր արտադրանքով, որի նկատմամբ անչափ մեծ է պահանջարկը հատկապես մեր Անդրկովկասի լեռնոտ ռելիեֆի պայմաններում:

Սակայն ճիշտ չի լինի ենթադրել, թե գործարանի արտադրանքի սպառման տարածքը լինելու է միայն անդրկովկասյան հան-

բապետությունների սահմաններում: Ինչպես պատմում է ձեռնարկության դիրեկտորի պաշտոնակատար Գ. Բերնատոսյանը, գործարանի արտադրանքը նախատեսվում է առաքել ոչ միայն Սովետական Միության տարբեր քաղաքներ, այլև՝ արտասահման:

Ինքնին պարզ է, որ այդ բնույթի խոշոր արդյունաբերական ձեռնարկության ծնունդն Ախալքալաքում արտակարգ դեր ու նշանակություն է ունենալու լեռնային ռեգիոնի բնակչության, հատկապես՝ երիտասարդության կյանքում: Հենց դրանով պետք է բացատրել այն առանձնակի հետաքրքրությունն ու անհամբեր սպասումները, որ այդ օբյեկտի նկատմամբ ցուցաբերում են տեղի կուսակցական, սովետական, կոմերիտական մարմինները:

Գործարանի շինարարության կառավարման ու վերահսկողության գործը կարգավորելու նպատակով հենց առաջին իսկ օրերից ստեղծվեց հատուկ շտաբ, որի ղեկավարությունը հանձնվեց կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովին: Կառույցը բանվորական ուժով ապահովելու գործում նկատելի աշխատանք կատարեցին շրջանային սովետը, կոմերիտմիության շրջկոմը:

Ձեռնարկության շինարարությունը, որի համար նախատեսված է ավելի քան 23 միլիոն ռուբլի, իրականացնում է Վրացական ՍՍՀ շինարարության մինիստրության Գորիի N 9 տրեստի N 121 ՇՄՇ-ն: Ձնայած նախագծով կառույցը պետք է գործարկվեր դեռ 1983 թվականին, սակայն մինչև օրս նույնիսկ շինարակական աշխատանքները չեն ավարտվել:

Բանն այն է, որ արտադրական շինություններից բացի, այստեղ կառուցվելու են մոտ 15 բնակելի տուն, պոլիկլինիկա, կապի հանդույց, հանրախանութ, պրոֆիլեկտորիում՝ 480 սովորողի համար, մարզահրապարակներ և այլն: Առ այսօր կառուցվել են արտադրական գլխավոր մասնաշենքը, վարչական և կենցաղային մասնաշենքերը, կաթսայանոցը, հրշեջ դեպոյի, ճաշարանի և կոնֆեկտենցդահլիճի, ինչպես նաև կաթսայանոցն քլորատորային և մաքրման շենքերը, որոշ կոմունիկացիաներ:

Կառուցված շինություններում արդեն սկսվել են սարքավորումների մոնտաժման աշխատանքները, գցվում են տեղակայումների հիմքերը:

Շինարարների կոլեկտիվն արդեն ձեռնամուխ է եղել օժանդակ բլոկի, նյութերի երկրորդ խմբի պահեստի, կոմպրեսորային կայանի, ինչպես նաև մաքրման կառույցների՝ ցեխաջրերի տարողությունների հրապարակների ու բլոկի կառուցմանը: Ընթացքի մեջ է նաև գործարանի աշխատողների 60 բնակարանանոց տան շինարարությունը, որը նախատեսվում է բնակեցնել 1985 թվականին: Այստեղ լավ են աշխատում Հովհաննես Գալստյանի, ինչպես նաև Աղվան Այվազյանի բրիգադները, բետոնագործ բանվորուհի Ավդոտյա Ցեղոդորովան, կռունկավար Ժորա Ղազարյանը, մոնտաժագործ Ռոբերտ Խորշիկյանը, էլեկտրագոդող Ժորա Խաչատրյանը և ուրիշներ:

Պատվիրատուի և շինարարների առջև խնդիր է դրվել գործարանի մի շարք կարողություններ շահագործման հանձնել մինչև ընթացիկ տարվա վերջը, այն հաշվով, որպեսզի մոնտաժման համար

անհրաժեշտ ոչ ստանդարտ սարքավորումները պատրաստվեն հենց տեղում: Այդ իսկ նկատառումներով կուսշրջկոմը և շրջգործկոմը արդեն գործուղել են և շարունակում են կառույց գործուղել բանվորական կադրեր, որոնք շինարարությունում որոշ ժամանակ աշխատելուց հետո կուղարկվեն երկրի համանման ձեռնարկություններ՝ անհրաժեշտ փորձ ու հմտություններ ձեռք բերելու և հետանկարում սեփական գործարանում համապատասխան աշխատանքի անցնելու համար:

Գործարանի շինարարության աշխատանքները, անցյալի համեմատությամբ, անտարակույս, նկատելիորեն աշխուժացել են, բայց, ցավոք, դեռևս կան շատ հարցեր, որոնք անհապաղ լուծում են պահանջում: Մինչև օրս, օրինակ, չի կարգավորվել հավաքովի երկաթբետոնե իրերով կառույցը ռիթմիկ կերպով մատակարարելու հարցը. Հենց այստեղ պետք է նշել, որ այդ դետալներն ստացվում են Թբիլիսիի Լիլո ավանից, մինչդեռ շինհրապարակի հենց կողքին է գտնվում Ախալքալաքի երկաթբետոնե իրերի գործարանը, որն իր պատրաստի արտադրանքն ուղարկում է հանդիպական ուղղությամբ Ախալցիխե և այլուր: Հարց է ծագում. արդյո՞ք հնարավոր չէր այդ բաղայի եթե ոչ լրիվ, ապա թեկուզ մասնակի օգտագործումը: Անտարակույս, կարելի էր, և դա ոչ միայն կկարգավորեր մատակարարման ռիթմը, այլև հնարավորություն կտար տնտեսելու բավականին միջոցներ:

Շինարարության ընթացքը արգելակող պատճառներից մեկն էլ N121 ՇՄՇ-ի շինարարական բաղայի նկատելի թուլությունն է, որն արտահայտվում է մեքենայացման փոքր միջոցների՝ բետոնախառնիչների, լուծույթախառնիչների, զոդման տրանսֆորմատորների պակասով: Բացի այդ, եղած մեքենաներն էլ պարապուրդներ շատ են տալիս՝ Ախալքալաքում նորոգման համապատասխան բաղայի, անհրաժեշտ պահեստամասերի բացակայության պատճառով:

Սակայն դժվարությունները շինարարների և մեխանիզատորների համատեղ ջանքերով կարելի է հաղթահարել, եթե Վրացական ՍՍՀ շինարարության մինիստրությունը և նրա Գորիի N 9 տրեստը գործնական օգնություն ցույց տան շինարարներին:

Նախատեսված է, որ շարժական մեքենայացված N 121 շարասյունն այս տարի գործարանի կառուցման գործում պետք է կատարի 1.190 հազար, իսկ բնակարանային շինարարության ասպարեզում 240 հազար ռուբլու աշխատանքներ: Շինարարների կոլեկտիվը լրջորեն է նայում իր անելիքներին և հավատիացնում, որ անթերի կկատարի պլանային այդ պատասխանատու առաջադրանքները:

30 հունիսի

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Ախալքալաքի շրջանի օգոստոսյան խորհրդակցություններում զեկուցումներով հանդես եկան կուսակցության շրջկոմի քարտուղար Է. Ավոյանը և ժողկրթբաժնի վարիչ Հ. Գաբրիելյանը:

Ինչպես զեկուցողները, այնպես էլ ելույթ ունեցողները նշեցին, որ շրջանում լուրջ տեղաշարժեր են կատարվել ժողովրդական կրթության համակարգում: Հաջողությամբ է իրականացվում մատաղ սերնդի ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթությունը, դրական աշխատանք է կատարվում սովորողների աշխատանքային դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Անցած ուսումնական տարում 724 շրջանավարտներ ստացել են մեխանիզատորի, 241-ը՝ ավտովարորդի որակավորում: Դպրոցների 20 աշակերտական բրիգադներ, հարյուրավոր մանկավարժներ, կոլտնտեսությունների և սովխոզների դաշտերում եռանդուն մասնակցություն են ունենում կելի կայուն բազայի ստեղծման, կարտոֆիլի մշակման աշխատանքներին:

Շրջանի 67 դպրոցներում նոր ուսումնական տարում կսովորեն ավելի քան 13 հազար աշակերտներ, որոնց կրթությամբ ու դաստիարակությամբ կզբաղվեն 1.549 մանկավարժներ:

Կոնֆերանսը նշեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման ուղղությամբ թեև առաջընթացը որոշակի է, սակայն անելիքները նույնպես շատ են: Որոշ գյուղերում անհանդուրժելի վիճակ է նոր դպրոցական շենքերի կառուցման ասպարեզում. 32 դպրոցներում դասերը տեղի են ունենում կիսախարխուլ, անբարեկարգ շենքերում, որոշ «դասասենյակներ» առաջիկայում այլևս հնարավոր չէ օգտագործել, 22 դպրոցներում պարապմունքները երկհերթի են: Գումբուրդոյի, Կարտիկամի, Դիլիսկայի, Տուրցխի, Բարալեթի և այլ գյուղերի միջնակարգ դպրոցների նյութատեխնիկական բազան աղքատիկ է, արդյունավետ չեն օգտագործվում տեխնիկական ուսուցման եղած միջոցները:

Ճիշտ է, վերջին տարիներին գործնական քայլեր են կատարվել հայոց և ռուսաց լեզուների դասավանդման և յուրացման մակարդակը բարձրացնելու նպատակով, սակայն դեռևս թերություններ կան: Չհաղթահարված թերություններ կան նաև ֆիզկուլտուրայի դասավանդման գործում:

Կոնֆերանսում նշվեց, որ շրջանի պրոֆտեխուսումնարանների կոմպլեկտավորման գործում անբավարար են օգնում հանրակրթական դպրոցները: Իրենց պարտականություններին մեջ թերանում են հատկապես Լոմատուրցխի, Կոկիայի, Բուղաշենի, Մոդեգամի, Թախչայի և այլ գյուղերի դպրոցները:

Կոնֆերանսում ընդարձակ ելույթ ունեցավ կուսշրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուղարովը:

1 սեպտեմբերի

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱԽՏԱՆԳ ԿԻԿԱԲԻՁԵԻ ՀԵՏ

Նրան բոլորը գիտեն, բոլորի համար ծանոթ ու հարազատ անուն է Վախտանգ Կիկաբիձեն: Ահա թե ինչու ամեն մի հանդիպում անվանի արտիստի հետ տոն է հանդիսատեսի համար: ՎՍՍՀ ժողովրդական արտիստ, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Վախտանգ Կիկաբիձեի Ախալքալաքի մշակույթի տան բեմահարթակ կրկին բարձրանալը (առաջին անգամ Ջավախքի ժողովրդի հետ հանդիպել էր ՍՍՀՄ ժող. արտիստ Մհեր Մկրտչյանի համատեղ այցով) նորից ու նորից լեփ լեցուն դահլիճը փոթորկեց անկեղծ ու վարձատրող ծափերով:

Հեղինակային երեկոն բացեց կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Գ. Շուգարովը, ապա խոսեց արտիստի կոչման, կյանքում նրա տեղի ու դերի, ժողովրդին ու արվեստին անմնացորդ նվիրվելու մասին: Ապա ելույթ ունեցավ «Վրացֆիլմ» կինոստուդիայի ռեժիսոր Զուրաբ Թուլթերիձեն:

Վերջում սիրված արտիստը պատասխանեց արվեստասերների հարցերին, դեպքեր պատմեց իր կյանքից, խոսեց հայ և վրաց ժողովուրդների եղբայրական մեծ բարեկամության մասին:

Ուրախ, ջերմ տրամադրությամբ համակված երեկոն ավարտվեց հյուրի՝ «Աղբյուրները» և «Եղիր առողջ, թանկագինս» միջազգային փառատոնների մրցանակների արժանացած դեղարվեստական կարճամետրաժ կինոնկարների ցուցադրմամբ:

11 սեպտեմբերի

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ախալցիխեի պետական թատրոնի շենքում տեղի ունեցավ կուսակցության և կոմերիտմիության Ախալցիխեի, Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ծալկայի շրջկոմների առաջին քարտուղարների, գաղափարախոսական հարցերով զբաղվող քարտուղարների, պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների աշխատողների, կուսակազմակերպությունների քարտուղարների, գաղափարական հարցերով զբաղվող նրանց տեղակալների, պրոպագանդիստների, արհկազմակերպությունների, տեղկոմների նախագահների, ժողդեպուտատների շրջգործկոմների նախագահների, կուլտուրայի բաժինների վարիչների, հիմնարկ-ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, սովխոզների ղեկավարների, լուսավորության բնագավառի աշխատողների գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցում էին նաև Վրաստանի կոմկուսի Կենտկոմի ապարատի, մի շարք մինիստրությունների պատասխանատու աշխատողներ:

Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի համալսարանի ռեկտոր Շ. Պապիձեն:

«Աշխատավորների ինտերնացիոնալ, հայրենասիրական դաստիարակությունը և կուսակցական կազմակերպությունների խնդիր-

ները՝ ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի որոշումների լույսի ներքո» թեմայով զեկուցեց մարքսիզմ-լենինիզմի համալսարանի փիլիսոփայության ամբիոնի դոցենտ Մ. Մուշկինը: Կուսակցության Ախալցիխեի շրջկոմի առաջին քարտուղար Դ. Կոտետիշվիլու և Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Է. Ավոյանի հարակից զեկուցումների թեման էր «Կուսակցության շրջկոմը և աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության արդյունավետության բարձրացման հարցերը»: Ծալկայի շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ Վ. Գուբրովանովն իր զեկուցումը նվիրեց «Աշխատավորների ինտերնացիոնալ հայրենասիրական դաստիարակությանը և ժողովրդական դեպուտատների սովետների խնդիրները՝ ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան և 1984 թ. ապրիլյան պլենումների որոշումների լույսի ներքո» թեմային:

Նշվեց, որ կոմունիստական կուսակցության և սովետական պետության անդուլ հոգատարության շնորհիվ, մասնավորապես Վրաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության մինիստրների խորհրդի՝ լեռնային շրջանների տնտեսական, սոցիալական, կուլտուրական զարգացումն ապահովելու մասին վերջին տարիներս ընդունած որոշումներից հետո Ախալցիխեի, Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ծալկայի շրջաններում լուծվել են հրատապ շատ պրոբլեմներ:

Բարերար տեղաշարժերը լենինյան ազգային իմաստուն քաղաքականության հաղթանակի, ժողովուրդների բարեկամության և եղբայրության հոյակապ օրինակ են: Այդ նվաճումները միաժամանակ վառ կերպով ցույց են տալիս ռեգիոնի մեջ մտնող շրջանների՝ կողք-կողքի ապրող 22 ազգերի և ազգություններին պատկանող ավելի քան 170 հազար աշխատավորների ջերմ հայրենասիրությունը, անսահման նվիրվածությունը ժողովուրդների բարեկամությանն ու եղբայրությանը:

Աշխատավորներին սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ու սովետական հայրենասիրության, ժողովուրդների եղբայրական բարեկամության ոգով դաստիարակելը, ընդգծվում էր կոնֆերանսում, գտնվում է ռեգիոնի շրջանների կուսակցական, սովետական, կոմերիտական կազմակերպությունների, գաղափարախոսական ճակատի աշխատողների գործունեության կենտրոնում: Ախալքալաքի-Ուկմերգե (Լիտվական ՍՍՀ), Ախալքալաքի-Գորի, Ծալկա-Թիանեթի, Բոգդանովկա-Սադարեջո, ինչպես նաև Գեորգիևսկի տրակտատի 200-ամյակի տոնակատարության նախօրեին ծնունդ առած Բոգդանովկայի և Գեորգիևսկի կարի ֆաբրիկաների կոլեկտիվների մրցությունները նպաստում են բարեկամության ու եղբայրության հետագա ամրապնդմանը: Շրջանային թերթերը, որոնք աշխատավորության ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության փորձ են կուտակել, հրապարակում են մրցակից շրջաններին նվիրված թեմատիկ ու նպատակային էջեր, կազմակերպվում են փոխադարձ ռադիոհաղորդումներ:

Ինտերնացիոնալիզմի և հայրենասիրության դաստիարակության գործում անգնահատելի է ամենամյա ավանդական «Ծա-

փարոբա» (Ախալցիխե), «Թրիալեթոբա» (Ծալկա), «Տերյանական պոեզիայի օր» (Բոգդանովկա) և այլ տոների նշանակությունը:

Ռեգիոնի շրջաններում գործում են մարտական փառքի թանգարանների, ինտերնացիոնալ բարեկամության, Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերանների ակումբներ, վեր են խոյացել Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձաններ: Բնակչության լայն ընդգրկմամբ են անցնում «Հիշատակի միասնական օր» և այլ կարևոր միջոցառումներ: «Գիտելիք» ընկերության դասախոսների ուժերով շրջաններում ինտերնացիոնալ և հայրենասիրական թեմաներով կարդացվել է 220 դասախոսություն:

Ռեգիոնում լուրջ ուշադրություն է դարձվում աշխատավորների ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերին: Հանրակրթական շատ դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում գործում են փառքի սրահի թանգարանները, ջոկատները հայտնաբերում են մեծ հայրենականի անհայտ հերոսների անուններ... «Մեծ Հայրենականի տարեգրությունը», «Հիշողության հերթափոխ», «Համալրենք մեր հարազատ բանակի շարքերը», «Դեպի 40-ամյակը» և այլ շարժումներ, դարձել են դպրոցականների և երիտասարդության աշխատանքի բաղկացուցիչ մասը:

Շրջանների աշխատավորները դեպի Հայրենական պատերազմի հաղթական ավարտի 40-ամյակը գնում են աշխատանքային հաջողություններով:

Կոնֆերանսում ծավալվեց մտքերի լայն փոխանակություն:

Կոնֆերանսն ընդունեց աշխատավորների ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության բնագավառում կուսակոմիտեների, մասսայական ինֆորմացիայի միջոցների գործունեության հիմնական ուղղություններին վերաբերող հանձնարարականներ:

Սեմինարի մասնակիցների հուզող հարցերին պատասխանեցին հանրապետության կուլտուրայի, լուսավորության, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունների, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի ապարատի պատասխանատու աշխատողները:

Գիտագործնական կոնֆերանսի աշխատանքն ամփոփեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի առաջին տեղակալ Ա. Իոսելիանին:

20 սեպտեմբերի

ԱՌԱՋԸՆԹԱՑ ՔԱՅԼԵՐ

Ախալքալաքի շրջանի աշխատավորները, ներգրավվելով տասնմեկերորդ հնգամյակի չորրորդ տարվա առաջադրանքների կատարման համար ծավալված սոցմրցության մեջ և ստանձնելով բարձր պարտավորություններ, դեռ տարեսկզբից առատ բերքի հու-

սալի նախագծայներ ստեղծեցին: Եվ այժմ, երբ բոլոր տեսակի կուլտուրաների բերքահավաքն ավարտվել է, արդյունքները հանրագումարի են բերվում, գոհունակությամբ կարելի է ասել, որ շրջանի էկոնոմիկայի ծանրակշիռ ճյուղի դաշտավարության մեջ լավ հաջողություններ են ձեռք բերվել:

Կոլտնտեսություններն ու սովխոզները յուրաքանչյուր հեկտարից նախատեսված 23-ի փոխարեն ստացել են 27 ցենտներ հացահատիկ, արտադրել 27 հազար տոննա համախառն բերք, որից 6.210 տոննա վաճառել են պետությանը: Նախորդ տարվա համեմատությամբ տնտեսությունների մեծ մասում զգալիորեն աճել է հեկտարի բերքատվությունը: Բուռնաշենի կոլտնտեսությունը (նախագահ՝ Մ. Քոչոյան) հեկտարից ստացել է 58,3 ցենտներ հացահատիկի ռեկորդային բերք: Հեկտարից 35-40 ցենտներ բերք հավաքեցին Ղադղալարի, Դիլիսկայի, Խանդոյի, Արագվայի, Խուլդումոյի, Թոթխամի և այլ կոլտնտեսություններ:

Կարտոֆիլագործությունը գնալով դառնում է շրջանի էկոնոմիկայի ամրապնդման հիմնական աղբյուրը: Այդ արժեքավոր պարենային կուլտուրայի արտադրության ավելացման գործում այս տարի էլ է մեծ առաջընթաց կատարվել: 3.231 հեկտար կարտոֆիլի պլանացիաներից հավաքվել է ավելի քան 45 հազար տոննա համախառն բերք, մթերվել և առևտրական կազմակերպություններին է առաքվել ավելի քան 30 հազար տոննա կարտոֆիլ, կամ պլան-պարտավորությունից զգալիորեն ավելի: Շրջանի պատմության մեջ դա աննախադեպ ցուցանիշ է: (Հանձնումները շարունակվում են):

Առավել բարձր արդյունքների են հասել Աբուլի, Բուռնաշենի, Ղադղալարի, Բարալեթի, Օրջայի, Թոթխամի, Մաջադիայի, Դիլիսկայի կոլտնտեսությունները, Վաչիանի, Իխտիլայի սովխոզները, որոնք հեկտարից ապահովել են 150-242 ցենտներ միջին բերքի ստացումը: Վաչիանի սերմնաբուծական սովխոզը (դիրեկտոր Մ. Ղարիբյան), Դիլիսկայի կոլտնտեսությունը (նախագահ՝ Ռ. Գոգորյան), որոնք մշակում են համապատասխանաբար 300, 270 հեկտար, պետությանն են վաճառել 3.500, 3.000 տոննա կարտոֆիլ: Վաչիանի սովխոզը և Օրջայի կոլտնտեսությունը (նախագահ՝ Ա. Նազարեթյան) արդեն իրացրել են կարտոֆիլի պետհանձնումների հնգամյա առաջադրանքը:

Կարտոֆիլագործության բնագավառում նվաճումները, սակայն, ավելին կլինեին, եթե շրջանի բոլոր տնտեսությունները լիովին օգտագործեին իրենց հնարավորությունները, աշխատեին առաջավորների օրինակով: Հեկտարից 100 ցենտներից պակաս բերք են ստանում Զունչխա, Պրտենա, Թախչա, Վարևան գյուղերի կոլտնտեսությունները: Իսկ Խուլդումոյի, Կոթելիայի, Կորխի կոլտնտեսություններում, Սուլդայի, Ալաստանի, Հոկամի սովխոզներում հեկտարի բերքատվությունը 110-120 ցենտներից չի անցնում:

Շրջանում բարձր բնաղծեր են նվաճվել կերի բաղան ամրապնդելու ուղղությամբ: Պայմանական մեկ գլուխ անասունի հաշվով տնտեսությունները պատրաստել են 16,7 ցենտներ կերամիավոր՝ նախորդ տարվանից 4 ցենտներով ավելի: Կուտակված 135 հազար

տոննա կոշտ և հյութալի կերերը լիուլի կբավարարեն հանրային հոտի մսուրային պահանջը:

Հողագործական կուլտուրաների բերքատվության բարձրացման ասպարեզում կարևոր դեր են խաղացել ցանքադաշտերի արդյունավետ ոռոգումը, կոմպլեքսային մեքենայացումը: Ընթացիկ տարում ոռոգվել է տարբեր կուլտուրաների 13.350 հեկտար ցանքատարածություն: Ամրապնդվել է մարդու և մեքենայի դաշինքը: Հացահատիկայինների, կերային կուլտուրաների, կարտոֆիլի ցանքի, մշակության, բերքահավաքի աշխատանքները գրեթե լրիվ մեքենայացվել են: Բազմաթիվ դաշտավարներ ու մեխանիզատորներ խոշոր ներդրում են արել բարձր բերք աճեցնելու գործում: Անմնացորդ նվիրումով են աշխատել դաշտավարական բրիգադավարներ Վ. և Հ. Կուրղինյանները (Բուռնաշեթի կոլտնտեսություն), Է. Գրիգորյանը, Ա. Ադամյանը (Դիլիսկա), Ժ. Պարոնյանը (Օրջա), Լ. Խեչոյանը (Բարալեթ), Ն. Յորդանյանը (Աբուլ), Հ. Անտոնյանը, Ռ. Մելքոնյանը (Վաչիանի սովխոզ), Հ. Դարբինյանը (Իստիլայի սովխոզ): Մեխանիզատորներ Ե. Բասենցյանը, Վ. Ամիրշատյանը, Գ. Բուռնուսուզյանը, Ու. Լազգյանը, Վ. Անտոնյանը և շատ ուրիշներ:

Անասնապահությունը նույնպես բռնել է ժամանակի քննությունը, բարձրացել է դրա վարման կուլտուրան, ավելացել մթերքների արտադրությունը: Անթերի կատարել պետությանը 19.190 տոննա կաթ, 5.930 տոննա միս, 181 տոննա բուրդ վաճառելու տարեկան առաջադրանքները - այս նշանաբանով են աշխատում շրջանի անասնապահները և հասնում նկատելի արդյունքների:

Զգալի են նաև արդյունաբերական, շինարարական, տրանսպորտային, մատակարարող և սպասարկող կազմակերպությունների ձեռքբերումները: Գերակատարելով անցած բոլոր 10 ամիսների արտադրական պլանները, արդյունաբերական ձեռնարկությունները թողարկել են 12 միլիոն 124 հազար ռուբլու արտադրանք նախատեսվածից շուրջ մեկ միլիոնով ավելի: Արտադրանքի իրացման առաջադրանքը կատարվել է 105 տոկոսով: Գլխավորող պանրայուղդործարանը, երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանը, տեղարդկոմբինատը, գյուղտեխնիկայի Ախալքալաքի և Բարալեթի միավորումները արտադրական առաջադրանքները կատարել են ժամկետից շուտ և դերազանցումով:

- Շրջանի ժողովրդական տնտեսության այս հաջողությունները ձեռք են բերվել աշխատանքային, արտադրական կարգապահության ամրապնդման, առաջավոր փորձի արմատավորման, մրցության դործարար բնույթի ապահովման շնորհիվ,- զրույցի ժամանակ ասաց շրջանի ագրոարդյունաբերական միավորման նախագահ Մ. Ալելիշվիլին:- Կուսակցական, սովետական մարմինները, ագրոարդյունաբերական միավորումն ավելի կոնկրետ ու առարկայորեն են զբաղվում կոլտնտեսությունների, սովխոզների, ձեռնարկությունների կոլեկտիվներին հուզող պրոբլեմներով, ավելի օպերատիվ են լուծում նրանց կողմից բարձրացվող հարցերը:

Շրջանի աշխատավորները, շարունակելով գործարար սոցմրցությունը, մեծ ջանքեր են գործադրում հնգամյակի չորրորդ տարին բարձր ցուցանիշներով եզրափակելու համար:

24 նոյեմբերի

1985

ԼԿԵՄ ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Տեղի ունեցավ կոմերիտմիության Բոգդանովկայի շրջանային կազմակերպության XXIX կոնֆերանսը:

Հաշվետու զեկուցումով հանդես եկավ շրջկոմի առաջին քարտուղար Վ. Անանիկյանը:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին շրջժողկրթբաժվար Ս. Զրաղացպանյանը, Օրոջալարի կոլտնտեսության կարտոֆիլագործուհի, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Է. Գալավարյանը և ուրիշներ:

Կոնֆերանսի աշխատանքին մասնակցեց և ելույթ ունեցավ կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Վ. Քոչոյանը:

ԼԿԵՄ նորընտիր շրջկոմի պլենումը շրջկոմի առաջին քարտուղար ընտրեց Վ. Ս. Անանիկյանին, երկրորդ քարտուղար Յու. Ս. Մնացականյանին, դպրոցական գծով քարտուղար Ֆ. Շ. Մադոյանին:

5 հունվարի

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

[Ժենյա Պապոյան]

ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ

Ախալքալաքի շրջանի Խանդոյի կոլտնտեսության N 1 բրիգադի կոմունիստները կուսակազմակերպության դռնքաց ժողովում լսելու էին կոլտնտեսության առաջամարտիկներից մեկի կոմունիստ կթվորուհի Ժենյա Պապոյանի հաշվետվությունը, հաստատելու նրա կուսակցական բնութագիրը:

ԷՋԵՐ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ժենյան հողագործ Աշոտ Զուռնաչյանի ընտանիքում է ծնվել: Նրա աշխատանքային ուղին սկսվել է հայրենի գյուղից Խանդոյի կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայից: Այդ օրվանից անցել են 25 երկար ու ձիգ տարիներ: Նա հստակ կերպով հիշում է ֆերմա գալու առաջին օրը. փորձառու կթվորուհիներն օգնե-

ցին հաղթահարելու առաջին դժվարությունները, վարպետության առաջին դասերը տվեցին: Աշխատատար շատ գործողություններ այն ժամանակ կատարվում էին ձեռքով: Կթվորուհու ծանր աշխատանքը չվախեցրեց Ժենյային: Դեռ ավելին, հենց առաջին տարում նա իր խնամքին հանձնված կովերից յուրաքանչյուրի կաթնատվության ցուցանիշը դերազանցեց 100 կիլոգրամից:

Անցած տարիները Ժենյայի համար որոնումների, աշխատանքային վերելքի մի երկար ճանապարհ են եղել: Այսօր նա կոլտնտեսության առաջին, շրջանի և հանրապետության առաջավոր կթվորուհիներից մեկն է: Եվ, եթե Խանդոյի կոլտնտեսության և նրա կաթնապրանաքային ֆերմայի անունը հանրապետական, միութենական ճանաչում է ստացել, ապա դրանում մեծ ներդրում ունի Ժենյա Պապոյանը:

Անվանի կթվորուհու հայրենանվեր աշխատանքը աննկատ չի մնացել: Կուսակցությունն ու կառավարությունը ըստ արժանվույն են գնահատել նրա անբասիր աշխատանքը: Առաջին խրախուսանքները շնորհակալության և դրվատանքի խոսքեր էին, հետո պատվոգրեր, նվերներ: Դարձել է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի մշտական մասնակից, պարգևատրվել բրոնզե մեդալով: Նրա անունը գրանցվել է հանրապետության գյուղատնտեսության առաջավորների պատվո տախտակին: Ընտրվել է գյուղական և շրջանային սովետների դեպուտատ:

1971 թվականին կթվորուհին արժանացել է սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման: 1974 թվականը ևս Ժենյայի համար հիշարժան տարեթիվ է: Շրջանի աշխատավորները նրան ընտրել են ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ: 1981-ին նոր ուրախություն է ապրել Պապոյանների ընտանիքը:

- Այդ թվականը իմ կյանքում առանձնահատուկ եղավ: Ես մասնակցեցի մեր հանրապետության կոմունիստների XXVI համագումարի աշխատանքին, ընտրվեցի Կենտրոնական կոմիտեի անդամ,- պատմում է Ժենյան:

Ժողովում Ժենյան նաև քննադատական խոսք ասաց իր հասցեին: Նշեց, որ ինքը որպես կոլտնտեսության անդամ չի մտահոգվել անասնապահության վարման կուլտուրան բարձրացնելու հարցերով: Ֆերմայում չի արմատավորվում կովերի մեքենայական կթիթը, կոլեկտիվը դեռ չի անցել աշխատանքի կապալային ձևին, բարձր է արտադրվող մթերքների ինքնարժեքը: Զմռռացով նշել նաև այն, որ ինքը չի հոգացել իր կրթական մակարդակը բարձրացնելու հարցով:

ՏՈՂԵՐ ԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ

ՄԱԹԵՎՈՍ ՍԱՀԱՐՅԱՆ (կոլտնտեսության նախագահ, ՎՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ) . - Ժենյան մեր տնտեսության պարծանքն է, երկրում ճանաչված կթվորուհի, հնգամյակների առաջամարտիկ: Պարտքի ու պատասխանատվության խոր զգացում, գործին նվիրված մարդու արժանապատվությունը բարձր պահելու հաստատակամություն սրանք են այս կոմունիստի արժանիքները: Ժենյան ձգտում է այդ հատկանիշներով օժտել նաև իր գործընկե-

բուհիներին: Որպես թերություն, պետք է նշել, որ Պապոյանը ակտիվորեն չի մասնակցում կուսժողովների հարցերի նախապատրաստմանն ու քննարկմանը, ժողովներում նկատվում է նրա պասսիվությունը:

ԱԹԱՆԱՍ ԹՈՐՈՍՅԱՆ (կոլտնտեսության գլխավոր զոոտեխնիկ). - Ժենյա Պապոյանը իր ողջ կարողությունն ու ուժերը դրած է դնում անասնապահական մթերքների արտադրության ավելացման պայքարում: Երկարամյա աշխատանքի ընթացքում շատ երիտասարդների է սովորեցրել, որոնք այժմ ճանաչված կթվորուհիներ են:

ՎԱՆԻԿ ԲԱՍԵՆՑՅԱՆ (բրիգադի կուսկազմակերպության քարտուղար, տնտեսագետ) .- Ժենյա Պեպոյանը հաջողությամբ է կատարում իր ավանդարդային դերը, մրցության առաջավոր է, մեծ ավանդ ունի ֆերմայի ընդհանուր հաջողություններում: Կուսկազմակերպությունը նրան հանձնարարել է ֆերմայի ագիտատորի, ժողվերահսկողության խմբի անդամի պարտականությունները, որոնք նա բարեխղճորեն է կատարում: Պատահական չէ, որ նա այս տարի Մոսկվայում մասնակցեց ժողվերահսկիչների համամիութենական խորհրդակցությանը:

ԿՈՒՇՐՋԿՈՄԻ ԿԱՐՄԻՐԸ (ընթերցվեց ժողովում): Ժենյա Պապոյանը իրեն հանձնարարված անձնվիրությամբ, գործիմացությամբ, բարձր պահելով կոմունիստի կոչումը, կուսակցության շրջկոմի անդամի, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի անդամի պատիվը, գործուն մասնակցություն է ունենում անցկացվող միջոցառումներին:

Վերջում կուսակցական կազմակերպության ժողովը հաստատեց Ժենյա Աշոտի Պապոյանի կուսակցական բնութագիրը:

5 Հունվարի

ՀՈՂԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ [Գրիգոր Մալխասյան]

Բոգդանովկայի շրջանի Թորոսի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսության կուսկազմակերպության դռնբաց ժողովում քննարկվեց Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերան, կոմունիստ Գրիգոր Մալխասյանի հաշվետվությունը, հաստատվեց նրա կուսակցական բնութագիրը:

Շրջանում և նրա սահմաններից դուրս քաջ հայտնի է Գրիգոր Մալխասյանի անունը: Նրան լավ գիտեն իբրև հողի անխոնջ մշակի, հասարակական ակտիվ աշխատողի:

Մեծ Հայրենականի տարիներին մասնակցել է Սմոլենսկ, Գյոնիգսբերգ, Վիլնյուս քաղաքների, Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերին, պարգևատրվել Կարմիր աստղի երկու շքանշանով և մեդալներով:

Պատերազմը ավարտվելուց հետո Գ. Մալխասյանն անպավ խաղաղ աշխատանքի. նախ շարքային կոլտնտեսական էր, ապա 38 տարի անընդմեջ դաշտավարական բրիգադի ղեկավար: Դրանք որո-

նումների, դժվարությունների ու հաջողությունների տարիներ են եղել: Մեծ է նրա ավանդը հողագործական մթերքների արտադրության ավելացման, հարազատ տնտեսության բարիքները բազմապատկելու գործում: Նրա ղեկավարած կոլեկտիվի ձեռքբերումներն առավել մասշտաբային էին տասնմեկերորդ հնգամյակի չորրորդ տարում. հացահատիկայինների միջին բերքատվությունը հասցվեց 42 ցենտների, գերակատարվեցին կարտոֆիլի, կերային կուլտուրաների բերքատվության առաջադրանքները, խոտի կուտակման պլանը գերազանցվեց 330 տոննայով, սիլոսի և սենաժի պատրաստման առաջադրանքը իրացվեց 115 տոկոսով:

Արտադրության լավ իմացություն, ճիշտ կողմնորոշվելու կարողություն, երկար տարիներ գործնական աշխատանքում ստուգված ազնվություն, նախաձեռնողականություն ու անհաչտ վերաբերմունք անտնտեսվարության ու անկարգապահության նկատմամբ: Սրանք են կոմունիստ Գ. Մալխասյանին բնորոշող գծերը:

Փորձված բրիգադավարը բազմիցս մասնակցել է գյուղատնտեսության առաջավորների շրջանային և հանրապետական խորհրդակցություններին, եղել մրցակից կոլտնտեսություններում, պատմել իր աշխատանքի փորձի մասին: Քանի՞-քանի՞ անգամ են հանդիսավոր պայմաններում շրջանի ղեկավար աշխատողները, աշխատանքային ընկերները սեղմել նրա ձեռքը, շնորհակալություն հայտնել լավ աշխատանքի համար, նոր հաջողություններ մաղթել:

Նման հանդիսավոր պայմաններում էլ արտադրության առաջավորին 1973 թվականի վերջերին հանձնվել է հայրենիքի ամենաբարձր պարգևը՝ Լենինի շքանշանը:

Բրիգադավարը նաև աչքի է ընկնում իր քաղաքական և հասարակական ակտիվ աշխատանքով, ընտրվել է կոլտնտվարչության, կուսբյուրոյի անդամ, քարտուղարի տեղակալ, ժողվերահսկողության խմբի նախագահ: Բարձր պատասխանատվությամբ է կատարում կուսակցական կազմակերպության և կոլտնտվարչության հանձնարարությունները:

Ժողովականները (ինքը նույնպես) նշեցին, որ ինչ-որ տեղ Գրիգորը թերացել, հետևաբար տանուլ է տվել: Այսպես, նա չի հոգացել իր կրթական մակարդակը բարձրացնելու մասին: Նրա բրիգադը դեռևս չի անցել աշխատանքի առաջավոր կապալային նոր ձևին, իսկ առանձին անդամներ լքում են աշխատանքը, «եկամտի աղբյուրներ» որոնում հեռավոր վայրերում:

Այս և այլ դիտողություններից ու խորհուրդներից հետո հաստատվեց կուսակցական բնութագիրը:

1945 թվականից ՍՄԿԿ անդամ, պատերազմի և աշխատանքի վետերան Գրիգոր Հովակիմի Մալխասյանը շարունակում է մնալ շարքում: Նա լրիվ արժանի է դրական բնութագրի, որը և հաստատվեց կուսկազմակերպության կողմից:

9 փետրվարի

ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐԸ [Խաչիկ Խաչատրյան]

Դեռ փոքր հասակից Խաչիկ Խաչատրյանը մեծ սեր ուներ դեպի գյուղատնտեսական տեխնիկան: Դպրոցում սովորելու տարիներին մեխանիզատոր հոր հետ հաճախ դաշտ էր գնում, դիտում մեքենաները, ծանոթանում մեխանիզատորների աշխատանքին, երբեմն էլ օգնում նրանց: Ավարտեց Բոգդանովկայի շրջանի Մեծ Արագյալի միջնակարգ դպրոցը, սովորեց Ախալքալաքի գյուղական N 82 պրոֆտեխուսումնարանի Բոգդանովկայի մասնաճյուղում: Բանակում ծառայելուց հետո եկավ արտադրություն, համալրեց իրենց՝ Փոքր Արագյալ գյուղի կոլտնտեսության մեխանիզատորների կոլեկտիվը:

Դա երազկոտ, աշխույժ ու եռանդով լի պատանու նոր կյանքի սկիզբն էր: Խաչիկը կարճ ժամանակում վաստակեց գործընկերների և կոլտնտեսականների սերն ու համակրանքը: Զզաց էլ, թե ինչպես տարածվեց իր բարի համբավը: Սովորականի նման աշխատում էր, «Բելառուս» մակնիշի տրակտորով կատարում ու գերակատարում իր արտադրական առաջադրանքները, նվաճում բարձր բնագծեր:

Բոգդանովկայի կոլտնտեսություն-համալիրի առաջավոր մեխանիզատորական բրիգադի կոլեկտիվում աշխատելու տարիներին նա ձեռք բերեց փորձ և հմտություն, տիրապետեց գյուղատնտեսական բոլոր մեքենաների «գաղտնիքներին»: Եվ եթե բրիգադն ամեն տարի գերակատարում է արտադրական առաջադրանքները, ապա այդ հաջողություններում իր բաժինն է ներդնում նաև Խ. Խաչատրյանը:

Նա միշտ գործում է խղճի թելադրանքով և հենց խղճին է պարտական աշխատանքային այն հաջողությունների համար, որոնց շնորհիվ նա դարձել է տասնմեկերորդ հնգամյակի անցած չորս տարիների առաջամարտիկ, պարգևատրվել սոցմրցության հաղթողի կրծքանշաններով, թանկարժեք պարգևներով, արժանացել (1982 թ.) կուսշրջկոմի, շրջսովետի գործկոմի, ագրոարդյունաբերական միավորման «Լավագույն մեխանիզատոր» հուշագրոշին:

Գործին անսահմանորեն նվիրված մեխանիզատորի նկատմամբ վերջերս ցուցաբերվեց մեծ վստահություն՝ նա ընտրվեց Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ: Խաչիկն այդ մեծ պատիվը վերագրում է մեխանիզատորների ամբողջ կոլեկտիվին, կոլտնտեսականներին:

Հիմա էլ Խաչիկն ու իր գործընկերները տարված են հնգամյակի ավարտական տարվա հոգսերով: Նրանց նպատակն է՝ գարնանացանն ավարտել ագրոտեխնիկական բարձր մակարդակով, աշխատանքային 10-12 օրում գդալիորեն գերակատարել նախորդ տարվա ցուցանիշները, աշխատել խնայողաբար:

2 ապրիլի

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ախալքալաքի շրջժողկրթբաժնի մեթոդկաբինետը շրջանի հանրակրթական դպրոցների ավելի քան 300 ուսուցիչների համար կազմակերպեց մանկավարժական ընթերցումներ: Դասախոսություններ և զեկուցումներ կարդացվեցին մի շարք առարկաների գծով:

Հետաքրքրությամբ լսվեցին շրջկենտրոնի Հովհ. Թումանյանի և Դ. Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցների ուսուցչուհիներ Հասմիկ Էլբակյանի ու Գայանե Ենգիբարյանի «Գրաճանաչության ուսուցման մեթոդներն ու դրանց առանձնահատկությունները 6-7 տարեկան երեխաների մոտ» և «Մաթեմատիկական հաշվարկումների զարգացումը գնական, դիտողական պարագաների միջոցով» թեմաներով զեկուցումները: Ժողկրթբաժնի մեթոդկաբինետի մեթոդիստ Վլադիմիր Ղինոյանը զեկուցում կարդաց «Հանրակրթական և պրոֆտեխնիկական դպրոցի ռեֆորմը և պատմության ու հասարակագիտության դասավանդմանը ներկայացվող պահանջները» թեմայով: «Գիտելիք» ընկերության շրջանային բաժանմունքի պատասխանատու քարտուղար, Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի դասատու Արտաշես Տոնոյանի զեկուցման թեման էր «ՍՍՀՄ արտաքին քաղաքականության հարցերի լուսաբանումը պատմության և հասարակագիտության դասերին»:

Կատարվեց նաև փորձի փոխանակում: Տարբեր առարկաների դասավանդման իրենց փորձի մասին պատմեցին մանկավարժներ Վ. Սրապյանը, Շ. Հարությունյանը,, Ջ. Շահբեկյանը, Օ. Սուքիասյանը, Լ. Զոբանյանը, Լ. Մելիքյանը, Տ. Պողոսյանը, Մ. Իրիցյանը և ուրիշներ:

Վերջում տեղի ունեցան գործնական պարապմունքներ՝ երգերաժշտությունից:

Մակավարժական ընթերցումները ցույց տվեցին, որ շրջանի մանկավարժական կոլեկտիվներն առաջին գործնական քայլերն են կատարում դպրոցի ռեֆորմի իրականացման ուղղությամբ, կատարելագործում են ուսումնա-դաստիարակչական պրոցեսը, բարձրացնում դասերի արդյունավետությունը, դասավանդման ընթացքում լուրջ ուշադրություն նվիրում դպրոցականների կոմունիստական աշխարհայացքի, կյանքում նրանց ակտիվ կենսադիրքի ձևավորմանը:

10 մայիսի

ՇԵՖԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽԵԼՎԱՉԱՌԻՐՅԻՆԵՐԻՆ

«Գյուղքիմիայի» Բոգդանովկայի շրջանային միավորումը խոշոր ներդրում ունի շրջանի դաշտավարության բնագավառում ձեռք բերված ակնառու հաջողություններում: Նրա կոլեկտիվը (նախագահ՝ Մ. Թարգյան), սակայն, չի հանգստանում ձեռք բերածով,

ձգտում է նվաճել նոր բնագծեր: Շրջանի շատ տնտեսությունների այս տարվա բարձր բերքի հիմքը միավորման մասնագետներն ու մեխանիզատորները դրել են դեռ անցյալ տարվա աշնանից: Շարահերկ կուլտուրաների հողերը մացվեցին շուրջ 40 հազար տոննա օրգանական պարարտանյութեր: «Գյուղքիմիա» արտադրական միավորման Ախալցիխեի միջշրջանային մատակարարման բազայից 1.000-ի փոխարեն շրջանի տնտեսությանն են հասցվել 1.400 տոննա հանքային պարարտանյութեր:

Դաշտերի պարարտացումը շարունակվում է: Գործի դնելով ամբողջ տեխնիկան, միավորման մեխանիզատորները մեծ աշխատանք են կատարում: Տրակտորիստներ Միշա Ստամբոլցյանը, Հովհաննես Լոքյանը, Տարիել Դանոյանը, Ալիկ Արոյանը և ուրիշներ, որոնք աշխատում են «Տ-150» և «Կ-700» հզոր ինքնաթափ մեքենաների վրա, զբաղված են օրգանական պարարտանյութերի փոխադրմամբ դաշտ:

Հաջող են ընթանում հատկապես քիմիական պարարտանյութերը հող մացնելու աշխատանքները: Պարարտանյութեր ցրող հատուկ բրիգադի (ղեկավար՝ Ռաֆիկ Համբարձումյան), մեխանիզատորներ Հովհաննես Ավագյանը, Վալերի Իսոյանը, Կարապետ Անանիկյանը և մյուսները՝ թվով 8 հոգի, ցրող ագրեգատներով օրական պարարտացնում են 150-160 հեկտար դաշտ:

Սակայն այս դեռ բոլորը չէ: Միավորման կոլեկտիվը շրջանի տրանսպորտային ձեռնարկությունների հետ առաջինը ձեռք մեկնեց տարերային աղետների հետևանքով ցիտրուսային պլանտացիաների տուժած շրջաններին: Փոխադրամիջոցների առաջին շարասյունը Խելվաչաուրի շրջան հասցրեց 40 տոննա բարձրորակ օրգանական պարարտանյութ: Պլանտացիաների սնուցման և վերականգնման համար «Գյուղքիմիա» միավորումը, ավտոտրանսպորտային ձեռնարկությունը և ՇԱԱՄ-ի ավտոպարկը վերջերս այդ նույն շրջանը փոխադրեց ևս 1.500 տոննա տեղական պարարտանյութ:

6 հունիսի

ՏՈՆԱՀԱՆԴԵՍ ԿԱՐԳԱԽՈՒՄ

Հունիսի 16-ին բազմամարդ էր ու յուրատեսակ ուխտատեղի էր հիշեցնում Ախալքալաքի շրջանի Կարգախ գյուղը: Վաղ առավոտից մարդկանց հոսքը ձգվում էր դեպի Ջավախք լեռնաշխարհի այս գողտրիկ ու հեռավոր անկյունը, ուր 1846-ին ծնվել է հայ նշանավոր աշուղ, երաժիշտ-դանդատաստեղծ ու ժողովրդական երգիչ Ջիվանին (Սերոբ Ստեփանի Լևոնյան):

... Ու թվում էր, թե այստեղ վերստին աշուղների մրցույթ է. «ուստաբաշին» էլ կարծես նորից բազմաքանքար Ջիվանին է, որը ուր որ է հնչեցնելու է իր այնքան հուզաթաթավ, մեծ ժողովրդականություն վայելող «Առավոտյան քաղցր հովիկ», «Խելքի աչեցեք»,

«Զախորդ օրերը», «Նագելուս ամպ է իջել», «Ավարայրի դաշտը» երգերը. Այդ Չիվանու մոգական ու անկրկնելի արվեստի ոգին է, որ Ախալքալքից ու Բոգդանովկայից, մոտակա շրջաններից ու քաղաքներից, Թբիլիսիից ու Երևանից, ամենատարբեր բնակավայրերից հազարավոր մարդկանց բերել-հաստատել է Կարզախ:

Շարունակելով ու խորացնելով Նաղաշ Հովնաթանից սկիզբ առած ու Սայաթ-Նովայի զարգացած ավանդույթները, աշուղական արվեստը բարձրացնելով մի նոր աստիճանի, ստեղծելով իր դպրոցը, որ հայ բանագիտության մեջ կոչվում է ազգային դպրոց, Չիվանին ճանաչվել է XIX դարի ամենամեծ աշուղը հայ իրականության մեջ, և նրա անունն այսօր էլ ժողովուրդը հիշում է երախտագիտությամբ, պատկառանքով:

Ողջունելով հավաքվածներին, բացման խոսք է ասում Վրաստանի կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի առաջին քարտուղար Ստ. Ստեփանյանը:

- Չիվանու ստեղծագործությունը,- նշում է նա,- դարձել է ժողովրդի սեփականություն: Նրա արվեստը բարձր են գնահատել Վալերի Բրյուսովն ու Մաքսիմ Գորկին, Հովհ. Թումանյանն ու Ակակի Ծերեթելին, Կոմիտասն ու Նիկողայոս Մառը: Չիվանական արվեստը, հաղթահարելով իր ապրած դարի դարպասները, թռածում է դեպի գալիքները ու պիտի ապրի, քանի ապրում է նրա տաղանդի նկատմամբ համաժողովրդական սերը:

Չիվանու կյանքին և ստեղծագործական ուղուն էր նվիրված Ախալքալաքի շրջանային տպարանի դիրեկտոր Դ. Բագրատունու զեկուցումը: Հուզիչ ելույթներ ունեցան Ախալքալաքի «Փարոս» շրջանային թերթի խմբագրի տեղակալ Ն. Ալելիշվիլին, վրացի բանաստեղծ-թարգմանիչ Գ. Շահնազարը, «Սովետական Վրաստան» թերթի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Վլ. Պողոսյանը, բանաստեղծ Վ. Հարությունյանը, Ախալքալաքի գավառագիտական թանգարանի դիրեկտոր, ՎՍՍՀ վաստակավոր ուսուցիչ Ա. Կարապետյանը, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի քարտուղար Ս. Սիմավորյանը: Ներկաները ջերմորեն ընդունեցին սովետահայ անվանի գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանզադյանի սրտաբուխ խոսքը: Խոսելով վրաց և հայ ժողովուրդների եղբայրական դարավոր բարեկամության ու մշակութային կապերի մասին, նա ասաց.

- Շնորհակալություն Վրաստանի կոմկուսի Կենտկոմին և կառավարությանը, Ախալքալաքի շրջանի կուսակցական, սովետական մարմիններին Չիվանական երգի ու պոեզիայի տոնահանդեսը ավանդությանն դարձնելու համար:

Այնուհետև բեմահարթակը տրամադրվում է շրջանային մշակույթի տան գեղարվեստական ինքնագործ խմբերին, անհատ կատարողներին, դուսանական արվեստի երկրպագուներին: Հնչում են Չիվանու անմահ երգերը հայրենակիցների կատարմամբ:

25 հունիսի

Ինչպես հայտնի է, աշխատանքի կազմակերպման ու վարձատրության կոլեկտիվ և անհատական կապալը (բրիգադներ, օղակներ, ընտանիքներ, առանձին մարդիկ), որը գնալով արմատավորվում է նաև Ախալքալաքի շրջանում:

Այդ առաջադիմական մեթոդը սկզբից անմիջական արձագանք գտավ շրջանի Կաջոյի անասնապահական սովխոզում: Բրիգադային կապալի անցան Լոմատուրցխի բաժանմունքի (Լոմատուրցխի բաժանմունքը այժմ առանձնացվել է Կաջոյից, մտնում է նորաստեղծ «Հաղթանակի 40-ամյակի» անվան սովխոզի մեջ) դաշտավարական բրիգադները, կազմվեց կապալային մեկ բրիգադ: Սակայն առաջին իսկ օրերից խախտվեցին նրա կազմակերպման սկզբունքները: Բրիգադի ղեկավարությունը՝ փոխանակ փոքրաթիվ մարդկանց հետ պայմանագիր կնքելու, բրիգադում ընդգրկեց նախ 54, ապա 130 բանվոր, որոնցից շատերը, հանձնարարություններ չստանալով, դուրս մնացին հանրօգուտ աշխատանք կատարելուց, ոմանք էլ առաջվա նման բռնեցին արտադրության ճանապարհը:

Ավելին, չստեղծվեց բրիգադային խորհուրդ, որը պետք է քննարկեր և ամփոփեր շաբաթվա, ամսվա, եռամսյակի, տարվա արդյունքները, որոշեր առաջիկա անելիքները, նշեր առաջացած դժվարությունների հաղթահարման կոնկրետ ուղիները:

Ավարտվեցին բերքահավաքը, աշնանային դյուղատնտեսական աշխատանքները: Տարեվերջի արդյունքներով բրիգադի անդամներին պետք է հավելյալ վարձատրության կարգով բաշխվեր 12 տոննա հացահատիկ: Եվ քանի որ բրիգադը չուներ իր խորհուրդը, հացահատիկ բաշխելու, լրացուցիչ վարձատրության չափը որոշելու իրավունքը իր վրա վերցրեց սովխոզի դիրեկցիայի կողմից առանձնացված «հեղինակավոր» հանձնաժողովը:

Օգտվելով սովխոզի դիրեկցիայի վերահսկողության բացակայությունից և չարաշահելով պաշտոնեական դիրքը, հանձնաժողովի անդամները, տնտեսության ինժեներ-մեխանիկ Շալիկո Լոկավյանը, բաժանմունքի կառավարիչ Վանիկ Տոնոյանը, կապալային բրիգադի ղեկավար Խաչատուր Լոկավյանը խախտեցին ըստ աշխատանքի բաշխման սկզբունքը: Բերքը բաշխեցին տնավարի կարգով. բաժանմունքի կառավարչի և ֆերմայում աշխատող նրա մոր (ոչ մի առնչություն չունի բրիգադի հետ) անուններով դրանցվեցին 300 և 250 կիլոգրամ հացահատիկ ստանալու թվերը: Առատորեն վարձատրվեցին բրիգադավարի և նրա օգնականի ընտանիքները (համապատասխանաբար՝ 750, 800 կիլոգրամ):

Հարկ է նշել, որ բրիգադում խախտվել է նաև դրամական վարձատրության կարգը: Բրիգադավարն ու օգնականը տնտեսությունից ապօրինի կարգով դրպանել են 639 ռուբլի:

Ինչպես տեսնում ենք, «չահել» են չաշխատողները, տուժել բրիգադում ընդգրկված հողի իսկական աշխատողները: Օֆելյա Բերակչյանի, Հոռոմսիմ Տոնոյանի, Մարինե Իրիցյանի, Սեդա Հարութ-

յունյանի, Զինա Հարությունյանի և ցածր վարձատրվող մյուս բանվոր-բանվորուհիների բողոքը տեղ հասավ: Ժողվերահսկողության շրջանային կոմիտեի ուսումնասիրությունները հաստատեցին անօրինականության փաստերը: Հարցը վերջերս քննարկվեց շրջկոմի ընդլայնված նիստում: Մեղավորները ստացան արժանի պատիժ: Բաժանմունքի կառավարիչ Վ. Տոնոյանը, կապալային բրիգադավար Խ. Լսկավյանը ազատվել են զբաղեցրած պաշտոններից: Կապալային բրիգադի կազմակերպական սկզբունքները, աշխատանքի վարձատրման կարգը խախտելու, բրիգադի աշխատանքը թույլ վերահսկելու համար սովխոզի դիրեկտոր Աղվան Մկոյանին արվել է նկատողություն, իսկ գլխավոր հաշվապահ Վահագ Բալասյանին, ինժեներ-մեխանիկ Շալիկո Լսկավյանին, գլխավոր տնտեսագետ Վանիկ Ղանդիլյանին խիստ նկատողություն: Այժմ Ա. Մկոյանն աշխատում է այլ հիմնարկում:

13 օգոստոսի

ՀԻԱՆԱԼԻ ՆՎԵՐ

Ախալքալաքի շրջանի Արագվա գյուղում պետական միջոցներով կառուցվում է միջնակարգ դպրոցի շենք: Շինարարությունը լայն ճակատով են իրականացնում Վրացական ՍՍՀ շինմինիստրության Ախալքալաքի հատուկ շարժական մեքենայացված ջոկատի (ղեկավար՝ Ռ. Բարբասյան) շինարարներն ու մոնտաժողները: 408 աշակերտական տեղով եռահարկ դպրոցական շենքը կունենա 17 դասասենյակ, լաբորատորիաներ, ուսումնական արհեստանոցներ, մարզադահլիճ, լողավազան, ճաշարան, կենտրոնական ջեռուցում և այլ հարմարություններ: Դպրոցը կանցնի կաբինետային ուսուցման:

Նորակառույցի շինարարական աշխատանքների 85 տոկոսն իրականացված է, ըստ որում՝ բարձրորակ: Մնում է ավարտել ուսումնական մասնաշենքի երրորդ հարկի և մարզադահլիճի ծածկի աշխատանքները: Ձեռք են բերված դպրոցական նոր գույք և լաբորատոր սարքավորումներ:

Աշխղեկ Վ. Խոդիկյանի ղեկավարությամբ ավտովարորդ Գ. Հակոբյանը, բուլդոզերավար Ս. Այվազյանը, կռունկավար Վ. Խզրյանը, էլեկտրամոնտյորներ Վ. Հարությունյանը, Կ. Վարդանյանը, զոդող Վ. Աջամօղլյանը, ծեփողներ Ս. և Մ. Ասլանյանները, մոնտաժողներ Ա. Փաշյանը, Լ. Հովհաննիսյանը ջանք ու եռանդ չեն խնայում դպրոցական շենքը նոր ուսումնական տարում սովորողներին հանձնելու համար:

22 օգոստոսի

1986

ԿԱՊԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ախալքալաքի կապի շրջանային հանգույցը (պետ՝ Մ. Ավոյան), որը միավորում է գյուղական փոստի 25 բաժանմունք, սպասարկում է շուրջ 68 հազար բնակիչների:

Ինչպես անցյալ տարի, այնպես էլ ընթացիկ տարվա անցած ամսիներին կապի աշխատողները հասել են նշանակալի հաջողություններ: Փոստային փոխադրումների, միջքաղաքային հեռախոսային, հեռագրային կապի առաջին եռամսյակի առաջադրանքները գերակատարվել են: Մրցության առաջին շարքերում են Գոմանի, Արագվայի, Խանդոյի, Վաչիանի կապի գյուղական բաժանմունքները:

Շրջանում գնալով ընդարձակվում են կապի միջոցները, բարձրանում է բնակչության սպասարկման կուլտուրան:

Զգալիորեն ավելացել է հեռախոսային աբոնենտների թիվը շրջկենտրոնում: Այս տարի կկառուցվեն և գործարկման կհանձնվեն ավտոմատ նոր հեռախոսակայաններ:

Ընթացիկ տարվա սկզբից շրջկենտրոնի հիմնարկ-ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռվել կապի Ախալցիխեի շահագործման-տեխնիկական միջշրջանային հանգույցի Ախալքալաքի տեղամասի ավտոմատ կայանի միջոցով անմիջական հեռախոսային կապ հաստատել Թբիլիսիի և այլ քաղաքների հետ:

Խրախուսանքի է արժանի նաև «Սոյուզպեչատի» կոլեկտիվը (լիազոր Ա. Յորդանյան), որը օրական ստանում և առաքում է ավելի քան 75 հազար թերթ ու ամսագիր:

15 մայիսի

ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐ

Դիլիսկան Ախալքալաքի շրջանի գյուղական սովետի կենտրոն է, ունի ութամյա և միջնակարգ դպրոցներ, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ, փոստի բաժանմունք՝ ավտոմատ հեռախոսակայանով, ստացիոնար կինոսարք, մթերային և տնտեսական ապրանքների խանութներ: Գրեթե բոլոր կոլտնտեսականները ապրում են նորակառույց տիպային բնակարաններում:

Այո՛, շատ բան է ասել դիլիսկացին իր հին շենի բարգավաճման համար: Սակայն այսօր այս ամենը դեռ չի բավարարում 760 տնտեսություն ունեցող գյուղի հարատև պահանջմունքները:

Երբ լսում ես գյուղի աշխատավորների արդարացի պահանջները, ինքդ էլ համոզվում ես, որ իրավացի են:

Նախ և առաջ դպրոցներն ապահովված չեն հարմարավետ շենքերով, եռհերթ պարապմունքները տեղի են ունենում անբարեկարգ ու անհրապույր դասասենյակներում: Գյուղի բնակիչները դժգոհ են բնակչության կենցաղսպասարկման և շրջսպառմիության վարչություններից սպասարկումը անբավարար կազմակերպելու համար:

Նման կարևոր հարցերից, իհարկե, ամենահուզողը գյուղը խմելու ջրով ապահովելու հարցն է: Գյուղի «Նորաշեն» կոչվող երեք թաղամասերի ավելի քան 250 տնտեսություններ ապահովված չեն խմելու ջրով:

Բանն այն է, որ 1956 թվականին կառուցված Աբլար-Զունչխա ջրմուղը, որը բացի Դիլիսկայից սպասարկում է նաև շրջանի ուրիշ 7 գյուղերի, գրեթե շարքից դուրս է եկել. պահանջվում է ջրատարի վերակառուցում: Շրջանի ղեկավար մարմինների պահանջով 1980 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը Ախալքալաքի շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա պլանի մեջ մտցրեց ջրմուղի վերակառուցումը: Կազմվեց 2,5 միլիոն ռուբլի արժողությամբ կառույցի նախահաշիվը և հանձնարարվեց հանրապետության մելիորացիայի և ջրային տնտեսության մինիստրությանը 1983-1985 թվականներին ավարտել ջրմուղի վերակառուցումը:

... Սակայն անհասկանալի պատճառներով իր պարտականությունների մեջ թերացավ վերոհիշյալ մինիստրությունը, իսկ վերջինիս վերակազմավորվելուց հետո նաև գյուղարտադրության պետական կոմիտեն: Ձախողվեց շրջանի Կուլիկամ, Խուլգումո, Մաջաղիա, Կորխ, Թոթխամ, Պրտենա, Զունչխա, Դիլիսկա գյուղերի համար հույժ կարևոր նշանակության օբյեկտի վերակառուցումը:

Այս աններելի վիճակի հետ չգիտես ինչու, հաշտվեցին վերոհիշյալ տնտեսությունների ղեկավարները: Կուսակցության շրջկոմը, ժողդեպուտատների շրջսովետի գործկոմը իրենց ազդու ձայնը, ինչպես հարկն է, չբարձրացրին հնգամյակի այս կառույցը ձախողումների նկատմամբ: Ճիշտ է, վերջիններս մեկ-մեկ անդրադարձել են այդ հարցին, միջոցառումներ նշել, սակայն շատ քիչ գործ է կատարվել դրանք մինչև վերջ կենսագործելու ուղղությամբ:

Ասում են, ջրմուղի վերակառուցումը նոր հնգամյակում իրականացնելու է «Վրացգլավվոդստրոյը»: Հինգ ամիս է անցել նոր տարվանից և գործի սկիզբը դեռ չի երևում:

Այս հարցի հրատապ լուծումը առաջնահերթ խնդիր է: Պահանջվում է հանրապետության ագրոարդյունաբերական պետական կոմիտեի կոնկրետ միջամտությունը:

10 հունիսի

ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐԸ
[Վոլոդյա Եփրիկյան]

Տրակտորների հոնդյունը լցրել է «Վրացդյուղտնտեխնիկայի» Ախալքալաքի շրջանային միավորման նորոգման արհեստանոցի բակն ու շրջակայքը: Մեկ-երկու ամսից սկսվելու են գարնանդաշտային աշխատանքները: Տրակտորիստները նորոգված մեքենաները փոխադրում են տնտեսություններ: Բակում մեծ թիվով մեխանիզատորներ են հավաքվել: Գործարար իրադրություն է, բոլորը համակված են բարձր տրամադրությամբ:

Գլխավոր ինժեներ Վոլոդյա Եփրիկյանը յուրաքանչյուր նորոգված մեքենա ճանապարհելուց առաջ այս կամ այն կարգադրությունն է անում տրակտորիստներին, իսկ երբ մեքենան շարժվում է տեղից, անթարթ հայացով ուղեկցում է նրան, փորձելով որոշել, թե շարժիչի արձակած ձայնի մեջ չկա՞, արդյոք, մի խորթ ձայն: Եվ արհեստանոցի զարպասներից դուրս գալուց հետո ինժենների դիմքին կարելի է կարդալ գոհունակություն:

Այդ գոհունակությունը մեկ ուրիշ հիմք էլ ունի: Ամեն անգամ արհեստանոցի կոլեկտիվը համակողմանի նախապատրաստությամբ է սկսում և հաջողությամբ ավարտում գյուղատնտեսական մեքենաների աշնան-ձմեռային նորոգումները՝ մեծ տեղ տալով մեքենաների երաշխավորված հուսալիության բարձրացմանը: Հորելյանական տարում էլ նորոգման ցուցանիշները բարձր են: Աշխատանքային մեկ ամիս ևս, և միավորման կոլեկտիվը զեկույց կտա տրակտորների, ավտոմեքենաների, կցվող գործիքների ընթացիկ տարվա առաջադրանքը դերակատարելու մասին:

***

Տարբեր առիթներով շատ է գրվել գյուղատնտեխնիկայի միավորման Ախալքալաքի բաժանմունքի, մեխանիկական արհեստանոցի ու նրանց մարդկանց մասին: Այս անգամ որոշեցինք խոսել բաժանմունքի գլխավոր ինժեներ Վոլոդյա Եփրիկյանի կյանքի, աշխատանքային հարուստ ու ուշագրավ կենսագրության մասին:

Ջավախքի լեռնային Խուլդումո գյուղում է ծնվել նա, հողագործի ընտանիքում: Մանկության տարիներից տեսել է բարձրագահ Աբուլի գագաթների խաչվող կայծակները, ճերմակ ամպերի քարավանները, որոնք, կարծես հանդիպվում են մի պահ ու մնդմիկ սահում հեռուները: Պատանին կլանվել է հայրենի բնության մեջ, սիրել հողագործի աշխատանքը և միշտ երազել կյանքի համար պիտանի մարդ դառնալու մասին:

1947 թվականին էր, երբ Վոլոդյան դեռ 16 տարին չբոլորած, ընտանեկան սուղ պայմանների պատճառով թողեց դպրոցը, տրակտորիստ դառնալու ցանկությամբ, առանց վարանելու բռնեց Ախալքալաքի ՄՏ-կայան տանող ճանապարհը:

Ավելի քան երկու տասնյակ գարուն է եկել ու անցել այդ օրվանից, բայց Եփրիկյանը առաջվա պես հիշում է, թե ինչպես սկսեց զեկավարել ՍՏԶ անիվային տրակտորը: Հիշում է, թե ինչպես

ամեն քայլափոխին հուզվում էր, երկյուղածությամբ մոտենում մեքենային, կասկածում կատարած վար ու ցանքի վրա: Դա կյանքի շեմից նոր ներս մտնող երիտասարդի հուզմունքն էր, սեփական ուժերը դեռ չփորձած մարդու կասկածը:

Շատ լավ մարդկանց հանդիպեց նա իր առաջին աշխատավայրում, նրա կողքին կանգնեցին փորձված մեխանիզատորներ, շրջապատը պարուրեց նրան հոգատարությամբ: Այնուհետև օգնեցին նրան սովորելու Սուրամի գյուղմեքենայացման դիզելային տրակտորների և մեխանիկ-կոմբայնավարների դասընթացներում, ավարտելու Երևանի գյուղմեքենայացման և էլեկտրիֆիկացիայի տեխնիկումը: Աշխատեց շրջանի մի շարք գյուղերի կոլտնտեսություններում: Ընդհուպ բարեկամացավ հողին, երբեմն կռվի բռնվեց նրա հետ, բայց երբեք չխուսափեց նրանից: Մերթ ուրախացել, մերթ սրտնեղել է նա: Ուրախացել է, երբ արտերում ծվացել է բերքը, երբ դաշտերը քիչ բան են խոստացել: Բայց Վոլոդյան մի միտք է ունեցել, մի ձգտում ավելի շատ հաց տալ հայրենիքին ու մարդկանց:

Անցնում են տարիներ, և արդեն տարբեր մասնագիտության տեր հմուտ մեխանիզատորին մենք տեսնում ենք շրջանի Վաչիանի և Ախալքալաքի ՄՏ կայաններում շրջիկ մեխանիկի, Բարալեթի նորոգման-տեխնիկական կայանում տեխնիկ-նորմավորողի, Սուլդայի մաս-կաթնային սովխոզում գլխավոր ինժենների, ապա գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման արհեստանոցի վարիչի պաշտոններում:

1969 թվականին Վ. Եփրիկյանի կենսագրությունը հարստացավ նոր, ավելի ուրախալի իրադարձությամբ: Նա հաջողությամբ ավարտեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը: Այդ տարում էլ նրան վստահեցին գյուղատնտեսական տեխնիկայի միավորման շրջանային բաժանմունքի գլխավոր ինժենների պարտականությունը:

ՍՄԿԿ անդամ Վ. Եփրիկյանը միևնույն ժամանակ հասարակական ակտիվ աշխատող է, ղեկավարում է բաժանմունքին կից գործող մեխանիզատորների վերապատրաստման դասընթացները, բազմիցս ընտրվել է կուսակազմակերպության քարտուղար, եղել է ագիտատոր ու քաղինֆորմատոր: Նրան հաճախ կարելի է տեսնել մեխանիզատորներով ու կոլտնտեսականներով շրջապատված, նրանց հետ նոր մեքենաների, հաստոցների, սարքերի մասին զրուցելիս: Նա լավ ուսուցիչ է երիտասարդ մեխանիզատորների համար:

Վոլոդյա Արշակի Եփրիկյանը այժմ ակնածանքով է նայում աշխատանքային իր անցած ուղուն: Դրանում հպարտանալու շատ բան կա: Քանի՜-քանի՜ անգամ, հանդիսավոր պայմաններում, ղեկավարներն ու աշխատանքային ընկերները սեղմել են նրա ձեռքը, շնորհակալություն հայտնել լավ աշխատանքի համար, պարգևատրել նրան, նոր հաջողություններ ցանկացել:

Եվ ամեն անգամ հաջողությունն է ուղեկցել նրան:

ՎՃՌԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Օրեցօր ավելի ու ավելի է մոտենում մեր հանրապետության հարավային ռեգիոնի երկաթուղային մայրուղու շինարարության ավարտը: Դրանում դժվար չէ համոզվել, եթե անցնելու լինենք այն ճանապարհի երկայնքով, որով նախատեսվում է գցել այդ մայրուղին:

1982 թվականի վերջն էր, որ «Անդրտրանսշինի» շինարարները գործարկման հանձնեցին մայրուղու առաջին 30 կիլոմետրը՝ մինչև Թելթրիծզարո: 1984-ի վերջին արդեն բացվեց աշխատանքային երթևեկությունը մինչև Ծալկա կայարանը, որն ընկած է 71-րդ կիլոմետրում:

Այդ օրերից սկսվեց շինարարների երրորդ մեծ գրոհը, որ ծավալվեց Ծալկայի և Ախալքալաքի միջև ընկնող ճանապարհահատվածում. մի կողմից՝ գծի ամբողջ երկայնքով ինժեներական կառույցներն շինարարության և բետոնե պատրաստի կոնստրուկցիաների տեղադրման, իսկ մյուս կողմից՝ մեծածավալ հողային աշխատանքները, որ կապված էին հսկայական քանակությամբ ապարի հանման և լցման հետ:

Ավտոմոբիլով Ծալկայից Բոգդանովկա մեկնելիս երևում է, թե ինչպիսի վիթխարի քանակությամբ հող ու խճաքար է փոխադրվել, այդ բարձր լեռներով գցվող երկաթգծի հողապատառը պատրաստելու համար:

Գծի երկայնքով կառուցվել են մի քանի կամուրջ, ուղանցույց, բազմաթիվ հեղեղատարներ: Դրանց մի մասը դեռ կառուցվում է, հողային աշխատանքները դեռ շարունակվում են, իսկ երկաթգիծը արդեն տեղադրվել է Ծալկայից մինչև Բոգդանովկայի շրջանի Սաթխա գյուղը:

Ջնայած գծեր տեղադրող մեքենան գտնվում է Դանձայի մոտակայքում և դեռ հնարավորություն չունի անցնելու Ախալքալաքի կողմը, այնուամենայնիվ մենք տեսանք տեղադրված երկաթուղագծի որոշ երկարության մի հատված, որը շարունակվում է Ախալքալաքի կողմից վեր բարձրանալ դեպի Բոգդանովկա: Հետս իմացանք, որ այդ ռելսերը տեղադրվում են առանց մեքենայի՝ ձեռքի ուժով:

Դա վկայում է, որ շինարարները լարել են իրենց բոլոր ուժերը՝ ստանձնած պարտավորությունը կատարելու, մայրուղու բանվորական գործարկումը մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 7-ը իրականացնելու համար:

Ջնայած եղանակային վատ պայմաններին, շինարարները համառորեն շարունակում են իրենց պայքարը մայրուղին վերջնականապես գործարկելու համար:

Մենք «Հարավշինմեքենայացում» տրեստի մեխանիկական N 25 շարասյան շինհրապարակում ենք, զրուցում ենք նրա աշխղեկ Ալեքսանդր Դմիտրուկի հետ:

Մեր շարասյունն այս լեռնաշխարհն եկավ Սարատովից,- ասում է նա:- Շինարարները, որոնք զբաղված են հողային աշխատանքներով, լավ են գիտակցում, որ հիմնական գործը մեզանից է կախված: Բանը նրանումն է, որ մինչև մենք մեր գործը չավարտենք, չուրվագծենք հողապաստառը և ապագա շինությունների հարթակները, հնարավոր չէ տեղադրել երկաթգիծը, կառուցել ինժեներական կառույցներ, շենքեր ու շինություններ, հենասյուներ տեղադրել, կոնտակտային գծեր ու հեռագրալարեր անցկացնել:

Դրա գիտակցումով է բացատրվում կոլեկտիվի եռանդուն աշխատանքը: Մեխանիկական այս շարասյունը, որն իր ավանդը ներդրել է երկաթգծի շինարարության գրեթե սկզբից, մասնակցել Թեթրիծգարո և Նազարբազևի կայարանների կառուցմանը, այժմ զբաղված է Ախալքալաքի - բեռնային և մարդատարական կայարանների կառուցումով:

Շարասյունը, որն ընդգրկում է 20 մարդ, իր հզոր տեխնիկական հավաքակայանով օրական կատարում է մոտ 1.500 խորանարդ մետր ծավալի հողային աշխատանքները: Երբ հետաքրքրվեցինք գործերի ընթացքով, էքսկավատորավար Իվան Բրաժնիկը, բուլդոզերավար Վասիլի Իշչենկոն, ավտովարորդ Վասիլի Միտյաևը միաձայն հաստատեցին, որ իրենց կոլեկտիվը հողապաստառի ձևավորումը և գծերի տեղադրումը կավարտվի նշված ժամանակին:

Գծի 148-րդ կիլոմետրում ենք: Այստեղ են գործում «Կամրջաշինական» N12 տրեստի N 39 ջոկատի շինարարները, որոնց ղեկավարում է Զուրաբ Մուրջիկնելին: Ջնայած երիտասարդ տարիքին, նա արդեն փորձված ինժեներ է: Մասնակցել է այս երկաթգծի 16 կամուրջների և ուղանցույցների շինարարությանը: Այժմ էլ կառուցում է գծի այն ուղանցույցը, որն ընկած է 148-րդ կիլոմետրի վրա: Հենասյուները, բետոնե հարթակները երկու կողմից տեղադրված են, մնում է պողպատե միջնամասի տեղադրումը, որը միմյանց կկապի երկու ափերը և հնարավորություն կտա փռել հողապաստառի այդ կտորն ու տեղադրել գծերը:

Կամրջաշինարարների այս ջոկատի շինարարների մի մասը այս օրերին եռանդուն աշխատանք է ծավալել Սաթխա գյուղի մոտակայքի կամրջի, իսկ մյուսը Խոսպիայի մոտ կառուցվող ուղանցույցի շինհրապարակներում:

Լայն աշխատանքներ են գնում Ախալքալաքի բեռնային և մարդատարական կայարանների շինհրապարակներում: Կայարանային շինությունների շինարարությունն իրագործում են շինմոնտաժային N349 գնացքի կառուցողները:

Մենք այս տարի ավարտելու ենք ոչ միայն այդ երկու կայարանների վոկզալների, այլև բնակելի առայժմ երկու շենքերի շինարարությունը, որոնցից մեկը կունենա 60, իսկ մյուսը 12 բնակարան,- ասում է տեղամասի պետ Շուրա Թուիչյանը:

Ինչպես գրույցից պարզվեց, նրանց անելիքները անչափ մեծ են ոչ միայն այս, այլև հաջորդ տարում, որովհետև Ախալքալաքի կայարանները, հաշվի առնելով, որ դրանք մայրուղու վերջիններն են, իրենց չափերով մեծ են, մեծ են նաև նրանց օժանդակ տնտե-

սությունները ու ծառայությունները: Բավական է ասել, որ միայն Ախալքալաքի-բնական կայարանը կունենա 24 գիծ: Հենց միայն դա վկայում է, որ այստեղ օժանդակ տնտեսությունն էլ մեծ մասշտաբներ է ունենալու:

Պետք է հուսալ, որ «Անդրտրանսշինի» կառուցողները իրենց ողջ գիտելիքներն ու եռանդը դործի կդնեն, որպեսզի պատվով կատարեն տարեսկզբին ստանձնած սոցիալիստական բարձր պարտավորությունները:

12 օդոստոսի

ՃՈԲԱՐԵԹՅԱՆ ՏՈՆԱՀԱՆԴԵՍ

Ծովի մակերևույթից 2.200 մետր բարձրության վրա, Ախալքալաքի շրջանի Ճոբարեթի գեղատեսիլ անտառում է գտնվում Սովետական Միության հերոս Լևոն Դարբինյանի անվան «Կանաչ տնդորը» պիոներական ճամբարը:

Ամեն առավոտ տարածվում է շնփորի ձայնը և պիոներները կանգնում են տողանի: Փողփողում են մետաքսափայլ ալ վկապները, վաղորդյան զովասուն զեփյուռը չարաճճիորեն խաղում է փոքրիկների մազերի հետ. համաչափորեն բարձրանում են երեխաների ձեռքերը, նազելիորեն թեքվում մարմինները...

Այսպես է սկսվում ճամբարի առավոտը: Ապա սկսվում է տարբեր խմբակների աշխատանքը: Ճամբարի ղեկավարությունը (պետ՝ Կամո Ավետյան), ավագ ջոկատավար Վարդուշ Մխիթարյանը, դաստիարակչուհիներ Թագուհի Մարգարյանը, Մարինե Մագաթովան, ջոկատավարներ Շողիկ Բաքարյանը, Գոհար Մարանդուլյանը ձեռնամուխ են լինում յուրաքանչյուրն իր դործին:

Ճամբարականների հանդստի ընդարձակ ծրագրի բաղկացուցիչ մասն են կազմում հանդիպումները Բոգդանովկայի շրջանի Օրոջալարի կոլտնտեսության կարտոֆիլագործուհի, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Էթերի Դալավարյանի, Ախալքալաքի շրջանի Խանդոյի կոլտնտեսության կթվորուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս Ժենյա Պապոյանի, Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերանների, արտադրության առաջավորների հետ:

... Կիրակի օր էր: Պիոներներին հյուր են եկել ծնողներ, շրջանի ղեկավար մարմինների աշխատողներ:

Պիոներները շարվում են տողանի, և հրամանատարը զեկույց է տալիս ճամբարի 50-ամյակին նվիրված տոնահանդեսին պատրաստ լինելու մասին: Հրամանատարի զեկույցն ընդունում է կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Ստ. Ստեփանյանը: Սկսվում է տոնահանդեսը: Ճամբարի 50-ամյակին նվիրված խոսքով հանդես է դալիս դյուղատնտեսության շրջկոմի նախագահ Ի. Ծինծկալաձեն: Ճամբարականներին ողջունում են հյուրերը: Սկսվում է հանդիսության զեղարվեստական մասը: Ելույթ է ունենում ճամբարի ինքնագործ խումբը: Հետաքրքիր, ինքնատիպ համարները՝ նվիրված համ-

բարի հոբելյանին, հաջորդում են միմյանց, արժանանում ներկաների ջերմ ընդունելությանը:

15 օգոստոսի

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄՈՏ

Ջավախքում տեղի ունեցած երկրաշարժից տուժած ընտանիքներին օգնության ձեռք մեկնողների թվում են Ռուսթավիի ցեմենտագործները և մետալուրգները, աշխատավորական մյուս կոլեկտիվները: Ինչպես հայտնի է, շեֆության կարգով նրանք Ախալքալաք են ուղարկել ու շարունակում են առաքել զանազան կոնստրուկցիաներ, դրանով նյութական ու բարոյական օգնություն ցույց տալիս աղետից տուժած ընտանիքներին:

Մետալուրգները որոշել են նաև անվճար կազմակերպել երկրաշարժից առավել տուժած Արուլ և Բեժանո գյուղերի դպրոցականների ամառային հանգիստը: Եվ ահա հունիս-հուլիսին մետալուրգների Խաչուրի շրջանի Սուրամի ավանում տեղավորված «Փոլադի» պիոներական ճամբարում իրենց արձակուրդներն անցկացրին հիշյալ գյուղերի 140 պիոներ-դպրոցականներ:

- Ճամբարում հանդստանում էին տարբեր ազգությունների 500-ից ավելի երեխաները,- պատմում է Աբուլի ութամյա դպրոցի ավագ ջոկատավար Վարդիթեր Բարեկյանը:- Ճամբարի միջոցառումների պլանը բազմազան էր ու հետաքրքիր: «Փոլադիում» տիրում էր ինտերնացիոնալ բարեկամության, ակտիվության, նախաձեռնության, փոխօգնության, մթնոլորտ: Մենք վառ տպավորություններով վերադարձանք տուն: Դժվար է բառերով նկարագրել այն ջերմ վերաբերմունքը, հոգատարությունը, որ ցուցաբերվեց մեր նկատմամբ: Շնորհակալություն մետալուրգիական գործարանի և ճամբարի ղեկավարությանը:

16 օգոստոսի

ՊԱՍԻՎ ԴԻՐՔ. Ո՞ՒՄ ՄԵՂՔՈՎ

Ախալքալաքի շրջանի Բավրա գյուղի միջնակարգ դպրոցում նախորդ ուսումնական տարում աշակերտների ուսման առաջադիմությունը բավականին բարձր էր: Շրջանավարտներից շատերն ընդունվել են բուհեր, միջնակարգ մասնագիտական հաստատություններ, աշխատում են արտադրությունում: Մակավարժական կոլեկտիվն ու դպրոցականներն իրենց ավանդն են ներդնում ծրագրի իրականացման գործում, օգնում սովխոզի բաժանմունքի երկրագործներին:

Հաջողություններով հանդերձ, ուսումնադաստիարակչական աշխատանքներում դեռ լուրջ թերություններ կան: Դաստիարակչական աշխատանքը չի բավարարում ներկա պահանջներին: Սովխոզն ապահովված չէ դպրոցական հարմարավետ շենքով: Եղածը, որպես

կանոն, ամեն տարի նորոգվում է, բայց դրանից ոչ դասասենյակների թիվն է ավելանում, ոչ էլ վերանում են անհարմարությունները: Գյուղին պարզապես դպրոցական նոր շենք է պետք, և այդ հարցի լուծումը չի կարելի դարձնել «հեռանկարային» դոր: Այստեղ պարապմունքները փաստորեն տեղի են ունենում երեք հերթով: Ավելին, դպրոցական օջախ ոչք դրած վեց տարեկան երեխաների համար նույնիսկ, պայմաններ չեն ստեղծված: Նրանց «հատկացված» է ուսումնական աշխատանքի միայն մի սենյակ, չունեն նաև խաղերի, հանգստի սենյակներ:

Դպրոցը նման վիճակից դուրս բերելու մասին շատ է խոսվել: 1985 թվականին որոշվեց շենքին կից կառուցել հարակից չորս դասասենյակ, կազմվեց շինանախագիծ: Սակայն ինչ-ինչ պատճառներով շինարարությունը չսկսվեց, շրջսովետի դարձիմի որոշումը մնաց թղթի վրա:

Չհաղթահարված թերություններ կան առանձին առարկաների՝ կենսաբանության, քիմիայի, ռուսաց լեզվի, աշխատանքային ուսուցման դասավանդման բնագավառում: Ուսումնական կաբինետներն ապահովված չեն դիդակտիկ անհրաժեշտ նյութերով, լաբորատոր սարքավորանքով, եղած տեխնիկական միջոցներն էլ արդյունավետ չեն օգտագործվում: Դեռևս որոշ դասարաններում զգացվում է դասագրքերի պակաս:

Այս և այլ թերությունները շոշափվեցին դպրոցի կուսակազմակերպության հաշվետու-ընտրական ժողովում, որտեղ մեկ տարվա գործունեության մասին խոսեց կուսակազմակերպության քարտուղար Ջ. Ստեփանյանը: Ժողովում նշվեց նաև հակոտնյա երևույթների, ներդպրոցական, արտադպրոցական կանոնների խախտման առանձին փաստերի մասին: Ցավալի է, որ որոշ աշակերտներ դպրոցը չավարտած՝ ամուսնանում են: 1985-86 թվականներին դպրոցն այդ ձևով թողել են 6 աշակերտուհիներ: Ավանդույթ է դարձել մեկ ուրիշ արատավոր երևույթ ևս: Քանիերորդ տարին է, ինչ ծնողների հետ հանրապետությունից դուրս արտադնա աշխատանքի են մեկնում նաև աշակերտներ, ուսումնական տարին սկսվելուց հետո էլ երկուերեք ամիս բացակայում են դպրոցից: Այս տարվա օգոստոսից գյուղից «չվել» և ծնողների ու բարեկամների հետ հեռավոր վայրերում «աշխատում են» 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտ-աշակերտուհիներ Արմարդ Դավթյանը, Արարատ Էլյազյանը, Արթուր Ստեփանյանը, Անահիտ Բերիկյանը, Լիլյա Ալեքսանյանը, Սամվել Գաբրիելյանը (վերջին երկուսը կոմերիտականներ են):

Ժողովում այն կարծիքն էր հայտնվում, որ արատավոր այս երևույթների վերացման պատասխանատվությունը հիմնականում ընկնում է դպրոցի կուսակազմակերպության և դիրեկցիայի վրա: Իհարկե, վերջիններս շատ անելիքներ ունեն այդ ուղղությամբ, բայց արդյոք նրանք կարո՞ղ են ամեն ինչի հասնել, եթե արտադասարանական աշխատանքների կազմակերպիչները, դասղեկները, արհմիութենական, կոմերիտական, պիոներական կազմակերպությունները, ծնողական կոմիտեն, չաջակցեն նրանց: Ցավոք, նրանք չափազանց պասիվ դիրք են գրավել:

Ժողովին մասնակցում էին և ելույթ ունեցան ՎՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի վարչության տրանսպորտի և կապի բաժնի վարիչ Գ. Յքվիտինաձեն, Ախալքալաքի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Է. Մեսխիձեն:

9 հոկտեմբերի

ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Զինակոչիկների հերթական հավաք էր Ախալքալաքում: ԼԿԵՄ շրջկոմի և շրջանային զինկոմիսարիատի կողմից կազմակերպված այս հանդիսության մասնակիցները՝ Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերաններ, վաղվա զինվորներ, պիոներ-դպրոցականներ հավաքվել էին շրջանի երիտասարդությանը բանակ ճանապարհելու:

Զինակոչիկների հավաքում շրջանի երիտասարդների հայրենանվեր գործերի մասին պատմեց ու զինակոչիկներին բարի ճանապարհ և գերազանց ծառայություն մաղթեց կոմերիտմիության շրջկոմի երկրորդ քարտուղար Թամազ Գվարամաձեն:

Հուզիչ էր Հայրենական պատերազմի վետերան Մկրտիչ Կիրակոսյանի ելույթը: Դիմելով զինակոչիկներին, նա ասաց.

-Ես այսօր հուզված եմ ու երջանիկ: Դա հասկանալի է: Ձեզ բարի ճանապարհի խոսք եմ ասում խաղաղ, պայծառ օրերում: Դուք երջանիկ եք, որովհետև ձեզ բախտ է վիճակվել ծառայել ՍՍՀՄ զինված ուժերի շարքերում, խաղաղ երկնքի տակ: Արժանի եղեք ձեր հայրերի ու ավագ եղբայրների ավանդույթներին, հավերժացրեք հերոսների հիշատակը, պահպանեցեք խաղաղությունը:

Զինկոչիկների անունից ելույթ ունեցավ Խորեն Գոգորյանը:

- Այս հանդիսությունը շատ բան է հուշում ու պարտավորեցնում մեզ,- ասաց նա:-Մենք՝ վաղվա օրերի խաղաղ պաշտպաններս, վստահեցնում և հավաստիացնում ենք, որ պատվով կշարունակենք հերոս հայրերի մարտական ավանդույթները, սրբորեն կկատարենք մեր պարտքը հայրենիքի հանդեպ:

20 դեկտեմբերի

ԵՎ ՆՐԱՆ ԿՈՉԵՑԻՆ «ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

[Յուրիկ Ժամկոչյան]

Դեռևս դպրոցում սովորելու տարիներին Բոգդանովկայի շրջանի մեծխանչալեցի այս պատանին արձակուրդի օրերին հաճախ էր կոլտնտեսության դաշտերը տանող ճանապարհը բռնում: Երկար հետևում էր համայնական դաշտերում հռնդացող տրակտորների հեքին ու շտապում մոտիկից ըմբռնել նրա «գաղտնիքները»: Գուցե՞ այդ ժամանակ ծնվեց նրա մեջ մեխանիզատոր դառնալու ձգտումը, ո՞վ գիտի...

Դպրոցն ավարտելուց հետո Յուրիկ Ժամկոչյանը ընդունվեց շրջկենտրոնի գյուղական միջնակարգ պրոֆտեխնիկական N 34 ուսումնարանը, տրակտորիստի որակավորում ստացավ: Այնուհետև ծառայեց բանակում: Վերադարձավ:

Սկսվեց երազկոտ, աշխույժ ու եռանդուն պատանու աշխատանքային գործունեությունը: Մեկ տարի նստեց մելիորացիայի և ջրային տնտեսության շրջանային վարչության ԴՏ-75 մակնիշի տրակտորի ղեկի մոտ, այնուհետև անդամագրվեց հայրենի գյուղի Մեծ Խանչալի կոլտնտեսության մեխանիզատորական կոլեկտիվին: Աշխատելով փորձառու մեխանիզատորներ Սարմիկ Անանիկյանի, Մարկոս Մարանջյանի, երիտասարդ տրակտորիստներ Ռաֆիկ Վարդապետյանի և Արմեն Թոփուլյանի կողքին, կարճ ժամանակում Յու. Ժամկոչյանը ըմբռնեց աշխատանքում բարձր բնագծեր նվաճելու գաղտնիքները:

Եվ երբ ամփոփվեցին կոլտնտեսության անցած տարվա աշխատանքային արդյունքները, նրա անունը մրցության հաղթողների առաջին շարքում հայտնվեց:

Յու. Ժամկոչյանին ընկերները կատակով «Շտապ օգնություն» են կոչում: Նա իր Տ-150 մակնիշի հզոր տրակտորով ակտիվորեն մասնակցում է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգմանը, շեֆական օգնություն ցույց տալիս Բոգդանովկայի N21 ՇՄՇ-ի և միջտնտեսային շինկազմակերպության շինարարներին, հասնում այնտեղ, որտեղ իր կարիքն են զգում:

Բոգդանովկայի համար խստաշունչ այս օրերին Յու. Ժամկոչյանը Ախալցխեից հանքային պարարտանյութ է փոխադրում գյուղ, այնտեղից դաշտերը, որպեսզի առատ լինեն հնդամյակի երկրորդ տարվա բերքն ու բարիքը:

Կոմերիտական մեխանիզատորը ակտիվորեն մասնակցում է գյուղում կատարվող հասարակական աշխատանքին, միշտ ապրում է հանրային տնտեսության կոմերիտականների ու երիտասարդների

գործերով, խանդավառվում մեծ ու փոքր հաջողություններով, օրինակ ցուց տալիս մյուսներին:

Արժանավոր մեխանիզատորը վերջերս ընտրվեց ԼԿԵՄ Բոգդանովկայի շրջկոմի և բյուրոյի անդամ, Վրաստանի ԼԿԵՄ XXXIII համագումարի պատգամավոր: Մեծ վստահությունը դեպի աշխատանքային նոր հաջողությունների կմղի նրան:

20 հունվարի

ԼԱՈՒՐԱՆ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է

]Լաուրա Մարաբյան]

Ախալքալաքի թռչնաբուծական ֆաբրիկան երկար տարիների պատմություն չունի, սակայն արդեն բարի անուն է վաստակել:

Թռչնանոցներում ու օժանդակ կառույցներում աշխատատար գործողությունները հիմնականում մեքենայացված են: Տասնմեկերորդ հնգամյակի տարիներին և տասներկուսի անդրանիկ տարում ձեռնարկության կոլեկտիվը (դիրեկտոր՝ Ռ. Շահբեկյան) հաջողությամբ կատարել է ձվի և մսի արտադրության պլաններն ու սոցպարտավորությունները: 1986 թվականին, օրինակ, ձվի արտադրությունը կազմեց 3,5 միլիոն, մսինը 980 ցենտներ: Աճել է ֆաբրիկայի շահութաբերությունը:

Կարճ ժամանակամիջոցում շատ բան է արվել կոլեկտիվը գործիմաց ու եռանդուն մարդկանցով համալրելու ուղղությամբ:

Նրանցից է շրջկենտրոնի N 82 պրոֆտեխուսումնարանի շրջանավարտ, թռչնապահ - օպերատոր Լաուրա Մարաբյանը: Գործիմաց աշխատանքի շնորհիվ նա դարձել է տասնմեկերորդ հնգամյակի առաջամարտիկ, պարգևատրվել մրցության հաղթողի կրծքանշանով:

Լաուրան խնամում է 6.800 ածան հավ: Նրանց խնամքն ու կերակրումը օրինակելի կազմակերպելու շնորհիվ յուրաքանչյուրի ձվատվությունը պլանի 170-ի դիմաց հասցրել է 183-ի: Բարձր ցուցանիշներ ունեն նաև թռչնապահներ Էլմիրա Եզոյանը, Կալեփսյա Սողոյանը և ուրիշներ:

Թռչնապահ-օպերատորները, ի պատիվ մեծ Հոկտեմբերի 70-ամյակի, սոցիալիստական մրցություն են ծավալել հոբելյանական տարում 4 միլիոն ձու, 1.100 ցենտներ սպիտակ միս արտադրելու բնագծերը նոյեմբերի 7-ին, նվաճելու համար: Իսկ Լաուրան, որ նոր տարին սկսել է նոր հաջողություններ ձեռք բերելու վճռականությամբ, խոստանում է նվազագույնի հասցնել թռչունների կորուստները և յուրաքանչյուր հավից ստանալ 200 ձու:

22 հունվարի

ԵՐԴՍԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ [Արմեն Եղիազարյան]

«Ես, Սովետական Միության քաղաքացիս, համալրելով զինված ուժերի շարքերը, հանդիսավոր կերպով երդվում եմ...»:

Դա 1985 թվականի մայիսի վերջերին էր, երբ զինվորական կուռ շարքի առջև իր ընկերների հետ հավատարմության երդում տվեց նաև Արմեն Եղիազարյանը: Եվ հենց այդ պահից նա ասես յուրովի փոխվեց, դարձավ ավելի կայուն ու հաստատակամ:

Ախալքալքի Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցի և Լենինականի ավտոդպրոցի շրջանավարտի համար զորամասի առօրյային ընտելանալը, քաղաքացիական կյանքից կտրուկ շրջադարձը զինվորականին, դժվարությունների առջև չկանգնեցրին: Դեռևս դպրոցում էր սովորում, որ մոտիկից ծանոթացավ զինվորականի հետաքրքիր մասնագիտությանը, ընդգրկվեց պատանի մարտիկների ջոկատում: Ու հետո «Փայլակ», «Արևիկ» ռազմամարզական խաղերի ժամանակ աչքի ընկավ զինվորականի իր բնավորությամբ: Եվ դա շատ բանով օգնեց Արմենին, որ նա դառնա օրինակելի զինվոր:

Վերջերս, Արմենի ծնողները երկու նամակ ստացան: Պատվոգիր՝ «Սովետական բանակի սերժանտ Արմեն Արշալույսի Եղիազարյանին: Ծառայության և քաղաքական բարձր կազմակերպվածության, զինվորական ամուր և օրինակելի կարգապահության համար»:

Նաև շնորհակալագիր զորամասի հրամանատարությունից.

«Հարգելի Եղիազարյաններ: Մեր հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում ձեզ, որ դուք աճեցրել և դաստիարակել եք Արմենին, որն անմնացորդ նվիրումով ծառայում է հայրենիքին»:

Ստացվեց նաև արդու հերթական նամակը, որը նոր ուրախություն պարգևեց ծնողներին՝ Ռոզա և Արշալույս Եղիազարյաններին: Արմենը հաղորդում էր, որ զորամասի կուսակցական կազմակերպությունն իրեն ընդունել է ՍՄԿԿ շարքերը:

Հեռու չէ այն օրը, երբ Արմենը տուն կվերադառնա և խինդով կլցնի Եղիազարյանների հարկը:

24 հունվարի

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

Ախալքալաքի շրջանի Կաջոյի սովխոզի անասնապահների հնգամյակի մեկնարկային տարվա աշխատանքի բարձր գնահատականը դարձավ Վրաստանի ԿԿ Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի պատվոգիրը, որին տնտեսությունն արժանացավ անասունների ձմեռումը հաջողությամբ անցկացնելու, անասնապահական մթերքների արտադրության ու պետգնումները ավելացնելու համար ծավալված հանրապետական սոցմրցությունում հաղթող ճանաչվելու համար:

Արդյունավետությունն ակնհայտ է նաև այս տարի: Կազմակերպված առաջ է տարվում անասունների մսուրային շրջանը: Նա-

խորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ գրեթե-ռեն ավելի է կաթի ամենօրյա արտադրությունը: Մարտի 1-ի տվյալներով ֆուրաժային կովի կաթնատվությունը ավելացել է 22 կիլոգրամով, կաթի համախառն արտադրությունը՝ 50 ցենտներով: Վերամշակման առաքված կաթն ամբողջությամբ առաջին կարգի է բազիսայինից բարձր յուղայնությամբ:

Ինչպես միշտ, այս օրերին էլ մրցության առաջին շարքերում են գտնվում կթվորուհիներ Լենա Տոնոյանը, Արծվիկ Այվազյանը, Շուշանիկ Զախոյանը, Ժենյա Սարգսյանը:

Անասնապահները, որոնք հատկապես հմտացել են մսի արտադրության գործում, շարունակում են խոշոր եղջերավոր անասունների մատղաշների ինտենսիվ կերակրումն ու բուսումը: Մատղաշների աճեցման բրիգադը (ղեկավար՝ Մերուժան Գրիգորյան) արդեն պետությանն է հանձնել 90 գլուխ, յուրաքանչյուրը 360 կիլոգրամ միջին քաշով անասուն:

Սովխոզն ունի ոչխարաբուծական օրինակելի ֆերմա: Անցած տարի ֆերմայի ոչխարաբույծները 100 մաքուց ստացել ու պահպանել են 94 գառ, այս տարի էլ ձգտում են նվաճել նոր բնածեր: Փորձված հովիվներ, Լենինի շքանշանակիր Վարշամ Մակարյանը, նրա որդի Յուրիկ Մակարյանը, Սեյրան Պետրոսյանը, Ստեփան Մակարյանը և ուրիշներ տարիների կուտակած փորձը հմտորեն օգտագործում են և, հաջողությամբ ընդունելով ծինը, այժմ էլ նույն հաջողությամբ շարունակում են հոտի խնամքը, մատղաշի աճեցումը: 1.800 մայր ոչխարից արդեն ստացվել է 1.600 գառ: Մինը շարունակվում է:

- Ո՞րն է անասնապահների այս ձեռքբերումների գրավականը,- հարցնում ենք սովխոզի դիրեկտոր, Կարլոս Մոսիկյանին:

- Արտադրության ինտենսիվացումը,- ասում է նա:- Վերակառուցումը դարձել է անասնապահների կոլեկտիվի առաջընթացի ամենակարևոր նախապայմանը, արտադրության մեջ արմատավորել ենք բրիգադային և ընտանեկան կապալը, այս տարվանից անցել տնտեսաշվարկի: Անհամեմատ բարձրացել է աշխատանքային, կատարողական կարգապահությունը, յուրաքանչյուրի պատասխանատվությունը հանձնարարված գործի նկատմամբ:- Զմռան-մսուրային շրջանի առաջին իսկ օրերից ֆերմաները համալրվեցին անասնապահական նոր կադրերով: Կենդանիները կերակրվում են զոոտեխնիկական կանոնների համաձայն:

Տնտեսությունում մշակվել են անասնապահների բարոյական ու նյութական խրախուսման լրացուցիչ միջոցառումներ, որը նույնպես նպաստում է մթերքների ավելացմանը:

Կաթոցիները որոշել են հնգամյակի երկրորդ տարում ֆուրաժային կովից կթել 2.500 կիլոգրամ կաթ, ամեն մի ոչխարից ստանալ 2,6 կիլոգրամ բուրդ, պետությանը հանձնել 585 տոննա կաթ, 130 տոննա միս, 4,4 տոննա մաքուր ելունքով բուրդ: Նրանց խնամած անասունների վիճակը այս բարձր պարտավորությունների կատարման լավագույն երաշխիքն է:

14 մարտի

1988

«...ՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՊԱՐԶԵՐԵՍ ՔԱՅԼԵՔ»

[Երվանդ Բասենցյան]

Բասենցյանների տոհմից է Ախալքալաքի Թոթխամ գյուղի բնակիչ, կոմունիստ-մեխանիզատոր Երվանդը: Հայրը՝ Սարգիսը, դերդաստանի այս ճյուղի նահապետը, հողագործ էր, մայրը՝ Հերիքնազը, նույնպես: Նրանք իրենց որդիներին մանկուց սովորեցրել էին սիրել հողը: Զգիտեի՞ն, որ հողագործն իր հացը վաստակում է դժվարությամբ, ճակատից հոսող քրտինքը բառացիորեն խառնելով հողին: Իհարկե, գիտեին: Բայց և սեփական փորձով համոզվել էին. այդպիսի աշխատանքով գնված հացը համեղ է...

- Աշխատանք գյուղում պարզերես քայլել,- հաճախ էին նրանք կրկնում իրենց որդիներին, որովհետև գիտեին. գյուղում, ինչպես ձեռքի ափի մեջ, երևում է բոլորի վաստակը, վարքն ու բարքը, հնարավոր չէ, որ մարդը ջայլամի պես երկար ապրի...

Բայց այն ո՞ւմ ծնողն է, որ ասում է՝ «ավազակ եղիր, որդիս», երևի կմտածի ընթերցողը: Զենք վիճում՝ ոչ ոքի: Բայց ինչպե՞ս է պատահում, որ ծնողների բարի անունը պախարակող որդիներ են լինում: Որովհետև, իսկապես դժվարին առաքելություն է շարունակել գերդաստանի անունը, պատիվը, մնալ մաքուր, ազնիվ...

Երվանդ Բասենցյանը տիրապետում է այդ շնորհքին, իր դերդաստանի արժանի շարունակողն է գյուղում, ոչ ոք դա չի ժխտի այսօր:

Մի քանի օր առաջ Երվանդ Բասենցյանի նորակառույց բնակարանում էինք:

- Երբ թերթում կամ հեռուստացույցով լսում, կարդում եմ որևէ կոմունիստի տհաճ քայլի մասին զարմանում եմ,- ասում է խոսքի մեջ Երվանդը,- չէ՞ որ կուսակցության շարքերն ընդունվելիս նրանք կրկնել են ՍՄԿԿ կանոնադրության, թեկուզ հետևյալ տողերը.

(Նա վեր է կենում, վերցնում խնամքով պահված բրոշյուրն ու գեղջկական ազնվությամբ ու միամտությամբ, մի քիչ զայրացած ու զարմած բարձրաձայն ընթերցում):

- Կուսակցության անդամը պարտավոր է խստիվ պահպանել կոմունիստական բարոյականության նորմերը, հաստատել սոցիալական արդարության՝ սոցիալիզմին ներհատուկ սկզբունքը, հասարակական շահերը վեր դասել անձնականից, հանդես բերել համեստություն և օրինավորություն, մարդկանց նկատմամբ զգայուն և ուշա-

դիր վերաբերմունք, ժամանակին արձագանքել աշխատավորների պահանջմունքներին ու կարիքներին, ճշմարտացի և ազնիվ լինել կուսակցության ու ժողովրդի հանդեպ...

Նա ընթերցում է, իսկ մենք նայում ու մտածում ենք. ո՞ւր է թե բոլորը մինչև վերջ. այսպես հավատարիմ մնան իրենց տված երդումին, խոսքին...

Ո՞ւր է թե...

Երևանդին շրջանում բոլորն են ճանաչում, հարգում, սիրում: Անձրևին, քամուն, ցրտին հաճախ են մարդիկ դիմում նրա օգնությանը, կանչում, տանում իրենց գյուղերը, հարևան շրջաններն անդամ: Երբեք չի ցլանում, չի մերժում. «Որտեղ էլ հերկեմ, ցանեմ ու հնձեմ, միևնույն չէ՞, մեր հողը չէ՞, մեր բերքը չէ՞»: Սա է Երվանդ Բասենցյանի աշխատանքի նշանաբանը:

«Մեր հողը, մեր բերքը»: Տիրոջական այս վերաբերմունքը չէ՞, որ պակասում է այսօր շատերին: Մարդկանց մեջ նիրհած այդ հատկությունը չէ՞, որ արթնացնելու է մղում այսօր մեր կուսակցությունը:

Երվանդ Բասենցյան-մեխանիզատորի 35-ամյա աշխատանքը իզուր չի անցել: Նա պարգևատրվել է Լենինի և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, մեդալներով, սոցմրցության հաղթողի կրծքանշանով:

Կոլեկտիվը միաբերան նրան ընտրել է Վրաստանի կոմկուսի XXV համագումարի պատգամավոր, հետո 1974 թվականից, առաջադրվում է կուսակցության շրջկոմի բյուրոյի անդամ, ժողդեպուտատների շրջանային սովետի դեպուտատ: Արտադրության և սոցիալական առաջընթացին նպաստող պրոբլեմային շատ հարցեր, որոնք բխում են կուսակցության վերակառուցման և արագացման այսօրվա պահանջներից, լուծվում են նրա անմիջական մասնակցությամբ: Նրա խոսքը չի հնչում որպես դատարկ կրակոց: Նրա ջանքերով է դուրս բերվել բրիգադային, ընտանեկան և անհատական կապալը, այս տարվանից կյանքի ուղեգիր է ստանում ներտնտեսային հաշվարկն ու ինքնաֆինանսավորումը:

... Ժողովրդական իմաստությունն ասում է. «Պտուղը ծառից հեռու չի ընկնում»: Ավանդական այս խոսքը հաստատվել է նաև Բասենցյանների օջախում: Երվանդը հորը արժանի որդի է մեծացել՝ ազնիվ, աշխատասեր: Տիկնոջ՝ Վարդիթերի հետ այդպես էլ մեծացրել է իր հինգ տղաներին: Ավագը՝ Մեխակը, բրիգադի նախկին մեխանիզատորը, բարձրագույն կրթություն ստանալուց հետո ղեկավարում է Հարևան Կորկ գյուղի կոլտնտեսությունը, Սերյոժան Երևանի լամպերի գործարանի տեխնիկական բաժնի վերահսկիչն է, Սարգիսը՝ նախկին մեխանիզատորը, սովորում է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում:

- Երկրորդ երիտասարդությունս սկսվեց, երբ կրտսեր տղաս՝ Խաչիկը, նույնպես նստեց տրակտորի ղեկին,- ասում է Երվանդն ու ավելացնում,- հիշեցի հորս խոսքերը. «Թող մեր գերդաստանը մեխանիզատորների գերդաստան լինի»: Պիտի այնպես անեմ, որ թոռներս էլ մեխանիզատոր դառնան,- ժպտում է Երվանդը, իսկ մենք

մտածում ենք. ինչո՞ւ միայն մեխանիզատոր, ո՛վ գիտի, գուցե Բասենցյան թռչուններից որևէ մեկը բանաստեղծ դառնա, դովնրգի ազնիվ աշխատանքը կամ նկարիչ՝ հայրենի լեռներն ու դաշտերը վրձնի: Բայց... համեստ է Երվանդ Բասենցյանի, այդ համեստ ու ազնիվ հողի աշխատավորի երազանքն անգամ:

Ամեն անգամ, երբ Բասենցյանների օջախում սեղանի շուրջն են հավաքվում որդի ու բարեկամ, հնչում է Բասենցյան հոր՝ իր հոր-ից ժառանգած խոսքերը.

«Այնպես արեք, որ գյուղում պարզերես քայլեք...»:

7 հունվարի

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ ՀԱՆՁՆԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բոգդանովկայի շրջանը վերջին տարիներս մշտապես հայտնվում է համամիութենական սոցիալիստական մրցության հաղթողների շարքում: Լավ աշխատանքը, բնականաբար, լավ ապրելու պայմաններ է ստեղծել բոգդանովկացիների համար, միայն վերջին տարում շրջանի ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ավելացել է 6 միլիոն ռուբլով, հասել 29 միլիոնի: Շրջանի համարյա բոլոր բնակավայրերում այսօր արտադրական ու սոցիալ-կուլտուրական նշանակության օբյեկտների մեծ շինարարություն է ընթանում:

Հաջողությունները կարելի է թվարկել երկար, սակայն ուրախալի է, որ կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի պլենումում հիմնական խոսակցությունը ծավալվեց ոչ թե հաջողությունների, ձեռքբերումների, այլ վերակառուցման բնագավառում շրջկոմի դեռևս չկատարած աշխատանքների, անելիքների շուրջ:

«ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՉԵՆ ԴԱՏՈՒՄ»

Իրոք որ, կենսունակ է այս իմաստությունը: Բայց չէ՞ որ կան նաև հաջողություններից գլխապտույտի մեջ ընկնելու վտանգը: Արդյո՞ք դա չի սպառնում շրջկոմի բյուրոյի անդամներին:

Այո, հաղթողներին չեն դատում, բայց, խոստովանենք, հետաքրքիր է իմանալ նրանց ինքնագնահատականը:

Ամբողջությամբ բոլոր ելույթները ընթերցողներին ներկայացնելու հնարավորություն չունենալով, վճռեցինք տեղ տալ միայն բյուրոյի անդամների ինքնաքննադատական դիտողություններին, համոզված լինելով, որ մեզ ճիշտ կհասկանան, որովհետև դա առավել համահունչ է վերակառուցման ոգուն ու շնչին:

ՎԱՍԻԼ ՔՈՉՈՅԱՆ

Կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի առաջին քարտուղար, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի անդամ

-Կարելի՞ է, արդյոք, պնդել, որ գոհ ենք շրջկոմի բյուրոյի աշխատանքի ներկա վիճակից, շրջկոմի ապարատի գործունեությունից: Ոչ, ընկերներ, մենք դեռևս զժգոհ ենք: Ավելին, գտնում եմ, որ ապրում ենք մեր արմատական վերակառուցման տակավին վճռական փուլը:

Անձամբ ես գտնում եմ, որ ոչ միշտ եմ արդյունավետ գրադվում կադրերի ընտրությամբ, ոչ միշտ եմ կարողանում համբերատարորեն գսպել զայրույթս: Շրջանի կոմունիստները, Վրաստանի կոմկուսի Կենտկոմը իմ նկատմամբ մեծ վստահություն են ցուցաբերել: Անչափ գոհ կլինեմ, եթե շրջանի կոմունիստները, աշխատավորները իրենց անկախակալ ելույթներում, նամակներում մատնանշեն իմ թերի կողմերը, թեև, խոստովանում եմ, սովական թերություններիս մասին գիտեմ և ամեն գնով փորձում եմ դրանցից ազատվել:

ԱՐՏՅՈՒՇ ՍԱՆՈՍՅԱՆ

Ժողովրդահսկողության շրջանային կոմիտեի նախագահ

- Մեր կոմիտեն ոչ միշտ է օգտագործում իր իրավունքները: Կուսակցական սկզբունքայնությամբ պետք է ընդունել, որ մեր խմբերի և պոստերի աշխատանքում դեռևս մեծ տեղ են գրավում ձևականությունը և անհետևողականությունը, որը չի կարող բացասաբար չանդրադառնալ մեր գործունեության արդյունավետության վրա:

Որպես ժողովրդահսկողության շրջանային կոմիտեի նախագահ, գտնում եմ, որ մեր աշխատանքի վերակառուցումը չափից ավելի դանդաղ է ընթանում:

ՍԱՐԳԻՍ ՆԱԶԱՐՅԱՆ

ՇԱԱՄ-ի նախագահ

- Վերակառուցման ներկա փուլում կտրուկ մեծանում է մեր ագրոարդյունաբերական միավորման դերը, այդ իսկ պատճառով, շրջկոմի բյուրոյի հաշվետվության մեջ առավել մեծ տեղ է հատկացված մեր աշխատանքում տեղ գտած թերություններին:

Ցավոք, մեզանում զգացվում է կադրերի պակաս: Այդ հանգամանքը բացասաբար է անդրադառնում կոլեկտիվ և ընտանեկան կապալի արմատավորման վրա: Այնուամենայնիվ, խոստովանում եմ, որ դրանում ՇԱԱՄ-ի ղեկավար մասնագետների մեծ բացթողումներն էլ կան: Հատկապես պետք է խոսել եղած ռեզերվների անբավարար օգտագործման մասին, այն մասին, որ շրջանի էկոնոմիկայի առաջատար ճյուղի անասնապահության, բնագավառում տեղ են գտել էական թերություններ ու բացթողումներ: Օրինակ, 1987 թվականին յուրաքանչյուր 100 կովից ստացվել է միայն 80 հորթ, որ 1980-ի համեմատությամբ միայն երկու միավորով է ավելի: Կամ խոշոր եղջերավոր անասունների նախիրում կովերի գլխաքանակը միայն 29 տոկոս է կազմում: Լուրջ բացթողումներ կան նաև խոզաբուծության և ոչխարաբուծության բնագավառներում:

ՆԻԿՈԼԱՅ ՁԵՌՆԻՇՈՎ

Կուսշրջկոմի երկրորդ քարտուղար

- Հաճախ, պայքարելով առաջադրանքների իրացման համար, մենք հետաձգում, կամ էլ, ինչ մեղքերս թաքցնենք, ընդհանրապես մոռանում ենք հոգ տանել մարդկանց աշխատանքի պայմանների, կենցաղի, հանգստի օրինակելի կազմակերպման մասին...

ԼԱՈՒՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Կուսշրջկոմի քարտուղար

-Առ այսօր, մենք չկարողացանք համոզել մեր տնտեսությունների և ձեռնարկությունների ղեկավարներին, որոնք, ի դեպ, հիմնականում նաև պրոպագանդիստներ են, առավել պատասխանատու մոտենալ աշխատավորների տնտեսագիտական կրթությանը:

Այս ուղղությամբ մեր արդյունավետ ջանքերի հետևանքով, պրոպագանդիստի պարտականությունը դնահատվում է որպես ավելորդ բեռ, և դրանով է մեծ մասամբ բնորոշվում պարապմունքների մակարդակը:

Մեր աշխատանքում հաճախ մոռանում ենք գաղափարախոսական աշխատանքի սոցիալ-տնտեսական հիմքի մասին, մոռանում ենք, որ սոսկ լոզունգներով և կոչերով մարդկանց համոզել անհնար է:

ԿԻՄ ՂԱՐԱԼՅԱՆ

Մեխանիզատոր

- Մենք դեռևս չափից ավելի շատ որոշումներ ենք ընդունում: Կարելի է ավելի քիչ նիստեր անց կացնել, և ավելի հաճախ լինել շրջանի աշխատավորական կոլեկտիվներում, տեղերում ճշտել գործերի վիճակը:

ԻՎԱՆ ԲԱԼԻԱՇՎԻԼԻ

Շրջսովետի գործկոմի նախագահ

- Ես դեռևս չեմ կարողացել ամբողջությամբ շրջսովետի գործկոմի ապարատի և ակտիվի աշխատանքը վերակառուցել ժամանակի պահանջներին համապատասխան:

Սովետների աշխատանքում առկա են արգելակող գործոններ, որոնք խոչընդոտում են մեր առաջընթացը: Մինչդեռ, այդ հարցերով պետք է առավել առարկայորեն զբաղվեն թե՛ շրջսովետի, գործկոմի նախագահը, և թե՛ շրջանային ու գյուղական սովետների դեպուտատները:

Թերևս ոչ միշտ եմ համարձակ, սկզբունքային դիրքերից քննարկել առանձին հարցեր և ընդունել գործնական բնույթի որոշումներ:

***

Դահլիճի միկրոֆոնի առջև շատերը խոսեցին, արտադրական հոգսերի, խանգարող հանգամանքների, հանրապետական այն մինիստրությունների և կազմակերպությունների մասին, որոնք թերանում են բոգդանովկացիների նկատմամբ իրենց պարտականությունների կատարման մեջ:

Բոգդանովկայի կոլտնտեսություն-համայնքի վարչության նախագահ Սոկրատ Հանեսյանի քննադատությունն ուղղված էր կուսակցության շրջկոմի բյուրոյի բոլոր անդամներին.

- Չափից ավելի չէի՞ն նրանք ինքնախստապահանջ: Ախր այդքան թերություններ որ լինեն, մեր կորուկ առաջընթացը որտեղի՞ց: Ես այսպես եմ հասկանում վերակառուցումը, այսօր աշխատել ավելի լավ, քան երեկ, վաղն աշխատել ավելի լավ, քան այսօր: Եվ եթե մենք այդ սկզբունքին հավատարիմ ենք, ուրեմն, շնորհիվ նախ և առաջ շրջկոմի և նրա բյուրոյի կողմից կուսակցական ճիշտ ղեկավարման:

Իսկ մեր աշխատանքում սխալներն ու թերացումները անխուսափելի են:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Երկու տարի առաջ Մոսկվայի Քաղաքական գրականություն հրատարակչությունը «Ակնարկներ կուսակցության մարդկանց և գործերի մասին» շարքում լույս ընծայեց «Առաջինները. էջեր մի շրջանի կյանքից» գիրքը: Այդ գրքի հերոսներից մեկը՝ շրջկոմի առաջին քարտուղար Վասիլ Քոչոյանը, նկատում է.

- Թերևս սխալից ապահովագրված է նա, ով ոչինչ չի անում: Կյանքը բազմաբարդ է, և այստեղ ամեն ինչ հնարավոր է: Միայն յուրաքանչյուր սխալ պետք է մեզ համար ուսանելի լինի: Մեր կուսակցական համալսարանում ուսման ժամկետ գոյություն չունի...

***

Կուսակցության Բոգդանովկայի շրջկոմի պլենումի աշխատանքին մասնակցեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ն. Ա. Ճիթանավան:

14 հունվարի

«ԱՐԵՎԻԿԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ»

Արևիկ («Սոլնիշկո») անունն է կրում բնակչության կենցաղսպասարկման Ախալքալաքի կոմբինատին առընթեր գործող կարի կոոպերատիվը: Այն ծնունդ առավ անցած տարվա օգոստոսին շրջժողկրթբաժնի մեթոդկաբինետի դրադարանավարուհի Ժենյա Գրիգորյանի նախաձեռնությամբ: Նրան օգնության ձեռք մեկնեցին շրջանային սովետի գործկոմը, կոմբինատի վարչությունը: «Արևիկը» վարկավորվեց պետբանկի կողմից, կոմբինատի կենցաղսպասարկման տաղավարում հատկացվեցին հարմարավետ սենյակներ, որոնցում ժամանակավորապես տեղադրվեցին հենց անդամների սեփական կարի մեքենաները: Հաղթահարվեցին առաջին դժվարությունները:

- Կոոպերատիվը ընտանեկան է,- ասում է նախագահը՝ Ժ. Գրիգորյանը,- թողարկում է կանացի ներքնահագուստ, բլուզկաներ, անկողնու և մանկական ժանյակազարդ սպիտակեղեն, նորահարսի դվխաշորեր (ֆատա), թվով 19 արտադրատեսակ:

Խանութներից ձեռք բերված կտորեղենը կոոպերատիվի նախագահի (որը նկարիչ ու մոդելագործ է) և անդամների՝ Հ. Հակոբյանի, Ռ. Ալվարյանի, Ռ. Բդոյանի, Վ. Խաչատրյանի հմուտ ձեռքերով դառնում է գեղեցիկ, բարձրորակ պատրաստի արտադրանք:

Թեև ընդամենը 6 ամիս է, ինչ գոյություն ունի կոոպերատիվը, սակայն այդ կարճ ժամանակամիջոցում իրեն լավ է դրսևորել, ցույց տվել իր օգտակարությունը, տվել է ութ հազար ռուբլու արտադրանք, մարել պետբանկից ստացած կարճաժամկետ վարկը (երկու հազար ռուբլի) անդամներին էլ ամեն ամիս 150-160 ռուբլի աշխատավարձ է տալիս: Այժմ կոոպերատիվը իր հաշվում ունի 750 ռուբլի զուտ եկամուտ:

«Արևիկի» կարմրաթելենը, որը լավ պահանջարկ ունի, հիմնականում պայմանագրային հիմունքներով վաճառվում է շրջկենտրոնի առևտրական կենտրոնում, մեկ-մեկ էլ դուրս է բերվում տոնավաճառի՝ շրջանից դուրս:

- Էջմիածնի «Զվարթնոց» տոնավաճառում գնեցինք անկողնու ու մանկական ժանյակազարդ սպիտակեղեն,- գրում են Երևանից մի խումբ գնորդներ: Գնապիտակներից իմացանք, որ արտադրանքը ախալքալաքցիներինն է: Շնորհավորում և շնորհակալություն ենք հայտնում «Արևիկի» կոլեկտիվին՝ որակով ու մատչելի գներով արտադրանք թողարկելու համար:

Բոլորովին վերջերս «Արևիկը» իր արտադրանքի նմուշներով մասնակցեց հանրապետության ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում կազմակերպված մրցույթի: Նրա արտադրանքը արժանացավ այցելուների և թիլիքաղսովետի առևտրի վարչության ապրանքագետների ուշադրությանն ու բարձր գնահատականին: Կոոպերատորները խոստացան իրենց թողարկած իրերից բաժին հանել նաև մայրաքաղաքի կենտրոնական հանրախանութին:

Ախալքալաքի շրջանում այժմ գործում է 12 կոոպերատիվ, դրանցում ընդգրկված է 57 անդամ: Անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվում են 385 քաղաքացիներ: Շրջանի կոոպերատիվներն արդեն 52 հազար ռուբլու արտադրանք են տվել ու ծառայություն մատուցել:

5 մարտի

ՏԵԽՆԻԿԱՆ՝ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՏՈՂԱՆԻ

Լարված օրեր են գյուղատեխնիկայի շահագործման և վերանորոգման Բոգդանովկայի շրջանային ձեռնարկության արհեստանոցում: Դեռ անցած տարվա նոյեմբերից են այստեղ ձեռնամուխ եղել կոլտնտեսությունների և սովխոզների, գյուղատնտեսական մյուս ձեռնարկությունների տեխնիկայի վերանորոգման աշխատանքներին:

Պլան-գրաֆիկով աշնան-ձմեռային նորոգումների ժամանակ, մինչև ապրիլի 1-ը, պետք է վերանորոգման ենթարկվի տարբեր մակնիշի 76 տրակտոր, 10 բեռնատար ավտոմոբիլ: Փետրվարի 25-ի դրությամբ նորոգված է 56 տրակտոր և 6 ավտոմոբիլ:

Արհեստանոցում բարձր որակով նորոգվել և պատրաստության տողանի են կանգնեցվել ձեռնարկության մեքենայացված-մեխանիզացիոն ջոկատի, Գորելովկայի, Փոկայի, Ռոդիոնովկայի, Մեծ Աբաղայի, Խոջաբեկի կոլտնտեսությունների գյուղատնտեսական տեխնիկան:

- Նախորդ տարիների համեմատությամբ, այս տարի զգալիորեն բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը, բարելավվել նորոգումների որակը, դրանց նպաստել է առաջավոր տեխնիկայի ներդրումը (թեև առաջին քայլերն է արվել),- ասում է արհեստանոցի վարիչ Լավրենտի Ինասարիձեն: Արտադրությունից դուրս

եկած խառատային երկու և մեկ շաղափող հաստոցներին փոխարինել են նոր, կատարելագործված մեքենաներ: Տնտեսչվարկային եղանակով աշխատող 16 մարդուց բաղկացած կոլեկտիվը ամեն կերպ ձգտում է աշխատել գրաֆիկի գերազանցումով, տեխնիկայի նորոգումները կատարել բարձրորակ:

Դրանում իրենց մեծ բաժինն ունեն նորմավորող-տեխնոլոգ Վահան Բարսեղյանը, փորձարկող-վարպետ Վարդան Փահլևանյանը, գոդող Մերուժան Խոդերյանը, փականագործ Ռաֆիկ Զոմարյանը և ուրիշներ:

Արհեստանոցի բանվորները ձգտում են ժամկետից շուտ վերկուցել տեխնիկայի աշնան-ձմեռային նորոգումների պլանը կատարելու մասին, ձեռնամուխ լինել բերքահավաք տեխնիկայի նորոգումներին:

15 մարտի

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ԱՆՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Բոգդանովկայի շրջանում վերջին մի քանի տարում, ինչպես ասում են այսպիսի դեպքերում, որոշ աշխատանք է կատարվել բնակչության կենցաղային սպասարկումը բարելավելու ուղղությամբ: Շրջկենտրոնում շարք են մտել հիգիենայի տուն, շրջանի Գանձա, Փոկա, Հեշտիա, Գորելովկա գյուղերում մի քանի ծառայությամբ կենցաղի տներ, Դիլիֆ, Գոնդուրա գյուղերում ոսկերչական, կար ու ձևի, փականագործական արհեստանոցներ: Մոտ ժամանակներս շրջկենտրոնում կբացվեն որմնաբլոկների, Հեշտիայում կոոպերատիվ հիմունքներով լվացահեղուկի (ժավել) պատրաստման արտադրամասեր, առաջիկայում այս նույն գյուղում շահագործման կհանձնվի մորթու վերամշակման (մորթե բաճկոնների արտադրություն), Գանձայում կահույքի պատրաստման և նորոգման արհեստանոցներ:

Սակայն արվածն ամենևին էլ չի համապատասխանում վերակառուցման, արագացման այսօրվա պահանջներին: Կենցաղսպասարկման վարչությունը անցած տարի ծայրը-ծայրին հասցնելով միայն մոտեցավ տարեկան բնագծին: Բանն այն է, որ կոմբինատի աշխատանքներում դեռևս գերակշռում է հնամոլությունն ու անշարժությունը, որը ոչ միայն իր բացասական ազդեցությունն է թողնում արտադրության վերջնական արդյունքի վրա, այլև ստեղծում է բարեհոգության և հանդուրժողականության մթնոլորտ, արգելակում նորի, առաջավորի արմատավորումը:

– Վերակառուցումը խանդավառեց բոլոր մարդկանց, հսկայական հույսեր ծնեց,– ասում է կենցաղսպասարկման վարչության գլխավոր ինժեներ Ալեքսան Բդոյանը:– Սակայն մեր ձեռնարկության ամբողջ կոլեկտիվին, այնպես էլ մեզ ղեկավարներիս, դեռևս մտահոգում է վերակառուցման դանդաղ ընթացքը: Շրջանի բնակչության սպասարկումը գտնվում է ցածր մակարդակի վրա, մատուցած կենցաղսպասարկման ծառայության մակարդակը երեք անգամ

ցածր է միջին հանրապետականից: Պատճառները բազմաթիվ ու բազմաբնույթ են:

Շրջանի 30 գյուղերից 21-ում կենցաղսպասարկման ոչ մի կետ չի գործում: Շարունակում է լուրջ թերություն մնալ բաղնիքների հարցը: Այժմ շրջանում կա միայն 13-ը: Անհանդուրժելի է, որ առանձին գյուղերում կենցաղսպասարկման օբյեկտների թիվը ավելանալու փոխարեն կրճատվում է:

Մխիթարական չէ հատկապես հեռավոր Կալինինո, Ժդանովական, Ուչմանա, Թորիա, Ասփարա, Խուլդումո, Ռոդիոնովկա և այլ գյուղերի վիճակը: Թող փորձի այս գյուղերի բնակիչներից մեկը նորոգման տալ խափանված սառնարանը, ռադիոընդունիչը, հեռուստացույցը, լվացքի մեքենան կամ տնային գործածության որևէ իր՝ իսկույն ծայր կառնեն դժվարություններ: Մարդիկ միանգամայն հասարակ խափանման պատճառով այս կամ այն իրը ստիպված են լինում գյուղից տեղափոխել շրջկենտրոն:

Իսկ շրջկենտրոնո՞ւմ: Այստեղ էլ դժվարությունները կրկնապատկվում են: Բանն այն է, որ Ախալցխեի ռադիո-հեռուստացույցների, կենցաղային բարդ տեխնիկայի նորոգման գործարան - միավորման Բոգդանովկայի օբյեկտները ի վիճակի չեն լրիվ բավարարելու մարդկանց պահանջը: Կենցաղսպասարկման կենտրոնացման նպատակով կազմակերպված այդ միավորումը անառարկելի առավելություններ ունենալու փոխարեն, չափազանց լուրջ դժվարություններ է ստեղծել Բոգդանովկայի (և ոչ միայն Բոգդանովկայի) այդ հեռավոր շրջանում գործող իր օբյեկտների աշխատանքի համար, դրեթե ձախողել արտադրամասերը նոր, կատարելագործված անհրաժեշտ սարքերով ու պահեստամասերով մատակարարելու գործը, անբավարար է վերահսկում նրանց աշխատանքը: Դա է պատճառը, որ շատ քաղաքացիներ կենցաղային սարքերը օրերով մնում են ատելիեներում, առաջացնելով մարդկանց արդարացի բողոքը:

Ժամանակը չէ՞ որ կենցաղմինիստրությունում հաշվի առնեն այդ բողոքները, լրջորեն մտահոգվեն բնակչության իսկական սպասարկման մասին, այդ օբյեկտները հանձնեն Բոգդանովկայի կենցաղսպասարկությունների վարչությանը, որի ղեկավարությունը, կարծում ենք, ավելի մոտիկից ու գործնական կլինի:

Հայտնի է, որ Բոգդանովկայի շրջանում առաջընթաց լուրջ քայլեր են արվել ու շարունակում են արվել բնակչության նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարման գործում, կառուցվում են բնակելի տներ, կուլտուրայի օջախներ, հանրակրթական դպրոցներ, մանկական դպրոցական հիմնարկներ:

Բայց ինչո՞ւ գյուղերում կենցաղի օբյեկտների համար շենքեր չեն կառուցվում և հատկացվում, ինչո՞ւ ցածր մակարդակի վրա է գտնվում կենցաղսպասարկումը: Պատճառն այն է, որ այս կենսական հարցում պասսիվ դիրք են դրավել հանրապետության կենցաղմինը, տեղական սովետները, կոլտնտեսություններն ու սովխոզները: Որոշումներ շատ են ընդունվել, սակայն ինչ-ինչ պատճառներով դրանք կյանքի չեն կոչվել: Ձախողվել է, օրինակ, շրջանային սովետի 1985 թվականի մարտի 4-ի նստաշրջանում ընդունված՝ Փոքր

Խանչալի, Ջիգրաշեն, Դիլիֆ և այլ գյուղերում բաղնիքներ կառուցելու, կենցաղսպասարկման ծառայություններին շենքեր հատկացնելու որոշումը: Անպատասխան են մնացել, գործնական լուծում չեն ստացել նաև շրջսովետի գործկոմի կենցաղսպասարկման վարչության կողմից կենցաղմինի նյութատեխնիկական բազան հարստացնելու նպատակով բարձրացրած հարցերը:

Կենցաղսպասարկման ոչ բոլոր արհեստանոցներն ու կետերն են, որ աշխատում են համաչափ: Ժամանակին չեն ստացվում հումքի նախատեսված ֆոնդերը, հոդ չի տարվում աշխատատար գործողությունների մեքենայացման ծավալն ընդարձակելուն: Անցած տարի կոմբինատին հատկացված 50 հազար ռուբլու ֆոնդավորված գործվածքների դիմաց ստացվեց միայն 200 ռուբլու կտորեղեն: Շրջան չհասցվեց 2.000 ասբոշիֆեր, 270 խորանարդ մետր շինափայտ: Այդ էր պատճառը, որ կոմբինատի բնակարանների շինարարության ծառայությունը տարեկան առաջադրանքը զգալիորեն թերակատարեց:

Հումքի և շինանյութերի ժամանակին և պահանջած քանակությամբ մատակարարման գործում եղած անտարբերությունը շարունակվում է նաև այս տարի: Շրջկենտրոնի հիգիենայի տունը մեկ ամիս չաշխատեց, դադարեցին գործելուց լվացքատունը, բաղնիքը, քիմմաքրման, մետաղագործական, լուսանկարչական, ավտոմեքենաների պատյանների պատրաստման ծառայությունները՝ վառելիքով ապահովված չլինելու պատճառով: Ախալցիխեի նավթամթերքների բազան, որը կենտրոնացված կարգով իր ցիստեռններով պետք է վառելանյութ տեղ հասցներ, թերացավ իր պարտականությունների մեջ: Ոչ մի բողոք չօգնեց նավթամթերքների բազայի ղեկավարության համառությունը կոտրելու համար: Դործը գլուխ եկավ այն բանից հետո, երբ վարչության ղեկավարությունը հարկադրված բեռնատար ավտոմեքենաներից մեկը մազութացիստեռնի վերածեց, կարգավորեց մազութի մատակարարման գործը:

Շինանյութերով և հումքով ապահովված չլինելու պատճառով գործի չէին դրվում կահույքի արտադրության նորոգման նոր արտադրամասը Դանձայում, մորթե բաճկոնների պատրաստման նոր կետը՝ Հեչտիայում:

Անթույլատրելիորեն դանդաղ է կատարելագործվում կոմբինատի արտադրամասերի հիմնական ֆոնդերի կառուցվածքը: Տեղադրված մեքենասարքավորումների գերակշռող մասը բարձր մաշվածություն ունի, շահագործվում է 25-30 տարուց ավելի: Առանձին արտադրամասերում զգացվում է տարբեր հաստոցների ու սարքերի պակաս: Կոմբինատն ապահովված չէ սպասարկման շրջիկ արհեստանոցներով, ինքնաթափ ավտոմեքենաներով, բուլդոզերով:

Թեպետ այս բոլորը հայտնի են կենցաղմինիստրությանը, բայց, ցավոք, դրանք կարգավորելու ուղղությամբ գործնական քայլեր չեն արվում:

Արտադրության կազմակերպման վրա բացասաբար է անդրադառնում նաև արտադրամասերի ու կետերի մասնատվածությունը և ցրվածությունը: Շրջկենտրոնի 20 օբյեկտներից 12-ում աշխա-

տում է մեկական արհեստավոր: Այդ ամենի պատճառով կատարվում են ավելորդ ծախսեր, վառելանյութի, էլեկտրաէներգիայի և դույլքի գերածախսի տեղիք է տրվում:

Լավ չի կազմակերպված կենցաղսպասարկման օբյեկտների համար որակյալ կադրերի՝ դերձակների, ձևարարների, կոշկակարների, կենցաղային տեխնիկայի վարպետների և այլ մասնագետների պատրաստումը: Սովորական երևույթ է դարձել վարպետ-բանվորների հոսունությունը: Մասնագետ վարպետների 30 տոկոսը կենսաթոշակառուներ և կենսաթոշակի տարիքի հասած մարդիկ են:

Բնակչության կենցաղսպասարկման գործում տիրող այս անմխիթար վիճակը հետևանք է նաև այն բանի, որ կոմբինատի վարչության (պետ՝ Հ. Զոկանդարյան, կուսակազմակերպության քարտուղար՝ Գ. Ղարսլյան) աշխատանքը դեռևս չի կազմակերպվել նոր պահանջներին համապատասխան, ինչպես ասում են, գործում են յոլա գնալու սկզբունքով:

Հանրապետության կենցաղմինի, շրջանային ղեկավար մարմինների գործնական օգնությամբ, կենցաղսպասարկման վարչությունը պետք է ամեն ինչ անի եղած թերությունները ու վրիպումները վերացնելու, բնակչության կենցաղսպասարկումը լուսաբանի կազմակերպելու համար: Այս է կոլեկտիվի պատվի խնդիրը:

25 հունիսի

ԱՐՄԱՏԱՎՈՐԵԼՈՎ ԱՌԱՋԱՎՈՐԸ

Ախալքալաքի շրջանի Վաչիանի սերմնարուծական սովխոզի կեր հայթայթողները լուրջ ուշադրություն են նվիրում նորի, առաջավորի արմատավորմանը: Դրանցից մեկը կոշտ կերերի հակավորումն է, որին ձեռնամուխ են եղել այս տարի առաջին անգամ:

- Այդ առաջավոր եղանակը հնարավորություն է տալիս ոչ միայն բացառել հնձի և փոխադրման միջև առաջացող խզումը, այլև կանխում է կորուստները, հնարավորություն ընձեռում 35-40 տոկոսով ավելի կոշտ կեր կուտակելու,- ասում է դաշտավարական բրիգադավար Սուրեն Ղազարյանը:

Գործի դրված մամլիչ ագրեգատները բարձր արտադրողականությամբ են աշխատեցնում մեխանիզատորներ Սարգիս Զաթաջյանը և Անդրանիկ Քեհյանը: Նրանք աշխատում են անհատական կապալով և շահագրգռված են, որ աշխատանքային ժամերը օգտագործվեն արդյունավետ:

Կերակուտակման գործին ակտիվորեն մասնակցում են 250-ից ավելի բանվորներ, ծառայողներ: Դե ուրիշ կերպ հնարավոր էլ չէ, խոտը շատ է, պլանը՝ 1.800, պարտավորությունը՝ 2.200 տոննա: Դաշտավարներին միացել են կաթնապրանքային երեք բրիգադների անասնապահները: Նրանք հնձում են բնական խոտհարքերը՝ թեքությունների, դաշտերի միջնակների, բացատների փարթամ խոտը: Եռանդուն աշխատանք են կատարում հովիվներ Լյուդվիգ Թորոսյանը, Խանիկ Բարբառյանը, նրանցից հետ չեն մնում կթվորուհի-

հնձվորներ Եպրաքսյա Նահապետյանը, Մարգարիտ Օվակյանը, Անահիտ Պալոյանը, որոնք ամեն օր հնձում է 0,3-0,4-ական հեկտարի բերք: Աշխատանքը կատարվում է անհատական կապալով: Կերակուտակողներից յուրաքանչյուրը, բացի դրամական վարձատրությունից, ստանում է հավաքած խոտի 70 տոկոսը:

Սովխոզում արդեն կուտակվել և դեզանոց է փոխադրվել 1.200 տոննայից ավելի հակավորած խոտ: Տնտեսությունը շրջանում առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ առաջին պատվիրանի կատարմանը և պետությանը նախատեսված 35-ի փոխարեն հանձնեց 45 տոննա լավորակ խոտ:

Սակայն սա դեռ բոլորը չէ: Վաչիանցիները որոշել են նախորդ տարվա համեմատությամբ կրկնապատկել նաև հյութալի կերերի պաշարները: Հիանալի աճած 35 հեկտար արևածաղկի պլանտացիաների կանաչ զանգվածով նախատեսված է պատրաստել 1.100-1.200 տոննա սիլոս: Եթե այս ամենին ավելացնենք, որ 12 հեկտար կիսաշաքարային ճակնդեղի պլանտացիաներից պատրաստվելու է մինչև 600 տոննա հյութալի կեր, ապա կերի հարուստ պաշարների կուտակման համար մղվող պայքարի պատկերը ամբողջական կլինի:

27 սեպտեմբերի

ՄՏԱՀՈԳՈՂԸ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱԿԱՄՆ Է

Ընդամենը 41 հեկտար են կազմում Մամզարայի սովխոզի կարտոֆիլի պլանտացիաները: Ցանքատարածությունները ընդլայնելու հնարավորություններն այստեղ դրեթե բացառված են, ուստի երկրագործներն ու մեխանիզատորները պարենային այս արժեքավոր կուլտուրայի արտադրությունն ավելացնելու միակ ուղին համարում են բերքատվության բարձրացումը, և դրան նրանք հասնում են իրենց համառ ու տքնաջան աշխատանքով:

Դեռևս անցյալ տարվա աշնանից կանգնելով բարձր բերքի հերթափոխի, տնտեսության մեխանիզատորները կարտոֆիլին հատկացված հողամասերը պարարտացրին հանքային և օրգանական պարարտանյութերով: Գարնանը ցանքը, ապա մշակության աշխատանքները, ջրարբիացումը կատարվեցին բարձր որակով, լայնորեն արմատավորվեց բրիգադային կապալը, կիրառվեցին նյութական շահագրգռվածության միջոցները:

Ահա այն հիմնական լծակները, որոնք սովխոզին հնարավորություն տվեցին (դիրեկտոր Մառուկ Մանասյան) այս տարվա բնակլիմայական անբարենպաստ պայմաններում կարտոֆիլի արտադրության բարձր բնագծեր նվաճել:

Բերքահավաքը ոտքի է հանել դաշտավարական երկու և տրակտորային մեկ բրիգադների (ղեկավարներ Գարեգին Մանուկյան, Մուշեղ Վարդանյան, Կարլեն Բաղդասարյան) երկրագործներին ու մեխանիզատորներին: Նրանց օգնության են եկել տեղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի աշակերտական արտադրական բրիգադը (ղեկավար Մարիամ Փութուլյան) և Գանձայի Ռուսթավելու անվան միջ-

նակարգ դպրոցի բարձր դասարանների աշակերտները: Գործի է դրված կարտոֆիլահան երեք ագրեգատ:

Թեև կարտոֆիլագործներին մեծ հոգսեր են պատճառում տեղացող անձրևներն ու ցուրտը, սակայն դրանք չեն ընկճում հողի դինը հասկացող մարդկանց կամքը: Նրանք օգտագործում են նպաստավոր եղանակի յուրաքանչյուր ժամը ու առաջ տանում բերքահավաքը: Օրական մեկուկեսական արտադրական նորմա են կատարում մեխանիզատորներ Մնացական Մանուկյանը, Վիկտոր Ասլանյանը, Սեդրակ Խաչատրյանը:

Աշխատանքային 10 օրում հավաքվել է 18 հեկտարի բերք: Նախնական արդյունքը գոհացնում է բոլորին, հեկտարից ստացվում է 175 ցենտներ կարտոֆիլ, որը պլանավորվածի համեմատությամբ ավելի է 32 ցենտներով:

Բերքահավաքին զուգընթաց առաջ են տարվում մթերումները. արդեն առևտրական և մթերող կազմակերպություններին է հանձնվել 315 տոննա կարտոֆիլ: Եվս մի քանի օր և տնտեսության կարտոֆիլագործները կգեկուցեն կարտոֆիլի պետհանձնումների (առաջադրանքը 340 տոննա է) պլանը 150-160 տոննայով դերակատարելու մասին:

Սակայն, այս ամենով հանդերձ, տովխոզն ունի նաև հոգսեր, չլուծված պրոբլեմներ: Ամենամտահոգողը տեխնիկական միջոցներով անբավարար ապահովվածությունն է: Զգացվում է փոխադրամիջոցների, «Բելառուս» մակնիշի տրակտորների, կցասայլակների պակասը:

Մամզարայի տնտեսության համար տեխնիկական վերազինումը անհրաժեշտություն է: Բոգդանովկայի լեռնային անընդհատ փոփոխվող կլիմայական պայմաններում ինչպես շրջանի մյուս տնտեսություններում, այնպես էլ Մամզարայում բերքահավաքի տեմպը կարելի է արագացնել, բերքը կորստից փրկել միայն մարդու և անհրաժեշտ տեխնիկայի դաշինքով:

Մամզարացիների պահանջը օրինական է: Այս հարցի լուծումը թողնում ենք մատակարարող կազմակերպություններին, առաջին հերթին պետագրոարդին և նրա Բոգդանովկայի ագրոարդյունաբերական միավորմանը:

13 հոկտեմբերի

1989

ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐՆ ԸՆՏՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Թափուր էր Ախալաքալքի շրջխորհրդի գործկոմի կուլտուրայի բաժնի վարիչի տեղը: Բաժվար Յուրի Սարիբեկյանն անցել էր այլ աշխատանքի, ընտրվել շրջխորհրդի սոցապբաժնի վարիչ: Նոր վարիչ ընտրելու կապակցությամբ մշակույթի տան դահլիճ էին հավաքվել շրջանի կուլտուր-լուսավորական ճակատի դրեթե բոլոր աշխատողները: Կուլտբաժվարի համար ներկայացվել էին շրջանային մշակույթի տան տնօրեն Վալերի Ստելմաշովի, քաղաքային մշակույթի տան տնօրեն Գիվի Վարդապետովի, մշակույթի տան գեղամասվար Ալիկ Քոսպոյանի և գավառագիտական թանգարանի գիտաշխատող Մարինա Մելիքյանի թեկնածությունները, բոլորն էլ բարձրագույն կրթությամբ, կուլտուր-լուսավորական աշխատանքում երկար տարիների փորձ ունեցողներ:

Ելույթ ունեցողները մանրամասնորեն քննութագրեցին թեկնածուներին:

Որոշվեց անցկացնել փակ (գաղտնի) քվեարկություն: Ձայների մեծամասնությամբ շրջխորհրդի կուլտուրայի բաժնի վարիչ ընտրվեց Վ. Ստելմաշովը:

Ղեկավարի ընտրովիությանն սկզբունքը կիրառվում է նաև շրջանի այլ օբյեկտներում:

Թափուր էր, օրինակ, քաղաքի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի տեղը: Ժողկրթբաժվար Կ. Մնսեչյանը ժողովականներին ներկայացրեց դպրոցի տնօրենի թեկնածուներին էխտիլա գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Նոդար Դարբինյանին, Բարալեթի միջնակարգ դպրոցի տնօրեն Գրիգոր Գալոյանին, Թումանյանի անվան դպրոցի դասատուներ Երվանդ Նահատակյանին, Ալեքսանդր Էլբակյանին, Անահիտ Նուրիջանյանին: Վերջին երեքը հրաժարվեցին քվեարկությունից:

Բաց քվեարկությամբ միաձայն դպրոցի տնօրեն ընտրվեց Ն. Դարբինյանը:

17 օգոստոսի

1990

ՖԵՐՄԱՆ ԶԻՋՈՒՄ Է ԴԻՐՔԵՐԸ

Խուլգումոյի (Ախալքալաքի շրջան) Ջափարիձեի անվան կոլտնտեսությունը (նախագահ՝ Պողոս Թոփալյան) մշակում է հացահատիկային և կերային կուլտուրաներ, բանջարեղեն, կարտոֆիլ: Ունի անասնապահական ֆերմաներ:

Անցած գյուղատնտեսական տարին հաջողությամբ ավարտելու համար քիչ բան չարին խուլգումցիները և ասպահովեցին հիմնական մթերքների արտադրության և մթերումների աճ: Մեկ հեկտարից հավաքվեց 31,6 ցենտներ հացահատիկ, 48 ցենտներ գարի, 220,6 ցենտներ կարտոֆիլ: Բարձր բերք ստացվեց նաև կերային արմատապտուղների և բանջարեղենի ցանքատաշտերից: Դա տնտեսությանը հնարավորություն տվեց պետությանը հանձնել 100 տոննա սերմացու հացահատիկ և 1.100 տոննա կարտոֆիլ, որ առաջադրանքից ավելի է:

Բոլոր կուլտուրաներից առավել բարձր բերք ստացան դաշտավարական այն բրիգադները, որոնց ղեկավարում են Ստեփան Միսաքի և Ստեփան Հակոբի Թոփալյանները:

Արժանին պետք է հատուցել նաև մեխանիզատորներ Սերյոժա Զիվչյանին, Ալյոշա Պողոսյանին, Հարությունի Գիգոլյանին, Լյովա և Ստեփան Լևոնյաններին:

Շարունակելով պայքարը, դաշտավարները ու մեխանիզատորները հոգ տարան նաև ընթացիկ տարվա բարձր բերքի մասին:

Ժամանակին կատարեցին 330 հեկտար ցրտահերկը, որից 80 հեկտարը պարարտացրել են օրգանական և հանքային պարարտանյութերով: Պատրաստ են բոլոր տեսակի սերմացուները, նորոգվում է գյուղատնտեսական տեխնիկան: Այս տարի 20 հեկտարով կընդարձակվեն «Խարկով-86» սորտի գարու ցանքերը:

Քիչ չեն հաջողությունները և ձեռքբերումները նաև անասնապահության բնագավառում: Առանց վնասելու հանրային հոտի վերարտադրության գծով ստանձնած պարտավորությունների կատարումը, կոլտնտեսությունում հաջողությամբ կիրառվում է անասունների ինտենսիվ բուծումը:

Մատղաշի աճեցման բրիգադի անդամները Ստեփան Պետրոսյանը, Գալուստ Մուրադյանը, Կարապետ Թոփալյանը գիրացրել և յուրաքանչյուրը 375 կիլոգրամ միջին կենդանի քաշով մթերման է հանձնել 120 խոշոր եղջերավոր անասուն: Բացի այդ, պետությանն է վաճառվել նաև 13 տոհմային մատղաշ:

Կապալայինները այս օրերին շարունակում են խոշոր եղջերավոր անասունների մատղաշների բուծումը: Հոդատար խնամքի շնորհիվ նրանցից յուրաքանչյուրի օրվա միջին քաշաճը կազմում է

550-600 գրամ: Դա նախադրյալներ է ստեղծում մինչև բուսումից հանելը յուրաքանչյուր անասունի կենդանի քաշը հասցնել 390-400 կիլոգրամի:

Խղճով, տնտեսությանը օգտակար լինելու բարի մտադրությամբ են աշխատում խոզապահները: Ելենա Ղարալյանը, Մարգարիտա Պետրոսյանը իրենց խնամքին հանձնված 13 սպիտակ ուկրաինական յեղի մերուների յուրաքանչյուրից նախատեսված 12-ի փոխարեն տարվա ընթացքում ստացել են 14 խոճկոր, մթերող կազմակերպություններին հանձնել 13 տոննա խոզի միս:

Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ կոլտնտեսությունը նեղ տեղեր ևս ունի: Խոսքը վերաբերում է կաթնապրանքային ֆերմային (վարիչ՝ Ավգուստին Թոփալյան): Գնալով, այն դիրքերը զիջում է: Ֆերման անցյալ տարի թերակատարեց ֆուրաժային կովից 2.700 կիլոգրամ կաթ ստանալու առաջադրանքը: Կթվորուհիներ Անիչկա Զիվզյանը, Թագուհի Թոփալյանը, Երմոն Լևանյանը և ուրիշներ ֆուրաժային կովի կթնատվությունը 1988 թվականի համեմատությամբ, նվազեցրել են 300-400 կիլոգրամով:

Ինչո՞ւ է ֆերմայում խախտվել նորմալ աշխատանքի ռիթմը, ինչո՞ւ է այն զիջում իր դիրքերը: Մեր կարծիքով, ֆերմայի մարդիկ աշխատում են առանց հատուցյի, ցածր է աշխատանքային կարգապահությունը, չեն կիրառվում աշխատանքի կազմակերպման և վարձակալական կապալի արմատավորման առաջադեմ եղանակները: Եվ, որ ամենակարևորն է, չեն կուտակում պահանջվող քանակի կերամիավորներ: 1989 թվականի մարտից դադարել է գործել կերախոհանոցը՝ անհրաժեշտ պահեստամասերով ապահովված չլինելու պատճառով: Այն էլ ասենք, որ ֆերմայի հատույցը ավելի բարձր կլիներ, եթե լրիվ մեքենայացվեին աշխատատար (հատկապես մեխանիկական կթեթը) գործողությունները:

Վերակառուցում է պահանջում 206 կթան կով ունեցող տոհմային ֆերման: Դա մեծ կարևորություն ունեցող խնդիր է և խուլգումոյի կոլտնտեսության, և շրջանի համար: Իսկ դա միայն խուլգումոցիների ուժերով անելը հնարավոր չէ: Օգնության ձեռք պետք է մեկնեն շրջանային համապատասխան կազմակերպությունները, առաջին հերթին՝ ՇԱԱՄ-ը:

20 Հունվարի

ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԿԱՊԱԼ ԻՆՉՈՒ ՄԻԱՅՆ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տնտեսական ռեֆորմի իրականացման, պարենային պրոբլեմի լուծման ճանապարհին բոլոր կողմերով իր առավելությունն է դրսևորում վարձակալական կապալը: Ինքնաֆինանսավորման անցած Բոգդանովկայի շրջանի Մեծ Խանչալի կոլտնտեսությունում անցյալ տարվանից առաջ քաշվեց վարձակալական կապալով աշխատելու հարցը և առաջին հերթին ոչխարաբուծական ֆերմայում:

- Իսկ ինչո՞ւ ոչխարաբուծական ֆերմայում,- հարցնում ենք կոլտնտեսության նախագահ Ռոբերտ Մղդեսյանին:

- Վարձակալական կապալը կարելի է ներդնել ցանկացած ֆերմայում և բրիգադում,- ասում է նա:- Բայց մենք դերադասեցինք առաջին հերթին այն կիրառել ոչխարաբուծությունում:

Պատմածից երևում է, որ ոչխարաբուծությունը արտադրության ամենանեղ տեղն է և ոչ եկամտաբեր:

Թերթում ենք ֆերմայի հաշվեմատյանները: Պարզվում է, որ դրեթե ամեն տարի ֆերման աշխատել է վնասով: Յուրաքանչյուր 100 մաքուց ամենաշատը ստացվել է 85 գառ, ամեն մի ոչխարից խուզվել է 2,4-2,5 կիլոգրամ բուրդ, պետությանը հանձնված մանր եղջերավոր անասունների միջին կենդանի քաշը 24-26 կիլոգրամից չի անցել, մեծ թիվ են կազմել անկումները: Արտադրված մթերքների ինքնարժեքը սահմանվածից բարձր է եղել:

Առաջավոր այդ եղանակի նախաձեռնողները դարձան ոչխարաբուծներ Ռուբեն Աքոյանը, Տիգրան Վարդապետյանը, Գալուստ Գոգորյանը և ուրիշներ: Նրանք հարազատներով 6 տարով (հետո՝ ընդմիշտ) վարձակալեցին ոչխարաբուծական ֆերմայի 1.600 մանր եղջերավոր անասուններ և որոշեցին ապահովել առավելագույն հաստույց: Գործին մոտեցան ինչպես սեփականի և առաջին իսկ օրերից հասան ցանկալի արդյունքի:

Կոլտնտվարչությունը նրանց տրամադրեց անասնագոմեր, ամառանոց՝ փարախներ, կացարաններ, ալպյան բուսականությամբ հարուստ արոտավայրեր, կաթը յայլայից մթերակետ տեղափոխող փոխադրամիջոցներ:

Զրուցում ենք կոլտնտեսության հաշվետու, կուսկոմիտեի քարտուղար Գուրգեն Մարանջյանի հետ:

- Ունեցած արդյունքները,- ասում է նա,- լիովին հաստատեցին վարձակալական կապալի առավելությունները: Ֆերման դարձել է եկամտաբեր: Տնտեսությունը անցյալ տարի տվեց 50 հազար ռուբլու եկամուտ: 1988 թվականի 30 հազար ռուբլի վնասի դիմաց:

Մսի արտադրության ավելացմանը նպաստում է անհատական կապալը: Այդ մեթոդով են աշխատում խոշոր եղջերավոր անասունների մատղաշի ինտենսիվ աճեցման բրիգադում (բրիգադավար՝ Մարտիրոս Ֆիլիկյան): Կապալայիններ Գոհարիկ Խոդերյանը, Շավարշ Սեյրանյանը, Շամունե Հարությունյանը, Փայլակ Իրիցյանը, Նապլեթ Մարանջյանը տարեկան 15-20 գլուխ ցլիկներ են հանձնում մսամթերման, յուրաքանչյուրի միջին կենդանի քաշը 360-370 կիլոգրամի հասցնելուց հետո: Անցյալ տարի անհատական կարգով աշխատող կապալայինները պետությանը վաճառեցին 320 կիլոգրամ միջին կենդանի քաշով 200 խոշոր եղջերավոր անասուն:

- Ինչ կասեիք մսի ինքնարժեքի և անհատական կապալով աշխատողների վարձատրության մասին,- հարցնում ենք հաշվետարին:

- Ինչպես տեսնում եք կապալը շահավետ է երկուստեք: Տնտեսությունը շահում է նրանով, որ մսի պետհանձնումները կատարվում են, իսկ հավելավճարը մնում է կապալառուին, տնտեսու թ-

յունն էլ զգալի քանակությամբ կերեր է տնտեսում: Մսի և մյուս մթերքների ինքնարժեքը կրկնակի չափով նվազել է: Իսկ վարձակալական կապալով աշխատողների ամսական հասույթը կազմում է 450-480 ռուբլի, անհատական կապալով աշխատողներինը՝ 250-280 ռուբլի:

Շահութաբերության մակարդակի կայունացման, օգուտով աշխատելու ոճը, սակայն, դանդաղ է արմատավորվում կոլտնտեսության կառավարչական ֆերմայում:

3 ապրիլի

ՈՐ ԲԱՐՁՐ ԼԻՆԻ ՀԱՏՈՒՅՑԸ

Ամեն վաղ գարնան Ջավախքի երկրագործը դաշտ է շտապում: Դաշտ է դուրս գալիս, երբ ձյունը դեռ նստած է լինում ոչ միայն Աբուլ-Սամսար լեռնաշղթայի կատարներին ու լանջերին, այլև ներքևում բարձրադիր արտերի եզրերին:

Ավելի քան 21 հազար հեկտար տարբեր կուլտուրաների գարնանացան է կատարելու ախալքալաքցի երկրագործը: Հողի վերաբերյալ օրենքը նրա մեջ արթնացրել է հողի իսկական տեր դառնալու հավատը: Բազմապատկել է դաշտերից ավելի շատ բարիք ստանալու նրա եռանդը: Եվ, որ գլխավորն է, նա կիրառում է աշխատանքի կազմակերպման և վարձատրության առաջավոր ձևերը. այս տարվանից առանձին տնտեսություններ անցել են վարձակալական եղանակին:

Դրանցից մեկը Դաղնշի խորհտնտեսությունն է (տնօրեն՝ Համազասպ Հակոբյան): ՇԱԱՄ-ի գլխավոր գյուղատնտես, հանրապետության վաստակավոր գյուղատնտես Վարշամ Մահտեսյանից իմանում ենք, որ Դաղնշի տնտեսությունը աշխատանքի կազմակերպման և վարձատրության ձևերի կատարելագործման շնորհիվ 1989 թվականին լուրջ հաջողություններ է հասել:

Այս տարի խորհտնտեսության ղեկավարությունն ավելի համարձակ քայլերի դիմեց. 751 հեկտար վարելահողը տրամադրեց տնտեսության բանվորներին և մեխանիզատորներին: Կապալայինները, ապահովվելով սերմացուով, տեխնիկայով և այլ միջոցներով, դուրս եկան գարնանացանի: Երկկողմանի պայմանագրի համաձայն, նրանք խոստացել են 12-14 տոկոսով գերազանցել հացահատիկի, կարտոֆիլի, կերային կուլտուրաների նախորդ տարվա հեկտարային ցուցանիշները:

Իրենց ապագայի նկատմամբ մեծ հույսերով Վաչիանի սերմաբուծական խորհտնտեսության մարդիկ ձեռնամուխ են եղել գարնան դաշտային աշխատանքներին: Առջևից են ընթանում դաշտավարական այն բրիգադները, որոնց ղեկավարում են Սուրեն Ղազարյանը, Նապոլեոն Պողոսյանը, Սեդրակ Պալոյանը: Մեխանիզատորներ Յուրի Խանախանյանը, Վելիխան Աթոյանը, Խաչիկ Գաբրիելյանը աշխատում են անհատական կապալով և օրական մեկուկես-երկու արտադրական նորմա են կատարում:

Հողի յուրաքանչյուր հեկտարը խնամքով են մշակում վարձակալական կապալի անցած Զամդուրայի, Կոկիայի տնտեսությունների առանձին բրիգադների երկրագործները և մեխանիզատորները, որոնք ամեն կերպ պայքարում են բարձր հատույցի համար:

Այս և շրջանի այլ տնտեսություններ ավելի հաստատուն են լուծում իրենց տնտեսական հարցերը, ձերբազատվելով վարչահրամայական մեթոդներից:

ԿԱՐՏՈՖԻԼԻՆ ԿԱՆԱՉ ՃԱՆԱՊԱՐՀ

Կարտոֆիլագործությունը շատ վաղուց խոր արմատներ է գցել շրջանի գյուղատնտեսական արտադրության մեջ, դարձել նրա վճռող ու եկամտաբեր ճյուղը: Ախալքալաքցի երկրագործը գտել է պարենային այդ արժեքավոր կուլտուրայի բարձր բերք աճեցնելու բանալին, տարին-տարվա վրա ավելացրել բերքատվությունը և վաճառքը: Անցած տարի շրջանի պատմության մեջ առաջին անգամ կարտոֆիլագործներն աճեցրին 50 հազար տոննա կարտոֆիլ, որից 32.400 տոննան հանձնեցին պետությանը: Նրանք պարտավորվել են այս տարի 3.150 հեկտար տարածության համախառն բերքը հասցնել 52 հազար տոննայի, որից 33 հազարը վաճառել պետությանը:

Ախալքալաքցիները ձգտում են կատարել խոստումը և լավ եկամիտ վերցնել: Կարտոֆիլի ցանքը կատարելու են հանքային և օրգանական պարարտանյութերով պարարտացված, լավ նախորդներ ունեցող հողամասերում: Հեկտարի հաշվով առանձնացված և տեսակավորված է 45-60 ցենտներ սերմացու: Ցածրադիր գոտու տնտեսություններում արդեն սկսվել է ցանքը:

Որոշեցինք լինել այն տնտեսություններում, որոնք անցյալ տարի տարբեր պատճառներով թերակատարեցին բերքատվության առաջադրանքը և պարտք մնացին պետությանը:

Մենք Կարսիկամի տնտեսությունում ենք:

Ահա թե ինչ ասաց նրա տնօրեն Շուրա Օքրոյանը:

- Նախորդ տարվա սխալները մենք անպայման կուղղենք: «Ոչ մի հեկտար շարային և հատիկային կուլտուրաների ցանք առանց պարարտացման և համալիր մեքենայացման, առանց կապալի տարբեր ձևերի կիրառման» նշանաբանով են աշխատում այժմ մեր երկրագործներն ու մեխանիզատորները: Խոստացել ենք նախորդ տարվա 76-ի դիմաց հեկտարից ստանալ 200 և ավելի ցենտներ բերք և փակել ստեղծված ճեղքվածքը:

Նույն վճռականությամբ են աշխատում Օլավերդի, Կոթելիայի, Կուլիկամի, Գուբուրդոյի, Կարզախի, Խավեթի, Հաղթանակի 40-ամյակի անվան և ուրիշ տնտեսություններ, որոնց համար նախորդ տարին արգասաբեր չէր:

Կարտոֆիլի ցանքը կազմակերպված է ընթանում նաև Կիրովականի, Կորխի, Խանդոյի, Օրջայի, Արագվայի, Զակի, Զունչխայի, Բարալեթի, Էխտիլայի և այլ տնտեսություններում: Դրանց երկրագործներն ու մեխանիզատորները անձնական պատասխանատվություն են զգում հողի պահանջմունքները լիովին բավարարելու նկատմամբ: Նրանք հետևում են, որ տնտեսության ղեկավարները, բրիգադավարները ճիշտ ժամանակին իրենց տրամադրության տակ դնեն

այն ամենը, ինչ անհրաժեշտ է կարտոֆիլի, ինչպես և մյուս կուլտուրաների մշակության ամբողջ ցիկլի ընթացքում:

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գարնան դաշտային աշխատանքների առաջին իսկ օրերից շրջանի բոլոր տնտեսությունները զուգակցված աշխատանք են կատարում: Ավարտին են մոտենում 1.060 հեկտար աշնանացան ցորենի, ինչպես նաև կորնգանի ցանքերի սնուցումն ու մշակումը Դիլիսկայի, Զունչիխայի, Բարալեթի, Պրոենայի կոլտնտեսություններում, Հոկամի, Կարգախի խորհտնտեսություններում:

Շրջանում լուրջ աշխատանք է կատարվում դաշտային կերարտադրության ավելացման ուղղությամբ: Պայմանական մեկ անասունի հաշվով շրջանում կուտակվելու է 17 ցենտներ կերամիավոր: Այդ խնդրի լուծումը մարդիկ տեսնում են առվույտի, կորնգանի, բարձր բերքատու կերային արմատապտուղների ցանքատարածությունների ընդարձակման, դրանց բերքատվության բարձրացման մեջ:

Օրջայի, Խանդոյի, Դելիսկայի, Կոթելնիչայի և այլ տնտեսություններում կատարվում է առվույտի ցանք: Օրջայի կոլտնտեսությունում առվույտի դաշտերը հասնում են 40 հեկտարի: Ինչպես անցած, այնպես էլ այս տարի, արժեքավոր այդ խոտաբույսի ցանքերից օրջացիները երկու բերք հավաքելու վճռականությամբ են աշխատում:

Մյուս կուլտուրաների հետ Զամդուրայի, Բավրայի, Բարալեթի, Կորխի, Արագվայի և այլ տնտեսություններ հողին են հանձնում ԳԴՀ-ի արտադրության, հեկտարից 700-800 ցենտներ բերքատվությամբ «էկենդորֆ» սորտի կերային ճակնդեղի սերմանյութ:

ՀՈԳՍԵՐ, ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Այս բոլորով հանդերձ, շրջանում կան նաև հոգսեր, պրոբլեմներ: Դրանցից հրատապը գյուղատեխնիկայի պակասն է:

Բանն այն է, որ շրջանի տնտեսությունների մեծ մասը, նույնիսկ առաջավորները ստիպված են կարտոֆիլի ցանքը կատարել իրենց դարն ապրած, մաշված, արտադրությունից հանված 147 մեքենաներով: Դրանք բոլորն էլ պետք է փոխարինվեն բարձր արտադրողականություն ունեցող «ԿՍՄ-4» (47 տնտեսություններում հաշվվում է միայն 86 ագրեգատ) մեքենաներով:

Շրջանի տնտեսությունները, հատկապես վերջին տարիներին կազմակերպված, Գոդաշենի, Կոկիայի, Լոմատուրցկի. Բավրայի, Բալխոյի, Ագանայի, Մերենիայի և այլ խորհտնտեսությունները լրիվ ապահովված չեն «Բելառուս» մակնիշի տրակտորներով: Զգացվում է առանձին պահեստամասերի պակաս:

Սակայն պետք է կշտամբել տնտեսությունների ղեկավարներին և ինժեներներին, որոնք մեքենաների, կցվող գործիքների պահպանության գործը իրենց պարտականությունը չեն համարում: Գարնանացանից առաջ և հետո կարտոֆիլատնկիչները (և ոչ միայն դրանք) պահում են բաց երկնքի տակ: Պարզ է, որ դրանք ժամանակից շուտ շարքից դուրս են գալիս կամ աշխատում են խափանումներով:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման մյուս ռեզերվներից մեկն էլ մեխանիզատորների որակյալ կադրերի հարցն է: Այս ուղղությամբ թերությունները քիչ չեն: ՇԱԱՄ-ի տնտեսություններում և ձեռնարկություններում եղած 790 մեխանիզատորներից 227-ը առաջին կարգի մասնագետներ են, 215-ը երկրորդ, մնացած՝ 348-ը երրորդ կարգի: Եզրակացությունը պարզ է...

Գարնանացանը վճռական քննաշրջան է: Օգտագործելով նախորդ տարվա բարձր բերքի աճեցման փորձը, ախալքալաքցիները պետք է նվաճեն նոր բնագծեր:

Մնում է, որ վերացվեն նշված թերությունները և բացերը: Դրանց համար պետք է մտահոգվեն հանրապետության պետագրասարքը, ՇԱԱՄ-ը և տնտեսությունների ղեկավարներն ու մասնագետները:

8 մայիսի

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

Տարիներ առաջ քաղաքի հասարակայնությունը, դպրոցական կոլեկտիվները որոշեցին Ախալքալաքի N1 միջնակարգ դպրոցը կոչել հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունով և խնդրել համապատասխան կազմակերպություններին կրթօջախի բակում կանգնեցնել նրա կիսանդրին:

Վերջապես հասավ բաղձալի օրը. շրջանային խորհրդի գործկոմի օգնությամբ և շեֆկազմակերպության պատվերով վերջերս կանգնեցվեց մեծ գրողի կիսաքանդակը:

Այդ առիթով կազմակերպված հանդիսությին մասնակցում էին շրջկենտրոնի մանկավարժական կոլեկտիվների, ժողկրթբաժնի ներկայացուցիչներ, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների աշխատողներ: Այն բացեց դպրոցի սկզբնական կուսակազմակերպության քարտուղար Ե. Նահատակյանը:

Հնչեցին ժողովուրդների բարեկամության, առանձնապես հայ և վրաց ժողովուրդների եղբայրության մասին ջերմ խոսքեր:

Կիսանդրին պատրաստված է շեֆկազմակերպության Ախալքալաքի անասնավերամշակման գործարանի պատվերով և ճարտարապետ Վ. Ավակովի հեղինակությամբ:

12 հունիսի

ԻՍԿ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

Վերջին տարիներս Ախալքալաքի շրջանում կառուցվել ու շահագործման են հանձնվել դպրոցական և նախադպրոցական շենքեր: «Բնակարանամուտ են տոնել քաղաքի Դեմիրճյանի անվան պրոֆտեխուսումնարանի, Վաչիանի, Զակի, Մաջադիայի, Գոգաշենի և այլ գյուղական դպրոցներ:

Այս ամենը, սակայն, չի հավաստում, թե դպրոցաշինարարության գործում թերություններ ու բացթողումներ չկան: Կան, և դպրոցաշինարարությունը շրջանում մնում է ամենալուրջ հոգսը:

Թվում էր, թե 1986 թվականի երկրաշարժից հետո Վրաստանի Մինիստրների խորհրդի ընդունած «Հանրապետությունում երկրաշարժի հետևանքները վերացնելու մասին» հայտնի որոշումը նոր թափ պիտի հաղորդի դպրոցաշինարարությանը: Դրա համաձայն Ախալքալաքի շրջանում պետք է կառուցվեր 19 դպրոցական շենք, որոնցից 8-ի շինարարությունը պետք է սկսվեր նույն տարում: Այն պետք է իրականացներ պետագրարդի «Վրացգորշին» միավորման Ախալցիխեի N9 շինարարական տրեստը: Սակայն տրեստը թերացավ իր պարտականությունների մեջ և գրեթե ձախողեց շինարարությունը: Անցած տարիներին (1986-1989 թվականներ) կառուցվեցին և շահագործման հանձնվեցին միայն Մեծ Սամսարի և Բեժանոյի դպրոցները:

Այս ուսումնական տարում շարք կմտնեն 1986 թվականից կառուցվող, քաշքշուկ դարձած Կարտիկամ, Մերենիա գյուղերի դրոցների շենքերը և Բարալեթի միջնակարգ դպրոցի շենքը, որի շինարարությունը, ճիշտ է, սկսվել է 1989-ին:

Մնացած գյուղերում մնում են կիսավարտ, «կմախքային» վիճակում գտնվող դպրոցական շենքեր, որոնց ավարտին անհամբերությամբ սպասում են դպրոցականները:

Հանդիպում ենք N18 ՇՄՇ-ի պետ Ն. Բարեկյանին:

Այն հարցին, թե ինչու է ձգձգվում շինարարությունը, նա պատասխանում է.

- Բոլոր շինարարները և մոնտաժողները տեղացիներ են, աշխատում են նվիրվածությամբ: Հիմնական պատճառը շինանյութերի անբավարար մատակարարումն է, օժանդակ, մատակարարող կազմակերպությունների անտարբերությունը, գործունեության անհամաձայնվածությունը:

Հայտնի է, որ անցյալ տարվա կեսերին Ախալքալաքի և Բոգդանովկայի շինարարական կազմակերպությունների բազայի վրա (հաշվի էր առնվել այս շրջանների հեռավորությունը Ախալցիխեի շինտրեստից) ստեղծվեց առանձին շինարարական միավորում աշխատանքները երկու շրջաններում օպերատիվ կազմակերպելու նպատակով: Սակայն նորաստեղծ այս շինմիավորումը քիչ օգնեց գործին: Ինչպես ասում են, «սայլը չշարժվեց տեղից»:

Այս տարվա երկրորդ եռամսյակում չստացվեց լիմիտավորված շինանյութերի մեծ մասը՝ ոչ մի կիլոգրամ մետաղ, ոչ մի խորանարդ մետր շինափայտ և ապակի: Ցեմենտ չլինելու պատճառով երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանը, որ մտնում է միավորման մեջ, երկրորդ եռամսյակում աշխատեց ընդամենը մեկ ամիս և շինհրապարակները չկարողացավ ապահովել հավաքովի տարբեր կոնստրուկցիաներով:

Այս անմխիթար վիճակը պետք է հուզի ոչ միայն շինարարներին, այլև պատվիրատու կազմակերպություններին՝ ՎԽՍՀ ժողկրթության մինիստրությանը և ժողկրթբաժնին:

Ախալքալաքի շինարարները հավաստիացնում են, որ կաշխատեն կրկնապատկված եռանդով դպրոցաշինարարության աշխատանքներում առաջացած ճեղքվածքը վերացնելու, շենքերը ժամանակին հանձնելու համար: Եթե, իհարկե, պատվիրատու, օժանդակող, մատակարարող կազմակերպությունները «տեղից չարժվեն» վերացնեն շինհրապարակները «գդալ-գդալ սնելու» իրենց քաղաքականությունը:

23 օգոստոսի

ՀՈԳՍԵՐՆ ԷԼ ՔԻՉ ՉԵՆ

Առջևում ծառացած հրատապ, անհետաձգելի խնդիրներից մեկը պարենային պրոբլեմի լուծումն է: Հատկապես կարևոր է հացահատիկի արտադրության ավելացումը: Ահա թե ինչու այս տարի մեր շրջանի տնտեսությունները, գյուղատնտեսության մյուս ճյուղարկությունները, ՇԱՄՄ-ը, հաշվի առնելով հացահատիկի մթերման գների բարձրացումը, առաջին պլան են մղել հասկավոր և հատիկաընդեղեն կուլտուրաների բերքահավաքը:

Այս օրերին նրանք իրենց տրամադրության տակ ունեն 45 կոմբայն, 156 բեռնատար ավտոմեքենա, 114 կցասայլակ, ինչպես նաև հացահատիկ զտող, տեսակավորող, ծղոտ հակավորող բազմաթիվ մեքենաներ ու սարքեր:

Յուրաքանչյուր օրը աշխատանքային նոր հաջողություն է բերում հողի աշխատավորին: Նա ամեն կերպ ձգտում է, որպեսզի իր քրտինքով աճեցրած առատ բերքը հավաքի սեղմ ժամկետում, առանց կորստի, անթերի կատարվեն մթերումների առաջադրանքները:

Բերքահավաքը լայն ճակատով առաջ է ընթանում հատկապես Ջիդրաշենի, Օրոջալարի, Հեչտիայի, Ջիդրաշենի, Գորելովկայի, Փոկայի կոլտնտեսություններում, Մեծ Գոնդուրայի, Մամզարայի, Ղուլալիսի խորհտնտեսություններում:

Կոմբայնավարներ Մարտին Ղազարյանը (Ջիդրաշեն), Վելիխան Մառուկյանը (Սաթխա), Իվան Տիխոնովը (Գորելովկա), Երջանիկ Բաղոյանը (Օրոջալար), Գեորգի Կարապետյանը (Փոկա) և շատ ուրիշներ, արդյունավետ օգտագործելով նպաստավոր եղանակի յուրաքանչյուր օրն ու ժամը, ձգտում են սեղմ ժամկետում ավարտել հունձն ու կալսումը: Նրանք հեկտարից պահեստ են ուղարկում 30-35 ցենտներ հացահատիկ:

Բերքահավաքին զուգընթաց հաջողությամբ են առաջ ընթանում հացամթերումները: Շրջանի տնտեսությունները արդեն զեկուցել են պետությանը 120 տոննա հացահատիկի վաճառելու մասին և խոստացել են մինչև սեպտեմբերի վերջը հանձնել ևս 720 տոննա, որով և կատարել պարտավորությունը:

Աշխատում ենք նոր պահանջներին համապատասխան: Դրա շնորհիվ զգալիորեն ավելացել է բոլոր տեսակի մթերքների արտադրությունն, ու բարելավվել է դրանց որակը: Գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել ենք հացահատիկի բերքատվության բարձրաց-

ման, աշխատանքի կազմակերպման ու վարձատրության առաջադիմական եղանակների արմատավորման վրա:

Դրանք անհատական կոլեկտիվ և վարձակալական կապալի ձևերն են: Վերջին երկու տարում վարձակալներին ամրացվել են 1.675 հեկտար վարելահողեր: Գործի սկզբնավորողները եղան Հեչտիայի, Մեծ Խանչալի, Ասփարայի, Կաթնատուի կոլտնտեսությունները, Գանձայի և Ղուլալիսի խորհտնտեսությունները, որոնք հացահատիկայինների և մյուս կուլտուրաների բարձր բերք են ապահովում:

Բարձր բերքատվությանը նպաստել է նաև նոր՝ «սպարտա» և «էլգինա» սորտերի արմատավորումը: «Էլգինա» գարնանացան գարին, որ հեկտարից տալիս է 45-50 ցենտներ բերք, ունի այլ առավելություններ ևս: Կլիմայական անբարենպաստ պայմաններում (անձրևներ) բույսերը չեն պառկում: Դա հեշտացնում է կոմբայնավարի աշխատանքը և ավելի շատ ծղոտ է հավաքվում:

Շրջանում մի քանի տարի է, ինչ արմատավորվել է ծղոտի հակավորումը՝ հնձից անմիջապես հետո: Այդ առաջավոր եղանակը կիրառելու շնորհիվ տնտեսությունները 35-40 տոկոսով ավելի կոշտ կեր են կուտակում:

Հաշվի առնելով հացահատիկի պահանջը, մեր շրջանի տնտեսություններում զգալի չափով ընդարձակվում են աշնանացան ցորենի ցանքատարածությունները: Ըստ որում, հողին է հանձնվում «անքիստ-1» բերքատու ցորենի սերմացու: Շրջանում կատարվելու է ավելի քան 1.000 հեկտարի ցանք: Արդեն ցանված է 790 հեկտարը: Աշնանացանը ավարտին է մոտենում Հեչտիայի, Ջիգրաշենի, Մեծ Գոնդուրայի, Փոկայի, Ժդանովականի, Սպասովկայի և այլ գյուղերի տնտեսություններում:

Սակայն, այս ամենով հանդերձ, բերքահավաքի աշխատանքներում կան նաև թերություններ, գյուղն ունի իր հոգսերը:

Այս օրերին առանձնապես մտատանջության մեջ են մեխանիզատորները: Նրանց չի բավարարում գյուղատնտեսական մեքենաների աշխատանքի թափը: Բանն ի՞նչ է: Շատ մեքենաներ ու կցվող գործիքներ մեկ-երկու սեզոն աշխատելուց հետո, շարքից դուրս են գալիս: Ժամանակն է, որ մեքենաշինական ձեռնարկությունները հոգ տանեն իրենց արտադրանքի որակի մասին:

Ունենք մի ցավոտ հարց ևս: Դա նոր տեխնիկայի պակասն է: Մեծ է հատկապես անիվավոր տրակտորների կարիքը: Տնտեսությունների ունեցած այդ մեքենաների զգալի մասը 10-12 տարվա վաղեմություն ունի: Շատ հին են հատկապես «ԳԱԶ-52» և «ԳԱԶ-53» մակնիշի ավտոմեքենաները: Մեծ դժվարությամբ ենք հայթայթում պահեստամասերը, հատկապես ավտոդողեր, իսկ մեր պահանջները անբավարար է թողնում պետագրարդի հանրապետական բաղան, որի պատճառով էլ մեր ՇԱԱՄ-ի նյութատեխնիկական բաժինը, ինչպես հարկն է, չի կարողանում սպասարկել տնտեսություններին:

Հայտնի է, որ Բոգդանովկայում կլիմայական պայմանները անընդհատ փոփոխական են: Այդ պատճառով էլ առաջին պլան պետք է մղել հացահատիկի ժամանակին չորացումն ու դուտը: Սա-

կայն տնտեսությունները ապահովված չեն հացահատիկի տիպային պահեստներով, չունեն հացահատիկի պահպանման ծածկեր ու բրեզենտե ծածկույթներ: Այդ պատճառով էլ տնտեսությունները, հատկապես անձրևային եղանակներին, կրում են զգալի կորուստներ:

Տեղին է նշել, որ առանձին տեղերում թույլ պայքար է ծավալված բերքի կորուստների դեմ: Բարձրից հնձված արտերում մնում են մեծ քանակություններ:

Դժվարությունները շատ են, բոլորը թվարկել հնարավոր չէ: Մշտական պրոբլեմ է նաև վառելանյութի պակասը: Գրեթե ամեն տարի դրա կարիքն զգում ենք: Այս տարի էլ, անցած ութ ամիսների տվյալներով, լիմիտավորվածից պակաս ենք ստացել մոտ 500 տոննա բենզին: Դա է պատճառը, որ հնձած խոտի մի մասը դեռ մնում է դաշտում:

Սրանք մասնակի թերություններ ու բացեր չեն, որոնք պետք է մատնանշեն համապատասխան, առաջին հերթին մատակարարող կազմակերպություններին և ՇԱԱՄ-ին, ու նրանք գործնական և անհապաղ օգնություն պետք է ցույց տան՝ բերքահավաքը հաղթական ավարտին հասցնելու համար:

28 սեպտեմբերի

ԵԿՈՂ ՏԱՐՎԱ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

Տարիների պրակտիկան ցույց է տվել, որ Բոգդանովկայի շրջանում աշնանացան ցորենը անհամեմատ բարձր բերք է տալիս, քան գարնանացանը: Այստեղ նախապատվությունը տալիս են «Անքիստ-1» բարձր բերքատու աշնանացան ցորենին: Ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում շրջանում ավարտվեց ավելի քան 1.000 հեկտար աշնանացանը:

Մեծ ակտիվությամբ առաջ են տարվում նոր սառնավարի աշխատանքները: Կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները խոտի և հացահատիկայինների բերքահավաքից հետո ազատված դաշտերում ցրտահերկ են կատարում դնելով եկող տարվա բարձր բերքի հիմքը:

Առջևից են ընթանում Հեշտիա, Սաթիա, Օրոջալար, Ջիգրաշեն, Մեծ Գոնդուրա, Մեծ Խանչալի, Սպասովկա, Գորելովկա և այլ գյուղերի տնտեսությունները:

13 հոկտեմբերի

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՍՈՎՈՐԵԼԵՆ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ախալքալաքի N 1 մուր-մանկապարտեզում «Ավարտական զոդանջ» միջոցառումն էր նախապատրաստական խմբերի երեխաների ավարտական տոնահանդեսը:

«Մանկությունն ուրախություն է, երգ, ապագա»,- կարդում ենք դահլիճում փակցված պաստառին:

Հնչում է երաժշտությունը: Ռիթմիկ մարմնամարզությունից հետո հանդիսատեսին հյուր են գալիս հեքիաթների հերոսները՝ Բալ Նազարն ու Ուստիանը, Գիքորն ու Համբոն, Կարմիր գլխարկը, Շունն ու Կատուն ... Հետո երեխաները նվագում են, երգում ու պարում:

Ավարտական հանդեսին մասնակցում էին նաև շրջկենտրոնի մյուս մանկապարտեզներից եկած երեխաներ: Նրանք էլ N1 մանկապարտեզի սաների նման սովորել են հայոց այբուբենը, բառակազմության էլեմենտները, գիտեն մինչև 50-ը հաշվել, իսկ առանձին երեխաներ՝ մինչև 100-ը, ու թվաբանական հեշտ գործողություններ կատարել ... Իսկ նախապատրաստական խմբերի շնորհալի դաստիարակչուհիներ, մեթոդիստներ Սուսաննա Մարտիրոսյանը, Էլմիրա Ասլանյանը, Լիզա Ղաղյանը, ողջ կոլեկտիվը նվիրվածությամբ ու հոգատարությամբ են աշխատել, ձգտել երեխաների մեջ զարգացնել ինքնուրույնություն, մտքի ճկունություն:

Այս տարի մանկապարտեզի կոլեկտիվը 15-րդ անգամ է նախապատրաստական խմբերի սաներին ճանապարհում դպրոց, որոնք հիմնականում սովորում են Հովհ. Թումանյանի և Դ. Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցներում:

- Այսօր բոլորիս համար խիստ անհրաժեշտ է հայերեն լավ իմանալը, հայեցի կրթություն և դաստիարակություն ստանալը,- ասում է մանկապարտեզի վարչուհի Հայկուշ Օքսուզյանը:- Պատմական պետք է հաստատել ՀԽՍՀ ժողկրթության մինիստրության «Ազգային միասնական հանրակրթական դպրոցի մասին» որոշումը: Մենք առաջիններից էինք (ոչ միայն շրջկենտրոնում), որ արձագանքեցինք այդ որոշմանը. այսօր մեր սաները համարյա լրիվ կազմով ուզում են դնելու հայկական դպրոցների շեմին:

Մանկապարտեզի կոլեկտիվը որոշել է եկող ուսումնական տարում նախադպրոցական իրենց հիմնարկը լիովին դարձնել հայկական:

16 հոկտեմբերի

«ԵՍ ՀՈՌԵՏԵՍ ՉԵՄ» [Աթանաս Թորոսյան]

Երեք տարի առաջ էր: Խանդոյի առաջավոր կոլտնտեսության նախագահ Մաթևոս Սահարյանին նշանակեցին Ախալքալաքի շրջանային ագրոարդյունաբերական միավորման նախագահ: Թերևս համագյուղացիները հպարտանում էին իրենց ղեկավարի առաջքաշման համար, բայց մյուս կողմից էլ ներքուստ ինչ-որ դժգոհություն էին ապրում. կարո՞ղ են արժանի փոխարինող գտնել:

Եղան առանձին մարդիկ, որոնք նույնիսկ բացահայտորեն էին արտահայտվում, թե վերջ, խանդոն այլևս այն չի լինի, ինչ կար, վերջացավ տնտեսության հասցեին շրջանային և հանրապետական խորհրդակցություններում զովասանական խոսքեր արտահայտելը, գանգան պարգևներով պարգևատրելը:

Գյուղի ավագները, ակտիվ աշխատողները ծանր ու թեթև տրեցին, հանգամանորեն վերլուծեցին ամեն ինչ, մտաբերեցին մի քանիսին և, ի վերջո, կանգ առան կոլտնտեսության գոոտեխնիկ Աթանաս Թորոսյանի թեկնածության վրա:

Իսկ ինչո՞ւ: Որովհետև բոլորը գիտեին, որ այն ցուցանիշները, որ ունի անասնապահական ֆերման, դրանում մեծ ավանդ ունի բարձրագույն կրթությամբ երիտասարդ մասնագետը: Բացի լավ և գործիմաց աշխատանքից, Աթանասը նաև լավ խորհրդատու է, մարդասեր, մարդամոտ, միևնույն ժամանակ՝ պահանջկոտ:

- Տղան մեր աչքի առաջ է մեծացել, լավ գիտի գյուղը, մարդկանց, թող ղեկավարի, տեսնենք, եթե չի արդարացնի, «մեղքը իր վիզը», մեկ ուրիշի կփնտրենք,- ասում էին գյուղի ծերերը:

Եվ այսպես, Աթանաս Թորոսյանը ընտրվեց Խանդոյի կոլտնտեսության նախագահ:

***

... Գարունը ուշանում էր: Դրասենյակում ճակատը սեղմած սառը ապակուն՝ Աթանասը հայացքը հառել էր Կաթնագույն մշուշում ուրվագծված դաշտերին:

Նա տխուր էր, օրերն անցնում էին: Անընդհատ տեղացող անձրևները, երբեմն էլ ձյունը, սառը քամին արգելակում էին աշխատանքները: Մարդիկ անհանգիստ էին: Տնտեսությունում լարված վիճակ էր ստեղծվել: Սակայն, ինչպես նախագահը, այնպես էլ երկրագործներն ու մեխանիզատորները չէին հուսահատվում. համոզված էին, որ այս տարի ևս կհաղթահարվեն դժվարությունները...

- Բարդ ժամանակներ ենք ապրում,- մեզ հետ զրույցի ժամանակ ասաց Աթանաս Թորոսյանը:- Մի կողմից ապգամիջյան սրված հարաբերությունները, մյուս կողմից էլ երկրի տնտեսական ճգնաժամը բոլորիս առջև լուրջ խնդիրներ են դնում: Յուրաքանչյուրը պետք է լավ գիտակցի, որ պարտական է սերտ և եղբայրական հարաբերությունների մեջ լինի նրա արմատական ժողովրդի հետ. սովորի նրանց լեզուն, ուսումնասիրի պատմությունը և հետաքրքրվի կուլտուրայով, նիստ ու կացով, համատեղ պայքարի այդ երկրի բարգավաճման համար:

Մեզ քաջ հայտնի է այն մեծ ծրագիրը, որի իրականացմամբ Վրաստանը ձեռք կբերի ինքնուրույնություն և աստիճանաբար կկուծվի արդյունաբերական ապրանքների և սննդամթերքների դեֆիցիտի պրոբլեմը: Մեր մարդկանց շատ է հուզում այն խայտառակ վիճակը, որ այսօր նկատվում է թե՛ քաղաքում, թե՛ գյուղում:

Դուք կարծում եք, թե մեզ դո՞ւր է գալիս, որ քաղաքների շուկաներում կիլոգրամ կարտոֆիլը արժե 1,50-2 ռուբլի, պանիրը՝ 18-20, տավարի միսը՝ 10-12 ռուբլի... Բայց չէ՞ որ ոչ այնքան հեռու անցյալում այդ մթերքների գները, այժմյանի համեմատությամբ, 8-10 անգամ պակաս էին: Բա, ի՞նչ պատահեց, ինչո՞ւ այսպես բարդացավ և թանկացավ կյանքը: Կասե՛մ:

Դրանք մի քանի հիմնական պատճառներ ունեն: Դրանցից մեկը վարչա-հրամայական եղանակով աշխատելու ոճն էր, երկրորդը՝ վերևից իջեցված պլանները, հաջորդը՝ մարդու նկատմամբ անուշա-

դիր վերաբերմունքը և այլն, և այլն: Կարող են ասել, ընկե՛ր, դու ինչո՞ւ ես տրտնջում: Չէ՞ որ ձեր ղեկավարած տնտեսությունը տնտեսապես հզոր է տարեկան ստանում է չորս միլիոն 850 հազար ռուբլի դրամական եկամուտ, որից զուտ շահույթը կազմում է մեկ միլիոն 500 հազար ռուբլի: Մարդիկ էլ վատ չեն ապրում: Համաձայն եմ: Մեզ մոտ, օրինակ, անասնապահությունում աշխատողներից յուրաքանչյուրի տարեկան վաստակը հասնում է մինչև 13 հազարի, իսկ դաշտավարներինը՝ ավելի քան 5.000-ական ռուբլու:

Կոնկրետացնելու համար կթվարկեմ նրանցից Սաշա Զուռնաջյանին, Կոլյա Մանասյանին, Մյասնիկ Հակոբյանին, որոնք տարեկան վաստակում են 11-17 հազար ռուբլի:

Բայց, հանուն ճշմարտության, կասեմ, որ այն ցուցանիշները, որ ունենք դաշտավարությունում և անասնապահությունում, ես վերջնական չեմ համարում: Գտնում եմ, որ դրանցով բավարարվելը նշանակում է (այսօրվա պահանջներից ելնելով, երբ երկիրը և հանրապետությունը անցնում են շուկայական մեխանիզմին) ինքներս մեզ տնտեսական դատապարտվածության ենթարկել:

Համաշխարհային փորձը ապացուցել է շուկայական էկոնոմիկայի կենսականությունն ու արդյունավետությունը, որի նպատակն է ստեղծել սոցիալապես կողմնորոշված էկոնոմիկա: Դրանով հաղթահարել դեֆիցիտը, ամենուրեք գոյացող հերթերի խայտառակությունը, պայմաններ ստեղծելով խրախուսելու աշխատասիրությունը, ստեղծագործությունը և նախաձեռնությունը, ապահովել բարձր արտադրողական աշխատանք:

Ասացեք, խնդրեմ, արդյոք նորմա՞լ է, երբ միևնույն տնտեսությունում, ինչպես օրինակ, մեզ մոտ, կովերի մի խմբից 2.850 կիլոգրամ կաթ է ստացվում, իսկ մյուսից՝ 4.500, որ կան մարդիկ, օրինակ, Ռաֆիկ Հակոբյանը, Ռաֆիկ Սարյանը, Ռաֆիկ Դանիելյանը, հեկտարից 250-281 ցենտներ կարտոֆիլ են ստանում, իսկ առանձին կոլտնտեսականներ՝ 200 ցենտներից էլ պակաս:

Ես կասեի, որ առաջիկայում հարկավոր է մշակել և սրմատավորել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կվերացնեն այդ տարբերությունը թե դաշտավարությունում, թե անասնապահությունում:

Մեզ մոտ այժմ ֆուրաժային կովի միջին կաթնատվությունը շուրջ 3.000 կիլոգրամի է հասնում: Ինքնարժեքն էլ պլանայինից ցածր է: Համարյա նույնը կարելի է ասել մսի, հացահատիկի, կարտոֆիլի, արմատապտուղների, խոտի վրա կատարված ծախսերի մասին: Արտադրված մեկ ցենտներ տավարի միսը, օրինակ, տնտեսության վրա անցյալ տարի նստեց 270 ռուբլի:

Գյուղատնտեսության մեջ առաջացած ճեղքվածքը վերացնելու նպատակով կառավարությունը վերջերս 2-2,5 անգամ բարձրացրեց հացահատիկի, խաղողի, մսի, կաթի և մի շարք այլ կուլտուրաների պետական գնման գները: Դա, ինչ խոսք, արդի ժամանակաշրջանում կխթանի մարդկանց աշխատանքային ակտիվության բարձրացումը, տնտեսությունների էկոնոմիկայի ամրապնդումը: Բայց, իմ կարծիքով, այն արդյունքը չի ստացվի, ինչին սպասում ենք: Ին-

չո՞ւ: Որովհետև գյուղահեռաբար խանկացան նաև շինությունների, պարարտանյութերի, տեխնիկայի գները:

Ցանկանում եմ շոշափել նաև հողը գյուղացուն վերադարձնելու հարցը: Կյանքը ցույց տվեց, որ տասնամյակներ շարունակ գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ ընդունելով այս կամ այն որոշումները, անցկացնելով զանազան կամպանիաներ, ցանկալի արդյունքի չենք հասել, ընդհակառակը, մարդկանց կտրել ենք հողից, նրա մեջ մեռցրել տիրոջական զգացմունքը, նախաձեռնություն ցուցաբերելու ունակությունը:

Վերջապես վերակառուցումը, հրապարակայնությունը իրենց ճշմարտացի խոսքն ասացին և ցույց տվին գյուղատնտեսությունում իսկական ռեֆորմ մտցնելու միակ ճիշտ ուղին:

Այո՛, հողը պետք է տալ գյուղացուն և թողնել, որ նա իր խելքով վարի տնտեսությունը, իհարկե, միաժամանակ ցույց տալով նրան մասնագիտական օգնություն: Մնացածը, թե երբ, որտեղ և ինչպես պետք է ցանել, մշակել, հավաքել բերքը, հիշեցման կարիք չկա. գյուղացին գիտի գերազանց: Դրանում մենք համոզվում ենք, ուսումնասիրելով նախահեղափոխական Ռուսաստանի գյուղատնտեսության դրվածքը: Երկիրն այն ժամանակ ոչ թե ներմուծել է հացահատիկ, այլ, ընդհակառակը, արտահանել է, և այն էլ այնպիսի հացահատիկ, որն այն որակով նմանը չի ունեցել համաշխարհային շուկայում:

Հետևելով հարևան Ադիգեյի և հանրապետության այլ շրջանների օրինակին, ուր հողերը լրիվությամբ հանձնվել են գյուղացիներին, մենք ևս որոշել ենք կոլտնտեսության 1.243 հեկտար վարելահողերը և մյուս հողահանդակները, անասունները լրիվությամբ բաժանել գյուղի 2.800 շունչ ունեցող 650 ընտանիքների միջև, այն հաշվով, որ յուրաքանչյուր ընտանիքի ընկնի երկու հեկտար հողահանդակ և երկու խոշոր եղջերավոր անասուն:

Կասկած չկա, որ գործի նման մեթոդով կազմակերպումը կկրկնապատկի մեր ցուցանիշները, մարդկանց կյանքին էլ կդարձնի էլ ավելի ունևոր: Սա տնտեսական կողմն է, իսկ բարոյակա՞նը: Խոսքս երիտասարդների մեջ աշխատասիրություն ներարկելն է, նրանց ևս հողի հետ կապելը:

Եթե երեխան մանուկ հասակից լծվի հանրօգուտ աշխատանքի և օգնի ծնողներին, նա, ամենայն լրջությամբ, հայտարարում եմ, էականորեն կտարբերվի մեր այսօրվա շատ երիտասարդներից: Երիտասարդներ, որոնք, ընկնելով փողի ետևից, դարձան և ամռան ամիսներին հեռանում են գյուղից, ձմռանը վերադառնում տուն, սեփական ավտոմեքենաներով զինովցած վիճակում աննպատակ պտտվում են գյուղի փողոցներում, և ամենավատ օրինակը ցույց տալիս մյուսներին: Ցավոք, նման ապրելակերպը մեր գյուղի որոշ երիտասարդներին էլ է հատուկ:

Ասածներս թող ճիշտ հասկանան մարդիկ: Ես դեմ չեմ ունևոր և կուլտուրական կյանք վարելուն, բայց թե ինչպես, ինչ ճանապարհով են մարդիկ հարստանում, դա անհանգստացնում է բոլորին:

Ես ուղղակի երազում եմ տեսնել իմ համագյուղացիներից որևէ մեկին հզոր և ժամանակակից գյուղացիական տնտեսություն կազմակերպած, որտեղից ստացված բարիքներով գյուղում բացած իր ճաշարանում սպասարկի մարդկանց ազգային համեղ ճաշատեսակներով: Ե՞րբ կտեսնեմ: Ես հոռետես չեմ, սպասում եմ այդ օրվան և այն օրվան, երբ նման տնտեսությունները շատ կլինեն: Երանի՜ թե ինձ էլ հաջողվի:

Խոսելով վարվա մասին, կհիշեցնեմ նաև մեր այսօրվա աշխատանքների, տնտեսության առաջավոր մարդկանց մասին, որոնք միշտ էլ պատրաստ են իրենց անձնվեր աշխատանքով բարձր պահելու գյուղի, շրջանի, հանրապետության պատիվը, ձգտում ավելի շատ բարիքներ արարել մարդկանց համար: Դրանք են մեխանիզատորներ Վանիկ Մարգարյանը, Սլավիկ Զուրնաջյանը, Կարապետ և Մյասնիկ Հակոբյանները, դաշտավարներ Ասյա Համբարձումյանը, Ժենյա Իգիթխանյանը, Նարինե Զլոյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց համեստ ավանդը ներդրին պետությանը 2.500 տոննա կարտոֆիլ և 140 տոննա հացահատիկ հանձնելու գործում:

Ընթացիկ տարվա ուշացած գարնան պայմաններում, որը գրեթե մեկ ամսով ձգձգեց կարտոֆիլի ցանքը և դաշտային մյուս աշխատանքները, նման ցուցանիշների հասնելը հեշտ գործ չէր:

Այն հանգամանքը, որ տնտեսության անասնապահները կաթի և մսի հանձնման պլանները մեկ ամիս առաջացումով են իրացնում, ևս հաղթանակ է: Ուստի դրա համար արժանի են հիշատակման սոցիալիստական աշխատանքի հերոս Ժենյա Պապոյանը, Օնիֆեր Թորոսյանը, Սիրանուշ Դուրգարյանը, Շամունե Պողոսյանը և ֆերմայի մյուս անդամները:

Առջևում յոթ ամիս ուտող մսուրային շրջանն է: Համոզված եմ, որ հանրային հոտի ձմեռումը կանցկացնենք կազմակերպված, քանի որ պայմանական յուրաքանչյուր գլուխ անասունի հաշվով կուտակել ենք 27 ցենտներ կերային միավոր:

Երեկո է: Աշնանային թանձր և գորշ ամպերով պարուրվել է գյուղը: Աթանասը գրասենյակում ընդունում է մարդկանց, ուշադիր լսում նրանց խորհուրդներ տալիս, օգնություն խոստանում:

Հետո զրուցում է բրիգադավարների հետ, գրառումներ անում ծոցատետրում, հետաքրքրվում մարդկանց տրամադրությամբ, կոնկրետ առաջադրանքներ տալիս նրանց հաջորդ օրվա անելիքների մասին:

Այս ամենով չի վերջանում նրա հանդիպումը աշխատողների հետ: Նրանք միասին դիտելով կենտրոնական հեռուստատեսության «Վրեմյա» ծրագիրը, զրուցում են երկրի արտաքին և ներքին քաղաքականության, կյանքի այս կամ այն հարցի շուրջ: Նախագահը, վերցնելով օրվա թարմ թերթերը, դուրս է գալիս առանձնասենյակից, գնում տուն, ուր իրեն են սպասում հարազատները:

Եվ այսպես, ամեն օր: Բայց Աթանասը չի տրտնջում անցկացրած օրերի միանմանությունից, այլ, ընդհակառակը, նա հպարտացել է, որ արդարացրեց համագյուղացիների վստահությունը, չկորցրեց գյուղի տարիների վաստակած անունը: 15 նոյեմբերի

ԱՅԼ ԵԼՔ ՉԿԱ, ՀՈՂԸ՝ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Բոգդանովկայի շրջանի Դիլիֆի խորհտնտեսությունը տնօրինում է 600 հեկտար վարելահող, որի զգալի մասը քարքարոտ է, ընկած թեքությունների վրա: Տնտեսությունում խախտվում են ինչպես ցանքաշրջանառության, այնպես էլ սերմնափոխանակման կանոնները: Միևնույն կուլտուրան (հատկապես կարտոֆիլը) ամեն տարի ցանվում է նույն հողատարածության վրա:

Այդ բոլորը, ինչ խոսք, բացասաբար են անդրադառնում դաշտավարության արդյունքների վրա:

Սակայն դա հարցի մի կողմն է: Դիլիֆում, տարիներ ի վեր անհրաժեշտ խնամք ու մշակություն չստանալով,հողերը զրկվել են որակական հատկանիշներից: 1.241 հեկտար արոտավայրերի մի զգալի մասը գրեթե շարքից դուրս է եկել, էրոզիայի ենթարկվել:

Անցյալ տարի գարնանը որակազրկված հողերում ցանվեց 20 հեկտար կարտոֆիլ: Ջնայած ցանքը, մշակումը, բերքահավաքը կատարվեց մեքենայական եղանակով, ջրարբիացվեցին պլանտացիաները, բայց դրանք արդյունք չտվեցին: Տնտեսության երկու դաշտավարական բրիգադներն էլ (ղեկավարներ՝ Ս. Պողոսյան, Ֆ. Մարկոսյան) թերակատարեցին պլանային առաջադրանքները: 110-ի դիմաց հեկտարից հավաքեց հազիվ 50 ցենտներ կարտոֆիլ, այսինքն՝ մի քիչ ավելի, քան հեկտարի հաշվով հողին տրված սերմացուն:

Թերակատարվեցին նաև դաշտավարական մյուս հիմնական կուլտուրաների բերքատվության պլանները:

Դաշտավարության ետ մնալը իր բացասական կնիքն է դնում անասնապահության վրա: Այստեղ կերի կայուն բազա չի ստեղծվում: Ցուրաժային կովի կթնատվությունը զգալիորեն նվազել է, անցյալ տարի պլանի 2.100-ի դիմաց կազմեց 1.875 կիլոգրամ: Մեկ ոչխարից խուզվել է 2 կիլոգրամ բուրդ՝ պլանի 2,4-ի փոխարեն:

Այսքանից հետո հասկանալի է, թե ինչու տնտեսությունը գյուղմթերքների պետհանձնումների ոչ մի առաջադրանք չի կատարել:

- Հողը պետք է վերադարձնել իր տիրոջը՝ գյուղացուն: Միայն նա կարող է սրտացավ վերաբերմունքով հողը դարձնել բերրի ու արգավանդ, մշակել իր նախընտրած կուլտուրան: Ինչպես ասում են գյուղացին քարից էլ հաց կքամի, եթե ինքն է հողի տերը: Հողը հարկավոր է տալ գյուղացուն իբրև ժառանգություն: Դա շահագրգռվածության այնպիսի պահ է, որը չօգտագործելը կլինի անաներելի սխալ,- ասաց խորհտնտեսության տնօրեն Լադո Գրիգորյանը:

Մենք համաձայն ենք խորհտնտեսության ղեկավարների կարծիքին, բայց հողը գյուղացուն վերադարձնելու, նրա բերքատվությունը բարձրացնելու հարցերով պետք է մտահոգվեն նաև

շրջխորհրդի գործկոմը, ՇԱԱՄ-ը և մյուս համապատասխան կազմակերպությունները:

Քանի որ լեռնային այս գյուղում տարիներ շարունակ աչքաթող են արվել սոցիալ-տնտեսական հարցերը, գոնե այսօր պետք է այդ ուղղությամբ աշխատանք տանել, գյուղացու աշխատանքի և հանգստի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ:

Սրանք հարցեր են, որոնք պետք է լուծվեն: Հակառակ դեպքում ոչինչ չի ստացվի:

22 հունվարի

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ախալքալաքի շրջանի կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, գյուղատնտեսական մյուս ձեռնարկություններում հանրագումարում են անցյալ տարվա արդյունքները, պարզում, թե յուրաքանչյուր տնտեսություն ինչպիսի ներդրում ունի գյուղատնտեսության մթերքների արտադրության և մթերումների ավելացման գործում:

Միանգամից ասենք, որ արդյունքները գոհացուցիչ չեն, հատկապես անասնապահություններում: Շրջանը կրկին թերակատարել է անասնապահական մթերքների արտադրության և պետհանձնումների առաջադրանքները ու շարունակում է վայրէջքը:

Անցյալ տարի, նախորդ տարվա համեմատությամբ, շրջանում ֆուրաժային կովի կաթնատվությունը նվազել է 9 կիլոգրամով, համախառն կաթը 5.050 ցենտներով: Տարեկան պլանի 2.156-ի դիմաց կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները մեկ կովից ստացել են 1.980 կիլոգրամ կաթ:

Թերակատարվել են նաև անասնապահական մթերքների արտադրության առաջադրանքները: Շրջանը պետությանը պարտք մնաց 2.654 տոննա կաթ, 2.590 տոննա միս, 662 տոննա բուրդ, մեկ միլիոն 217 հազար ձու և այլ մթերքներ:

Զգացնել են տալիս նաև ցածրորակ անասնապահական մթերքների հանձնումները:

Ճիշտ է, անցած տարի առաքված առաջին և երկրորդ կարգի կաթի դիմաց տնտեսությունները ստացել են ավելի քան 15 հազար ռուբլու հավելավճար: Դրանում մեծ ներդրում ունեն Բուռնաշեթի, Ալաստանի, Աղավրեթի, Արագվայի, Կոթելիայի, Խուլգումոյի, Կիրովականի, Սուլդայի, Սամսարի տնտեսությունները, բայց քիչ չեն նաև այնպիսիները՝ Դադեշ, Ագանա, Կարգախ, Պրտենա, Խանդո, որոնք ցածրորակ կաթ են հանձնում վերամշակման գործարան:

Եթե նկատի ունենանք նոր տարվանից կաթի գնման գների զգալի բարձրացումը, ապա հասկանալի կդառնա, թե ինչ օգուտ կբերի միայն որակի բարձրացումը:

Խոսենք այդ պրոբլեմների մասին, որոնք դանդաղ են լուծվում: Պատճառներից մեկը մի շարք տնտեսություններում անասնաշենքերի անմխիթար վիճակն է: Կովանոցների մի զգալի մասում

անհրաժեշտ նախադրյալներ չկան սանիտարահիգիենիկ նորմալ պայմաններ ստեղծելու և մաքուր կաթ ստանալու համար: Քիչ չեն նաև այն կովանոցները, որտեղ հնարավորություններ չկան անասունների կթը մեքենայացնելու համար: Մինչդեռ հայտնի է, որ կթի մեքենայացման դեպքում մեծ չափով բարելավվում է կաթի մաքրությունը:

Պատճառներից մյուսը. յուղայնության բարձրացումը մեծ չափով կախված է կերաբաժնից: Իսկ շրջանի առանձին տնտեսություններում կերի անհրաժեշտ բազա չունենալու հետևանքով անասունների օրվա կերաբաժինը դեռ հեռու է բավարար լինելուց:

Այժմ մսի արտադրության և որակի մասին:

Ինչպես նշվեց, նվազել է նաև մսի արտադրությունը: Սա նույնպես նահանջ է, և մսի զգալի կորուստ է նշանակում: Տարեկան առաջադրանքը թերակատարել և պետությանը ցածրորակ միս են հանձնել Բալխոյի, Հոկամի, Մաջադիայի, Կարզախի, Ալաթումանի, Զունչխայի, Խավեթի և ուրիշ տնտեսություններ:

Արդյունավետ են աշխատում խոզաբուծական ֆերմաները: Մսի արտադրության ավելացման այդ խոշոր ռեզերվը անուշադրության է մատնված:

Այդ մասին է խոսում այն փաստը, որ 48 տնտեսություններից նման ֆերմաներ ունեն 13-ը: Իսկ առանձին տնտեսություններ էլ դրանք կանգնեցրել են վերացման վտանգի առջև, ինչպես ասում են՝ որոշ ղեկավարներ ու մասնագետներ աշխատում են ագատվել «դլխացավանքից»:

Գնալով թերակատարվում են մատղաշի ստացման, աճեցման և գիրացման առաջադրանքները: Զգալիորեն պակասել է ինչպես հանրային, այնպես էլ օժանդակ տնտեսությունների կողմից հանձնված բարձր քաշ ունեցող խոզերի դլխաքանակը: Այդ և այլ պատճառներով չի կատարվել խոզի մսի պետհանձնման պլանը:

Աշխատանքի վիճակը բավարար համարել չի կարելի նաև ոչխարաբուծության բնագավառում: Դեռ չեն հաղթահարվել անասունների խնամքի, կերակրման և պահպանման պայմանները բարելավվելու, անկումները, հարկադիր մորթը, մաքինների ստերջությունը նվազագույնի հասցնելու, զոոանասնաբուժական միջոցառումները ճշտությամբ կատարելու հետ կապված դժվարությունները:

Նախորդ տարվա համեմատությամբ, շրջանում 3.000 դլխով թերակատարվել է դրանց դլխաքանակի ավելացման պլանը: Մեկ ոչխարից 2,4-ի փոխարեն տացվել է 2 կիլոգրամ բուրդ:

Այսքանից հետո կարելի՞ է զարմանալ, թե ինչու խոզաբուծական և ոչխարաբուծական ֆերմաներում դանդաղ են արմատավորվում աշխատանքի կազմակերպման և վարձատրության առաջավոր եղանակները, հատկապես վարձակալական կապալը:

Վարձակալական ձևը, ինչպես ցույց է տալիս փորձը, կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, անասնապահների անձնական շահագրգռվածությունը, կապահովի այդ ճյուղերի առաջընթացը և եկամտաբերությունը:

Վերևում նշվեց անասնապահությունում տեղ գտած թերությունների, նվազ մթերատվության և մթերքների ցածր որակի պատճառների մասին: Բայց դրանք նաև կատարողական ցածր կարգապահության հետևանք են: Ահա թե ինչու գործերի վիճակը պետք է անհանգստացնի շրջանի ղեկավար կազմակերպություններին, առաջին հերթին՝ ՇԱԱՄ-ին: Նրանք պետք է գործնական միջոցներ ձեռնարկեն բարձրացնելու տնտեսությունների ղեկավարների և մասնագետների պատասխանատվությունը անասնապահության վայրէջքը կանգնեցնելու համար:

21 փետրվարի

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՍԻՐԵԼԻ ՎԱՅՐԸ

Ախալքալաքի մանկական գրադարանն իրավամբ համարվում է շրջանի լավագույն արտադպրոցական հիմնարկներից մեկը: Գրադարանը հիմնվել է 1940 թվականին: Այն ժամանակ նրա ֆոնդում ընդամենը 1.200-1.300 կտոր գիրք կար առանց գրապահարանների, գրապահոցի, ընթերցասրահի: Տարիներ անց գրադարանն ապահովվեց հարմարավետ շենքով, մեծացավ ու հարստացավ գրքային ֆոնդը, նոր անուն ու նոր միջոցներ ստացավ: Այժմ նա 18 հազար կտոր գրականություն ունի, ստանում է 12 անուն միութենական, հանրապետական թերթեր ու ամսագրեր: Նրա հարուստ ֆոնդից օգտվում են քաղաքի ու շրջանի գյուղերի 1.200 երեխաներ: Այստեղ ստեղծվել են շրջիկ կետեր, որոնց միջոցով գիրքը հասցվում է գյուղերի փոքրիկ ընթերցողներին: Այդ պարտականությունը կատարում են գրադարանի ակտիվ ընթերցումները:

Գրադարանը մեթոդական գործնական օգնություն է ցույց տալիս նաև իր համակարգում գտնվող շրջանի մյուս մանկական գրադարաններին: Այստեղ պատանի ընթերցողների մասնակցությամբ հաճախ կազմակերպվում են նպատակային միջոցառումներ, որոնք հնարամիտ են ու խելացի, արտակարգ հետաքրքիր: Վրաց և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությանն է նվիրվել, օրինակ, հատուկ ցերեկույթը, կարդացվել են զեկուցումներ Ա. Ծերեթելու ծննդյան 150 և Հովհ. Թումանյանի ծննդյան 120-ամյակի առթիվ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում «Եղբայրներ ենք», «Հավերժ միասին», «Եղբայրը եղբորով է զորեղ» թեմատիկ միջոցառումները անցկացնելու համար: Միջոցառումները նվիրվելու են հատկապես երկու եղբայր ժողովուրդների վրացիների և հայերի բարեկամությանը, գալիքին ավանդվող բարիդրացիության զգացմանը:

Մեծ հետաքրքրությամբ են դիտվում գրադարանի փոքրիկ ընթերցողների կազմած ալբոմները, լուսանկարային ստենդները: Դրանցից ուշագրավ են «Ախալքալաքի մանկական գրադարանի պատմությունը», «Մեծ Հայրենականը և ախալքալաքցիները», «Վրաց և հայ ժողովուրդները եղբայրներ են» և այլն:

Այստեղ գործում են մի շարք խմբակներ, որոնց մեջ ընդգրկված ընթերցողներին հնարավորություն է ընձեռված զարգացնելու իրենց ճաշակն ու շնորհքը:

Ախալքալաքի շրջանային մանկական գրադարանի օրինակելի աշխատանքը կազմակերպում են նրա աշխատակիցները իրենց գործի գիտակներ Արաքսյա Էլբակյանը, Օվսաննա Իշխանյանը, Մանյա Թոփալյանը (այժմ կենսաթոշակառուներ), ավագ գրադարանավարուհի Ալինա Դարբինյանը, գրադարանավարուհի Դալի Գվարամաձեն:

Գովեստով պետք է խոսել նրա վարչուհի Մանյա Մարտիկյանի մասին: Այստեղ նա աշխատում է 1946 թվականից, ունի բարձրագույն մասնագիտական կրթություն: Նրանից ու ողջ կոլեկտիվից գոհ են ոչ միայն փոքրիկ ընթերցողները, այլև նրանց ծնողներն ու դպրոցական կոլեկտիվները:

Հիրավի, այս փոքր կոլեկտիվը արժանի է պատվի ու մեծարանքի:

2 մարտի

ԽՈՋԱԲԵԿՅԻՆԵՐԸ ՇՏԱՊՈՒՄ ԵՆ

Կերի պակասը անցած մսուրային շրջանում քիչ տհաճություններ չպատճառեց Նինոծմինդայի շրջանի Խոջաբեկի կոլտնտեսության անասնապահներին: Հանրային նախիրը փրկելու համար հսկայական միջոցներ ծախսվեցին ոչ միայն համակցված կերեր, այլև խոտ ձեռք բերելու համար: Մինչև մայիսի վերջերը տևող ձմեռը կոլտնտեսությանը ստիպեց ծախսել 150 հազար ռուբլի և «Ջավախք» կերարտադրական միավորումից գնել 100 տոննա խոտ:

Կերի պակասի հետևանքով տնտեսությունը թերակատարեց կաթի, մսի արտադրության և պետվաճառքի 1990 թվականի առաջադրանքներն ու այս տարի էլ զգալի տեղաշարժ չի նկատվում անասունների մթերատվության բարձրացման ուղղությամբ:

Սա դառը դաս եղավ: Տնտեսության աշխատողները սկսել ու կազմակերպված առաջ են տանում խոտհունձը: Նրանք ձգտում են ստեղծել կերի հարուստ պաշարներ: Կերի կուտակումը Խոջաբեկում հայտարարված է հարվածային ճակատ:

Այստեղ ժամանակին հոդացին ունեցած տեխնիկայի նախապատրաստման, խրամատների նորոգման մասին: Սահմանվել է կերի կուտակման գրաֆիկ-պլան, գործողության մեջ են դրված նյութական և բարոյական խրախուսման եղանակներ:

Մասնագիտությամբ գյուղատնտես Գագիկ Ղարսլյանի դաշտավարական բրիգադի երկրագործներն ու մեխանիզատորական բրիգադի անդամները (բրիգադավար՝ Միհրան Սահակյան) հարուստ բերք են հավաքում: Գերանդիավորները և մյուս կոլտնտեսականները հնձում և հավաքում են թմբերի, ձորակների, ճանապարհների եզրերին աճած խոտը և օրական մինչև երեք տոննա կանաչ զանգված

են պատրաստում հորթերի և ինտենսիվ եղանակով բուծող մատղաշների համար:

Արդյունավետ են աշխատում չեխական մակնիշի ձեռքի խոտհնձիչները: Դրանց միջոցով Սամվել Փուխուլյանը, Արմեն Ղարսլյանը և ուրիշներ օրական առաջադրանք են կատարում:

Արժանվույն պետք է գնահատել նաև մեխանիզատորների և ավտովարորդների աշխատանքը, որոնք օր-օրի նորանոր հաջողություններ են հասնում կերի կուտակման բնագավառում:

Ահա համաչափ շարժվում է «Ե-301» մակնիշի հնձիչը: Այն վստահված է փորձված մեխանիզատոր Սերգեյ Գորոյանին: Կոլտնտեսականները հիացմունքով են խոսում նրա մասին: Չէ՞ որ Սերգեյն այդ ագրեգատով օրական հնձում է 8-10 հեկտար խոտհարք և կորուստներ էլ չի տալիս: Քսան հեկտար առվույտի (առաջին տարին է հավաքվում բերքը) յուրաքանչյուր հեկտարից ստացվում է 30-35 ցենտներ խոտ:

Հնձի և փոխադրման միջև խզում թույլ չտալու նպատակով կեր հայթայթողներին հատկացվել են անհրաժեշտ թվով փոխադրամիջոցներ: Նրանք անընդմեջ սիլոսահորերի մոտ կամ դեզանոց են փոխադրում կանաչ զանգված ու խոտ: Մեխանիզատորներ Արտյուշ և Խոսրով Մոսոյանները «ԴՏ-75» մակնիշի տրակտորով սիլոսախրամատներում պնդացնում են զանվածը:

Շուտով կեր հայթայթողներին կմիանան շրջկենտրոնի կարի ֆաբրիկայի բանվորները: Շեֆական օգնության կարգով նրանք մինչև խոտահավաքն ավարտելը կաշխատեն կոլտնտեսությունում:

Յուրաքանչյուր օրվա վերջում հանրագումարի են բերվում կերակուտակման արդյունքները, խրախուսվում են առաջավորները:

Խոջաբեկի կեր հայթայթողները պարտավորվել են ավելի քան 1.000 տոննայով գերազանցել անցյալ տարվա կերի կուտակման ցուցանիշը և յուրաքանչյուր պայմանական անասունի հաշվով ունենալ 20-22 ցենտներ կերամիավոր:

Ինչպես տեսնում ենք, խոջաբեկցիները շտապում են: Ժամանակը չի սպասում, իսկ գործ շատ կա: Առջևում հացահատիկայինների, կարտոֆիլի բերքահավաքն է, աշնանային մյուս աշխատանքները:

Ասել, թե Խոջաբեկի կոլտնտեսականները և մեխանիզատորները հոգսեր չունեն, ճիշտ չի լինի: Հոգսեր կան, որոնք տարիներ շարունակ կրկնվում են:

Կերի կուտակման այս վճռական օրերին կոլտնտեսությունը լրիվ ապահովված չէ տարբեր մակնիշի կերահավաք մեքենաներով: Մեխանիզատորները և ավտովարորդները դժգոհում են պահեստամասերի, բեռնատար ավտոմեքենաների ավտոդղորի, հատկապես վառելանյութի վատ մատակարարումից: Սրանք հարցեր են, որոնցով պետք է լրջորեն զբաղվեն մատակարարող կազմակերպությունները: Արդեն խրոնիկական դարձած այդ «հիվանդությունների» բուժմամբ անհրաժեշտ է, որ զբաղվի նաև շրջանի պրեֆեկտուրան:

3 օգոստոսի

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ «ՋԱՎԱԽՔ ԻՄ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

«ՈՒ ՓԱԿ ԴՈՒՌ ՉԿԱՐ ՆՐԱ ԱՌՋԵՎ»

Երևանի «Զանգակ-97» հրատարակչությունը լույս է ընծայել ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ, Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ Աղասի Մելքոնյանի ստեղծագործությունների ընտրանին՝ «Ջավախք իմ առասպելական» խորագրով: Հրատարակման նախաձեռնությունը հեղինակի որդուինն է՝ պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանինը:

Աղասի Մելքոնյանը հանրաճանաչ անուն է Ջավախքում: Մոտ կես դար նա եղել է «Սովետական Վրաստան» թերթի Ջավախքի սեփական թղթակիցը, իսկ թերթն այն տարիներին տարածաշրջանի բոլոր հայ ընտանիքների մշտական հյուրն էր: Մելքոնյանը լուսաբանել է Ջավախքի տնտեսական, մշակութային կյանքը, անդրադարձել բացառապես բոլոր հիմնախնդիրներին: Տեղեկատվություն, երկխոսություններ, հարցազրույցներ, ռեպորտաժներ, ակնարկներ, վերլուծական հոդվածներ, ստուգայցեր... Մի գրքի մեջ ամփոփված այս ամբողջն արդեն իսկ պատմական ուսումնասիրության արժեք է ստանում, ընթերցողին հստակ պատկերացում տալիս անցյալ դարի 50-90-ական թթ. Ջավախքի հիշարժան բոլոր իրադարձությունների, նրա ժողովրդի կյանքում կատարված առաջընթաց տեղաշարժերի մասին:

«Ջավախք իմ առասպելական» գրքի շնորհանդեսը օրերս տեղի ունեցավ Ախալքալաքում: Այն բաց արեց Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը՝ անվանի գրող Մկրտիչ Սարգսյանի որդին: Գրքի խմբագիր և օրվա բանախոս Կամո

Սարիբեկյանն այսպես բնորոշեց Աղասի Մելքոնյանին. «Խստապահանջ ու հավասարակշռված, գործի մեջ հետևողական անձնավորություն, որին լեռնաշխարհի ամենահեռավոր գյուղում էլ մեծից փոքրը ճանաչում էր. չկա քար անդամ, որի վրայով անցած չլիներ լրագրողը ավելի հաճախ ոտքով. գիշերում էր յայլաներում, ասում, խոսում անասնապահների հետ՝ նրանց հոգսերի շուրջը: Ու մարդիկ գյուղերում կամ քաղաքում ամենատարբեր հարցերով դիմում էին նրան՝ առաջին հայացքից լրագրողի պարտականությունների մեջ չմտնող բողոքներով... Եվ Աղասին այն անձնավորությունը չէր, որ անպատասխան թողներ որևէ բողոք կամ ահազանգ: Տաղանդավոր լրագրողը ուղնուծուծով գիտեր լեռնաշխարհի մարդուն ու նրա հոգսերը, ու փակ դուռ չկար նրա առջև»:

Ելույթ ունեցան, գիրքն արժեքավորեցին և նրա հեղինակից հուշեր պատմեցին իրավաբան Իսահակ Աբրահամյանը, գիտությունների դոկտոր Արմեն Բլրցյանը, լրագրողներ Մանուկ Կարախանյանը, Գրիգոր Վարդիկյանը, Սաշա Ղռմաջյանը, մանկավարժներ Սևակ Ղարսլյանը, Կարապետ Մելքոնյանը, Մկրտիչ Քթոյանը, Կարապետ Կարախանյանը, բանաստեղծներ Նազարեթ Կիրակոսյանը և Եգոր Մովսիսյանը, Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆայել Ղազարյանը: Ճարտարապետ Օթար Յագորաշվիլին, խոսելով գրքի արժեքավորության մասին Վրաստանի պատմության տեսանկյունից, պատրաստակամություն հայտնեց իրականացնելու նրա վրացերեն թարգմանության հրատարակությունը:

«Հայրս՝ Աղասի Մելքոնյանը,- իր հուզիչ ելույթում ասաց Աշոտ Մելքոնյանը,- որն ինչպես ինձ, այպես էլ, կարծում եմ, ամեն մի հայ զավակի համար՝ իր ծնողը, եղել է իսկական խորհրդանիշ, ավյալ դեպքում՝ հայ մտավորականի, իսկական հայրենասեր անձնավորության խորհրդանիշ: Նա մշտապես պահանջում էր երբեք չարբել սեփական հաջողություններով, հասարակության մեջ

գրված իր նոր գիրքով, չմեծամտանալ ձեռք բերածով, չընկնել գլխապտույտի մեջ, մնալ համեստ ու բարի մարդ»:

Ելույթներով և հուշապատումներով ներկայացվեց Աղասի Մելքոնյանի կյանքի ամբողջ ուղին. մանկություն, ուսումնառություն, մարզական կյանք, աշխատանք դպրոցներում, կուսշրջկոմում: Հասկանալի կերպով ծանրության կենտրոնը եղավ նրա ժուռնալիստական գործունեությունը, որտեղ շատ է ուսանելի և որին բնորոշ են մաքրությունը, նվիրվածությունը գործին և մասնագիտական բարձր պատրաստակամությունը:

Լրագրողներիս համար Աղասի Մելքոնյանը ուսուցիչ էր, ժուռնալիստի էտալոն: Պաշտոնավորների համար նա «ընկեր Մելքոնյան» էր, որին հարգում էին, որից պատկառում էին: Շարքայինների համար նա «մեր Աղասին» էր, կթվորուհու, դաշտավարուհու համար «Աղասին եղբայր» էր: Իսկ գումարելիների գումարը՝ վաստակաշատ մարդ և վաստակավոր լրագրող Աղասի Մելքոնյան:

Գևորգ Այվազյան

«Արշալույս», Նինոծմինդա, 2003, օգոստոս, էջ 5:

ՋԱՎԱԽՔԻ ԿԵՍԴԱՐՅԱ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի Հանրապետության վաստակավոր ժուռնալիստ Աղասի Մելքոնյանի (1921-1995) «Ջավախք իմ առասպելական» (Երևան, «Զանգակ» հրատ., 384 էջ) հոդվածների ժողովածուն հեղինակի շուրջ կեսդարյա լրագրական գործունեության ամփոփ պատկերն է, նրա լավագույն հրապարակումների ծաղկաքաղը: Ժողովածուն մեզանում նորություն պիտի համարել այն առումով, որ նրա մեջ ի մի են բերված «Սովետական Վրաստան» (Ներկայումս՝ «Վրաստան») հանրապետական թերթերի էջերում Ջավախքի բնակչության կյանքին ու կենցաղին, աշխատանքային գործունեությանը նվիրված նյութերը՝ սկսած անցյալ դարի կեսերից մինչև դարավերջ:

Անդրկովկասյան մամուլի լավագույն օրգաններից մեկը՝ «Սովետական Վրաստան», որի խանձարուրի մոտ կանգնած են եղել Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Ա. Խումարյանը, Ա. Խանոյանը, Ա. Մելիքյանը, Հ. Սուրխաթյանը, Նար-Դոսը և այլոք, իր գոյության ութուկես տասնամյակների ընթացքում աճեցրել ու դաստիարակել է մեծ թվով հրապարակախոսների ու լրագրողների, որոնցից մեկն է սեփական թղթակից Աղասի Մելքոնյանը: Շուրջ կես դար՝ 1949 թ. մինչև իր մահը՝ 1995 թ. դրիչը ձեռքին, ինչպես ժամապահ զինվոր, նա ծառայել է հարազատ լեռնաշխարհին, հիշյալ թերթի էջերում վերհանել նրա նվաճումներն ու սխրանքները, ինչպես նաև հոգսերն ու ցավերը՝ դրանով իսկ դառնալով Ջավախք աշխարհի նվիրյալ տարեգիրը:

Գիրքը բաղկացած է երկու բաժնից, ունի նաև առաջաբան ու վերջաբան, հեղինակի մասին կենսագրական հակիրճ տեղեկություններ: Առաջին բաժնում զետեղված է հիմնականում «Սովետական Վրաստան» թերթի էջերում Ա. Մելքոնյանի ստորագրությամբ տպագրված նյութերից կատարված ընտրանին՝ շուրջ 200 միավոր: Լրագրական տարբեր ժանրերով գրված այդ նյութերը, որ

գրքում դասավորված են ժամանակագրական կարգով, ունեն թեմատիկ լայն ընդգրկում, ներկայացնում են լեռնաշխարհի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային ու մարդկային կյանքի առավել աչքի ընկնող կողմերը: Այնտեղ կարելի է գտնել վարպետ գրչով գրված լուրեր ու հաշվետվություններ, հարցազրույցներ ու ռեպորտաժներ, ակնարկներ ու թղթակցություններ, վերլուծական հոդվածներ ու ստուգայցեր, երկխոսություններ ու ֆելիետոններ:

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է հեղինակին՝ Աղասի Մելքոնյանին: Այստեղ տպագրված են նրա գործընկերների ու ժամանակակիցների, նշանավոր գիտնականների ու գրողների, իր կրտսեր գրչակիցների գնահատանքի խոսքերն ու հուշերը, որոնք մեկ անգամ ևս հաստատում են բազմավաստակ լրագրողի կեսդարյա ստեղծագործական աշխատանքի կարևորությունը ջավախքահայության կյանքում և արժևորում են նրա հրապարակախոսական հարուստ ժառանգությունը՝ միաժամանակ կերտելով նրա մարդկային վեհ կերպարը, ցույց տալիս նրա գրական աշխատանքի նկատմամբ ունեցած մեծ սերն ու նվիրումը:

Ճիշտ է, գրքում զետեղված որոշ նյութեր, որ գրվել են տասնամյակներ առաջ և կրում են ժամանակի շունչն ու ոգին, այսօր կարող են թվալ հնացած, բայց և այնպես դրանք անցած ժամանակների արձագանքներն են և ունեն պատմաճանաչողական կարևոր նշանակություն: Ընթերցողները, ծանոթանալով ինչպես դրանց, այնպես էլ գրքում զետեղված մյուս նյութերին, կարող են դրանց մեջ գտնել իրենց հուզող շատ ու շատ հարցերի պատասխաններ, պատկերացում կազմել Ջավախքի ոչ շատ հեռու անցյալի մասին:

Ներկա գրքի երևան գալը մեզ հուշում է շոշափել նաև մեր մամուլի պատմությանն առնչվող մի կարևոր հարց: Խոսքը վերաբերում է անցյալի մեր մամուլի առաջատար օրգաններում ցրված արժեքավոր հրապարակումներին, որոնք մերօրյա ընթերցողների ու

մասնագետների համար մնում են անմատչելի, քանի որ այդ թերթերի հազվագյուտ համարները գրադարանների փոշոտ դարակներին ու մութ նկուղներում վաղուց դարձել են անձեռնմխելի: Ուստի, մեր կարծիքով, դրանցում տպագրված նյութերի մի մասը, որ դեռևս չի կորցրել իր ամթեականությունը և օգտակար կարող է լինել հատկապես ներկայիս երիտասարդ լրագրողների ու մամուլի աշխատողների համար, պետք է լույս աշխարհ հանեն և հրատարակել առանձին գրքերով:

Ասվածի լավագույն օրինակն է ներկա ժողովածուն, որը վիրահայ մամուլի անխոնջ մշակներից մեկի հիշատակին անթառամ պսակ լինելուց բացի, նաև Ջավախք Մեսխեթյան լեռնաշխարհի հարյուր հազարավոր հայության (և ոչ միայն) հետպատերազմյան տասնամյակների կյանքի կենդանի տարեգրությունն է, փաստական հարուստ նյութերով հյուսված պատմության մի կարևոր էջը:

Վ.Մաղալյան
բանասիրական գիտությունների թեկնածու

«Հայաստանի Հանրապետություն», 2004, 1 դեկտեմբեր, էջ 5

Ա. Մելքոնյանի հայրը՝ Հարությունը թոռնիկների հետ
/ձախից աջ՝ Աշոտ, Կարո, Սուսաննա, 1963թ/

Կրտսեր որդու՝ Աշոտի հետ

Ախալքալաքի Դ. Դեմիրճյանի անվան դպրոցի 10 - դասարանում, հասարակագիտության ժամին /1977 թ./

Ճոբարեթի ճամբարում՝ Աշոտի հետ



Ընտանիքի հետ /ձախից Աղասի Մելքոնյանը, հաջորդաբար՝ թոռնիկը՝ կրտսեր Աղասին, որդին՝ Աշոտը, կինը՝ Կատյան, ավագ որդու՝ Կարոյի կինը՝ Սոնյան

Թոռնուհու՝ Կատյայի հետ

Մոսկվա. Ժորա Խաչատրյանի հետ

Կենտրոնում՝ նստած, Ախալքալաքի շրջգործկոմի նախագահ Մելիք Հովհաննիսյանը, նրանից աջ՝ Աղասի Մելքոնյանը

Ախալքալաքի շրջանի ղեկավար աշխատակիցներով, Լենինգրադ, 1970-ականներ, Հայկ Գրիգորյան, Մաթևոս Խոցանյան, Հուսիկ Ղազարյան, Աղասի Մելքոնյան, Վասիլի Քոչոյան

Տրուսկավեցում

Տրուսկավեց. քրոջ՝
Շողիկի և փեսայի՝ Ժորայի հետ

Ձախից աջ՝ Ազատ Սարիբեկյան, Ազատի Մելքոնյան, Սերգեյ Առաքելյան, Ռոմիկ Ավագյան, Դիմիկ Բագրատունի /1976 թ./

Ձախից աջ՝ Կարապետ Մելքոնյան, «Վրաստան» թերթի աշխատակից, Աղասի Մելքոնյան, Սերգեյ Առաքելյան, Անահիտ Բոստանջյան, Մուկուչ Մելքոնյան

Ձախից աջ՝ Սերգեյ Ադամյան, Օնիկ Խաչատրյան, Մառլեն Ուլուխանով, Աղասի Մելքոնյան

ՀՈՍՔ ԴՊՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՌԱՆՁՆԱԿԱՆ
ՖՈՆԴԱՐԱՆ

Սաղմոս լճի ափին աշխատանքային ընկերների հետ

Շրջանի ղեկավարության հետ



Ճոբարեթի ճամբարում. Աղասի Մելքոնյան, Ստեփան Ստեփանյան, Սերգեյ Առաքելյան, Յուրի Նանուշյան, Սարգիս Նանուշյան

Գործընկերների հետ. ձախից աջ՝ Մոսկով Ղանդիլյան, Հակոբ Համբարյան, Կարապետ Մելքոնյան, Հյուր Ուկմերգեից, Աղասի Մելքոնյան, Մելս Մահտեսյան

ՀՅՍՍ ԳՐՈՒՄՆԵՐ ՑՈՒՑԱՀԱՆԳԱՐԱՆ

Աշխատանքային ընկերների շրջապատում

Ձախից աջ՝ Սոս Սիմավորյան, Բենիկ Սերյանյան, Աղասի Մելքոնյան

Գանձա. Տերյանական օրեր, «Վրաստան» թերթի աշխատակիցները

Հուսիկ Ղազարյան, Աղասի Մելքոնյան

Աղասի Մելքոնյան, Հովհաննես Հակոբյան

ՀԱՅԿ ԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՀՈՒՇԵՐ ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1.Սերգեյ Առաքելյան - էջեր լրագրողի կյանքից. իմ ուսուցիչը, բարեկամը, ընկերը.....3
2.Նազարեթ Կիրակոսյան - Անուշիկ հուշիկներ.....8
3.Հովհաննես Մելքոնյան - Մեր հորեղբայր Աղասին.....11
4.Ստեփան Ստեփանյան – Իմ մեծ բարեկամը.....14
5.Կամո (Կամսար Սարիբեկյան) - Բանավոր պատումներ (Աղասի Մելքոնյանի պատմածներից).....15

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԴՎԱԾՆԵՐ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐԻՑ

1967

1.Անասնապահների աշխատանքային սխրագործությունները (17.01.).....22
2. Օգտագործել բոլոր ռեզերվները (26.01.).....23
3. Հոբելյանական տարվա պարտավորությունները (28.01.).....25
4. Դամալացիները պարտավորվում են (18.02.).....29
5.Մեխանիզատորը դեպուտատության թեկնածու [Գուրգեն Արզումանյան] (11.03).....31
6. Լավ պրոպագանդիստը [Վախտանգ Մազմանյան] (30.03.).....32
7. Փառքի հուշարձան Բոգդանովկայում (25.06.).....33
8.Անհապաղ վերացնել թերությունները (21.09.).....34
9.Լավ աշխատանքի առատ պտուղները (26.09.).....37
10.Կոմերիտմիության շրջանային կոնֆերանսներում (23.12).....39
11.Հոբելյանական տարում (26.12).....41

1968

1. Ուսման գերազանցիկը-համագումարի պատգամավոր
[Ռոբերտ Կուրղինյան] (27.02).....44
2.Հեկտարից 30 ցենտներ ցորեն (24.09).....45
3.Կազմակերպված աշխատանքով (26.09).....46
4.Այսպիսին են մեր կոմերիտականները (03.12).....47

1969

1.Նվաճում է սրտերը (07.06).....49
2.Օգտագործել բոլոր հնարավորությունները (26.07).....50
3.Ֆերմայի կոմունիստները (11.09).....51
4.Կարևոր գործին՝ ձևական վերաբերմունք (30.09).....53
5.Կոմունիստների ջանքերով (20.11).....55
6.Տարիներ ու հաջողություններ [Զուլիետա Բալասյան] (18.12).....56
7.Անպատասխանատվության հետևանքները (30.12).....57

1970

1.35 հազար տոննա սիլոսի համար (25.08).....59
2.Արտառուչ հանդիպում (27.10).....60

1971

1.Երազանք, որ կյանք է առել (05.05).....62
2.Ֆերմայի հմուտ վարիչը [Ստեփան Թարգյան] (26.05).....62
3.Այդպես են կատարում տված խոսքը (22.06).....63
4.Ազնվորեն է ծառայում հայրենիքին [Արտյուշ Սահարյան] (22.06).....64
5.Ուշադրության կենտրոնում դպրոցն է (10.08).....65
6.Մեծ վաստակին՝ մեծ գնահատական
[Վարազդատ Ալվարյան] (19.08).....66
7.Բարձրունքներում (09.09).....67
8.Ձևական բնույթ է կրում (11.09).....69
9.Հեղինակություն և հարգանք է վայելում
[Վարդան Երանոսյան] (11.11.).....71

1972

1.Արտառուչ հանդիպում (15.02).....72
2.Նվաճված բարձրունքներ, նոր պարտավորություններ (17.02).....73
3.Նոր հաջողությունների համար (29.02).....75
4.Մեծ վստահություն [Մարինե Մելքոնյան] (04.03).....77
5.Կուսկազմակերպության քարտուղարը [Արսեն Մոսոյան] (18.04).....78
6.Վերացնել թերությունները, պատվով կատարել պարտա-
վորությունները (13.05).....80
7.Հոբելյանի պատվին (16.05).....82
8.Բարեկամության երեկոներ (27.05).....83
9.Փոխանցիկ դրոշներ՝ մրցության հաղթողներին (08.07).....83
10.Կերերի կուտակումը շարունակվում է (01.08).....85
11.Բոլոր ուժերը՝ բերքահավաքին (26.08).....86
12.Հուզիչ հանդիպում (12.09).....88
13.Բարեկամության երեկո (03.10).....90
14.Ասպիծայի նորակառույցները (19.12).....90
15.Անպատասխանատվության հետևանքները (19.12).....91

1973

1.Բոլոր ճյուղերը դարձնել եկամտաբեր (10.02).....94
2.Այնտեղ ուր մրցությունը կրում է ձևական բնույթ (22.03).....96
3.Արժանացավ Լենինի շքանշանին (27.03).....98
4.Մեխանիզատորների շրջանային հավաք (19.03).....100
5.Պատրաստվում են, բայց թերություններ դեռ կան (22.04).....101
6.Գործիմաց աշխատողը [Մկրտիչ Կարախանյան] (30.04).....103
7.Բարձր բերքի վարպետը [Աշոտ Նորվարդյան] (01.05).....104
8.Ավելի ուշադրություն աշխատավորների կուլտուր-կենցաղային
պայմանների բարելավմանը (08.05).....104
9.Փոխանցիկը՝ Ախալքալաքի կարտոֆիլագործներին (21.07).....106
10.Կոմունիստների քննադատական դիտողություններն ու առաջար-
կությունները՝ ուշադրության կենտրոնում (07.08).....107

11.Վճռական թափ հաղորդել կերերի կուտակմանը (30.08).....109
12.Բարձրացնել կուսկազմակերպության մարտունակությունը (11.12).....111
13.Կուսակցական-քաղաքական աշխատանքը՝ տնտեսական խնդիրների մակարդակին.....112

1974

1.Գոնդուրացիների խոսքն ու գործը (05.01).....116
2.Մեխանիզատորի խոստումը (14.02).....118
3.Ախալքալաքի շրջանում (28.02).....118
4.Ե՞վ աշխատում է, և՞ սովորում [Զուլիետտա Պետրոսյան] (08.03).....119
5.Ֆաբրիկայի մասնաճյուղում (04.04).....120
6.Հասարակական օրինակելի կարգ ու կանոնի համար (13.04).....122
7.Միշտ պատվո տախտակին (20.06).....123
8.Զբոսայգի՝ միայն անունով (15.08).....124
9.Պիոներական ճամբարում (22.08).....124
10.Բոգդանովկայում կերերի կուտակման եռուզեռ է (29.08).....126
11.Հնչեց առաջին զանգը (03.09).....127
12.Դպրոցականների հաջողությունները (22.10).....128
13.Գյուղսովետը և ընտրողների առաջարկությունները (12.12).....129

1975

1.Նա իր տարերքի մեջ է [Գառնուշ Մանուկյան] (15.02).....131
2.Միութենական մրցանակ բուռնաշեթցիներին (18.03).....132
3.Կատարման ստուգումը՝ ուշադրության կենտրոնում (22.03).....133
4.Պատրաստվում են շաբաթօրյակին (10.04).....135
5.Դաշտերում եռուզեռ է (10.05).....136
6.Ռուսաց լեզվի ուսուցչուհին [Փեփրոնե Եղիազարյան] (20.05).....136
7.Հարգված մարդը [Թովմաս Հովհաննիսյան] (24.05).....137
8.Դասախոսություններ ընտրողների համար (27.05).....138
9.Վստահություն [Հրանուշ Քորոյան] (29.05).....138

10.Թեթրիճղարոցիների օրինակով (22.07).....140
11.Կարտոֆիլագործության հետագա զարգացման համար (23.09)....141
12.Սիրված ուսուցչուհին [Ռոզա Մանվելյան] (04.10).....143

1976

1.Ջուգակցված աշխատանք (02.09).....144
2.Խոստումը կատարելու ձգտումով (30.09).....145
3.Լուրեր Ախալքալաքի շրջանից (09.10).....148
4.Ֆաբրիկան գործարկել ժամկետին (09.10).....149
5.Բավարարել աշխատավորների պահանջմունքները (13.11).....151
6.Վստահությունն արդարացրեց [Վոլոդյա Հովհաննիսյան] (18.11)....152
7.Տեղի ունեցավ գործնական խոսակցություն (25.11).....153

.

1977

1.Բոգդանովկայի շրջանում (07.01).....155
2.«Արշալույս» թերթի մրցանակները (02.02).....156
3.Ճանաչում [Ռոզա Արզումանյան] (09.02).....157
4.Առաջավոր բրիգադավարը [Մյասնիկ Հովհաննիսյան] (18.02).....158
5.Անսահման նվիրումով [Ռոզա Մելքոնյան] (08.03).....159
6.Աշխույժ ու եռանդով լեցուն [Կարինե Խոդիկյան] (08.03).....160
7.Նախապատրաստվում են շաբաթօրյակին (12.03).....161
8.Միահամուռ հավանություն (01.04).....161
9.Արժանի գնահատական [Աղասի Սեյրանյան] (02.04).....162
10.Բոգդանովկացիների բարձր պարգևները (12.04).....164
11.Բարձր պարգևը պարտավորեցնում է (14.04).....166
12.Արձագանքում են տաբաձղուրցիները (30.04).....167
13.Ստուգատեսի դափնեկիրը (01.05).....169
14.Դրոշներ մրցության հաղթողներին (01.05).....169
15.Հաջողության երաշխիքը (02.06).....171
16.Կարտոֆիլագործուհին՝ դեպուտատության թեկնածու [Սիրանույշ Մոսոյան] (05.06).....172

17.Գրադարանային հոգսեր (25.06).....173
18.Փոքր մելիորացիային նվիրված հանրապետական սեմինար (26.07).....176
19.Պոեզիայի տոնահանդեսը Գանձայում (30.07).....177
20.Ֆաբրիկայի կանայք (29.10).....179
21.Թերությունները վերացնելու նշանաբանով (01.12).....180

1979

1.Փոխանցիկ դրոշը հանձնվեց (15.03).....182
2.Նահանջել են նախորդ տարիների դիրքերից (24.03).....183
3.Հնգամյակի առաջադրանքները կատարելու նշանաբանով (01.05).....184
4.Գիտագործնական կոնֆերանս (09.05).....187
5.Գաղափարական աշխատանքը՝ նոր խնդիրների մակարդակին (14.07).....188
6.Պոեզիայի տերյանական օրը Գանձայում (26.07).....190
7.Զուգակցված աշխատանք (04.09).....191
8.Արտադրության աշխատողը՝ գիտության թեկնածու [Սեդրակ Պապոյան] (11.09).....193
9.Լուրեր Բոգդանովկայի շրջանից (27.12).....194

1980

1.Ծավալվում է նախընտրական ագիտացիան (19.01).....196
2.Նախագահը [Մաքսոս Սահարյան] (19.02).....197
3.Երբ խուսափում են հանրօգուտ աշխատանքից (13.03).....199
4.Ասպինձյանի շրջանում (26.03).....200
5.Լուրեր Բոգդանովկայի շրջանից (19.07).....201
6.Որակավորման բարձրացման դասընթացներ (22.07).....202
7.Հանրագումարում են մրցության արդյունքները (16.08).....203
8.Մրցում են կոմբայնավարները (02.09).....205
9.Հնգամյակը՝ չորս տարում (11.10).....207
10.Ինչ հարցեր էին հուզում կոմունիստներին (04.11).....208

1981

1.Առաջավոր մեխանիզատորը [Վարդազար Սևիկյան] (21.04).....210
2. Նրանց ճանապարհը [Գոհարիկ և Նորայր Պապոյաններ] (09.06)...210
3.Պոեզիայի տեյրանական օրերը Վրաստանում (23.07).....211
4.Նախագահը [Եղիշե Մուրադյան] (06.08).....212
5.Կուսկազմակերպության քարտուղարը
[Իշխան Նորվարդյան] (03.09).....214
6.Առաջնությունը ոչ ոքի չի զիջում [Աննա Թարզյան] (10.10).....216
7.Մոտ կանգնել արտադրությանը (17.10).....216
8.Ուսման որակի բարձրացման համար (12.12).....219
9.Գյուղսովետի փոստը (31.12).....220

1982

1.Քննադատության և ինքնաքննադատության մթնոլորտում (09.01)..223
2.Ախալքալաքի շրջանի աշխատավորների սոցպարտավորությունները
(01.02).....225
3.Պատգամավորը [Անիչկա Իրիցյան] (13.02).....228
4.Պատրաստվում են շաբաթօրյակին (10.04).....229
5.Նոր բնագծեր նվաճելու նշանաբանով (15.04).....229
6.Գիտագործնական կոնֆերանս (27.04).....230
7.Կոլտնտեսության մարտական օրգանը (06.05).....231
8.Վստահություն [Լուկերիա Տոմիլինա] (17.06).....232
8.Կուսկոմիտեի քարտուղարը [Կարլոս Մուսիկյան] (19.10).....233

1983

1.Խղճի թելադրանքով [Արշալույս Ռայիսյան] (05.03).....235
2.Առաջամարտիկը [Միսակ Տաշչյան] (10.03).....236
3.Ցուցանիշները հուսադրում են (06.08).....237
4.Կան նաև թերություններ (27.08).....238
5.Նվիրված բարեկամության տոնին (13.10).....239

1984

1.Բրիգադային կապալին՝ լայն ճանապարհ (05.01).....241
2.Աշխույժ հարցազրույցի մեթոդով (05.06).....242
3.Գյուղական բժիշկը (24.06).....243
4.Դժվարություններ դեռևս կան (30.06).....246
5.Օգոստոսյան ուսուցչական կոնֆերանսում (01.09).....249
6.Հանդիպում Վախտանգ Կիկաբիձեի հետ (11.09) 250
7.Գիտագործնական կոնֆերանս (20.09).....250
8.Առաջընթաց քայլեր (24.11).....252

1985

1.ԼԿԵՄ Բոգդանովկայի շրջանային կազմակերպության կենֆերանսը (05.01).....255
2.Հաստատվում է կուսակցական բնութագիրը [Ժենյա Պապոյան] (05.01).....255
3.Հողի անխոնջ մշակը [Գրիգոր Մալխասյան] (09.02).....257
4.Մեխանիզատորը [Խաչիկ Խաչատրյան] (02.04).....259
5.Մանկավարժական ընթերցումներ (10.05).....260
6.Շեֆական օգնություն խելվաչաուրցիներին (06 06).....260
7.Տոնահանդես Կարգախում (25.06).....261
8.Անպատասխանատվության հետևանքները (13.08).....263
9.Հիանալի նվեր (22.08).....264

1986

1.Կապի աշխատողների հաջողությունները (15.05).....265
2.Հուզող հարցեր (10.06).....265
3.Գլխավոր ինժեները [Վոլոդյա Եփրիկյան] 267
4.Վճռական փուլը (12.08).....269
5.Ճոբարեթյան տոնահանդես (15.08).....271
6.Բարեկամների մոտ (16.08).....272
7.Պասիվ դիրք. ո"ւմ մեղքով (09.10).....272
8.Բարի ճանապարհ (20.12).....274

1987

1. Եվ նրան կոչեցին «Շտապ օգնություն»
[Յուրիկ ժամկոչյան] (20.01).....275
2.Լաուրան խոստանում է [Լաուրա Մարաբյան] (22.01).....276
3.Երդմանը հավատարիմ [Արմեն Եղիազարյան] (24.01).....277
4. Հաջողության գրավականը (14.03).....277

1988

1.«....Որ գյուղում պարզերես քայլենք» [Երվանդ Բասենցյան] (07.01).....279
2.Հրապարակայնորեն հանձնած քննություն (14.01).....281
3.«Արևիկի առաջին քայլերը» (05.03).....284
4.Տեխնիկան պատրաստության տողանի (15.03).....285
5.Հոգատարություն, թե՞ անհոգություն (25.06).....286
6.Արմատավորելով առաջավորը (27.09).....289
7.Ստահոգողը տեխնիկայի պակասն է (13.10).....290

1989

1.Կոլեկտիվներն ընտրում են իրենց ղեկավարներին (17.08).....292

1990

1.Ֆերման զիջում է դիրքերը (20.01).....293
2.Վարձակալական կապալ. ինչու միայն ոչխարաբուծությունում (03.04).....294
3.Որ բարձր լինի հատույցը (08.05).....296
4.Թումանյանի կիսանդրին՝ դպրոցում (12.06).....299
5.Իսկ դպրոցականները սպասում են (23.08).....299
6.Հոգսերն էլ քիչ չեն (28.09).....301
7.Եկող տարվա բարձր բերքի համար (13.10).....303
8.Մանկապարտեզում սովորել են հայոց այբուբենը (16.10).....303
9.«Ես հոռետես չեմ» [Աբանաս Թորոսյան] (15.11).....304

1991

10.Այլ ելք չկա. հողը՝ գյուղացուն (22.01).....309
11.Անհրաժեշտ են գործնական միջոցներ (21.02).....310
12.Մանուկների սիրելի վայրը (02.03).....312
13.Խոջոբեկցիները շտապում են (03.08).....313

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ «ՋԱՎԱԽՔ ԻՄ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

1.Գևորգ Այվազյան - «Ու փակ դոտ չկար նրա առջև».....315
2.Վ. Մաղալյան – Ջավախքի կեսդարյա տարեգրությունը.....318

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....321

ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՇԽԱՐՀ ԳՈՂՏՐԻԿ. ՋԱՎԱԽՔ

АГАСИ МЕЛКОНЯН

АЙАШХАР ГОХТРИК. ДЖАВАХК

(УКРОМНАЯ ЗЕМЛЯ АРМЯНСКАЯ. ДЖАВАХК)

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ

Համակարգչային շարվածքը՝ ՆՈՒՆԵ ԲԱՐԹԻԿՅԱՆԻ

Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24 գ

[2000 m.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

220091008

A II 91008

ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ, Վրաստանի հանրապետության վաստակավոր ժուռնալիստ.

Ծնվել է 1921թ. մարտի 25-ին Ալեքսանդրապոլ քաղաքում: Բարձր առաջադիմությամբ ավարտելով տեղի միջնաբերդ դպրոցը՝ 1939-42 թթ. աշխատանքի անցել Արագածոտնի գյուղ[illegible] դպրոցում [illegible] մանկավարժ. ապա [illegible] ավարտել է Երևանի պետական [illegible] մանկավարժական ինստիտուտի [illegible] ֆակուլտետը:

1943 [illegible] տեղափոխվելը նշանավորվ[illegible] [illegible] ուսուցչի աշխատանքով դպրոցում [illegible] ընտրվում է Ալեքսանդրապոլի ԽԿԵՄ շրջկոմի [illegible]

1946-48 թթ. [illegible] Վրաստանի [illegible] ռազմի կենտկոմին [illegible] ընթեր քաղդպրոցում [illegible] 48 թթ. եղել Ալեքսանդրապոլի կուսշրջկոմի ագիտացիայի [illegible] հանձնարարությամբ:

1949 թվականից [illegible] կյանքի վերջը (1995 թ.) «Սովետական Վրաստան» թերթի Տ[illegible] [illegible] թղթակիցն է, [illegible] հանձնարարություններ [illegible] կարևորագույն հոդվածներ [illegible] մեջ արտացոլել է կառա[illegible] [illegible] պայքարների:

«Վրաստան» թերթի [illegible] բնորոշմամբ՝ Արդար Մելքոնյանը իրոք «տարեգիրը դարձել Ջավախքի [illegible]»:

Սույն հատորը 2003 թվականին լույս տեսավ՝ Ա. Մելքոնյանի «Ջավախք իմ առասպելական» գրքի շարունակությունն է, որում նա օգտակար նյութեր է ներառել Ջավախքի ետպատերազմյան պատմության մասին: